

ԸՆԴՆԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԱՅՐԵՐ

Ա

Ս. ԿՅՈՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅԻ



Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ԸՆԴՆԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԱՅՐԵՐ

Ա

ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԿՅՈՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅԻ

ԿՈՉՈՒՄՆ  
ԸՆԾԱՅՈՒԹՅԱՆ



Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2007

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՀՏԴ 25  
ԳՄԴ 86.37  
Ս – 970

Թարգմ. հին հունարենից՝  
Ս. Կրկյաշարյանի

**Ս. ԿՅՈՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ**  
Ս – 970 Կոչումն ընծայության - էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ  
Էջմիածին, 2007.- 400 էջ:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ՝

.....

ISBN 978-99930-75-47-9

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

## Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի (315-386)

**Կ**յուրեղ Երուսաղեմացի հայրապետը ծնվել է շուրջ 315 թ., հավանաբար, Երուսաղեմում: 335 թ. ձեռնադրվել է քահանա, իսկ 348 թ.՝ ընտրվել Երուսաղեմի եպիսկոպոս:

Եպիսկոպոսական առաջին իսկ տարիներից Կյուրեղը ճշտում է իր դիրքը արիոսական վեճերի նկատմամբ և դառնում ուղղափառության ջերմ ջատագովներից մեկը: Դա պատճառ է դառնում, որպեսզի ամբաստանվի արիոսական եպիսկոպոսներից և աքսորվի Տարսոն, 357 թ.: Կարճ ժամանակով ազատվում է աքսորից և վերադառնում իր Աթոռ: Սակայն շուտով նորից է աքսորվում: Երրորդ աքսորը տեղի է ունենում 367 թ., այս անգամ արդեն Վաղես կայսեր հրամանով: 11 տարի աքսորավայրում մնալուց հետո, 378 թ. կրկին վերադառնում է իր Աթոռ և մինչև իր մահը նվիրվածությամբ ու ձեռներեցությամբ հովվում իր հոտը: Կյուրեղ Երուսաղեմացին մասնակցել է Կոստանդնուպոլսի 381 թ. երկրորդ Տիեզերական ժողովին, իբրև այդ ժողովի կարևոր դեմքերից մեկը: Մահացել է 386 թ.:

Կյուրեղ Երուսաղեմացին Արևելքում համարվում է տիեզերական ուսուցիչ, իսկ Արևմուտքում 1893 թ. Լեոն 12-րդ Պապի կողմից հռչակվել է «Վարդապետ Եկեղեցու» տիտղոսով:

Կյուրեղ Երուսաղեմացու մատենագրության ժառանգության մեջ կարևորագույնը «Կոչումն ընծայության» կամ «Հաղագս երախայից» երկասիրությունն է: Այն կարևոր աղբյուր է առաջին եկեղեցու դավանանքի և պաշտամունքի ուսումնասիրության համար, բաղկացած է 2 ճառ ուսուցումներից, որոնք ասվել են 350 թ.-ին Երուսաղեմի Մեծն Կոստանդինոսի կողմից Աստվածածնի գերեզմանի վրա կառուցված բազիլիկայում: Այս աշխատությունը մեզ է հասել ունկնդիրներից մեկի տպագրությամբ՝ և կարծվում է, որ Կյուրեղ Երուսաղեմացին չի վերանայել այն:

Կարծվում է նաև, որ այն խմբագրել է Կյուրեղի հաջորդ Հովհաննես Բ. Երուսաղեմացի եպիսկոպոսը, 390 թ. շուրջ: Այս երկի նպատակն է եղել մկրտության պատրաստվող երախաներին ուսուցանել քրիստոնեական վարդապետության հիմնական սկզբունքները և բացատրել եկեղեցու խորհուրդների իմաստը:

«Կոչումն ընծայությանը» ունի հետևյալ գրական միավորումը:

Նախ դրված է մի նախաուսուցում, ուր խոսվում է Աստծո կողմից եղած կոչման մեծության, երախաների ազատ կարգով այդ կոչումը ընդունելու կամ մերժելու, գործած հանցանքների համար անկեղծ զղջման, ուղղափառ հավատքի թշնամիների դեմ պայքարելու անհրաժեշտության և այլնի մասին:

Այնուհետև շարադրված են տասնութ ուսուցումներ այն երախաների համար, որոնք պատրաստվում են ընդունել մկրտության խորհուրդը: Այս տասնութ ճառերը արտասանվել են քառասնօրյա պահքի ժամանակ:

Առաջին ճառը հրավիրում է երախաներին՝ ձեռք բերելու «ընդհանուր սիրտ և ընդհանուր հոգի» բոլոր չարությունների և թշնամությունների մերժումով և այն հոգեկան սնունդով, որ պատճառում է Սուրբ Գրքի ընթերցումը:

Երկրորդ ճառում խոսում է զղջման, մեղքերի թողության և չարի փորձության մասին:

Երրորդ ճառում խոսում է մկրտության և հատկապես մկրտության խորհրդի խորը նշանակության և հետևանքների մասին:

Չորրորդ ճառում համառոտակիորեն խոսում է քրիստոնեական հավատալիքների և Սուրբ Գրքի մասին:

Հինգերորդ ճառում խոսում է հավատքի մասին:

Իսկ վեցից տասնութերորդ ճառերում մեկնվում է Երուսաղեմի հավատացյալների հավատամքը, որը շատ նման է Նիկիո-Կոստանդնուպոլսյան Հավատամքին:

Այնուհետև հաջորդում են հինգ խորհրդաուսուցողական ճառերը (19-23), որոնք ուղղված են արդեն մկրտվածներին: Դրան-

ցից առաջինը և երկրորդը՝ մկրտության, երրորդը՝ դրոշմի, չորրորդը և հինգերորդը Սուրբ Հաղորդության խորհուրդների հանգամանորեն մեկնություն են:

Հակառակ իր ուսուցողական բնութագրի, այս ճառերը ունեն հարուստ ուղղափառ դավանաբանական բնույթ: Այն ժամանակվա Սուրբ Երրորդության աստվածային հիպոստասիսները միաժամանակ երեք են և մեկ, թեև չի օգտագործում «համագո» տերմինը: Պայքարելով արիոսականության դեմ՝ միաժամանակ պայքարում է նաև սաբելականության դեմ: Սուրբ Հոգուն ներկայացնում է իբրև կենդանի և գործող հիպոստասիս երրորդության գործողության շրջանակում:

Ջգալի է Կյուրեղի ավանդապահական բնութագիրը: Ջանում է միշտ հիմնվել իրենից առաջ հայրերի ուսմունքի վրա:

Ելնելով այն բանից, որ որոշ ձեռագրերում այս հինգ ճառերը կրում են Հովհաննու անունը, և որ թարգմանություններում այդ ճառերը չկան, և այլ պատճառաբանություններից՝ որոշ հայրաբաններ պնդում են, որ դրանք գրվել են ոչ թե Կյուրեղի, այլ նրա հաջորդ Հովհաննես Երուսաղեմացու (387-417) կողմից:

Հայրաբանների մեծամասնությունը, սակայն, այն կարծիքին է, որ եթե անգամ մերժվի Կյուրեղի հեղինակությունը, ապա պետք է ընդունել, որ Կյուրեղն է, որ խոսել է այդ ճառերը, իսկ Հովհաննեսը՝ խմբագրել:

Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայության»-ը բազմիցս վկայակոչվել է հայ դավանաբանական գրականության մեջ, հիշատակվել դեռևս Ղազար Փարպեցու, Հովհաննես Բ Գաբեղենացու, Անանիա Շիրակացու երկերում:

«Կոչումն ընծայությանը» հայերեն է թարգմանվել V դ., առաջին անգամ տպագրվել է 1727-ին Կոստանդնուպոլսում: Հայերեն թարգմանությունը պարունակում է 18 ճառ: Սույն ամբողջական 23 ճառերի թարգմանությունը բնագրից կատարել է պրոֆ. Ս. Կրկյաշարյանը:

*Եզնիկ արքեպս. Պետրոսյան*

## ՆԱԽԱՌԻՍՈՒՅՈՒՄ

### Այսինքն՝ մեր սուրբ հոր՝ Երուսաղեմի արքեպիսկոպոս Կյուրեղի ուսուցումների նախաբան

1. Այժմ արդեն երանության բուրմունքը դիպել է ձեզ բոլորիդ, լուսավորվողների դասին հասածնե՛ր: Այժմ արդեն դուք քաղում եք հասկանալի ծաղիկները՝ դրանցով երկնային պսակներ հյուսելու համար: Այժմ արդեն տարածվել է Սուրբ Հոգու բուրմունքը: Այժմ դուք գտնվում եք արքայական պալատների նախագավթում. տա Աստված, որ այնտեղից ներս մտնեք արժանի առաջնորդությամբ: Քանզի արդեն ծառերը ծաղկեցին. և տա Աստված, որ պտուղներն էլ հասնեն: Ձեր անուններն արդեն արձանագրված են, և դուք զինվորագրվել եք: Ճրագները, որ պիտի ուղեկցեն հարսանեկան թափորին, պատրաստ են: Ձեր մեջ ուժեղ է երկնային հասարակության փափագը: Այդ ճշմարտությունը մեզ բացահայտեց Պողոս առաքյալը՝ ասելով, թե «ամեն ինչ գործակից է լինում նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Աստծուն» (Հռոմ., Ը 28): Եվ Աստված շուայլ է իր բարեգործությամբ, բայցև սպասում է յուրաքանչյուրիս ազնիվ նախընտրանքին: Այդ իսկ պատճառով Պողոս առաքյալը լրացնում է. «Որոնք և կանչվեցին Նրա նախասահմանումով» (Հռոմ., Ը 28): Եթե քո նախընտրանքը ազնիվ է, ապա քեզ կդարձնի հրավիրյալ: Իսկ եթե դու մարմնով լուսավորվողների շարքերում ես, բայց մտքով՝ ոչ, ապա ոչնչով քեզ օգնել չի կարող:

2. Մի անգամ մոգ Սիմոնը եկավ լոգարան ու մկրտվեց, բայց չլուսավորվեց: Մարմինն ընկղմվեց ջրի մեջ, բայց նրա

սիրտը չլուսավորվեց Սուրբ Հոգով: Մարմինն իջավ ջրի մեջ և բարձրացավ, իսկ հոգին չթաղվեց Քրիստոսի հետ, ոչ իսկ Նրա հետ բարձրացավ: Ես քեզ պատմում եմ, թե ինչպես և ուր ընկան մյուսները, որպեսզի դու ևս չընկնես: Այդ ամենը կատարվեց նրանց հետ, որպեսզի օրինակ ծառայեն մեզ համար և այդ պատճառով գրվեցին՝ օգնելու համար բոլոր նրանց, ովքեր գալիս են մկրտվելու: Ուրեմն, թող չգտնվի որևէ մեկը, որ ուզենա փորձել Շնորհը: «Դառնության արմատը, աճելով, թող ոչ ոքի նեղություն չտա» (Եբբ., ԺԲ 15): Ոչ ոք ձեզանից չմտնի այնտեղ՝ ասելով՝ թույլ տուր տեսնենք, թե ի՞նչ են անում հավատացյալները: Ես էլ մտնեմ, իմանամ, թե ի՞նչ է կատարվում: Դու ափնկալում ես տեսնել ու չե՞ս հասկանում, որ ինքդ ևս կղաղնաս նկատելի և կարծում ես, թե դու կարող ես լինել մանրախույզ և քննել այն ամենը, ինչ կատարվում է Եկեղեցում, իսկ Աստված չի զննում ու չի քննում քո սիրտը:

3. Ավետարանում պատմվում է, թե մի անգամ մի մարդ հետաքրքրվեց, թե ի՞նչ է կատարվում հարսանիքում: Եվ, անարժան զգեստներ հագած, մտնում է հարսանեկան մի տուն և նստում է սեղանի առաջ և սկսում է ուտել: Քանզի փեսան չարգելեց նրան: Անկոչը, տեսնելով, որ բոլորը հագել են սպիտակ զգեստներ, ինքը ևս պարտավոր էր զնալ նույնպիսի զգեստ հագնել: Բայց այդպես չարեց: Նա բոլորին հավասար վայելում էր ճաշերը՝ առանց համապատասխան տեսք ունենալու: Մինչդեռ փեսան, թեև առատաձեռն էր, բայց ոչ անտարբեր: Շրջելով հրավիրյալների մոտով (քանզի նրան հետաքրքրում էր ոչ միայն այն, թե ինչքան և ինչ պիտի յուրաքանչյուրն ուտի, այլև որքան նրանք բարեձև են)՝ նկատեց առանց հարսանեկան զգեստներով օտարականին և ասաց նրան. «Ընկեր, ինչպե՞ս մտար այստեղ. ի՞նչ զգեստներով» (Մատթ., ԻԲ 12), ի՞նչ

խղճով: Ենթադրենք, որ դռնապանը քեզ չարգելեց, քանի որ փեսան առատաձեռն է: Ընդունենք, որ չգիտեիր, թե ինչպիսի զգեստով պետք է մտնեիր խնջույքի: Ներս մտար, տեսար հրավիրյալների փայլուն զգեստները, արդյոք պետք չէ՞ր, որ դու դրանից դաս վերցնեիր և անմիջապես դուրս գալով՝ զնայիր և բարենպաստ ժամանակին ներս մտնեիր: Ուստի այժմ, քանի որ անժամանակ ես ներս մտել, ժամանակին դուրս կնետվես»: Եվ հրամայում է իր ծառաներին՝ ասելով. «Կապեք նրա ոտքերը, որոնք այսքան համարձակ ներս են մտել: Կապեք նրա ձեռքերը, որոնք չեն սովորել զվարթ զգեստներ հագնել: Եվ հանեցեք նրան արտաքին խավարը» (Մատթ., ԻԲ 13): Քանզի անարժան է հարսանեկան ջահերին»: Ահա տես, թե ինչ կատարվեց նրա հետ. ուստի զգուշացիր և ապահովիր ինքդ քեզ:

4. Ուրեմն մենք՝ Քրիստոսի սարկավագներս, ընդունել ենք ամեն մեկին, ով ուզում է, և դռնապանի դեր կատարելով՝ դուռը լայն բացել ենք նրանց առաջ: Այսպիսով, ուրեմն քեզ հնարավորություն է տրվում նույնիսկ ներս մտնելու, եթե անգամ քո հոգին ապականված է մեղքերից և քո ընտրությունը՝ եղծված: Ներս մտար, ուրեմն դու համարվեցիր արժանի, և քո անունը գրվեց (մկրտության) ցուցակում: Բարի եղիր, խնդրեմ, և ուշադիր սովորիր Եկեղեցու այս վեհ հաստատությունը: Դու նկատե՞լ ես արդյոք Եկեղեցու կարգը. հավատքը և իմացությունը, Գրքերի ընթերցումը, Աստծուն նվիրված հոգիների ներկայությունը, ուսուցման ընթացքը. հարգիր նաև վայրը և սովորիր քո տեսածներից: Այժմ, քանի հնարավոր է, դուրս եկ և վաղը մտիր Եկեղեցի առավել բարենպաստ ժամանակ: Եթե քո հոգու զգեստը արծաթասիրությունն է, ապա Եկեղեցի մտիր՝ ուրիշ զգեստ հագած: (Հանիր այդ զգեստը և ոչ ոքի ցույց մի տուր): Հանիր պոռնիկության և անմաքրություն հագուստը և հագիր ողջամտության պայծառ զգեստը: Ես

քեզ զգուշացնում եմ, նախքան ներս կգա մեր հոգիների փեսան՝ Հիսուս Քրիստոսը, և կտեսնի մեր հագուստը: Այժմ երկար ժամանակ ունես: Դու զղջման համար ունես քառասուն օր: Դու շատ ժամանակ ունես զգեստդ հանելու, մաքրվելու և վերստին հագնելու և ըստ պատշաճի Եկեղեցի մտնելու համար: Բայց եթե համառես քո վատ ընտրության վրա ու չզղջաս, ապա ես, որ այս քեզ ասում եմ, պատասխանատու չեմ. և դու հույս մի ունեցիր աստվածային շնորհն ստանալու: Քանզի (մկրտության) ջուրը քեզ կընդունի, բայց Սուրբ Հոգին քեզ չի ընդունի: Նա, ով գիտակցել է իր վերքը, թող վերցնի նաև բուժամիջոցը: Եթե մարդ ընկել է մեղքի մեջ, թող վեր կենա: Ձեզանից ոչ ոք չնմանվի Սիմոնին. ոչ մի կեղծիք չլինի ձեր մեջ, ոչ մի շահագրգռություն՝ ձեր մեջ:

5. Հնարավոր է, որ դու մեկ այլ պատրվակով ևս գաս այս վայրը: Քանզի հնարավոր է, որ այրը կամենում է ադերսել կնոջը և այդ պատճառով է գալիս: Նույնը կարող ենք ասել նաև կանանց վերաբերյալ: Հաճախ նույնը՝ նաև ծառան՝ տիրոջ և ընկերը ընկերոջ հաճելի դառնալ կամենալով: Ընդունում եմ, որ կարթի խայծը քեզ հրապուրել է, և համաձայն եմ քեզ ընդունել, թեև եկել ես վատ ընտրությամբ: Բայց գիտեմ, որ կարող ես փրկվել, եթե քո մեջ զարգացնես փրկվելու հույսը: Գուցե չես իմանում, թե ուր ես գալիս, և ինչ ցանց է բռնել քեզ: Դու եկեղեցական ցանցերի մեջ ես: Փակվիր այնտեղ: Մի՛ փախչիր: Հիսուս քեզ քաշում է կարթով՝ ոչ թե մահվան ենթարկելու, այլ մահացնելուց հետո կենդանացնելու: Պետք է մահանաս և հարություն առնես: Լսե՞լ ես առաքյալի խոսքը. «Մեռյալներ՝ մեղքի համար և ապրողներ՝ հանուն արդարության» (Հմմտ. Հռոմ., Զ 11-13): Ուրեմն, մեղքի համար դարձիր մեռյալ և ապրիր արդարության համար: Ապրիր այսօրվանից:

6. Տես, թե ինչքան մեծ արժեք է շնորհում քեզ Հիսուս: Դու կոչվում էիր ուսումն ընդունող և իրերի անունները լսում էիր դրսից: Լսում էիր հույսի մասին, բայց չէիր հասկանում: Լսում էիր խորհուրդների մասին, բայց չէիր իմանում. լսում էիր Սուրբ Գրքի մասին, բայց չգիտեիր դրա խոսքը: Այժմ արդեն ոչ միայն բառերն ես լսում, այլ թափանցում ես դրանց իմաստի մեջ: Քանզի քո մեջ բնակվող Սուրբ Հոգին այսուհետև քո գիտակցությունը կդարձնի աստվածային կացարան: Երբ որ լսես խորհուրդների մասին գրվածները, այնժամ կհասկանաս այն, ինչը չգիտեիր: Եվ չկարծես, թե փոքր բան ես ստանում: Լինելով խեղճ մարդ՝ ստանում ես աստվածային անվանում: Լսիր Պողոսին, որ ասում է. «Հավատարիմ է Աստված» (Ա Կորնթ., Ա 9): Լսիր, թե մեկ այլ տեղ ինչ է գրված. «Հավատարիմ է Աստված և արդար» (Ա Հովհ., Ա 9): Այս կանխատեսելով՝ սաղմոսերգուն Աստծու անունից ասում է, քանի որ մարդիկ պետք է ստանային աստվածային կոչում. «Ես ասացի աստվածներ եք դուք, կամ բոլորդ էլ որդիներն եք Բարձրյալի» (Սաղմ., ԶԱ 6): Բայց տես՝ միայն անունով չլինես հավատարիմ, իսկ ընտրությամբ՝ անհավատարիմ: Մտել ես մրցություն, վազքդ վազիր. ուրիշ այսպիսի առիթ չես ունենա: Հարսանիքիդ պատրաստվելու դեպքում մի՞թե դու չէիր թողնի բոլոր գործերդ՝ զբաղվելու համար հարսանեկան սեղանի ճաշերը պատրաստելու գործով: Եվ այժմ, երբ քո հոգին պետք է նվիրաբերես երկնային փեսային, մի՞թե չես լքի քո կենցաղային հոգսերը, որպեսզի ընդունես հոգևոր շնորհները:

7. Չի կարելի մկրտվել երկրորդ կամ երրորդ անգամ: Քանզի այդ դեպքում կարող էիր ասել. «Ձախողվեցի առաջին անգամ, երկրորդ անգամ կհաջողվեմ: Բայց եթե առաջին անգամ ձախողվես, չես կարող բանն ուղղել: Որովհետև «կա մեկ Տեր, մեկ հավատ, մեկ մկրտություն» (Եփես.,

Դ 5): Միայն հերետիկոսներից ոմանք վերամկրտվում են, քանի որ առաջինը չի եղել իրական մկրտություն:

8. Աստված մեզանից այլ բան չի ուզում, բայց միայն բարի ընտրություն: Մի՛ ասա՝ «Ինչպե՞ս պիտի սրբվեն իմ մեղքերը»: Ես քեզ պատասխանում եմ. Կամբող և հավատով: Սրանից արագ էլ ի՞նչ բան: Բայց եթե քո շրթներն ասում են՝ կամենալ, իսկ քո սիրտը չի կամենում, վճռողը սրտի գիտակ է: Այսօրվանից հեռու մնա ամեն չարիքից ու մեղքից: Քո լեզուն չարտաբերի անազնիվ խոսքեր: Քո նայվածքը մեղսագործ չդառնա և չտարվի անպիտան պատկերներով:

9. Ուրքերդ թող շտապեն ուսուցման գնալու: Երզումներն ընդունիր մեծ զգուշությամբ: Եթե քահանան փչի քո դեմքին և քեզ երդմնեցնի չար ոգիների դեմ, դա կլինի քեզ համար փրկություն: Ենթադրենք, որ ունենք անմշակ ոսկի՝ պղնձի, անագի, երկաթի և կապարի խառնուրդով, իսկ մենք ուզում ենք մաքուր ոսկի ունենալ: Բայց ոսկին չի կարող առանց կրակի մաքրվել այդ ամենից: Այդպես էլ հոգին չի կարելի մաքրել առանց երզումների: Այդ երզումները սուրբ են և հավաքված են Սուրբ Գրքից: Քո երեսը ծածկվում է, որպեսզի քո միտքը դադարի չարիքների վրա շարժվելուց, որպեսզի չստիպի, որ աչքդ թափառի այս ու այն կողմ, և սիրտդ ցրվի անտեղի բաների վրա: Եթե աչքերը փակ են, ահանջների համար արգելք չկա փրկարար բառերը լսելու: Եվ ինչպես որ ոսկերչական գործի հմուտ վարպետները հատուկ նուրբ գործիքներով, կրակը փչելով, ոսկին անջատում են հալոցում եղած մետաղանյութի մյուս մետաղներից, այդպես էլ, երբ քահանաները որևէ մեկի վրա կարդում են մկրտության երզումները, Սուրբ Հոգու շնչով մարմնի միջով ներփչում են, ինչպես հալոցի դեպքում, Աստծու երկյուղը և կենդանացնելով հոգին՝ այն բերում են իր սկզբնական բնույթին: Թշնամի դեռ փախչում

է, և մնում են փրկությունը և հավիտենական կյանքի հույսը: Ուրեմն, հոգին, արդեն մաքրված մեղքերից, փրկություն է շահել: Ուրեմն, եղբայրներ, մնանք հույսով, նվիրենք մեր անձը և հուսանք: Ուստի, Ամենակալ Աստված, տեսնելով մեր նախընտրանքը, թող մեզ մաքրի մեղքերից և մեզ շնորհի բարի հույսեր, արժանացնի փրկարար զղջման: Հրավիրողն Աստված է, իսկ դու՝ հրավիրյալը:

10. Միշտ հետևիր ուսուցիչներին, թեև մենք շատ ենք երկարում մեր խոսքը, որպեսզի քո միտքը չթուլանա: Դու այստեղ գենք ես ստանում հակառակորդի դեմ կովելու համար: Դու գինվում ես հերձվածի դեմ, հրեաների ու սամարացիների և հեթանոսների դեմ: Բազում թշնամիներ ունես, ուստի շատ նետեր ստացիր, քանզի շատերին պիտի նետահարես. և դու պարտավոր ես իմանալ, թե ինչպե՞ս նետահարես հելլենին, ինչպե՞ս պայքարես հերետիկոսի դեմ, հրեաների դեմ և սամարացու դեմ: Զենքերը պատրաստ են. առավել պատրաստ է նաև Հոգու սուսերը: Պետք է քո աջ ձեռքը մեկնես լավ նպատակի զորություն, որպեսզի պատերազմես Տիրոջ պատերազմը, հաղթես հակադիր ուժերին և անպարտելի լինես հերետիկոսների դավերի դեմ:

11. Թող քեզ պատվեր լինի նաև հետևյալը: Այստեղ ասվածները լավ սովորիր և պահիր մշտապես: Չկարծես, թե այստեղ ասվածները սովորական զրույցներ են: Դրանք ևս բարի են ու հավաստի: Բայց եթե այսօր անտարբեր լինենք դրանց նկատմամբ, կարող ենք վաղը սովորել: Իսկ եթե վերածնման մկրտության մասին այստեղ շարունակաբար լավոր դասերը այսօր անտարբերության մասնես, ապա ե՞րբ դրանք պիտի կարողանաս սովորել: Ենթադրենք, թե ծառատունկի հարմար ժամանակն է: Եթե չփորենք ու փոս չբացենք, էլ ուրիշ ե՞րբ կկարողանանք հաջողությամբ տնկել արդեն մեկ անգամ վատ տնկածը: Ուսուցումը հա-



մեմատենք շենքի հետ: Եթե չփորենք և հիմքեր չդնենք, եթե շենքի մասերը կապերով իրար չամրացնենք, որպեսզի դժվար պահին այն փուլ չգա, բացարձակապես ոչ մեկ օգուտ չենք ունենա. այլ պետք է հետևողականորեն քարը միացնել քարին և անկյունը կապել անկյունին, ապա ավելորդ մասերը հեռացնելով՝ բարձրացնենք կատարյալ մի շենք: Այդպես այժմ քեզ մատուցում ենք գիտելիքները որպես քար: Դու պետք է լսես կենդանի Աստծու մասին, պետք է լսես դատաստանի մասին, Քրիստոսի մասին, Հարույթյան մասին և շատ ուրիշ բաներ, որոնց մասին կասվի հետագայում: Այն, ինչ այժմ լսում ես հատվածաբար, այնժամ քեզ կմատուցեն կապակցված և հերթով: Բայց եթե դու այդ բոլորը չհամակցես և չհիշես թե՛ առաջինները և թե՛ վերջինները, ապա կառուցողը կկառուցի, իսկ դու կունենաս վատ հիմքերով խարխուլ տուն:

12. Երբ դու ուսման հետևում ես, և քեզ հարցնեն, թե ուսուցողներն ի՞նչ ասացին ձեզ, դու ոչ ոքի ոչինչ մի ասա: Քանզի մենք քեզ խորհուրդ ենք ավանդում և հանդերձյալ կյանքի հույս: Խորհուրդը գաղտնի պահիր հանուն խորհուրդը քեզ ավանդողի: Երբեք ոչ ոք քեզ չասի. «Ի՞նչ կվնասվի, եթե ես ևս իմանամ»: Հիվանդները ևս գինի են խնդրում: Եվ եթե այդ նրանց տանք անժամանակ, նրանք իրենց խելքը կկորցնեն: Եվ կատարվում է երկու չարիք. և՛ հիվանդը կորչում է, և՛ բժիշկը չարախոսվում է: Այդպես էլ ուսուցվողը: Եթե որևէ բան է լսում հավատացյալից և ինքը կորցնում է իր դատողությունը, քանզի չիմանալով և չհասկանալով իր լսածը՝ քննում է ասվածը և հեզնում այն: Իսկ հավատացյալը մեղադրվում է իբրև դավաճան: Եվ դու այժմ կանգնած ես սահմանին: Զգուշացիր, չչատախոսես: Ոչ այն պատճառով, որ այստեղ ասվածները դրան արժանի չեն, այլ լսելիքներն են անարժան այդ խոսքերն ընդունելու: Դու ևս անցյալում եղել ես ուսուցվող,

բայց քեզ չեմ ասել այն, ինչ ասում եմ այժմ: Եթե փորձով դու հասնես քո այս սովորածի բարձունքին, այնժամ կհասկանաս, թե ուսուցվողները անարժան են այդ ամենը լսելու:

13. Մկրտություն համար ցուցակագրվածները եղել եք մեկ մոր՝ Եկեղեցու ուսուցիչ և դուստրեր: Եթե երգվելու ժամանակից շուտ եք ներս մտել, թող յուրաքանչյուրը երկյուղածությամբ լսուք ասի: Եվ եթե ձեզանից որևէ մեկը բացակա է, փնտրեք նրան: Եթե դու հրավիրված ես եղել սեղանի, ապա չէի՞ր սպասելու քեզ հետ հրավիրվածներին: Եթե եղբայր ունենայիր, չէի՞ր հետաքրքրվելու նրա օգտի համար: Անօգուտ բաներով մի զբաղվիր. հարց մի՛ տուր, թե ի՞նչ է կատարվել քաղաքում, ի՞նչ է եղել գյուղում, ի՞նչ է արել թագավորը, ի՞նչ՝ եպիսկոպոսը, ի՞նչ՝ երեսցը: Երկինք նայիր: Այժմ քեզ այս է պետք. «Դադարեցեք և իմացեք, թե ես եմ Աստված» (Սաղմ., ԽԵ 11): Երբ տեսնես, որ հավատացյալները սարկավազում են և այլ հոգսերով չեն զբաղվում, նրանք ճիշտ ճանապարհի վրա են: Գիտակցում են, թե ինչ են ընդունել. նրանք շնորհի մեջ են: Դու այժմ երկընտրանքի առաջ ես կանգնած. ընդունել, թե՞ չընդունել մկրտությունը: Երես մի դարձրու անհույս ընտրածներին, այլ երկյուղով կանգնիր նրանց առաջ:

14. Երդման արարողությունը կատարվելիս, մինչև որ կհավաքվեն բոլոր երգում ընդունողները, այրերը այրերի հետ և կանայք կանանց հետ սպասեն առանձին: Այստեղ անհրաժեշտ է Նոյի տապանի դեպքը, որտեղ Նոյը լինի որդիների հետ առանձին, կինը և որդիների կանայք՝ առանձին. որպեսզի, թեև տապանը մեկն էր, և դուռը՝ փակված, բայց ամեն ինչ կարգավորված էր: Թեև Եկեղեցին փակ է, և մենք ներսում ենք, պետք է ամեն ինչ կարգավորված լինի. այրերը լինեն այրերի հետ, կանայք՝ կանանց հետ: Փրկության նպատակը թող չդառնա կորստյան առիթ: Եվ

եթե նպատակը բարի է, կարող եք իրար մոտ նստել, բայց կրքերը թող հեռու լինեն: Ապա այրերը, նստած հավաքվել են, իրենց հետ թող ունենան որևէ օգտակար գիրք. մեկը թող այն կարդա, իսկ մյուսները լսեն: Իսկ եթե գիրք չլինի, մեկը թող ազդի, իսկ մյուսը պիտանի որևէ խոսք ասի: Աղջիկների խումբը ևս այդպես թող հավաքվի և զրուցի որևէ օգտակար բանի մասին, թող երգեն ու կարդան ցածրաձայն. ուստի թող նրանց շրթները շարժվեն, բայց լսելի չլինեն այլոց ականջներին: Քանզի կանանց թույլ չի տրվում եկեղեցում խոսել: Ամուսնացած կանայք ևս նույնպես թող վարվեն: Թող մրմնջալով ազդեն, և նրանց ձայնը թող չլսվի: Որպեսզի Աստված, քեզ լսելով, քեզ պարգևի Սամուելին, և քո ամուլ հոգին փրկություն ծնի: Քանզի այս է Սամուելի մեկնությունը:

15. Կուզեմ տեսնել յուրաքանչյուր այրի ջանասիրությունը, յուրաքանչյուր կնոջ բարեպաշտությունը: Ձեր միտքը թող բորբոքվի բարեպաշտությամբ. պողպատի նման թող ամրանա ձեր հոգին: Մրճահարեք անհավատություն կարծրությունը. թող դուրս գան բոլոր ավելորդ բաները, ինչպես երկաթի մրճահարման հետևանքով դուրս են նետվում ավելորդ թեփուկները: Թող վերանա երկաթի ավելորդ ժանգը, և թող մնա մաքուր երկաթը: Կգա այն օրը, երբ Աստված ձեզ կբացահայտի այն գիշերը, այն խավարը, որը նման է օրվան, որի համար ասված է. «Խավարը քեզ համար խավար չի լինի, և գիշերը լուսավոր ցերեկ կդառնա»(Սաղմ., ՃԼԸ 12): Այնժամ ձեզանից յուրաքանչյուրի համար կբացվի դրախտի դուռը: Այնժամ դուք պիտի վայելեք Քրիստոսակիր և անուշաբույր ջրերը: Այնժամ դուք կկոչվեք Քրիստոսի անունով և ձեր մեջ կգգաք իրական աստվածային ներգործությունը: Մտքի աչքերով դուք այժմվանից կտեսնեք սուրբ հրեշտակների խմբերը, Ամենակալ Աստծուն՝ գահին բազմած, Նրա Միածին Որդուն՝ աջ

կողմում իր հետ բազմած: Այնտեղ է նաև Սուրբ Հոգին, մինչդեռ գահերի և տերությունների հրեշտակաց զնդերը կատարում են իրենց ծիսական առաքելությունը և ձեզանից յուրաքանչյուրին՝ այր թե կին, արդեն համարում են փրկված: Ձեր ականջներով արդեն կլսեք ցնծություն այն երգը, որ հրեշտակները կերգեն իսկույն, երբ ամբողջանա ձեր փրկության խորհուրդը. «Երանի նրան, ում մեղքերին թողություն տրվեց, և ում բոլոր հանցանքները ծածկվեցին» (Սաղմ., ԼԱ 1): Այնժամ, որպես Եկեղեցու աստղեր, դուք ներս կառաջնորդվեք ցնծացող մարմնով և պայծառ հոգով:

16. Մեծ բան է ձեր վերահաս մկրտությունը: Այն գերիններին ազատություն է, մեղքերին՝ թողություն, մեղքին՝ մահ, հոգուն՝ վերածնունդ. լուսավոր զգեստ, չջնջվող սուրբ դրոշմ, դեպի երկինք տանող կառք, դրախտային վայելք, արքայության միջնորդ, որդեգրության շնորհք: Սակայն մկրտության ճանապարհին վիշապն է դարանակալ սպասում անցորդներին: Զգուշացիր, որ քեզ չխայթի անհավատության թուլանով: Նա տեսնում է այնքան փրկվածների և փնտրում է, թե ում կուլ տա: Դու ուղևորվում ես հոգիների Հոր մոտ, բայց անցնելու ես վիշապի մոտով: Ուրեմն ինչպե՞ս նրան պիտի դիմագրավես: Ամրացրու ոտքերդ խաղաղության Ավետարանով, որ եթե վիշապը խայթի անգամ, վնասել չկարողանա: Քո հոգում ունեցիր հավատք, ամուր հույս իբրև հզոր հիմք, որպեսզի հաղթահարես թշնամուն և մտնես Տիրոջ մոտ: Քո սիրտը պատրաստիր ընդունելու դասերը և հաղորդակից դառնալու սուրբ խորհուրդներին: Առավել հաճախ ազդի, որպեսզի Աստված քեզ արժանի դարձնի երկնային և անմահ խորհուրդներին: Ո՛չ ցերեկը հապաղիր, ո՛չ գիշերը: Այլ անմիջապես, երբ քունը փախավ աչքերիցդ, միտքդ զբաղեցրու ազդիքով: Եվ եթե նկատես, որ մտքումդ ծագում է որևէ չար միտք,

փրկվելու համար հիշիր Դատաստանը: Քո միտքը զբաղեցրու՝ ճշմարտությունը սովորելով, որպեսզի մոռանաս անպետք և չար բաները: Եթե լսես, թե մեկը քեզ ասում է. «Դու ընկղմվում ես ջրի մեջ մկրտվելու՞: Ի՞նչ է, քաղաքում բաղնիքներ չկա՞ն»: Իմացիր, որ ծովային վիշապն է անում այդ ամենը: Ուշ մի՛ դնիր վիշապի խոսքերին, այլ տես Աստծու գործերը: Պահպանիր քո հոգին, որ այն գերի չդառնա: Այսպիսով, հույսի մեջ մնալով, արժանի լինես՝ դառնալու հավիտենական փրկության ժառանգորդ:

17. Որպես մարդիկ, մենք այս ամենը պատվիրում ենք և ուսուցանում: Զգուշացեք, որ մեր շենքը չդարձնենք խոտ, եղեգ և ծղոտի դեզ, որ չլինի, թե արդյունքը հրկիզվի, և մենք վնասներ կրենք: Այլ ջանացեք արժեվորել գործը և դարձնել ոսկի, արծաթ և թանկարժեք քարեր: Քանզի իմ գործը ուսուցանելն է, քո գործը՝ նախընտրելը, իսկ Աստծու գործը քո փրկության գործն ավարտելն է: Ուրեմն լաւ ենք մեր մտքերը. ամրացնենք մեր հոգիները, պատրաստենք մեր սրտերը: Վազում ենք հոգու համար: Հույս ունենք հավիտենական բարիքների: Աստված հզոր է, նա ճանաչում է ձեր սրտերը և գիտի, թե ո՞վ է ձեզանից անկեղծ և ով՝ կեղծավոր: Նա կարող է անկեղծին պահպանել, իսկ կեղծավորին դարձնել անկեղծ և հավատարիմ: Քանզի Աստված կարող է անհավատին ևս դարձնել հավատավոր, եթե միայն նա Աստծուն տա իր նախընտրանքը և իր սիրտը: Իցիվ թե ջնջի ձեր մեղքերի ձեռագրերը. իցիվ թե ձեր նախկին գանցանքները մոռացություն մատնի, ձեզ տնկի Եկեղեցում և հավաքագրի ձեզ իր գործում՝ զինելով ձեզ արդարություն գեղքերով: Իցիվ, թե ձեզ շնորհի նաև Նոր Կտակարանում խոստացվածների կենսագործումը և ձեզ հավիտյանս կնքի Սուրբ Հոգու անջնջելի գրոշմով, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Շնորհով, Ում փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:

## ՈՒՍՈՒՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ

### Լուսավորվողների

Ներածական՝ արված Երուսաղեմում, մկրտվելու եկած լուսավորվողների և ընթերցում Եսայի մարգարեի գրքից. «Լվացվեցեք, մաքրվեցեք, իմ աչքի սուսք ձեր չար արարքները թոթափեցեք ձեզնից» (Եսայի, Ա, 16) և շարունակությունը:

1. Նոր Կտակարանի աշակերտներ՝ և Քրիստոսի խորհուրդների հաղորդակիցներ՝: Այժմ իբրև հրավիրյալներ, իսկ քիչ հետո աստվածային շնորհի մասնակիցներ: «Նորագեցեք ձեր սիրտը և նորագեցեք ձեր հոգին» (Եզեկ., 18, 31), որպեսզի ուրախություն առի՞թ դառնաք երկնայիններին: Քանզի, ինչպես ասված է Ավետարանում, անգամ մեկ ապաշխարողի դեպքում ուրախություն է երկնքում. ուրեմն, ինչքան առավել ուրախություն կլինի երկնքում այսքան հոգիների փրկության պատճառով: Այժմ, երբ արդեն բռնել եք ազնիվ և ճշմարիտ հավատքի և պաշտամունքի ճանապարհը, մինչև վերջ երկյուղածությունը ընթացեք բարեպաշտության այդ ճանապարհով: Աստծու Միածին Որդին կանգնած է ձեր կողքին, պատրաստ ձեզ փրկություն շնորհելու՝ ասելով. «Եկեք ինձ մոտ բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ., ԺԱ, 28): Ովքեր հագել եք մեղսալից կրքերի ծանր պատմունճանը և ճնշված եք ձեր մեղքերի շղթաներով, լսեք մարգարեի ձայնը, որ ասում է. «Լվացվեցեք, մաքրվեցեք, իմ աչքի առաջ ձեր չար արարքները թոթափեցեք ձեզնից» (Եսայի, Ա, 16), որպեսզի արժանի լինեք լսելու հրեշտակներին, որոնք կերգեն ձեզ համար: «Երանի նրան, ում մեղքե-

րին թողութիւն տրվեց, և ում բոլոր հանցանքները ծածկվեցին» (Սաղմ., ԼԱ 1): Ովքեր արդեն վառել եք ձեր հավատի ջահերը, դրանք անմար պահեք ձեր ձեռքերում, որպեսզի նա, Ով ամենասուրբ Գողգոթայում ավազակի առաջ, նրա հավատի պատճառով, բացեց Դրախտի դուռը, ձեզ շնորհի նաև հարսանեկան օրհներգի մեղեդին:

2. Եթե այստեղ կա մեղքին ստրկացած որևէ մեկը, թող հավատքով լինվին պատրաստ լինի, որպեսզի որդեգրումը նրան շնորհի իրական ազատագրում և ամբողջական վերածնում: Եվ դեն նետելով մեղքի վատագույն ստրկութիւնը և ձեռք բերելով Տիրոջ ամենաերանելի ծառայութիւնը՝ արժանի դառնա երկնային թագավորութիւնը ժառանգելու: Զգեստի նման հանք ձեր վրայից հին մարդուն, որ մաշվում է մեղքի խաբուսիկ ցանկութիւնից, որպեսզի հագնեք նոր մարդուն, որը շարունակ նորոգվում է՝ իրեն արարողին կատարյալ ճանաչելով: Հավատքով դուք ձեռք բերեք Սուրբ Հոգու երաշխիքը, որպեսզի ընդունելի լինեք հավիտենական վրամներում: Եկեք ընդունելու խորհրդավոր դրոշմը, որպեսզի հեշտ ճանաչելի լինեք Տիրոջը: Ընդգրկվեցեք սուրբ և բանական հոտում Քրիստոսի, ով ձեզ կդնի իր աջ կողմը և ձեզ կդարձնի ձեզ համար սահմանված հավիտենական կյանքի ժառանգորդներ: Իսկ նրանք, ովքեր դեռևս ծածկված են մեղքերի ծանր զգեստով, կմնան նրա ձախ կողմում, քանի որ չեն արժանացել նրա շնորհին՝ տրված Քրիստոսի միջոցով վերածնման լուրջարանում: Ասելով վերածնում՝ ես նկատի չունեմ մարմնավորը, այլ՝ հոգևոր վերածնումը: Քանզի մարմինները ծնվում են տեսանելի ծնողներից, մինչդեռ հոգիները վերածնվում են հավատքի միջոցով: «Քանզի քամին ուր ուղում է՝ փչում է» (Հովհ., Գ 8): Եվ այդ ժամանակ, եթե արժանի դարձած լինես, կլսես. «Ապրես, բարի և հավատարիմ ծառա» (Մատթ., ԻԵ 21), եթե իրոք քո խղճի վրա ծանրա-

ցած չէ որևէ անմաքրութիւն, որն առաջացնում է կեղծավորութիւնը:

3. Եթե այստեղ գտնվողներից որևէ մեկը կարծում է, թե կարող է փորձել աստվածային շնորհը, խաբում է ինքն իրեն և չի գիտակցում շնորհի գորութիւնը: Ո՛վ մարդ, առանց կեղծիքի պահիր քո հոգին՝ իմանալով, որ նրա առաջ ես, Ով քննում է մեր սրտի խորքերը և ճանաչում է անգամ մեր ամենածածուկ ցանկութիւնները: Ինչպես որ գորահավաք կատարողները գնում են գորակոչվողների տարիքը և մարմնի վիճակը, այդպես էլ Տերը, հոգիների գորահավաք կատարելիս, քննում է նախընտրանքը. և երբ գտնում է, թե հոգու մեջ թաքնված է կեղծավորութիւն, մարդուն վտարում է որպես անպիտանի: Բայց եթե նրան արժանի գտնի, նրան իսկույն շնորհք կպարգևի: Սրբութիւնները նա չի տա շնորհին, այլ այնտեղ, ուր տեսնում է բարի ընտրութիւն, տալիս է փրկարար և հրաշալի կնիքը, որը ճանաչում են հրեշտակները, և որից դողում են դևերը: Ուստիև դևերը կփախչեն վազելով, իսկ հրեշտակները նրան կհսկեն որպես յուրայինի: Ուստի նրանք, ովքեր ստանում են այդ հոգևոր և փրկարար կնիքը, պետք է ներդնեն իրենց ընտրանքը: Քանզի ինչպես որ գրելու եղեգը և կամ նետասլաքը կարիք ունեն մարդկային գործակից ձեռքի, այնպես էլ Շնորհքը հավատացյալների կարիքն ունի:

4. Ուրեմն, դու ստանում ես ոչ թե քայքայվող գեներ, այլ՝ հոգևոր: Ուստի հաստատապես տնկվում ես մտովի դրախտում: Ստանում ես նոր անուն, ինչը դու նախապես չունեիր: Մինչ այդ ուսումնական էիր, այժմ կոչվում ես հավատացյալ: Ուրեմն, մտովի վերատնկվում ես ձիթենյաց անտառում և, պատվաստվելով, վայրի ձիթենուց դառնում ես բարեպտուղ ձիթենի. մեղքերից անցնում ես արդարութիւն, եղծանումից՝ մաքրութիւն: Դառնում ես հաղորդակից

սրբազան այգուհ: Եթե շարունակես մնալ այդ այգուհ, դու կծաղկես բերքատու որթատունկի նման: Իսկ եթե չմնաս այնտեղ, ապա կմատնվես կրակի և կմոխրանաս: Ուրեմն, տանք արժանի պտուղներ: Մեզ հետ ևս, Աստված մի՛ արասցե, չլինի այն, ինչ անպտուղ թփերու հետ, և չլինի, թե մի օր Հիսուս գա և մեզ անիծի անպտղության համար: Այլ թող մեզ արժանի համարի ասելու, ինչպես սաղմոսում. «Իսկ ես Աստծու տան հույժ պտղաբեր ձիթենու նման եմ. հավիտյան և հավիտեանս հավիտենից հույս դրի Աստծու ողորմության վրա» (Սաղմ., ԿԱ 10): Զիթենի՝ ոչ շոշափելի, այլ՝ մտային, լուսակիր: Աստծու գործն է տնկելն ու ջրելը, իսկ քո գործը՝ պտղաբերելը: Աստծու գործն է քեզ շնորհ պարգևելը, իսկ քո գործը՝ այն ընդունելն ու պահելը: Քեզ ձրի տրված լինելու պատճառով մի՛ արհամարհիր շնորհը, այլ, ստանալով, երկյուղածությամբ պահիր այն:

5. Այժմ խոստովանության ժամանակն է: Խոստովանիր քո արարքները և քո ասածները, գիշերվա գործերդ և ցերեկվա գործերդ: Խոստովանիր, քանի ժամանակը պատեհ է: Եվ փրկության օրում ընդունիր երկնային գանձը: Հաճախիր երդման արարողություններին: Մի բացակայիր ուսուցումներից և հիշիր ասվածները: Ասվում է ոչ միայն լսելու համար, այլև որպեսզի հավատքի միջոցով հաստատես ասվածները: Մարդկային բոլոր հոգսերը հեռացրու քեզանից, քանզի վազում ես հոգուդ փրկության համար: Բոլորովին թող աշխարհի գործերը: Փոքր են քո թողած գործերը, բայց մեծ են Տիրոջ պարգևածները: Բաց թող առկա գործերդ և հավատա ապագայի գործերին: Այսքան տարիներ իզուր ես վատնել աշխարհի գործերի համար, իսկ այժմ մի՞թե չես կարող քառասուն օր զբաղվել հանուն քո հոգու փրկության. «Շտապեցեք և իմացեք, որ ես Աստվածն եմ» (Սաղմ., ԽԵ 11), ինչպես ասված է Գրքում: Հրաժարվիր ծուլ և շատախոս գրույցներից: Մի՛ չարախոսիր և

չարախոսին հաճույքով մի՛ լսիր: Այլ լավ է, որ միշտ պատրաստ լինես աղոթելու: Քո համառ ջանքերով ու փորձերով ցույց տուր քո հոգու հոժարությունը և գործությունը: Մաքրիր քո հոգու անոթը, որպեսզի ավելի շատ և շուտ ընդունես շնորհը: Քանզի մեղքերի թողությունը բոլորին տրված է հավասարապես, բայց Սուրբ Հոգու հաղորդութունը տրվում է յուրաքանչյուրին նրա հավատքի համեմատ: Եթե քիչ խոնջես, քիչ էլ կստանաս, իսկ եթե շատ աշխատես, վարձդ էլ շատ կլինի: Դու վազում ես քո շահի համար: Դու նայիր քո հոգու օգտին:

6. Եթե որևէ բան ունես ուրիշի դեմ, մոռացիր այն: Դու գալիս ես ստանալու քո մեղքերի թողությունը: Անհրաժեշտ է, որ դու ևս ներես քո դեմ մեղանչածին: Քանզի ի՞նչ երեսով դու Տիրոջը կասես՝ «Թող ինձ իմ բազում մեղքերը», երբ դու քո ծառայակցի փոքր մեղքերն անգամ չես ներել: Հավաքույթներում եղիր ուշադիր: Եվ ոչ միայն այժմ, երբ երեցների ներկայությունն իսկ պահանջում է քո ուշադրությունը, այլ նաև շնորհն ստանալուց հետո: Քանզի մի՞թե այն ստանալուց առաջ կատարվածը լավ է, իսկ ստանալուց հետո՝ ոչ լավ: Եթե պիտանի է որպես բերքատու ծառ պատվաստվելուց առաջ ջրվելը և մշակվելը, արդյոք առավել պիտանի չի՞ լինի պատվաստվելուց հետո ևս նույնը կատարելը: Պայքարիր հանուն քո հոգու փրկութան, առավել ևս այս օրերին: Մնիր քո հոգին սրբազան ընթերցումներով: Քանզի Տերը քեզ համար պատրաստել է հոգևոր սեղան: Դու ևս սաղմոսերգուի նման ասա. «Տերը իմ հովիվն է, և ինձ ոչինչ չի պակասի: Դալար վայրերում նա ինձ բնակեցրեց, հանդարտ ջրերի մոտ ինձ անուցեց. նա կենդանացրեց ինձ» (Սաղմ., ԻԲ 1-3), որպեսզի քեզ հետ զվարթանան նաև հրեշտակներն ու նա՝ ինքը, մեր Մեծ քահանայապետ Հիսուսը, որն, ընդունելով ձեր բարի ընտրությունը, ձեզ բոլորիդ կհանձնի Երկնային Հորը և

կասի Նրան. «Ահավասիկ ես և իմ զավակները, որ Աստված ինձ պարգևեց» (Եսայի, Ը 18: Եբր., Բ 13): Թող պահի ձեզ բոլորիդ Աստված, Ում դուք հաճոյացրիք ձեր կյանքով: Նրան վայել է փառք և իշխանութիւնն հավիտյանս հավիտենից: Ամեն:



## ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ

### Արված Երուսաղեմում ապաշխարության և մեղքերի թողության ու հակառակորդի մասին

Եվ ընթերցում Եզեկիելից. «Արդարի արդարությունն է իր վրա ընկնելու, անօրենի անօրենությունը՝ իր վրա: Անօրենը եթե ճես կանգնի իր գործած անօրենություններից ու պահի իմ բոլոր պատվիրանները, արդարություն գործի ու ողորմածություն անի, ասրելով ասրելու է ու չի մեռնելու» (Եզեկ., ԺԸ 20-21):

1. Մեղքը ծանր չարիք է, և անօրենութիւնը՝ հոգու ծանրագույն հիվանդութիւն: Այն թուլացնում է հոգին և պատճառ դառնում հավիտենական կրակի: Մարդու ինքնակամ թեքումը դեպի չարը բխում է մարդու ընտրութիւնից: Եվ այն, որ մենք ինքնակամ ենք մեղանշում, հաստատում է մարգարեն՝ ասելով. «Ես քեզ տնկեցի իբրև համակ ազնիվ և պտղաբեր որթատունկ. ինչ<sup>ո՞ւ</sup> ինձ համար դառնութեան փոխվեցիր» (Երեմ., Բ 21): Տնկին լավն է, բայց նախընտրանքից ստացված պտուղը՝ վատ: Դրա համար տնկողը մեղավոր չէ. իսկ որթատունկը կրակով կայրվի ու կմոխրանա, քանի որ, թեև տնկված էր բարի պտուղ տալու համար, բայց նախընտրանքով չար պտուղ տվեց: Քանզի Աստված մարդուն ստեղծեց ուղիղ, ինչպես ասել է Ժողովողը, և մարդն իր մտածմունքը տարածեց բազում ուղղութիւններով. «Որովհետև Նրա արարածներն ենք՝ Քրիստոս Հիսուսով ստեղծվածներ բարի գործերի համար», ասում է առաքյալը (Եփես., Բ 10): Եվ Արարիչը, բարի լինելով, մարդուն ստեղծեց բարի գործերի համար, իսկ արարածը իր վատ ընտրութեամբ թեքվեց դեպի չարիքը: Ուրեմն, ինչպես ասվեց, մեղքը շատ ծանր չարիք է, բայց ոչ



անբուժելի: Այն ծանր է մեղքի իշխանություն տակ գտնվողի համար, բայց բուժելի նրա համար, ով ապաշխարելով ձերբազատվում է դրանից: Ենթադրենք, որ մարդ իր ձեռքում կրակ է պահել: Քանի դեռ նա իր ձեռքում պահում է այրվող ածուխը, նա այրվում է: Իսկ եթե ածուխը դեն նետի, միաժամանակ կրակը ևս նետած կլինի: Եվ եթե կա որևէ մեկը, ով կարծում է, թե մեղանչելիս ինքը չի այրվի, նրան Սուրբ Գիրքն ասում է. «Հնարավոր է արդյոք, որ մեկը կրակը պահի իր գոգի մեջ, և շորը չայրվի» (Առակ., 27): Քանզի մեղքը այրում, թուլացնում է հոգին, առաջացնում մտավոր լուրջ խանգարումներ, մթազնում սրտի պայծառությունը:

2. Բայց կարող են հարց տալ՝ Ի՞նչ բան է մեղքը. կենդանի՞ է: Հրեշտակ: Դե՞: Այդ Ի՞նչ է, որ գործում է մարդու ներսում: Ո՞վ մարդ: Քո դեմ կովող թշնամին դրսից չէ, այլ քեզնից ծնված չարիք, որ դուրս է գալիս քո միջից, քո վատ նախընտրության պատճառով: Նայիր մաքուր աչքերով, և քո մեջ չար ցանկությունն չի ծնվի: Մի հափշտակիր այլոց ինչքը, և հափշտակելու կիրքը կմարի քո մեջ: Հիշիր Դատաստանի օրը, և քեզ վրա չեն կարող իշխել ո՛չ պոռնկությունը, ո՛չ անառակությունը, ո՛չ մարդասպանությունը, ո՛չ էլ որևէ մեկ այլ անօրենություն: Բայց երբ մոռանաս Աստծուն, այնժամ կսկսես չարիք մտածել և անօրենություն գործել:

3. Չարիքը չի սկսվում միայն քեզնով: Կա մեկ ուրիշ չարագույն դրդիչ ևս, սատանան: Նա է, որ ծրագրում է և մղում մեղքեր գործելու. բայց նա չի կարող բռնություն ստիպել իրեն չենթարկվողներին: Այդ պառճառով ժողովողն ասում է. «Եթե իշխանի գայրույթը բռնկի քո դեմ, դու մի՛ լքիր քո տեղը» (Ժող., 4): Եթե դու փակես քո դուռը նրա առաջ և նրան հեռացնես, նա չի կարող քեզ վնասել: Իսկ եթե անտարբերությամբ ընդունես չար ցան-

կություն մղումը, նա մտածված կերպով արմատանում է քո մեջ, ամուր կաշկանդում է քո միտքը և քեզ նետում չարիքի փոսը: Բայց գուցե դու կասես. Ես հավատարիմ եմ և իմ մեջ չի ամրանա ցանկությունը, անգամ եթե ավելի հաճախ մտածեմ այդ մասին: Բայց դու մոռանում ես, որ աճող արմատը շատ անգամ ջարդել է քարերը: Մի ընդունիր հունդը. այն կփշրի հավատքի քարը: Ծաղկելուց առաջ արմատախիլ արա չարը. չլինի, թե, սկզբում անտարբեր գտնվելով, հետագայում կացնի և կրակի պետք զգաս: Աչքդ բուժիր ժամանակին, որ հետո չկուրանաս և դիմես բժշկի:

4. Մեղքը գլխավորողը և չարիք ծնողը սատանան է: Տերն է այդ ասել, և ոչ թե ես: Նա ասել է. «Սատանան մեղանչող է ի սկզբանե» (Ա Հովհ., 9 8): Նրանից առաջ ոչ ոք չի մեղանչել: Եվ նա մեղք գործեց ոչ այն պատճառով, որ բնությունը հակված էր դեպի մեղքը: Սատանան ստեղծվել էր բարի, բայց այն, ինչի նա վերածվեց, իր ընտրության պատճառով եղավ և այդ անվանումը՝ բանսարկու, նա ստացավ իր գործերի պատճառով: Քանզի լինելով հրեշտակապետ՝ նա հետագայում կոչվեց բանսարկու, սատանա, որովհետև անվերջ բանսարկություններ է անում: Սատանա բառը նշանակում է հակադրվող, բանսարկու: Եվ այս ամենը սովորեցնողը ես չեմ, այլ հոգեկիր Եգեկիել մարգարեն: Քանզի նա, սկսելով իր ողբը, ասում է. «Դու կատարյալ իմաստության նմուշ ես եղել, գեղեցկության պսակ, եղել ես Աստծու դրախտի զգվանքներում» (Եգեկ., ԻԸ 12-13), և քիչ հետո՝ «Անարատ ես եղել քո օրերում, ստեղծվելուցդ ի վեր, մինչև որ անիրավություններ են երևան եկել քո մեջ» (Եգեկ., ԻԸ 15): Շատ լավ է ասել մարգարեն՝ «երևան եկան քո մեջ»: Այն դրսից չեկավ ու մտավ, այլ դու ինքդ ծնեցիր չարիքը: Եվ շարունակության մեջ նշում է նաև պատճառը. «Գոռոզացավ քո սիրտը քո գեղեցկության մեջ, ապականվեց քո իմաստությունը: Քո

մեղքերի շատության համար վիրավորվեցիր ու նետվեցիր գետին» (Հմմտ. Եզեկ., ԻԸ 17): Տերը ևս նույնն է ասում Ավետարանում. «Տեսնում էի սատանային երկնքից ընկնելիս, ինչպես փայլակը» (Ղուկ., Ժ 18): Տեսնո՞ւմ ես ինչքան է համաձայնվում Հին Կտակարանը Նորին: Սատանան ցած ընկնելիս իր հետ քաշեց նաև շատերին: Իրեն հնազանդվողների մեջ նա ներդնում է ցանկություններ: Նրանից են առաջանում պոռնիկությունը, անառակությունը և ամեն ինչը, որ չար է: Նրա պատճառով էր, որ մեր նախահայր Ադամը իր անհնազանդության համար վտարվեց դրախտից և ինքնաբերաբար հիանալի պտուղներ արտադրող պարտեզը փոխանակեց տատասկոտ երկրի հետ:

5. Ուրեմն ի՞նչ, կհարցնեք. մենք կորանք՝ այդպես խաբվելով: Արդյոք այլևս փրկություն չկա՞: Մենք ընկել ենք. արդյոք չե՞նք կարող բարձրանալ: Կուրացանք. արդյոք հնարավոր չէ՞, որ վերստին տեսնենք: Կաղ դարձանք. արդյոք չե՞նք կարողանալու դարձյալ ուղիղ քայլել: Կարճ ասած, մահացանք. արդյոք չե՞նք կարող հարուստություն առնել: Արդյո՞ք չորս օրվա մահացած և արդեն նեխահոտ փչող Ղազարոսին հարուստություն տվողը չի կարող քեզ՝ դեռևս կենդանի եղողիդ, ավելի հեշտ հարուստություն տալ: Նա, ով մեզ համար թափեց իր թանկագին արյունը, կփրկի մեզ մեղքերից: Չհուսալքվենք, եղբայրներ: Մեզ չնետենք հուսահատության գիրկը: Քանզի շատ ծանր է չհավատալ ապաշխարության հույսին: Նա, ով փրկության ակնկալիք չունի, անխնա կերպով կընկնի չարիքի մեջ. իսկ նա, ով հույս ունի բժշկվելու, իր ամբողջ կարողությամբ ջանում է և հոգում իր մասին: Ավագակը, որը շնորհ ստանալու ոչ մի ակնկալություն չունի, ընկնում է դաժանության և անտարբերության գիրկը: Բայց երբ մեղքերի թողության հույս է ունենում, նա հաճախ ապաշխարության է հասնում: Ապա՞ օձը իր վրայից հանում է իր ձերացած կաշին, իսկ մենք մեր

վրայից դեն չե՞նք նետելու մեղքը: Տատասկոտ երկիրն անգամ լավ մշակելու դեպքում դառնում է պտղատու, իսկ մենք մի՞թե չենք կարող ուղղվել և փրկվել: Մեր բնությունն ընդունում է փրկությունը, մնում է միայն մեր ընտրությունը:

6. Աստված մարդասեր է. նույնիսկ շատ մարդասեր: Մի՛ ասա՝ պոռնկացել եմ, անառակացել եմ, չարիք եմ գործել, նույնիսկ ոչ թե մեկ անգամ, այլ բազմիցս: Աստված արդյո՞ք կների ինձ, արդյոք կմոռանա՞ իմ մեղքերը: Լսիր, թե ինչ է ասում սաղմոսերգուն. «Որքան շատ է քո ողորմության քաղցրությունը, Տեր» (Սաղմ., Լ 20): Քո բոլոր մեղքերը միասին չեն գերազանցի Աստծու բարեգլխության մեծությունը: Վերքերը չեն հաղթի Բժշկապետի հմտությունը: Միայն թե հավատքով քո անձը հանձնիր Նրան: Հանձնիր Բժշկին քո հիվանդությունը: Դու ևս Դավթի նման ասա. «Մեղքերս քեզ ցույց կտամ և անօրենությունս քեզնից չեմ ծածկի, և դու թողություն կտաս իմ մեղքերի ամբողջ ամբարշտությանը» (Սաղմ., ԼԱ 5):

7. Ուզո՞ւմ ես դու տեսնել Աստծու մարդասիրությունը, ուսուցման նոր մասնակից: Ուզո՞ւմ ես տեսնել Նրա մեծ մարդասիրությունը և մեծահոգությունը: Լսիր, թե ինչ կատարվեց Ադամի հետ: Նախաստեղծը խախտեց Աստծու պատվիրանը: Մի՞թե Աստված չէր կարող նրան իսկույն մահավամբ պատժել: Բայց տես, թե անսահման բարեգութ Աստված ի՞նչ արեց: Նրան, անշուշտ, արտաքսեց Դրախտից, քանզի Ադամն իր գործած մեղքի պատճառով արժանի չէր այնտեղ ապրելու, բայց նրան բնակեցնում է Դրախտի դիմաց, որպեսզի, տեսնելով, թե ո՞ր տեղից է դուրս հանվել և ո՞ր տեղ նետվել և ինչպիսի պայմաններից ընկել ինչ պայմանների մեջ, նա զղջա և փրկվի: Կայենը՝ առաջնաձին մարդը, դարձավ եղբայրասպան և չարիքի հայտնա-



գործող: Առաջին մարդասպանը՝ բոլոր մարդասպաններին գլխավորողը, առաջին չարանախանձը: Իսկ եղբորը սպանելուց հետո նա ի՞նչ պատիժ կրեց. «Ահ ու դողի և երերման մեջ պիտի լինես երկրի վրա» (Ծննդ., Դ 12): Մեղքը մեծ է, իսկ պատիժը՝ փոքր:

8. Իրոք, այս ևս Աստուծո մարդասիրության ապացույցն է, սակայն միայն փոքր այն ամենի համեմատ, ինչ ստորև կասեմ: Հիշիր, թե ինչ կատարվեց Նոյի հետ: Հսկաները մեղանչեցին, և համայն երկրի վրա տարածվեց անօրենությունը, որի պատճառով էլ պիտի մեծ ջրհեղեղ տեղի ունենար: Առաջին անգամ Աստված սպառնաց հինգ հարյուրերորդ տարում: Տեսնո՞ւմ ես Աստուծու լայն մարդասիրության չափը, որ Նա ամբողջ հարյուր տարի հետաձգեց ջրհեղեղը: Մի՞թե Աստված չէր կարող հարյուր տարի հետո կատարածը իր առաջին սպառնալիքից անմիջապես հետո կատարել: Բայց Աստված դիտավորյալ այսքան երկար ժամանակով հետաձգեց՝ տալով մարդկանց զղջման հնարավորություն: Ուրեմն, տեսնո՞ւմ ես Աստուծու բարությունը: Եվ եթե նրանք այդ ընթացքում զղջային, չէին զրկվի Աստուծու մարդասիրությունից:

9. Եկ, ուրեմն, դիմենք նաև ապաշխարելով փրկված ուրիշ մարդկանց օրինակներին: Գուցեև կանանց մեջ գտնվի մեկը, որ ասի, թե՛ պոռնկացա, անառակ եղա, մարմինս ապականեցի ամեն տեսակ անառակություններով: Ուստի կա՞րդյոք ինձ համար ևս փրկություն: Տե՛ս, ով կին, Ռահաբին և դու նույնպես փրկության հույս ունեցիր: Այդ ինչն է նա, ով բացահայտ և հրապարակավ պոռնկացել է, ապաշխարելով փրկվեց, մի՞թե չի կարող փրկվել և նա, ով մեկ անգամ պոռնկացել է, այն էլ՝ նախքան Մկրտություն Շնորհն ստանալուց առաջ: Փնտրիր և իմացիր, թե նա ինչպե՞ս փրկվեց. նա ասաց միայն. «Ձեր Տեր Աստվածը Աստ-

ված է երկնքում և երկրի վրա. ձեր Աստվածը» (Հեսու, Բ 11): Նա ասաց՝ «Ձեր Աստվածը»: Նա չհամարձակվեց Նրան անվանել իր Աստվածը՝ իր մեղավորության պատճառով: Եվ եթե ուզում ես համոզվել, թե Աստված ներեց նրան և վերստին ընդունեց իր մոտ, դու ունես գրավոր վկայություն այդ մասին Սաղմոսում. «Հիշեցի Ռահաբն ու Բաբելոնը, որոնք ճանաչում են ինձ» (Սաղմ., ԻԲ 4): Ո՞վ Աստուծու մեծ մարդասիրություն: Անգամ պոռնիկներին է հիշատակում, և այն էլ՝ Սուրբ Գրքում: Եվ այն էլ ոչ թե պարզապես. «Պիտի հիշեմ Ռահաբին և Բաբելոնը», և ապա ավելացնում է. «Նրանց, ովքեր ինձ ճանաչում են իբրև Աստված»: Ուրեմն, թե՛ այրերի, թե՛ կանանց համար հավասարապես կա փրկություն, որը գալիս է ապաշխարության միջոցով:

10. Եթե անգամ ամբողջ մի ժողովուրդ մեղանչի, դարձյալ չի կարող հաղթել Աստուծու մարդասիրությանը: Իսրայելը դարձավ հորթի պաշտամունքին, բայց Աստված չհրաժարվեց իր մարդասիրությունից: Մարդիկ Աստուծուն մերժեցին, բայց Աստված չմերժեց իր անձը: Նրանք երկրպագեցին ձուլածո հորթին և ասացին. «Սա է քո աստվածը, Իսրայել՛, որ քեզ դուրս բերեց եգիպտացիների երկրից» (Ելք, ԼԲ 8): Դարձյալ, ինչպես միշտ, Աստված եղավ նրանց փրկողը: Եվ մեղանչել էր ոչ միայն ժողովուրդը, այլև Ահարոն քահանայապետը: Քանզի ինքը Մովսեսն էր, որ ասաց. «Նա խիստ բարկացել էր Ահարոնի վրա: Ես այս անգամ էլ աղոթեցի Ահարոնի համար, և Աստված ներեց նրան» (Բ Ծր., Թ 20): Ապա Մովսեսը, խնդրելով Աստուծուն մեղանչած Ահարոնի համար, շարժեց Աստուծու գուլթը: Եվ Միածին Հիսուսը, մեզ համար Աստուծու առաջ միջնորդելով, մի՞թե չի շարժի Աստուծու գուլթը: Այդ ինչպե՞ս Նա կարող է Ահարոնին չզրկել քահանայապետության պաշտոնից նման մեղք գործելուց հետո, իսկ քեզ՝ հեթանոսներից եկածիդ և փրկության ճանապարհ մտածիդ, մերժի: Ուրեմն, մարդ,

ինքդ ևս իսկույն ապաշխարիր, և շնորհը քեզ չի մերժի: Այսուհետև դու մնա անխոցելի. քանզի Աստված իրոք մարդասեր է, և մարդ չի կարող պատմել նրա մարդասիրության մեծությունը, եթե անգամ ամբողջ կյանքում խոսի նրա մարդասիրության մասին: Եվ ոչ էլ եթե մարդկանց բոլոր լեզուները միանան, դարձյալ չեն կարող Աստծու մարդասիրության մեկ մասն անգամ պատմել: Մենք հիշատակեցինք մարդկանց նկատմամբ Աստծու դրսևորած մարդասիրության մասին գրվածները: Բայց մենք դեռ չգիտենք, թե Նա ինչքան բաներ է ներել հրեշտակներին: Քանզի հրեշտակները ևս կարիք ունեն ներման, որովհետև անմեղսագործ է միայն մեզ մեղքերից փրկող Հիսուսը: Բայց նրանց մասին ասվածը բավական է:

11. Իսկ եթե կամենում ես, որ քեզ այլ օրինակներ ևս պատմեմ, եկ անդրադառնանք երանելի Դավթին, և նրան համարիր քեզ համար ապաշխարանքի օրինակ: Այս մեծ մարդը սխալվեց: Ցերեկվա հանգստից հետո, երեկոյան տանիքի վրա քայլելիս, հանկարծ տեսավ, և իր հետ պատահեց մարդկային մի բան: Մեղք գործվեց, բայց դրա հետ չկորավ մեղքը խոստովանելու բարի ձգտումը: Եկավ Նաթան մարգարեն՝ արագ դատողն ու վերքը բուժողը, և ասաց. «Տերը զայրացավ: Դու մեղք գործեցիր»: Թագավորին այսպես ասաց պարզ մարդը: Բայց ծիրանազգեստ Դավիթ արքան չզայրացավ, քանզի իր ուշադրությունը ոչ թե խոսողի վրա էր, այլ նրան ուղարկողի վրա: Նրա միտքը չմթազնեց կանգնած զինվորների բազմությունը, քանզի նա մտովի տեսնում էր Տիրոջ հրեշտակների գորքը և տագնապեց, ասես, տեսնելով անտեսանելին: Պատասխանելով նրան, ավելի ճիշտ՝ նրա միջոցով ուղարկողին, նա ասում է. «Մեղանչեցի Տիրոջ առաջ»: Տեսնո՞ւմ ես թագավորի համեստությունը, տեսնո՞ւմ ես խոստովանությունը: Մի՞թե որևէ մեկը քննադատել էր նրան. կամ մի՞թե շատ

մարդիկ էին իմացել իր գործած մեղքը: Գործն արագ էր կատարվել, և մարգարեն իսկույն ներկայացել էր իբրև մեղադրող, և մեղսագործը խոստովանում է իր արարքը. և քանի որ խոստովանել էր շնորհակալությամբ, արագ բուժվեց: Քանզի մեղադրող Նաթանն իսկույն ասում է. «Տերը ներեց քո մեղքը»: Տեսնո՞ւմ ես մարդասեր Աստծու որոշման այսքան արագ փոփոխությունը: Բայց մարգարեն վերջում ասում է. «Դու զայրացնելով զայրացրիր Տիրոջ թշնամիներին: Դու, հիրավի, ունեիր բազում թշնամիներ, բայց քեզ պահպանում էր խելամտությունը: Իսկ այժմ, դավաճանելով այդ հզոր զենքին, քո դեմ ունես թշնամիներ, որոնք արդեն կազմակերպել են քո դեմ հարձակում»:

12. Մարգարեն այսպես մխիթարեց նրան: Իսկ երանելի Դավիթը, թեև շատ պարզ լսեց Նաթանից՝ «Տերը ներեց քո մեղքը», բայց թագավոր լինելով հանդերձ, չհրաժարվեց ապաշխարելուց և ծիրանու փոխարեն քուրճեր հագավ, ոսկեզարդ գահի փոխարեն նստեց մոխրի և հողի վրա: Ոչ միայն մոխրի վրա նստում էր, այլև մոխիր ուտում, ինչպես ինքն է ասել. «Մոխիր կերա հացի տեղ և ըմպելիքս արտասուքով խառնեցի» (Սաղմ., ՃԱ 9): Նույն աչքերից, որոնցից բխեց այդ անօրեն ցանկությունը, այժմ արցունքներ էին հոսում. «Ամեն գիշեր հեծեծանքով կլվամ մահիճն իմ և արտասուքով կթրջեմ անկողինս» (Սաղմ., 2 7): Իշխանավորները նրան խնդրում էին հաց ուտել, բայց նա չէր համոզվում: Ամբողջ յոթ օր նա ծոմ պահեց: Եթե թագավորն այսպես խոստովանում էր, ապա դու, հասարակ մա՛րդ, մի՞թե պարտավոր չես խոստովանելու: Եվ Աբեսաղոմի ապստամբությունից հետո ևս, մինչդեռ նա կարող էր փախչել այլ ճանապարհներով, գերադասեց Զիթենյաց անտառով փախչել, ասես մտովի խնդրում էր Փրկչի ողորմածությունը, Որն այդ վայրից պիտի համբառնար երկինք: Ու մինչդեռ Սեմեին Դավթին խիստ ծանր անիծում էր, նա ա-

սաց. «Թողեք նրան անիծի» (Բ Թագ., ԺԶ 11): Քանզի նա գիտեր, թե՛ ով ներում է, նրան պիտի ներվի:

13. Տեսնում ես, թե օգտակար է խոստովանելը: Տեսնում ես, թե բոլոր ապաշխարողներին փրկուլթյուն կա: Սողոմոնը ևս ընկավ մեղքի մեջ: Եվ ի՞նչ ասաց. «Բայց հետո ես զղջացի» (Առակ., ԻԴ 32): Աքաաբը ևս, Սամարիայի թագավորը, դարձավ ամենաանօրեն կռապաշտը: Նա դարձավ մարգարեսսպան: Նրան օտար էր բարեպաշտուլթյունը: Նա ցանկանում էր հափշտակել այլոց դաշտերն ու այգիները: Բայց երբ Աքաաբը իր կին Հեզաբելի միջոցով սպանեց Նաբուլթային, երբ Եղիա մարգարեն ներկայացավ և սոսկ սպառնաց նրան, նա պատուեց իր զգեստները և քուրճեր հագավ: Եվ մարդասեր Աստված ի՞նչ ասաց Եղիային. «Տեսա՞ր, ինչպես իմ առաջ զղջաց Աքաաբը» (Գ Թագ., ԻԱ 29): Այս խոսքերով Աստված ուզում էր մարգարեի բորբոքված հոգուն ներշնչել համաձայնուլթյուն մարդասպանի զղջման համար: «Քանզի ապրում է, - ասաց, - նրան չարիք չեմ պատճառելու»: Թեև ներման արժանանալուց հետո ևս Աքաաբը չէր հեռանալու չարիքից: Ներողը ներում է նրան: Ապագան հայտնի էր նրան, բայց նա ներում էր չնորհում նրան այժմ, որսալով հարմար պահը, երբ Աքաաբը զղջում հայտնեց: Այդ էլ արդար դատավորին բնորոշող հայտնուլթյունն է՝ յուրաքանչյուր արարք դատել առանձին և ժամանակին:

14. Հերոբոլամը նույնպես, զոհասեղանի առաջ կանգնած, զոհ էր մատուցում կուռքին: Երբ նա, ձեռքը մեկնելով, հրամայեց ձերբակալել իրեն հանդիմանող մարգարեին, նրա ձեռքը չորացավ: Բայց փորձից իմանալով, թե ինչո՞ւ այդ պատահեց իրեն, ասաց մարգարեին. «Քո Տեր Աստծուն աղոթի՛ր ինձ համար» (Գ Թագ., ԺԳ 6): Եվ այդ խոսքից հետո վերականգնվեց նրա ձեռքը: Եթե Հերոբոլամին բժշկեց մարգարեն, մի՞թե Քրիստոս չի կարող բուժել

քեզ և ազատել մեղքերից: Մանասեն եղել է ամենաանօրենը: Նա սողոցեց Եսայի մարգարեին, մասնակցեց կուռքերի պաշտամունքին և Երուսաղեմը ողողեց անմեղ զոհերի արյամբ: Բայց գերի տարվելով Բաբելոն, ինչքան նրա կրած չարչարանքները մեծանում էին, այնքան նա փշրվում էր և խորապես զղջում: Եվ նա բուժվեց: Քանզի Գիրքն ասում է. «Նա խիստ նվաստացավ իր նախնիների Աստծու առջև: Նա աղոթեց Աստծուն. Աստված լսեց նրա աղաչանքն ու նրան վերադարձրեց Երուսաղեմ՝ իր թագավորուլթյանը» (Բ Մնաց., ԼԳ 12-13): Եթե զղջումով փրկվել է նա, ով սողոցել էր մարգարեին, դու, որ այդքան ահավոր բան չես կատարել, մի՞թե չես կարող փրկվել: Տես, թե այդքան թեթևամտորեն չթերագնահատես ապաշխարուլթյան զորուլթյունը:

15. Կուռքե՞ս իմանալ ինչքան հզոր է ապաշխարելը: Կուռքե՞ս իմանալ փրկուլթյան զենքի զորուլթյունը և հասկանալ, թե ի՞նչ զորուլթյուն ունի խոստովանանքը: Եզեկիան խոստովանանքի ուժով փախուստի մատնեց հարյուր ուլթսունհինգ հազար թշնամու: Իրոք, այս իմ ասածը մեծ բան է, բայց շատ փոքր է իմ այժմ ասելիքի համեմատ: Նույն Եզեկիան կարողացավ ապաշխարուլթյամբ ետ կանգնեցնել արդեն կայացած աստվածային որոշումը, որն իրեն հայտնել էր Աստված: Քանզի երբ Եզեկիան հիվանդացել էր, Եղիա մարգարեն ասաց նրան. «Պատվեր տուր տանդ համար, որովհետև մեռնելու ես, չես ապրելու» (Եսայի, ԼԸ 1): Ուրեմն ի՞նչ ակնկալուլթյուն, փրկուլթյան ի՞նչ հույս, երբ մարգարեն ասաց՝ «քանզի դու մեռնելու ես, չես ապրելու»: Բայց Եզեկիան չհրաժարվեց ապաշխարելուց, որովհետև հիշեց Սուրբ Գրքում ասվածը. «Երբ դարձի գաս և խորը հառաչես, այն ժամանակ կփրկվես» (Եսայի, Լ 15): Նա երեսով շրջվեց դեպի պատը և, միտքը մահճից դեպի երկինք բարձրացնելով (քանզի պատերի հաստուլթյունը չի

խանգարում, որ երկյուղածությամբ դեպի երկինք ուղղված աղոթքները հասնեն այնտեղ), ասում է. «Հիշիր ինձ Տեր: Քանզի սոսկ քո հիշելն իսկ բավական է, որ ես բուժվեմ: Ժամանակը չի սահմանում և չի սահմանափակում քո գործողությունները, այլ դու ես կյանքի օրենսդիրը: Քանզի մեր կյանքը առնչություն չունի աստղերի գոյություն ու շարժման հետ, ինչպես ոմանք զրախոսում են թեթևամտորեն: Քանզի դու, Տեր, սահմանում ես և՛ մեր կյանքը, և՛ ապրելու միջոցները»: Այս խոստովանությունից հետո նրա կյանքը, որ մարգարեի հաղորդման համաձայն, անհուսալի էր, երկարեց ևս տասնհինգ տարի: Եվ այդ դեպքը նշանավորվեց՝ արևի դեպի ետ ընթանալով: Եզեկիայի համար արևը ետընթաց շարժվեց, իսկ Քրիստոսի համար արևը խավարեց: Ընթացքը չփոխեց, այլ խավարեց ու անհետացավ, և դրանով հայտնեց այդ երկուսի՝ Եզեկիայի և Քրիստոսի տարբերությունը: Եզեկիան կարողացավ փոխել Աստծու որոշումը. իսկ Հիսուսը մի՞թե չի կարող մեղքերի թողություն չնորհել: Ապաշխարիր և հառաչիր քո անձի համար, փակիր դուռը և աղոթիր, որպեսզի ներում լինի, որպեսզի հանգեն քեզ պատող այրող բոցերը: Որովհետև խոստովանանքը կարող է և՛ կրակ հանգցնել, և՛ առյուծներ ընտելացնել:

16. Եթե չես հավատում, ապա լավ հիշիր, թե ինչ կատարվեց Անանիայի և նրա ընկերների հետ: Ինչպիսի՞ ջրհորներից օգտվեցին, քանի՞ դույլ ջուր կարող էր հանգցնել քառասունինը կանգուն բարձրացած բոցը: Բայց որտեղ բարձրանում էր բոցը, այնտեղ գետի պես հոսում էր հավատքը, այնտեղ արտասանում էին չարիքի հակաթուղյն զղջման աղոթքներ: «Դու արգար ես այն ամենի մեջ, ինչ բերեցիր մեզ վրա: Մենք մեղանչեցինք և անօրհնություն գործեցինք» (Դան. Գ 27-29): Եվ ապաշխարանքը հանգցրեց բոցերը: Եթե չես հավատում, որ ապաշխարանքը կարող է

հանգցնել գեհենի կրակը, ապա այն իմացիր Անանիայի պատմությունից: Գուցե այստեղ մեզ ուշադիր լսողներից որևէ մեկը կասի, թե Աստված հիրավի նրանց փրկեց, քանի որ նրանք չկամեցան կուռքերին պաշտել: Եվ իրոք, այդ էր պատճառը, որ Աստված նրանց զորացրեց: Քանի որ այս առթիվ ձեզ ասացի այն ամենը, ինչ անհրաժեշտ էր, այժմ կխոսեմ ապաշխարություն մեկ այլ օրինակի մասին:

17. Ի՞նչ գիտես Նաբուգոդոնոսորի մասին: Սուրբ Գրքից չե՞ս իմացել, թե արյունարբու էր, վայրենի, առյուծի նման դաժանասիրտ: Չե՞ս լսել, թե գերեզմաններից հանել է թագավորների ոսկորները: Չե՞ս լսել, թե գերեվարել է Իսրայելի ժողովրդին: Չե՞ս լսել, թե փորել է թագավորի աչքերը՝ նրա զավակներին մորթված ցուլց տալուց հետո: Չե՞ս լսել, թե փշրել է քերովբեներին: Չեմ ասում իմացյալներին, քավ լիցի: Այլ զոհարանի կոփածո քերովբեներին, որոնց միջով լսվում էր Աստծու ձայնը: Պղծեց Սրբություն Սրբոցի վարագույրը: Վերցրեց բուրվառը և այն դրեց կուտանը: Ցրեց բոլոր ընծայաբերվածները: Հիմնովին հրկիզեց Տաճարը: Քանի՞ պատիժների էր նա արժանի, որ սպանեց թագավորների, հրկիզեց սրբությունները, գերեվարեց ժողովրդին, սրբազան անոթները կուտուռն տարավ: Մի՞թե նա հազար պատժի արժանի չէր:

18. Տեսար նրա չարիքների մեծությունը: Այժմ, ուրեմն, եկ ու տես Աստծու մարդասիրությունը: Նաբուգոդոնոսորը ապրում էր վայրի գազանի նման անապատում և խառագանվում փրկվելու համար: Եղունգները դարձան առյուծների ճանկերի նման, քանզի դարձել էր սրբությունների հափշտակիչ: Մազերը նմանվել էին առյուծի մազերի, քանզի առյուծ էր, սարսափելի ոռնում և հափշտակում էր: Կովի նման խոտ էր ուտում, քանզի անասուն էր և չէր ճանաչում նրան, Ով իրեն չնորհել էր թագավորական իշխանությունը: Նրա մերկ մարմինը թրջվում էր ցողից, որով-

հետև տեսնելուց հետո անգամ չհավատաց, որ կրակը հանգավ Սուրբ Հոգու ցողից: Եվ հետո ի՞նչ կատարվեց: «Այս բոլորից հետո, - ասում է, - ես՝ Նաբուգոդոնոսորս, իմ աչքերը դեպի երկինք ուղղեցի և Բարձրյալին օրհնեցի և հավիտյան ապրողին գովեցի ու փառաբանեցի»: Ուրեմն, երբ ճանաչեց Բարձրյալին և շնորհակալական խոսքեր ուղղեց Աստծուն և զղջաց իր արարքների համար և զգաց իր անկարողությունը, այնժամ նրան վերադարձվեց թագավորական իշխանությունը:

19. Ուրեմն ի՞նչ: Այսքան չարիքներ գործած Նաբուգոդոնոսորին, երբ նա խոստովանեց, Աստված նրան ներեց ու վերադարձրեց թագավորական իշխանությունը, իսկ քեզ՝ ապաշխարողիդ, չի՞ շնորհի մի՞թե մեղքերի թողություն և երկնային թագավորություն, եթե արժանի կերպով կենցաղ վարես: Տերը մարդասեր է և ներելու համար՝ արագ, մինչդեռ պատժելիս համենում է: Ուրեմն, ոչ ոք թող չկորցնի փրկություն հոյսը: Առաքյալներից առաջինը և նրանց գլխավորողը՝ Պետրոս առաքյալը, մի փոքրիկ ստրկուհու առաջ ուրացավ Տիրոջը, բայց զղջալով դառնապես լաց եղավ: Արցունքները վկայում են նրա խորը զղջման մասին, և այդ պատճառով էլ ոչ միայն իր ուրանալու ներումն ստացավ, այլև չզրկվեց իր առաքելական պաշտոնից:

20. Ուրեմն, եղբայրներ, քանի որ ունենք մեղանշած և ապաշխարած և փրկված մարդկանց շատ օրինակներ, դուք ևս հոժարակամ խոստովանեցեք Աստծու առաջ, որպեսզի այդպիսով ստանաք անցյալում ձեր գործած մեղքերի համար թողութուն, և արժանանաք երկնային պարգևին ու ժառանգեք երկնային թագավորությունը բոլոր սրբերի հետ, Քրիստոսի շնորհքով, Ո՛ւմ վայել է փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:

## ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՐՐՈՐԴ

### Արված Երուսաղեմում Սկրտության մասին

Եվ ընթերցում հոռոմեացիների՝ Պողոսի հղած թղթից. «Կամ չգիտե՞ք, թե մենք բոլորս, որ մկրտվեցինք Հիսուս Քրիստոսով, Նրա մահով է, որ մկրտվեցինք: Մկրտությամբ թաղվեցինք Նրա հետ մահվան մեջ» և շարունակությունը (Հռոմ., 2 3-5):

1. Ուրախացիր, երկինք, և ցնծա, երկիր, նրանց համար, ովքեր պիտի ցողվեն զոպայով և պիտի մտովի մաքրվեն զոպայով և զորությամբ Նրա, Ով իր չարչարանքների ժամանակ զոպայից պատրաստված գավազանին ամրացված սպունգի միջոցով թրջվեց քացախով: Երկնային զորությունները թող զվարթանան, իսկ այն հոգիները, որոնք մտովի պետք է միանան Փեսային, թող նախապատրաստվեն, քանզի անապատում կանչողի ձայնն է. «Պատրաստեցեք Տիրոջ ճանապարհը» (Եսայի, Խ 3: Մարկ., Ա 3): Փոքր բան է այս, ոչ էլ մարմինների սովորական պարզ միավորում: Այլ ամեն ինչ քննող Սուրբ Հոգու ընտրությունն է՝ կատարված հավատի հիմքի վրա: Քանզի աշխարհիկ ամուսնությունները և համապատասխան պայմանադրումները միշտ չէ, որ կատարվում են ճիշտ վճռով: Իսկ այնտեղ, ուր կա հարստություն կամ գեղեցկություն, այնտեղ շատ արագ հայտնվում է սիրահոժար փեսացուն: Մինչդեռ հոգևոր ամուսնություններում կարևոր է ոչ թե մարմնական գեղեցկությունը, այլ՝ հոգու անխարդախ գիտակցությունը: Այստեղ անիծյալ մամոնան տեղ չունի, այլ՝ կյանքում բարեպաշտ հոգու ճշմարիտ հարստությունը:

2. Ուրեմն, ո՛վ արդարություն որդիներ. այժմ հավատա-

ցեք Հովհաննեսին, որ խնդրելով մեզ՝ պատվիրում է. «Հարթեցեք Տիրոջ ճանապարհը» (Հովհ., Ա 23): Դուրս հանեք բոլոր արգելքները և գայթակղությունները, որպեսզի ուղիղ քայլեք դեպի հավիտենական կյանք: Ձեր հոգու անոթները պատրաստ պահեք անկեղծ հավատքի միջոցով՝ այնտեղ ընդունելու համար Սուրբ Հոգուն: Սկսեք ձեր սեղանները լվանալ ապաշխարության միջոցով, որպեսզի հարսնատուն հրավիրվելիս լինեք մաքուր: Որովհետև Փեսան հրավիրում է բոլորին, քանզի շնորհքը բաշխվում է բոլորին առատորեն, և մունետիկների հզոր ձայնը հրավիրում է բոլորին հավաքվելու: Բայց Փեսան ինքն է հարսնատուն մտնողներին զննում և որոշում է, թե ովքե՞ր են արժանի մասնակցելու հարսանիքին, որպեսզի չլինի այնպես, որ արձանագրվածներից որևէ մեկը այնժամ լսի. «Բարեկամ, ինչպե՞ս դու այստեղ մտար առանց հարսանեկան զգեստի»: Երանի թե բոլորդ լսեիք. «Ապրես, բարի և հավատարիմ ծառա, քանի որ այդ քչի մեջ հավատարիմ եղար, շատի վրա կկարգեմ քեզ: Մտիր քո տիրոջ ուրախության մեջ» (Մատթ., ԻԵ 21): Մինչև այժմ դու կանգնած ես դռնից դուրս: Երանի թե բոլորիդ ասի. «Արքան ինձ իր սենյակը տարավ» (Երգ Երգոց, Ա 4): «Թող ցնծա իմ հոգին Տիրոջ համար: Որովհետև Նա ինձ փրկություն զգեստ հագցրեց և ցնծություն շապիկ: Հարսանեկան թագ դրեց գլխիս և ինձ զարդարեց հարսի նման » (Եսայի, ԾԱ 10): Որպեսզի բոլորիդ հոգիներում չմնա ոչ մեկ բիծ, ոչ մեկ կնճիռ և նման բաներ: Ես չեմ ասում, թե այդ կկատարվի՝ նախքան կարժանանաք Շնորհի պարգևին: Եվ այդ ինչպե՞ս կարող է կատարվել, եթե այստեղ դուք հրավիրված եք նախ՝ թողություն ստանալու համար: Երբ ձեզ Շնորհը տրվի, ապա ձեր խիղճը կլինի մաքուր և կգործակցի Շնորհին:

3. Իրոք, հարցը մեծ է, եղբայրներ, և դրան մոտեցեք զգուշությամբ: Ձեզնից յուրաքանչյուրը պիտի ներկայանա

Աստծու առաջ, հրեշտակների բյուրավոր զորքի առաջ: Սուրբ Հոգին պետք է կնքի ձեր հոգիները: Դուք պիտի զինվորագրվեք մեծ թագավորին: Ուրեմն, պատրաստվեք, ձեզ կարգի բերեք՝ ոչ թե լուսապայծառ զգեստներ հագնելով, այլ հոգու գիտակցված երկյուղածությամբ: Մկրտությունը մի՛ համարիր պարզ լոգանք, այլ ջրի հետ քեզ մատուցվող հոգևոր Շնորհ: Քանզի ինչպես որ զոհարաններում կուռքերին մատուցված զոհերն իրենց բնույթով մաքուր են, բայց դառնում են պիղծ և անմաքուր՝ կուռքերին զոհաբերվելուց հետո, այդպես էլ, ընդհակառակը, պարզ ջուրը, Սուրբ Հոգուն, Քրիստոսին և Հորը աղոթքով դիմելուց հետո, ձեռք է բերում սրբություն մաքրություն:

4. Ուրեմն, քանի որ մարդը երկակի է, այսինքն՝ բաղկացած է մարմնից և հոգուց, պետք է այդ երկուսն էլ մաքրվեն: Անմարմինը՝ անմարմնով և մարմնավորը՝ մարմնավորով: Ձուրը մաքրում է մարմինը, իսկ Սուրբ Հոգին կնքում է հոգին: Որպեսզի Սուրբ Հոգով ցողված սրտով և մաքուր ջրով լվացված մարմնով մոտենանք Աստծուն: Իսկ այժմ, երբ դու պիտի սուզվես մկրտության ջրի մեջ, այդ ջուրը մի համարիր սովորական, այլ Սուրբ Հոգու ներգործությամբ ընդունիր քո փրկությունը: Քանզի առանց այս երկուսի, անկարելի է, որ դու կատարյալ լինես: Այս ասողը ես չեմ, այլ Տեր Հիսուս Քրիստոսը, Ով իշխանություն ունի Մկրտության հարցում: Նա ասում է. «Եթե մարդ չծնվի ջրից և Սուրբ Հոգուց, չի կարող մտնել Աստծու արքայություն» (Հովհ., Գ 5): Ոչ էլ նա, ով մկրտվել է ջրում, բայց չի արժանացել ընդունելու Սուրբ Հոգին, կարող է ունենալ կատարյալ Շնորհ: Չի կարող երկնքի արքայություն մտնել նա, ով եթե անգամ առաքինի է իր գործերով, բայց մկրտությամբ չի ստացել Սուրբ Հոգու կնիքը: Խոսքը համարձակ է, բայց իմը չէ: Այն ասել է Հիսուսը: Դու հավատա իմ խոսքի ճշմարտությանը Սուրբ Գրքում ասվածի հի-



ման վրա: Կոռնելիոսը արդար մարդ էր, արժանացել էր սուրբ հրեշտակներին տեսնելու՝ լուսավոր, կանգուն սյան նման երկինք՝ Աստծու առաջ, բարձրացնելով իր ողորմությունները և աղոթքները: Եկավ Պետրոս առաքյալը և Սուրբ Հոգին շնորհեց հավատացյալներին, և նրանք խոսեցին տարբեր լեզուներով և մարգարեացան: Եվ Սուրբ Հոգու Շնորհի իջնելուց հետո, ասում է Սուրբ Գիրքը, Պետրոսը «պատվիրեց նրանց մկրտվել հանուն Հիսուս Քրիստոսի» (Գործք, Ժ 48), որպեսզի, քանի որ հոգին վերածնվել էր հավատքի միջոցով, մարմինը ևս ջրի միջոցով Շնորհ ստանար:

5. Եթե որևէ մեկն ուզում է իմանալ, թե ինչ<sup>օ</sup>ւ Շնորհը տրվում է ջրի միջոցով և ոչ թե տարրերից մեկ ուրիշի միջոցով, նա կարող է այդ իմանալ, եթե փնտրի Սուրբ Գրքում: Շատ կարևոր տարր է ջուրը և տեսանելի՝ աշխարհի չորս տարրերից լավագույնը: Երկինքը հրեշտակների բնակության վայրն է, բայց երկինքը առաջացել է ջրից: Երկիրը մարդկանց վայրն է, բայց երկիրն առաջացել է ջրից: Եվ աշխարհի վեցօրյա ստեղծումից առաջ «Աստծու հոգին շրջում էր ջրերի վրա» (Ծննդ., Ա 2): Աշխարհի սկիզբը ջուրն է, և Ավետարանների սկիզբը՝ Հորդանանը: Փարավոնից Իսրայելի ժողովրդի ազատագրումը շնորհվեց ծովի միջոցով, և աշխարհում մեղքերի թողությունը շնորհվում է ջրում մկրտվելու և Աստծու խոսքի միջոցով: Սուրբ Գրքում ամեն անգամ, երբ Աստված մարդկանց հետ ուխտ է կապում, այնտեղ առկա է նաև ջուրը: Ջրհեղեղից հետո ուխտ կապվեց նաև Նոյի հետ: Աստծու ուխտը Իսրայելի ժողովրդի հետ եղավ Սինա լեռան վրա, բայց ջրով, կարմիր բլուրով և զոպայով: Եղիան երկինք համբարձավ, բայց ոչ առանց ջրի օգնության: Քանզի նա նախ անցավ Հորդանանը, և ապա կռքը նրան տարավ երկինք: Քահանայապետը նախ լվանում է ձեռքերը, հետո զոհ մատուցում: Ահա-

րոնը նախ լողացավ ջրում, հետո դարձավ քահանայապետ: Որովհետև, ինչպե՞ս կարող էր թույլատրվել, որ նա աղոթեր ու միջնորդեր ուրիշների համար, երբ ինքը ջրով չէր մաքրվել: Վկայություն Տապանում դրված լվացարանն էլ դրված էր այնտեղ որպես խորհրդանիշ մկրտության:

6. Հին Կտակարանի վերջը և Նոր Կտակարանի սկիզբը Մկրտություն է եղել: Եվ գլխավորը եղել է Հովհաննես Մկրտիչը: Կանանցից ծնվածներից ոչ մեկը չի եղել նրանից մեծ: Վերջ մարգարեներին: «Քանի որ ամբողջ օրենքը և մարգարեները մարգարեացան մինչև Հովհաննեսը» (Մատթ., ԺԱ 13), և ավետարանական դեպքերի սկիզբը: Սուրբ Գրիքն ասում է. Հիսուս Քրիստոսի սկիզբը այսպես է. «Հովհաննեսը մկրտում էր անապատում»: Եվ եթե որպես մեծ ընդունում ես Եղիային, որ համբարձավ, բայց նա Հովհաննեսից ավելի մեծ չէ: Ենովքը ևս փոխադրվեց, բայց նա Հովհաննեսից ավելի մեծ չէր: Մովսեսը ամենամեծ օրենսդիրն էր, և բոլոր մարգարեները հրաշալի էին, բայց Հովհաննեսից ավելի մեծ չէին: Ես չեմ համարձակվում մարգարեին համեմատել մարգարեների հետ: Նրանց և մեր Տերը պարզ ասել է. կանանցից ծնվածներից ոչ մեկը ավելի մեծ չի եղել, քան Հովհաննեսը: Ոչ թե կույրից ծնվածներից, այլ կանանցից ծնվածներից: Համեմատությունը կատարվում է մեծ ծառա Հովհաննեսի և նրա ծառայակից մարգարեների միջև: Իսկ Որդու Շնորհի գերազանցությունը ծառաների նկատմամբ անհամեմատելի է: Տեսնո՞ւմ ես, թե Աստված ինչպիսի մարդու է ընտրել այդ Շնորհը գլխավորը: Չքավոր և անապատասեր, բայց ոչ մարդաստայաց մարդու. մորեխներով սնվող մարդու, ում հոգին թևածում էր հրեշտակների աշխարհում: Մի մարդու, որը վայրի մեղրով էր սնվում և քարոզում էր ավելի քաղցր և օգտակար բաներ, քան մեղրը: Մի մարդու, որը հագնում էր ուղտի մազից պատրաստած զգեստ և իր կենցաղով դառնում էր

ասկետականության օրինակ: Մի մարդու, որը Սուրբ Հոգու միջոցով սրբացավ դեռևս մոր որովայնում: Ու թեև նա դեռ չէր տեսնում մարմնական աչքերով, Սուրբ Հոգու միջոցով նախաճանաչեց Տիրոջը: Որովհետև, քանի որ մեծ էր մկրտության շնորհը, նա պետք է ունենար նաև մեծ նախորդ:

7. Նա մկրտում էր Հորդանանում, և նրա մոտ էր գալիս ամբողջ Երուսաղեմը՝ վայելելու համար մկրտության սկզբնավորումը: Քանզի բոլոր բարիքների արժեքներումը գտնվում էր Երուսաղեմում: Այդ ժամանակ Երուսաղեմից նրա մոտ մկրտվելու համար եկողները մկրտվում էին նրա կողմից՝ իրենց մեղքերը խոստովանելով: Նախ նրանք ցույց էին տալիս նրան իրենց վերքերը, և հետո նա դեղամիջոցներ էր տալիս նրանց և հավատացողներին շնորհում էր փրկության հավիտենական կրակից: Եթե ուզում ես համոզվել, թե Հովհաննեսի մկրտելը կրակով սպառնալն էր, լսիր նրա խոսքը. «Իժերի ծնունդնե՛ր. ո՞վ ձեզ սովորեցրեց փախչել վերահաս բարկությունից» (Մատթ., Գ 7): Ուրեմն, մի՛ եղիր իժ, բայց եթե երբևէ եղել ես իժի ծնունդ, ապա հանիր քո վրայից քո մեղսալից կյանքի էությունը: Քանզի օձը, անցնելով ինչ-որ նեղ տեղով, այնտեղ թողնում է իր հին զգեստը: Եվ ահա իր ծերացած կաշին այնտեղ թողնելով՝ նա հայտնվում է նոր տեսքով: Նմանապես դու ևս անցիր նեղ և ցավալի դռնից ներս: Տանջիր քեզ ծոմապահությունամբ: Վանիր քեզնից, որքան կարող ես, քեզ հոգեկան մահ պատճառող ամեն ինչ: Մերկացիր հին մարդուց, նրա արարքներից ու ցանկություններից և ասա այն, ինչ Երգ Երգոցում է. «Ես հանել եմ իմ պատմութանը: Ինչպե՞ս հագնեմ այն» (Երգ Երգոց, Ե 3): Բայց գուցե ձեր մեջ կա մի կեղծավոր, քճուղ, որը բարեպաշտություն է կեղծում՝ առանց սրտանց հավատալու: Կեղծում է մոգ Միմոնի նման՝ ոչ թե շնորհն ընդունելու, այլ շնորհվածը չարաչա-

հելու համար: Նա ևս թող լսի Հովհաննեսի խոսքը. «Կացինն ահա ծառերի արմատին է դրված: Ամեն ծառ, որ բարի պտուղ չի տա, կտրվում և կրակն է գցվում» (Մատթ., Գ 10): Խիստ է դատավորը: Հրաժարվիր կեղծիքից:

8. Ուրեմն, ի՞նչ պետք է անել: Որոնք են ապաշխարության պտուղները: «Ով որ երկու զգեստ ունի, մեկը թող տա նրան, որ չունի, և ով որ ուտելիք ունի, նույն ձևով թող առնի» (Ղուկ., Գ 11): Եվ այդ սովորեցնողը արժանահավատ է, քանզի առաջինը ինքն էր կիրառում իր ասածը, որովհետև իր խիղճը չէր խանգարում իր խոսքին: Ուզում ես վայելել Սուրբ Հոգու շնորհը, բայց չե՞ս նկատում հացի կարոտ աղքատներին: Մեծ բաներ ես խնդրում, բայց փոքր բաներ չե՞ս ուզում տալ: Եթե անգամ մաքսավոր ես կամ պոռնիկ ես, հավատա փրկության: «Մաքսավորներն ու պոռնիկները ձեզնից առաջ պիտի հասնեն Աստծու արքայություն» (Մատթ., ԻԱ 31): Պողոսը ևս վկայում է. «Ո՛չ պոռնիկներ, ո՛չ կռապաշտներ, ո՛չ շնացողներ և այլ նմաններ Աստծու արքայությունը չպիտի ժառանգեն: Եվ դուք, զոհե՛ք ոմանք, այդպիսիք էիք: Բայց լվացվեցիք, մաքրվեցիք, արդարացվեցիք» (Ա Կորնթ., Զ 9-11): Նա չի ասել «այժմ եք», այլ «այդպիսիք էիք»: Ներվում են այն մեղքերը, որ կատարել ենք, երբ դեռևս չէինք ճանաչում Աստծուն, իսկ համառորեն մեղքի մեջ մնալը դատապարտվում է:

9. Քո Մկրտության պարծանքն է ինքը՝ Աստծու Միածին Որդին: Նրան ինչպե՞ս կարող եմ համեմատել մարդու հետ: Մեծ է Հովհաննեսը, բայց ինչպե՞ս նրան համեմատել Տիրոջ հետ: Որոտալի է նրա ձայնը, բայց ինչպե՞ս այն համեմատել Բանի՝ Լոգոսի հետ: Լավ է քարոզիչը, բայց ինչպե՞ս նրան համեմատել Սուրբ Հոգով ու կրակով մկրտողի հետ: Մեր Փրկիչը առաքյալներին մկրտեց Սուրբ Հոգով և կրակով, երբ հանկարծ երկնքից ձայն լսվեց՝ ուժեղ քամու



նման լցնելով ամբողջ տունը, որտեղ նստել էին աշակերտները: Ու երևացին կրակե լեզուներ, որոնցից ամեն մեկը նստեց առաքյալներից մեկի վրա: Եվ այնժամ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով:

10. Մկրտություն չստացողը փրկություն չունի: Բացի միայն վկաներից, որոնք առանց ջրի էլ մտնում են Աստուծո թագավորություն: Քանզի Տերը խաչի վրա իր մահով փրկություն չնորհեց աշխարհին և խոցվեց գեղարդով, հոսեց արյուն և ջուր: Ուստի, ովքեր ապրեն խաղաղ ժամանակներում, մկրտվեն ջրով: Իսկ ովքեր կապրեն հալածանքների ժամանակներում, մկրտվեն իրենց իսկ արյամբ: Քանզի Փրկիչը վկա դառնալը ևս անվանեց մկրտություն՝ ասելով «Այն բաժակը, որ ես խմելու եմ, կխմեք, և այն մկրտությունը, որով ես մկրտվելու եմ, նրանով կմկրտվեք» (Մարկ., Ժ 39): Վկաները խոստովանում են իրենց հավատքը և դառնում են տեսարան և՛ հրեշտակների, և՛ մարդկանց համար: Բայց դու ևս քիչ հետո պիտի խոստովանես: Սակայն այժմ քեզ համար դեռևս ժամանակը չէ այդ մասին լսելու:

11. Մկրտվելով Հիսուս սրբացրեց Մկրտությունը: Եթե Աստվածորդին մկրտվեց, ապա ո՞վ իրեն կհամարի բարեպաշտ, եթե արհամարհում է Մկրտությունը: Նա մկրտվեց ոչ թե իր մեղքերին թողություն ստանալու համար – քանզի նա անմեղսունակ էր – այլ, անմեղ լինելով, մկրտվեց, որպեսզի մկրտվողներին պարզեի աստվածային շնորհք և աստվածային արժեք: Որովհետև այն, ինչ կատարվեց Տիրոջ մարդեղությունը, կատարվեց նաև մկրտությանը: Այսինքն, ինչպես որ Նա ընդունեց մարդկային բնությունը, քանի որ մենք, իբրև մարդ, քայքայվող մսից ենք, Նա ևս, հաղորդվելով մեր մարդկային բնությանը, մեզ հնարավորություն տվեց մասնակից դառնալու իր Աստվածային

Շնորհին, այդ պատճառով էլ Հիսուս մկրտվեց: Ուստի մենք ևս, հաղորդակցվելով Նրան, փրկության արժանանալով, ինչպես ասում է Հոբբը, վիշապը ջրում էր և այնքան խոշոր էր, որ Հորդանան գետը թափվում էր նրա աչքում: Քրիստոս պետք է փշրեր վիշապի գլուխները: Ուստի, իջնելով ջրի մեջ՝ Քրիստոս կապկպեց հսկա վիշապին, որպեսզի մենք իշխանություն ստանանք՝ ոտնակոխ անելու օձերի և կարիճների գլուխները: Վիշապը խոշոր և սարսափելի գազան էր: Ձկնորսական ոչ մի նավ չէր կարող տանել անգամ նրա պոչի մի կտորը: Նրա առջևից կորուստն էր վազում՝ մահ սփռելով ամեն պատահածին: Ու եկավ Կյանքը, որպեսզի փակի մահվան բերանը, որպեսզի բոլոր փրկվածներս ասենք. «Ու՞ր է, մահ, քո հաղթությունը, ո՞ւր է, գերեզման, քո խայթոցը» (Ա Կորնթ., ԺԵ 55): Մահվան խայթոցը վերանում է մկրտությամբ:

12. Քանզի մտնում ես ջուրը՝ հագած քո մեղքերը, բայց հոգին, կնքելով շնորհին ապավինելը, թույլ չի տա, որ դու կեր դառնաս ահավոր վիշապին: Ջուրը մտնելուց դու մեռյալ էիր քո մեղքերի մեջ, բայց նոր կյանք ստանալով՝ դու ջրից դուրս ես գալիս արդարացած: Քանզի եթե տնկակից եղար Փրկչի մահվան, ունենալով Նրա հետ մարդկային նույն բնույթը, արժանի կդառնաս հաղորդակից լինելու նաև Նրա հարությունը: Որովհետև, ինչպես Քրիստոսը, աշխարհի մեղքերն իր վրա վերցնելով, մեռավ, որպեսզի սպանելով մեղքը՝ հարություն առնի արդարության մեջ, այդպես և դու, իջնելով ջուրը, մի կերպ թաղվես ջրի մեջ, ինչպես Նա՝ գերեզմանում, նորից հարություն կառնես նոր կյանքով:

13. Երբ արժանանաս Շնորհն ընդունելու, այնժամ քեզ կտրվի նաև հակադիր ուժերի դեմ մարտնչելու իշխանությունը: Քանզի, ինչպես որ մկրտվելուց հետո Քրիստոս քա-

ուսուուն օր սատանայից փորձվում էր (ոչ այն պատճառով, որ նա չէր կարող դրանից առաջ էլ հաղթել, այլ կամենում էր, որ ամեն ինչ կատարվեր իր հերթին), այդպես դու ևս մկրտվելուց առաջ չէիր համարձակվում կռվել հակադիր ուժերի հետ, մինչդեռ այժմ, Շնորհն ստանալուց հետո, համարձակություն ձեռք բերելով, պայքարիր, օգտագործելով արդարություն գեղեցիկ, և եթե կամենաս, նաև Ավետարան քարոզիր:

14. Հիսուս Քրիստոսը Աստուծու Որդին էր, այդուհանդերձ մկրտվելուց առաջ չքարոզեց: Եթե Տերն Ինքը պահանջում էր իրերի կարգը, արդյո՞ք մենք՝ նրա ծառաներս, կհամարձակվենք անկարգ վարվել: Հիսուս սկսեց քարոզել այն բանից հետո, երբ «Սուրբ Հոգին մարմնավոր տեսքով, որպես աղավնի, իջավ նրա վրա» (Ղուկ., Գ 22): Եվ այս արվեց ոչ այն պատճառով, որ Քրիստոս տեսնի այն (քանզի նա այդ գիտեր նաև նախքան աղավնու մարմնական տեսքով իր վրա իջնելը), այլ որպեսզի այն տեսնի Հովհաննեսը: Քանզի Հովհաննեսն ասաց. «ես չեի ճանաչում նրան. սակայն նա, Ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, ինձ ասաց. «Ում վրա տեսնես, որ Հոգին իջնում և մնում է, նա է, որ մկրտում է Սուրբ Հոգով» (Հովհ., Ա 33): Եթե դու ևս ճշմարտորեն բարեպաշտ ես, քեզ վրա ևս կիջնի Սուրբ Հոգին, և քեզ համար ևս կլսվի վերևից հայրական ձայնը՝ ասելով. «Ոչ թե սա է իմ որդին, այլ՝ սա արդեն դարձավ իմ որդին»: Նրան կոչեց՝ իմ որդին է. «Որովհետև սկզբից էր Բանը, և Բանը Աստուծու մոտ էր, և Բանը Աստված էր» (Հովհ., Ա 1): Նրա համար ասաց. «Որդիս է»: Որովհետև դու քո բնույթով որդին չես, այլ զիրքով դառնում ես որդեգիր: Նա դարբերից էլ առաջ է, իսկ դու այդ շնորհն ստանում ես հոգևոր առաջընթացից, մկրտվելուց:

15. Արդ, պատրաստիր քո հոգու անոթը, որպեսզի դառ-

նաս Աստուծու որդի և Աստուծու ծառանգորդը և Քրիստոսի ծառանգակիցը: Եթե դու նախապատրաստում ես քեզ, դու կստանաս այդ պարգևը: Եթե հավատքով ես մոտենում, Աստված կվստահի քեզ: Եթե դու հակված ես դեմ նետելու հին մարդուն, ապա կստանաս նոր մարդուն: Քանզի այն ամենը, ինչ արել ես անցյալում, պիտի ներվի քեզ, անգամ եթե պոռնկացել ես կամ պղծություն արել և նման անառակություններ գործել: Ո՞ր մեղքը ավելի ծանր է, քան Քրիստոսին խաչելը: Մկրտությունը քավում է նաև այդ մեղքը: Երեք հազար մարդկանց, որոնք խաչեցին Տիրոջը և հետո հարցնում էին՝ «Ի՞նչ անենք, եղբայրներ», քանզի մեր մեղքը մեծ է, դու հանդիմանեցիր մեզ, ո՞վ Պետրոս, մեր մեղքի համար՝ ասելով. «Դուք խաչեցիք կյանքի առաջնորդին» (Գործք, Գ 15): Ի՞նչ սպեղանի կա այդպիսի վերքի համար: Ինչպե՞ս մաքրենք այդպիսի աղտը: Ինչպե՞ս փրկվել այս կորստից: Պետրոսն ասաց. «Ապաշխարեցեք, և ձեզնից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով մեղքերի թողություն համար, և պիտի ընդունեք Սուրբ Հոգու պարգևը» (Գործք, Բ, 38): Օ՛, Աստուծու անպատմելի մարդասիրություն: Փրկության հույս չունեցողները արժանանում են Սուրբ Հոգուն: Տեսնո՞ւմ ես մկրտության զորությունը: Եթե ձեզնից որևէ մեկը չարանեմ գիտեցրով խաչել է Քրիստոսին, եթե ձեզնից որևէ մեկը անգիտակցաբար մարդկանց առաջ ուրացել է Քրիստոսին, եթե որևէ մեկը իր չար գործերով առիթ է տվել անարգելու հավատի ուսմունքը, ապաշխարելով թող լցվի բարի հույսով, քանզի այժմ ևս այդ շնորհը մեզ հետ է:

16. «Քաջ եղիր, Երուսաղեմ: Տերը ներելու է քո բոլոր անիրավությունները» (Հմմտ. Սուփ., Գ 14): Վճռական որոշումով Տերը պիտի մաքրի իր որդիների և դուստրերի աղտը կրակով: Մաքուր ջուր պիտի ցայի ձեզ վրա, և դուք պիտի մաքրվեք ձեր բոլոր մեղքերից: Հրեշտակները ձեզ

համար ցնծագին պիտի երգեն ու ասեն. «Ո՞վ է սա, որ գալիս է սպիտակ հագած, գալիս է՝ հենված իր սիրեցյալին» (Երգ Երգոց, Ը 5): Քանզի նախկինում ծառա եղած հոգին այժմ ապրում է իր Տիրոջ հետ որպես սիրեցյալի: Եվ Տերը, ընդունելով նրա անկեղծ ընտրությունը, պիտի բացականջի. «Ահա դու ինչ գեղեցիկ ես, ո՞վ իմ սիրելի, ի՞նչ գեղեցիկ ես» (Երգ Երգոց, Դ 1): «Քո ատամները նման են խուզած ոչխարների հոտերի, որոնք ելնում են լողավազանից: Բոլորն էլ զուգաշար են, և ոչ մի ստերջ չկա նրանց մեջ» (Երգ Երգոց, Դ 2): Այս բացահայտում է այն զույգ շնորհը, որ տրվում է մկրտության ջրի և Սուրբ Հոգու միջոցով, կամ այն զույգ շնորհը, որ մեզ խոստանում է Աստված Հին և Նոր Կտակարանում:

Թող բոլորդ, ծոմապահության ճանապարհն անցնելուց հետո, ձեր մտքում ունենալով այն, ինչ այստեղ լսեցիք, բարի գործերում պտղաբեր դարձած, կանգնեք Քրիստոս փեսայի կողքին, արժանանաք ձեր մեղքերի թողություն, որ շնորհում է Հայր Աստվածը մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհիվ, Ում վայել է փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:



## ՈՒՍՈՒՑՈՒՄ ՉՈՐՐՈՐԳ

### Արված Երուսաղեմում տասը դոգմաների մասին

Ընթերցում Կողոսացիներին ուղղված թղթից. «Զգուշ եղեք. չլինի թե մեկը ձեզ գրավի ճարտարամտությամբ և սնտոի խաբեքայությամբ: Դրանք մարդկային ավանդության վրա են հիմնված» (Կողոս., Բ 8) և շարունակությունը:

1. Չարը նմանակում է առաքինություն, և մոլախոտը փորձում է որպես ցորեն ներկայանալ՝ տեսքով նրան նմանվելով: Բայց փորձառու և հմուտ մարդիկ համից իսկույն այն կընկեն: Սատանան ևս ներկայանում է որպես լույսի հրեշտակ, ոչ թե իր նախկին դիրքին վերադառնալու համար, քանի որ նրա չարությունը հաստատուն է, նա մնում է անզղջում, որպեսզի հրեշտականման կյանք ապրել ուզողներին պատի անհավատության ախտով և հոգեկան խավարով: Բազում գայլեր են շրջում ոչխարների զգեստով, բայց և միաժամանակ ճանկերով ու ժանիքներով զինված: Ընտանի կենդանու մորթի հագած և իրենց տեսքով անչար մարդկանց խաբելով՝ խրում են իրենց ատամները և փոխանցում անամոթության կործանարար իրենց թուլյնը: Ուրեմն, մեզ անհրաժեշտ է ունենալ աստվածային շնորհք, ջինջ միտք և արթուն աչքեր: Որպեսզի ո՛չ մոլախոտն ու տենք որպես ցորեն և վնասվենք մեր անգիտության պատճառով, ո՛չ էլ գայլին ոչխար համարելով՝ դառնանք որս, ո՛չ էլ ավերումներ սփռող սատանային բարի հրեշտակ համարելով՝ մոլորվենք և նրան դառնանք կեր: Քանզի, ինչպես Գիրքն ասում է՝ «Սատանան մոռնում է առյուծի պես, շրջում և փնտրում է, թե ում կուլ տա» (Ա Պետր., Ե 8): Այս

պատճառով է, որ Եկեղեցին սովորեցնում է: Այդ պատճառով է, որ կան այս հոգևոր դպրոցները, այդ պատճառով է, որ կատարվում են այս ընթերցումները:

2. Բարեպաշտությունը բաղկացած է երկու բանից՝ բարեպաշտ դավանանքից և բարի գործերից: Դավանանքը առանց բարի գործերի ընդունելի չի կարող լինել Աստուծո կողմից: Այդպես և Աստուծո ընդունելի չեն առանց բարեպաշտ դավանանքի կատարված գործերը: Քանզի ի՞նչ օգուտ, եթե լավ գիտես Եկեղեցու դավանանքը, բայց ստորագույն ձևով պոռնկանում ես: Եվ դարձյալ, ի՞նչ օգուտ, եթե ապրում ես լավ և խելամիտ կյանք, բայց հայհոյում ես անամոթաբար: Արդ, մեծ ունեցվածք են դավանանքի դասերը, և անհրաժեշտ է ունենալ հոգեկան անդորր հավատքի մեջ շիտակ մնալու համար: Քանզի շատերը կան, որ ճարտասանությամբ փրկիսովայում են և սին խաբեություններ գայթակղեցնում են: Հելլենները (հեթանոսները) իրենց պերճախոսությունները մոլորեցնում են. «Որովհետև պոռնիկ կնոջ շուրթերից մեղր է ծորում» (Առակ., Ե 3), իսկ հուդայականները Սուրբ Գրքով, որը սխալ են մեկնաբանում, խաբում են իրենց մոտեցողներին: Նրանք մանկուց մինչև ծերանալը ուսումնասիրում են Գիրքը, բայց մեռնում են առանց հասկանալու: Իսկ հերետիկոսների շատ հետևորդներ իրենց «Քաղցրախոսություններ և կեղծ գովասանքներով հրապուրում են անմեղների սրտերը» (Հռոմ., ԺԶ 18)՝ Քրիստոսի վկայակոչությամբ մեղրով ծածկելով իրենց անբարո դավանանքի թույլները: Նրանց բոլորի մասին Տերն ասել է. «Զգույշ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի» (Մատթ., ԻԴ 5): Այդ նպատակով էլ կատարվում են մեր այս ուսուցումները և մեկնությունները հավատի հարցերի շուրջ:

3. Հավատքին անցնելուց առաջ լավ կլինի ամփոփ վերաբաղ կատարել հավատին վերաբերող հիմնական ճշմարտությունները, որպեսզի այդ ամենը չմոռանան ընկալելու մեծ ընդունակություն չունեցողները, քանի որ ժամանակը պետք է ընդմիջվի մեծ պահքի 40 օրերով, իսկ ասվելիքն էլ շատ է: Բայց ինչ որ, ամփոփելով, կասենք այժմ, պետք չէ մոռանալ՝ հետագայում մանրամասն շարադրելու: Ներկաներից ովքեր ավելի առաջ են անցել և հոգևոր առումով պատրաստ են և կարող են բարին չարից տարբերել, թող համբերեն՝ լսելու նյութերը, որոնք վերաբերում են սկսնակներին և ներածական են հոգևոր կյանքի համար, քանի որ վերաբերում են հավատքի ամենատարրական ճշմարտություններին: Այսպիսով, նաև նրանք, ովքեր ուսուցման կարիք ունեն, պիտի օգտվեն, իսկ նրանք, ովքեր նախապես այդ ամենը գիտեն, պիտի վերակենդանացնեն իրենց հիշողության մեջ:

### Աստուծու մասին

4. Ուրեմն, նախ ձեր հոգում թող հաստատվի դավանանքը Աստուծու մասին, թե Աստված մեկն է, անծին, անսկիզբ, անփոփոխ, անայլայլ: Ուրիշից չծնված, իր կյանքի ուրիշ ժառանգ չունեցող: Նա չի ծնվել ժամանակի մեջ ինչ-որ ժամանակ, և Նրա կյանքը անվախճան է: Նա բարի է և արդար: Եթե երբևէ լսես որևէ հերետիկոսի, որ կասի, թե արդար Աստվածն ուրիշ է, բարի Աստվածն՝ ուրիշ, այս ասվածք լսելուց հետո իսկույն հիշիր և ճանաչիր հերետիկոսության թույլը: Քանզի որոշ ամբարիշտներ հանդգնեցին իրենց խոսքերով կտրատել Աստուծուն: Ոմանք էլ ասացին, թե այլ է հոգուն ստեղծած և նրա Տեր Աստվածը, այլ է մարմնի ստեղծող Աստվածը: Այսպիսով, նրանք Աստուծու մասին սովորեցնում են անմիտ և ամբարիշտ բաներ: Ինչպե՞ս կարող է մեկ մարդը լինել երկու տիրոջ ծառա, երբ

Տերն ասել է ավետարաններում. «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել» (Մատթ., 2 24): Ուրեմն, Աստված մեկն է և միակը, Ստեղծողը հոգիների և մարմինների: Մեկն է երկնքի և երկրի, հրեշտակների և հրեշտակապետերի Արարիչը, բազում արարածների միակ Ստեղծողը: Հավիտյանից էլ առաջ միայն Մեկի՝ Իր Միածին Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, Ում հետ համատեղ Նա ստեղծեց ամեն ինչ՝ երևելի թե աներևույթ:

5. Մեր Տեր Հիսուս Քրիստոսի այս Հայրը անսահման է, չի բնակվում որևէ վայրում, ոչ էլ առավել փոքր է երկնքից, այլ երկինքը Նրա մատների ստեղծածն է, և ամբողջ երկիրը գտնվում է Նրա ափի մեջ: Նա ամեն ինչի մեջ է և ամեն ինչից դուրս: Չկարծես, թե արևից փոքր է, թե արևը առավել լուսավոր կամ հավասար է Նրան: Քանզի արևը ստեղծողը ինքը պետք է անհամեմատ ավելի մեծ և առավել լուսավոր լինի: Նա կանխավ իմանում է այն ամենը, ինչ կատարվելու է, և բոլորից հզոր է: Նա գիտի ամեն ինչ և գործում է իր կամքի համաձայն: Նա չի ենթարկվում կատարվող դեպքերի ընթացքին: Ո՛չ ծնվում է, ո՛չ էլ ենթարկվում բախտին ու ճակատագրին: Նա կատարյալ է ամեն ինչում և հավասար չափով տիրապետում է առաքինության ամեն մի գաղափարին: Նա ո՛չ նվազում է, ո՛չ աճում, այլ մշտապես և ամեն ինչով անփոփոխ է: Նա դժոխք է պատրաստել մեղավորների համար և պսակներ՝ արդարների համար:

6. Ուրեմն, երբ մարդիկ մոլորվեցին և դադարեցին հավատալ միակ Աստծուն, ապա ոմանք աստվածացրին արևը, որպեսզի երբ այն մայր մտնի, գիշերվա ընթացքում մնան անաստված: Ուրիշներ աստվածացրել են լուսինը, որպեսզի ցերեկվա ժամերին աստված չունենան, իսկ ոմանք աստվածացրին Աստծու ստեղծած շնչավոր և անշունչ արարածների, ինչպես՝ արվեստները, ուտելիքը, հաճույքները: Իսկ

կնամոլներն էլ, մերկ կնոջ կուռքը բարձր տեղ դնելով, անվանեցին Ափրոդիտե և այդ երևույթով միաժամանակ պաշտեցին նաև կիրքը: Ուրիշներ, շլացած ոսկու փայլից, աստվածացրին ոսկին և այլ իրեր: Բայց եթե մարդ Աստծու մենիշխանություն մասին դավանանքը համոզված կերպով որպես նախահիմք դնի իր սրտում, նա միաժամանակ արմատախիլ կանի նաև կուսպաշտության և հերետիկոսների կործանարար ազդեցությունը: Ուրեմն, բարեպաշտության այս առաջին դավանանքը, հավատքի հետ, դիր որպես նախահիմք քո հոգում:

### Քրիստոսի մասին

7. Հավատա և Աստվածորդուն, Մեկին և Միակին, մեր Տեր Հիսուս Քրիստոսին. Աստուց ծնված Աստծուն, Կյանքից ծնված կյանքին, Լույսից ծնված Լույսին, ըստ ամենայնի իրեն ծնածին նման եղողին: Նրան, ով էությունը չի ստացել ժամանակի որևէ հատվածում, այլ ծնվել է Հայր Աստծուց հավերժականից էլ առաջ, հավիտյան, անըմբռնելի կերպով: Հավատա Աստծու անխախտ իմաստությունը և զորությունը ու արդարությունը: Նրան, Ով հավերժից էլ առաջ նստած է Աստծու աջ կողմը, և ոչ թե, ինչպես ոմանք կարծեցին, որ նստեց Աստծու աջ կողմը այն բանից հետո, երբ Նա ստացավ չարչարանաց պսակը և որպես հատուցում, չարչարանքը համբերատար կրած լինելու համար, արժանացավ աջակողմյան գահին: Նրա թագավորական պատիվը ծնունդով է, քանի որ Նա ծնվել է Հայր Աստծուց հավիտենությունից էլ առաջ: Եվ, ինչպես ասել ենք, Քրիստոսը, լինելով Աստված, Աստծուն գահակից է, և՛ Իմաստություն, և՛ Զորություն: Նա թագավորակից է Հայր Աստծուն և արարչակից երևելի և աներևույթ ստեղծագործության: Աստվածայնության առումով Նա ոչնչով պակաս է, ճանաչում է Իրեն ծնողին և ճանաչվում է Նրանից:

Կարճ ասած, հիշիր, թե ի՞նչ է գրված Ավետարանում. «Ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթե ոչ՝ Հայրը, և ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ՝ Որդին» (Մատթ., ԺԱ 27):

8. Մի՛ անջատիր Հորը Որդուց և նրանց մի խառնիր իրար և, հայրուորդիության մի խառնուրդ ստեղծելով, մի՛ հավատա դրան: Այլ հավատա, թե Միակ Աստծու Միածին Որդին Մեկն է՝ նախահավիտենական Աստված-Բանը: Ոչ միայն բերանացի, օղում տարածված Բան, որը նման է մարդկանց անհիմն խոսքերին, այլ Բան-Որդին է և բանական էակների արարիչը: Բան, որը լսում է Հայր-Աստծուց և որով խոսում է Հայր Աստծու հետ: Այս ամենի մասին, Աստծու օգնությամբ, ավելի մանրամասն կխոսենք: Ձեմ մոռանում այն, ինչ ասել ենք, թե այժմ հավատի մասին խոսում ենք համառոտ, ներածության սկզբունքով:

### Կույսից ծնվելու մասին

9. Հավատա, որ Աստծու Միածին Որդին մեր մեղքերի պատճառով իջավ երկիր, ստացավ մեր մարմնի նման մարդկային մարմին և ծնվեց Սուրբ Կույսից և Սուրբ Հոգուց: Մի կարծիր, որ Նրա մարդեղութունը երևակայական է: Այն իրական է: Ոչ էլ Նա մարդացավ, անցնելով կույսի միջով, որպես թե խողովակի միջով, այլ մարմին ստացավ Սուրբ Կույսից և սնվեց նրա կաթով, իրապես կերավ և խմեց, ինչպես և մենք: Եթե մարդեղութունը լիներ երևակայական, ապա երևակայական կլիներ նաև փրկութունը: Երկակի է Քրիստոսը: Երևացողը մարդն է, աներևույթը՝ Աստված: Մնվելով իբրև մարդ, իրականում, ինչպես մենք, Նա ուներ մարմնի պահանջներ, ինչպես մենք: Սակայն իբրև Աստված, հինգ նկանակով կերակրեց հինգ հազարին: Իրապես մահանալով իբրև մարդ՝ որպես Աստված հարուցյուն տվեց չորս օր առաջ մահացածին: Իբրև

իրական մարդ քնեց նավի վրա, բայց իբրև Աստված քայլեց ալիքների վրայով:

### Խաչի մասին

10. Նա ճշմարտապես խաչվեց մեր մեղքերի պատճառով: Եվ անգամ եթե դու կամենաս ուրանալ այդ, քեզ կհերիքի այս պարզ երևացող վայրը, այս երանելի Գողգոթան: Մենք հավաքվել ենք ի սեր այստեղ խաչված Քրիստոսի: Համայն աշխարհն այժմ լցվել է Սուրբ Խաչի կտորտանքներով: Քրիստոս խաչվեց ոչ թե իր սեփական մեղքերի համար, այլ որպեսզի մենք փրկվենք մեր մեղքերից: Նա այդ ժամանակ արհամարհվեց մարդկանցից և ապտակվեց որպես մարդ, բայց ամբողջ արարչութունը ճանաչեց, թե Նա Աստված էր: Քանզի արեգակը երբ տեսավ իր արարչի անարգվելը, պահ մտավ, քանի որ չէր կարող հանդուրժել նման տեսարանը:

### Թաղման մասին

11. Նա ճշմարտապես մարդու պես դրվեց քարե գերեզմանում, բայց քարերը, Նրա համար վախենալով, ճեղքվեցին: Իջավ երկրի ընդերքը՝ այնտեղի եղած արդարներին փրկելու համար: Դու կուզենայի՞ր, որ շնորհք վայելեն ապրողները, որոնցից շատերը բարեպաշտ չեն, իսկ նրանք, ովքեր Ազամի ժամանակներից բացառված էին, չփրկվե՞ն: Եսայի մարգարեն նրա մասին այնքան շատ քարոզել է բարձրաձայն: Չէի՞ր ուզենա, որ արքան, իջնելով այնտեղ, փրկի քարոզչին: Դավիթն էր այնտեղ և Սամուելը, և բոլոր մարգարեները և ինքը՝ Հովհաննեսը, որ իր ուղարկած մարդկանց միջոցով հարցրեց Հիսուսին. «Դո՞ւ ես, որ դալու էիր, թե՞ ուրիշին սպասենք» (Մատթ., ԺԱ 3): Չէի՞ր ուզենա, որ իջնելով՝ Հիսուս փրկեր այդպիսիներին:



## Հարության մասին

12. Բայց երկրի ընդերքը իջածը դարձյալ բարձրացավ և թաղված Հիսուսը երրորդ օրը ճշմարտապես հարյալ: Եվ եթե հուղարկականները երբևէ քեզ ծաղրեն, իսկույն պատասխանիր նրանց՝ հարցնելով. «Հովնանը կետ ձկան փորից ելավ՝ երեք օր այնտեղ մնալուց հետո: Եվ Քրիստոս չէ՞ր կարող հարուլթյուն առնել գերեզմանից՝ երեք օր այնտեղ մնալուց հետո: Եղիսեի ոսկորները հարուլթյուն տվեցին մեռյալին սոսկ մեկ հպումով» (Դ Թագ., ԺԳ 21): Իսկ մարդկանց Արարիչը մի՞թե չէր կարող ավելի հեշտ հարուլթյուն առնել Հայր Աստծու գորուլթյամբ: Ուրեմն, ճշմարիտ հարյալ: Եվ հարուլթյուն առնելուց հետո դարձյալ երևաց աշակերտներին: Եվ Նրա հարուլթյան վկաներն էին տասներկու աշակերտները, որոնք չկաշառվեցին, ոչ էլ վկայեցին Նրան շնորհ անելու համար, այլ պայքարեցին և տանջվեցին մինչև մահ՝ հաստատելու համար, որ Նա ճշմարիտ հարյալ: Բացի այդ, ինչպես Գիրքը վկայում է. «Երկու կամ երեք վկայի բերանով պետք է հաստատվի ամեն բան» (Բ Օր., ԺԹ 15): Իսկ Քրիստոսի հարուլթյան մասին վկայում են տասներկու անձ: Այս ամենից հետո չե՞ս հավատում Նրա հարուլթյանը:

## Համբարձման մասին

13. Համբերանքի ամբողջ ճանապարհն անցնելուց ու մեղքերից մարդկանց փրկելուց հետո Հիսուս դարձյալ երկինք բարձրացավ՝ ամպերով պատած: Բարձրանալիս Նրա մոտ էին կանգնած հրեշտակներ, իսկ առաքյալները ուշադիր դիտում էին: Բայց եթե որևէ մեկը չի հավատում այս ասվածներին, թող հավատա այն ամենի ուժով, որ տեսնելու ենք շարունակուլթյան մեջ: Բոլոր թագավորները երբ մեռնում են, կյանքի հետ զրկվում են նաև իշխանուլթյուն-

նից: Իսկ Քրիստոս խաչվելով պաշտվում է ամբողջ աշխարհում: Խաչյալին վկայակոչում ենք, և դողում են դևերը: Շատերն են խաչվել իրենց ժամանակին, բայց ո՞ր խաչվածի անունն արտասանելը քչել է դևերին:

14. Ուրեմն, չամաչենք Քրիստոսի խաչի համար: Եթե որևէ մեկը ծածուկ է խաչակնքում, դու խաչի կնիքը քո ճակատին բացահայտ դրոշմիր, որպեսզի դևերը, տեսնելով թագավորական նշանը, դողալով հեռու փախչեն: Խաչակնքիր ուտելուց, խաչակնքիր, երբ խմում ես, երբ նստում ես, երբ քնում ես և երբ զարթնում ես, երբ խոսում ես, երբ քայլում ես: Մի խոսքով, խաչակնքիր ամենուր և միշտ: Քանզի այստեղ խաչվածը այժմ վերևում է, երկնքում: Եթե խաչվելուց և թաղվելուց հետո մնար գերեզմանում, մենք պետք է ամաչեինք: Բայց այժմ Նա, Ով խաչվեց այստեղ՝ Գողգոթայում, համբարձավ երկինք Ձիթենյաց լեռից, որը գտնվում է այստեղ՝ արևելյան կողմում: Այստեղից նա իջավ Հաղես և հետո, այնտեղից բարձրանալուց հետո, երկինք համբարձավ, մինչ Հայր Աստվածը, դիմելով Նրան, ասաց. «Նստիր իմ աջ կողմում, մինչև Քո թշնամիներին ոտքերիդ պատվանդան դարձնեմ» (Սաղմ., ձԹ 1):

## Ապագա դատաստանի մասին

15. Երկինք բարձրացած նույն Հիսուս Քրիստոսը պետք է դարձյալ գա երկնքից, ոչ թե երկրից: Ես ասացի՝ ոչ թե երկրից, քանզի երկրից այժմ կգան շատ չքրիստոսներ: Արդեն, ինչպես իմացած կլինեք, շատեր սկսել են ասել՝ «Ես եմ Քրիստոսը»: Ուրեմն, կգա ամայացնող գարշելին և կեղծիքով ու մոլորեցնելով իրեն Քրիստոս կհորջորջի: Բայց դու սպասիր ճշմարիտ Քրիստոսին՝ Աստծու Միածին Որդուն, որն արդեն գալու է ոչ թե երկրից, այլ՝ երկնքից: Նա պիտի երևա համայն աշխարհում առավել պայծառ, քան կայ-

ծակը կամ որևէ այլ լուսատու: Նրան կուղեկցեն հրեշտակներ: Կգա՝ դատելու կենդանիներին ու մեռյալներին, հաստատելու երկնային թագավորությունը հավիտենապես և անվախճան: Ուրեմն, ամրապնդվիր հավատի այս ճշմարտությունամբ և զգուշացիր, քանզի շատ են ասողները, թե կվերջանա Քրիստոսի թագավորությունը:

### Սուրբ Հոգու մասին

16. Հավատա նաև Սուրբ Հոգուն և իմացիր Նրա մասին ճշմարտությունը: Որովհետև կան շատերը, որոնք անհաղորդ են Սուրբ Հոգուն և Նրա մասին չարախոսություններ են քարոզում: Դու իմացիր, որ Սուրբ Հոգին մեկն է, անբաժանելի և ամենազոր, մեծագործ և չմասնատվող: Նրան հայտնի են խորհուրդները: Նա քննում է ամեն ինչ, նաև Աստծու խորքերը: Նա է աղավնու տեսքով իջել Տեր Հիսուս Քրիստոսի վրա: Նա է գործել Օրենքի և մարգարեների միջոցով: Նա քո մկրտության ժամանակ պետք է կնքի քո հոգին: Նրա սրբություն կարիքն ունի համայն բանական բնությունը: Ով չարախոսի Սուրբ Հոգու Շնորհը, թողություն չի ունենա ո՛չ այս, ո՛չ էլ այն աշխարհում: Նա համապատիվ է Հորը և Որդուն: Նրա անհրաժեշտությունն ունեն գահերը և պետությունները, տերությունները և իշխանությունները: Քանզի Աստված մեկն է՝ Քրիստոսի Հայրը, և Տերը մեկն է՝ Հիսուս Քրիստոսը, միակ Աստծու Միածին Որդին, և մեկն է Սուրբ Հոգին, որը սրբացնում է մեզ բոլորիս և աստվածային շնորհ պարգևում, որը խոսել է Օրենքի, մարգարեների, Հին և Նոր Կտակարանների մեջ:

17. Քո մտքում մշտապես ունեցիր հավատքի այս կնիքը, որի մասին ես ամփոփ ասացի քեզ, և Տիրոջ օրհնությունամբ, դրանք առաջիկայում կվերլուծենք ինչքան կարող ենք և բոլորը կամրապնդենք Սուրբ Գրքի խոսքերով: Քան-

զի մեր հավատքի սուրբ և աստվածային խորհուրդներին վերաբերող որևէ գաղափար պետք է սովորեցնել առանց այն ամրապնդելու Սուրբ Գրքով մեզ հայտնված ճշմարտություններով: Պետք է ջանանք խուսափել ամեն տեսակ հավանականաբանությունից և տպավորամոլությունից, որպեսզի չտարվենք ուսման վատ չարաչահումից: Ոչ էլ հեշտ հավատա ինձ՝ այս ամենը ասողիս, եթե իմ ասածի ճշմարտությունը չտրվի քեզ Սուրբ Գրքից: Որովհետև մեր հավատքի միջոցով մեզ պարգև տրվող փրկությունը ոչ թե ճարտարախոսության արդյունք է, այլ հենված է Սուրբ Գրքից վերցված փաստերի վրա:

### Մարդկային դրության մասին

#### Հոգու մասին

18. Այս պարզ և փառավոր, ամենասուրբ հավատքին ծանոթանալուց հետո, ճանաչիր, ուրեմն, նաև քեզ, թե ո՞վ ես դու: Դու եղել ես մարդ, բաղկացած երկու մասից՝ հոգուց և մարմնից, և որ, ինչպես քիչ առաջ ասացի, նույն Աստվածն է արարիչը քո հոգու և քո մարմնի: Ուրեմն, իմացիր, որ ունես ինքնիշխան հոգի, Աստծու ամենակատարյալ և ամենագեղեցիկ ստեղծագործությունը, իր իսկ Արարչի կողմից իր՝ Արարողի պատկերի համաձայն: Անմահ, անմահացնող Աստծու միջոցով: Հոգի բանական, կենդանի և անեղծ, իր Արարչի կողմից օժտված ինքնակամոթյամբ, որպեսզի կարողանա կամեցածը կատարել: Բայց այն, ինչ մղում է քեզ մեղսագործության, քեզ չի թույլատրվում կատարել: Քանզի Աստված, արարելիս, մեղսագործություն կատարելը չի տվել քեզ: Դու բախտի բերումով չէ, որ պոռնկանում ես, ոչ էլ, ինչպես ոմանք անմտորեն դատարկաբանում են, աստղերի շարժումներն են քեզ մղում անառակության: Ինչո՞ւ ես խուսափում խոստովանելու քո



մեղքերը՝ դրանց համար պատասխանատու համարելով անմեղ աստղերին: Ուրեմն, ուշադրութիւն մի տուր աստղագուշակներին, քանի որ Սուրբ Գիրքը նրանց մասին ասում է. «Թող գան հիմա ու քեզ փրկեն աստղագուշակները» (Եսայի, ԽԷ 13): «Նրանք բոլորը, ինչպես խռիվ, պիտի այրվեն կրակի մեջ և իրենց հոգիները չպիտի կարողանան փրկել բոցից» (Եսայի, ԽԷ 14):

19. Իմացիր նաև այն, որ հոգին այս աշխարհ գալուց առաջ չի մեղանչել: Աշխարհ գալիս ենք անմեղսակից, բայց հետագայում մեղք ենք գործում կամովին: Մի՛ լսիր, եթե որևէ մեկը, բացատրելով առաքյալի խոսքը՝ «Անում եմ այն, ինչ չեմ կամենում» (Հռոմ., Է 16), պնդի հակառակը, իսկ դու մտքում հիշիր նրան, ով ասել է. «Եթե հոժար լինեք և լսեք ինձ, դուք կճաշակեք երկրի բարիքները, իսկ եթե չկամենաք ինձ լսել, սուրբ պիտի ուտի ձեզ» (Եսայի, Ա 19-20), և այն ամենը, ինչ ասվում է այս առնչութեամբ: Ու դարձյալ. «Եվ ինչպես որ ձեր մարմնի անդամները տվեցիք անօրինութեանը, որպես ծառաներ պղծութեան և անօրինութեան, նույնպես և այժմ ձեր մարմնի անդամները տվեք սրբութեան համար՝ որպես ծառաներ արդարութեան» (Հռոմ., Զ 19): Մեկ ուրիշ տեղ նույն Պողոսն ավելացնում է. «Եվ քանի որ չկամեցան ճանաչել Աստծուն» (Հռոմ., Ա 28), և թե «ինչ որ կարելի է իմանալ Աստծու մասին, հայտնված է նրանց» (Հռոմ., Ա 19), և թե «փակեցին իրենց աչքերը» (Մատթ., ԺԳ 15): Լսիր նաև Աստծուն, որ կանչում է քեզ և դարձյալ ասում. «Ես քեզ տնկեցի իբրև համակ ազնիվ և պտղաբեր որթատունկ, ինչպե՞ս ինձ համար դառնութեան փոխվեցիր» (Երեմ., Բ 21):

20. Հոգին անմահ է: Նույնն են բոլոր հոգիները՝ և՛ այրերի, և՛ կանանց: Սոսկ նրանց մարմնի անդամներն են տարբեր: Չկա բնութեամբ մեղսագործ հոգիների գուճը, և

չկա բնութեամբ արդարագործ հոգիների գուճը: Ե՛վ մեղք գործելը, և՛ բարիք գործելը կամովին ընտրութեանից են: Քանզի բոլոր հոգիները նույն բնութեանն ունեն, նույն էութեանը: Կարծեմ շատ խոսեցի, և ժամանակն էլ արդեն անցել է: Բայց ի՞նչ կա փրկութեանից ավելի կարևոր: Չէ՞ր՞ կամենա, մի քիչ հոգնելով, ձեռք բերել միջոցներ հերտիկոսների դեմ: Չե՞ս ուզում իմանալ այդ ճանապարհի կեռամանները, որպեսզի անգիտութեամբ չգնաս դեպի անդուճակ: Եթե ուսուցիչներդ մեծ շահ են համարում այդ քեզ սովորեցնելը, իսկ դու՝ սովորողդ, մի՞թե հոժարութեամբ պարտավոր չես լսելու այստեղ ասվածները:

21. Հոգին ինքնիշխան է, և սատանան, թեև կարող է թելադրել չարը, բայց բռնութեամբ պարտադրելու իշխանութեան չունի: Քեզ պոռնկութեան միտք է առաջարկում: Բայց եթե դու կամենաս, կընդունես, եթե չես կամենա, չես ընդունի: Քանզի եթե ստիպողաբար պոռնկանում էիր, ապա Աստված ինչո՞ւ քեզ համար պիտի գեհնես պատրաստեր: Իսկ եթե քո բնութեամբ բարիք ես անում և ոչ թե քո կամքով, ապա Աստված ո՞ւմ համար է անպատմելի պսակներ պատրաստել: Ոչխարը համեստ է, բայց չի պսակվել իր համեստութեան համար: Որովհետև նրա համեստութեանը չի բխում իր ընտրութեանից, իր կամքից, այլ դա նրա հատկութեանն է:

## Մարմնի մասին

22. Իմացար, սիրելիս, հոգու մասին այն ամենը, ինչ հնարավոր էր իմանալ: Այժմ լսիր այն ամենը, ինչ կարելի է ասել քո մարմնի մասին: Մի հանդուրժիր լսել որևէ մեկին, երբ ասում է, թե մարմինը Աստծու ստեղծածը չէ: Որովհետև ովքեր հավատում են, որ մարմինը Աստծու հետ առնչութեան չունի, և որ հոգին մարմնում բնակվում է

ինչպես օտար և կապ չունեցող անոթի մեջ, նրանք պատ-  
րաստ են հեշտությամբ այդ անոթը չարարել և չարագոր-  
ծել պոռնիկության համար: Բայց այդ հրաշալի մարմնում  
նրանք ի՞նչ վատ և տգեղ բան գտան: Գեղեցիկ ի՞նչ բան  
է պակասում նրան: Ի՞նչը նրանում արարված է անար-  
վեստ: Մի՞թե նրանք պետք չէր ընկալելին աչքերի արտա-  
կարգ և զարմանալի դրուծյունը և մի՞թե պետք չէր հիա-  
նային այդ աչքերի աշխատանքով: Ինչպե՞ս են ականջնե-  
րը, գտնվելով գլխի երկու կողմերում, անարգել ստանում  
ձայները. ինչպե՞ս է հոտառությունը տարբերում գոլորշի-  
ների հոտերը և ընկալում գարշահոտությունները: Իսկ  
ինչպե՞ս է լեզուն երկու բանի ծառայում՝ համի և խոսե-  
լուն: Եվ ինչպե՞ս թոքերը, որոնք փակված են մարմնում,  
անդադար շնչում են: Ո՞վ է սիրտը դրել մարմնի մեջ, և այն  
անդադար բաբախում է: Ո՞վ է բաժանել մարմնի մեջ այս-  
քան երակներ: Ո՞վ է այսքան հմտորեն ոսկորները հյուսել  
ներվերի հետ: Ո՞վ է բաժանում սնունդը և դրա մի մասը  
տրամադրում մարմնի աճին, իսկ մյուս մասը արտանետում  
այդպիսի հարմարությամբ: Ո՞վ է մարմնի ծածուկ անդամ-  
ները տեղադրել բարեձև մասերում: Երբ մարդկային ցեղին  
սպառնում էր անհետացումը, ո՞վ մարդկային բնությանը  
հնարավորություն տվեց մշտապես վերարտադրվելու  
մարմնական՝ ամուսնական հարաբերությամբ:

23. Ինձ մի ասա, թե մարմինը մեղքի պատճառ է: Քան-  
զի եթե մարմինը մեղքի պատճառ է, ապա ինչո՞ւ մեռյալը  
մեղք չի գործում: Նոր մահացածի աջ ձեռքին մի սուսեր  
դիր, բայց սպանություն չի կատարվելու: Նոր մահացած ե-  
րիտասարդի մոտով բազում գեղեցիկուհիներ անցկացրեք,  
դարձյալ պոռնիկության ոչ մի ցանկություն չի առաջանա-  
լու: Ինչո՞ւ: Որովհետև մարմինն ինքնին մեղք չի գործի,  
այլ մարմնի միջոցով՝ հոգին: Մարմինը գործիք է և նման  
հոգու զգեստի ու տարագի: Եվ եթե հոգու միջոցով

հանձնվի պոռնիկության, դառնում է անմաքուր: Բայց եթե  
բնակվի սրբացած հոգու հետ, կդառնա Սուրբ Հոգու տա-  
ճար: Այդ ես չեմ ասում, այլ Պողոս առաքյալը: «Զգիտե՞ք,  
թե ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ  
է» (Ա Կորնթ., 2 19): Ուրեմն, խնամիր մարմինդ որպես  
Սուրբ Հոգու տաճարի: Մարմինդ մի քայքայիր պոռնիկութ-  
յուններով, մի ապականիր այդ գեղեցկագույն տարազը:  
Իսկ եթե այն ապականել ես, ապա այն լվա ապաշխարութ-  
յամբ: Քանզի այժմ ժամանակն է լվացվելու և մաքրվելու:

24. Ողջամտության մասին այս խոսքը բոլորից առաջ  
թող լսեն մենակյացների գունդը և կույսերի գունդը.  
նրանք, որ այս աշխարհում կարողանում են ապրել հրեշ-  
տակներին հավասար կյանքով: Թող լսի նաև Եկեղեցու  
մնացած ժողովուրդը: Մեզ, եղբայրներ՛ր, սպասում է մեծ  
պսակ: Մեծ արժեքը մի փոխանակեք փոքր հաճույքով:  
Լսեք առաքյալին, որ ասում է. «Զլինի, թե որևէ մեկը լինի  
պոռնիկ և պիղծ, ինչպես Եսայի, որը մեկ աման կերակրի  
դիմաց անդրանկությունը վաճառեց» (Եբր., ԺԲ 16): Ու-  
րեմն, այժմ զգույշ եղիր դու, որ ողջամիտ ապրելու համար  
արձանագրվել ես հրեշտակների գրքերում, դարձյալ այն-  
տեղից չջնջվես պոռնիկության հանձնվելու պատճառով:

25. Եվ դարձյալ, տրվելով ողջամտության, չպարծենաս  
նրանց առաջ, ովքեր գերադասեցին առավել նվաստ դիրք  
ամուսնության մեջ: «Ամուսնությունն, ըստ ամենայնի,  
հարգելի է, և ամուսնական անկողինը՝ սուրբ» (Եբր. ԺԳ 4),  
- ասել է առաքյալը: Դու ևս, որ ապրում ես անմեղութ-  
յամբ, մի՞թե չես ծնվել ամուսնացածներից: Ուրեմն, ոսկի  
ունենալով, մի՛ արհամարհիր արծաթը: Այլ թող բարեհույս  
լինեն նաև նրանք, որոնք ամուսնական խորհրդով ապրում  
են ճիշտ և օրինավոր: Անշուշտ նրանք, ովքեր ապրում են  
ամուսնության սուրբ կապով, և ոչ թե նրանք, ովքեր ան-

չափ իշխանությամբ այն օգտագործում են որպես անառակության միջոց: Անշուշտ նրանք, ովքեր գիտեն ժուժկալ լինել և անմնացորդ տրվել աղոթքին: Նրանք, ովքեր իրենց մաքուր զգեստներին զուգահեռ, եկեղեցու հավաքներին բերում են իրենց մարմինները: Նրանք, ովքեր հետևեցին ամուսնական կյանքին հանուն որդեծնության և ոչ թե հաճոյամոլության համար:

26. Մենամուսնականները թող չմեղադրեն երկրորդ անգամ ամուսնացողներին: Լավ և հիանալի բան է ժուժկալությունը: Բայց թույլատրելի է նաև երկրորդ անգամ ամուսնանալը նրանց, ովքեր չեն կարող ժուժկալ մնալ: «Լավ է նրանց համար, եթե մնան այնպես, ինչպես ես եմ» (Ա Կորնթ., Է 8), - ասում է առաքյալը, իսկ եթե ժուժկալ չեն, թող ամուսնանան: Որովհետև «լավ է ամուսնանալ, քան կրքով այրվել» (Ա Կորնթ., Է 9): Իսկ մնացած բոլորը՝ պոռնիկություն, խառնակություն և ամեն տեսակ անառակություն հեռու վանեք: Եվ հանուն Քրիստոսի ձեր մարմինը մաքուր պահեք, որպեսզի Քրիստոս ևս հսկի ձեր մարմինը:

### Ուտելիքի մասին

27. Մարմինը կերակրենք ուտելիքով, որ այն ապրի և անարգել ծառայի մեզ, այլ ոչ թե հաճույքի համար: Ուտելիքի հարցում ևս իմացեք Եկեղեցու հետևյալ հիմնական դրույթները, քանզի այս ասպարեզում ևս շատերը սխալներ են գործում: Ոմանք անխտիր ուտում են կուռքերին զոհաբերվածները, իսկ ուրիշներ մեղադրում են ուտողներին: Սնվելու հարցի առիթով ոմանց հոգին վարակվում է տարբեր ձևերով, քանզի անգիտանում են, թե ինչ պետք է ուտեն կամ չուտեն և տեղյակ չեն ծոմապահության օգուտներին: Քանզի ծոմապահության հրաժարվում ենք

մսից և գինուց ոչ այն պատճառով, որ դրանք ուտում ենք որպես պիղծ, այլ որովհետև որպես վարձ ակնկալում ենք ինչ-որ արդյունք: Այսինքն, հաղթահարելով զգայարանների վայելքը, վայելենք հանդերձյալ կյանքում հոգեկան և մտավոր սեղանից, որտեղ ապագայում ցնծությամբ կբաղենք այն, ինչ այստեղ ցանում ենք արցունքով: Ուրեմն, մի արհամարհիր նրանց, ովքեր մարմնական հիվանդության պատճառով ուտում են և խմում: Մի՛ մեղադրիր նաև նրանց, ովքեր ստամոքսի և այլ հիվանդությունների պատճառով մի քիչ գինի են խմում: Առավել ևս նրանց պետք է մեղադրես որպես մեղավորների: Մի՛ ատիր միսը որպես վատ և օտար բան: Որովհետև առաքյալը գիտեր ոմանց, որոնք այդպես էին վերաբերվում. ուստիև ասել է. «Որոնք արգելում են ամուսնանալ և հեռու են իրենց պահում այն կերակուրներից, որ Աստված ստեղծեց, որպեսզի հավատացյալները գոհությամբ վայելեն» (Ա Տիմ., Դ 3): Եթե այդ ամենից խորշում ես, հեռու մնա ոչ այն պատճառով, որ դրանք զգվելի են, քանզի դրանով դու վարձի չես արժանանա, այլ, թեև բարի են, շրջանցիր դրանք, մտովի ավելի մեծ բարիքների ակնկալությամբ:

28. Ապահովիր քո հոգին և կուռքերին զոհաբերված որևէ բան չուտես: Քանզի ես կուռքերին զոհաբերվածների հարցով այժմ առաջին անգամը չէ, որ զբաղվում եմ: Դրանով զբաղվել են նաև առաքյալները, նրանց թվում նաև Հակոբը՝ մեր այս Եկեղեցու եպիսկոպոսը: Ուրեմն, առաքյալները և ավագները գրեցին ընդհանրական թուղթ, որպեսզի նախ և գլխավորապես՝ չուտեն կուռքերին զոհաբերվածներից և ապա՝ հեռու մնան արյունից և խեղված անասուններից, որոնք կենդանի չեն մորթվել: Քանզի շատ մարդիկ, լինելով գազանաբարո և ապրելով շնակերպ, խմում և լիզում են արյունը, օրինակելով վայրի գազանների, և ազահաբար ուտում են խեղղված կենդանիներին:

Իսկ դու՝ ծառադ Քրիստոսի, այն, ինչ ուտես, կեր երկյուղածուլթյամբ: Ուտելիքի մասին այսքանը բավական է:

### Չգեստի մասին

29. Հագնվիր համեստ, ոչ թե գեղեցիկ երևալու համար, այլ մարմինդ ծածկելու անհրաժեշտությամբ: Ոչ թե փափկասուն դառնալու համար, այլ որպեսզի ձմռանը տաքանաս և ծածկես քո մարմնի տգեղությունը: Չլինի թե տգեղությունդ ծածկելու պատրվակով տարօրինակ զգեստներ հագնես և ընկնես ուրիշ տգեղության մեջ:

### Հարության մասին

30. Խնդրում եմ, ուշադիր եղիր քո այս մարմնին և իմացիր, որ մեռելներից հարուլթյուն առնելիս այս մարմնով պիտի ներկայանաս Դատաստանին: Եթե քեզ մոտ առաջանում է չհավատալու որևէ մտածմունք, թե այդ բանն անկարելի է, քննիր այն աներևույթները՝ հիմք ունենալով այն, ինչ կատարվում է քո մեջ: Ուրեմն, ասա դու ինձ. Որտե՞ղ էիր գտնվում սրանից հարյուր և ավելի տարիներ առաջ: Այդ ինչպե՞ս դու այդքան աննշան մի էակից դարձար խոշոր ու գեղեցիկ մարդ: Ապա՝ Նա, Ով ոչնչից արարեց ամեն ինչ և անգոյր դարձրեց գոյ, մի՞թե չէր կարող բարձրացնել այն, ինչը չէր դադարել գոյություն ունենալուց, այլ գտնվում էր քայքայման և անկման վիճակում: Նա, Ով մեզ համար ամեն տարի ծլեցնում է մեր ցանած ցորենը, արդյո՞ք կըժվարանա մեզ հարուլթյուն տալ, որի համար էլ ինքը հարյավ: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես ծառերը, որ ամիսներով անտերև և անպտուղ էին մնացել, բոլորը վերակենդանանում են հիմա, երբ ձմեռն անցել է: Մի՞թե ավելի կարելի և առավել հեշտ չէ, որ մենք վերապրենք նորից: Մովսեսի գավազանը Աստուծու կամքով վերածվեց իր բնույթին

տարբեր էության՝ օձի, իսկ մահացած մարդը չի կարող մի՞թե իր նախկին վիճակին վերադառնալ:

31. Մի՛ լսիր նրանց, ովքեր ասում են, թե այս մարմինը հարուլթյուն չի առնի: Բայց հարուլթյուն կառնի: Եսային՝ դրա վկան, ասում է. «Պիտի հառնեն ու կանգնեն մեռածները, որոնք գերեզմաններում են» (Եսայի, ԻԶ 19) և «Հողի մեջ ննջածներից շատերը պիտի հարուլթյուն առնեն, ոմանք՝ հավիտենական կյանքի համար, և ոմանք՝ հավիտենական նախատիքի և ամոթի համար» (Դան., ԺԲ 2): Հառնելը բոլոր մարդկանց համար ընդհանուր է: Բայց հարուլթյունը բոլորի համար նույնպիսին չէ: Քանզի բոլորս ստանում ենք հավիտենական մարմիններ, բայց բոլորս նման մարմիններ չենք ստանում: Քանզի արդարներն ստանում են իրենց մարմինը, որպեսզի հրեշտակների հետ հավիտյան ապրեն, իսկ մեղավորները՝ որպեսզի հավիտյան կրեն տանջանքները, որ առաջացրել են իրենց գործած մեղքերով:

### Ավագանի մասին

32. Դրա համար իր մարդասիրությամբ կանխեց և շնորհեց ավագանով մկրտության ապաշխարանքը, որպեսզի բեռնաթափվենք մեր մեղքերի մեծ մասից, ավելի ճիշտ՝ ամբողջ բեռից և, Սուրբ Հոգու կնիքը ստանալով, դառնանք հավիտենական կյանքի ժառանգները: Բայց քանի որ նախապես ևս բավական խոսել ենք ավագանի մկրտության մասին, այժմ անցնենք ներածական դասերի մնացած նյութերին:

### Սուրբ Գրքի մասին

33. Այս մեզ սովորեցնում են Հին Կտակարանի և Նոր Կտակարանի աստվածաշունչ գրքերը: Քանզի երկու Կտա-

կարանների Աստվածը մեկն է. Նա, Ով Նոր Կտակարանում հայտնված Քրիստոսին նախավետել էր Հին Կտակարանում: Նա, Ով Օրենքի և մարգարեների միջոցով նախապատրաստեց մարդկանց՝ ընդունելու Քրիստոսին: «Քանի դեռ հավատը չէր եկել, օրենքի տակ փակված էինք մնում» (Տիտ., Գ 23), և «օրենքը դաստիարակ եղավ մեզ՝ Քրիստոսին ընդունելու» (Տիտ., Գ 24): Եվ եթե երբևէ լսես որևէ հերետիկոսի՝ Օրենքը և մարգարեներին հայհոյելիս, հակաճառիր իր փրկարար խոսքով և ասա. «Հիսուս չի եկել Օրենքը ջնջելու, այլ այն լրացնելու» (Մատթ., Ե 17): Եվ սովորելու նպատակով իմացիր Եկեղեցուց, թե որո՞նք են Հին Կտակարանի գրքերը և որո՞նք՝ Նոր Կտակարանի: Եվ ապոկրիֆ գրքերից ոչ մեկը չկարդաս: Քանզի ինչո՞ւ զուր տանջվես կասկածելի գրքերով, քանի չես իմանում այն գրքերը, որ վկայված են բոլոր հավատացյալների կողմից որպես վավերական: Կարդա Սուրբ Գիրքը, Հին Կտակարանի 22 գրքերը, որ թարգմանել են 72 թարգմանիչներ:

34. Ալեքսանդր Մակեդոնացու մահանալուց հետո թագավորությունը բաժանվեց չորս իշխանությունների՝ Բաբելոնիա, Մակեդոնիա, Ասիա և Եգիպտոս: Եգիպտոսում թագավորածներից Պտղոմեոս Եղբայրասերը, լինելով բանասիրություն հույժ մեծ սիրահար, համայն աշխարհից հավաքեց գրքեր, արքայական գրադարանի հոգաբարձու Դեմետրիոս Փալեբացու գործակցությամբ: Պտղոմեոս, լսած լինելով Օրինաց և մարգարեների սրբազան գրքերի մասին, մտածեց, որ ավելի լավ է այդ գրքերը տեբերից վերցնել ոչ թե բռնությամբ, այլ բարեկամաբար և ընծաներով սիրաշահելու միջոցով: Իմանալով, որ ակամայից, պարտադրաբար տալու դեպքում մարդ կարող է նենգություն վերաբերվել, մինչդեռ կամովին տրվածը կարող է անկեղծ լինել, բազում ընծաներ ուղարկեց Եղիազարին, որն այդ ժամանակ Երուսաղեմի այս տաճարի քահանայապետն էր, և խնդրեց նրան

ուղարկել իր մոտ Իսրայելի 12 ցեղերից յուրաքանչյուրից վեցական թարգմանիչ: Այնուհետև, քանի որ ուզում էր ստուգել, թե այդ գրքերը արդյո՞ք աստվածաշունչ են, թե՞ ոչ, և որպեսզի թարգմանչական աշխատանքի ընթացքում թարգմանիչները չգործակցեն իրար հետ, նրանց դրեց Ալեքսանդրիայի մոտ գտնվող Փարոսի առանձին հարկաբաժիններում, որպեսզի հնարավորություն ունենան թարգմանելու բոլոր գրքերը: Երբ նրանք 72 օրվա ընթացքում ավարտեցին թարգմանչական աշխատանքը, Պտղոմեոսը բոլորի ձեռագրերը հավաքեց առանձին-առանձին, այնպես, որ նրանցից յուրաքանչյուրը գրքերը թարգմանել էր մենակ, առանց մեկ ուրիշի գործակցություն: Երբ բոլորի թարգմանությունները համեմատեց իրար հետ, պարզվեց, որ բոլորը բացարձակապես հարմարվում են իրար ոչ միայն իմաստով, այլև բառացի, քանզի Սուրբ Գրքի թարգմանությունը մարդկանց խոսքերով չէր, այլ այն ևս կատարվել էր Սուրբ Հոգու շնորհիվ, ճիշտ ինչպես որ եղել էր նախնական շարադրանքը՝ թելադրված Սուրբ Հոգու կողմից:

35. Այս թարգմանիչների գրքերը կարդա. իսկ անվանումներին մի՛ մոտեցիր: Ջանասիրությամբ ուսումնասիրիր միայն այն գրքերը, որ Եկեղեցում ևս կարդում ենք հրապարակավ: Քեզնից առավել ողջամիտ ու բարեպաշտ էին առաքյալները, հնագույն եպիսկոպոսները, Եկեղեցու պահպանները, որոնք մեզ ավանդեցին այս գրքերը: Ուրեմն դու, որ Եկեղեցու զավակն ես, մի՛ աղավաղիր ընդունված կարգը: Ինչպես ասվեց, սերտիր Հին Կտակարանի 22 գրքերը: Եթե ուսումնասեր ես, այժմ ես կասեմ, իսկ դու աշխատիր հիշել դրանք անվանումներով:

Հին Կտակարանի Օրենքում Մովսեսի առաջին հինգ գրքերն են. Ծննդոց, Ելք, Ղևտական, Թվեր, Երկրորդ Օրենք: Հետևում են՝ Հեսու և Նավեի որդի, Դատավորներ

գրքերը Հռութի գրքի հետ, որը հերթականութեամբ յոթերորդն է: Մնացած պատմական գրքերից՝ Թագավորութիւններ Ա և Բ, ըստ հրեաների, մեկ գիրք է, իսկ Թագավորութիւններ Գ և Դ՝ նույնպէս մեկ գիրք: Նրանց մտտ Մնացորդաց Ա և Բ գրքերը կազմում են մեկ գիրք: Եզրաս Ա և Բ գրքերը՝ նույնպէս մեկ գիրք: Տասներկուերորդը Եսթերի գիրքն է: Պատմողական գրքերը սրանք են: Իսկ չափածո գրքերը հինգն են. Հոր, Սաղմոսների գիրք, Առակներ, Ժողովող և Երգ Երգոց, որը կազմում է տասնյոթերորդ գիրքը: Սրանցից բացի նաև մարգարեների հինգ գրքերը, այն է՝ մեկ գիրք, որ ընդգրկում է տասներկու մարգարեներին, Եսայիի մի գիրք, Երեմիայի Բարուք, Ողբ և Թուղթ՝ մեկ գիրք, ևս մեկ գիրք՝ Եգեկիել, և Դանիելի գիրքը, որ Հին Կտակարանի քսաներկուերորդ գիրքն է:

36. Նոր Կտակարանում ընդգրկված են միայն չորս ավետարանները, իսկ մնացած բոլորը կեղծ են և վնասակար: Մանիքեականները ևս գրեցին մի ավետարան՝ «ըստ Թովմասի»: Այն, անշուշտ, ունի «ավետարան» բառի շնորհած բուրմունքը, սակայն կործանում է միամիտների հոգին: Ընդունիր նաև տասներկու առաքյալների գործերը և Հակոբոսի, Պետրոսի, Հովհաննեսի և Հուդայի ընդհանրական թղթերը: Քրիստոսի աշակերտների գրած Նոր Կտակարանի բոլոր գրքերի հաստատումը և վերակնքումը Պողոսի տասնչորս թղթերն են: Իսկ մնացած բոլորը երկրորդական համարիր: Իսկ այն, ինչ Եկեղեցում չի ընթերցվում, ինչպես լսեցիր, ինքզ ևս մի ընթերցիր: Այս մասին այսքան:

37. Խոստափիր սատանայական ամեն մի գործողութիւնից և մի՛ հնազանդվիր ուրացյալ վիշապին, ով կամովին բարի արարածից փոխարկվեց սատանայի: Նա կարող է համոզել կամեցողներին, բայց ոչ ոքի ստիպել չի կարող: Մի՛ գբաղվիր աստղագուշակութեամբ և հավահմայութե-

յամբ, ոչ էլ բախտագուշակութեամբ և հեթանոս հույների պատգամախոսութեամբ: Մոգութիւնը, հմայութիւնը և դիագուշակութիւնը այնքան անօրինական բաներ են, որ այդ մասին նույնիսկ մի՛ լսիր: Հեռու մնա ամեն տեսակ անառակութիւնից: Մի՛ եղիր որովայնամոլ կամ հեշտասեր, քո անձը վեր պահիր արծաթասիրութիւնից և վաշխառութիւնից: Մի՛ մասնակցիր հեթանոսների տարբեր հավաքույթներին: Հիվանդանալու դեպքում մի՛ օգտագործիր հմայական միջոցներով պատրաստած վիրակապեր: Խոստափիր պանդոկներ հաճախելու լպիրչ սովորութիւնից: Մի՛ հաճախիր գինետներ և մի՛ ընկիր ո՛չ սամարիականութեան, ո՛չ էլ հուդայականութեան մեջ. որովհետև այդ ամենից քեզ փրկել է Հիսուս Քրիստոսը: Ուշադրութիւն մի՛ դարձրու Շաբաթ օրը արգելող օրենքներին և ոչ մեկ սնունդ մի՛ համարիր անմաքուր և զզվելի: Բայց ամեն ինչից առավել ատիր անօրեն հերետիկոսների բոլոր ժողովները և հեռու մնա նրանցից: Պաշտպանիր քո հոգին ծոմապահութիւններով, աղոթքներով, ողորմութիւն անելով և Սուրբ Գրքի ընթերցումով: Եվ այսպէս, ողջամտութեամբ և բարեպաշտութեան սկզբունքներով ապրիր քո կյանքի մնացած տարիները, վայելելով մեկ Մկրտութեան փրկարար օրհնութիւնը, և երբ արդեն ընդունվես Հայր Աստծու երկնային բանակի շարքերը, թող արժանանաս ընդունելու նաև երկնային պսակները շնորհիվ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որին վայել է փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:





## ՈՒՍՈՒՅՈՒՄ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### Արված Երուսաղեմում հավատի մասին

Եվ ընթերցում առաքյալի՝ Եբրայեցիներին ուղղած թղթից. «Ի՞նչ է հավատը, եթե ոչ՝ հուսացված բաների հաստատումը և ապացույցն այն բաների, որոնք չեն երևում, քանզի նախնիք հավատով վկայություն ընդունեցին» (Եբր., ԺԱ, 1-2) և շարունակությունը:

1. Տերը ինչպիսի՞ր պաշտոն է շնորհում ձեզ՝ ուսումնական դասից ձեզ փոխադրելով Հավատացյալների դաս: Մեր մեջ է Պողոս առաքյալը և ասում է. «Հավատարիմ է Աստված, որից կանչվեցիք հաղորդակից լինելու Նրա Որդուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին» (Ա Կորնթ., Ա 9): Որովհետև, քանի որ Աստված Հավատարիմ է կոչվում, դու ևս ստանում ես այդ անվանումը՝ ստանալով մեծ պաշտոն: Աստված, ինչպես որ կոչվում է բարի և արդար և Ամենակալ, բոլորի Արարիչ, այնպես էլ կոչվում է Հավատարիմ: Ուրեմն, մտածիր, թե հիմա ի՞նչ պաշտոնի ես բարձրանում, որ ստանալու ես նույն անվանումը, ինչ որ ունի Աստված:

2. Այժմ ձեզնից պահանջվում է, որ ամեն մեկդ դառնաք գիտակցաբար Հավատարիմ: «Բայց դժվար է գտնել Հավատարիմ մարդ» (Առակ., Ի 6): Ես այդ չեմ ասում, որպեսզի ինձ ցույց տաս քո խիղճը, որովհետև դու որևէ մարդու չէ, որ Հաշվետու կլինես, այլ, որպեսզի Աստծուն ցույց տաս քո աննենգ, անխարդախ Հավատը, Նրան, Ով քննում է երիկամներն ու սրտերը, Նրան, Ով իմանում է մարդկանց մտքերը և զգացմունքները: Մեծ բան է Հավատարիմ մարդը: Նա ավելի հարուստ է, քան ամենահարուստ մարդը: Հավատարիմ մարդուն կարելի է վստահել աշխարհի ամ-

բողջ հարստությունները, քանզի նա հաղթահարել է դրանք և ոտնատակ արել: Քանզի ովքեր երևութապես հարուստ և մեծատուն են թվում, հոգով աղքատ են և ինչքան շատ են կուտակում, այնքան այրվում են իրենց պակասածը լրացնելու ցանկությունով: Իսկ Հավատարիմ մարդը, շատ տարօրինակ բան, հարուստ է իր չքավորության մեջ: Քանզի իմանալով, որ ինքը կարիք ունի միայն ուտելիքի և ծածկվելիքի, բավականանալով դրանով, նա ոտնակոխ է արել կարիքը և հարստության տենչը:

3. Հավատի մեծ արժեքը միայն քրիստոնյա անունը կրողների համար չէ: Բայցև այն ամենը, ինչ կատարվում է աշխարհում, և այն, ինչ կատարվում է Եկեղեցուն օտար մարդկանց կողմից, կատարվում են Հավատով: Հավատի վրա հիմնված օրենքները, որ կարգավորում են ամուսնական կյանքը, ներդաշնակում են մինչև ամուսնությունը օտար և իրար անծանոթ մարդկանց: Եվ մարդ, որը մինչ այդ մարմնական և նյութական ոչ մեկ առնչություն չի ունեցել մյուսի հետ, վստահելով ամուսնական պայմանավորվածություն, այժմ ամեն ինչում դառնում է հաղորդակից նրան: Հողագործությունը ևս հիմնված է Հավատի վրա: Քանզի ով չի հավատում, թե բերք կստանա, չի հանդուրժի մշակման ծանր աշխատանքը: Ծովագնաց մարդիկ ևս, Հավատալով փոքրիկ փայտի կտորին, ցամաքի ապահովությունը փոխանակում են ալիքների անկայունության հետ: Նրանք հանձնվում են անհայտ հույսերի՝ Հավատը Համարելով ավելի մեծ ապահովություն, քան ամենահաստատուն խարիսխը: Մարդկանց գործերի մեծ մասը կատարվել է՝ հիմնվելով Հավատի վրա: Այդպես է ոչ միայն մեզ՝ քրիստոնյաներիս համար, այլև արտաքին մարդկանց համար: Նրանք, եթե անգամ Սուրբ Գիրքը չեն ընդունում և մատուցում են իրենց ինչ-որ ուսմունքները, դրանք ևս ընդունում են Հավատի հիման վրա:

4. Ծշմարիտ հավատին է ձեռն ախոր կանչում կատարված ընթերցումը, որ ցույց տվեց ու սովորեցրեց, թե ինչպես պետք է դուք ևս սիրելի լինեք Աստծուն: Քանզի առաքյալն ասում է, թե «առանց հավատի անհնար է հաճելի լինել Աստծուն» (Եբր., ԺԱ 6): Քանզի ո՞վ հոժար կլինի ծառայել Աստծուն, եթե հավատացած չլինի, թե վարձրեկալ կլինի: Ինչպե՞ս իր կուսուցիչները պահի աղջիկը և ողջամիտ մնա երիտասարդը, եթե չհավատա, թե իր անմեղություն համար կարժանանա անթառամ պսակի: Հավատը աչք է, որը լուսավորում է խիղճը և սնում մարդու խելամուտությունը: Եսայի մարգարեն ասում է. «Եթե չհավատաք, չեք հասկանա» (Եսայի, է 9): Իսկ Դանիելն ասում է. «Հավատը փակում է առյուծների բերանը» (Հմմտ. Եբր., ԺԱ 33): Նրա մասին գիրքն ասում է, թե հանվեց, բայց վրան ոչ մի վերք չկար, որովհետև իր անձը վստահել էր իր Աստծուն: Արդյոք կա՞ սատանայից առավել սարսափելի բան, բայց նրա դեմ ևս չունենք այլ գեներ, քան հավատը, որն անմարմին վահան է աներևույթ թշնամու դեմ: Նա անզուլջների դեմ հավատի մեջ ամեն տեսակ նենգ նետեր է արձակում: Քանի որ թշնամին անտեսանելի է, մեր հզոր ծածկույթը հավատն է, ինչպես ասում է առաքյալը. «Եվ այս բոլորի վրա առեք հավատի վահանը, որով պիտի կարողանաք հանգցնել չարի մխացող բոլոր նետերը» (Եփես., 2 16): Շատ անգամ սատանան ուղարկում է վատ հաճույքի ցանկություն մխացող նետը: Բայց հավատը, առաջադրելով դատողությունը, հանգցնում է նրա ցանկահարույց մտքերը. այսինքն՝ չեզոքացնում է սատանայական նետը:

5. Երկար եղավ հավատի մասին խոսքը: Բայց եթե անգամ ամբողջ օրը այդ մասին խոսեինք, ժամանակը դարձյալ չէր բավականացնի: Բայց առայժմ բավարարվենք Հին Կտակարանի կերպարներից միայն Աբրահամով, քանի որ հավատով մենք դարձանք նրա որդիները: Նա ոչ միայն իր

գործով արժեկորվեց, այլև իր հավատով: Քանզի նա մեծ հաջողություններ ունեցավ: Բայց ուրիշ ոչ մի անգամ նա Աստծու բարեկամ չկոչվեց, այլ միայն հավատալուց հետո: Եվ նրա բոլոր գործերը կատարվեցին հավատով: Լքեց ծնողներին հանուն հավատի: Լքեց իր հայրենիքը, իր երկիրը հանուն հավատի: Ուրեմն, ինչպես որ նա հավատալով արդարացվեց, դու ևս կարդարացվես հավատալով: Մանկածնություն նրա կարողությունը մահացած էր, քանի որ ինքը ծեր էր, ու կիրճ՝ Սառան, ևս ծերացել էր, և նրանք որդեծնություն ոչ մի հույս չունեին: Աստված խոստանում է ծերունուն որդեծնություն: Եվ քանի որ Աբրահամը չթուլացավ հավատի մեջ, թեև իր մարմինն արդեն զգում էր մահացած, նա ու չղարձրեց մարմնի անկարողության վրա, հավատաց խոստացողի զորությունը: Ուստի մեռած մարմիններից զարմանալիորեն նա որդի ունեցավ: Ապա, որդի ունենալուց հետո, երբ նա հրաման ստացավ զոհաբերել իր որդուն, թեև լսել էր Աստծու խոսքը, թե՛ «Իսահակի միջոցով ես դու սերունդդ շարունակելու» (Ծննդ., ԻԱ 22), իր միածին որդուն զոհաբերեց Աստծուն՝ հավատացած, որ Աստված կարող է նրան կենդանացնել անգամ նրա մահից հետո: Եվ որդուն կապկպելով, փայտերի վրա դնելուց հետո, նրան զոհաբերեց Աստծուն: Բայց Աստծու զթուլության պատճառով իր որդուն ետ ստացավ կենդանի, քանի որ Աստված նրան պարգևեց գառնուկ՝ որդու փոխարեն զոհաբերելու: Այս բոլոր փորձություններում հավատարիմ մնալով՝ նա ստացավ արդարություն կնիքը, թլփատվեց և ընդունեց հավատի կնիքը, Աստծու նոր խոստումով, թե դառնալու է հայր բազում ազգերի:

6. Այժմ տեսնենք, թե Աբրահամը ինչպե՞ս է բազում ազգերի հայր: Խոստովանում ենք, թե նա մարմնական ժառանգություն հրեաների հայրն է: Եթե մենք ուշադրություն դարձնենք միայն մարմնական ժառանգության հարցի



վրա, ապա ստիպված պիտի խոստովանենք, որ Աստծու խոստովանումը սխալ է: Այդ հիման վրա նա չի կարող լինել բուրբիս հայրը: Բայց մեզ նրա որդիներ դարձնողը օրինակելի հավատն է Աստծու նկատմամբ: Իսկ ինչպե՞ս է այդ կատարվում: Մարդիկ չեն կարող հավատալ, թե մարդ կարող է հառնել մեռելներից: Չեն կարող հավատալ նաև, թե ծերուկները մահացած անհատները կարող են որդեծնել: Բայց մենք հավատում ենք քարոզվող Քրիստոսին, որ փայտի վրա խաչվեց, մեռավ և հարյավ: Հավատի նմանություններ մենք դառնում ենք Աբրահամի որդիները և, նրան նմանվելով, ընդունում ենք հոգևոր կնիքը: Մկրտությունը թլփատվում ենք Սուրբ Հոգու շնորհով և զորություններ, ոչ թե մարմնով, այլ սրտով, ինչպես ասում է Երեմիան. «Ձեր Աստծու համար թլփատվեցեք. ձեր սրտի անթլփատությունը թլփատեցեք» (Երեմ., Դ 4): Առաքյալը ևս ասել է. «Նրանով դուք անձեռագործ թլփատություններ թլփատվեցիք. հավատով՝ մերկանալով մեղանշական մարմնից Քրիստոսի թլփատությունը» (Կորնո., Բ 11):

7. Պահպանելով այդ հավատը՝ մենք դառնում ենք անպարտելի և զարդարվում ամեն տեսակ առաքինություններով: Քանզի հավատն այնքան ուժ ունի, որ մարդուն հնարավորություն է տալիս քայլելու ծովի վրայով: Պետրոսը մեզ նման մարդ էր, ուներ միս և արյուն, աճել ու մեծացել էր նույն ուտելիքով, ինչ որ մենք: Երբ Քրիստոս նրան ասաց՝ «Եկ», նա, հավատալով, քայլեց ջրերի վրայով՝ հավատն ունենալով ավելի ապահով հիմք, քան ցամաքի ափը, և իր ծանր մարմինը շարժեց առաջ հավատի իրեն շնորհած թեթևություններով: Քանի նա հավատում էր, հաստատ քայլում էր ջրի վրայով: Բայց երբ կարկամեց, սկսեց ընկղմվել: Ինչքան կորցնում էր իր հավատը, այնքան մարմինն ընկղմվում էր ջրի մեջ: Տեսնելով նրա հուզմունքը՝ մեր հոգիների փրկիչ Հիսուսն ասաց. «Թերահավատ, ինչո՞ւ երկմտե-

ցիր» (Մատթ., ԺԴ 31): Եվ դարձյալ իր աջը բռնած Հիսուսից ուժ առնելով՝ ջրերի վրա նույն ընթացքը կատարեց: Այս միջադեպը հիշատակում է ավետարանը՝ ասելով. «Երբ նրանք նավակ բարձրացան» (Մատթ., ԺԴ 32): Քանզի չի ասում, թե Պետրոսը լողալով բարձրացավ, այլ հասկացնում է, թե ինչքան որ ալիքների վրայով գնաց դեպի Հիսուսը, նույնքան տարածություն ևս անցնելով՝ վերադարձավ ու բարձրացավ նավ:

8. Հավատն այնքան հզոր է, որ փրկվում է ոչ միայն հավատացողը, այլև շատ մարդիկ փրկվել են ուրիշի հավատի պատճառով: Հավատացյալ չէր Կափառնաուսի անդամալույծը, այլ հավատում էին նրանք, ովքեր նրան տարան ու քանդեցին տանիքը: Որովհետև անդամալույծի հիվանդ մարմնի հետ հիվանդ էր նաև նրա հոգին: Եվ մի՛ կարծիր, թե ես նրան անտեղի եմ մեղադրում: Այդ ասում է ավետարանը. «Երբ Հիսուս տեսավ» ոչ թե նրա հավատը, այլ «նրանց հավատը»՝ ասում է անդամալույծին (Մատթ., Թ 2), «Վեր կաց» (Մատթ., Թ 6): Անդամալույծին տանողները հավատում էին, և նա վայելեց բուժումը:

9. Ուզո՞ւմ ես համոզվել, թե այլոց հավատով ուրիշներն են փրկվում: Մեռավ Ղազարոսը. անցավ առաջին, երկրորդ և երրորդ օրը: Նրա ներվերը փտեցին, և մարմինն սկսեց նեխել: Արդեն չորս օր առաջ մահացածը ինչպե՞ս կարող էր իր համար խնդրել փրկարարին: Բայց այն, ինչ պակասում էր մահացածին, լրացրին նրա հարազատ քույրերը: Երբ Տերը եկավ, Ղազարոսի քույրը ընկավ նրա ոտքերը: Երբ Քրիստոս հարցրեց, թե՞ «Որտե՞ղ նրան թաղեցիք», քույրը պատասխանեց. «Տեր, հիմա արդեն նեխած կլինի, քանի որ չորս օր է անցել» (Հովհ., ԺԱ 39): Իսկ Տերը ասում է. «Եթե հավատաս, կտեսնես Աստծու փառքը» (Հովհ., ԺԱ 40). կարծես դրանով ուզում էր ասել՝ դու

լրացրու մահացածին պակասող հավատը: Եվ այնքան հզոր եղավ քույրերի հավատը, որ մահացածին ետ բերեց դժոխքի դարբասներից: Ուրեմն, ուրիշներ, այլոց համար հավատալով, կարողացան մեռյալներին հարուժյուն տալ: Իսկ դու, եթե քո անձի համար անկեղծորեն հավատաս, առավել օգտված չե՞ս լինի: Եթե դու անգամ անհավատ ես, կամ թերահավատ, Տերը մարդասեր է և կընդունի քո զղջումը: Միայն թե դու երախտագիտությամբ ասա Նրան. «Հավատում եմ, օգնիր իմ անհավատությունը» (Մարկ., Թ 24): Եվ եթե կարծում ես, թե հավատում ես, բայց դեռևս հավատդ կատարյալ չէ, պարտավոր ես, ինչպես առաքյալները, ասել. «Տեր, ավելացրու մեր հավատը» (Ղուկ. Ժ 5): Ուրեմն, հավատի մի մասը դու ունես, իսկ մյուս՝ առավել մեծ մասը Նրանից կստանաս:

10. Հավատը ունի մեկ անուն, բայց այդ անունը երկու բան է բացահայտում: Հավատի մի տեսակը դավանաբանական է, որը բացահայտում է հոգու հավանությունը մի որոշակի վարդապետության: Եվ այդ էլ օգնում է հոգուն, ինչպես ասել է Տերը. «Ով իմ խոսքը լսում է և հավատում Նրան, Ով ինձ առաքեց, ընդունում է հավիտենական կյանքը և չի դատապարտվի» (Հովհ., Ե 24): Եվ դարձյալ՝ «Ով Որդուն հավատում է, չպիտի դատապարտվի» (Հովհ., Գ 18), «այլ մահվանից կյանք պիտի անցնի» (Հովհ., Ե 24): Օ՛, ինչքան մեծ է Աստծու մարդասիրությունը: Քանզի արդարները երկար տարիներ աշխատեցին, մինչև հաճոյացան Աստծուն: Եվ այն, ինչ երկար տարիներ հաճոյանալով ձեռք բերեցին, այժմ Հիսուս մեկ ժամվա ընթացքում շնորհում է մեզ: Ուրեմն, եթե հավատաս, որ Հիսուս Քրիստոս Տերն է աշխարհի, և որ «Աստված Նրան հարուժյուն տվեց մեռելներից, կփրկվես» (Հռոմ., Ժ 9) և կփոխադրվես դրախտ Նրա կողմից, Ով ավագակին տարավ դրախտ: Թե՛րահավատ մի՛ եղիր, թե՛ այդ չի կարող կատարվել: Նա, Ով

մեկ ժամվա ընթացքում այս սուրբ Գողգոթայում փրկեց ավագակին, քեզ նույնպես կփրկի, եթե հավատաս:

11. Հավատի երկրորդ տեսակը այն է, որ կարող էինք կոչել ներգործուն հավատ՝ պարզևկած Քրիստոսի կողմից իբրև շնորհ: «Մեկին հոգուց տրված է իմաստություն խոսք, մյուսին՝ գիտություն խոսք՝ նույն հոգուց. մյուսին հավատ՝ նույն հոգով. մյուսին՝ բժշկումների շնորհ՝ նույն հոգով» (Ա Կորնթ., ԺԲ 8-9): Ուրեմն, այս հավատը, որ պարզևում է հոգին, միայն դավանական չէ, այլև ներգործուն է և գերազանցում է մարդկային կարողությունները: «Ով այդ հավատն ունի, այս լեռանը կասի՝ տեղափոխվիր այստեղից այնտեղ, և կտեղափոխվի» (Մատթ., Ժ 20): Որովհետև, եթե մարդ հավատալով է ասում, թե այս բանը կլինի, և ոչ մի կասկած չունի այդ մասին, այդ դեպքում ընդունում է որոշակի շնորհ: Այդ հավատի համար ասված է. «Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք» (Մատթ., Ժ 20): Քանզի ինչպես որ մանանեխի հատիկը փոքր է, բայց իր մեջ մեծ զորություն ունի և ցանելիս հողի փոքր տարածություն է զբաղեցնում, իսկ երբ աճում է, խոշոր ճյուղերով է տարածվում և կարող է իր տերևներով ծածկել թռչունների երամները, այդպիսին է նաև հավատը հոգու մեջ: Եթե այն հզոր է, մեծագործություններ կարող է կատարել: Նա մտածում է Աստծու մասին, և նայում է Աստծուն, ինչքան որ հնարավոր է Աստծու հավատի շնորհով լուսավորվելու դեպքում: Նա շրջում է աշխարհի հեռուները, և նախքան կյանքի ավարտը, նա արդեն տեսնում է դատաստանը և խոստումների հատուցումը: Ուրեմն, այժմ ունեցիր քեզ համար անհրաժեշտ հավատն առ Աստված, որպեսզի նրանից ստանաս ներգործուն հավատը, որը գերազանցում է մարդկային կարողությունները:

12. Ուրեմն, իբրև քո սեփական հավատ, որ դու կսովորես ու կարտասանես, պետք է ունենաս այն, որ Եկեղեցին է քեզ սովորեցնում այժմ, և որը ամրապնդված է Սուրբ Գրքի ճշմարտություններով: Քանի որ բոլորը չէ, որ կարող են կարգալ Սուրբ Գիրքը – ոմանք անհատական ցածր ընկալման, ուրիշներ տարբեր հոգսերի պատճառով չեն կարողանում կարգալ և հասկանալ Գիրքը – որպեսզի անիմացություն պատճառով նրանց հոգիները կորստյան չմատնվեն, մի քանի տողով կընդգրկենք մեր ամբողջ Հավատի Հանգանակը: Ես ուզում եմ, որ այդ տողերը անգիր իմանաք և մեծ ուշադրություն արտասանեք՝ դրանք ոչ թե թղթի վրա գրելով, այլ փորագրված պահելով ձեր սրտերում և մտքում: Դրանք սերտելու ընթացքում զգուշացեք, որ ուսումնասիրողներից որևէ մեկը չլսի այն, ինչ այժմ մատուցում ենք ձեզ: Այս հավատքն ունեցեք որպես պահուստ ձեր ամբողջ կյանքում և դրանից բացի ուրիշ հավատ չընդունեք: Ոչ էլ այն ժամանակ, երբ մենք մտափոխվելով հակադրվենք այն ամենին, ինչ այժմ սովորեցնում ենք ձեզ: Ոչ էլ այն դեպքում, եթե հակառակորդը, վերափոխվելով լուսավոր հրեշտակի, կամենա քեզ մոլորեցնել: Որովհետև, եթե անգամ մենք կամ որևէ հրեշտակ երկնքից ավետարանի ձեզ հակառակը այն ամենի, ինչ այստեղ ստացաք, թող անիծյալ լինի: Եվ այժմ, լսելով մի բառ, մտաբերիր հավատը, բայց սպասիր հարմար առիթի՝ սովորելու Սուրբ Գրքից յուրաքանչյուր հատվածի լրիվ բովանդակությունը: Քանզի հավատի ճշմարտությունները չեն շարադասվել մարդկանց կարծիքի և ցանկության համաձայն, այլ այն բանից հետո, երբ հավաքվեցին բոլոր գրքերի գլխավոր կետերը, շարադրվեց հավատի ամբողջ ուսմունքը: Ծիշտ այնպես, ինչպես որ մանանեխի փոքրիկ հատիկն իր մեջ պարունակում է այդ բույսն իր ամբողջ ամսման մեջ, այդպես էլ Հավատի Հանգանակը քիչ խոսքով իր մեջ կենտրոնացրել է բարեպաշտության ամբողջ իմացությունը, որ կա Հին և Նոր Կտակարանում: Ուրեմն, եղբայրներ, եղեք ուշադիր և պահպանեք ավանդությունները, որ այժմ ստացաք և դրանք խորը գրեցեք ձեր սրտերում:

13. Երկյուղածություն պահեք դրանք: Չլինի թե թշնամին կարողանա թուլացածներից ոմանց մոլորեցնել: Չլինի թե որևէ հերետիկոս աղավաղի որևէ բան այն ամենից, ինչ այստեղ ավանդում ենք ձեզ: Քանզի հավատը նման է դրամատուն դրված արծաթի, ինչը մենք այժմ կատարեցինք: Աստված մեզնից հաշիվ կպահանջի այդ հատկացման համար: «Պատվիրում եմ քեզ, – ինչպես ասում է առաքյալը, – Աստուծա առաջ, Ով որ կենդանություն է տալիս ամեն ինչի, և Հիսուս Քրիստոսի առաջ, Ով որ վկայեց Պոնտացի Պիղատոսի առաջ, անարատ պահեք այս բարի վկայությունը և հավատը, որ ձեզ ավանդվեց, մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնությունը»: Այժմ քեզ հանձնվեց կյանքի գանձը, և Տերը, երբ հայտնվի, քեզնից պիտի պահանջի քեզ ավանդածը: Ինչ-որ մի որոշ ժամանակ այն բոլորին կբացահայտի արքաների Արքան և տերերի Տերը: Անմահության միակ տերը: Նա, Ով բնակվում է անմատչելի լույսի մեջ. Նա, Ում ոչ մի մարդ չի տեսել և տեսնել չի կարող. Ում վայել է փառք, պատիվ և զորություն հավիտյանս հավիտենից: Ամեն:

Երուսաղեմյան Հանգանակ  
Սուրբ և Առաքելական Հավատի Հանգանակ, որ  
ավանդվեց լուսավորվողներին՝ համաձայն նրանց  
տրված մեր խոստման

1. Հավատում ենք մեկ Աստծու, Ամենակալ Հոր, երկնքի  
և երկրի երևելիների և աներևույթների Արարչին:
2. Եվ մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին, Աստծու Միածին  
Որդուն, ծնված բոլոր ժամանակներից էլ առաջ, Ում միջո-  
ցով էլ ամեն ինչ կատարվեց:
3. Նրան, Ով մարմնացավ և մարդացավ (Կույսից և  
Սուրբ Հոգուց):
4. Խաչվեց և թաղվեց:
5. Երրորդ օրը հարյավ:
6. Բարձրացավ երկինք և նստեց Հոր աջ կողմը:
7. Գալու է փառքով, դատելու է կենդանիներին և մեռ-  
յալներին, Ում թագավորությունը չկա վախճան:
8. Եվ մեկ Սուրբ Հոգուն՝ Մխիթարիչին, որ խոսեց մար-  
դարենների բերանով:
9. Եվ ապաշխարության, մեկ Մկրտության, մեղքերի  
թողության:
10. Եվ մեկ ընդհանրական Եկեղեցուն:
11. Մարմնի հարության:
12. Եվ հավիտյան կյանքին:



ՈՒՍՈՒՑՈՒՄ ՎԵՅԵՐՈՐԴ

Արված Երուսաղեմում և վերաբերվում է Աստծու  
մենիշխանությանը. հավատամ մեկ Աստծուն,  
ինչպես նաև հերետիկոսություններին

Ընթերցում Եսայիից. «Նորոգվեցեք իմ առաջ, ով կղզիներ. քանզի  
Իսրայելը փրկվեց հավիտենական փրկությամբ: Դուք չեք ամաչելու,  
այլևս ամոթահար չեք լինելու մի՞նչև հավիտենություն» (Եսայի, ԽԵ  
17).

1. Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի  
Հայրը: Օրհնյալ է և Նրա Միածին Որդին: Քանզի Աստծու  
մասին մտածելով՝ մենք նկատի ունենանք նաև Հորը, որ-  
պեսզի միաժամանակ և անբաժան կերպով կատարվի Հոր,  
Որդու և Սուրբ Հոգու փառաբանումը: Որովհետև ուրիշ չէ  
Հոր փառքը և ուրիշ՝ Որդու, այն մեկն է և նույնը Սուրբ  
Հոգու հետ: Որովհետև Նա Հայր Աստծու Միածին Որդին  
է, և երբ փառաբանվում է Հայրը, փառաբանվում է նաև  
Որդին: Որդու փառքը բխում է Հոր պատվից: Եվ ապա,  
երբ փառաբանվում է Որդին, հավասարապես փառաբան-  
վում է նաև Հայրը Որդու, Ով մարդկանց շնորհել է  
փրկության մեծագույն բարիքը:

2. Միտքը արագ է մտածում, իսկ լեզուն շատ խոսքերի  
կարիքն ունի պատմելու համար այն, ինչ մտածում է միտ-  
քը: Աչքը մեկ նայվածքով ընդգրկում է աստեղագարդ  
երկնքի մի մեծ հատվածը: Բայց երբ մարդ կամենա պատ-  
մել առանձին, թե ինչ բան է Արուսյակը, ինչ բան է Երե-  
կոյան աստղը և ինչ՝ աստղերից յուրաքանչյուրը, շատ  
խոսքերի կարիքն ունի: Նմանապես միտքը միանգամից

ընդգրկում է երկիրը, ծովը և աշխարհի բոլոր ծագերը: Բայց մեկ ակնթարթում մտքի այդ ընդգրկումը պատմելու համար շատ խոսքեր են պետք: Նշածս օրինակը ևս մեծ է, բայց դարձյալ մնում է թույլ և անզոր: Քանզի Աստուծու վերաբերյալ չենք ասում այն ամենը, ինչ անհրաժեշտ է, քանզի այդ ամենը միայն իրեն է հայտնի, այլ ասում ենք այնքան, ինչքան կարող է գետեղել մեր մարդկային բնությունը, և կարող է պահել մեր անզորությունը: Մենք չենք բացատրում, թե ինչ է Աստված, այլ երախտագիտություն մեք խոստովանում ենք, թե չենք ճանաչում Նրա իսկական էությունը: Քանզի մեծ իմացություն է, երբ խոստովանում ենք մեր անիմացությունը Աստուծու գործերում: «Մեծարեցեք Տիրոջն ինձ հետ մեկտեղ: Բարձրացնենք Նրա անունը միասին» (Սաղմ., ԼԳ 4): Քանզի մեկն առանձին անկարող կլինի: Անգամ եթե բոլորս միասին հավաքվենք, չենք կարողանա անել այն, ինչ անհրաժեշտ է: Ես նկատի չունեմ սոսկ այստեղ ներկաներիս, այլ եթե անգամ տիեզերական Եկեղեցու բոլոր հոտերը միանան ամբողջ աշխարհում, ինչքան որ այժմ կան և հետագայում ևս կլինեն, չեն կարողանա օրհներգել հովվին ըստ արժանվույն և նրա անսահման վեհությունը համաձայն:

3. Մեծ էր Աբրահամը և մեծապատիվ, բայց մեծ էր մարդկանց համեմատությամբ: Իսկ երբ հասավ Աստուծու առաջ, երախտագիտությամբ հայտարարեց իրականությունը. «Ես հող եմ ու մոխիր» (Մննդ., ԺԼ 27): Չասաց՝ հող ու չլուեց, որպեսզի իրեն չանվանի այդ մեծ տարերքով, այլ ավելացրեց՝ «և մոխիր», հայտնելու համար իր նվաստությունը և թյուրալույծ լինելը: Մի՞թե կա մոխրից ավելի մանր և նուրբ բան: Վերցրու և համեմատիր մոխիրը տան հետ: Տունը՝ քաղաքի հետ, քաղաքը՝ նահանգի հետ և նահանգը՝ Հռոմեական կայսրության հետ, Հռոմեական կայսրությունը՝ ամբողջ երկրի հետ ծագեծագ և ամբողջ երկիրը՝

ընդ այն ընդգրկող ամբողջ երկնքի հետ: Իսկ երկիրը երկնքի հետ ունի այն համեմատությունը, ինչ կենտրոնը՝ անվի շրջանակի հետ: Քանզի այսպիսին է երկրի համեմատականը երկնքի հետ: Եվ իմացիր, որ այս առաջին երկինքն ավելի փոքր է երկրորդից և երկրորդը՝ երրորդից: Քանզի մինչև երրորդ երկինքն է հիշատակված Սուրբ Գրքում: Անշուշտ, ոչ այն պատճառով, որ իրականում այդքան է, այլ որովհետև մեզ անհրաժեշտ էր այսքանը միայն իմանալ: Եվ եթե դու մտովի բոլոր երկինքները միացնես իրար, դարձյալ չեն կարող երկինքները օրհներգել Աստուծուն ըստ պատշաճի, նույնիսկ եթե ավելի բարձր աղմկեն, քան որոտները: Եթե երկնքի ծալքերն այսքան անկարող են ըստ արժանվույն օրհներգել Աստուծուն, ապա ինչպե՞ս հողը և մոխիրը՝ էակներից ամենանվաստը և փոքրագույնը, կկարողանա արժանի օրհներգն ուղղել Աստուծուն կամ արժանավորապես խոսել Աստուծու մասին, Ով Տերն է համայն աշխարհի, իսկ նրանում ապրող մարդիկ նրա համար մորեկներին նման են:

4. Եթե մարդ փորձի խոսել Աստուծու գործերի մասին, նախ պարտավոր է խոսել աշխարհի ծայրից ծայր եղածի մասին: Բնակվում ես երկրի վրա և չգիտես քո տունը հանդիսացող երկրի ծայրը: Էլ ինչպե՞ս կկարողանաս ըստ արժանվույն հասկանալ դրա արարչին: Տեսնում ես աստղերին, բայց դրանք արարողին չես նկատում: Նախ թվարկիր երևացողներին և ապա բացատրիր անտեսանելի Աստուծու մասին, ով գիտի աստղերի թիվն ու բազմությունը և առանձին-առանձին նրանց բոլորի անունները: Վերջերս տեղատարափ անձրևի մի քանի կաթիլ քիչ էր մնացել, որ մեզ կործանի: Հաշվիր միայն այն կաթիլները, որ ընկան այս քաղաքի վրա, ավելի ճիշտ, ոչ թե քաղաքի, այլ, եթե կարող ես, հաշվիր այն կաթիլները, որ մեկ ժամվա ընթացքում ընկան քո կտուրի վրա: Ու քանի որ չես կարող այդ անել,

ընդունիր քո անգորուծությունը: Ուստի ճանաչիր Աստծու գորուծությունը: Քանզի Նա կարող է հաշվել անձրևի կաթիլները (Հոբ, ԼԶ 37), ինչքան որ տեղացել են ամբողջ երկրի վրա, ոչ միայն այժմ, այլև բոլոր ժամանակներում: Աստծու ստեղծածն է արևը և այն էլ՝ մեծ: Բայց եթե այն համեմատես ամբողջ երկնքի հետ, շատ է փոքր: Նախ նայիր արևին, ապա զբաղվիր մեր Տեր Աստծու գործերով, Նրա, Ով գերիշխում է համայն աշխարհում: «Քո ուժերից վեր բաներ մի՛ ձեռնարկիր, և այն, ինչ հզոր է քեզանից, մի քննիր: Մտքիդ մեջ պահիր այն, ինչ հրամայվեց քեզ» (Իմաստ. Սիրաք, Գ 22):

5. Կարող էր մեկը հարց տալ. «Քանի որ անըմբռնելի է Աստծու գոյությունը ձեռք, ապա ինչո՞ւ դու այդ մասին խոսում ես»: Ես պատասխանում եմ. Եթե ես անկարող եմ խմել ամբողջ գետը, մի՞թե ես չեմ խմելու ինձ անհրաժեշտ եղած չափով: Եթե աչքերս անկարող են ամբողջապես արևին նայել, մի՞թե ես ինձ անհրաժեշտ չափով չեմ օգտվելու արևի լույսից: Կամ, եթե ես մտել եմ մի մեծ պարտեզ և անկարող եմ ուտել այդու բոլոր պտուղները, մի՞թե ուզում եք, որ ես այնտեղից քաղցած դուրս ելնեմ: Գովում ու փառաբանում եմ մեզ Արարողին: Քանզի այդպիսին է Աստծու պատվերը. «Բոլոր հոգիներ, օրհնեցեք Տիրոջը» (Սաղմ., ճԾ 6): Այժմ իմ արածն այն է, որ փառաբանեմ Աստծուն, այլ ոչ թե մեկնաբանեմ Նրան: Քանզի գիտեմ, որ չեմ կարող Նրան փառաբանել ըստ արժանվույն: Իսկ այս գործը ձեռնարկելիս ես դրսևորում եմ միայն իմ բարեպաշտությունը: Տերն իմ անկարողություն համար մխիթարում է ինձ՝ ասելով. «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել» (Հովհ., Ա 18):

6. Մեկը կարող է ասել. Բայց ի՞նչ: Չէ՞ որ գրված է. «Երկնքում փոքրերի հրեշտակները մշտապես տեսնում են

երեսն իմ Հոր, որ երկնքում է» (Մատթ., ժԸ 10): Բայց հրեշտակները տեսնում են Աստծուն ոչ այնպես, ինչպես կա, այլ ինչքան որ իրենց բնությունը կարող է այն ընդունել: Հիսուս ինքն է մեզ ասել, թե «ոչ ոք Հորը չի տեսել, այլ միայն Նա, որ Աստծուց է, Նա է տեսել Հորը» (Հովհ., Զ 46): Ուրեմն, հրեշտակները տեսնում են ինչքան որ տեղավորում է իրենց բնությունը, իսկ հրեշտակապետերը՝ ինչքան կարողանում են: Գահերը և Տիրույթները ավելի են տեսնում, քան հրեշտակների դասը, բայց չունեն ամբողջական տեսություն: Միակը, որ Հայր Աստծուն տեսնում է պարզ և հստակ, Որդուն զուգահեռ, Սուրբ Հոգին է. «Որովհետև Հոգին քննում է ամեն ինչ, նույնիսկ Աստծու խորունկ ծրագրերը» (Ա Կորնթ., Բ 10): Ճիշտ այնպես նաև Միածին Որդին Սուրբ Հոգու հետ միաժամանակ բացարձակապես ճանաչում է Հայր Աստծուն: Ասված է, որ «ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթե ոչ՝ Հայրը, և ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ՝ Որդին, և նա, ում ուզենա Որդին հայտնել» (Մատթ., ժԱ 27): Քանզի տեսնում է Հայր Աստծուն ճիշտ այնպես, ինչպես կա և Նրան Սուրբ Հոգու միջոցով բացահայտում է մարդկանց՝ յուրաքանչյուրի ընկալունակություն համաձայն: Քանզի Միածին Որդին, Սուրբ Հոգու հետ միասին, հաղորդակից է հայրական աստվածայնություն: Նախքան հավիտենությունը ծնվածը ճանաչում է ծնողին. և ծնողը ճանաչում է ծնյալին: Եվ քանի որ հրեշտակները չեն ճանաչում, քանզի, ինչպես ասացինք, Միածին Որդին Սուրբ Հոգու միջոցով և Սուրբ Հոգու հետ Հայր Աստծուն բացահայտում է հրեշտակներին, յուրաքանչյուրի կարողություն համաձայն, ապա թող ոչ ոք չամաչի իր անգիտությունը խոստովանելուց: Ես և ոմանք ևս ժամանակ առ ժամանակ զրույցներ ենք անում, բայց չենք կարող բացատրել, թե ինչպես ենք խոսում: Ուրեմն, ինչպե՞ս կարող եմ այն պատմել ու բացատրել Նրան, Ով Շնորհ է պարգևում: Ես, որ հոգի ունեմ և չեմ կարողանում բա-



ցատրել հոգու հատկանիշները, ինչպե՞ս կկարողանամ խոսել ինձ հոգի պարզևած Աստծու մասին:

7. Մեր բարեպաշտության համար բավական է ճանաչել, որ ունենք Աստված, միակ Աստվածը, որ գոյություն ունի ի սկզբանե, հավիտենական, անեղծ և անայլայլ: Նա ուրիշ հայր չունի: Ոչ ոք Նրանից հորը չէ: Ոչ ոք Նրան չի կարող հաջորդել և չի կարող զրկել իր արքայությունից: Նա բազմանուն է և ամենազոր և իր էությունը մշտապես միակերպ: Թեև կոչվում է բարի և արդար և ամենակալ և Սաբաովթ, բայց Նա տարբեր չէ: Նա միակն է և նույնը և տարածում է իր աստվածությունը բոլորովոր ներգործությունները: Նա մի կեստում՝ մեծ, մյուս կեստում՝ փոքր չէ, այլ մշտապես և ամենուր, առանց որևէ փոփոխություն ենթարկվելու, մնում է անեղծ և անայլայլ: Նա ոչ միայն մարդասիրություն է մեծ, իսկ իմաստություն է՝ փոքր, այլ հավասարազոր է և՛ իմաստություն է և՛ մարդասիրություն: Նա ոչ թե մասամբ է տեսնում, մասամբ էլ՝ տեսողությունից զուրկ: Նա համակ աչք է, համակ լսողություն և համակ միտք: Ոչ թե մեզ նման՝ մասամբ հասկացող, մասամբ չիմացող: Քանզի այս խոսքը կլինեն հայհոյանք և անվայել Նրա աստվածային էության նկատմամբ: Էակների նախագիտակ և սուրբ և ամենակալ, ամենից ավելի արդար, բոլորից մեծ և բոլորից իմաստուն: Չենք կարող որոշել Նրա սկիզբը, ոչ էլ նկարագրել Նրա տեսքը և ձևը: Քանզի, ինչպես Գիրքն է ասում. «Դուք ո՛չ Նրա ձայնն եք երբևէ լսել և ո՛չ էլ Նրա երեսն եք տեսել» (Հովհ., Ե 37): Այդ պատճառով Մովսեսն էլ ասել է իսրայելացիներին. «Ձգույ՛ եղեք և մեծ ուշադրություն պահեք ձեր հոգիները, որովհետև դուք Նրա կերպարանքը չտեսաք» (Բ Օր., Դ 15): Եվ քանի որ չենք կարող երևակայել Աստծու որևէ նմանություն մեկ այլ անձի հետ, հնարավոր է արդյոք երբևէ մտքով մոտենալ Նրա էությանը:

8. Շատեր շատ բան են երևակայել, բայց բոլորն էլ ճախողվել են: Ոմանք կարծեցին, թե Աստված կրակ է: Ուրիշներ Նրան երևակայեցին որպես թևավոր մարդ, այն պատճառով, որ Սուրբ Գրքում թեև ճիշտ է գրված, բայց սխալ է հասկացված այն խոսքը, թե՛ «Քո թևերի հովանու տակ ծածկիր ինձ» (Սաղմ., ԺԶ 8): Նրանք մոռացել են այն, ինչ նման ձևով ասել է մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ Աստծու Միածին Որդին, անդրադառնալով իրեն և դիմելով Երուսաղեմին. «Քանի անգամ կամեցա հավաքել քո մանուկներին, ինչպես հավն է հավաքում իր ձագերին թևերի տակ, բայց չկամեցաք» (Մատթ., ԻԳ 77): Քանի որ նրանք չհասկացան, թե Նա իր պահպանիչ ուժը նմանեցրեց թևերի, ընկան մարդկային մտածողության ոլորտը և մարդկային չափանիշով բացատրեցին անիմանալի Աստծուն: Ուրիշներ համարձակվեցին ասել, թե Նա յոթ աչք ունի: Քանզի Սուրբ Գրքում գրված է. «Սրանք են այն յոթ աչքերը, որ նայում են ամբողջ երկրին» (Չաք., Դ 10): Բայց եթե Նա ունի միայն յոթ աչք, Նա սահմանափակ տարածություն է տեսնում և ամենատես չի կարող լինել, իսկ այդ զագրախոսություն է Աստծու հասցեին: Քանզի մենք պետք է հավատանք, թե ամեն տեսակետից կատարյալ է, ինչպես ասել է մեր Փրկիչը. «Ձեր երկնավոր Հայրը կատարյալ է» (Մատթ., Ե 48): Կատարյալ՝ իր տեսնելով, կատարյալ՝ իր կարողությամբ, կատարյալ՝ իր մեծագործությամբ, կատարյալ՝ իր մարդասիրությամբ: Նա սահմանափակված չէ մի տեղում, այլ ինքն է տեղերի արարիչը: Նա կա ամեն ինչում և չի սահմանափակվում ոչնչով: Երկինքն է Նրա գահը, բայց գահին նայողն ավելի բարձր է: Երկիրն է Նրա պատվանդանը, բայց Նրա գործությունը հասնում է մինչև երկրի ընդերքը:

9. Նա մեկ է, ամենուր ներկա, ամեն ինչ տեսնող, ամեն ինչ իմացող, ամեն ինչ Քրիստոսի միջոցով արարող: Քան-

զի «ամեն ինչ Նրանով եղավ, և առանց Նրան չեղավ ու չինչ, որ եղել է» (Հովհ., Ա 3): Նա ամեն բարիքի մեծ և չցամաքող աղբյուր է: Բարեգործությունների աղբյուր: Նա մշտապես հավերժական լույս է, անպարտելի գործություն մեր տկարություն ղեպքում, մեզ օգնական: Չենք ղիմանա անգամ Նրա անունը լսելուց: Այդ մասին է ասել Հոբբը. «Կբտնե՞ս Տիրոջ ճանապարհը, կամ վերահասու կլինե՞ս այն ղեպքերին, որ սահմանել է քեզ համար Ամենակալը» (Հոբ, ԺԱ 7): Եթե անհնար է ըմբռնել արարչագործության խորքերը, ապա կարելի է մի՞թե հասկանալ այդ ամենն արարողին: «Օ՛, խորություն Աստծու հարստություն, իմաստություն և գիտություն: Որքա՛ն անքննելի են Նրա դատաստանները, և անզննելի՝ Նրա ճանապարհները» (Հոռմ., ԺԱ 33), – ասել է առաքյալը: Եթե Նրա վճիռները և ճանապարհները անըմբռնելի են, ապա Ինքը կարո՞ղ է ըմբռնելի լինել:

10. Քանի որ այսքան և առավել Մեծ է ու Մեծափառ Աստված, (քանզի եթե անգամ իմ ամբողջ էությունը լեզու դարձնեի և իմ ամբողջ էությունը և իմ ամբողջ կյանքն ու գոյությունը նվիրեի Աստծու մասին խոսելու, անկարող կլինեի Նրա մասին ըստ արժանվույն խոսել: Եվ եթե անգամ բոլոր հրեշտակները այդ նպատակով գումարվեին, չէին կարող Նրա մասին ըստ արժանվույն պատմել): Մինչդեռ Աստված այսքան բարի է ու մեծ, մարդն, իր համար քարը կոփելով, ասաց քարին. «Դու իմ Աստվածն ես» (Եսայի, ԽԴ 17): Ո՛վ մեծագույն հիմարություն: Այդպիսի բարձրությունից ընկնել այդպիսի նվաստության: Այն ծառը, որ Աստված տնկեց, և անձրևը այն աճեցրեց, և հետո այրվեց ու դարձավ վառված ածուխ, հորջորջվում է Աստված, իսկ ճշմարիտ Աստվածը արհամարհվում է: Կռապաշտություն վրա ավելացավ նաև չարամտությունը, և Աստծու փոխարեն երկրպագեց կատուններին, գայլերին, չների:

Նաև մարդակեր առյուծը դարձավ երկրպագություն առարկա ամենամարդասեր Աստծու փոխարեն: Պաշտվեցին նաև օձն ու վիշապը, որոնք նման են նրան, ով մեզ Դրախտից դուրս հանեց, և հետո արհամարհվեց Նա, Ով տնկեց Դրախտը: Ամաչում եմ ասել, բայց պիտի ասեմ: Ոմանք պաշտեցին անգամ սոխը: Գինին տրվեց, որպեսզի ուրախացնի մարդու սիրտը, և Դիոնիսոսը պաշտվեց որպես աստված: Աստված ստեղծեց ցորենը՝ ասելով. Երկիրը խոտ ու մացառ հանի իր սերմի համաձայն, որպեսզի հացը ամրացնի մարդու սիրտը: Ուրեմն, ո՞րտեղից Դեմետրայի պաշտամունքը: Կրակը մինչև հիմա էլ ստացվում է՝ երկու քարեր իրար զարկելուց: Ուրեմն, որտեղի՞ց է Հեփեսոսը կրակի արարիչ:

11. Ո՞ր տեղից հելլենների բազմաստվածյան մոլորությունը: Աստված անմարմին է: Ուրեմն, ինչպե՞ս են նրանց կողմից աստված հորջորջվածները մեղադրվում սեռական անառակության մեջ: Լուում եմ Ջևսի՝ կարապի փոխարկվելու մասին: Ամաչում եմ հիշատակելու նրա փոխարկվելը ցուլի, քանզի աստծուն անվայել է բառաչելը: Հելլենների աստվածը անառակության մեջ բռնվեց, բայց չեն ամաչում: Եթե անառակ է, թող աստված չկոչեն: Պատմում են նաև իրենց աստվածների մահերի մասին, անկումների և կայծակնահարության մասին: Այդպիսի բարձունքից հետո տեսնո՞ւմ ես ինչպիսի անկում ունեցան: Ուրեմն, մի՞թե Աստվածորդին գուր իջավ երկնքից, կամ թե իջավ բուժելու այսքան ծանր մի վերք: Մի՞թե գուր իջավ Որդին և կամ իջավ, որպեսզի մարդիկ ճանաչեն Հայր Աստծուն: Ուրեմն, այժմ հասկացա՞ր, որ Աստծու Միածին Որդին, որ նստած էր Հոր գահի աջ կողմում, ինչո՞ւ իջավ երկիր: Հայր Աստվածը արհամարհվում էր մարդկանց կողմից: Որդին պետք է ուղղեր այդ մոլորությունը: Պետք էր, ուրեմն, որ Նա, Ում միջոցով ամեն ինչ կատարվեց, ամեն ինչ մատուցեր

բոլորին արարած Տիրոջը: Պետք էր, որ բուժեր վերքը: Ի՞նչն էր այդ հիվանդությունից ավելի վատ, քան թե Աստծու փոխարեն քարին երկրպագելը:

### Հերետիկոսությունների մասին

12. Այս ամենով սատանան միայն հեթանոսներին չէ, որ մոլորեցրեց: Այժմ ևս շատ սուտ քրիստոնյաներ, որոնք վատ կերպով կրում են Քրիստոսի քաղցրաբույր անունը, համարձակվեցին ամբարշտություն մատուցել իր արարածներից: Ես նկատի ունեմ հերետիկոսների վատահամբավ և անաստված հետևորդներին, որոնք ձևացնում են, թե իբր քրիստոնյաներ են, բայց իրականում ամբողջապես քրիստոսատյաց են: Քանզի նա, ով չարախոսում է Քրիստոսի Հորը, Որդու թշնամին է: Այս հերետիկոսները համարձակվեցին ընդունել երկու աստվածություն՝ մեկը՝ բարի, մյուսը՝ չար: Մեծ կուրուցություն: Եթե աստվածություն է, ուրեմն բարի է: Եթե բարի չէ, էլ ինչո՞ւ է աստվածություն կոչվում: Եթե աստծուն հատուկ է բարությունը, եթե նրան բնորոշ են մարդասիրությունը, ողորմածությունը, ամենագորությունը, ապա երկուսից մեկը՝ կամ թող կոչվի աստված և այդ անվան հետ ունենա նաև ներգործություն, կամ էլ, եթե ժխտում են նրա նման ներգործությունները, թող նրան աստված չկոչեն:

13. Հերետիկոսները համարձակվեցին ասելու, թե՛ կա երկու աստված, մեկը բարություն աղբյուր, մյուսը՝ չարիքի, և թե այդ երկուսն էլ անծին են: Եթե երկուսն էլ, իրոք, անծին են, ապա և անպայման հավասար են և հավասարազոր: Եվ խավարը ինչպե՞ս է վերացնում լույսը: Եվ ի՞նչ է կատարվում նրանց հետ: Նրանք միացա՞ծ են, թե՞ առանձին: Նրանք երբեք չեն կարող միասին լինել: Որովհետև, ինչպես ասել է առաքյալը, «Ի՞նչ հարաբերություն լույսի և

խավարի միջև» (Բ Կորնթ., Զ 14): Եթե նրանք իրարից հեռու են, նրանցից յուրաքանչյուրն անպայման ունի իր տեղը: Եթե նրանք իրենց առանձին տեղերն ունեն, մենք անհրաժեշտաբար պիտի գտնվենք նրանցից որևէ մեկի վայրում և միայն անհրաժեշտաբար պիտի պաշտենք երկու աստվածներից որևէ մեկին: Քանզի մեզ այդպես են հանձնարարում, եթե անգամ հետևենք նրանց անմտությունը, որ պետք է պաշտել մեկ աստծուն: Այժմ քննենք նաև, թե նրանք ի՞նչ են ասում բարի աստծու մասին: Նա հզո՞ր է, թե՞ անզոր: Եթե հզոր է, ապա ինչպե՞ս, հակառակ իր կամքի, ստեղծվեց չարը: Քանզի եթե այդ մասին գիտի և չի կարողանում խոչընդոտել, նա մեղադրվում է անզորություն մեջ: Իսկ եթե կարող է խոչընդոտել, բայց այդ չի անում, ապա կմեղադրվի դավաճանություն մեջ: Արդ, տես նրանց անմտությունը: Մեկ ասում են, թե չարը աշխարհաստեղծման հարցում ոչ մի ընդհանուր բան չունի բարի Աստծու հետ, մեկ էլ ասում են, թե նա միայն չորրորդ մասով է մասնակցել արարչությունը: Եվ ասում են, թե բարին Քրիստոսի Հայրն է, և Քրիստոս անվանում են արևին: Արդ, եթե ինչպես նրանք են ասում, աշխարհը արարվել է Չարի կողմից, և արևը գտնվում է այդ աշխարհում, ապա ինչպե՞ս է, որ Բարու որդին գործում է չարի տարածքում ակամա: Մենք կեղտոտվում ենք՝ այդ բառերն արտասանելով: Մենք ստիպված ենք այդ անելու, որպեսզի որևէ մեկը անգիտություն պատճառով չընկնի հերետիկոսների տիղմի մեջ: Հասկանում եմ, որ ապականեցի իմ բերանը և բոլոր ինձ լսողների ականջները: Դա արեցի ձեր օգտի համար: Շատ ավելի լավ է այլոց սահմանումների մեջ լսել անտեղի բառեր, քան անգիտության պատճառով ընկնել դրա մեջ: Բազմապիսին է հերետիկոսությունների խոսքը անաստվածություն մասին: Քանզի երբ մարդ դուրս ընկնի ուղիղ ճանապարհից, այնժամ շատ հաճախ անդունդ է ընկնում:

14. Բոլոր հերետիկոսությունների հնարողը Սիմոն մոզն է: Այս Սիմոնը, ինչպես Գործք առաքելոցի մեջ է պատմվում, կարծես, թե կարող է արծաթով գնել Սուրբ Հոգու անգնահատելի Շնորհքը: Պետրոսը նրան է ասել. «Ի՞նչ Սուրբ Հոգու պարգևների մեջ մաս ու բաժին չունես» և այլն (Հմմտ. Գործք, Ը 21): Նրա մասին է Ավետարանում գրված. «Մեր միջից ելան նրանք, բայց մեզնից չէին: Եթե մեզնից լինեին, մեր մեջ էլ կմնային» (Ա Հովհ., Բ 19): Երբ առաքյալները նրան եկեղեցուց դուրս արեցին, նա Հեղինե անունով մի պոռնիկ կնոջ հետ գնաց Հռոմ և հայհոյական բերանով առաջինը համարձակվեց ասել, թե ինքն է եղել Սինա լեռան՝ որպես Հայր Աստված հայտնվածը: Եվ ապա, հետագայում ինքն է հրեաներին հայտնվել ոչ թե մարմնով, այլ երևակայական, որպես Հիսուս Քրիստոս: Եվ հետո, իբր հայտնվել է որպես Սուրբ Հոգի, որին Քրիստոս խոստացել էր ուղարկել մարդկանց մոտ որպես մխիթարիչ: Նա այնպես մոլորեցրեց հռոմեացիներին, որ Կլավդիոսը նրա անդրին կանգնեցրեց, որի պատվանդանին հռոմեացիների լեզվով փորագրեց. «Սիմոնի դեռ Սանկտո», որը թարգմանաբար նշանակում է՝ «Սիմոնին, սուրբ աստծուն»:

15. Քանի որ մոլորությունը շարունակվում էր, մեղանշումը ուղղվում էր գուլգ առաքյալներին՝ Պետրոսի և Պողոսի ձեռքով, որոնք բոլորի կողմից համարվում են Եկեղեցու պահապաններ: Եվ քողազերծելով նրան, ում բոլորը համարում էին աստված, նույն պահին նրան ցույց տվեցին մեռյալ: Որովհետև Սիմոնը հայտարարել էր, թե երկինք է բարձրանալու: Ուրեմն, երբ օդ բարձրացավ սատանայական կառքի վրա, Քրիստոսի ծառաները ծնրադրեցին, այս կերպ ցույց տալով իրենց համերաշխությունը, ինչի համար Քրիստոս ասել էր, որ «եթե ձեզնից երկուսը միաբանվեն երկրի վրա որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կկատարվի նրանց համար Իմ Հոր կողմից, որ երկնքում է»

(Մատթ., ԺԸ 19): Այսպես, մոգի դեմ ազդեցիկ արձակելով իրենց համերաշխությունը սլաքը՝ նրան գետին նետեցին: Զարմանալի ոչինչ չկա, թեև կատարվածը զարմանահրաշ էր: Քանզի կատարողներից մեկը Պետրոսն էր, ով պահում էր երկնքի բանալիները, մյուսը՝ Պողոսը, որ տարվել էր մինչև երրորդ երկինք (Բ Կորնթ., ԺԲ 2-4): Ահա նրանք օդից գետին նետեցին աստված կարծվածին, ով պիտի գահավիժեր դժոխքի տարտարոսը: Սիմոնը հերետիկոսության չարիքի առաջին վիշապն էր: Բայց մեկ գլուխը կտրվելուց հետո հերետիկոսության չարիքը նորից հայտնվեց բազմազուլս:

16. Կերինթոսը մեծապես վնասեց Եկեղեցուն. նույնը և Մենանդրոսը և Կարպոկրատեսը, Եբիոնականները և Մարկիոնը՝ այդ անաստվածության բերանը: Առաջինը նա հայտարարեց, թե արդար Աստվածն ուրիշ է, բարի Աստվածն՝ ուրիշ: Նա քարոզում էր Աստվածորդու ուսմունքին հակասող բաներ: Քրիստոս ասել էր՝ «Արդար Հայր» (Հովհ., ԺԷ 25): Մարկիոնը անգամ պնդում էր, թե ուրիշն է հայրը, ուրիշն է աշխարհն ստեղծողը: Նա հակասում էր Աստվածորդուն, ով ասել է. «Խոտը, որ այսօր բաց դաշտում է, իսկ վաղը հնոց է նետվելու, Աստված այդպես է հագցնում և զարդարում» (Ղուկ., ԺԲ 18), և «Նա իր արևը ծագեցնում է չարերի և բարիների վրա, և անձրև է թափում արդարների և մեղավորների վրա» (Մատթ., Ե 45): Բայց Մարկիոնը գյուտարարն էր նաև երկրորդ չարիքի: Քանի որ Նոր Կտակարանում Հին Կտակարանից արված մեջբերումները հերքում էին Մարկիոնին, առաջինը նա համարձակվեց կտրել հանել Նոր Կտակարանից բոլոր այդ հատվածները և Ավետարանում քարոզվող հավատի մասին խոսքը թողնել առանց Քրիստոսի աստվածությունից մասին վկայությունների՝ այդպես մերժելով Աստծուն: Կարծես թե, չկային Աստ-

ծու խոսքի քարոզիչներ, ինքն ուզեց Եկեղեցու հավատը դարձնել հիմնադուրկ և խախուտ:

17. Սրան դարձյալ հաջորդեց մեկ ուրիշը, չարանուն Բասիլեյիդիսը. մի դաժանաբարո, անառակ պատմություններ տարածող մարդ: Սրան չարություն մոլորություններ գերազանցեց Վաղենտինոսը՝ ասելով, թե կան երեսուն աստվածներ: Կարծես թե, հելլենների աստվածները քիչ էին: Նա, որ միայն անունով, բայց էությունը քրիստոնյա էր, կռապաշտության մոլորությունը տարածեց երեսուն աստվածությունների վրա: Նա ասաց, որ Վիճը (քանզի ինքը, գտնվելով չարիքի վիճում, պետք է իր վարդապետությունն սկսեր վիճից) ծնեց Լուսնայնը և Լուսնայնից որդեծնեց Բանին: Այս Բասիլեյիդեսը ավելի ստոր էր, քան հելլենների Զևսը, որը սեռական կապեր ունեցավ իր քրոջ հետ. քանզի նա ասում էր, որ Լուսնայնը Վիճի դուստրն էր: Նկատում ես մոլորությունը քրիստոնեական զգեստով: Սպասիր մի քիչ և դու կատես ամբարշտությունը: Նա ասում էր, թե Բանից ծնվեցին ութ դարեր և նրանցից՝ տասը: Եվ նրանից՝ ևս տասներկու այրեր և կանայք: Եվ ինչո՞վ է հաստատում իր մոլորությունը: Լսիր և կիմանաս նրա դատարկաբանությունը: Որտեղի՞ց գտավ երեսուն դարերի փաստարկը: Քանի որ, ասում է, զրված է, թե Հիսուս մկրտվեց երբ երեսուն տարեկան էր: Ի՞նչ ապացույց է այդ երեսունը, եթե անգամ Քրիստոս մկրտվեց՝ լինելով երեսուն տարեկան: Ապա, եթե հինգ հաց բաժանեց հինգ հազարի, նշանակո՞ւմ է, արդյոք, որ կան հինգ աստվածներ: Եվ կամ, եթե ուներ տասներկու աշակերտ, պիտի անպայման աստվածները տասներկու լինեին:

18. Եվ սա դեռ փոքր բան է համեմատած նրա մյուս ամբարիշտ մտքերի հետ: Քանզի Բասիլեյիդեսը համարձակվում է ասել, թե աստվածներից վերջինը Հերմափրոդիտե

էր, անունը՝ Իմաստություն: Օ՛, ի՞նչ անաստվածություն: Քանզի Քրիստոսն է Աստուծու Իմաստությունը, Միածին Որդին: Եվ Բասիլեյիդեսը իր խոսքերով նսեմացրեց Աստուծու Իմաստությունը, Նրան դարձրեց իգական և վերջին՝ երեսուներորդ ստեղծվածը: Նա ասաց նաև, որ Իմաստությունը փորձեց տեսնել առաջին աստուծուն, բայց քանի որ չդիմացավ նրա փայլին, երկնքից ընկավ և դուրս մնաց երեսունի թվից: Ապա հառաչելով՝ իր հառաչանքներից ծնեց սատանային: Եվ թե իր անկման պատճառով թափած արցունքներից առաջացավ ծովը: Տեսնո՞ւմ ես ամբարշտությունը: Ինչպե՞ս Իմաստությունից կծնվի սատանան, ողջամտությունից՝ չարիքը կամ թե լուսից՝ խավարը: Եվ ասում է, թե սատանան ծնեց ուրիշների, որոնք էլ արարեցին աշխարհը: Եվ որ Քրիստոս իջավ, որպեսզի պոկի մարդկանց աշխարհն արարողից:

19. Որպեսզի նրանց առավել ատես, լսիր՝ ի՞նչ են ասում, թե ո՞վ է Քրիստոսը: Նրանք սովորեցնում են, թե Իմաստության անկումից հետո, որպեսզի երեսունի թիվը չպակասի, մնացած քսանինը դարերը, յուրաքանչյուրն իրենից ինչ-որ բան դնելով, սարքեցին Քրիստոսին: Նրա մասին ևս ասում են, թե եղել է հերմափրոդիտե: Կա՞ արդյոք առավել ամբարիշտ, առավել թշվառ բան, քան այս: Ես քեզ պատմում եմ նրանց մոլորությունը, որպեսզի նրանց առավել ատես: Հեռու մնա ամբարշտությունից: Նրանց անգամ մի՛ բարեկիր, որպեսզի հաղորդակից չլինես խավարի անպտուղ գործերին և ցանկություն չունենաս նրանց հետ շփվելու կամ խոսքով վիճաբանելու:

20. Ատիր բոլոր հերետիկոսներին, մանավանդ Մանես (Կատաղի) անունը կրողին, որն առաջին անգամ հայտնվեց Պրոբոս արքայի ժամանակ: Այդ մոլորությունն սկսվեց յոթանասուն տարի առաջ, և տակավին կան մարդիկ, որոնք

նրան տեսել են իրենց աչքերով: Ատիր նրան ոչ միայն այն պատճառով, որ նա հայտնվել է քիչ տարիներ առաջ: Դու այդ չարագործին ատիր նրա ամբարիշտ ուսմունքի համար: Նա ամենայն կեղտի անոթ է, որն իր մեջ ընդունել է բոլոր հերետիկոսությունների ցեխը: Քանզի նա փառասիրություն ունեցավ չարությունը գերազանցել բոլոր հերետիկոսներին: Նա, բոլոր մոլորություններից և հերետիկոսություններից վերցնելով մի բան, կազմեց հայհոյանքներով և ամեն տեսակ անօրենություններով լցված իր հերետիկոսությունը, որով հալածում և փչացնում է Եկեղեցին, ավելի ճիշտ, Եկեղեցուց դուրս եղածներին՝ առյուծի պես շրջելով և հոշոտելով: Կարևորություն մի տուր նրանց գեղեցիկ խոսքերին, ոչ էլ նրանց կեղծ համեստությունը: Նրանք օձեր են և իժի ծնունդ: Հուզան ևս ասում էր՝ «Ողջույն, Վարդապետ» (Մատթ., ԻԶ 49), բայց մատնում էր նրան:

21. Որպեսզի չասեն, թե մենք իզուր ենք նրան մեղադրում, մի շեղում կատարենք և պատմենք, թե ո՞վ էր այս Մանեսը և, մասամբ, թե ի՞նչ էր քարոզում: Քանզի նրա ամբողջ կեղտի մասին պատմելու համար չի բավականացնի անգամ ամբողջ մեկ դար: Ամեն մեկը հիշեք այն ամենը, ինչ մինչև հիմա ասել եմ մյուսների մասին և դեռ այն, ինչ կասեմ հիմա սրա մասին, որպեսզի անհրաժեշտություն դեպքում օգտագործեք դրանք, և որպեսզի այն չիմացողներն իմանան, և իմացողները վերհիշեն: Մանեսը երբեք քրիստոնյա չի եղել: Քավ լիցի: Ոչ էլ եկեղեցուց վտարվել է, ինչպես Սիմոնը, ո՛չ ինքը, ո՛չ էլ նրանից առաջ քարոզել են այդ նույն մոլորությունները: Քանզի նա գողացել է այլոց մոլորությունները և չարությունները և սեփականել է այլոց կեղտոտ գործերը: Այժմ լսեք, թե նա ինչ պայմաններում է այդ կատարել:

22. Կար ոմն Սկյուլթիանոս, ծագումով՝ սարակինոս, որը ոչ մի կապ չուներ ո՛չ հրեականության, ո՛չ էլ քրիստոնեության հետ: Հաստատվելով Ալեքսանդրիայում՝ հետևեց Արիստոտելյան կենցաղավարությանը և գրեց չորս գիրք: Մեկը կոչեց «Ավետարան», որը չէր պատմում Քրիստոսի կյանքն ու գործը, այլ միայն անունն էր այդպես: Երկրորդ գիրքը անվանեց «Գլուխների», երրորդը՝ «Խորհուրդները» և չորրորդը, որն այժմ չըջանալով է, կոչեց «Գանձ»: Նրա աշակերտն էր ոմն Տերեբինթոս: Վերոհիշյալ Սկյուլթիանոսին, երբ նա եկավ Հրեաստան՝ այդ երկիրը իր հերետիկոսական վարդապետությունը փչացնելու համար, Տերը հիվանդությունը մահացրեց, և այդ հիվանդագին իրավիճակը վերացավ:

23. Իսկ չարի աշակերտ Տերեբինթոսը, որ դարձավ ոսկիների, գրքերի և հերետիկոսության ժառանգորդը, եկավ Պաղեստին և, անցնելով Հրեաստան, հայտնի դարձավ և արհամարհվեց և որոշեց անցնել Պերսիա: Եվ որպեսզի իր անվան պատճառով չճանաչվի, իրեն վերանվանեց Բուդա: Բայց նա այնտեղ հակառակորդներ ունեցավ՝ Միհրի հետևորդներին: Շատ ընդհարումներից հետո նա ապաստան գտավ մի այրի կնոջ մոտ: Այստեղ, բարձրանալով կտուրը, դիմեց օդային դեներին, որոնց առ այսօր իրենց հերետիկոսական ծեսերը կատարելիս չորացրած թզերով դիմում են մանիքեականները: Այստեղ նրան հարվածեց կայծակը, և նա, կտուրից ցած ընկնելով, հոգին փչեց: Այսպես կորստի մատնվեց երկրորդ գազանը ևս:

24. Բայց մնացին ամբարշտությունը հիշեցնող գրքերը: Թե՛ գրքերի և թե՛ փողերի ժառանգորդը այրի կինն էր: Եվ քանի որ նա ոչ մի ազգական և ոչ մի յուրային չուներ, որոշեց այդ փողերով գնել Կուբրիկոս անունով մի ծառայի: Նրան որդեգրելով՝ որպես իր որդին կրթեց պարսկական



դաստիարակությամբ և մարդկության դեմ սրեց մի չար սլաք: Այսպես, Կուբրիկոսը՝ այդ չար ծառան, հասակ առավ իմաստասերների միջավայրում: Երբ այրի կինը մահացավ, Կուբրիկոսը ժառանգեց փողերը և գրքերը: Ապա, որպեսզի Կուբրիկոս անվան պատճառով չկրի ծառայի ամոթալի անարգանքը, նա փոխեց Կուբրիկոս անունը՝ իրեն վերանվանելով Մանես, որը պարսից լեզվով նշանակում է «ճարտարախոս»: Քանզի իրեն համարում էր իմաստասերների հավասար: Կոչվեց Մանես, կարծես թե գերազանց ճարտասաց էր: Նա պարսից լեզվով փորձեց փառքի արժանանալ՝ իրեն անվանելով «Մանես»: Բայց Աստուծո կարգադրությունն այնպես էր, որ Մանեսը, առանց իր կամքի, դառնար ինքն իրեն դատապարտողը: Մինչ պարսից լեզվով ինքը Պարսկաստանում իրեն համարում էր հարգված, Հունաստանում, համաձայն Հունարենի, հասկացվում էր մոլագար (մանյակ):

25. Նա համարձակվեց անգամ իրեն Մխիթարիչ անվանել: Բայց Գրքում ասված է. «Ով որ հայհոյի Սուրբ Հոգուն, հավիտյանս թողությունն չի ունենա» (Մարկ., Գ 29): Ուրեմն, նա հայհոյեց՝ իրեն անվանելով Սուրբ Հոգի: Նրանց հետ հաղորդակցվողը թող մտածի, թե ում հետ է համադասվում: Ծառան ցնցեց տիեզերքը, որովհետև «երեք բան կա, որոնցից դողում է երկիրը, և մի չորրորդը ևս կա, որից չի կարողանում հանդարտվել. ծառան եթե թագավոր է դառնում» (Առակ., Լ 21): Հրապարակ իջնելով՝ նա գերմարդկային գործեր խոստացավ անել: Այդ ժամանակ հիվանդացավ Պարսից թագավորի որդին, և նրա մոտ հավաքվել էին ամեն տեսակ բժիշկներ: Բայց Մանեսը խոստացավ աղոթքով բուժել նրան, ասես, բարեպաշտ լինել: Այսպիսով, բժիշկները հեռացան հիվանդից. նրանց հետ հեռացավ նաև երեխայի կյանքը: Բացահայտվեց Մանեսի ամբարշտությունը: Իրեն իմաստասեր ձևացնողը բան-

տարկվեց: Եվ բանտարկվեց ոչ թե թագավորին նախատած լինելու համար, ոչ էլ կուռքերը վերացրած լինելու համար, այլ՝ որովհետև խոստացավ փրկել տղային, բայց ստեց: Եթե ճիշտն ասենք, սպանության համար: Քանզի նա, բժիշկներին հեռացնելով, փաստորեն սպանեց նրան, ով կարող էր բժիշկների խնամքով փրկվել:

26. Քանի որ նրա մասին ես քեզ շատ ու շատ չարիքներ պատմեցի, դու նախ՝ պետք է մտքում պահես հայհոյանքը. երկրորդ՝ ծառա լինելը. ոչ այն պատճառով, որ ծառայությունը ամոթ բան է. այլ որովհետև վատ է, երբ ծառան իրեն ներկայացնում է որպես ազատ: Երրորդ չարիքը՝ սուտ խոստումը: Չորրորդ՝ տղայի սպանությունը: Հինգերորդ՝ բանտի ամոթը: Եվ ոչ միայն բանտի ամոթը, այլև բանտից փախուստը: Քանզի նա, ով իրեն անվանում էր Մխիթարիչ և ճամարտության մարտիկ, փախուստի դիմեց: Նա ծառանգորդը չէր Քրիստոսի, ով հոժարակամ իր խաչը բարձրացավ: Փախստական էր և Հիսուսին թշնամի: Ապա թագավորը հրամայեց գլխատել բանտապահներին: Մանեսն էր, իր պարծենկոտությամբ, երեխայի մահվան և փախուստի պատճառով բանտապահների մահվան պատճառը: Ուրեմն, նա, ով եղել է մահվան պատճառ, մի՞թե պետք է պաշտվի իբրև աստված: Մի՞թե նա չպետք է հետևեր Քրիստոսի օրինակին և ասեր. «Եթե ինձ եք փնտրում, նրանց թույլ տվեք գնալու» (Հովհ., ԺԸ 8): Մի՞թե չպետք է Հովնանի նման ասեր. «Ինձ ծովը գցեք, և ծովը կխաղաղվի, որովհետև ես գիտեմ, որ իմ պատճառով է այս փոթորիկը ձեզ վրա հասել» (Հովնան, Ա 12):

27. Փախչում է բանտից և գալիս է Միջագետք: Այստեղ նրան հանդիպում է արդարության գեները՝ Արքեղայոս եպիսկոպոսը: Այնժամ Արքեղայոսը լսարան հավաքեց կուսպաշտ փիլիսոփաներից և հրավիրեց Մանեսին բացատրվե-

լու, որպեսզի, եթե դատավորները քրիստոնյա լինեին, կարող էին ասել, թե նրանք սիրաշահում են արքեպիսկոպոսին: Արքեպիսկոպոսը դիմեց Մանեսին. «Ասա, ի՞նչ ես դու քարոզում»: Իսկ նա, բացելով բացված գերեզմանի նմանող իր բերանը, նախ սկսեց հայհոյել բոլորի Արարչին և ասել, թե Հին Կտակարանի Աստվածը չարի ստեղծողն է, քանզի իր մասին ասում է. «Ես՝ Աստվածս, լափող կրակ եմ»: Իսկ իմաստուն Արքեպիսկոպոսը ժխտեց նրա հայոհյանքը՝ ասելով. «Եթե քո ասածի համաձայն, Հին Կտակարանի Աստվածը իրեն անվանում է կրակ, ապա ո՞ւմ որդին է նա, ով ասում է. «Երկրի վրա կրակ գցելու եկա» (Ղուկ., ԺԲ 49): Եթե մեղադրում ես «Տերն է սպանում և ապրեցնում» (Ա Թագ., Բ 6) ասողին, ապա ինչո՞ւ մեծարում ես Պետրոսին, որ հարույթում տվեց Տաբեթային և մահացրեց Սափիրային: Եվ եթե նրան մեղադրում ես, թե կրակ պատրաստեց, ապա ինչո՞ւ չես մեղադրում «Գնացեք ինձնից դեպի հավիտենական կրակը» (Մատթ., ԻԵ 41) ասողին: Եթե մեղադրում ես նրան, ով ասել է. «Ես եմ Աստվածը, որ խաղաղություն եմ անում և հաստատում չարը» (Եսայի, ԽԵ 7), ապա բացատրիր. ինչո՞ւ Հիսուս ասում է. «Չեկա հաստատելու խաղաղություն, այլ՝ սուր» (Մատթ., Ժ 24): Քանի որ երկուսն էլ նույնն են ասում, ապա՝ կամ երկուսն էլ լավ են ասում, կամ էլ, եթե Հիսուս ճիշտ է ասում, ապա ինչո՞ւ մեղադրում ես Նրան, ով Հին Կտակարանում ասում է նույն բանը:

28. Ապա Մանեսը ասում է նրան. «Եվ ո՞ր աստվածն է կուրացնում: Քանզի Պողոսն ասում է. «Անհավատների մտքերը այս աշխարհի աստվածը կուրացրեց, որպեսզի նրանց չծագի Քրիստոսի Ավետարանի լույսը» (Բ Կորնթ., Դ 4): Արքեպիսկոպոսը նրան դիպուկ հակաճառեց և ասաց. Այդ հատվածին նախորդող մասը կարդա. «Եվ եթե մեր Ավետարանը ծածկված իսկ է, ծածկված է կորստյան մատնվածների համար» (Բ Կորնթ., Դ 3): Տեսնո՞ւմ ես, ծածկված

է կորստյան մատնվածների համար: «Մի՛ տվեք սրբույթունը շներին» (Մատթ., է 6): Ուրեմն, միայն Հին Կտակարանի Աստված է կուրացրել անհավատների մտքերը: Ինքը Հիսուս չի՞ ասել՝ «Նրանց հետ առականորով եմ խոսում, որ նայում են ու չեն տեսնում» (Մատթ., ԺԳ 13): Գուցե ատելով նրանց, չէ՞ր ուզում, որ նրանք տեսնեին: Կամ գուցե անարժան էին, քանի որ փակել էին իրենց հոգու աչքերը: Այնտեղ, ուր կա կամավոր չարություն, կա նաև աստվածային Շնորհքից հրաժարում: Քանզի «Ով ունի, նրան պիտի տրվի, և ունեցածը պիտի ավելացվի, իսկ ով չունի, նրանից ունեցածն էլ պիտի վերցվի» (Մատթ., ԻԵ 29):

29. Ասվածը զուր չէ: Եթե Աստված կուրացրեց անհավատների մտքերը, այդ արեց նրանց բարու համար, որպեսզի նայեն դեպի բարին: Քանզի ասված չէ «կուրացրեց նրանց հոգին», այլ՝ «անհավատների մտքերը»: Դա նշանակում է, որ կուրացրեց պոռնիկի պոռնիկական միտքը, և դրանով փրկեց մարդուն: Եթե խոսքն այսպես չես ուզում հասկանալ, կա նաև ուրիշ բացատրություն: Արևը ևս կուրացնում է լավ չտեսնողներին: Նրան նայելուց կուրանում են նաև նրանք, ովքեր տառապում են ակնային հիվանդությամբ: Եվ դա կատարվում է ոչ այն պատճառով, որ արևը կուրացնելու հատկություն ունի, այլ, որովհետև աչքերի վիճակն այնպիսին է, որ չեն կարող ընդունել արևի լույսը: Այդպես նաև անհավատները, որոնք հիվանդ են հոգով, չեն կարող նայել աստվածային ճառագայթներին: Չի ասել՝ կուրացրեց մտքերը, որպեսզի չլսեն Ավետարանը, այլ «որպեսզի նրանց մեջ չծագի մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանի փառքի լույսը»: Քանզի Ավետարան լսելը բոլորի իրավունքն է, բայց Ավետարանի փառքի հայտնությունը շնորհվում է միայն Քրիստոսի իսկական աշակերտներին: Լսելու հնարավորություն չունեցողներին Քրիստոս խոսում էր առականորով: Բայց աշակերտներին ա-

ուանձնապես մեկնաբանում էր առակները: Քանզի այն, ինչ փառքի ճառագայթում է լուսավորվածների համար, կուրացում է անհավատների համար: Այս խորհուրդները, որ այժմ Եկեղեցին վատահում է քեզ՝ ուսուցվողների դասից հավատացյալների դաս փոխադրվողիդ, ընդունված չէ վատահել հեթանոսներին: Նրանց չենք պատմում Հոր, Որդու և Սուրբ Հոգու Խորհուրդի մասին: Ոչ էլ ուսուցվողներին բացահայտ խոսում ենք այդ մասին, այլ շատ անգամ քողարկված խոսում ենք այդ մասին, որպեսզի այդ իմացող հավատացյալները հասկանան մեր ասածը, իսկ չիմացողները չտուժեն:

30. Այսպիսի շատ ուրիշ փաստերով տապալվում էր վիշապը: Այսպես գուպարելով՝ Արքեղայոսը մարտնչեց Մանեսի դեմ: Բանտից փախածը այստեղից էլ փախավ: Խուսափելով իր հակառակորդից՝ նա գալիս է մի փոքր և աննշան գյուղ, ինչպես դրախտում արեց օձը, որ փախավ Ադամից ու եկավ Եվայի մոտ: Բայց Արքեղայոս բարի հովիվը, միշտ արթուն լինելով իր հոտի համար, լսելով Մանեսի փախուստը, իսկույն վազեց նրա ետևից՝ գայլին փնտրելու: Իսկ Մանեսը, հանկարծակի տեսնելով հակառակորդին, փախավ ու հեռացավ: Եվ դա նրա վերջին փախչելն էր: Քանզի թագավորի զինակիրները, որոնք ամբողջ երկրում փնտրում էին նրան, փախստականին բռնեցին: Դատապարտման այն վճիռը, որ նա պետք է ստանար Արքեղայոսից, ստացավ թագավորի զինակիրներից: Մանեսը, ում երկրպագում էին նրա աշակերտները, տարվեց թագավորի մոտ: Թագավորը խայտառակեց նրան ստելու և փախչելու պատճառով, ծանակեց նրա ծառա լինելը և մեղադրեց իր որդու մահվան համար: Նրան դատապարտեց նաև թիկնապահների սպանության համար: Թագավորը հրամայեց Մանեսին մորթագերծ անել պարսից օրենքի համաձայն: Նրա մարմնի մնացած մասերը տվեց գազաններին որպես կեր:

Իսկ կաշին՝ ստորնագույն մտքի այդ անոթը, պարկի նման կախեցին դարպասների առաջ: Նա, ով իրեն անվանում էր Մխիթարիչ և հայտարարում, թե իմանում է գալիքը, չիմացավ սեփական փախուստը և ձերբակալումը:

31. Նա ուներ երեք աշակերտ՝ Թովմաս, Բաղդա և Հերմաս: Ոչ ոք թող չկարդա ավետարանն՝ ըստ Թովմասի: Քանզի այն չի գրել Թովմաս առաքյալը, որ տասներկուսից մեկն էր, այլ՝ Մանեսի երեք վատ աշակերտներից մեկը: Ոչ ոք ոչինչ չմատուցի հոգեկործան մանիքեականներին, որոնք ձևանում են նիհար և դալուկ ծոմապահներ՝ իրենց դեմքը լվանալով հարդաջրով: Նրանք չարախոսում են ուտելիք ստեղծողին, բայց ագահուլթյամբ ուտում են ամենաընտիր ուտելիքները: Նրանք ասում են, թե որևէ բույս պոկողը ինքը կվերածվի այդպիսի բույսի: Եթե ամեն անգամ խոտ կամ բանջար քաղողը ինքը վերածվում է այդ նույն բանջարի, ապա հողագործների և այգեպանների երեխաները քանի՞ տեսակ բույսերի կվերածվեն: Տեսնում ենք, որ հողագործն իր մանգաղով ինչքան խոտեր է հնձում: Արդյոք նա ինչպիսի՞ խոտի է վերածվում: Իրոք, ծիծաղելի է նրանց ուսմունքը, դատապարտելի է և ամոթալի: Միևնույն մարդը, որ հովիվ է, և՛ ոչխար է մորթել, և՛ գայլ սպանել: Ուրեմն, նա ինչի՞ պիտի վերածվի: Շատ մարդիկ ցանցերով ձուկ են բռնել կամ թռչուն որսացել: Այդ որսորդները արդյոք ինչի՞ պիտի վերածվեն:

32. Այդ մանիքեականները ծուլության ծնունդ են: Նրանք չեն աշխատում և խժուում են աշխատողների ինչքը: Նրանք ժպիտներով ընդունում են իրենց մատուցվող ուտելիքները բերողներին և, նրանց օրհնելու փոխարեն, անիծում են: Քանզի երբ որևէ անմիտ ինչ-որ բան է մատուցում, նրանք ասում են. «Այստեղ դրսում սպասիր մի քիչ, և ես քեզ կօրհնեմ»: Ապա, ինչպես ինձ խոստովանեցին զղջացածներից ոմանք, մանիքեականը, հացը վերցնելով իր

ձեռքը, հացին ասում է. «Ես չեմ պատրաստել քեզ», և Բարձրյալին ու հացը պատրաստողին անիծելուց հետո ուտում է պատրաստված հացը: Եթե ատում ես ուտելիքը, ապա ինչո՞ւ ժպտացող դեմքով դիմավորում ես այն բերողին: Եթե շնորհապարտ ես հացը բերողին, ապա ինչո՞ւ հայհոյում ես այն արարող Աստուծոն: Եվ հետո մանիքեականը ասում է հացին. «Ես քեզ չեմ ցանել: Թող թաղվի քեզ ցանողը: Ես քեզ մանգաղով չեմ հնձել, թող հնձվի քեզ հնձողը: Ես քեզ կրակով չեմ եփել: Թող եփվի նա, ով քեզ եփել է»: Այսպես են վարձատրում շնորհ բերողներին:

33. Սրանք մեծ չարիք են, բայց ուրիշ չարիքներից առավել փոքր: Չեմ համարձակվում պատմել նրանց այրերի և կանանց ստացած բաղնիքը: Չեմ համարձակվում ասել, թե ինչի՞ մեջ են թաթախում թզի չիրը և այն տալիս թշվառներին: Ես միայն խորհրդանիշերով կարող եմ ձեզ պատմել: Այրերը թող պատկերացնեն իրենց երազախաբուլթյունը, իսկ կանայք իրենց ամսական դաշտանը: Այդ մասին խոսելով՝ մենք իրականում ապականում ենք մեր բերանը: Մի՞թե հելլենները՝ առավել զգվելի կամ սամարացիները՝ առավել անաստված են նրանցից, կամ հուդայականները՝ ավելի ամբարիշտ և պոռնկացողները՝ առավել անմաքուր: Քանզի պոռնկացողը մեկ ժամում կատարում է իր ցանկուլթյունը և, իմանալով իր արարքի անմաքրուլթյունը, գիտի, որ մաքրվելու համար իրեն անհրաժեշտ է բաղնիքում լվացվել: Իսկ մանիքեականը իր գոհարան կարծվածի մեջտեղում դնում է այդ տարրերը և ապականում իր բերանն ու լեզուն: Եվ այսպիսի բերանից, ո՞վ մարդ, վարդապետուլթյո՞ւն ես ընդունում: Նրան հանդիպելիս համբուրվո՞ւմ ես: Բացի նրանց այլ ամբարշտուլթյուններից, այս ամենի պատճառով դու չե՞ս խուսափում վարակվել նրանցից, որոնք առավել վատ են, քան որևէ մի անառակ և զգվելի պոռնիկը:

34. Այս է Եկեղեցին պատվիրում և սովորեցնում և դիպչում է ցեխոտ հարցերի, որպեսզի դու չցեխոտվես: Քեզ բացահայտում է վերքերը, որպեսզի դու վերք չստանաս: Քեզ համար դրանց մասին բավական է իմանալը: Բայց դրանք փորձելուց հետո մնա: Որոտում է Աստված, և բուլորս դողում ենք, իսկ նրանք հայհոյում են: Կայծակում է Աստված, և բուլորս ծնկում ենք, իսկ նրանք չարախոսում են երկնքին: Հիսուս իր Հոր մասին ասել է. «Նա իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա, և անձրև է թափում արդարների և մեղավորների վրա» (Մատթ., Ե 45): Իսկ նրանք ասում են, թե անձրևներն առաջանում են սեռական մոլուցքից: Նրանք համարձակվում են ասել, թե երկնքում կա գեղադեմ մի կույս, և կա գեղանի մի պատանի, որոնք, ինչպես ուղտերն ու գայլերը, նույնպես ունեն չար ցանկուլթյունների իրենց ժամանակը: Ուրեմն, ձմեռ ժամանակ պատանին մոլեգնած վազում է փախչող կույսի ետևից: Պատանին վազելուց քրտնում է, և նրա այդ քրտինքից առաջանում է անձրևը: Այսպես է գրված մանիքեականների գրքերում: Այդ ամենը կարդացել ենք մենք ինքներս, քանզի չենք հավատում այդ մասին այլոց պատմածներին: Եվ ձեր ապահովուլթյան համար մենք շատ խոսեցինք նրանց կործանման մասին:

35. Բայց թող Աստված մեզ փրկի այդպիսի մոլորուլթյունից: Թող մեզ թշնամանք պարզելի վիշապի դեմ, որպեսզի, ինչպես որ նրանք մեր գարշապարն են փնտրում, այնպես և դուք ոտնակոխ արեք նրանց գլուխը: Միշտ հիշեք այս ասածներս: Ի՞նչ նույնացում կարող է լինել այն ամենի հետ, ինչ դու սովորում ես այստեղ և հավատում այն ամենին, ինչ նրանք սովորում և հավատում են: Ի՞նչ ընդհանուր բան ունի խավարը լույսի հետ. ի՞նչ ընդհանուր բան կա Եկեղեցու համեստուլթյան և մանիքեականների գարշահոտուլթյան միջև: Այստեղ կարգ կա. գիտուլթյուն, համես-

տուլթյուն, անմեղուլթյուն: Այստեղ՝ կնոջը ցանկուլթյամբ նայելն անգամ համարվում է մեղանչում: Այստեղ՝ համեստուլթյան հարսանիք, ժուլթկալուլթյուն, համբերուլթյուն: Այստեղ՝ հրեշտակներին հավասար կուլսուլթյան պաշտամուլնք: Այստեղ՝ ուտելիքի շնորհընկալ վայելք: Այստեղ՝ երախտագիտուլթյուն Ամենակալ Արարչին: Այստեղ պաշտվում է Քրիստոսի Հայրը: Այստեղ ուսուլցվում է երկյուղածուլթյուն և աստվածավախուլթյուն անձրեն Ստեղծողի հանդեպ: Այստեղ փառաբանում ենք կայծակն ու որոտն Ուղարկողին:

36. Արածիր ոչխարների հետ, խուլսափիր գայլերից: Մի՛ փախիր Եկեղեցուլց: Ատիր նաև նրանց, ովքեր երբևէ կասկածվել են այդ ամենի մեջ, և եթե երկար ժամանակ չես փորձել նրանց գղջումը, մի՛ շտապիր նրանց վստահել: Քեզ ավանդվել է միակ Աստծու ճշմարտուլթյունը: Ճանաչիր դասերի դեղաբուլյուր: Եղիր հմուտ սեղանավոր, տիրիր բարուլթյանը և հեռու մնա ամեն չարիքից: Եվ եթե երբևէ ընկել ես չարիքի ցանցը, այժմ, ճշմարտուլթյունն իմանալով, ատիր մոլորուլթյունը: Կա փրկուլթյան ճանապարհ, եթե քո միջից դուրս տաս նրանց զագրախոսուլթյունները: Եթե սրտանց ատես նրանց, եթե հեռանաս նրանցից ոչ միայն խոսքով, այլև հոգով: Եթե երկրպագես Քրիստոսի Հորը՝ օրինաց և մարգարեների Աստծուն, եթե ճանաչես բարուն և արդարին, որը Միակ և միևնույն Աստվածն է: Թող Նա պահպանի և մեզ պահի անսասան, անգայթակղելի, կայուն հավատով մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Ում փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:



## ՈՒՍՈՒՅՈՒՄ ՅՈԹԵՐՈՐԳ

### Հայր Աստծու մասին՝ արված Երուսաղեմում

Ընթերցում Եփեսացիներին ուղղված թղթից. «Ահա թե ինչու ծնկի եմ գալիս մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր առաջ, Որից իր անունն է ստանում ամեն ազգաստոհն երկնքում և երկրի վրա» (Եփես., Գ 14-15) և շարունակությունը:

1. Աստծու մենիշխանուլթյան մասին երեկ բավական ասվեց ձեզ: Ասում եմ՝ բավական, ոչ թե նյուլթի կարևորուլթյան համեմատ, քանզի այդ բոլորովին անկարող է կատարել մարդու մահկանացու բնուլթյունը, այլ ինչքան որ կարողանում էին շոշափել մեր տկար ուլթերը: Անդրադարձանք նաև անաստված և ամբարիշտ հերետիկոսների բազմապիսի մոլորուլթյուններին: Եվ քանի որ մեզնից հեռու վանեցինք հոգու համար կեղտոտ ու թուլնավոր քարոզները և նշեցինք այն ամենը, ինչ վերաբերում է այդ հարցին, ոչ թե վնաս կրելու, այլ նրանց առավել ատելու համար, դարձյալ վերադառնանք մեր հարցերին: Ընդունենք մեր մեջ հավատի փրկարար ճշմարտուլթյունները և Աստծու մենիշխանուլթյան ուսմունքին միացնելով՝ Նրա հայրուլթյան տարրը, հավատանք Մեկ և Միակ Հայր Աստծուն: Պետք է միայն հավատալ Մեկ Աստծուն, այլև խորին երկյուղածուլթյամբ ընդունենք, որ Նա նաև Հայրն է մեր Միածին Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի:

2. Այս հավատով մենք առավել վեհ ենք մտածում, քան հուղայականները, որոնք ասում են, թե իրենց ուսմունքով

ընդունում են Մեկ Աստծուն – բայց մի՞թե սրան ևս կուսակաշտությամբ բազմիցս չուրացան – սակայն չեն ընդունում, որ Նա նաև մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրն է: Եվ, հակառակ իրենց մարգարեների, որոնք Սուրբ Գրքում ասել են. «Տերն ասաց ինձ. Դու իմ Որդին ես, ես այսօր ծնեցի Քեզ» (Սաղմ., Բ 7): Մինչև օրս կատաղի կերպով պայքարում են Տիրոջ և Նրա Քրիստոսի դեմ: Նրանք կարծում են, թե կարող են հաշտվել Հայր Աստծու հետ, առանց հավատալու և պաշտելու Որդուն: Չգիտեն, որ ոչ ոք չի գալիս դեպի Հայրը, եթե ոչ՝ միայն Որդու միջոցով, որն ասում է. «Ես եմ դուռը» (Հովհ., Ժ 9) և «Ես եմ ճանապարհը» (Հովհ., ԺԴ 6): Նա, ով լքում է դեպի Հայրը տանող ճանապարհը և հրաժարվում է դռնից, ինչպե՞ս կարժանանա Հոր մոտ մտնելու: Նրանք հակասում են ՁԸ-րդ սաղմոսում ասվածին, թե՝ «Նա ձայն կտա ինձ. «Իմ Հայրն ես դու, Աստված, հաճեցնողն իմ փրկության»: Ես իմ անդրանիկ որդին կղարձնեմ նրան և բարձր, քան երկրի բոլոր թագավորները» (Սաղմ., ՁԸ 27-28): Եթե պնդեն, որ այս խոսքերը ասված են Դավթի կամ Սողոմոնի կամ նրանց հետնորդներից մեկի մասին, ապա թող մեզ ապացուցեն, որ գահը Նրա, Ում մասին մարգարեացել են, հավիտենական է, ինչպես երկնքի օրերը (հմմտ. Սաղմ., ՁԸ 30), ինչպես արևը Աստծու առաջ (հմմտ. Սաղմ. ՁԸ 37), ինչպես լուսինը, որ արարվել է հավիտյան լուսավորելու համար (Սաղմ., ՁԸ 38): Եվ ինչպե՞ս չեն մտափոխվում՝ կարգալով սաղմոսում ասվածը, թե՝ «Քեզ արչալույսից առաջ ծնեցի արգանդից» (Սաղմ., ՃԹ, 3) և այն, թե՝ «Նա պիտի մնա, որքան որ արև լինի, լուսնից առաջ, սերնդից սերունդ» (Սաղմ., ՀԱ 5): Այս խոսքերը եթե վերաբերենք որևէ մարդու, ապա դա կլինի փաստերի լրիվ անտեսում և անգիտություն:

3. Հուդայականները, եթե այդպես են կամենում, թող մոլորվեն՝ տարված այս ասույթների նկատմամբ իրենց սո-

վորական անհավատությունը: Մենք, պաշտելով մեկ Աստծու՝ Քրիստոսի Հորը, ընդունում ենք ճշմարիտ հավատքը: (Քանզի անարգական և անընդունելի է մերժել անմիջականորեն ծնունդին առնչվող Հայրությունը Նրան, Ով բոլորին շնորհել է ծնանելու կարողությունը): Մենք հավատում ենք Հայր Աստծուն: Ուստի, Քրիստոսի մասին որևէ այլ ուսմունք շարադրելուց առաջ, այժմ ունկնդիրների հոգում պետք է հաստատվի Միածին Որդու նկատմամբ հավատքը, որն անկարելի է դուրսն չափով անջատել այն ամենից, ինչ վերաբերվում է և պիտի վերաբերվի Հայր Աստծուն:

4. Երբ արտասանում ես Հայր անունը, իսկույն հիշում ես նաև Որդուն: Նույնը և երբ արտասանում ես Որդի բառը, իսկույն ենթադրում ես Հորը: Քանզի եթե հայր է, անպայման որդու հայր: Իսկ եթե որդի է, անպայման հոր որդի: Եվ որպեսզի սխալ և անսուրբ կերպով չկարծվի, թե, երբ ասում ենք «ի մի Աստված Հայր Ամենակալ, Արարիչն երկնի և երկրի և բոլոր երևելյաց և աներևույթից», Միածին Որդին ունի երկրորդական դիրք: Ուստի մենք ավելացնում ենք՝ «մեկ Տեր Հիսուս Քրիստոսին»: Այդ պատճառով, նրանց արարածներին անվանելուց առաջ Աստծուն Հայր անվանեցինք, որպեսզի, երբ մտքում ունենք Հայր Աստծուն, մտաբերում ենք նաև Որդուն: Քանզի բացարձակապես հաստատ է, որ Հոր և Որդու միջև ոչ մի արարած չկա, որը խանգարի նրանց հավասարակշռությունը:

5. Աստված, ընդհանրապես շատերի հայրն է. բայց իրականում նա սոսկ Միածին Որդու, մեր Տեր Հիսուս Քրիստոսի բնական Հայրն է: Նա հայր է դարձել ոչ թե ժամանակի ինչ-որ որոշակի պահին, այլ մշտապես Հայրն է Միածին Որդու: Քանզի Նա ոչ թե նախկինում անժառանգ էր և մտափոխվելով հետագայում դարձավ հայր, այլ նախքան որևէ այլ էություն, նախքան որևէ այլ կյանքի, ժամանակի



և դարերի արարումը, Աստված ունեցել էր հայրության պատիվը: Նրան առավելապես այդ պատճառով են պաշտում ու մեծարում, քան իր մյուս պատիվների համար: Նա Հայր չի դարձել որևէ կրքի ազդեցություն տակ, ոչ էլ մեկ այլ էակի հետ սեռական հարաբերություն հետևանքով, ոչ էլ առանց իր կամքի և գիտություն, ոչ էլ արտահոսքի միջոցով, ոչ էլ իրենից որևէ բան պակասած կամ այլափոխված լինելուց հետո: Քանզի լուսավոր մարմինների Արարիչ Աստծու կողմից երկնքից ուղարկված ամեն պարզ և թշնամ է կատարյալ (հմմտ. Հակ., Ա 17): Նա կատարյալ Հայր է, որ ծնել է կատարյալ Որդու և Նրան էլ հանձնել է ամեն ինչ: Քանզի, ինչպես ասել է Տերը, «ամենայն ինչ ինձ տրվեց Հորից» (Մատթ., ԺԱ 27): Նա վայելում է Միածին Որդու հարգանքը. «Ես պատվում եմ իմ Հորը» (Հովհ., Ը 49), ասում է Որդին: Եվ դարձյալ՝ «Ինչպես ես իմ Հոր պատվիրանները պահեցի և մնում եմ Նրա սիրո մեջ» (Հովհ., ԺԵ 10): Ուրեմն, մենք ևս առաքյալի նման կասենք. «Օրհնյալ է Աստված և Հայրը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Հայրը գթությունների և Աստված ամենայն մխիթարություն» (Բ Կորնթ., Ե 3): «Ծնկի եմ գալիս մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր առաջ, որից իր անունն է ստանում ամեն ազգատոհմ երկնքում և երկրի վրա» (Եփես., Գ 14)՝ փառաբանելով Նրան Միածին Որդու հետ: Քանզի «նա, ով ուրանում է Հորը, ուրանում է նաև Որդուն»: Եվ դարձյալ՝ «Ով խոստովանում է Որդուն, նա իր մեջ ունի նաև Հորը» (Ա Հովհ., Բ 23): «Ճանաչելով, թե Հիսուս Քրիստոսն է Տերը, և այդ խոստովանությունը փառաբանում է Հայր Աստծուն» (Փիլիպ., Բ 11):

6. Ուրեմն, երկրպագում ենք Քրիստոսի Հորը, երկնքի և երկրի Արարչին, Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծուն, որի պատվին կառուցվել է նաև մեր դիմացի այս տաճարը: Մենք չենք հանդուրժի հերետիկոսներին, որոնք Հին

Կտակարանը և Նորը անջատում են իրարից: Այլ կհավատանք Քրիստոսին, որ տաճարի մասին ասում է. «Չգիտե՞իք, թե ես Հորս տանը պետք է լինեմ» (Ղուկ., Բ 49): Եվ դարձյալ ասում է. «Դրանք այստեղից վերցրեք և իմ Հոր Տունը վաճառատան մի վերածեք» (Հովհ., Բ 16): Սրանով Նա հստակորեն խոստովանում էր, թե նախկինում ևս երուսաղեմի Տաճարը իր Հոր տունն էր: Եվ եթե որևէ մեկը իր անհավատության պատճառով ուզում է առավել ապացույցներ ստանալ այն բանի, թե Քրիստոսի Հայրը ուղյն է, ինչ աշխարհն արարողը, թող լսի դարձյալ Նրան. «Չէ՞ որ երկու ճնճղուկ մեկ դահեկանի է վաճառվում, բայց նրանցից մեկն անգամ առանց իմ երկնային Հոր կամքի գետին չի ընկնում» (Մատթ., Ժ 29): Եվ դարձյալ. «Նայեցեք երկնքի թռչուններին. ոչ վարում են, ոչ հնձում և ոչ էլ շտեմարանների մեջ հավաքում, և ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց» (Մատթ., Զ 26): Ու նաև այս. «Իմ Հայրը մինչև այժմ գործում է. ուրեմն ես ևս գործում եմ» (Հովհ., Ե 17):

7. Բայց որպեսզի պարզամտությունից կամ չարամտությունից չմտածեն, թե Քրիստոս համապատիվ է արդար մարդկանց, երբ Ինքն ասում է. «Ես բարձրանում եմ դեպի իմ Հայրը և ձեր Հայրը» (Հովհ., Ի 17): Այստեղ պետք է տարանջատենք, թե Հոր անունը մեկն է, իսկ ներգործությունը ուժը՝ տարածել: Եվ այդ էլ իմանալով՝ մեզ վստահեցնելու համար ասաց. «Ես գնում եմ դեպի իմ Հայրը և ձեր Հայրը»: Չասաց՝ «դեպի մեր Հայրը», այլ տարանջատեց և նախ նշելով յուրայինը՝ դեպի իմ Հայրը, ինչը որ բնական է, հետո ավելացրեց նաև՝ «դեպի ձեր Հայրը», ինչը համապատասխան է դիրքին: Քանզի, թեև արժանացել ենք մեր աղոթքներում ասելու՝ «Հայր մեր, որ յերկինս» (Մատթ., Զ 9), այդ պարզևր մարդասիրություն արգասիքն է: Նրան անվանում ենք Հայր ոչ այն պատճառով, որ ըստ

բնության մենք ծնվել ենք երկնային Հորից, այլ արժանացել ենք Նրան Հայր անվանելու այն պատճառով, որ Որդու և Սուրբ Հոգու միջնորդությամբ, Նրա անասելի մարդասիրությամբ, ծառայական վիճակից փոխադրվեցինք որդեգրման պատվին, Նրա հայրական շնորհի պարգևով:

8. Եթե որևէ մեկը կամենա իմանալ, թե ինչ իմաստով մենք Աստծուն անվանում ենք Հայր, թող լսի լավ մանկավարժ Մովսեսին, որն ասել է. «Մի՞թե Նա այն Հայրը չէ, որ քեզ շահեց, քեզ արարեց ու հաստատեց քեզ» (Բ Օր., ԽԲ 6), թող լսի նաև Եսայի մարգարեին. «Տեր, մեր Հայրն ես դու, մենք կավ ենք, իսկ Դու՝ մեր ստեղծիչը – մենք՝ ամենքս, քո ձեռքի գործն ենք» (Եսայի, 42 8): Մարգարեական շնորհը պարզորոշ հայտարարեց, որ ոչ թե ըստ բնության, այլ Աստծու շնորհով և ըստ դիրքի նրան կոչում ենք Հայր:

9. Եվ որպեսզի ավելի լավ իմանաս, որ Սուրբ Գրքում Հայր է կոչվում ոչ միայն բնությամբ հայրը, լսիր Պողոսի խոսքը. «Թեպետև բյուր դաստիարակներ ունեք Քրիստոսով, բայց ոչ բազում հայրեր, որովհետև Քրիստոս Հիսուսի Ավետարանով ես ծնեցի ձեզ» (Ա Կորնթ., Դ 15): Պողոսը դարձավ կորնթացիների հայրը ոչ թե նրանց մարմնով ծնած լինելու համար, այլ որովհետև նրանց քարոզեց և վերածնեց հոգեպես: Լսիր նաև Հոբին. «Ես խեղճերին հայր էի» (Հոբ, ԻԹ 16): Նա ինքզինքը անվանեց հայր ոչ այն պատճառով, որ ծնեց բոլորին, այլ որովհետև դարձավ նրանց խնամակալը: Ինքը ևս՝ Աստծու Միածին Որդին, խաչելության ժամանակ, երբ մարմնով գամված էր խաչին, տեսնելով իր մարմնավոր Մարիամ մորը և իր առավել սիրած Հովհաննես աշակերտին, նրան ասաց. «Ահա քո մայրը»: Եվ Մարիամին՝ «Ահա քո որդին» (Հմմտ. Հովհ., ԺԹ 26-27): Դրանով Նա հոգածություն էր դաստիարակում և

անմիջականորեն բացահայտում ավետարանիչ Ղուկասի գրածը՝ «Նրա հայրն ու մայրը զարմացած էին» (Ղուկ., Բ 33): Այս խոսքերն են վերցրել հերետիկոսների աշակերտները և ասում են, թե Նա ծնված է եղել այրից և կնոջից: Ինչպես որ Մարիամը կոչվեց Հովհաննեսի մայրը իր հոգածության, և ոչ թե նրան ծնած լինելու համար, այդպես և Հովսեփը կոչվում էր Հիսուսի հայր ոչ թե նրան մարմնապես ծնած լինելու համար, քանզի, ինչպես Ավետարանն է ասում, «նրա հետ չհարաբերվեց, մինչև Մարիամը ծնեց իր անդրանիկ որդուն» (Մատթ., Ա 25), այլ նրան խնամած լինելու համար:

10. Այս ամենը մենք ձեզ բացատրեցինք: Այժմ ավելացնենք նաև մեկ այլ վկայություն, որն ապացուցում է, թե Աստված մարդկանց հայր է կոչվում փոխաբերաբար: Այն, որ ասում է Եսային. «Դու ես մեր հայրը. Աբրահամը չգիտեր մեզ» (Եսայի, ԿԳ 16) և Սարան մեզ համար չեղկնեց: Այս մասին ավելի՞ն կուզեք լսել: Սաղմոսերգուն ասում է. «Պիտի ցնցվեն և դողան քո տեսքի առաջ: Քանզի նա է որբերի հայրը և այրիների պաշտպանը» (Հմմտ. Սաղմ., ԾԷ 5-6): Արդյոք բացահայտ չէ՞, որ Աստված կոչվում է իրենց մարմնական հորը կորցրած որբերի հայր ոչ այն պատճառով, որ ծնել է նրանց, այլ որովհետև խնամում ու պաշտպանում է նրանց: Ինչպես ասացինք, Նա մարդկանց հայր է կոչվում փոխաբերաբար: Բայց Նա Քրիստոսի Հայրն է բնությամբ և ոչ թե կացությամբ, և մարդկանց հայրն է պատմական ժամանակի որոշ շրջանակներում: Իսկ Քրիստոսի Հայրն է, ինչպես ինքն է ասել, ժամանակից էլ առաջ. «Եվ դու այժմ փառավորի՛ր ինձ, Հայր, քեզ մոտ եղող այն փառքով, որ ունեի քեզ մոտ՝ նախքան աշխարհի լինելը» (Հովհ., ԺԷ 5):

11. Ուրեմն, հավատում ենք Մեկ Հայր Աստծուն, անքննելի, անպատմելի, ում մարդկանցից «ոչ ոք երբեք չի տեսել, բացի միայն Միածին Որդուց, որ Հոր ծոցում է: Նա Հայտնեց Նրան» (Հովհ., Ա 18): «Նա, որ Աստծուց է, Նա է տեսել Հորը» (Հովհ., Զ 46): Նրան, «Ում երկնքում մշտապես տեսնում են հրեշտակները» (Հմմտ. Մատթ., ԺԸ 10): Եվ տեսնում են յուրաքանչյուրն իր հոգևոր պաշտոնին համապատասխան: Բայց Հայր Աստծու բացարձակ տեսությունը վերապահված է Որդուն և Սուրբ Հոգուն:

12. Արդ՝ քանի որ խոսք եղավ, ես վերհիշեցի քիչ առաջ մեր ասած խոսքերը, որոնցով Աստված կոչվեց մարդկանց Հայր: Մեծապես զարմանում եմ մարդկանց անգիտություն վրա: Քանզի Աստված իր անպատմելի մարդասիրությունամբ հանդուրժեց կոչվել մարդկանց Հայր, երկնքում եղողը՝ երկրի վրա եղողի համար: Նա, Ով ստեղծեց դարերը նրանց համար, ովքեր ապրած են ժամանակի շրջանակների մեջ: Նա, Ով իր ափի մեջ պահում է երկիրը նրանց, ովքեր նման են մորեխների: Իսկ մարդը, լքելով երկնային Հորը, փայտին ասաց. «Դու ես իմ հայրը»: Եվ քարին՝ «Դու ինձ ծնեցիր» (Երեմ., Բ 27): Ես կարծում եմ, որ այդ պատճառով է սաղմոսերգուն ասում մարդկությունը. «Մոռացիր քո ժողովրդին և քո հոր տունը» (Սաղմ., ԽԴ 15): Հորը, ում դու ընտրեցիր քո աղավաղված կամքով և դարձրիր բռնը, որպեսզի քեզ տանի կործանման:

13. Ոչ միայն փայտն ու քարերը, այլև իրեն՝ հոգեսպան սատանային, ոմանք կամեցան որպես հայր ունենալ: Նրանց հանդիմանելով՝ Տերն ասում է. «Դուք ձեր հոր գործերն եք անում» (Հովհ., Ը 41): Սատանան, անշուշտ, մարդկանց բնական հայրը չէ, այլ դառնում է նրանց հայրը խաբեությունամբ: Քանզի, ինչպես Պողոսը իր բարեպաշտ ուսմունքով դարձել էր կորնթացիների հայրը, այդպես և

սատանան կոչվում է հայր նրանց, ովքեր հոժարակամ գնում են նրա մոտ և համակերպվում նրա կամքին: Մենք չենք հանդուրժի «սրանով են ճանաչում Աստծու որդիներին և սատանայի որդիներին» (Հմմտ. Ա Հովհ., Գ 10) խոսքին մեկնիչների տված բացատրությունը: Նրանք ընդունում են և պնդում, որ իբր կան մարդիկ, որոնք բնությունից փրկված են կամ բնությունից դատապարտված: Քանզի մենք ոչ թե բռնությունամբ, այլ հոժարակամ գալիս ենք այս սրբազան որդեգրության: Ոչ էլ Հուդան բռնությունամբ սատանայի և կորստյան ծնունդ էր: Եթե այդպես լիներ, նա սկզբում Քրիստոսի անունով չէր քչի սատանաներին. «Սատանան սատանային դուրս չի հանի» (Մարկ., Գ 23): Ոչ էլ Պողոսը հալածողից կդառնար քարոզող: Բայց մեր որդեգրվելը կատարվում է հոժարակամ, ինչպես ասել է Հովհաննեսը. «Ովքեր Նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց՝ լինելու Աստծու որդիներ, նրանց, ովքեր իր անվանը կհավատան» (Հովհ., Ա 12): Ուրեմն, ոչ թե հավատալուց առաջ, այլ հավատքի հետ, քանի որ իրենք կամեցան, արժանացան Աստծու որդիներ դառնալու:

14. Ուրեմն, այդ իմանալով, ջանանք մեր վարքը ամրապնդել հոգևոր հիմքերով, արժանանալու համար Աստծու որդեգրության: «Որովհետև նրանք, որ առաջնորդվում են Աստծու Հոգով, նրանք են Աստծու որդիներ» (Հռոմ., Ը 14): Քանզի մեզ համար ոչ մի օգուտ քրիստոնյա անունը կրելուց, եթե մեր գործերը դրան համապատասխան չլինեն, և չլինի թե մեզ համար ևս ասեն. «Եթե Աբրահամի որդիները լինեիք, Աբրահամի գործերը կգործեիք» (Հովհ., Ը 39): «Եվ եթե Հայր եք կոչում Նրան, որ առանց աչառություն դատում է յուրաքանչյուրին՝ ըստ նրա գործերի, ապա երկյուղով ապրեցեք այս աշխարհում ձեր պանդխտության ժամանակ» (Ա Պետր., Ա 17): «Մի սիրեք աշխարհը, ոչ էլ ինչ որ աշխարհի մեջ կա: Քանի որ այն ամենը, ինչ աշ-

խարհի մեջ կա, մարմնի ցանկությունն է: Ով սիրում է աշխարհը, իր մեջ չունի Հայր Աստծու սերը» (Հմմտ. Ա Հովհ., Բ 15-16): «Ուրեմն, որդիներս, թող այնպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթ., Ե 16), «որովհետև ձեր Հայրը գիտե, թե ինչ է ձեզ պետք» (Մատթ., Ե 16):

15. Պատվելով մեր երկնավոր Հորը՝ հարգենք նաև մեր մարմնավոր հայրերին, քանի որ մոլորասական օրենքով և մարգարեների միջոցով այդպես է սահմանել Տերը՝ ասելով. «Պատվիր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ» (Ելք, Ի 12): Այս պատվիրանն էլ թող լավ լսեն այստեղ ներկա եղողներից նրանք, ովքեր հայր և մայր ունեն: «Որդիներ, հնազանդ եղեք ձեր ծնողներին ամեն ինչում» (Եփես., Զ 1), քանզի այդ է հաճելի Տիրոջը: Տերը չի ասել՝ «իր հորն ու մորը սիրողը ինձ հաճելի չէ»: Չլինի թե լավ գրվածը անգիտության պատճառով դու սխալ ըմբռնես: Նա ավելացրել է՝ «ինձնից ավելի» (Հմմտ. Մատթ., Ժ 37): Քանզի երբ մեր երկնային հայրերը ընդդիմանում են մեր երկնավոր Հորը, այդ դեպքում կիրառելի է ասված խոսքը: Բայց եթե մեր ծնողները չեն արգելում մեր բարեպաշտությունը, և մենք ապերախտորեն նրանց արհամարհում ենք, մոռանալով նրանցից մեր ընդունած բարեգործությունները, այդ դեպքում տեղին կլինի հետևյալ խոսքը. «Նա, ով չարախոսում է իր հորը կամ մորը, թող պատժվի մահով» (Հմմտ. Մատթ., ԺԵ 4: Ելք, Ի 16: Ղևտ., Ի 9):

16. Քրիստոնյաների բարեպաշտության առաջին առաքինությունը ծնողներին հարգելն է, նրանց ծնողական տառապանքը հատուցելը: Նրանք պետք է ծնողներին պարգևեն այն ամենը, ինչ անհրաժեշտ է ծնողների հանգստի համար: Եվ ինչքան էլ մենք հատուցենք, անկարող ենք

ծնել նրանց, ովքեր ծնել են մեզ: Ուստի նրանք, վայելելով այն հանգիստը, որ մենք կապահովենք նրանց համար, մեզ կօգնեն իրենց օրհնություններով, որ խորամանկ Հակոբը ճարպիկ կերպով պոկեց հոր ձեռքից: Եվ այսպես, մեր երկնային Հայրը, ընդունելով մեր բարի ձգտումը, թող մեզ արժանացնի փայլել արևի նման արդարների հետ մեր Հոր երկնային թագավորության մեջ: Նրան Միածին Որդու՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի և կենարար Սուրբ Հոգու հետ վայել է փառք այժմ և միշտ, հավիտյանս հավիտենից, ամեն:



## ՈՒՍՈՒՅՈՒՄ ՈՒԹԵՐՈՐԴ

### Արված Երուսաղեմում Ամենակալի վերաբերյալ

Ընթերցում Երեսնայից. «Մեծ և Հզոր Աստված, Քո անունը Զորությունների Տեր է, խորհուրդների մեծ ես և գործերով՝ զորավոր: Ով Դու Ամենակալ, մեծագոր Տեր» (Երեմ., ԽԲ 18-19):

1. Կհավատամ «Մեկ Աստծուն» ասելով՝ մենք կտրում ենք բազմաստվածության բոլոր մոլորությունները՝ այն որպես զենք օգտագործելով հեղինակների և բոլոր տեսակի հերետիկոսների դեմ: Իսկ դրան ավելացնելով «Մեկ Հայր Աստծուն» բառերը՝ դիմագրավում ենք թլփատվածներին, որոնք ժխտում են Աստծու Միածին Որդուն: Ինչպես ասվեց երեկ, նախքան քարոզենք և բացահայտենք այն ամենը, ինչ վերաբերում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի անձին, երբ ասում ենք Հայր, արդեն բացահայտում և վկայում ենք, թե Նա Որդու Հայրն է: Ինչպես որ հավատում ենք, թե կա Աստված, այնպես էլ հավատում ենք, որ կա նաև Որդի: Այդ ամենին ավելացնում ենք, որ Նա նաև Ամենակալ է: Այս մենք հայտարարում ենք և՛ հեղինակներին, և՛ հոգևայականներին, և՛ բոլոր հերետիկոսներին:

2. Հեղինակներից ոմանք ասացին, թե Աստված աշխարհի հոգին է: Ուրիշներ՝ թե Նրա իշխանությունը հասնում է մինչև երկինք, բայց ոչ նաև երկրի վրա: Ոմանք էլ, որոնք մոլորվեցին նրանց հետ, վատ մեկնաբանելով «Քո ճշմարտությունը հասնում է ամպերին» (Սաղմ., ձԷ 5) ասույթը, համարձակվեցին Աստծու կանխատեսումը սահմանափակել մինչև ամպերն ու երկինքը և Աստծուն օտարել երկրի վրա կատարվող ամեն ինչից: Նրանք մոռանում են սաղմո-

սում ասվածը. «Եթե երկինք ելնեմ, այնտեղ ես դու. եթե դժոխք իջնեմ, ներկա ես» (Սաղմ., ձԽԸ 8): Ուրեմն, եթե երկնքից բարձր ոչինչ չկա, իսկ երկրի ամենախոր կետը դժոխքն է, հետևաբար, Նա, Ով տիրում է երկրի ամենախոր կետին՝ դժոխքին, տիրում է նաև ամբողջ երկրին:

3. Հերետիկոսները դարձյալ, ինչպես արդեն ասել ենք, չեն ընդունում մեկ Ամենակալ Աստծուն: Որովհետև ամենակալ է նա, ով տիրում և իշխում է բոլորին: Բայց նրանք, ովքեր ասում են, թե կա հոգիներին իշխող մի տեր և մարմիններին իշխող մեկ ուրիշ տեր, դրանով իսկ չեն ընդունում որպես կատարյալ իշխող ո՛չ մեկին, ո՛չ էլ մյուսին: Քանզի նա, ով իշխում է հոգուն, առանց մարմնին իշխելու, ինչպե՞ս կարող է ամենակալ լինել, և դարձյալ, մարմինների վրա իշխողը, առանց հոգիների վրա իշխելու, ինչպե՞ս կարող է ամենակալ լինել: Նրանց հակաճառելով՝ Տերն ասում է. «Դուք առավել վախեցեք նրանից, ով կարող է գեհենի մեջ կորստյան մատնել հոգին և մարմինը» (Մատթ., Ժ 28): Քանզի եթե նա իշխանություն չունի երկուսի վրա էլ, ապա ինչպե՞ս կարող է մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը երկուսին էլ պատժել: Ինչպե՞ս կարող է օտար մարմինը վերցնել ու նետել գեհեն, «եթե նախ չկապի հզորին և ապա նրա տունը կողոպտի» (Հմմտ. Մատթ., ԺԲ 29):

4. Բայց Սուրբ Գիրքը և ուղղափառ ուսմունքը ճանաչում է մեկ Աստծու, որ Իր ինքնագործությամբ իշխում է բոլորի և ամեն ինչի վրա, և Իր բացարձակ կամքով հանդուրժում է բոլորին: Նա իշխում է նաև կռապաշտների վրա, բայց հանդուրժում է իր անչարությունը: Իշխում է նաև իրեն անհավատարիմ հերետիկոսներին, բայց հանդուրժում է մեծահոգությունը: Իշխում է նաև սատանային, բայց հանդուրժում է մեծահոգաբար: Ոչ այն պատճառով, որ ին-

քը թույլ է և հանդուրժում է որպես պարտված: Այլ որովհետև սատանան Աստծու առաջին ստեղծածներից է և արարված է ծանակվելու համար ոչ թե Աստծուց (քանզի անարժան է դրա համար), այլ Աստծու արարած հրեշտակներից: Աստված թույլ տվեց սատանային ապրել երկու պատճառով: Նախ, որ սատանան առավել խայտառակվի պարտվելով, և ապա, որպեսզի մարդիկ պսակներ ստանան: Ո՛վ ամենահանճար աստվածային նախախնամություն, որ անգամ սատանայի չար ընտրությունը օգտագործում է հավատացյալներին փրկելու համար: Ինչպես որ Հովսեփի եղբայրների եղբայրատյաց վարքը Աստված օգտագործեց կարգավորելու համար նրանց փրկությունը – քանի որ նախ թույլ տվեց նրանց, համաձայն իրենց ատելություն, վաճառել իրենց եղբորը, ապա միջոց գտավ, որպեսզի թագավոր հռչակվի նա, ում որոշել էր – այդպես էլ Աստված թույլ տվեց, որ մարդիկ մարտնչեն սատանայի հետ, որպեսզի նրան հաղթեն և պսակավորվեն: Եվ մարդկանց այդ հաղթանակով սատանան ավելի է խայտառակվում՝ պարտվելով բնությունամբ իրենից նվաստ եղող մարդկանցից, իսկ մարդիկ մեծապես առաջադիմում են, քանզի կարողանում են հաղթել նրան, ով մի ժամանակ եղել էր հրեշտակապետ:

5. Ոչինչ և ոչ ոք չի կարող Աստծու զորությունից դուրս մնալ: Այդ ասված է Գրքում. «Քանզի բոլորը Քո ծառաներն են» (Սաղմ., ձժԸ 91): Ուրեմն, բոլորը Նրա ծառաներն են: Այդ բոլորից բացառվում են Նրա մեկ և Միածին Որդին և մեկ Սուրբ Հոգին: Եվ այդ բոլոր ծառաները «մեկ Որդու և մեկ Սուրբ Հոգու միջոցով» ծառայում են Տիրոջը: Աստված, ուրեմն, իշխում է ամեն ինչին և, քանի որ մեծահոգի է, հանդուրժում է և՛ ոճրագործներին, և՛ ավազակներին, և՛ պոռնիկներին: Եվ Նա որոշակի ժամկետ է սահմանել, երբ յուրաքանչյուրին հատուցում կլինի նրա արարքներին համապատասխան: Երկրի վրա թագավորող-

ները միայն մարդկանց թագավորներ են, բայց առանց վերևից տրված իշխանություն: Այդ բանը ժամանակին փորձով հասկացավ Նաբուգոդոնոսորը և ասաց. «Աստծու թագավորությունը հավիտենական թագավորություն է, և Նրա իշխանությունը՝ սերնդից սերունդ» (Դան., Դ 3):

6. Հարստությունը, ոսկին և արծաթը չեն պատկանում սատանային, ինչպես կարծում են ոմանք: Քանզի «հավատարմին պատկանում է փողերի աշխարհը, իսկ անհավատարմին՝ ոչ մի գույք» (Առակ., ԺԷ 6<sup>ա</sup>). իսկ ոչինչ կա սատանայից առավել անհավատարիմ: Աստված այդ բացահայտ ասել է Անգե մարգարեի բերանով. «Իմն է արծաթը, իմն է ոսկին» (Անգե, Բ 9), և «ու՜մ որ կամենամ, կտամ այն» (Հմմտ. Ղուկ., Դ 6): Միայն թե դու այն լավ օգտագործիր, և արծաթը արգահատելի չէ: Բայց երբ դու լավը օգտագործում ես վատ, այնժամ դու, չկամենալով քեզ մեղադրել վատ գործածություն համար, ապօրինաբար մեղադրում ես այն Ստեղծողին: Մարդ կարող է արդարացվել՝ նաև փող ունենալով. «Քաղցած էի, և ինձ ուտելիք տվիք» (Մատթ., ԻԵ 35)՝ անպայման օգտագործելով ձեր փողերը: «Մերկ էի և ինձ հագցրիք» (Մատթ., ԻԵ 36)՝ անպայման օգտագործելով ձեր փողերը: Կուզե՞ս իմանալ, թե փողերն ինչպես կարող են մուտք դառնալ դեպի երկնային արքայություն: Տերն ասել է. «Վաճառիր քո ունեցվածքը և տուր աղքատներին, և երկնքում գանձեր կունենաս» (Մատթ., ԻԹ 21):

7. Այս ամենն ասացի հերետիկոսների համար, որոնք անիծում են ինչքը, փողերը և մարմինը: Ես չեմ ուզում, որ փողերի ստրուկը լինես, ոչ էլ թշնամի համարես այն, ինչ Աստված տվել է մարդկանց սպասարկելու համար: Ուրեմն, երբեք չասես, թե փողերը սատանայինն են: Եվ եթե սատանան ասում է՝ «այս բոլորը քեզ կտամ, որովհետև ինձ է



հանձնված» (Մատթ., Դ 9), կարող ես չհավատալ նրա խոսքերին, քանզի նա ստախոս է: Գուցեև այս դեպքում նա ստիպված էր ճիշտն ասել: Նա չի ասել՝ «այս բոլորը կտամ քեզ, քանզի ինձ են պատկանում», այլ՝ «քանզի ինձ են հանձնված»: Որովհետև սատանան իշխանությունն չուներ այն ամենի վրա, ինչ խոստանում էր Քրիստոսին, այլ խոստովանեց, որ այդ ամենի տնօրինումը իրեն էր գիջված: Ամեն անգամ սատանայի խոսքին անդրադառնալիս, պետք է նախ որոշել, թե ե՞րբ է նա ստում և ե՞րբ է ճիշտ խոսում:

8. Արդ, Աստված մեկ է, Հայր և Ամենակալ, ում հերետիկոսների աշակերտները համարձակվեցին անվանարկել: Համարձակվեցին անվանարկել «Տեր Սաբաովթին. նրան, ով նստած է քերովբեների վրա» (Սաղմ., ՀԹ 2): Համարձակվեցին անվանարկել Տեր Ադոնային, համարձակվեցին անվանարկել մարգարեների ասած Ամենակալ Աստծուն: Բայց դու երկրպագիր միայն Մեկին, Ամենակալ Աստծուն, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հորը: Հեռու մնա բազմաստվածությունից և որևէ հերետիկոսությունից՝ Հորի հետ ասելով. «Անքննելի, փառավոր ու հրաշակերտ գործերն այնքան շատ են, որ թիվ ու համար չունեն» (Հոր, Ե 9): «Մեծ են Ամենակալի փառքն ու պատիվը» (Հոր, ԽԷ 22): Նրան վայել է փառք, այժմ և հավիտյանս հավիտենից: Ամեն:



## ՈՒՍՈՒՑՈՒՄ ԻՆՆԵՐՈՐԴ

### Արված Երուսաղեմում և վերաբերում է «Արարիչն է երկնքի և երկրի, տեսանելիների և անտեսանելիների» ուսմունքին

Ընթերցում Հորից. «Այդ ո՞վ է, որ իր խորհուրդները թաքցնում է ինձնից, խոսքերը հավաքելով իր սրտում, կարծում է, թե ինձնից պահում է դրանք» (Հոր, ԼԸ, 2):

1. Մարմնական աչքերով Աստծուն տեսնել անկարելի է, քանզի անմարմինը մարմնական աչքին չի կարող ընկալել իրեն: Այդ մեզ վկայել է Աստծու Միածին Որդին՝ ասելով. «Աստծուն երբեք ոչ ոք չի տեսել» (Հովհ., Ա 18): Անգամ եթե ոմանք կարծում են, թե Եզեկիելը տեսել է Աստծուն, ինչի մասին իբր գրված է Գրքում, ապա ուշադիր կարդանք Գիրքը. «Տեսավ Տիրոջ փառքի կերպարանքը» (Հմմտ. Եզեկ., Ա 28), բայց ոչ թե իրեն՝ Տիրոջը: Տեսավ փառքի կերպարանքը և ոչ թե նրա բուն փառքը և վախից ընկավ գետին: Քանի որ փառքի կերպարանքը տեսնելը միայն երկյուղ և տազնապ ազդեց մարգարեներին, ապա նա, ով փորձեր տեսնել Աստծուն, կզրկվեր կյանքից, ինչպես ասված է. «Մարդ չի կարող տեսնել իմ երեսը և կենդանի մնալ» (Ելք, ԽԳ 20): Այդ պատճառով էլ Աստված իր մեծ մարդասիրտությամբ երկինքը իբրև վարագույր տարածեց, որը պիտի ծածկեր իր աստվածությունը, որ մենք չկորչենք: Այդ ես չեմ ասում, այլ ասել է մարգարեն. «Եթե բացես երկինքը, Քո ահից լեռները կսասանվեն և կհալվեն» (Եսայի, ԿԳ 19, հայերեն՝ ԿԴ, 1): Ինչո՞ւ այդպես զարմանքով կանգնած ես այն դեպքի առաջ, որ Եզեկիելը ընկավ՝ միայն ու միայն տեսնելով Տիրոջ փառքի նմանակը. քանի

որ Դանիելի հետ ևս նույնը կատարվեց: Նա ևս վախեցած երեսը դրեց հողին, երբ նրան երևաց Տիրոջ սպասավոր Գաբրիել հրեշտակապետը, և մինչև որ հրեշտակը մարդկային կերպարանք չստացավ, մարգարեն չհամարձակվեց նրան պատասխանել: Եթե Գաբրիելի հայտնվելը սարսափ էր ազդում մարգարեներին, ապա եթե հայտնվեր Աստված Ինքը ինչպես որ կար, մի՞թե բոլորը չէին կորչելու:

2. Մարմնական աչքերով անկարելի է տեսնել աստվածային բնությունը: Աստծու գործերից կարող ենք պատկերացնել Նրա գորությունը, ինչպես ասել է Սողոմոնը. «Քանզի արարվածների մեծությունից և գեղեցկությունից՝ նույն համեմատությունը էլ երևում է դրանք արարչագործողը» (Իմաստ., ԺԳ 5): Նա չի ասել, որ արարվածների միջոցով երևում է դրանք արարողը, այլ ավելացրել է՝ «նույն համեմատությամբ»: Քանզի Աստված մարդուն երևում է այնքան փառահեղ, ինչքան ավելի շատ իմացություն է ձեռք բերում Աստծու ստեղծագործության մասին:

3. Ուզո՞ւմ ես իմանալ, թե ինչու անկարելի է իմանալ Աստծու բնությունը: Երեք տղաները հնոցում եղած ժամանակ օրհնեցողում էին Աստծուն՝ ասելով. «Օրհնյալ ես, որ նայում ես անդունդներին և նստում ես քերովբեների վրա» (Դան., Գ 55): Ասա ինձ, ինչպիսի՞ն է քերովբեների բնությունը, և ապա փորձիր տեսնել Նրան, Ով նստել է քերովբեների վրա: Եզեկիել մարգարեն նկարագրել է նրանց տեսքը՝ որքան հնարավոր է, ասելով. «Նրանց դեմքի տեսքը աչից մարդու և առյուծի տեսք ունեն, իսկ ձախից՝ եզան ու արծվի կերպարանք» (Եզեկ., Ա 10) և թե՛ «յուրաքանչյուրը վեց թև ունեն» (Եսայի, 2 2). «Եվ նրանց մարմինները, թե՛ ձեռքերը, թե՛ թևերը, ինչպես նաև անիվները, չորս կողմից լիքն էին աչքերով» (Եզեկ., Ժ 12): Թեև մարգարեն նկարագրել է նրանց տեսքը, մենք կարգալով

դեռևս չենք կարողանում այն հասկանալ: Արդ, եթե մենք չենք կարողանում պատկերացնել Աստծու գահը, որ նկարագրել է մարգարեն, ապա ինչպե՞ս պիտի պատկերացնենք նրա վրա բազմողին՝ աներևույթ և անպատմելի Աստծուն: Անկարելի է, որ մտքի քննությունը հասկանանք և ըմբռնենք Աստծու բնությունը: Մենք կարող ենք Նրան միայն փառաբանել՝ տեսնելով Նրա ստեղծագործությունները:

4. Այս ամենը ձեզ ասում եմ, քանզի այդ է պարտադրում Հավատի Հանգանակի շարունակությունը, երբ ասում ենք. «Կհավատամ միակ Աստծուն՝ Ամենակալ Հոր, երկինքն ու երկիրը և բոլոր տեսանելիներն ու աներևույթները Արարողին», որպեսզի հիշենք և վկայենք, թե Նա է մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը և երկինքն ու երկիրը ստեղծողը: Որպեսզի ապահովվենք անաստված հերետիկոսների մոլորություններից, որոնք համարձակվում են անթույլատրելի անուններ և հատկություններ վերագրել աշխարհն ամենահանճարեղ եղանակով արարողին: Նրանք տեսնում են լուրջ մարմնական աչքերով, իսկ նրանց հոգու աչքերը կուրացած են:

5. Նրանք ի՞նչ թերություն են գտնում Աստծու այսքան մեծ ստեղծագործության մեջ: Նրանք պետք է զարմացած հիանային և ճանաչեին երկնքի խորքերը: Նրանք պետք է երկրպագեին Նրան, «Ով կանգնեցրել է երկինքը իբրև կամար» (Եսայի, Խ 22): Նրան, Ով հեղուկ ջրային շերտերից ստեղծեց անշարժ հենարան երկնքի համար: Քանզի Աստված ասաց. «Թող տարածություն առաջանա ջրերի միջև, և ջրերը թող բաժանվեն ջրերից» (Ծննդ., Ա 6): Աստված այդ ասաց մեկ անգամ, և երկինքը կանգնեց և չի ընկնում: Ջուր է երկնքի տարրը և կրակից են այն ամենը, ինչ գտնվում է նրանում. այսինքն՝ արևը, լուսինը և աստղերը: Արդ, ինչպե՞ս են շարժվում կրակե միջոցները ջրային կա-

մարում: Եթե որևէ մեկը կասկածում է այն պատճառով, որ ջուրն ու կրակը հակադիր տարրեր են, թող հիշի, որ Մովսեսի ժամանակ Եգիպտոսում, ահավոր կարկուտի հետ թափվում էր նաև կրակ: Եվ թող տեսնի Աստծու ամենահանճար արարումը: Ինչո՞ւ երկինքը պատրաստեց ջրերից: Որովհետև պետք է հողը մշակվեր, և անհրաժեշտ էր ջուր, որպեսզի երբ ոռոգելու համար անձրևի կարիք զգացվի, բնությունը դրան պատրաստ լինի երկնքից:

6. Մի՞թե մարդ չի հիանա՝ դիտելով Աստծու արարած հրաշալիքը՝ արևը: Այն նման է մի փոքր անոթի, որը սակայն բովանդակում է մեծ ուժ: Երևալով արևելքից՝ իր լույսն ուղարկում է մինչև արևմուտք: Սաղմոսերգուն, նկարագրելով արևի ծագելը, ասել է. «Ինքն ասես փեսա լինի, որ ելնում է իր առագաստից» (Սաղմ., ԺԸ 6): Այսպես է նա նկարագրում արևի գեղեցկությունը և համաչափությունը, երբ այն առավոտյան երևում է մարդկանց: Կեսօրին հաճախ փախչում ենք նրանից, քանզի ուժեղ է կիզում: «Մինչդեռ արևածագին բոլորին հաճելի է, և նրան նայողների համար նմանվում է փեսայի»: Ու տե՛ս նրա գործունեությունը, ավելի ճիշտ իմաստությունը՝ Նրա, Ով իր հրամանով սահմանել է արևի երթուղին: Թե ինչպես նա, ավելի բարձրանալով, օրերը դարձնում է ավելի երկար՝ հնարավորություն տալով մարդկանց աշխատելու. ինչպես ձմռանը կրճատում է իր շրջանը, որպեսզի ձմռան ցուրտը երկար չլինի, որով գիշերները դառնում են երկար, և մարդիկ հանգստանալու երկար ժամանակ կունենան: Նա նպաստում է նաև հողի պտղաբերությունը: Տես, թե ինչքան կանոնավոր փոփոխվում է օրվա տևողությունը: Ամռանը օրերը երկարում են, իսկ ձմռանը՝ կարճանում: Մինչդեռ գարնանը և աշնանը ցերեկը հավասար է գիշերվան: Այդ մասին սաղմոսերգուն ասել է. «Օրը օրվան միտք է հաղորդում, և գիշերը գիշերվան գիտություն է ցույց

տալիս» (Սաղմ., ԺԸ 3): Հերետիկոսներին, որոնք չեն ուզում ճշմարտությունն իմանալ, նրանք գրեթե ճշում են իրենց զվարթ գործունեությունը և ասում, թե չկա ուրիշ մի Աստված, որը ստեղծել և կարգավորել է աշխարհում ամեն ինչ, այլ կա մեկ ճշմարիտ և միակ Աստված:

7. Մի հանդուրժեք նրանց, ովքեր ասում են, թե ուրիշն է արարել լույսը, ուրիշը՝ խավարը: Հիշեցեք Եսայուն, որ ասում է. «Ես եմ, որ հաստատեցի լույսը և ստեղծեցի խավարը» (Եսայի, ԽԵ 7): Ո՛վ մարդ, ինչո՞ւ ես տրտմում այդ մասին: Ինչո՞ւ քո հոգին դժվարանում է ընդունել, որ գիշերը առանձին մի ժամանակահատված է, որն Աստված մարդուն տվել է հանգստանալու նպատակով: Տերերը երբեք չէին թողնելու, որ ծառան հանգստանար, եթե նրանց չխանգարեր գիշերվա խավարը: Օրվա ընթացքում հաճախ հոգնելով՝ գիշերը հանգստանում ենք. և նա, ով նախորդ օրը խիստ հոգնած է լինում, գիշերվա հանգստից հետո հաջորդ առավոտյան լինում է առույգ և աշխույժ: Ի՞նչն է ավելի պիտանի իմաստություն ձեռք բերելու համար, քան գիշերը: Շատ հաճախ գիշեր ժամանակ խորհում ենք Աստծուն առնչվող բաների մասին: Գիշեր ժամանակ է, որ կարդում ենք Աստծու խոսքը և թափանցում դրա էություն մեջ: Ո՞ր ժամանակ է մեր միտքը տրամադրված աղոթքի և սաղմոսերգություն: Մի՞թե ոչ գիշեր ժամանակ: Շատ հաճախ ո՞ր ժամանակ ենք անդրադառնում մեր մեղքերին: Մի՞թե ոչ գիշերները: Ուրեմն, չհավատանք, որ Աստծուց բացի մեկ ուրիշն է գիշերը ստեղծողը: Քանզի փորձն ապացուցեց, որ գիշերը Աստծու պիտանի պարզեն է՝ տրված մարդուն:

8. Նրանք պետք է ապշեին ու հիանային ոչ միայն արևի և լուսնի, այլև աստղերի բազմություն արարումով, որոնք առանձին խմբերով շարժվում են՝ այսքան կարգավորված:

Պետք է հիանալ նրանց ուղեծրով, որը չի հանդիպում ոչ մի խոչընդոտի՝ հիանալ նրանց ծագելով, որը կատարվում է հարմարագույն ժամին: Հիանալ, որ կան աստղեր, որ նշում են ամառը, և ուրիշներ, որ նշում են ձմեռը: Կան, որ մեզ նշում են ցանքի ժամանակը, կան, որ նշում են ծովագնացութան ժամանակը: Մարդը, որ նստած նավի մեջ, նավում է անվերջ ալիքների վրայով, կարող է իր նավը ուղղել՝ աստղերը դիտելով: Այս ամենի մասին Սուրբ Գիրքը լավ է ասել. «Եվ թող դրանք լուսատուներ լինեն երկնքում, որպեսզի լուսավորեն երկիրը, ցույց տան տարիները և ժամանակները» (Հմմտ. Ծննդ., Ա 14), և չձառայեն աստղագիտության և կուսակաշտական դիցաբանության: Տես, ինչքան գեղեցիկ կերպով մեզ պարզեցում է օրվա լույսը, որը բացվում է աստիճանաբար: Մենք արևը չենք տեսնում ծագելու պահից, այլ նախ քիչ լույս է լինում, որպեսզի աչքը կարողանա դիմավորել արևի ճառագայթների առավել մեծ գործընթացը, ինչպես նաև գիշերվա խավարը մեղմում է լուսնի ցուրը:

9. «Ո՞վ է հայրն անձրևի, և ո՞վ է, որ ծնունդ է տվել ցողի շողերին» (Հոբ, ԼԸ 28): Ո՞վ օդը խտացրեց ամպերի և հրամայեց պահել անձրևի ջրերը: Ո՞վ երբեմն ոսկեբոսոր և լուսավոր գույներով դրանք բերում է հյուսիսից: Ո՞վ ձևափոխում է և տալիս է դրանց հազար ու մի տեսք: Ո՞վ ամպերը հաշվելու իմաստությունն ունի, որի համար Հոբն ասել է. «Նա գիտե ամպերի էությունը» (Հոբ, ԼԷ 16), և երկինքը իջեցրեց երկրի վրա: Ասում է նաև. «Ո՞վ է հաշվում ամպերը իմաստությամբ» (Հոբ, ԼԸ 37), և «իր ամպերի մեջ ջուրն է ծրարում և չի պատռվում մեզը նրանց տակ» (Հոբ, ԼԳ 8): Ամպերում այնքան ջուր կա, բայց ամպերը չեն պատռվում, այլ ջուրը երկիր է իջնում այնքան կարգավորված: «Ո՞վ իր շտեմարանից ամպեր կհանի» (Սաղմ., ՃԼԴ 7), և ո՞վ, ինչպես ասացինք, «ծնունդ է տվել ցողի շողերին»

(Հոբ, ԼԸ 28): «Ո՞ւմ արգանդից է դուրս գալիս սառույցը» (Հոբ, ԼԸ 29), որի էությունը ջրային է, բայց ներգործությունը՝ քարին հատուկ: Ուրիշ անգամ ջուրը դառնում է ձյուն, սպիտակ բրդի նման (Սաղմ., ՃԽԵ 5): Ուրիշ դեպքում ջուրը դառնում է կարծր, քարի նման: Միատեսակ է ջրի բնությունը, բայց նրա ներգործությունը՝ բազմապիսի: Ջուրը այգիներում դառնում է գինի, որը զվարթացնում է մարդու սիրտը, դառնում ձեթ ձիթենու մեջ, որը պայծառացնում է մարդու դեմքը: Վերածվում է անգամ մարդու սիրտը գորացնող հացի և շատ ուրիշ պտուղների:

10. Այս ամենից հետո էլ ի՞նչ պետք էր անել: Արարչին չարախոսե՞լ, թե՞ առավել ևս երկրպագել: Եվ տակավին չեմ նշել նրա իմաստության անտեսանելի ստեղծագործությունները: Տե՛ս գարնան ծաղիկները. բոլորը միևնույն բնույթն ունեն, բայց տեսքով տարբեր են: Վարդի կարմրաբոսոր գույնը և շուշանի ձերմակությունը: Բոլորը տնկված են նույն հողում և ոռոգվում են նույն անձրևով: Բայց ո՞վ է դրանք բաժանում տեսակների, ո՞վ է դրանք արարողը: Նկատիր ճշգրտությունը: Բոլոր ծառերն ունեն միևնույն բնությունը: Բայց դրանց մի մասը գործածվում է ծածկի համար, մյուս մասը՝ տարբեր պտուղներ արտադրելու համար: Եվ այս ամենը միևնույն Արարչի ստեղծածներն են: Նույն այգու ճյուղերի մի մասը դառնում է վառելափայտ, մյուս մասը ծլարձակում է և պտղաբերում: Նույն հողից են ելնում բոլոր սողունները, գազանները և անասունները, փայտը և ուտելիքը, ոսկին և արծաթը, պղինձը, երկաթը և քարերը: Ջրի բնույթից են ծագում և՛ ջրային կենդանիները, և՛ թռչունները: Բայց նույն Արարիչն այնպես է արել, որ ինչ հեշտությամբ որ ջրում ապրող կենդանիները լողում են ջրում, նույն հեշտությամբ էլ թռչունները թռչում են օդում:

11. «Ահա ծովը՝ մեծ և լայնատարած, որի մեջ վխտացող կենդանիներին թիվ չկա» (Սաղմ., ՃԳ 25): Ո՞վ կարող է պատմել ծովում եղած ձկների գեղեցկությունը: Ո՞վ կարող է նկարագրել կես ձկների մեծությունը և երկկենցաղ կենդանիների էությունը, որոնք ապրում են և՛ ծովում, և՛ ցամաքի վրա: Ո՞վ կարող է նկարագրել ծովի խորությունն ու լայնքը, կամ հսկայական ալիքների թափը: Բայց այդ կանգ է առնում այն սահմանին, որ նշել է Արարիչը՝ ասելով. «Կգաս մինչև այդ վայրն ու այլևս առաջ չես անցնի. այնտեղ քո մեջ կխորտակվեն ալիքները քո» (Հոբ, ԼԸ 11): Այս ծովը, կամենալով ցույց տալ, թե ենթարկվում է Արարչի կարգադրությանը, երբ իր ալիքներով դուրս է գալիս ափերից, այնտեղ թողնում է նկատելի մի հետագիծ, ասես, ցույց տալով իրեն դիտողներին, թե չի խախտել Արարչի դրած պայմանները:

12. Ո՞վ կարող է քննել օդում թռչող թռչունների բնույթը: Ինչպե՞ս նրանցից ոմանք երաժշտական լեզու ունեն, մյուսները բազմագույն նկարեն փետուրներ և ուրիշներ, ինչպես բազեն, թռչում են բարձր և անշարժ մնում են եթերում: Ո՞վ կարող է դիտել անծայր երկինք բարձրացած արծվին: Եթե դու անկարող ես հասկանալ ամենամանրան թռչունին, որ բարձրացել է երկինք, ապա ինչպե՞ս ես ուզում հասկանալ ամբողջ աշխարհն Արարողին:

13. Մարդկանցից ո՞վ գիտե բոլոր գազանների թեկուզև անունները միայն: Կամ ո՞վ կարող է քննել դրանց բնակավայրերը: Արդ, եթե գազանների անգամ անունները չգիտենք, ապա ինչպե՞ս կարող ենք հասկանալ դրանք ստեղծած Արարչին: Աստուծու կարգադրությունը մեկն է եղել. «Թող երկիրն արտադրի չորքոտանի կենդանիներ իրենց տեսակներով, սողուններ և գազաններ իրենց տեսակներով» (Ծննդ., Ա 24): Աստուծու այս միակ հրամանով նույն

հողից առաջացան կենդանիների տարբեր տեսակներ, յուրաքանչյուրը տարբեր բնույթի, ինչպես ամենաընտանի ոչխարը և մսակեր առյուծը: Կենդանիների անբան տարբեր շարժումները մարդկանց տարբեր հակումների նմանակումներն են: Այսպես, ազվեսը դրսևորում է մարդկանց նենգությունը, օձը՝ բարեկամների թունոտ լեզուն, իսկ խրխնջացող ձին հիշեցնում է անբարո երիտասարդներին: Արագաշարժ մրջյունը արթնացնում է ծուլլին և անբանին: Եթե որևէ երիտասարդ գործ չի կատարում, դաս է վերցնում անբան կենդանիներից, և Սուրբ Գիրքը հանդիմանում է նրան՝ ասելով. «Մրջյունի մոտ գնա, ո՞վ ծուլլ, նախանձիր նրա գործերին և իմաստուն եղիր նրանից ավելի» (Առակ., Զ 6): Եվ եթե տեսնես, ասում է Սուրբ Գիրքը, ժամանակին իր համար ուտելիք է պահեստավորում, օրինակիր նրան և ապագայի համար բարի գործերի գանձեր հավաքիր: Եվ դարձյալ՝ «մեղուի մոտ գնա, տե՛ս, թե ինչպես գործունյա է նա» (Առակ., Զ 8): Տե՛ս, թե ինչպես նա տարբեր ծաղիկներից հավաքում է ծաղկափոշին ու քեզ համար մեղր պատրաստում: Այդպես դու ևս, Սուրբ Գրքերից հավաքելով աստվածային ճշմարտությունները, ջանա քո փրկության մասին և ասա. «Որքան քաղցր են քո խոսքերն իմ քիմքին՝ ավելի քաղցր, քան մեղրն իմ բերանին» (Սաղմ., ձժԸ 103):

14. Հետևաբար, Արարիչը մի՞թե արժանի չէ փառաբանվելու: Ի՞նչ ես կարծում: Եթե դու չգիտես դրանց յուրաքանչյուրի էությունը, մի՞թե անմիտ է դրանց արարումը: Մի՞թե կարող ես իմանալ ամեն մի խոտի ներգործությունը: Մի՞թե կարող ես հասկանալ ամեն մի կենդանու օգտակարությունը: Անգամ օձի թուլյնը, որպես դեղամիջոց օգտագործվելով, փրկել է շատ մարդկանց կյանքը: Բայց կասես, թե օձը ահավոր կենդանի է: Աստուծու երկյուղն ունեցիր քո մեջ, և օձը չի կարող քեզ ոչ մի վնաս պատճառել: Կարիճը խայթում է: Բայց քո մեջ ունեցիր Տիրոջ երկյուղ

ղը, այն քեզ չի խայթի: Առյուծը արյունարբու է: Բայց դու եղիր աստվածավախ, և առյուծը քո կողքին հանգիստ կնստի, ինչպես նստեց Դանիելի մոտ: Իրոք, զարմանալի է կենդանիների ներուժը, ներգործությունը: Նրանցից ումանք, օրինակ՝ կարիճը, թուլյնը պահում են իրենց խայթոցում, մինչդեռ մյուսների ուժը ատամներն են, իսկ ուրիշներ հարձակվում են ատամներով, իսկ արքայիկ կոչված թռչնի ուժը իր նայվածքի մեջ է: Արարչուծյան այս բազմազանությունից դու ճանաչիր Արարողի աստվածային ուժը:

15. Այս ամենը դու գուցե չգիտես: Թող նաև քեզ քեզնից դուրս գտնվող կենդանի օրգանիզմները: Վերադարձիր քո անձին և քո գոյությունից պատկերացում կազմիր Արարչի մասին: Քո մարմնի վրա ի՞նչ կա անտեղի և անիմաստ: Սանձիր քեզ, և ոչ մի վատ բան դուրս չի գալու քո մարմնի որևէ անդամից: Սկզբնապես դրախտում Ազամը մերկ էր Եվայի հետ, բայց այնտեղից վտարվեց իր մարմնի մասերի պատճառով: Մարմնի անդամները չեն մեղքի պատճառները, այլ նրանք, ովքեր անդամները վատ են օգտագործում: Իմաստուն է մարմնի անդամների Արարիչը: Ո՞վ է կնոջ արգանդն այնպես ստեղծել, որ որդեծնություն դեպքում այնքան հարմար ընդարձակվի: Ո՞վ այնտեղի անշունչը դարձնում է շնչավոր: Ո՞վ միահյուսեց մեր ներվերն ու ոսկորները: Ո՞վ մեր մսեղեն մարմինը պատեց մաշկով: Ո՞վ, երբ մանուկը ծնվեց, ծծերից կաթի աղբյուր է բխեցնում: Ինչպե՞ս է մանուկը դառնում պատանի, ապա՝ երիտասարդ, հետո՝ այր և ապա փոխվում է ծերունու, առանց ճշգրտություն հասկանալու ամենօրյա փոփոխությունը, որ կատարվում է իր հետ: Այդ ինչպե՞ս սնունդի մի մասը դառնում է արյուն, մի մասը՝ միս, մի մասն էլ արտանետվում է: Ո՞վ է անդադար աշխատեցնում սիրտը: Ո՞վ է կուպերով պաշտպանել աչքերի պարզությունը, որոնց հիանա-

լի և բազմաբարդ կառուցվածքը դժվարություններ կարողանում են բացատրել բժշկական հաստատվոր գրքերը: Ո՞վ է ամբողջ մարմնին մեկ շունչ տվել: Այս բոլորն իմանալով՝ կարող ես ճանաչել իմաստուն կառուցողին և Արարչին:

16. Այս ամենով խոսքը երկարեց, թեև շատ բան եմ բաց թողել, մանավանդ դրանք, որոնք առնչվում են անմարմիններին և անտեսանելիներին: Ատիր նրանց, ովքեր հայհոյում են իմաստուն և բարի վարպետին: Իսկ այն ամենից, ինչ ասացինք, և դեռ ինքդ պիտի կարդաս ու հայտնաբերես, դու կզգաս և կհասկանաս Արարչին: Երկյուղածությամբ պիտի երկրպագես երևելյաց և աներևութից Արարչին: Եվ երախտապարտ ու փառաբանող ձայնով և անլուծի շրթներով ու սրտով փառաբանես Աստծուն՝ ասելով. «Որքան մեծ են գործերը քո, Տեր. ամեն ինչ իմաստությամբ ստեղծեցիր» (Սաղմ., ՃԳ 24): Ուստի քեզ վայել է փառք, պատիվ և զորություն, այժմ և միշտ, հավիտյանս հավիտենից: Ամեն:





## ՈՒՍՈՒՅՈՒՄ ՏԱՄՆԵՐՈՐԴ

### Արված Երուսաղեմում՝ «Եվ մեկ Տեր Հիսուսին» հատվածի մասին

Ընթերցում Կորնթացիներին ուղղված Առաջին թղթից. «Բայց մեզ համար միայն մեկ Աստված կա՝ Հայր, որ ստեղծել է ամեն բան, և մենք ապրում ենք Նրանով. և՛ մեկ Տեր Հիսուս Քրիստոս, որի միջոցով ստեղծվեց ամեն ինչ, և մենք ապրում ենք Նրանով» (Ա Կորնթ., Ը 5-6):

1. Ովքեր սովորել են հավատալ Մեկ Աստծու՝ Հայր Ամենակալին, պարտավոր են հավատալ նաև Միածին Որդուն: Քանզի նա, «ով ուրանում է Որդուն, իր մեջ չունի նաև Հորը» (Ա Հովհ., Բ 23): Հիսուս ասել է. «Ես եմ դուռը» (Հովհ., Ժ 9), և «ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ ինձանով» (Հովհ., ԺԴ 6): Եթե ուրանաս դուռը, քո առաջ կփակվի Հորը ճանաչելու ճանապարհը: «Ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ Որդին, և նա, ում Որդին ուզենա հայտնել» (Մատթ., ԺԱ 27): Եթե ուրանաս նրան, ով բացահայտում է Հորը, դու կմնաս անգիտություն մեջ: Ավետարանում հստակ ասված է. «Ով հավատում է Որդուն, ընդունում է հավիտենական կյանքը, իսկ ով չի հնազանդվում Որդուն, կյանք չի տեսնի, այլ նրա վրա կմնա Աստծու բարկությունը» (Հովհ., Գ 36): Քանզի Հայրը զայրանում է, երբ չենք ընդունում Միածին Որդուն: Քանզի վիրավորական է թագավորի համար, երբ անարգվում է անգամ նրա հասարակ զինվորը. առավել ևս, երբ անարգվում է իր զինակիրներից կամ ընկերներից որևէ մեկը: Իսկ ո՞վ կկարողանար փափկացնել հայր արքայի սիրտը, եթե որևէ մեկը անարգեր նրա միածին որդուն:

2. Եթե որևէ մեկն ուզում է Աստծու հանդեպ լինել բարեպաշտ, թող երկրպագի Նրա Որդուն, քանզի այլ կերպ Հայր Աստվածը չի ընդունում նրա պաշտամունքը: Հայր Աստվածը երկնքից որոտալի ձայնով ասաց. «Դա է Իմ սիրելի Որդին, որն ունի Իմ ամբողջ հաճությունը» (Մատթ., Գ 18): Հայրը հաճեցավ Որդիով: Եթե դու ևս չես հաճելու, կյանք չես ունենա: Մի շփվիր հուդայականների հետ, որոնք խորամանկորեն ասում են, որ կա միայն մեկ Աստված: Քանի որ սովորեցիր, թե կա մեկ Աստված, ապա իմացիր, որ կա նաև Աստծու Միածին Որդին: Ես չեմ առաջինը այդ ասում, այլ ասել է Սաղմոսերգուն՝ ի դեմս Որդու. «Տերն ինձ ասաց՝ Դու իմ որդին ես» (Սաղմ., Բ 7): Ուրեմն, մի՛ լսիր, թե հրեաները ինչ են ասում, այլ այն, ինչ ասում են մարգարեները: Մի՞թե զարմանում ես, որ նրանք չեն հավատում մարգարեներին: Նրանք, որ քարկոծելով սպանեցին մարգարեներին:

3. Դու հավատա մեկ Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Միածին Որդուն: Մենք ասում ենք, թե Որդին մեկն է, չեչտեղու համար, որ Հայր Աստվածը ուրիշ որդիներ չծնեց: Ասում ենք, թե Որդին մեկն է, որպեսզի ուրիշներին ևս չվերագրես որդիություն բնորոշումը, քանի որ Գրքում Որդին կոչվում է «Դուռ» (Հովհ., Ժ 7): Բայց չկարծես, թե փայտե դուռ, այլ Դուռ, որ կյանքի աղբյուր է. այն կարող է զանազանել մտնող-ելնողներին: Կոչվում է նաև «Ճանապարհ» (Հովհ., ԺԴ 6), բայց ոչ այնպիսին, որի վրայով քայլում են մարդիկ: Այն հոգևոր ընթացք է, որը տանում է երկնային Հոր մոտ: Նրան կոչում ենք նաև «Ոչխար» (Գործք, Ը 32): Բայց ոչ թե անբան ոչխար, այլ ոչխար, որն իր արյամբ աշխարհը փրկում է մեղքերից և որը տարվում է իրեն զոհաբերողի առաջ: Այդ ոչխարը կոչվում է նաև «Հովիվ», որն ասում է. «Ես եմ բարի Հովիվը» (Հովհ., Ժ 11): «Ոչխար»՝ իր մարդկային բնույթի համար, իսկ Հովիվ՝

իր աստվածային մարդասիրությամբ: Ուզում ես համոզվե՞լ, որ կան նաև բանական ոչխարներ: Լսիր մեր Փրկչին. «Ահա ես ձեզ ուղարկում եմ որպես ոչխարներ գայլերի մեջ» (Մատթ., Ժ 16): Քրիստոս կոչվում է նաև «առյուծ»: Ոչ թե արյունարբու: Դրանով բնորոշվում է Աստվածամարդու արքայավայել, հզոր և հավատարիմ էությունը: Առյուծ է կոչվում նաև ի հակադրություն հակադիր առյուծին, որը ոռնում է և խժռում մոլորյալներին: Նա, որպես հզոր առյուծ, փրկում է իրեն հավատացողներին և տրորում հակառակորդ սատանային: Նա կոչվում է նաև «քար», բայց ոչ թե քարհանքից մարդու ձեռքով հանված անշունչ քար, այլ անկյունաքար, որին հավատացողը ամօթով չի մնա:

4. Նա կոչվում է «Քրիստոս, Օծյալ» (Մատթ., Ա 16), բայց ոչ թե մարգարեների և թագավորների նման մարդկանց ձեռքով է օծված քահանայապետություն, այլ Հայր Աստծու կողմից հավիտենապես, հանուն մարդկանց: Կոչվում է նաև «մեռյալ» (Հայտն., Ա 18): Բայց նա չի մնացել դժոխքում մեռյալների հետ, այլ միակ ազատը՝ մեռյալների մեջ: Կոչվում է նաև «մարդու որդի» (Մատթ., ԺԶ 13). ոչ թե այն պատճառով, որ Նա մեզ բոլորիս նման ծնվեց մարդկայնորեն, այլ որովհետև Նա է, որ գալու է ամպերի վրա՝ դատելու կենդանիներին և մեռյալներին (Մատթ., ԻԴ 30): Կոչվում է «Տեր» (Ղուկ., Բ 11), ոչ ինչպես սովորաբար «տեր» կոչվում են մարդիկ, այլ միակն է մարդկանց մեջ, որ տիրություն ունի որպես բնական և աստվածային հավիտենական հատկություն: Կոչվում է «Հիսուս» (Մատթ., Ա 21), որովհետև, ինչպես անունն է վկայում, Նա մարդկանց փրկարար բուժումն է պարգևում: Կոչվում է նաև «Որդի» (Սաղմ., Բ 7), որովհետև Նա ոչ թե որդեգրվել է երկրի վրա, այլ ծնվել է բնական ծննդով՝ Հայր Աստծուց, նույն բնությամբ և էությունով:

Դեռ ուրիշ շատ անուններ են տրվել մեր Փրկչին: Եվ որպեսզի անունների այս շատությունից դու չկարծես, թե եղել են շատ որդիներ, ինչպես պնդում են հերետիկոսները և ասում, թե ուրիշն է Հիսուս, ուրիշն է Քրիստոս, ուրիշն է Դուռ և այլն, քեզ կպահպանի Հավատի Հանգանակը, որը սովորեցնում է հավատալ Մեկ Տեր Հիսուս Քրիստոսին, քանզի այդ բոլոր անվանումները վերաբերում են միևնույն անձին: Անվանումները թեև շատ են, բայց ենթական մեկն է:

5. Նա յուրաքանչյուրիս տարբեր եղանակներով դառնում է Փրկիչ մեր օգտի համաձայն: Ուրախություն կարիք ունեցողների համար Նա դառնում է խաղողի որթ (Հովհ., ԺԵ 1): Երկնքի թագավորություն մտնելու կարիք ունեցողների համար դառնում է «դուռ»: Ում անհրաժեշտ է, որպեսզի իր աղոթքները հասնեն Աստծուն, Նա այնտեղ կանգնած է որպես միջնորդ քահանայապետ: Մեղավորների համար դառնում է զոհաբերման ոչխար: Բոլորի համար դառնում է ամեն ինչ՝ միշտ մնալով նույնը իր բնությունով: Եվ մինչ իր էությունով Նա մնում է Աստված և պահում է անեղծ և անայլայլ Աստվածորդու իր դիրքը, Նա որպես ամենակարող բժիշկ և ուսուցիչ, անդրադառնում է յուրաքանչյուրիս ամեն մի թուլությունը և կարիքներին առանձին ձևով: Նա ճշմարիտ Տեր է ոչ այն պատճառով, որ տերություն դիրքը Նա նվաճել է իր ջանքերով, այլ դրա Տերն է իր աստվածային էությունով որպես բնական հատկանիշ: Իր Հայր Աստծու կամքի հետ բացարձակ համաձայնությունով Նա իշխում է իր բոլոր արարածների վրա: Մենք, որպես տերեր, իշխում ենք համարժեք և հավասարազոր մարդկանց վրա: Հաճախ երիտասարդ տերը իշխում է տարիքով ավելի ավագ ծառաների վրա: Բայց մեր Տեր Հիսուս Քրիստոսի դեպքում տեր լինելը այդպես չէ: Նա նախ արարիչ է, ապա Տեր, նախ իր Հոր կամքով արարեց ամեն ինչ, ապա տիրում է իր իսկ ստեղծածների վրա:

6. Տեր Քրիստոսը Նա է, Ով ծնվեց Դավթի քաղաքում: Ուզում ես իմանալ նաև, որ Հոր հետ, իր մարդեղությունից առաջ էլ Քրիստոս եղել է Տեր: Ուստի որպեսզի ոչ միայն հավատով ընդունես այն, այլև ապացույցներ ունենաս Հին Կտակարանից, տե՛ս առաջին՝ Ծննդոց, գիրքը: Աստված ասում է. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով». ոչ թե իմ կերպարանքով, այլ՝ մեր կերպարանքով (Ծննդ., Ա 26): Ապա, Ադամին ստեղծելուց հետո, ասում է. «Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով» (Ծննդ., Ա 27): Ուրեմն, աստվածություն պատիվը չսահմանափակեց միայն Հայր Աստծու անունով, այլ ընդգրկեց նաև Որդուն, որպեսզի հայտնի, որ մարդը միայն Հայր Աստծու արարածը չէ, այլ նաև՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որը նույնպես ճշմարիտ Աստված է: Նույն Տեր Հիսուս Քրիստոսը, որ գործակցում է Հայր Աստծուն աշխարհի ստեղծագործության մեջ, գործակցեց նաև, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, Սողոմի կործանման ժամանակ: «Տերը ծծումբ ու կրակ թափեց Սողոմի ու Գոմորի վրա» (Ծննդ., ԺԹ 24): Ինքը, Տեր Հիսուս Քրիստոսն է դարձյալ, որ երևաց Մովսեսին, ինչպես որ Մովսեսը կարող էր Նրան տեսնել (Ելք, Գ 2): Քանզի Տերը մարդասեր է և միշտ պատասխանում է մեր թուլություններին և տկարություններին:

7. Որպեսզի իմանաս, թե Նա է եղել Մովսեսին երևացողը, ընդունիր Պողոսի վկայությունը. «Եվ բոլորն էլ նույն հոգևոր ըմպելիքը խմեցին, որովհետև խմում էին հոգևոր այն վեմից, որ գնում էր նրանց հետ, և այն վեմը Ինքը՝ Քրիստոսն էր» (Ա Կորնթ., Ժ 4): Եվ դարձյալ ասում է Մովսես «հավատով թողեց Եգիպտոսը» (Եբր., ԺԱ 27): Դարձյալ ասում է Մովսեսը «կարևոր համարեց Քրիստոսի դրած նախատիքները, քան Եգիպտոսի գանձերի առատությունը» (Եբր., ԺԱ 26): Ինքը Մովսեսն ասաց Աստծուն. «Ինձ հայտնապես երևա» (Ելք, ԼԳ 13): Տեսնո՞ւմ ես, որ

այդ ժամանակ մարգարեները ևս տեսնում էին Քրիստոսին, յուրաքանչյուրն՝ իր կարողության համեմատ: «Ինձ հայտնապես երևա, որպեսզի քեզ իմանամ» (Ելք, ԼԳ 13): Եվ Աստված ասում է. «Մարդ չի կարող տեսնել իմ երեսն ու կենդանի մնալ» (Ելք, ԼԳ 20): Ուստի, քանի որ մեզնից ոչ ոք չէր կարող տեսնել Աստծուն և ապրել իր մարդկային բնույթով, Աստված վերցրեց մարդկային կերպարանք, որպեսզի կարողանանք այդ միջոցով տեսնել Նրան և ապրել: Եվ երբ կամեցավ իր Աստվածամարդկային դեմքը մի փոքր ցուլց տալ փառավորված, Նրա դեմքը փայլեց արևի նման, աշակերտները վախեցած ընկան գետին (Մատթ., ԺԷ 2-6): Եվ եթե մարմնեղեն երեսը փայլեց ոչ ըստ կարողության, այլ ինչքան որ կարող էին այն ընկալել աշակերտները և նրանք վախեցած ընկան գետին, ապա ինչպե՞ս կարող է մարդն ընկալել Իր իսկ Աստվածային բնությունը: Մեծ բան ցանկացար, Մովսես, ասում է Աստված: Ես կկատարեմ քո անհազ ցանկությունը, բայց քո ուժերի ներածին համեմատ: «Ես քեզ կդնեմ ժայռի փոքրիկ ձեռպի մեջ» (Ելք, ԼԳ 22): Ինչքան որ սահմանափակ են քո կարողությունները, այնքան սահմանափակ կլինի քո տպավորությունը իմ փառքի մասին:

8. Այս ամենով ապահովիր քեզ հուղայականների հետ խոսելիս: Քանզի մեր նպատակն է ապացուցել, որ Տեր Հիսուս Քրիստոսը եղել է Հոր կողքին: Ուրեմն, Տերը Մովսեսին ասում է. «Ես իմ փառքով կանցնեմ քո առաջից. քո առաջ կկոչեմ իմ անունը՝ Տեր» (Ելք, ԼԳ 19): Եթե ինքն է Տերը, ապա ո՞ր Տիրոջը պիտի անունով կոչի: Տեսնո՞ւմ ես ինչպիսի ծածկամտություն էր ուսուցանում Հոր և Որդու պաշտամունքի մասին սկզբունքը: Եվ դարձյալ շարունակություն մեջ գրված է. «Տերն իջավ ամպի մեջ, կանգնեց այնտեղ՝ նրա դիմաց, ու կոչեց իր անունը՝ Տեր»: Տերն անցավ Մովսեսի առաջ՝ ասելով. «Տեր Աստված եմ, գլխացող և

ողորմած, համբերատար, բարեգուլթ ու ճշմարիտ, որ արդարությունն է պաշտպանում, իր ողորմածությունն է ցուցաբերում հազարավոր սերունդների հանդեպ, վերացնում անիրավությունները, անօրենություններն ու մեղքերը» (Ելք, ԼԴ 5-7): Ապա Մովսեսը, խոնարհվելով ու երկրպագելով Տիրոջ առաջ, որ Հայր Աստծուն կոչել էր Տեր, ասաց. «Ուրեմն, գնանք մեզ հետ, Տեր» (Ելք, ԼԴ 8-9):

9. Այս առաջին ապացույցն ունես: Ընդունիր այժմ ավելի բացահայտ երկրորդը: «Տերն իմ Տիրոջն ասաց. նստիր իմ աջ կողմում» (Մաղմ., ձԹ 1): Տերն այս խոսքն ասում է Տիրոջ և ոչ թե՛ ծառայի: Ամեն բանի Հոր և Իր Որդուն, Ում որ ենթարկել էր ամեն ինչ: Եվ երբ ասում է, թե ամեն ինչ հնազանդվել է Նրան, ակնհայտ է, որ նկատի ունի բոլոր արարածները, բացի Հայր Աստծուց, որն ամեն ինչ հնազանդեցրել է Իր Որդուն: Վերջին հաշվով Հորը պիտի հնազանդվի նաև Ինքը՝ Որդին, որպեսզի լինի մշտապես և բոլորի համար Աստված: Ամեն ինչի Տերը Միածին Որդին է՝ Աստծու հնազանդ Որդին: Նա չի հափշտակել տերությունը, այլ այն ստացել է Հայր Աստծու կամքով, Հայր Աստվածը ինքնակամ այդ տերությունը ճանաչում է որպես Որդուն բնորոշողը: Ո՛չ Որդին է բռնությունը հափշտակել Տերության պատիվը, ո՛չ էլ Հայրը նախանձեց այդ համատիրության համար: Այդ Նա է ասել. «Ամեն ինչ ինձ տրվեց իմ Հորից» (Մատթ., ԺԱ 27): Եվ քանի որ ինձ տրվեց, ես Տերն եմ բոլորի՝ առանց իմ Հորը զրկելու տերության արժանիքից:

10. Ուրեմն, Տեր է Աստծու Որդին, որը, ինչպես հրեշտակն է հաղորդել հովիվներին, ծնվել է Հրեաստանի Բեթղեհեմում: «Ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում» (Ղուկ., Բ 10), «որովհետև այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի փրկիչ, որ Օծյալ Տերն է» (Ղուկ., Բ 11):

Պետրոս առաքյալն ասել է. «Այս խոսքը նա ուղարկեց իսրայելացիներին՝ ավետելով խաղաղություն Հիսուս Քրիստոսի միջոցով. սա է բոլորի Տերը» (Գործք, Ժ 36): Երբ ասում է՝ բոլորի, դու ոչինչ մի՛ բացառիր Նրա տիրությունից: Քանզի թե՛ հրեշտակները, թե՛ հրեշտակապետները, թե՛ իշխանությունները, թե՛ որևէ այլ բան, որ առաքյալներն անվանում են ծնյալ, բոլորը Որդու իշխանության տակ են: Նա հրեշտակների Տերն է և, ինչպես Ավետարանն է ասում, «աստանան Նրան թողեց, և ահա հրեշտակներ մոտեցան ու ծառայում էին Նրան» (Մատթ., Դ 11): Չի՛ ասում, թե «օգնում» էին, այլ՝ «ծառայում»: Երբ Նա պետք է ծնվեր կույսից, այնժամ Նրան ծառայում էր Գաբրիելը, որն իբրև սեփական պաշտոն ընդունել էր Քրիստոսին ծառայելը: Երբ Նա պետք է մեկներ Եգիպտոս՝ կուռքերը վերացնելու համար (Եսայի, ԺԹ 1), երազում դարձյալ հրեշտակն է երևում Հովսեփին (Մատթ., Բ 13): Նրա խաչվելուց և հարություն առնելուց հետո, որպես բարի ծառա հրեշտակն է ուրախ լուրը հաղորդում կանանց. «Գնացեք, ասացեք Նրա աշակերտներին, թե հարություն առավ, և ահա Նա ձեզնից առաջ գնում է Գալիլիա. այնտեղ Նրան կտեսնեք: Ահա ասացի ձեզ»: (Մատթ., ԻԸ 7): Կարծես թե նրանց ասում էր՝ ես պատվերը չխախտեցի: Ես ավետում եմ այն, ինչ ինձ պատվիրեց ասել: Ուրեմն՝ այդ Նա էր պատվիրողը, միակ Տեր Հիսուս Քրիստոսը: Ասված է, որ «թեև այսպես կոչված աստվածներ կան թե՛ երկնքում և թե՛ երկրի վրա, բայց մեզ համար միայն մեկ Աստված կա, Հայր, որ ստեղծել է ամեն բան. և մենք ապրում ենք Նրանով և միայն մեկ Տեր Հիսուս Քրիստոս, Ում միջոցով ստեղծվեց ամեն ինչ, և մենք ապրում ենք Նրանով» (Ա Կորնթ., Ը 5-6):

11. Հիսուս Քրիստոս կոչվում է երկանուն: Հիսուս, որովհետև Փրկիչ է, Քրիստոս, որովհետև քահանայապետ է: Եվ այս իմանալով՝ հիասքանչ մարգարե Մովսեսը երկու ա-

ուսման հայտնի այրերի, որոնք աչքի էին ընկել իրենց առաքինութեամբ և բարեպաշտութեամբ, շնորհաց այդ երկու անունները: Իրեն փոխարինող Օսեսին վերանվանեց Հեսու, իսկ իր եղբայր Ահարոնին՝ Քրիստոս, որպեսզի երկու ակնավոր այրերի միջոցով կանխորոշի քահանայապետական և թագավորական պաշտոնը Նրա, Ով հետագայում այդ Հիսուս Քրիստոս անունները պիտի կրեր որպես մեկ անձ: Եվ Քրիստոս քահանայապետ է՝ ըստ Ահարոնի, որովհետև նա իրեն չփառավորեց որպես ինքնակոչ քահանայապետ, Նրան փառավորեց Նա, Ով ասաց. «Դու հավիտյան քահանա ես՝ ըստ Մեղքիսեղեկի կարգի» (Եբր., Ե 6): Նավեի որդի Հեսուն շատ բաներում Հիսուսի նախատիպն էր: Քանզի նա իր իշխանությունը սկսեց Հորդանանից: Քրիստոս ևս այստեղ մկրտվելուց հետո սկսեց քարոզել: Նավեի որդին տասներկու այրերի կարգեց իր իշխանության ժառանգներ: Հիսուսը տասներկու առաքյալներին, որպես ճշմարտության քարոզողներ, ուղարկեց աշխարհի բոլոր կողմերը: Հիսուս Քրիստոսի նախատիպը համարվող փրկեց պոռնիկ Ռահաբին, քանզի նա հավատացել էր նրան ու չէր մատնել: Իսկ իրական Փրկիչը ասաց. «Մաքսավորներ ու պոռնիկներ ձեզանից առաջ պիտի հասնեն երկնքի արքայություն» (Մատթ., ԻԱ 31): Հիսուսի նախատիպ Հեսուն միայն աղաղակով քանդեց Երիքովի պարիսպները. իսկ Հիսուս Քրիստոսն ասաց. «Այդտեղ պիտի չմնա քար քարի վրա, որ չքանդվի» (Մատթ., ԻԴ 2), և փուլ եկավ, քանզի մեր դիմացը եղող այս հոյակերտ տաճարը: Այդ եղավ ոչ թե Տիրոջ խոսքերի պատճառով, այլ փլուզումը հետևանք էր անօրենների մեղավորության:

12. Կա մեկ Տեր Հիսուս Քրիստոս. հրաշալի անուն, որը նախաքարոզել են մարգարեները: Եսայի մարգարեն ասել է. «Ահավասիկ գալիս է քո Փրկիչը, և իր վարձն իր հետ է» (Եսայի, ԿԲ 11): Հիսուս բառը եբրայերեն նշանակում է

փրկիչ: Մարգարեական շնորհը կանխատեսելով Տիրոջը սպանելու հրեաների տրամադրությունը՝ ծածուկ պահեցին նրա անունը, որպեսզի այդ նախատեսումը առիթ չդառնար՝ պատրաստելու նրա սպանությունը: Նա Հիսուս կոչվեց ոչ թե մարդկանց կողմից, այլ բացահայտորեն հրեշտակի կողմից, որը եկել էր ոչ թե իր իշխանությունամբ, այլ ուղարկվել էր Աստուծո գործությամբ, որը և ասաց Հովսեփին. «Մի՛ վախեցիր քեզ մոտ առնելու Մարիամին՝ քո կնոջը, որովհետև նրա մեջ ծնվածը Սուրբ Հոգուց է: Նա մի որդի կձնի, և նրա անունը Հիսուս պիտի դնես» (Մատթ., Ա 20-21): Եվ բացատրելով այդպես անվանելու պատճառը՝ ավելացնում է. «Քանի որ Նա պիտի փրկի իր ժողովրդին իր մեղքերից» (Մատթ., Ա 21): Նա, որ դեռ չէր ծնվել, ինչպե՞ս կարող էր իր ժողովուրդն ունենալ: Ուրեմն, հասկացիր, որ այդ ցույց է տալիս, թե Նա գոյություն ուներ Մարիամ Կույսից ծնվելուց առաջ էլ: Եվ այս նկատի ունի մարգարեն, երբ ասում է. «Ինձ կանչեց, երբ ես դեռ արգանդում էի» (Եսայի, ԽԹ 1). այսինքն, ինչպես հրեշտակը նախապես ասաց, թե պիտի կոչվի Հիսուս: Եվ դարձյալ, Հերովդեսի նենգության առնչությամբ ասում է. «Ինձ թաքցրեց իր ձեռքի հովանու տակ» (Եսայի, ԽԹ 2):

13. Ուրեմն, Հիսուս, ըստ եբրայեցիների, Փրկիչ է, իսկ հունարեն լեզվով՝ բժիշկ: Քանզի նա հոգիների և մարմինների բժիշկ է: Նա բժշկում է մարմնական տեսողությունը կորցրածներին և շնորհում է ճշմարիտ լույսը՝ աստվածային լույսը նրանց հոգիներում: Բուժում է կաղերին ու հաշմանդամներին և նրանց քայլերն ուղղում է դեպի ապաշխարության ճանապարհը՝ անդամալուծին ասելով. «Այլևս մի՛ մեղանչիր» (Հովհ., Ե 14), նաև՝ «Վերցրու քո մահիճը և գնա» (Հովհ., Ե 8): Քանզի, հոգու մեղավորության պատճառով է անդամալուծել իր մարմինը, նախ բուժեց հոգին, որպեսզի հետո բժշկեր նաև մարմինը: Ուրեմն, եթե կա



մեղքերով հիվանդացած մարմին, կա նաև այն բուժողը: Եթե այստեղ որևէ մեկը թերահավատ է, թող ասի Նրան. «Օգնիր իմ անհավատությունը» (Մարկ., Թ 23): Եթե որևէ մեկը տառապում է նաև մարմնական հիվանդություններից, թող չհուսահատվի, այլ մոտենա Նրան, քանզի Նա այդ հիվանդությունները ևս բուժում է, և իր անձնական փորձով համոզվի, թե Հիսուսն Ինքը Քրիստոսն է, Բժիշկն Ինքը Փրկիչն է:

14. Հուզայականները ընդունում են, որ Նա Հիսուս է, բայց ոչ մի դեպքում՝ Քրիստոս: Այդ պատճառով առաքյալն ասում է. «Ո՞վ է սուտ, եթե ոչ նա, ով մերժում է, թե Հիսուսը Քրիստոսն է: Մի՞թե Հիսուսը Քրիստոս չէ: Հիսուսը Քրիստոսն է, օձյալ քահանայապետ՝ իր անջնջելի սրբագործությունը: Այդ Նա է, որ սրբագործությունը չի սկսել ժամանակի որոշակի կետում և չունի իր քահանայապետության որևէ ժառանգորդ, ինչպես այդ լսեցիր մեր կիրակնօրյա հավաքի ընթացքում, երբ խոսեցինք սաղմոսի՝ «ըստ Մելքիսեդեկի կարգի» տողի մասին (Սաղմ., ձԹ 4, Եբր., Ե 6)»: Նա իր քահանայապետությունը չի ստացել մարդկային ձեռքերից և չի օձվել պատրաստված յուղով, այլ իր բնական և նախասկզբնական ծնունդի հետ օձվեց Հայր Աստծուց որպես քահանայապետ: Մյուս քահանայապետերից Նա չի տարբերվում միայն նրանով, որ օձված է Հայր Աստծուց ի սկզբանե անտի, այլև նրանով, որ Աստված իր կամքը Որդու քահանայապետության մասին բացահայտում է երգումով, ինչպես ասված է. «Հայր Աստված իր կամքը արտահայտեց երգումով և էլ չի զղջա» (Եբր., Է 20-21: Սաղմ., ձԹ 4): Որդու քահանայապետության մասին մեզ համար բավական է Հայր Աստծու կամքը միայն: Բայց մենք երկու անփոխարինելի հիմքեր ունենք, որոնցով ընդունում ենք Քրիստոսի քահանայապետությունը՝ Հայր Աստծու կամքով տրված, որպես ի սկզբանե անտի: Եվ այդ

մեզ համար հզոր մխիթարանք է, քանզի անվերապահորեն ընդունում ենք Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն:

15. Մեր մեջ հայտնված այս Քրիստոսին հուզայականները մերժեցին, իսկ դեկերը խոստովանեցին, բայց Նրան չէր անգիտանում նախահայր Դավիթը՝ ասելով. «Իմ Օձյալի համար ճրագ պատրաստեմ» (Սաղմ., ձԽԱ 17): Ոմանք ճրագը բացատրեցին որպես մարգարեության լուսավոր պարզեք, ուրիշներ՝ կույսից ստացած Նրա մարմինը, համաձայն Առաքյալի խոսքի. «Այսուհետև այս գանձերն ունենք կավե ամանների մեջ» (Բ Կորնթ., Դ 7): Այս չէր անգիտանում մարգարեն՝ ասելով. «Ես եմ նա, ով իր օձյալին ի հայտ է բերում մարդկանց մեջ» (Ամոս, Դ 13): Նրան գիտեք նաև Մովսեսը, Նրան ճանաչում էր նաև Եսային, Նրան ճանաչում էր նաև Երեմիան: Մարգարեներից ոչ մեկը չէր անգիտանում Նրան: Նրան ճանաչեցին նաև դեկերը, որոնց Նա հանդիմանում էր: Այդ մասին ասված է. «Գիտեին, որ Նա Քրիստոսն է» (Ղուկ., Դ 42): Քահանայապետերը չճանաչեցին Նրան, իսկ դեկերը խոստովանեցին: Քահանայապետերը չհիմացան Նրան, բայց սամարացի կինը հայտարարեց. «Եկեք տեսեք մի մարդու, որ ինձ ասաց այն բոլորը, ինչ արել եմ. արդյոք Նա՞ է Քրիստոսը» (Հովհ., Դ 29):

16. Սա է Հիսուս Քրիստոսը. «Նա, որ եկավ որպես գալիք բարիքների քահանայապետ» (Եբր., Թ 11): Նա, որպես Աստված, առատաձեռն է, աննախանձ և բոլորին չնորհել է իր անունը: Մարդկանց թագավորները, քանի որ մարդ են, իրենց իշխանությունը և անունը չեն բաժանում մարդկանց հետ: Մինչդեռ Հիսուս Քրիստոսը, Աստվածորդի լինելով, մեզ արժանացրեց քրիստոնյա կոչվելու: Գուցե կասեք, թե քրիստոնյաների անվանումը նոր է, նախկինում չէր օգտագործվում, և նորամուծությունները հաճախ դիմադրություն



յան են հանդիպում օտար թվալու պատճառով: Բայց այդ կանխելով՝ մարգարեն ասել է. «Իմ ծառաներին նոր անուն պիտի տրվի, որը պիտի օրհնաբանվի երկրի վրա» (Եսայի, ԿԵ 15): Հարցնենք հուդայականներին. դուք Տիրոջը ծառայո՞ւմ եք, թե՞ ոչ: Եթե այո, ցույց տվեք մեզ ձեր նոր անվանումը: Քանզի դուք կոչվում էիք հուդայական և՛ իսրայելացի Մովսեսի, և՛ մյուս մարգարեների օրոք, և՛ Բաբելոնից վերադառնալուց հետո, և՛ մինչև այսօր: Ուրեմն, որտե՞ղ է ձեր նոր անվանումը: Իսկ մենք, քանի որ ծառայում ենք Տիրոջը, ունենք նոր անուն: Նոր անուն, որը պիտի օրհնաբանվի երկրի վրա: Այս անունը շրջապատեց ամբողջ աշխարհը: Հուդայականները լավեցին միայն մեկ երկրում, իսկ քրիստոնյաները՝ մինչև ծագերն աշխարհի: Քանզի նրանց միջոցով հայտնի է դառնում Միածին Աստվածորդու անունը:

17. Ուզո՞ւմ եք իմանալ, թե առաքյալները ևս գիտեին Քրիստոսի անունը և քարոզեցին այն, առավել ևս, որ Նրան ունեին իրենց մեջ: Պողոսը լսել կամեցողներին ասում է. «Ապացո՞ւյց եք փնտրում, թե ինձնով Քրիստոս է, որ ձեզ հետ խոսում է» (Բ Կորնթ., ԺԳ 3): Պողոսը քարոզում է Քրիստոսին՝ ասելով. «Ոչ թե մենք մեզ ենք քարոզում, այլ՝ Հիսուս Քրիստոսին՝ Տիրոջը: Իսկ մեզ՝ որպես ծառաներ ձեզ՝ Քրիստոսի համար» (Բ Կորնթ., Դ 5): Իսկ ո՞վ է այս ասում: Նա, ով անցյալում եղել է հալածող: Օ՛, մեծ հրաշք: Նախկին հալածողը քարոզում է Քրիստոսին: Մի՞թե փողով կաշառվեց: Բայց այդ մասին ոչ մեկ ապացույց: Մի՞թե Քրիստոսին տեսավ կենդանի և նրա կողմից մղվեց այդպես քարոզելու: Բայց Քրիստոս արդեն համբարձվել էր երկինք: Պողոսը դուրս էր եկել քրիստոնյաներին հալածելու: Եվ երեք օր անց հալածողը Դամասկոսում դառնում է քարոզող: Այդ ի՞նչ զորությամբ: Ուրիշներ յուրայիններին պաշտպանելու համար յուրայիններին են վկա-

յակոչում: Իսկ ես վկա բերեցի նախկին հալածողին: Եվ դեռ տարակուսո՞ւմ ես: Պետրոսի և Հովհաննեսի վկայությունը մեծ բան է, բայց նրա վրա կասկածում են, քանզի յուրային էին: Բայց անցյալում թշնամի եղածի և հետագայում նահատակվածի ճշմարտության վրա ո՞վ կկասկածի:

18. Հասնելով խոսքի այս կետին՝ հիացա Սուրբ Հոգու կարգադրությամբ: Այդ ինչպե՞ս կարգադրեց, որ մյուս առաքյալները փոքրաթիվ թղթեր են գրել, իսկ Պողոսը, որ անցյալում հալածող է եղել, գրել է տասնչորս թուղթ: Ոչ այն պատճառով, որ Պետրոսն ու Հովհաննեսը ունեին պակաս կարողութուններ, և նրանց տրվել էր պակաս շնորհ: Քավ լիցի: Քանզի մարդիկ չէին կասկածելու նրա ուսուցման վրա, քանի որ նախկինում նա եղել էր թշնամի և հալածող: Այդ պատճառով էլ նրան գրելու առավել մեծ շնորհ տվեց, որպեսզի այդպիսով բոլորս համոզվենք: Բոլորը զարմանում էին Պողոսի դարձով և ասում. «Սա չէ՞ր, որ նախկինում հալածում էր: Արդյոք նա չի՞ եկել այստեղ, որպեսզի մեզ կալանքի տակ տանի Երուսաղեմ»: Եվ Պողոսն ասաց. «Մի զարմացեք: Ես հասկացա, որ դաժան է դամերին քացիով հարվածելը: Ես արժանի չեմ առաքյալ կոչվելու, քանի որ հալածեցի Աստուծու եկեղեցին» (Ա Կորնթ., ԺԵ 9): «Այդ արեցի չճանաչելով: Քանզի կարծում էի, թե Քրիստոսին քարոզելը ջնջում էր Մովսիսական օրենքը: Չգիտեի, որ Նա եկել է՝ լրացնելու Օրենքը և ոչ թե այն ջնջելու» (Մատթ., Ե 17): Բայց Աստուծու Շնորհը թափվեց ինձ վրա:

19. Քրիստոսի մասին, սիրելիներ՛ր, կան ճշմարիտ շատ վկայություններ: Հայր Աստվածը երկնքից վկայում է Ուրդու մասին: Վկայում է աղավնու տեսքով երկնքից իջած Սուրբ Հոգին: Վկայում է Մարիամին ավետած հրեշտակապետ Գաբրիելը: Վկայում է Աստվածածին կույսը: Վկա-

յում է մտուրի երանելի վայրը: Վկայում է Եգիպտոսը, որը ընդունեց Քրիստոսին, երբ դեռ մանուկ էր: Վկայում է Սիմեոնը, որն իր գրկում ընդունեց Քրիստոսին և ասաց. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր քո ծառային, ըստ քո խոսքի, որովհետև անձնուստեան փրկությունը քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ» (Ղուկ., Բ 29-31): Վկայում է բարեպաշտ և ժուժկալ մարգարեուհի Աննան: Վկայում է Հովհաննես Մկրտիչը՝ բոլոր մարգարեներից մեծագույնը, Նոր Կտակարանի Կարապետը, որը ինչ-որ ձևով միավորում է Հին և Նոր Կտակարանները: Վկայում է գետերից Հորդանանը, ծովերից՝ Տիբերականը: Վկայում են կույրեր, կաղեր, հաշմանդամներ, հարուժյուն առած մեռյալներ: Վկայում են դեերը և ասում. «Ի՞նչ ես ուզում մեզից, Հիսուս Նազովրեցի: Մեզ կորստյան մատնելո՞ւ եկար: Գիտենք, թե ով ես դու. Աստծու Սուրբն ես» (Մարկ., Ա 24): Վկայում են հողմերը, որոնք դադարեցին Նրա հրամանով: Վկայում են հինգ հազար մարդուն կերակրած հինգ նկանակները: Վկայում է Սուրբ Խաչափայտը, որը մինչև օրս էլ տեսնում ենք: Ոմանք դրանից կտորներ վերցրին, խորապես հավատալով, և դրանք սփռեցին ամբողջ աշխարհով մեկ: Վկայում է Գեթսեմանին, որը խելամիտների համար ցուցադրում է Հուճկային: Վկայում է երևացող Սուրբ Գողգոթան: Վկայում է ձորի արմավենին, որն իր ճյուղերը տրամադրել էր Նրան ողջունող երեխաներին: Վկայում են սուրբ գերեզմանը և հսկա քարը, որը փակվեց Նրա վրա և որը ցայսօր իր տեղում է: Վկայում է արևը, որ այժմ փայլում է, իսկ Փրկչի չարչարանաց պահին խավարել էր: Վկայում է այն խավարը, որ պատել էր տասներկուերորդ ժամից մինչև հետձաշու երրորդ ժամը: Վկայում է ցերեկվա երրորդ ժամից մինչև երեկո դարձյալ ճառագած լույսը: Վկայում է Ձիթենյաց սուրբ լեռը, որտեղից Փրկիչը, թողնելով երկիրը, համբարձավ երկինք: Վկայում են երկնքի դռները, որոնք ընդունե-

ցին Տիրոջը, որոնց համար սաղմոսերգուն ասել է. «Վեր քաշեցեք, իշխաններ, դռները ձեր, թող բացվեն հավիտենական դռները» (Սաղմ., ԻԳ 7): Վկայում են նախկին թշնամիները, որոնցից մեկը՝ երանելի Պողոսը, որ մի փոքր ժամանակ Նրա թշնամին էր, իսկ երկար տարիներ՝ Նրա ծառայության մեջ: Վկայում են տասներկու առաքյալները, որոնք ոչ միայն խոսքով, այլև տանջանքներով և իրենց մահով քարոզեցին ճշմարտությունը: Վկայում է Պետրոսի ստվերը, որ Քրիստոսի անունով բժշկեց հիվանդներին: Վկայում են Պողոսի թաշկինակներն ու լաթերը, որոնք ևս Քրիստոսի ուժով մեծ թվով հիվանդների բուժեցին: Վկայում են բոլոր հեթանոսները, պարսիկները, գոթերը, որոնք բազմիցս հանուն Նրա սիրո, տվեցին իրենց կյանքը, թեև Նրան երբեք չէին տեսել: Վկայում են նաև դեերը, որոնք մինչև օրս էլ հեռու են փախչում հավատացյալ քրիստոնյաների աղոթքներով:

20. Այսքան շատ ու տարբեր վկաներ կան: Արդ, դեռ կա՞ն ձեր մեջ Քրիստոսին չհավատացողներ: Եթե կա որևէ մեկը, որ մինչև հիմա չէր հավատում, այժմ թող հավատա: Եթե կա, որ նախապես արդեն հավատում էր, թող իր հավատքին գուժարի առավել հավատք: Թող հավատա մեր Տեր Հիսուս Քրիստոսին և թող իմանա, թե ում անունն է կրում: Կոչվեցի՞ր քրիստոնյա. հարգիր այդ անունը: ձեր պատճառով թող չչարախոսվի Աստվածորդի մեր Տեր Հիսուս Քրիստոսը: Քո բարի գործերը թող փայլեն մարդկանց առաջ, որպեսզի նրանք տեսնեն դրանք և մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով փառաբանեն Երկնային Հորը, Ում վայել է փառք այժմ և միշտ, հավիտյանս հավիտենից: Ամեն:

## ՈՒՍՈՒՑՈՒՄ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

### Արված Երուսաղեմում: Վերաբերում է Հանգանակի հետևյալ հոդվածին. «Միածին Աստվածորդուն, որ ծնվել է Հորից, Աստված ճշմարիտ է բոլոր դարերից էլ առաջ, Ում միջոցով կատարվել է ամեն ինչ:»

Ընթերցում Եբրայեցիներին ուղղված թղթից. «Աստված բազմապիսի ձևերով և այլազան օրինակներով անխապես խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով. այս վերջին օրերին մեզ հետ խոսեց Իր Որդու միջոցով» (Եբր., Ա 1-2) և շարունակությունը:

1. Երեկվա դասով մեր կարողությունների սահմաններում մենք խոսեցինք այն մասին, որ մեր հույսը Հիսուս Քրիստոսն է: Ոչ թե պարզապես պետք է հավատանք Հիսուս Քրիստոսին, ոչ էլ Նրան ընդունենք որպես շատերից մեկը, որոնք անտեղի կոչվում են քրիստոսներ, օծյալներ: Նրանք քրիստոսներ են՝ ըստ ձևի, իսկ այս մեկը Քրիստոս է ճշմարիտ: Նա սրբագործության պաշտոնին հասել է ոչ թե առաջընթացով կամ մարդկանց ձեռքով, այլ այդ պաշտոնը ստացել է Հայր Աստծու կողմից ի սկզբանե: Այդ պատճառով էլ Հանգանակը, նպատակ ունենալով մեզ կանխավ ապահովելու, որ մենք Հիսուս Քրիստոսին չհամարենք որպես բազում քրիստոսներից մեկը, ավելացնում է՝ հավատում ենք «մեկ Հիսուս Քրիստոսի՝ Աստծու Միածին Որդուն»:

2. Լսելով որդի՝ մի կարծիք խորթ, որդեգիր, այլ բնական որդի, Միածին Որդի, որն ուրիշ եղբայր չունի: Այդ պատ-

ճառով էլ կոչվում է Միածին, որովհետև ոչ աստվածության պաշտոնում, ոչ էլ Հայր Աստծուց ծնված եղբայր չունի: Իսկ Նրան Աստվածորդի կոչում ենք ոչ թե մենք, այլ Հայր Աստվածը Նրան կոչեց Քրիստոս և Որդի: Եվ իսկապես, ճիշտ է այն անվանակոչումը, որ հայրերը տալիս են որդիներին:

3. Այնժամ մարդեղացավ մեր Տեր Հիսուս Քրիստոսը, բայց շատերը անգիտացան Նրան: Կամենալով մարդկանց սովորեցնել այն, ինչ նրանք անգիտանում էին, հավաքեց իր աշակերտներին և հարցրեց նրանց. «Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում. ո՞վ է մարդու որդին» (Մատթ., ԺԶ 13): Մնափառությունից չէր, որ այդ հարցնում էր, այլ կամենում էր նրանց ցույց տալ ճշմարտությունը: Որպեսզի ամենօրյա չփման պատճառով նրանք չարհամարհեին Աստվածորդի Աստծուն որպես սովորական մարդու: Աշակերտները պատասխանեցին. «Ոմանք ասում են, թե դու Եղիան ես, ուրիշներ՝ թե դու Երեմիան ես» (Մատթ., ԺԶ 14): Հիսուս ասաց. Նրանք կարող է չփմանան: Իսկ դուք՝ առաքյալներդ, որ միայն իմ անունով իսկ բորոտներ մաքրեցիք, դեղերին դուրս հանեցիք, մեռյալներին հարուլթյուն տվիք, իրավունք չունեիք անգիտանալու Նրան, Ում շնորհիվ դուք գործեցիք այդ հրաշքները: Երբ բոլորը լուռ մնացին – քանզի դասը մարդկային կարողություններից վեր էր – Պետրոսը, որը առաքյալներից առաջինն էր և Եկեղեցու գլխավոր քարոզիչը, առանց օգտագործելու մարդկային հնարամտություն բառեր և ոչ էլ մարդկային տրամաբանություն խոսքեր, այլ Հայր Աստծուց ընդունելով մտքի լուսավորություն, պատասխանեց. «Դու ես Քրիստոսը»: Եվ ոչ միայն այդ, «այլև կենդանի Աստծու Որդին» (Մատթ., ԺԶ 16): Այս խոսքերին հետևեց Քրիստոսի երանին – քանզի խոստովանությունը իրոք գերմարդկային էր – և հաստատումը, թե Հայրն է այդ բացահայտողը: Քանզի Փրկիչն ա-

սում է. «Երանի քեզ, Սիմոն Հովնանի որդի, որովհետև մարմինը և արյունը չէ, որ հայտնեց քեզ, այլ իմ Հայրը, որ երկնքում է» (Մատթ., ԺԶ 17): Ուրեմն, ով որ ճանաչում է մեր Տեր Հիսուս Քրիստոս Աստվածորդուն, դառնում է այս երանության մասնակիցը, մինչդեռ ով որ մերժում է Նրան որպես Աստվածորդի, դժբախտ է և թշվառ:

4. Եվ դարձյալ, երբ լսում ես «որդի» բառը, չկարծես, որ դա ձևական է, այն ճշմարիտ Որդի է, բնական որդի, անսկիզբ, ոչ թե առաջընթաց միջոցով ծառայից դարձել է որդի, այլ Որդի, որ ծնվել է Հայր Աստծուց, հավերժից էլ առաջ, անբացատրելի և անիմանալի եղանակով: Նույնպես, եթե լսես «առաջնածին» բառը, չկարծես, որ Նա առաջնածին է մարդկային տվյալների համաձայն: Քանզի մարդկանց առաջնածինը կարող է ունենալ նաև ուրիշ եղբայրներ: Սուրբ Գրքում գրված է. «Իմ անդրանիկ որդին Իսրայելն է» (Ելք, Դ 22): Բայց Ռուբենի նման Իսրայելը ևս ընկավ անդրանկությունից: Քանզի Ռուբենը պղծեց հոր մահիճը, իսկ Իսրայելը հոր որդուն այգուց դուրս հանեց ու սպանեց (Մատթ., ԻԱ 39): Ուրիշների մասին Գրքում դարձյալ ասվում է. «Դուք ձեր Տեր Աստծու որդիներն եք» (ԲՕր., ԺԴ 1): Մեկ այլ անգամ դարձյալ. «Ես ասացի. Աստվածներ եք դուք, կամ բոլորդ էլ որդիներն եք Բարձրյալի» (Սաղմ., ԶԱ 6): Չի ասում «ծնեցի», այլ՝ «ասացի»: Նրանք Աստծու խոսքով որդեգրություն ստացան, ինչը մինչ այդ չունեին: Բայց Նա չի եղել նախապես ուրիշ բան և հետո ծնվել Հայր Աստծուց: Սկզբից էլ Նա Հայր Աստծու Որդի ծնվեց. անսկիզբ և անվերջ Հայր Աստծու Որդի. և ամեն ինչում նման ծնողին: Հավերժական՝ հավերժական Հորից: Նա կյանք է, ծնված կյանքից, և լույս՝ լույսից, և ճշմարտություն՝ ճշմարտությունից, իմաստություն՝ իմաստությունից, թագավոր՝ թագավորից, Աստված՝ Աստծուց և Զորություն՝ Զորությունից:

5. Եթե լսես Գիրքը, ուր ասված է՝ «Գիրք ազգաբանության Հիսուս Քրիստոսի՝ Դավթի որդու, Աբրահամի որդու» (Մատթ., Ա 1), այն հասկացիր մարդկային առումով: Քանզի Դավթի Որդի պիտի կոչվի մինչև աշխարհի վերջը: Իսկ Աստծու Որդի է նա դեռևս դարերից էլ առաջ: Այն մարմինը, որը չունեք, Նա ստացավ: Իսկ այն, ինչ ունեք, այն է՝ որդիությունը, Նա ունեցել է նախասկզբից, որպես Աստվածորդի: Նա ունի երկու հայր: Մեկը՝ Դավթի, որը Նրա նախահայրն է որպես մարդու, իսկ մյուսը՝ Հայր Աստվածը: Մարդկային առումով, որպես Դավթից սերած, կարող է մտնել ժամանակագրական որոշ շրջանակների մեջ և կարելի է արձանագրել նրա ծնունդը: Բայց աստվածայնության առումով Նա չի կարող մտնել ոչ ժամանակագրական, ոչ էլ տեղային շրջանակների մեջ, և ոչ էլ կպատմվի Նրա ծագումը: «Նրա ազգատոհմի մասին ո՞վ պիտի պատմի» (Եսայի, ԾԳ 8): «Աստված հոգի է» (Հովհ., Դ 24): Նա, որ հոգի է, հոգեպես ծնվեց անմարմին, ծնունդի անիմանալի և անընկալելի եղանակով: Որդին ինքը ասում է Հոր մասին. «Տերն ասաց ինձ. Դու իմ որդին ես. ես այսօր ծնեցի քեզ» (Սաղմ., Բ 7): «Այսօր» բառը չի նշանակում «հիմա», այլ՝ ժամանակից էլ առաջ: Այսօրը ժամանակից դուրս է, դարերից էլ առաջ: «Քեզ արշալույսից առաջ ծնեցի արգանդից» (Սաղմ., ձԹ 3):

6. Ուրեմն, հավատա Հիսուս Քրիստոսին՝ կենդանի Աստծու Որդուն, Միածին Որդուն, ինչպես Ավետարանն է ասում. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդուն տվեց, որպեսզի նա, ով նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ., Գ 16): Եվ դարձյալ՝ «Ով Որդուն հավատում է, չպիտի դատապարտվի» (Հովհ., Գ 18), «այլ մահվանից կյանք է անցնում» (Հովհ., Ե 24): «Իսկ նա, ով չի հնազանդվում Որդուն, կյանք չի տեսնի, այլ նրա վրա կմնա Աստծու

բարկությունը» (Հովհ., Գ 36), «որովհետև չհավատաց Աստծու Միածին Որդուն» (Հովհ., Գ 18), Ում մասին Ավետարանիչ Հովհաննեսը վկայում է. «Եվ տեսանք Նրա փառքը, նման այն փառքի, որ Հայրն է տալիս Միածնին՝ լի շնորհով և ճշմարտությամբ» (Հովհ., Ա 14): Նրանից դողալով՝ դեերը ասում էին. «Թող տուր մեզ, Հիսուս: Ի՞նչ ես ուզում մեզնից. Ի՞նչ ընդհանուր բան կա մեր և քո միջև, Հիսուս, Որդի կենդանի Աստծու» (Հմմտ. Ղուկ, Դ 34; Մարկ., Ե 7):

7. Ուրեմն, Նա բնույթով է Աստծու Որդին և ոչ թե որդեգրություն, այլ ծնվել է Աստծուց: Նա, ով սիրում է Հորը որպես ծնողի, սիրում է նաև նրանից ծնված Որդուն: Իսկ նա, ով անհնազանդ է Որդուն, անմիջականորեն հայհոյում է նաև Նրան ծնած Հորը: Երբ լսես «ծնող» բառը, չպատկերացնես մարմնական ծնունդ, ոչ էլ մտածես ապականվելու ենթակա մարմնի մասին, որպեսզի չընկնես անպատվության մեջ: «Աստված հոգի է» (Հովհ., Դ 24): Հոգևոր է նաև նրա ծնունդը: Քանզի մարմինը ծնում է մարմին, և մարմնի ծնունդի համար միջանկյալ որոշ ժամանակ է պետք: Բայց Հայր Աստծուց Աստվածորդու ծնվելու համար ոչ մեկ միջանկյալ ժամանակ չի եղել: Մարմնավոր ծնունդի դեպքում ծնվող երեխան դեռևս անկատար մարդ է, իսկ Աստծու Որդին ծնվել է կատարյալ: Որովհետև, ինչպես որ այժմ է, Աստծու Որդին ծնվել է սկզբից, «անսկիզբ»: Մենք՝ մարդիկ, ծնվում և մեծանում ենք՝ մանկական անգիտությունից առաջանալով դեպի լրիվ բանական վիճակ: Քո ծնունդը, մարդ, անկատար է, և աստիճանաբար ամբողջանում ես մարմնով և հոգով: Իսկ Աստծու դեպքում չիմանաս, թե նույն կերպ է կատարվում, և մի՛ մեղադրիր ծնողին անզորության մեջ: Քանզի դու Հայր Աստծուն մեղադրում ես անզորության մեջ, երբ ասում ես, թե ծնեց անկատար մանուկ, որը ժամանակի ընթացքում մարմնապես

ամբողջացավ: Քո կարծիքով, այն, ինչ ժամանակի ընթացքում շնորհեց, ի սկզբանե չէր շնորհվել:

8. Չկարծես, թե այս ծնունդը նման է մարդկայինին: Նման չէ նաև Աբրահամից Իսահակի ծնունդին: Քանզի Աբրահամը ծնեց ոչ թե իր կամքի համաձայն, այլ այն, ինչ ուրիշն էր շնորհում: Բայց երբ Հայր Աստվածը ծնեց Որդուն, Նա կարիք չուներ մտածելու և այն իրագործելու ժամանակի տևողության մեջ, ոչ էլ անգիտանում էր այդ, կամ իր Որդու մասին ուներ առաջընթաց մի նպատակ: Ասել, թե Նա անգիտանում էր կատարվածը, մեծագույն անարգանք է: Ասել, թե երկար մտածելուց հետո դարձավ Հայր, նույնպես անարգանք է: Քանզի Նա սկզբում անորդի չէր և հետո դարձավ Հայր, այլ մշտապես ունեցել է Որդուն, Ում ծնել է ոչ թե ինչպես մարդը մարդուն, այլ ինչպես որ միայն իրեն է հայտնի, որ Նրան ծնեց դարերից էլ առաջ որպես ճշմարիտ Աստված:

9. Քանզի Հայրը, լինելով ճշմարիտ Աստված, Որդուն ծնեց իր նման՝ ճշմարիտ Աստված: Ոչ այնպես, ինչպես ուսուցիչները ծնում են աշակերտներին, ոչ այնպես, ինչպես Պողոսն ասել է ոմանց. «Որովհետև Հիսուս Քրիստոսի Ավետարանով ես ծնեցի ձեզ» (Ա Կորնթ., Դ 15): Քանզի այստեղ նա, ով բնական որդի չէ, աշակերտելով դարձավ որդի: Իսկ այնտեղ Որդին Աստված բնական որդի է, ճշմարիտ որդի: Ոչ թե ինչպես դուք՝ լուսավորվողները, այժմ դառնում եք Աստծու որդիներ: Քանզի այժմ դուք ևս դառնում եք որդիներ, բայց «ըստ շնորհի», ինչպես որ գրված է. «Իսկ ովքեր Նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց լինելու Աստծու որդիներ. նրանց, ովքեր Նրա անվանը կհավատան. նրանք ո՛չ արյունից, ո՛չ մարմնի ցանկությունից, ո՛չ էլ մարդու կամքից, այլ Աստծուց ծնվեցին» (Հովհ., Դ 12-13): Մենք ևս ծնվում ենք ջրից և հոգուց:

Բայց Քրիստոսը Հորից այդպես չծնվեց: Քանզի Նրա մկրտության ժամանակ Հայրը կոչեց և ասաց. «Նա է իմ սիրելի Որդին» (Մատթ., Գ 17). Հասաց՝ «Նա հիմա դարձավ իմ որդին», այլ ասաց. «Նա է իմ որդին», հայտնելու համար, որ մկրտությունից առաջ էլ Նա Որդին էր:

10. Հայր Աստվածը ծնեց Որդուն ոչ թե ինչպես մարդկանց մոտ, երբ միտքը ծնունդ է տալիս խոսքին: Մեզ մոտ միտքը ներկայուն է, ներգոյ, մինչդեռ խոսքը հենց որ ասվեց, ցրվում է օդում և կորչում: Բայց մենք գիտենք, որ Քրիստոս ծնվել է որպես Բան ոչ թե խոսքով, այլ ներկայուն, կենդանի, որ ոչ թե արտասանվեց ու ցրվեց օդում, այլ ծնվեց Հորից, որպես ուրույն գոյ, դարերից էլ առաջ և անպատմելի: «Սկզբից էր Բանը, և Բանը Աստծու մոտ էր, և Բանը Աստված էր» (Հովհ., Ա 1), որը նստում էր Հոր աջ կողմում: Բան, որը հասկանում էր Հոր կամքը և ամեն ինչ արարեց Նրա կամքի համաձայն: Բան, «որն իջավ երկիր և դարձյալ բարձրացավ երկինք» (Եփես., Դ 10): Քանզի բանավոր ասված խոսքը ոչ բարձրանում է, ոչ իջնում: Նա Բան էր, որ խոսում էր և ասում. «Ես խոսում եմ այն ամենի մասին, ինչ տեսել եմ իմ Հոր մոտ» (Եփես., Դ 10): Բան, որն իշխում և թագավորում է բոլորի և ամեն ինչի վրա: Որովհետև Հայրը ամեն ինչ հանձնել է Որդուն:

11. Հայրը ծնեց Նրան ոչ այնպես, ինչպես կարող էր ընկալել մարդկային մտածողությունը, այլ ինչպես միայն ինքը կարող է իմանալ: Մենք չենք խոստանում ասել ձեզ, թե ինչպե՞ս այն կատարվեց, այլ վստահեցնում ենք, որ այն հայտնի չէ մարդկանց: Եվ ոչ միայն մենք ենք անգետ Հայր Աստծուց Որդու ծնվելու հույսով, այլև երեկի և աներևույթ աշխարհի բոլոր արարածները: «Պատմիր դու երկրին, թե մի բան հասկացնի» (Հոբ, ԺԲ 8): Եվ եթե կարողանայիր հարցնել երկրի բոլոր էակներին, նրանք ոչինչ չէին

կարող ասել: Քանզի երկիրը ի վիճակի չէ պատմելու իր արարչի հույսով: Եվ ոչ միայն երկիրը այդ չգիտի, այլև արևը: Քանզի արևը ստեղծվեց չորրորդ օրը, և չէր կարող իմանալ իրենից երեք օր առաջ կատարվածները և չէր կարող պատմել իր Արարչի մասին: Երկինքը նույնպես չի կարող խոսել այդ մասին, քանզի Հոր հանձնարարությամբ և համաձայնությամբ որպես ծուխ Քրիստոսն ինքն այդ հաստատեց տիեզերքում: Ոչ էլ երկնքի երկինքները կարող են այդ վկայել, ոչ ևս երկնքից վեր գտնվող ջրային շերտերը կարող են խոսել Նրա մասին: Ո՛վ մարդ, ինչո՞ւ ես ընկճվում, որ անգիտանում ես այն, ինչ որ անգամ երկինքները չգիտեն: Եվ ոչ միայն երկինքներն են անգետ, այլև հրեշտակների ամբողջ աշխարհը: Եվ եթե հնարավոր լիներ՝ որևէ մեկը բարձրանար առաջին երկինք և հարցներ այնտեղի հրեշտակներին, թե Աստված ինչպե՞ս ծնեց Որդուն, պիտի ասեին, թե՛ գուցե մեզնից վերև կան առավել բարձր եղողներ, նրանց հարցրեք: Բարձրացեք նաև երկրորդ երկինք և երրորդ երկինք: Հասիր, եթե կարող ես, գահերին, տերություններին և իշխանություններին, ինչը անհնարին է: Նրանք նույնպես կհրաժարվեն պատմելուց, քանի որ չգիտեն:

12. Ես միշտ զարմացել եմ համարձակ մարդկանց հետաքրքրասիրություն վրա, ինչը նրանք համարում են բարեպաշտություն, բայց ընկնում են սրբապղծության մեջ: Քանզի անգիտանալով Գահերն ու Տիրությունները, Սկզբունքներն ու Իշխանությունները, որոնք Աստծու արարումներն են, սկսում են քննարկել իրեն՝ Արարչին: Նախ ասա ինձ, ո՛վ համարձակ մարդ, ինչո՞վ է տարբերվում Գահը Տիրությունից, և հետո զբաղվիր Քրիստոսին առնչվող հարցերով: Ասա ինձ՝ ի՞նչ բան է Սկզբունքը, ի՞նչ է Իշխանությունը, ի՞նչ է գորությունը, ի՞նչ է հրեշտակը, և հետո քննիր Արարողին, քանի որ այդ ամենը կա-



տարվել է Նրա միջոցով: Բայց դու չես ուզում, կամ չես կարող հարցնել Գահերին կամ Տիրութուններին: «Ուրիշ ի՞նչն է, որ իմանում է Աստուծու խորունկ ծրագրերը, եթե ոչ միայն Հոգին Սուրբը, որը խոսել է Սուրբ Գրքում»: Բայց անգամ Հոգին Սուրբը Սուրբ Գրքում չի խոսել Հորից Որդու ծնվելու մասին: Ուրեմն, ինչո՞ւ ես հետաքրքրվում այն բանով, որի մասին անգամ Սուրբ Հոգին չի գրել Գրքում: Դու, որ չգիտես գրվածները, ուզում ես քննել այն, ինչ գրված չէ՞: Շատ հարցեր կան գրված Սուրբ Գրքում, որ մենք չենք հասկանում. ուրեմն, ինչո՞ւ հետաքրքրվենք չգրվածներով: Բավական է մենք իմանանք, որ Աստված ծնել է միայն մեկ որդի:

13. Մի՛ ամաչիր խոստովանելու քո անգիտությունը, քանի որ անգիտանում ես հրեշտակների հետ: Միայն ծնողը գիտի ծնվածին, և իրենից ծնվածը գիտի ծնողին: Միայն ծնողը գիտի, թե ինչ ծնեց: Իսկ Գիրքը վկայում է, թե ծնվածը Աստված է, անսկիզբ: Քանզի ո՞վ մարդուն վերաբերող հարցերն ավելի լավ գիտի, եթե ոչ միայն մարդու հոգին, որ գտնվում է իր մեջ: Այդպես էլ Աստուծուն վերաբերող հարցերը գիտի միայն Սուրբ Հոգին և ուրիշ ոչ ոք: «Ինչպես Հայրն ինքն իր մեջ կյանք ունի և կյանք է տալիս, նույնպես և Որդուն տվեց ինքն իր մեջ կյանք ունենալ և տալ» (Հովհ., Ե 26), «նույնպես և Որդին կենդանացնում է, ում կամենա» (Հովհ., Ե 21): Ո՛չ ծնողը որևէ վնաս կրեց, ո՛չ ծնվածից որևէ բան պակասեց – հասկանում եմ, որ բազմիցս այդ մասին ասել եմ ձեզ, բայց այդ արել եմ ձեր ապահովության համար – ո՛չ ծնողը հայր ունի, ո՛չ էլ ծնածը՝ եղբայր: Ո՛չ ծնողը որդի դարձավ, ո՛չ էլ որդին՝ հայր: Մեկ միակ Հորից ծնվեց մեկ Միածին Որդի: Ոչ երկու չծնվածներ, ոչ էլ երկու Միածիններ. այլ մեկն է անծին Հայրը (Քանզի հայր չունեցողը անծին է), և մեկն է Որդին, որը ծնվել է դարերից էլ առաջ: Նա չի ծնվել ժամանակի

մեջ, այլ նախքան դարերը: Նա չի աճել առաջընթաց եղանակով, այլ ծնվել է այնպես, ինչպես և կա այժմ:

14. Ուրեմն, հավատում ենք Աստուծու Միածին Որդուն, ճշմարիտ Աստուծուն՝ ծնված Աստուծուց: Քանզի ճշմարիտ Աստվածը չի կարող ծնել սուտ աստուծու, ինչպես ասել ենք, ոչ էլ նախապես մտածել է և ապա ծնել: Նրան ծնել է դարերից էլ առաջ և ժամանակից դուրս: Նրան ծնել է ավելի արագ, քան մենք մեկ բառ կարտաբերելիք կամ կմտածելիք: Մենք ժամանակի ընթացքում խոսելով ժամանակ ենք վատնում: Աստուծու համար ծնունդը ժամանակ չունի: Եվ ինչպես բազմիցս ասել ենք, Որդուն ոչ թե անգոյությունից բերել է գոյության, ոչ էլ որդեգրել է նախապես որդի չեղողին: Բայց ինչպես որ Հայր Աստված հավիտենությունից էլ առաջ է, հավիտենությունից առաջ էլ անպատմելի ձևով ծնեց միայն մեկ Որդի, որը չունի եղբայր: Չկա նաև երկու Սկիզբ: Այլ Հայր Աստվածը Որդու գրուխն է: Սկիզբը մեկն է: Որովհետև Հայրը ծնեց Որդի, ճշմարիտ Աստուծուն՝ էմմանուել կոչված: «էմմանուել» մեր լեզվով թարգմանվում է՝ «Աստված մեզ հետ»:

15. Ուզո՞ւմ ես իմանալ, թե Աստված է Նա, Ով ծնվեց Հորից և հետո մարդեղացավ: Լսիր մարգարեին, որ ասում է. «Դա մեր Աստվածն է, որի հետ ոչ ոք չի կարող համեմատվել, որը գտավ իմաստություն բոլոր ճանապարհները և դրանք տվեց իր ծառա Հակոբին ու իր սիրեցյալ Իսրայելին: Դրանից հետո իմաստությունը հայտնվեց երկրի վրա ու շրջեց մարդկանց մեջ» (Բար., Գ 36-38): Տեսնո՞ւմ ես Աստուծուն, որ Մովսեսի օրենքից հետո մարդեղացավ: Լսիր Քրիստոսի աստվածայնություն մասին մեկ այլ վկայություն ևս, որը նոր ընթացեցինք. «Քո գահը հավիտյանս հավիտենից է, Աստված» (Սաղմ., ԽԴ 7 և Եբր., Ա 8): Եվ որպեսզի չկարծես, որ Նրա աստվածային դրությունը

ստեղծվեց աստիճանաբար, մարդեղուկթյամբ երկրի վրա Նրա հայտնվելուց հետո, սաղմոսերգուհի բերանով ասված է. «Այդ պատճառով Աստված՝ քո Աստվածը, օծեց քեզ ուրախութեան յուզով ավելի, քան քո ընկերներին» (Սաղմ., ԽԴ 8: Եբր., Ա 9): Արդ, տեսնո՞ւմ ես Հայր Աստծու կողմից Քրիստոս Աստծու օծումը:

16. Ուզո՞ւմ ես ունենալ Քրիստոսի աստվածուկության երրորդ վկայությունը: Լսիր Եսայուն. «Եգիպտացիների երկրի վաստակը, եթովպացիների առևտուրը ... քեզ պիտի աղոթեն ու երկրպագեն, որովհետև Աստված քո մեջ է ու պիտի ասեն, թե՛ ուրիշ Աստված չկա, բացի քեզնից: Դու ես Աստվածը, իսկ մենք չգիտեինք, ո՞վ Աստված, Փրկիչդ Իսրայելի» (Եսայի, ԽԵ 14-15): Տեսնո՞ւմ ես, որ Որդին Աստված է, և Նրա մեջ Հայր Աստվածն է: Մարգարեն ասում է նույնը, ինչ Ավետարանը. «Դու՛ Հայր իմ մեջ, և ես՛ քո մեջ» (Հովհ., ԺԷ 21): Քրիստոս չի ասել. «Ես և իմ Հայրը մեկ եմ», այլ ասել է՝ «Ես և իմ Հայրը մեկ ենք» (Հովհ., Ժ 30): Ուստի, ո՛չ նրանց օտարացնենք իրարից, ո՛չ էլ Որդուն նույնացնենք Հոր հետ: Նրանք մեկ են աստվածայնությունը: Քանզի Աստված ծնել է Աստծուն: Նրանք մեկ են թագավորությունը: Քանզի այլոց թագավոր չէ Հայր Աստվածը և այլոց՝ Որդի Աստվածը, ինչպիսին էր Աբեսաղոմը, որ հակադրվեց իր Հորը: Ում թագավորում է Հայրը, նրան թագավորում է նաև Որդին: Նրանք մեկ են, որովհետև ոչ մի տարածայնություն չկա նրանց միջև: Քանզի այլ չէ Հոր կամքը և այլ՝ Որդու կամքը: Մեկ են, քանզի այլ չեն Քրիստոսի ստեղծածները և այլ՝ Հոր ստեղծածները: Մեկ է բոլորի արարումը, որ կատարեց Հայրը Որդու միջոցով, ինչպես ասել է սաղմոսերգուն. «Նա ասաց, և դրանք ստեղծվեցին: Նա հրամայեց, և դրանք հաստատվեցին» (Սաղմ., ձևԸ 5): Որովհետև խոսողը ասում է լսողի համար, իսկ պատվիրողը պատվիրում է իր հետ եղողին:

17. Ուրեմն, ճշմարիտ Աստված է Որդին՝ ունենալով իր մեջ Հայր Աստծուն, բայց չէր փոխարկվել Հայր Աստծու: Քանզի Հայրը չմարդեղացավ, այլ՝ Որդին: Պարզ և ազատորեն ասենք ճշմարտությունը: Հայրը մեզ համար չարչարանքներ չկրեց, այլ ուղարկեց մեզ համար չարչարանք կրածին: Չասենք, որ «կար ժամանակ, երբ Որդին չկար»: Ոչ էլ համարենք, որ Հայրը Նրա որդին է: Այլ «արքունի ճանապարհով գնանք և աջ կամ ձախ չշեղվենք» (Թվեր, Ի 17): Չմտածենք, որ Որդուն Հայր կոչելով՝ Նրան պատիվ ենք մատուցում: Ու չկարծենք, որ բարձրացնում ենք Հորը՝ Որդուն ցածրացնելով, Նրան համարելով արարվածներից մեկը: Թող պաշտենք Որդու միջոցով Հորը և չանջատենք նրանց պաշտամունքը: Քարոզենք մեկ Որդու, Ով նստել է Հոր աջ կողմում դարերից էլ առաջ, քանի որ այդ դիրքը Նա ձեռք չի բերել աստիճանաբար, իր երկրային կյանքում չարչարանքներից հետո, այլ այն ունեցել է ի սկզբանե:

18. «Ով տեսավ Որդուն, տեսել է նաև Հորը» (Հովհ., ԺԴ 9): Քանզի ամեն ինչում Որդին նման է Հորը: Ծնվել է Կյանք Կյանքից, Լույս՝ Լույսից, զորություն՝ զորությունից, Աստված՝ Աստծուց: Եվ ոչ մի տարբերություն Որդու աստվածային բնույթի մեջ: Ով արժանանա տեսնել Որդու աստվածայնությունը, կվայելի նաև ծնողին: Իմ խոսքը չէ, այլ՝ Միածին Որդու. «Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, Փրկիչպոս, և ինձ չճանաչեցի՞ր: Ով ինձ տեսավ, տեսավ Հորը» (Հովհ., ԺԴ 9): Կարճ ասած, ո՛չ տարանջատում, ո՛չ էլ նույնացնում ենք Որդուն և Հորը: Երբեք չվկայես Որդուն Հորից առանձին, և մի ընդունիր նրանց, ովքեր ասում են, թե Հայրը մերթ Հայր է, մերթ՝ Որդի: Այս օտար է և չի առնչվում Եկեղեցու ուսմունքին: Հայրը, ծնելով Որդուն, մնաց Հայր և չայլափոխվեց: Իմաստություն ծնեց, բայց Ինքը չզրկվեց իմաստությունից: Զորություն ծնեց, բայց

Ինքը չտկարացավ: Ծնեց Աստծու, բայց Ինքը չզրկվեց աստվածութունից: Ոչինչ չկորցրեց և ոչնչից չզրկվեց, ոչ էլ այլափոխվեց Ինքը՝ Հայրը: Որդին չի զրկվել ոչնչից, որ ունի Հայրը: Հայրը կատարյալ է, կատարյալ է նաև Որդին: Աստված է Հայրը, Աստված է և Որդին: Բոլորի Աստվածն է Որդին և Հորը անվանում է Իր Աստվածը: Չի ամաչում ասելու. «Ես բարձրանում եմ դեպի իմ Հայրը և ձեր Հայրը՝ դեպի իմ Աստվածը և ձեր Աստվածը» (Հովհ., Ի 17):

19. Բայց որպեսզի չկարծենք, որ Հայր Աստվածը նույն կերպ Հայր է Որդի Աստծու և Հայր՝ իր արարածների համար, Նա պարզել է շարունակության մեջ: Նա չի ասել՝ բարձրանում եմ դեպի մեր հայրը, որպեսզի արարածները նույն կերպ չհամարվեն Աստծու որդիներ, ինչպես Նրա Միածին Որդին, այլ ասել է՝ դեպի իմ Հայրը և ձեր Հայրը: Նա իմ բնական Հայրն է, իսկ ձեր՝ ոչ բնական: Ծարուհակելով ասել է. «Դեպի իմ Աստվածը և ձեր Աստվածը»: Այլ է Նա Միածին Որդու համար որպես Աստված, այլ՝ իր արարածների համար որպես Աստված: Ուրեմն, Աստվածորդին ճշմարիտ Աստված է, անպատմելի ձևով ծնված բոլոր դարերից էլ առաջ: Ես բազմիցս այս ամենի մասին ասում եմ, որպեսզի այն տպավորվի ձեր գիտակցության մեջ: Հավատա, որ Աստված ունի Որդի: Բայց թե ինչպե՞ս, շատ մի քրքրի, քանզի ինչքան էլ փնտրես, չես կարող գտնել: Քեզ այդքան մի՛ բարձրացրու, որ չընկնես: «Մտքիդ մեջ պահիր այն, ինչ հրամայվեց քեզ» (Միքաբ, Գ 22): Նախ ինձ ասա, թե ո՞վ է ծնողը, այնժամ կիմանաս նաև ծնյալին: Բայց եթե չես կարող ճանաչել Հոր բնությունը, շատ մի՛ քրքրի նաև Որդու ծնվելու հանգամանքները:

20. Քո բարեպաշտության համար քեզ բավական է իմանալ, թե Աստված ունի իրենից ծնած մեկ Որդի, որը գոյություն կոչվեց՝ ոչ թե Բեթղեհեմում ծնվելով, այլ գոյություն ունեցող բոլոր դարերից էլ առաջ: Այդ մասին Միքիա

մարգարեն ասել է. «Եվ դու, Բեթղեհեմ, Եփրաթայի սակավամարդ տուն, կլինես Հուդայի երկրի հազարավորների մեջ: Քեզնից պիտի ելնի ինձ համար Իսրայելի մի իշխան, և Նրա ծագումը աշխարհի սկզբի օրերից է» (Միքիա, Ե 2): Կանգ մի՛ առնի այն բանի վրա, թե այժմ առաջանում է Բեթղեհեմից, այլ երկրպագիր Նրան, Ով Հորից ծնվել է դարերից էլ առաջ: Մի՛ հավատա, եթե ասեն, թե Որդու գոյության սկիզբը ժամանակի մեջ է, այլ դու իմացիր Հոր սկիզբը ժամանակից դուրս: Քանզի Որդու սկիզբը ժամանակից դուրս է, և Հայրը անսկիզբ է և անհասկանալի: Միածին Որդու արդարության գետի աղբյուրը Հայրն է, որը ծնել է Նրան, ինչպես Իրեն է միայն հայտնի: Ուզո՞ւմ ես իմանալ, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը հավիտենական թագավոր է, ուրեմն, լսիր, թե ինքն ինչ է ասում. «Աբրահամը՝ ձեր հայրը, ցանկացավ իմ աշխարհ գալու օրը տեսնել, տեսավ և ուրախացավ» (Հովհ., Ը 56): Եվ հետո, քանի որ հրեաները այդ ծանր ընդունեցին, Նա ավելացրեց. «Ես եմ, նախքան Աբրահամի ծնվելը» (Հովհ., Ը 58): Եվ դարձյալ, դիմելով Հորը, ասում է. «Այժմ փառավորի ինձ, Հայր, Քեզ մոտ եղող այն փառքով, որ ունեի Քեզ մոտ՝ նախքան աշխարհի լինելը» (Հովհ., Ժ 5): Հստակորեն ասել է, թե՛ նախքան աշխարհի լինելը ես Քեզ մոտ փառք ունեի: Ու դարձյալ՝ «Ինձ սիրեցիր նախքան աշխարհի լինելը» (Հովհ., Ժ 24), դրանով իսկ պարզ ասելով, որ իմ փառքը որպես Որդու, հավերժական է, ինչպես Քո փառքը որպես Հոր:

21. Արդ, հավատանք մեկ Տեր Հիսուս Քրիստոսի, Աստծու Միածին Որդուն, որ ծնվել է Հորից նախքան դարերը, որ ճշմարիտ Աստված է և որի միջոցով եղավ ամեն ինչ, «թե՛ գահեր, թե՛ տերություններ, թե՛ պետություններ, թե՛ իշխանություններ. ամեն ինչ նրանով ստեղծվեց» (Կող., Ա 16), և ոչ մի ստեղծագործություն չի գտնվում Նրա իշխա-

նուլթյունից դուրս: Թող պապանձվի ամեն հերետիկոսուլթյուն, որն առաջարկում է ընդունել տարբեր արարիչներ և աշխարհ ստեղծողներ: Թող պապանձվի այն լեզուն, որ հայհոյում է Աստվածորդի Քրիստոսին: Թող պապանձվեն նրանք, ովքեր արևին անվանում են Քրիստոս, քանզի կա արևի Արարիչը՝ աներևույթ Արևը: Թող պապանձվեն նրանք, ովքեր ասում են, թե հրեշտակները ստեղծեցին աշխարհը, ովքեր ուզում են գրկել Միածնին աշխարհի Արարչի պատվից: Քանզի երևելին և աներևույթը, Գահերն ու Տիրուլթյունները կամ որևէ այլ արարում, ամեն ինչ Քրիստոսի միջոցով է կատարված, Նա թագավորում է իր ստեղծած բոլոր արարածների վրա: Նա չի հափշտակել այլոց ստեղծածը, այլ թագավորում է իր ստեղծածների վրա, ինչպես Հովհաննես Ավետարանիչն է ասել. «Ամեն ինչ Նրանով եղավ, և առանց Նրա չեղավ ոչինչ» (Հովհ., Ա 3): Ամեն ինչ եղավ Նրա միջոցով: Հայր Աստվածը ստեղծեց Որդու միջոցով:

22. Ուզում եմ մի օրինակով բացատրել մեր այս ուսուցման կարևորությունը, բայց գիտեմ, որ իմ ասելիք օրինակը թույլ է: Տեսանելի աշխարհից վերցրած մի օրինակը կարող է ճշգրիտ ցույց տալ աստվածային և աներևույթ գորությունը: Բայց թույլ տվեք այդ օրինակը բերեմ որպես թույլից թույլերին ասված խոսք: Պատկերացնենք մի երկրային թագավորի, որն իր որդուն ունի իրեն գահակից: Թագավոր Հայրը կամենում է մի նոր քաղաք հիմնել, և դրա կառուցումը հանձնարարում է իր գահակից որդուն: Կարող էք այս օրինակը վերցնել և հասկանալ դրա իմաստը: Թվում է, թե Հայրը կամեցավ ամեն ինչ կառուցել, և որդին ստեղծեց ամեն ինչ, իր հոր կամքին համաձայն: Այսպիսով, հոր կամքի արտահայտությունը ապահովում է նրա իշխանությունը ամենքի վրա, իսկ որդու անմիջական ընդգրկումը կառուցմանը ապահովում է որդու իշխանությունը ա-

մենքի վրա: Այսպիսով, ո՛չ հայրն է կորցնում իր իշխանությունը ամբողջ ստեղծագործության վրա, ո՛չ էլ որդին իշխում է օտար արարումների, այլ իր կառուցածի վրա: Քանի որ, ինչպես ասվեց, ոչ թե հրեշտակներն են ստեղծել աշխարհը, այլ Միածին Որդին, որը նախքան դարերը ծնվել է Հորից: Նրա միջոցով էլ ստեղծվել է ամեն բան. և ոչինչ չկա, որ իր ստեղծածը չլինի: Այս ամենը, սակայն, Քրիստոսի շնորհով մենք մինչև հիմա բացատրել ենք ձեզ:

23. Հավատի Հանգանակի այս հոգևածի մասին այսքան խոսելուց հետո մեր ասելիքն ամբողջացնենք: Ամեն ինչ արարեց Քրիստոս, եթե անգամ խոսես հրեշտակների, հրեշտակապետերի, Տիրուլթյունների և Գահերի մասին: Եվ դա ոչ այն պատճառով, որ Հայրը չէր կարող ամեն ինչ ինքը ստեղծել, այլ ուզում էր, որ Որդին թագավորի իր արարածների վրա: Այդ պատճառով էլ Որդուն թելադրեց արարչագործության ծրագիրը: Մեծարելով Հորը՝ Միածին Որդին ասում է. «Որդին ինքն իրենից չի կարող անել ոչինչ, այլ անում է այն, ինչ տեսնում է, թե Հայրը կատարում է. քանզի ինչ որ Հայրն է անում, նույնը Նրա նման և Որդին է գործում» (Հովհ., Ե 19): Եվ դարձյալ, «Իմ Հայրը մինչև այժմ գործում է, ուրեմն, ես ևս գործում եմ» (Հովհ., Ե 17): Երկու գործողների միջև չկար ոչ մի հակադրություն: «Ինչ որ իմն է, բոլորը քոնն է, և ինչ որ քոնն է, այն իմն է» (Հովհ., ԺԷ 10), – ասում է Տերը: Եվ այդ գիտենք Հին և Նոր Կտակարանից: Քանզի Նա, Ով ասում է՝ մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, խոսում էր իր մոտ ներկա մեկի հետ: Սաղմոսերգուն հստակ ասել է. «Նա ասաց՝ և ստեղծվեցին, հրամայեց՝ և հաստատվեցին» (Սաղմ., ԼԲ 9). կարծես թե Հայրը հրամայում է, և Որդին ստեղծում է Հոր կամքի համաձայն: Այդ էլ ծածուկ ասում է Հորը. «Նա է, որ մենակ տարածել է երկինքը, և ծովի վրա շրջում է այնպես, ինչպես ցամաքի վրա» (Հոր, Թ 8): Դրա-

նով հայտնում էր, թե Նա, Ով երկրի վրա Իր ներկայութ-  
յամբ քայլում է ծովի վրա, Նա է, որ նախքան երկրի վրա  
հայտնվելը ստեղծեց երկինքը: Դարձյալ Տերն ասում է.  
«Դո՞ւ ես, որ կավն առնելով՝ ստեղծեցիր կենդանի արարա-  
ծին և, խոսուն, զետեղեցիր երկրի վրա» (Հոբ, ԼԸ 14), և ա-  
վելացնում. «Քո առաջ ահով բացվելու են դռները մահ-  
վան. դժոխքի դռնապանները սարսելու են՝ քեզ տեսնելով»  
(Հոբ, ԼԸ 17): Սրանով բացահայտում է, թե Նա, Ով, մար-  
դասիրությունից մղված, իջավ դժոխք, ի սկզբանե կավից  
ստեղծել էր մարդուն:

24. Ուրեմն, Քրիստոսը՝ Աստծու Միածին Որդին, աշ-  
խարհի ստեղծողն է նաև: «Քանզի աշխարհի մեջ էր, և աշ-  
խարհը Նրանով եղավ» (Հովհ., Ա 10) և «Նա յուրայիննե-  
րի մոտ եկավ» (Հովհ., Ա 11), ինչպես սովորեցնում է Ավե-  
տարանը: Հայր Աստծու թելադրանքով Նա ոչ միայն երևե-  
լիներ, այլև աներևույթների արարիչն է: «Որովհետև  
Նրանով ստեղծվեց այն ամենը, ինչ որ երկնքում է և ինչ  
որ՝ երկրի վրա: Ինչ որ երևում է և ինչ որ չի երևում. թե՛  
գահեր, թե՛ տերուկություններ, թե՛ պետություններ, թե՛ իշ-  
խանություններ՝ ամեն ինչ Նրանով և Նրա համար ստեղծ-  
վեց. և Նա կար առաջ, քան ամեն ինչ, և ամեն ինչ Նրա-  
նով է կանգնած հաստատ» (Կողոս., Ա 16-17): Եթե ասես  
ժամանակի մասին, դարձյալ Քրիստոս, Հոր նշանով, ստեղ-  
ծեց այն, ինչպես գրել է Պողոս առաքյալը. «Այս վերջին օ-  
րերին մեզ խոսեց իր Որդու միջոցով, որին ժառանգ նշա-  
նակեց ամեն ինչի, և որի միջոցով ստեղծվեց տիեզերքը»  
(Եբր., Ա 2): Այս Որդուն վայել է փառք, պատիվ և զորութ-  
յուն, Հոր և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ, և հավիտյանս  
հավիտենից: Ամեն:

## ՈՒՍՈՒՑՈՒՄ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

### Արված Երուսաղեմում: Վերաբերում է Հանգանակի «Մարմնացավ և մարդացավ» հոդվածին:

Ընթերցում Եսայու մարգարեությունից. «Տերը շարունակեց խոսել  
Աքազի հետ՝ ասելով՝ քեզ համար նշան խնդրիր քո Տեր Աստծուց» և  
այլն. «Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, և նրա անունը պիտի  
լինի Էմմանուել» (Եսայի, Է՝ 10-14) և շարունակությունը:

1. Անմեղուկյան ընկերներ և ողջամտություն աշակերտ-  
ներ: Եկեք մեր անմեղ շրթներով օրհնեցե՛ք կույսից  
ծնված Աստծուն, մենք բոլորս, որ արժանացել ենք որպես  
խորհրդավոր կերակուր ճաշակել Քրիստոսի մարմինը, որը  
խորհրդանշվում է որպես Գառ, ճաշակենք գլուխը ոտքերի  
հետ. «գլուխ» ասելով՝ հասկանանք Նրա աստվածայնութ-  
յունը, իսկ «ոտքեր» ասելով՝ հասկանանք Նրա մարդկայ-  
նությունը: Սուրբ Ավետարանների ունկնդիրներս հավա-  
տանք Հովհաննես աստվածաբանին, որ ասել է. «Սկզբից էր  
Բանը, և Բանը Աստծու մոտ էր, և Բանը Աստված էր»  
(Հովհ., Ա 1), ապա ավելացրել է. «Եվ Բանը մարմին եղավ  
ու բնակվեց մեր մեջ» (Հովհ., Ա 14): Եվ բարեպաշտություն  
չէ երկրպագել Նրան որպես պարզ մարդու, և ոչ էլ Նրան  
խոստովանել որպես Աստծու, առանց մարդկային բնութ-  
յան: Քանզի, եթե Քրիստոս ճշմարտապես Աստված է, և  
այդ այդպես է, եթե չընդունեն մարդկային բնությունը,  
մենք փրկությունից կզրկվե՛ինք: Ուրեմն, պաշտենք Նրան  
որպես Աստծու և միաժամանակ հավատանք, թե Նա մար-  
դացավ նաև: Քանզի Նրան միայն մարդ համարելը, առանց  
Նրա աստվածայնությունը, անօգուտ է, ոչ էլ միայն Նրա  
աստվածայնությունն ընդունելը մեզ կտանի դեպի

փրկուած թոյն: Խոստովանենք թագաւորի և բժշկի ներկայութիւնը: Քանզի արքա Հիսուսը, որը մեզ պիտի բժշկէր, կապեց մարդկային բնութեան ծառայական գոգնոցը և բժշկեց նրա հիվանդութիւնը: Մանուկների կատարյալ ուսուցիչը մանուկների հետ մանկացավ, որպեսզի անմիտներին դարձնի իմաստուն: Երկնային հացը երկիր իջավ (հմմտ. Հովհ., Զ 41)՝ սովորներին կերակրելու համար:

2. Եվ Հուդայի որդիները, անտեսելով Նրան, Ով եկավ, և սպասելով վատ եկողի, չկարողացան ճանաչել ճշմարիտ Քրիստոսին: Եվ իրենց մոլորութեան մեջ որպես Քրիստոսի սպասում են հակաքրիստոսին, որպեսզի այստեղ ևս Փրկիչը ճշմարիտ դուրս գա, քանի որ ասել է. «Ես եկա իմ Հոր անունով, և ինձ չեք ընդունում: Եթե ուրիշ մեկը գա իր անունով, նրան կընդունեք» (Հովհ., Ե 43): Լավ կլինէր հուդայականներին հարցնել. Եսային ճշմարիտ է, թե՞ ոչ, երբ ասում է, թե Էմմանուէլը պիտի ծնվի կույսից: Քանզի տարօրինակ է, որ նրան կարող են մեղադրել որպես ստախոսի: Որովհետև նրանք սովոր են մարգարեներին ոչ միայն մեղադրել որպես ստախոսների, այլև քարկոծել նրանց: Իսկ եթե ճշմարիտ է մարգարեն, ապա ցույց տվեք, թե որտեղից էք սպասում Էմմանուէլին: Նա կծնվի՞ կույսից, թե՞ ոչ: Քանզի եթե չծնվի կույսից, մարգարեին կհամարեք սոստ: Իսկ եթե սպասում էք, որ ապագայում կծնվի, ապա ինչո՞ւ էք մերժում արդեն կատարվածը:

3. Հուդայականները թող մոլորվեն, եթե այդպես կամենում են. իսկ Աստուծու եկեղեցին թող փառաբանվի: Մենք ընդունում ենք, որ Բան Աստվածը իրականում և ճշմարտապես մարդացավ ոչ թե այրի և կնոջ մարմնական ցանկութիւնից, ինչպես պնդում են հերետիկոսները, այլ կույսից և Սուրբ Հոգուց, ինչպես սովորեցնում է Ավետարանը, մարդացավ ոչ թե երևակայութեան մեջ, այլ ճշմարտապես,

Սուրբ Հոգու և կույսի գործակցութեամբ: Եվ որ Նա իրապես մարդեղացավ կույսից, դու ապացույցներ կստանաս մեր խոսքի շարունակութեան մեջ: Քանզի հերետիկոսների մոլորութիւնը շատ է խճճված: Նրանցից ոմանք պնդում են, որ Նա ոչ մի դեպքում չի ծնվել կույսից, իսկ ուրիշներ գտնում են, որ Նա անշուշտ ծնվել է, բայց ոչ կույսից, այլ այրի հետ հարաբերութիւն ունեցած կնոջից: Ուրիշներ ասում են, թե Քրիստոս մարդացած Աստված է, այլ աստվածութեան բարձրացված մարդ: Նրանք համարձակվեցին ասել, թե նախագոյ Բանը ոչ թե մարդ դարձավ, այլ որ Քրիստոս սովորական մարդ էր, առաքինութեամբ այնքան հայտնի, որ և վարձատրվեց աստվածացվելով:

4. Բայց քո մտքում պահիր այն, ինչ երեկ ասվեց Քրիստոսի աստվածայնութեան մասին: Հավատա, թե Նա Աստուծու Միածին Որդին է, նույն ինքը, որ ծնվել է կույսից: Հավատա Ավետարանիչ Հովհաննեսին, որ ասել է. «Բանը մարմին եղավ և բնակվեց մեր մեջ» (Հովհ., Ա 14): Քանզի հավիտենական Բանը, որ ծնվեց Հորից նախքան բոլոր դարերը, այս վերջին տարիներին մեր փրկութեան համար ստացավ մարդկային մարմին: Բայց շատերը հակաճառելով ասում են. Ի՞նչ մեծ անհրաժեշտութիւն Աստուծու ստիպեց մարդանալ: Իր բնույթով Աստված կարո՞ղ է հաղորդակցվել մարդկանց: Հնարավո՞ր է, որ կույսը առանց այր մարդու հետ կենակցելու ծննդաբերի: Քանի որ այսքան հակաճառում են, և վեճը մեծ ծավալներ և բազմապիսի բնույթ է ստանում, թող որ Քրիստոսի շնորհով և ներկաների ազդեցութեամբ վերլուծենք նրանց փաստարկները:

5. Նախ քննարկենք, թե Հիսուս ինչո՞ւ իջավ երկիր: Ուշադրութիւն մի՛ տուր իմ պատճառաբանութիւններին, եթե դրանք համարում ես հարմարեցված և չարամիտ: Քանզի հնարավոր է, որ դու իմ մասին այդպես էլ մտածես: Իսկ



ես քեզ ասում եմ. եթե դու ամեն հարցի վերաբերյալ չլսես մարգարեների համամիտ կարծիքը, մի հավատա իմ ասածներին: Եթե Գրքերից չիմացար կույսին վերաբերող հարցերը, Քրիստոսի ծնունդի վայրը, ժամանակը և հանգամանքները, ոչ մի մարդու վկայությունը մի՛ ընդունիր: Քանզի ում որ մարդ իր առաջ տեսնում է սովորեցնելիս, կարող է նրան համարել կասկածելի: Բայց ո՞ր խելոք մարդը կասկածելի կհամարի մարգարեին, որ մարգարեացել է ավելի քան հազար տարի առաջ: Եթե, ուրեմն, փնտրում ես Քրիստոսի աշխարհ գալու պատճառը, ապավինիր Սուրբ Գրքի առաջին՝ Ծննդոց, գրքին: Աստված վեց օրում ստեղծեց աշխարհը, բայց աշխարհը մարդու համար էր: Եվ արևը, որը ճառագում է պայծառագույն ճառագայթներով, ստեղծվեց լուսավորելու համար մարդուն: Եվ բոլոր կենդանիները արարվեցին մեզ ծառայելու համար: Բույսերն ու ծառերը ստեղծվեցին, որպեսզի մենք վայելենք դրանք: Բոլոր ստեղծագործությունները լավ են ու գեղեցիկ, բայց ոչ մեկը Աստծու պատկերը չէ: Այդպիսին է միայն մարդը: Արևը ստեղծվեց Աստծու ստեղծագործ հրամանով, մինչդեռ մարդը արարվեց աստվածային ձևով: «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով և նմանությունը» (Ծննդ., Ա 26): Քանի որ երկնային թագավորի փայտե պատկերը հարգվում է, ապա ինչքան ավելի պիտի հարգվի Աստծու բանական պատկերը: Այս արարածը՝ բարձրագույնը Աստծու բոլոր ստեղծագործություններից, որ երջանիկ ապրում էր դրախտում, դուրս արվեց այնտեղից սատանայի նախանձի պատճառով: Եվ չարախնդաց թշնամին իր նախանձը գրգռած արարածի անկումով: Պիտի ուզենայի՞ր, որ թշնամին շարունակեր ուրախանալ: Նա, քանի որ չհամարձակվեց մոտենալ այրին, նրա գործության պատճառով, մոտեցավ թույլ կնոջ, որը թերևս կույս էր: Քանզի Ադամը Եվային, որպես իր կնոջ, ճանաչեց դրախտից դուրս արվելուց հետո (Հմմտ. Ծննդ., Դ 1):

6. Մարդկային ցեղի երկրորդ սերունդը Կայենն էր և Աբելը: Կայենը դարձավ առաջին մարգասպանը: Հետևեց ջրհեղեղը՝ մարդկանց վատ բարքերի պատճառով: Այնուհետև երկնքից կրակ թափվեց Սոդոմի բնակիչների վրա՝ նրանց անօրենսությունների պատճառով: Տարիներ անց Աստված ազգերի մեջ իր համար ընտրեց Իսրայելի ազգը: Բայց այս ընտրյալ ցեղը ևս փչացավ և վիրավորվեց: Քանզի մինչ Մովսեսը լեռան վրա կանգնած էր Աստծու առաջ, ժողովուրդը Աստծու փոխարեն հորթն էր պաշտում: Օրենսդիր Մովսեսի ժամանակ, որ օրինադրել էր՝ «մի՛ շնանար», մի մարդ մտավ դարբնոց և համարձակվեց անառականալ Մովսեսի առաջ: Մովսեսից հետո մարգարեներ ուղարկվեցին՝ Իսրայելը բուժելու համար: Բայց հոգևոր հիվանդությունը բուժելու նրանց ջանքերը ապարդյուն եղան, ու նրանք ողբում էին դրա համար: Մարգարեներից մեկը գրել է. «Վա՛յ ինձ, որովհետև երկյուղածությունը վերացավ երկրից, և մարդկանց մեջ չկա մեկը, որ ուրիշ լինի» (Միք. Է 2): Եվ դարձյալ՝ «բոլորը խոտորվեցին, միասին անպիտան դարձան. բարություն անող չկա, ոչ իսկ մեկ հոգի» (Սաղմ., ԺԳ 3): Եվ դարձյալ՝ «Անեծք, ստույթուն, սպանություն, գողություն և շնություն ողողել են երկիրը» (Օսեե, Դ 2): «Իրենց որդիներին ու դուստրերին զոհեցին դեռերին» (Սաղմ., ձե 37): «Նրանք զբաղվում էին հմայությունամբ, մոգությունամբ և գուշակություններով», և «իրենց զգեստները որպես ծածկոց էին զցում իրենց վրա և զոհասեղանին» (Ամոս, Բ 8):

7. Շատ խորն էր մարդկության վերքը: «Ոտքերից մինչև գլուխ նրա վրա առողջ տեղ չկա. վերքերի, այտուցների և շարավոտ խոցերի վրա դնելու ո՛չ սպեղանի կա, ո՛չ ձեթ և ո՛չ էլ վիրակապ» (Նսայի, Ա 6): Եվ մարգարեները ողբալով ու տանջվելով ասում էին. «Ո՞վ կտա Սիոնից փրկությունն Իսրայելի» (Սաղմ., ԺԳ 7): Եվ դարձյալ՝ «քո ձեռքը թող լի-

նի մարդու վրա. քո աջը՝ այն մարդու որդու վրա, որին դու գորացրիր քեզնով» (Մաղմ., ՀԹ 18): Եվ «մենք քեզնից չենք հեռանալու»: Եվ մեկ ուրիշ մարգարե խնդրելով ասում էր. «Տեր, ցածրացրու երկինքը և իջիր» (Մաղմ., ՃԽԳ 5): Իջիր, քանզի մարդկության վերքերը գերազանցում են բուժելու մեր կարողությունները: Սպանեցին քո մարգարեներին և քո զոհասեղանները կործանեցին (Գ Թագ., ԺԹ 10): Մենք անգոր ենք չարիքն ուղղելու: Դու կարող ես այն ուղղել:

8. Տերն ընդունեց մարգարեների խնդիրքը: Հայրը չէր կարող անտեսել մեր ցեղի կորուստը: Երկնքից ուղարկեց իր Որդուն, որպեսզի մեզ բժշկի: Մարգարեն ասում է. «Տերը, Ում դուք խնդրում եք, գալիս է և կհայտնվի հանկարծակի: Որտե՞ղ: Տերը կհայտնվի իր տաճարում» (Մաղմ., Գ 1). այն տաճարում, որտեղ Նրան քարկոծեցինք» (Հմմտ. Հովհ., Ը 59): Մեկ ուրիշ մարգարե, այդ լսելով, ասում է. «Այդքան հանգիստ ավետում ես փրկության մասին, որ Աստված բերում է: Մեր փրկության համար աշխարհում Աստծու հայտնություն մասին ծածո՞ւկ ես խոսում: Ել այդ բարձր լեռան վրա, դու, որ բերում ես փրկության ուրախ ավետիսը: Հաղորդիր Հուդայի քաղաքներին: Ահավասիկ ձեր Աստվածը. ահա Տերը, որ գալիս է գորություն» (Եսայի, Խ 9-10): Տերը դարձյալ ասաց. «Ահա ես գալիս եմ բնակվելու ձեր մեջ: Եվ շատ ժողովուրդներ պիտի ապավինեն Տիրոջը» (Զաք., Բ 14-15): «Պիտի գամ, որպեսզի հավաքեմ բոլոր ազգերին ու բոլոր լեզուները» (Եսայի, ԿԶ 18): Քանզի «յուրայինների մոտ եկավ, սակայն յուրայինները Նրան չընդունեցին» (Հովհ., Ա 11): Գալիս ես. իսկ ի՞նչ ես շնորհում ազգերին: Գալիս եմ՝ կենդանացնելու բոլոր ազգերին և նրանց վրա կթողնեմ իմ նշանը, խաչի վրա ես իմ մղած պայքարից իմ յուրաքանչյուր զինվորին՝ թագավորական դրոշմ, որը պետք է կրի իր ճակատին: Եվ

մեկ ուրիշ մարգարե ասում էր. «Ցածրացրեց Նա երկինքն ու իջավ, և Նրա ոտքերի տակ մառախուղ էր» (Մաղմ., ԺԷ 10): Այդ ժամանակ մարդիկ դեռևս անգետ էին Նրա՝ երկնքից իջնելուն: Այդ անգիտանալն է խորհրդանշում մառախուղը:

9. Այնուհետև Սողոմոնը, այդ ամենն իր հորից՝ Դավթից, լսելով, հիանալի մի տաճար կառուցեց և, կանխատեսելով, թե ո՞վ է գալու և այնտեղ բնակվելու, հիացած ասում է. «Ճշմարիտ է, որ Աստված մարդկանց մեջ պիտի ապրի երկրի վրա» (Գ Թագ., ԺԸ 27): «Այո», – նրան կանխելով՝ ասում է Դավիթը Սողոմոնի համար գրած իր Սաղմոսում, որտեղ ասված է. «Նա թող իջնի որպես անձրև խուզած բրդի վրա, և որպես ցող՝ երկրի վրա» (Մաղմ., ՀԱ 6): Անձրևը խորհրդանշում է աստվածային բնություն իջնելը երկնքից, իսկ խուզած բուրդը՝ մարդկային բնությունը, որը միացել է աստվածայինին: Ցողի կաթիլների անաղմուկ և աննկատելի իջնելը երկնքից ցույց է տալիս Հիսուսի ծնվելու խորհրդի անիմացությունը: Ուստի մոգերը հարցնում էին. «Ո՞ւր է հրեաների արքան, որ ծնվեց» (Մատթ., Բ 2), իսկ Հերովդեսը, խռովված ծնվածի պատճառով, հարցնում էր. որտե՞ղ է ծնվում Քրիստոսը:

10. Իսկ ո՞վ է այդ երկնքից իջնողը: Շարունակության մեջ ասված է. «Նա կապրի, որքան որ արևը լինի, լուսնից առաջ, սերնդից սերունդ» (Մաղմ., ՀԱ 5): Դարձյալ մեկ ուրիշ մարգարե ասում է. «Ուրախացիր խնդությունք, դուստր Սիոնի, կանչիր ցնծությունք, դուստրը Երուսաղեմի. ահա գալիս է քո թագավորը քեզ մոտ, քո արդար, փրկագործ ու խոնարհ թագավորը» (Զաք., Թ 9): Թագավորներ շատ կան: Բացատրիր մեզ, ով մարգարե, ո՞ւմ մասին է քո խոսքը: Տուր մեզ մի նշան, որը չունեն մյուս թագավորները: Եթե ասես ծիրանակիր թագավորի մասին,

այդպիսիք նրանից առաջ եղել են: Եթե ասես նիզակակիր զինվորներով պաշտպանված, ոսկեզարդ ռազմակառքին նստած թագավորի մասին, այդպիսիք ևս նախկինում եղել են: Տուր մեզ առանձին մի նշան, հատուկ այն թագավորին, որի ներկայութան մասին մեր մեջ դու հաղորդում ես: Իսկ մարգարեն պատասխանում է և ասում. «Ահա գալիս է քո թագավորը քեզ մոտ, քո արդար, փրկագործ ու խոնարհ թագավորը՝ հեծած էշի և քուռակի վրա» (Ձաք., Թ 9), և ոչ թե ռազմակառքի վրա: Ուրեմն, գալիք թագավորի մասին դու ունես առանձնահատուկ մի նշան: Բոլոր թագավորներից միայն Հիսուսը չթամբած քուռակի վրա նստած, և Երուսաղեմ մտնելիս ողջունվեց որպես թագավոր: Եվ այդ թագավորը գալով ի՞նչ է անելու: Նույն մարգարեն պատասխանում է. «Իսկ դու արյամբ կնքված ուխտի համար պիտի արձակես քո գերիներին իրենց անջուր գբից» (Ձաք., Թ 11):

11. Ենթադրենք, թե քուռակի վրա նստած: Մեզ տուր առավել հավաստի նշան՝ որտե՞ղ Նա պիտի հեծնի: Հայտնիր մեզ, թե որտե՞ղ պիտի կանգ առնի քաղաք մտնող թագավորը: Յույց տուր մեզ մոտիկ ակնառու մի վայր, որը մեզ անհայտ չլինի, որպեսզի քաղաքից մենք կարողանանք այն տեսնել: Եվ մարգարեն դարձյալ ասում է. «Այդ օրը Նրա ոտքերը պիտի կանգնեն Չիթենյաց լեռան վրա՝ Երուսաղեմի դիմաց, արևելյան կողմը» (Ձաք., ԺԴ 4): Մի՞թե քաղաքում կանգնած մարդը չի կարող այդ վայրը տեսնել:

12. Մենք արդեն երկու նշան ունենք: Ուզում ենք իմանալ նաև երրորդը: Տերը գալով ի՞նչ է անելու: Մեկ ուրիշ մարգարե պատասխանում է. «Ահավասիկ մեր Աստվածը: Նա ինքը պիտի գա ու փրկի մեզ: Այդ ժամանակ կույրերի աչքերը պիտի բացվեն, և խուլերի ականջները լսեն: Այդ ժամանակ կաղը պիտի եղջերուի պես վազի, և ծանրախոս-

ների լեզուն պիտի պարզ դառնա» (Եսայի, ԽԵ 4-5): Մեզ ուրիշ վկայություն ևս ասա: Դու, մարգարե, ասում ես, թե այն Տերը, որ գալու է, այնպիսի հրաշքներ կգործի, որ երբևէ չեն եղել: Հասկանալի ուրիշ նշաններ կարո՞ղ ես ասել: Մարգարեն պատասխանում է. «Այդ Տերը դատի է մտնում ժողովրդի ծերերի և նրա իշխանների հետ» (Եսայի, Գ 14): Ահա բացառիկ մի նշան ևս. Տերը հանդուրժում է դատվել ժողովրդի ավագների՝ իր իսկ ծառաների կողմից:

13. Հրեաները այս ամենը կարդում են թեև, բայց ճիշտ չեն հասկանում: Խցանել են իրենց սրտի ականջները, որպեսզի չլսեն: Բայց մենք հավատում ենք Հիսուս Բրիտոսին, որ մարմնացավ և մարդեղացավ, քանզի հասկանում ենք, որ այլ կերպ չէր կարող լինել: Քանի որ մենք չէինք կարող Նրան տեսնել ու վայելել, ինքը դարձավ մեզ նման, որպեսզի արժանանանք Նրան վայելելու: Եթե աշխարհաստեղծման չորրորդ օրը արարված արևը տեսնել չենք կարողանում, ապա նրան արարած Աստծուն ինչպե՞ս կկարողանայինք տեսնել: Տերը բոցերի մեջ իջավ Սինա լեռան վրա, և ժողովուրդը չկարողացավ դիմանալ ու ասաց Մովսեսին. «Դու խոսիր մեզ հետ, և մենք կհնազանդվենք: Աստված թող չխոսի մեզ հետ, թե չէ կարող ենք մեռնել» (Ելք, Ի 19): Եվ դարձյալ՝ «Որովհետև միս ու արյունից կազմված այդ ո՞ր մարդն է, որ կրակի միջից լսել է կենդանի Աստծու ձայնը, ինչպես մենք ենք լսել ու կենդանի մնացել» (Բ Օր., Ե 26): Եվ եթե միայն Աստծու ձայնը լսելով իսկ՝ մարդ մեռնում է, ապա նա չի՞ մեռնի՞ տեսնելով իրեն իսկ Աստծուն: Ինչո՞ւ էս զարմանում: Ինքը Մովսեսը ևս ասաց. «Սարսափում եմ և դողում» (Եբր., ԺԲ 21):

14. Ուրեմն ի՞նչ: Դու կուզենայիր, որ աղետի պատճառ դառնար Նա, Ով եկել էր փրկություն բերելու, քանի որ մարդիկ Նրա առաջ չէին դիմանալու, թե՞ պիտի ուզեիր, որ գտնվեր մի ձև, որով Շնորհը մեզ մատուցվեր մեր կարո-

դուժյուժուններին համեմատ: Դանիելը չդիմացավ հրեշտակի տեսիլին, և դուռ ուզում ես դիմանալ հրեշտակների Տիրոջ տեսքին: Հայտնվեց Գաբրիելը, և Դանիելը գետին ընկավ: Ինչպիսի՞ն էր հայտնվողի տեսքը և որտեղի՞ց: Նրա դեմքը արևի նման չէր, այլ կայծակի, և աչքերը փայլում էին ոչ թե բովի նման, այլ ճրագների նման, և նրա ձայնը ոչ թե հրեշտակների տասներկու լեգեոնի ձայնի նման էր, այլ ամբոխի բվվոցի: Այսուհանդերձ, Դանիելը ընկավ գետին, և հրեշտակը մոտենալով ասում է նրան. «Մի՛ վախենար, Դանիել: Քո խոսքերը լսելի դարձան: Վեր կաց և քաջ եղիր» (Հմմտ. Դան., Ժ 12): Եվ Դանիելն ասաց. «Վեր կացա սարսափահար»: Բայց նա այդ պատասխանը չտվեց նրան, մինչև որ հրեշտակը իր՝ մարդկայինի նմանվող ձեռքով դիպավ իրեն: Միայն այն ժամանակ, երբ հրեշտակն ստացավ մարդու կերպարանք, Դանիելը խոսեց և ասաց նրան. «Տեր, քեզ որ տեսա, աղիքներս շրջվեցին: Ուժս կորցրի, և շունչս կտրվեց»: Եթե հրեշտակի երևալը ձայնից և ուժից զրկեց մարգարեին, մի՞թե Աստուծու երևալը նրան կենդանի կթողներ: Եվ, ինչպես գրված է Գրքում, Դանիելը ուշքի եկավ այն բանից հետո, երբ մի մարդկային ձեռք դիպավ նրան: Երբ արդեն փորձվեց և ապացուցվեց մեր անզորությունը, այնժամ Տերը որոշեց անել այն, ինչ խնդրում էր և կարող էր անել մարդը: Քանզի, քանի որ մարդը ուզում էր լսել իր նմանին, Փրկիչը ստացավ մարդկային բնությունը, որպեսզի մարդիկ ավելի հանգիստ և արդյունավետ գնան փրկության ճանապարհով:

15. Լսիր նաև մեկ այլ պատճառ: Քրիստոս եկավ մկրտվելու և մկրտությունը սրբագործելու համար: Նա եկավ, ծովի ջրերի վրայով քայլելով, հրաշագործելու համար (Մատթ., ԺԴ 15): Քանի որ Տիրոջ մարմնանալուց առաջ ծովը տեսավ նրան, և Հորդանանը ետ շրջվեց (Սաղմ., ՃԺԳ 3): Տերը մարմին ստացավ, որպեսզի ծովը դիմանա իր տեսքին,

և Հորդանանը նրան ընդունի աներկյուղ: Սա է մարդեղություն պատճառներից մեկը: Կա նաև մեկ այլ պատճառ: Մահը աշխարհ եկավ կույսի՝ Եվայի միջոցով, ավելի ճիշտ՝ կույսից. պետք է հայտնվեր կյանքը, որպեսզի, ինչպես որ նրան խաբեց օձը, այդպես էլ Գաբրիելը ավետում է Մարիամին: Լքելով Աստուծուն՝ մարդիկ ստեղծեցին մարդակերպ արձաններ: Քանի որ մոլորված մարդիկ մարդակերպ արձանը պաշտում էին որպես աստված, Աստված դարձավ իրական մարդ, որպեսզի վերանար այդ մոլորությունը:

Սատանան որպես գործիք օգտագործեց մարմինը մեր դեմ: Այդ իմանալով՝ Պողոսն ասել է. «Իմ մարմնի անդամների մեջ տեսնում եմ այլ օրենք, որ պայքարում է իմ մտքի օրենքին հակառակ և ինձ գերի է դարձրել մեղքի օրենքին» (Հռոմ., է 23): Ուրեմն, մեր դեմ սատանայի օգտագործած զենքով մենք փրկվեցինք: Տերը մեզնից ստացավ մեր նույն պատկերը, որպեսզի փրկվենք մարդկային բնության միջոցով: Նա ընդունեց մեր մարդկային պատկերը, նրան տալու այն, ինչ պակասում էր: Պարզեց այն Շնորհը, որ մեղավոր մարդկությունը դառնա հաղորդակից Աստուծուն. «Ուր որ մեղքը շատացավ, Շնորհն առավել ևս շատացավ» (Հռոմ., Ե 20):

Պետք էր, որ Տերը չարչարանք կրեր մեզ համար: Բայց սատանան չէր համարձակվի մոտենալ: Քանզի «եթե ճանաչված լիներ, արգարև փառքի Տիրոջը չէին խաչի» (Ա Կորնթ., Բ 8): Ուրեմն, մարմինը դարձավ մահվան խայծ: Վիշապը թեև հույս ուներ նրան կուլ տալ, դուրս տվեց անգամ նրանց, ում նախկինում կուլ էր տվել: «Մահը զորացավ և կուլ տվեց: Բայց Աստված բոլորի երեսից արցունքն իսպառ կտրեց» (Եսայի, ԻԵ 8):

16. Մի՞թե Քրիստոս իզուր մարմնացավ: Մի՞թե այդ վարդապետությունները հնարախոսություններ և մարդկային իմաստակություններ են: Մի՞թե սուրբ գրություն-

ները մեզ չեն բացահայտում մեր փրկութիւնը: Նույնը չեն բացահայտում նաև մարգարեների վկայութիւնները: Այս ավանդն անխախտ պահիր քո մեջ, և ոչ ոք քեզ չսասանի: Հավատա, որ Աստված մարդեղացել է:

Ապացուցված է այն, որ Աստված կարող էր մարդեղանալ: Եթե հրեաները տակավին չեն հավատում, նրանց հարցնում ենք՝ ի՞նչ տարօրինակ բան ենք քարոզում՝ ասելով, թե Աստված մարդեղացավ, մինչդեռ դուք ևս ասում եք, թե Աբրահամն ընդունեց Տիրոջը: Ի՞նչ տարօրինակ բան եք քարոզում, երբ Հակոբն ասում է. «Տեսա Տիրոջը երես առ երես, բայց փրկվեցի»: Տերը, որ ճաշեց Աբրահամի մոտ, ճաշեց նաև մեզ մոտ: Ուրեմն, ի՞նչ տարօրինակ բան ենք մենք քարոզում: Մենք կարող ենք տակավին երկու վկա ևս ներկայացնել, որոնք Սինա լեռան վրա կանգնած էին Տիրոջ կողքին: Մովսեսը կանգնած էր ժայռի ծերպի մեջ, և Եղիան իր ժամանակ գտնվում էր ժայռի բացվածքում: Նրանք, Թաբոր լեռան վրա այլակերպված Տիրոջ մոտ կանգնած, աշակերտներին ասացին Երուսաղեմում կայանալիք Նրա ելքի մասին (Հմմտ. Ղուկ., Թ 30-31): Բայց ինչպես առաջ էլ ասացի, Նրա մարդեղանալը հնարավոր էր, բայց մենք թողնենք, որ առավել շատ փաստերի մասին խոսեն նրանք, ովքեր սիրում են ամեն անգամ ասել նույնը և նույնը:

17. Մեր խոսքի սկզբին խոստացանք անդրադառնալ նաև Փրկչի ժամանակին և բնակութեան վայրին: Եվ պետք է, որ մենք այստեղից հեռանանք ստախոս լինելու մեղադրանքով: Առավել ևս, որպեսզի օգնենք մեր եկեղեցու նորադարձներին այստեղից դուրս գալու՝ առավել հաստատված իրենց հավատքի մեջ: Այժմ քննենք, թե ո՞ր տարում եկավ Տերը: Քանի որ Նրա հայտնութիւնը եղել է ոչ վաղուց, ապա տարակարծութիւններ կան: Քանզի «Քրիստոս նույնն է երեկ, այսօր և հավիտյան» (Եբր., ԺԳ 8): Նրա

ներկայութիւնը միշտ էլ կլինի թարմ: Մովսես մարգարեն ասում է. «Քո եղբայրների միջից քո Տեր Աստվածն ինձ նման մարգարե պիտի մեջտեղ հանի» (Բ Օր., ԺԼ 15: Գործք, է 87): Առայժմ բաց թողնենք «ինձ նման» արտահայտութիւնը՝ այն իր տեղում քննելու համար: Անդրադարձիր իմ գրածներին, խորապես քննիր Հակոբի արած մարգարեութիւնը Հուդայի ցեղի մասին: «Հուդա, քեզ կօգնեն քո եղբայրները» (Մննդ., ԽԹ 8) և այլն, որպեսզի ամեն բան չասենք: «Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչև կգա Նա, Ում պատկանում են հանդերձալները: Նրան են սպասում ոչ թե հրեաները, այլ ազգերը» (Մննդ., ԽԹ 10): Քրիստոսի հայտնվելու նշանը Հուդայի իշխանութեան վերացումն էր: Եթե այժմ Հուդան չգտնվեր հռոմեական տիրապետութեան տակ, Քրիստոս դեռևս չէր գալու: Եթե նրանց իշխում է Հուդայի և Դավթի հետնորդը, սպասվողը դեռևս չի եկել: Ամաչում եմ նրանց մոտ խոսելու հայրապետներ կոչեցյալների գործերի մասին: Ո՞րն է նրանց ծագումը: Ո՞վ է նրանց մայրը: Պատասխանը թողնում եմ իմացողներին: Իսկ այս եկողը՝ ազգերի սպասածը, ի՞նչ նշան ունի ներկայացնելու: Սուրբ Գրքում գրված է. «Իր ավանակին կկապի որթից» (Մննդ., ԽԹ 11): Տեսնո՞ւմ ես, որ սա նույն ավանակն է, որի մասին խոսում է Ջաքարիան:

18. Քրիստոսի հայտնվելու ժամանակի մասին ուզո՞ւմ ես մեկ ուրիշ վկայութիւն ևս: «Տերն ասաց ինձ՝ Դու իմ որդին ես: Ես այսօր ծնեցի քեզ» (Սաղմ., Բ 7): Եվ քիչ հետո՝ «նրանց կհովվես երկաթե գավազանով» (Սաղմ., Բ 9): Ասել եմ և նախապես, որ երկաթե գավազան պարզապես կոչվում է հռոմեական թագավորութիւնը: Այս առնչութեամբ վերհիշենք Դանիելի հատվածը: Արձանի պատկերի մասին Նաբոլեոնոսոսին պատմելիս նա խոսում է իր տեսած երազի մասին, երբ «լեռից մի ժայռ է պոկվում»

(Դան., Բ 34): Այն մարդու ձեռքով շինված էր և պիտի տիրեր ամբողջ աշխարհին (Դան., Բ 35): Եվ այդ մասին շատ պարզ ասում է. «Այդ թագավորի ժամանակ երկնքի Աստվածը պիտի բարձրացնի մի թագավորություն, որ հավիտյանս չի կործանվելու, և այդ թագավորությունն ուրիշ ազգի չի մնալու: Այն հավիտենական թագավորություն է, այսինքն՝ երկնքի թագավորություն» (Հմմտ. Դան., Բ 44):

19. Բայց ավելի պարզ ապացույցներ ենք ուզում երկրի վրա Քրիստոսի հայտնություն ժամանակի մասին: Քանզի մարդը, լինելով թերահավատ, եթե բոլոր տարիները ճիշտ հաշվի, խոսքերին չի հավատա: Ուրեմն, ո՞րն է Քրիստոսի հայտնություն ժամանակը և տարին: Երբ վերանան Հուդայի ցեղից թագավորները և թագավորի այլացեղ Հերովդեսը: Ուստի, հրեշտակն ասում է Դանիելին. «Այժմ դու նշիր իմ ասածները և կիմանաս ու կհասկանաս: Երուսաղեմի վերաշինման հրամանագրից մինչև Քրիստոսի հայտնությունը կանցնի յոթ յոթնյակ և վաթսուներկու յոթնյակ: Տարիների վաթսուներեք յոթնյակը կկազմի չորս հարյուր ութսուներեք տարի» (Հմմտ. Դան., Թ 25-26): Ասաց, ուրեմն, որ Երուսաղեմի վերաշինումից 483 տարի անց, երբ վերանան Հուդայի ցեղից սերած թագավորները, այդ տարին կհայտնվի մեկ օտար ցեղից թագավոր, որի ժամանակ էլ կծնվի Քրիստոս: Դարեհ Մեղացին Երուսաղեմը վերաշինեց իր գահակալության վեցերորդ տարում, որը համապատասխանում է հույների վաթսուներեքերորդ օլիմպիադային: Հույները օլիմպիադա են կոչում այն խաղերը, որ կազմակերպում են յուրաքանչյուր չորս տարին մեկ: Քանզի, արևի կայացած ընթացքի համաձայն, ամեն տարի ավելանում է երեք ժամ: Բոլոր այդ ժամերի գումարը ստացվում է մեկ օր: Հերովդեսը պիտի թագավորի հարյուր ութսունվեցերորդ օլիմպիադայի չորրորդ տարին: Վաթսուներեքերորդ օլիմպիադայից մինչև հարյուր ութսունվեցերորդ օ-

լիմպիադան անցնում է հարյուր քսան օլիմպիադա, այն է՝ չորս հարյուր ութսուն տարի: Մնացած երեք տարին գտնվում են առաջին և չորրորդ տարիների միջև: Որպես ապացույց կարող ես վերցնել Սուրբ Գրքում գրվածը. «Երուսաղեմի վերաշինման հրամանագրից հետո մինչև Քրիստոսի հայտնվելը կանցնի տարիների յոթ յոթնյակ և վաթսուներկու յոթնյակ» (Դան., Թ 25): Ուրեմն, Քրիստոսի հայտնվելու ժամանակի մասին ունես այս ապացույցը: Կան նաև այլ մեկնություններ շաբաթների և տարիների մասին Դանիելի վկայության շուրջը:

20. Ծննդյան վայրի մասին լսիր Միքիայի խոսքը. «Եվ դու՛ Բեթղեհեմ, Եփրաթայի սակավամարդ տուն, կլինես Հուդայի երկրի հազարավորների մեջ: Քեզնից պիտի ելնի Խարայելի մի իշխան, և նրա ծագումն աշխարհի սկզբի օրերից է» (Միք., Ե 2): Բայց դու, լինելով երուսաղեմացի, գիտես այն, ինչ հարյուր երեսունմեկերորդ սաղմոսում ասված է. «Լսեցինք, որ այն գտնվում է Եփրաթայում և այն գտանք Մայրիների դաշտում» (Սաղմ., ձԼԱ 6): Քանզի իրոք քիչ տարիներ առաջ այդ վայրն անտառոտ էր: Եվ դարձյալ լսած կլինես Ամբակումի խոսքը՝ Տիրոջն ուղղված. «Երբ տարիները մոտենան, կհայտնվես, երբ ժամանակը հասնի, կերևաս» (Ամբ., Գ 2): Ի՞նչ նշանով պետք է իմանանք, թե Տերը գալիս է: Եվ նա պատասխանում է. «Դու կճանաչվես երկու գազանների միջև» (Ամբ., Գ 27): Ուզում է Տիրոջը հստակ կերպով ասել. Հայտնվելով երկրի վրա, ապրում և մեռնում ես իբրև մարդ, իսկ մեռելներից հարություն առնելուց հետո դարձյալ կապրես: Երուսաղեմի մերձակայքի ո՞ր մասից է նա գալու՝ արևելյա՞ն, թե՞ արևմտյան, հյուսիսայի՞ն, թե՞ հարավային: Մեզ ճիշտն ասա: Նա պատասխանում է և պարզ ասում. «Աստված Թեմանից կգա (Թեման նշանակում է՝ հարավ) և սուրբը՝ զով և անտառախիտ Փառան լեռից» (Ամբ., Գ 3): Նույնպես ասել է



և սաղմոսերգուն՝ «Այն գտանք մայրիները դաշտում» (Սաղմ., ՃԼԱ 6):

21. Ապա ուզում ենք իմանալ, թե ո՞ւմից է Նա գալիս և ինչպե՞ս: Մեզ պատասխանում է Նսային. «Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, և նրա անունը պիտի լինի Էմմանուել» (Նսայի, է 14): Բայց հուդայականները հակաճառում են դրան, քանի որ սովոր են չարակամությունը կրկնել, մերժում են ճշմարտությունը և ասում, որ մարգարեն գրել է ոչ թե կույսի, այլ երիտասարդ աղջկա մասին: Ես նույնպես, ընդունելով նրանց այս դիրքը որպես ճշմարիտ, հանգում եմ նույն եզրակացության: Նրանք պետք է հարց դնեին. Ե՞րբ է կույսը ճշում և օգնություն կանչում. բռնաբարվելուց առաջ, թե՞ հետո: Եթե Սուրբ Գրքի մեկ այլ հատվածում ասված է, թե՞ «ճչաց երիտասարդ աղջիկը, և նրան օգնող չկար» (Դան., ԻԲ 27), խոսքը չի վերաբերում կույսի: Բայց, որպեսզի իմանաս, թե Սուրբ Գրքում կույսը ևս կոչվում է երիտասարդ աղջիկ, կարդա Թագավորությանց գրքում Աբիսակ Սունամիտիսի մասին գրվածը. «Աղջիկը շատ գեղեցիկ էր» (Գ Թագ., Ա 4): Այն, որ նրան ընտրեցին և մատուցեցին Դավթին, որովհետև կույս էր, վկայված է շատ պարզ:

22. Անգամ պարզելուց հետո, թե «կույս» և «երիտասարդ աղջիկ» բառերը նշանակում են կույս, հուդայականները պնդում են, թե Նսայու խոսքերը վերաբերվում են Աքազ թագավորին, և այնտեղ նկատի է ունեցել Եզեկիայի որդուն: Կարդանք գիրքը. «Խորխորատում լինի թե Բարձունքում՝ քեզ համար նշան խնդրիր քո Տեր Աստծուց» (Նսայի, է 11): Եվ այդ նշանը պետք է լինի զարմանալի, ինչպես ժայռից ջուր բխելը, ծովի երկու մասի բաժանվելը, ետ շրջվող արևը և այլն: Բայց այն, ինչ ստորև կասեմ, ավելի կժխտի հուդայականներին:

Գիտեմ, որ շատ խոսեցի, և ունկնդիրներն էլ հոգնած են, բայց դիմացեք իմ երկար խոսքին, քանզի այն վերաբերում է Քրիստոսին և ոչ թե պատահական բաների: Ուրեմն, Նսային այդպես հանդիմանեց Աքազին նրա թագավորության ժամանակ: Իսկ նա թագավորեց ընդամենը տասնվեց տարի: Այսպիսով, այն փաստը, որ հուդայականները փորձեցին հիմնավորել Եզեկիայի միջոցով, հերքում է ինքը՝ Եզեկիան, քանի որ նա թագավոր դարձավ քսանհինգ տարեկան հասակում (Հմմտ. Դ Թագ., ԺԸ 2): Մարգարեությունը կատարվել է Աքազի տասնվեցամյա թագավորության ընթացքում: Եզեկիան Աքազից ծնվել էր իրեն վերաբերվող մարգարեությունից առնվազն ինը տարի առաջ: Բնական հարց է առաջանում: Արդյո՞ք պետք էր, որ Նսային մարգարեանար Եզեկիայի մասին, քանի որ նա արդեն ծնված է եղել ինը տարի առաջ և նախքան նրա հոր՝ Աքազի թագավոր դառնալը: Եվ ինչո՞ւ մարգարեն չասաց, թե կույսը հղիացավ, այլ ասաց թե՞ կհղիանա:

23. Այն, որ Տերը ծնվեց կույսից, մենք պարզ իմացանք: Այժմ ցույց տանք, թե կույսը ո՞ւմ սերնդից էր: «Տերը ճշմարտությունը երգվեց Դավթին ու չստեց նրան. «Քո որովայնի պողից պետք է նստեցնեմ քո գահին» (Սաղմ., ՃԼԱ 11): Եվ դարձյալ՝ «Նրա սերունդը կհաստատեմ հավիտյանս հավիտենից և նրա գահն՝ ինչպես օրերն երկնքի» (Սաղմ., ՁԼ 30): Ապա շարունակում է. «Մեկանգամընդմիջտ ես երգվեցի իմ սրբությունը, որ Դավթին չեմ խաբի: Նրա սերունդը հավիտյան կմնա, և ինչպես արև, ինչպես լուսին, նրա աթոռն իմ առջև հավերժ հաստատված կմնա երկնքում» (Սաղմ., ՁԼ 36-38):

Տեսնում ես, որ խոսքը Քրիստոսի մասին է և ոչ թե Սողոմոնի, որովհետև նրա գահը չմնաց արևի նման: Եթե որևէ մեկը հակաճառի, Քրիստոս չնստեց Դավթի փայտե գահին, նշենք հետևյալ խոսքը. «Մովսեսի աթոռի վրա

նստեցին օրենսդետներն ու փարիսեցիները» (Մատթ., ԻԳ 2): Ուրեմն, նա նկատի չունի փայտե գահը, այլ վարդապետություն իշխանությունը: Ուստի, երբ խոսում են Դավթի գահի մասին, նկատի չունենք փայտե գահը, այլ թագավորությունը:

Որպես վկա վերցրու, խնդրեմ, մանուկներին, որոնք աղաղակում էին. «Օրհնություն Դավթի որդուն, օրհնյալ է նա, որ գալիս է Տիրոջ անունով» (Մատթ., ԻԱ 9): Եվ կույրերն ասում էին. «Ողորմիր մեզ, Դավթի որդի» (Մատթ., ԻԱ 27): Գաբրիելը ևս հստակ վկայում է՝ ասելով Մարիամին. «Եվ Տեր Աստված Նրան կտա հոր՝ Դավթի աթոռը» (Ղուկ., Ա 32): Պողոսը ևս ասում է. «Հիշիր մեռելներից հարություն առած Հիսուսին՝ Դավթի ցեղից, իմ քարոզած Ավետարանի համաձայն» (Բ Տիմ., Բ 8): Հռոմեացիներին ուղղած նամակի սկզբում ևս ասում է. «Նա, ով ծնվեց որպես մարդ Դավթի սերնդից» (Հռոմ., Ա 3): Ուրեմն, ընդունիր Նրան, Ով ծնվել է Դավթի սերնդից՝ հավատարմով այն մարգարեությունը, որ ասում է. «Այդ օրը կհայտնվի Հեսսեի արմատից ծնվածը և կդառնա ազգերի իշխանը: Ազգերը իրենց հույսը դնելու են Նրա վրա» (Եսայի, ԺԱ 10):

24. Հուդայականներն այս հարցում խիստ նախանձախնդիր են: Այդ ևս Եսային կանխատեսել էր ու ասել. «Նույնիսկ եթե դրանք այրված լինեին, նրանք պիտի հոժարեին հատուցել, քանզի մեզ համար մանուկ ծնվեց, որդի տրվեց մեզ» (Եսայի, Թ 5-6), ոչ թե նրանց: Որդի ծնվեց և տրվեց մեզ: Եվ նշիր, որ նախ Նա Աստծու Որդին էր, հետո տրվեց մեզ: Եվ քիչ ներքև ասում է. «Եվ Նրա խաղաղությունը սահման չունի» (Եսայի, Թ 6): Հռոմեացիներին սահման կա: Իսկ Աստվածորդու թագավորությունը սահման չունի: Պարսիկներն ու մարերը սահման ունեն, իսկ Աստվածորդու թագավորությունը անսահման է: Շարունակության մեջ ասում է. «Նա պիտի նստի Դավթի աթոռ»

և ին, առաջ պիտի տանի նրա թագավորությունը» (Եսայի, Թ 7): Ուրեմն, սուրբ կույսը սերում էր Դավթի սերնդից:

25. Նա, ով սրբագույնն էր և ամենից անարատը, ով մարդկանց պիտի քարոզեր անարատություն և կուսություն, պիտի դուրս գար անարատ և կուսական ննջարանից: Քանզի նա, ով ուզում է ծառայել Քրիստոսի անարատ խորհուրդներին, ժուժկալ է և հեռու է մնում իր կնոջից, ինչպե՞ս կարող էր ինքն առաջանալ այդ մարդու և կնոջ կենակցությունից: Սաղմոսում ասված է. «Դու նա ես, ով ինձ պոկեց իմ մոր արգանդից» (Սաղմ., ԻԱ 10): Ուշագրություն դարձրեք «ով ինձ պոկեց իմ մոր արգանդից» խոսքի վրա: Դա նշանակում է, որ ծնվեց՝ պոկվելով կույսի արգանդից և մարմնից առանց այդ մարդու գործակցության: Բայց ամուսնության հետևանքով ծնվող բոլոր մարդկանց ծնունդն այլ կերպ է լինում:

26. Եվ Քրիստոս ամոթ չի զգում բոլոր մարդկանց նման մարմնով ծնված լինելուց: Եվ ո՞վ է այդ մեզ ասում: Ասում է Տերը Երեմիային. «Դեռ որովայնում քեզ չստեղծած՝ ես ընտրեցի քեզ, և դեռ արգանդից դուրս չելած՝ սրբացրի քեզ» (Երեմ., Ա 5): Ուրեմն, Նա, Ով մարդկանց ստեղծելիս չի ամաչում նրանց դիպչելուց, մի՞թե պիտի ամաչեր իր համար ստեղծել սուրբ և ամենաանարատ մարմինը, որն իր մեջ ծածկելու էր աստվածային բնությունը: Աստված է, որ մինչև այսօր ստեղծում է երեխաներին մայրական արգանդում, ինչպես գրված է Հոբի գրքում. «Մի՞թե կաթի պես չես կթել ինձ, պանրի պես մակարդել, մորթ ու միս հագցրել, ոսկրերով, ջլերով օժտել» (Հոբ, Ժ 11-12): Ոչ մի անմաքուր բան չկա մարդու բնության մեջ, եթե մարդն այն չի ապականում անառակությամբ, ամբարշտությունով: Աղամին ստեղծողն ստեղծեց նաև Եվային: Աստվածային ձեռքերով են ստեղծված և՛ այդ մարդը, և՛ կինը: Մարմնի

մասերից և ոչ մեկը ի սկզբանե չի ստեղծված անմաքուր: Թող պապանձվեն հերետիկոսները, որոնք մեղադրում են մարմինը, ավելի ճիշտ՝ այն ստեղծողին: Իսկ մենք հիշենք Պողոսի խոսքերը. «Չգիտե՞ք, թե ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ է» (Ա Կորնթ., 2 19): Եվ դարձյալ մարգարեն, Հիսուսի անունից գուշակելով, ասել է. «Իմ մարմինը նրանցից է» (Օսեե, Թ 12): Գրքի մեկ այլ հատվածում գրված է. «Այդ ժամանակ Տերը նրանց կթողնի մինչև ծննդկանի ժամանակը» (Միք., Ե 2): Եվ ո՞րն է նրա նշանը: Պատասխանում է. «Նա կձնի, և նրա մնացած եղբայրները կվերադառնան իսրայելացիների մոտ» (Միք., Ե 3): Եվ ո՞վ է Կույսի՝ սուրբ Հարսի նշանը. «Քեզ կնշանեմ ինձ հավատով, և դու կճանաչես Տիրոջը» (Օսեե, Բ 20): Եղիսաբեթը ևս, դիմելով նրան, նույնպիսի խոսքեր է ասում. «Երանի նրան, ով կհավատա, թե Տիրոջ կողմից իրեն ասվածները կկատարվեն» (Ղուկ., Ա 45):

27. Բայց մեզ մեղադրում են հելլենները և հրեաները և ասում, թե անկարելի է, որ Քրիստոսը ծնված լինի կույսից: Հելլեններին մենք կլռեցնենք իրենց իսկ առասպելներով: Եթե դուք ասում եք, թե նետված քարերը փոխվում են մարդկանց, ինչպե՞ս եք պնդում, թե կույսը չի կարող ծնել: Դուք, որ պատմում եք, թե հոր գլխից ծնվել է կույսը, պնդում եք, թե անհնար է, որ կույսի արգանդից որդի ծնվի: Դուք, որ ստից պնդում եք, թե Ձևսը իր ազդրում հղիացավ Դիոնիսոսին, ինչո՞ւ չեք ընդունում մեր ճշմարտությունը: Գիտեմ, որ այս լսարանի համար անպատշաճ բաներ եմ ասում, բայց հունական դիցաբանությունից այս պատմեցի, որպեսզի դու, անհրաժեշտություն դեպքում իրենց պատմածով լռեցնես նրանց:

28. Ապա թլփատվածերին պատասխանելով՝ հարց տուր նրանց: Ո՞րն է դժվար. տարեց և ամուլ կնոջ ծննդաբերե՞-

լը, որն արդեն ծննդաբերելու ոչ մի երաշխիք չունի, թե՞ երիտասարդ կույսի ծննդաբերելը: Ամուլը Սառան էր, որ թեև հղիանալու ոչ մեկ տվյալ չունեց, հակառակ բնության, տարօրինակ ձևով ծննդաբերեց: Ուրեմն, ամուլ կնոջ ծննդաբերելը և երիտասարդ կույսի ծննդաբերելը հակաբնական է: Ուստի, կամ երկուսն էլ ժխտիր, կամ երկուսն էլ ընդունիր: Քանզի նույն Աստվածն է իրագործում և՛ մեկը, և՛ մյուսը: Մի՛ համարձակվիր ասելու, մի դեպքում Աստված կարող է, մյուս դեպքում՝ ոչ: Եվ ապա, այդ ինչպե՞ս մարդու ձեռքը կարճ ժամանակով փոխում է իր ձևը և հետո վերադառնում իր նախկին տեսքին: Այդ ինչպես Մովսեսի ձեռքը սպիտակեց ձյան նման և հետո վերականգնվեց: Ասում ես, թե Աստված կամեցավ և կատարվեց: Այդ դեպքում Աստված կամեցավ ու կարողացավ կատարել, իսկ այս դեպքում չի՞ կարող: Եվ ապա, այդ նշանը եզրպատացիների համար էր, իսկ այս հրաշքը ամբողջ աշխարհին պարգևվեց: Ո՞րն է ավելի դժվար, ո՞վ հրեաներ. կույսի ծննդաբերե՞լը, թե՞ ուղիղ գավազանը շնչավոր կենդանի դարձնելը: Ընդունում եք, որ Մովսեսի ժամանակ ուղիղ գավազանը, դառնալով օձաձև, ահազդու էր այն նետողի համար: Եվ նա, ով այն նախապես ձեռքում բռնել էր իբրև գավազան, նրա առջևից փախչում էր որպես վիշապի առջևից: Նա փախավ ոչ թե վիշապից, այլ Աստծու առաջ վախենալով, որ գավազանը դարձրել էր օձ: Գավազանն ուներ վիշապի ատամներ ու աչքեր: Ուրեմն ի՞նչ: Մի գավազանից կարող են տեսնող աչքեր առաջանալ, իսկ չի՞ կարող Աստծու կամքով կույսի արգանդից որդի ծնվել: Ու տակավին չասացի, որ Ահարոնի գավազանը մեկ գիշերվա ընթացքում արեց այն, ինչ ուրիշ ծառեր՝ երկար ժամանակի ընթացքում: Քանզի հայտնի է բոլորին, որ կեղևից զրկված գավազանը երբեք չի ծլի, անգամ եթե գետերի եզրին լինի: Բայց քանի որ Աստված չի հետևում բնությունը երևույթներին, այլ ինքն է բնական վիճակներ ստեղծողը,

անպտուղ, չորացած և կեղևահան գավազանը անեց, կանաչեց և պտղաբերեց: Եվ նա, ով քահանայապետ Ահարոնի սիրույն, որը նախատիպն էր Միակ և մեծ քահանայապետ Հիսուս Քրիստոսի, զարմանալի ձևով շնորհ արեց չորացած գավազանից պտուղ ստանալ, մի՞թե կույսին չէր շնորհելու ճշմարիտ քահանայապետի չհարսնացած մայրը դառնալ:

29. Այս փաստարկները լավ են: Բայց հրեաները դեռևս չեն համոզվում գավազանի մասին մեր պատմած փաստերին, եթե նման զարմանալի և հակաբնական ծննդաբերությունները մասին այլ փաստեր ևս չլսեն: Ուրեմն, նրանց հարցրեք: Եվան սկզբում ո՞ւմից ծնվեց: Ո՞ր կինը հղիացավ նրանով, քանի որ նախապես ուրիշ կին չի եղել: Գիրքը պատմում է, թե նա ստեղծվեց Ադամի կողմից (Ծննդ., Բ 22): Ուրեմն, եթե Եվան ծնվել է անմայր այր մարդու կողմից, ապա չէ՞ր կարող մի՞թե կուսական արգանդից երեխա ծնվել, առանց մարդու կողմից հղիանալու: Ուրեմն, իգական սեռը շնորհ էր պարտական արական սեռին: Քանզի Եվան ծնվեց Ադամից, առանց կնոջ մասնակցություն: Այսպիսով, Մարիամն իր պարտքը հատուցեց ոչ թե այր մարդու գործակցությամբ, այլ Աստծու օգնությամբ ինքը մենակ, սուրբ և գերբնական եղանակով, Սուրբ Հոգու գործակցությամբ:

30. Վերցրեք առավել զարմանալի մի բան: Մարմիններից մարմին ծնվելու փաստը, թեև այն շատ տարօրինակ է: Այն, որ հողը դառնում է մարդ, առավել մեծ երաշխիք է: Այն, որ կավը խառնվելով կազմում է աչքերի թաղանթը և ընկալում է լույսի ճառագայթները, հրաշալիք է: Այն, որ միլենույն հողից ստեղծվում են և՛ ոսկորների կարծրությունը և՛ թե թոքերի փափկությունը, և՛ մարմնի զանազան մասերի ձևերը, հրաշալիք է: Այն, որ կավը կենդանություն

է ստանում և ինքնաշարժ շրջում է ամբողջ աշխարհը և կառուցում, դարձյալ հրաշալիք է: Այն, որ կավը ուսուցանում է և խոսում, կառուցում է և թագավորում, դարձյալ հրաշալիք է: Ուրեմն, անո՛ւս հուզայականներ: Որտեղի՞ց ծնվեց Ադամը: Մի՞թե Աստված, երկրից վերցնելով հողը, չկերտեց այս հիասքանչ գործը: Եթե կավը վերածվում է աչքի, ապա մի՞թե կույսը չի կարող ծննդաբերել: Եթե մարդկանց համար առավել անկարելի թվացող երևույթը իրականանում է, ապա մի՞թե չի կարող իրականանալ նաև մարդկային բնությունը առավել մատչելի թվացող որևէ երևույթ:

31. Այս հիշենք, եղբայրներ, և դրանով պաշտպանվենք: Չհանդուրժենք հերետիկոսներին, որոնք քարոզում են Քրիստոս մարդու մեջ միայն Աստծու խոսքի ներկայությունը: Արհամարհենք նաև նրանց, ովքեր ասում են, թե Փրկիչը ծնվել է այր մարդուց և կնոջից. ովքեր համարձակվեցին ասել, թե Նա ծնվել է Հովսեփից ու Մարիամից. քանզի գրված է՝ Հովսեփն «իր կնոջն առավ իր մոտ» (Մատթ., Ա 24): Հիշենք նաև Հակոբին, որ, նախքան Ռաքելի հետ ամուսնանալը, ասաց Լաբանին. «Տուր ինձ իմ կնոջը» (Ծննդ., Իթ 21): Ինչպես ամուսնանալուց առաջ միայն խոստման համաձայն Ռաքելը համարվում էր Հակոբի կինը, ճիշտ այդպես էլ Մարիամը նշանվելուց հետո համարվում է Հովսեփի կինը: Ուշադիր եղիր, թե ինչպիսի՞ ճշգրտություն խոսում է Ավետարանը: «Վեցերորդ ամսին Գաբրիել հրեշտակապետը Աստծու կողմից ուղարկվեց Գալիլիայի մի քաղաք, որի անունը Նազարեթ էր, մի կույսի մոտ, որ նշանված էր Հովսեփ անունով մի մարդու հետ» և այլն (Ղուկ., Ա 26-27): Եվ դարձյալ, երբ մարդահամար էր, և Հովսեփը բարձրացավ մարդահամարի, ի՞նչ է ասում Սուրբ Գիրքը: «Մարդահամարի համար Հովսեփը բարձրացավ Գալիլիայից Մարիամի հետ, որ «նշանված էր և հղի

էր» (Հմմտ. Ղուկ., Բ 4-5): Ձի ասու՞մ իր կնոջ հետ, այլ «կնոջ, որի հետ նշանված էր»: Պողոսն ասու՞մ է. «Աստված ուղարկեց իր Որդուն, որը ծնվեց կնոջից» (Գաղատ., Դ 4): Ձի ասու՞մ՝ այդ մարդուց և կնոջից: Նշանակու՞մ է՝ կույսից: Այն, որ կույսը նաև կին էր կոչվում, մենք արդեն ապացուցել ենք: Ուրեմն կույսից ծնվել է Նա, Ով մարդկային հոգիները կույս է ստեղծում:

32. Զարմանո՞ւմ ես այս եղելություն համար: Զարմացել էր նաև ինքը՝ ծննդաբերողը: Քանզի նա ասու՞մ է Գաբրիելին. «Ինչպե՞ս այդ կպատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում» (Ղուկ., Ա 34): Եվ հրեշտակը պատասխանում է. «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, որովհետև Նա, որ քեզնից է ծնվելու, սուրբ է և Աստծու Որդի կկոչվի» (Ղուկ., Ա 35): Անարատ և անբիծ է Նրա ծնունդը: Այնտեղ, ուր Սուրբ Հոգին է, կվերանան բոլոր արատները: Աստծու Միածին Որդու մարմնավոր ծնունդը կույսից անարատ է: Եվ եթե հերետիկոսները հակաճառում են այդ ճշմարտությանը, նրանց կմեղադրի Սուրբ Հոգին: Կգայրանա Բարձրյալի զորությունը, որ Հովանի դարձավ կույսին: Դատաստանի օրը նրանք դեմառդեմ պիտի գան հրեշտակապետ Գաբրիելի հետ: Նրանց պիտի ամոթանք տա մսուրը, որն ընդունեց Տիրոջը: Պիտի վկայեն հովիվները, որոնք այդ ժամանակ ավետվեցին, և հրեշտակների բանակը, որ այդ ժամանակ երգում և փառաբանում էր և ասում. «Փառք Աստծուն՝ բարձունքներում, և երկրի վրա՝ խաղաղություն, և հաճություն՝ մարդկանց մեջ» (Ղուկ., Բ 14): Պիտի վկայեն տաճարը, ուր տարան մանկանը ծննդյան քառասուներորդ օրը, և այն զույգ տատրակները, որ մատուցվեցին Նրա սիրուն, և Միմեոնը, որն այնժամ ընդունեց Նրան իր գիրկը և այնտեղ գտնված մարգարեուհի Աննան:

33. Ուրեմն, այդ վկայում է Աստված, վկայակից է նաև Սուրբ Հոգին, Հիսուս Ինքը ասում է. «Ինչո՞ւ ուզում եք սպանել մի մարդու՝ ինձ, որ ձեզ ասացի ամբողջ ճշմարտությունը» (Հովհ., Ը 40): Թող պապանձվեն հերետիկոսները, որոնք չեն ընդունում Քրիստոսի մարդկային բնությունը, որովհետև հակաճառում են Նրան, որ ասել է. «Շոշափեցեք ինձ և տեսեք, որովհետև ոգին մարմին և ոսկորներ չունի: Ինչպես տեսնում եք, ես ունեմ» (Ղուկ., ԻԴ 39): Երկրպագենք Տիրոջը, որ ծնվել է կույսից, և թող մեր քաղաքի կույսերն իմանան այդ սխրանքը: Միանձնուհիները թող իմանան անարատության պատվավոր տեղը: Քանզի մենք չենք զրկվել անարատության պատվից: Կույսի արգանդում անցավ Փրկչի իննամսյա ժամանակամիջոցը, և Տերը դարձավ երեսուներեքամյա այր: Եթե կույսը հպարտանում է, որ այդ ինը ամիսների ընթացքում Նրան պահել է իր արգանդում, առավել ևս մենք հպարտ ենք, որ այդքան երկար ժամանակ Նրան ունեցել ենք մեր մեջ, երկրի վրա:

34. Ուրեմն բոլորս, երիտասարդ և կույս, ծեր և մանուկ, Աստծու Շնորհով ընթացանք անմեղություն ճանապարհով, առանց մասնակցելու սանձարձակությունների, այլ օրհնաբանելով Քրիստոսի անունը: Չչըջանցենք անմեղության փառքը: Քանզի մեզ տրվելիք պսակը կլինի հրեշտակային և սխրանքը՝ գերմարդկային: Խնայենք մեր մարմինները, որ պիտի փայլեն արևի պես: Փոքր հաճույքի համար չապականենք այսքան արժեքավոր մարմինը: Քանզի մեզքը փոքր է ու ժամանակավոր, բայց ամոթը՝ երկար տարիների համար և մշտական: Անմեղության համար պայքարողները նման են երկրի վրա քայլող հրեշտակների: Կույսերի տեղը Մարիամ կույսի մոտ է:

Մեզանից վանենք պճնասիրությունը և որևէ կորստաբեր նայվածք, չարություն տանող որևէ զբոսանք, որևէ հրապուրիչ զգեստ և օձանելիք: Մեզ համար օձանելիք

դառնա աղոթքի բուրմունքը և մարմինների ու բարի գործերի մաքրությունը: Որպեսզի մեզ համար ևս կույսից ծնված Տերը ասի. «Պիտի բնակվեմ նրանց մեջ ու պիտի ընթանամ նրանց միջով, և նրանց Աստվածը պիտի լինեմ, և նրանք պիտի լինեն իմ ժողովուրդը» (Բ Կորնթ., 2 16: Ղևտ., ԻԶ 12):



## ՈՒՍՈՒՅՈՒՄ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ

### Արված Երուսաղեմում՝ Հանգանակի «խաչվեց, քաղվեց» հատվածի շուրջ

Ընթերցում Եսայուց. «Ո՞վ հավատաց Տիրոջ մասին մեր տված լուրին, և ո՞ւմ հայտնի դարձավ Տիրոջ բազուկը» (Եսայի, ԾԳ 1) մինչև «իմչպես ոչխար՝ նա մորթվելու տարվեց» (Եսայի, ԾԳ 7) հատվածը:

1. Ընդհանրական եկեղեցու պարծանքն է Քրիստոսի կատարած ամեն մի գործը: Բայց պարծանքների պարծանքը խաչն է: Պողոսն, այդ գիտակցելով, ասել է. «Քավ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղատ., 2 14): Հրաշք է, որ Սիլովամի ավագանուս ի ծնե կույրը սկսեց տեսնել (Հովհ., Թ՝ 7): Բայց դա ի՞նչ է համեմատած համայն աշխարհի հոգով կույրերի լուսավորության հետ: Մեծ և գերբնական հրաշք է չորս օրվա մահացած Ղազարոսին հարուսթյուն տալը: Բայց այդ ժամանակ այդ շնորհը սահմանափակվեց նրանով: Իսկ դա ի՞նչ է ամբողջ աշխարհում մեղքի մեջ մահացածների հարուսթյան հետ համեմատած: Հրաշք է, որ հինգ հացով կերակրեց հինգ հազարին (Մատթ., ԺԴ 21): Բայց դա ի՞նչ է համեմատած ամբողջ աշխարհում անգիտության պատճառով հոգու սով ունեցողներին (Ամոս, Ը 11) կշտացնելու հետ: Հրաշք է, որ ազատեց տասնուհին տարի սատանայից կապկալված կնոջը: Բայց դա ի՞նչ է համեմատած այն ազատության հետ, որ Նա տվեց մեզ բոլորիս՝ մեղքի ծանր շղթաներով կապվածներին: Այսպես, խաչի պսակը մի կողմից լուսավորեց անգիտությանը կուրացածներին, մյուս կողմից ազատագրեց մեղքի գերիներին և փրկեց բոլոր մարդկանց:



2. Եվ զարմանալի չթվա, որ ամբողջ աշխարհն ազատագրվեց: Քանզի ազատագրողը հասարակ մարդ չէր, այլ Աստծու Միածին Որդին, որ մահացավ մեզ համար: Թեև մեկ մարդու՝ Ադամի մեղքը մահ բերեց աշխարհին: Բայց եթե մեկ մարդու հանցանքի պատճառով աշխարհում թագավորեց մահը, ինչո՞ւ, առավել ևս, պիտի չթագավորի կյանքը մեկի արդարության հետևանքով: Եթե այդ ժամանակ կենաց ծառից ճաշակելու պատճառով նախաստեղծները վտարվեցին դրախտից, մի՞թե Քրիստոսի խաչի պատճառով հավատացյալները առավել հեշտ չեն մտնելու դրախտ: Եթե նա, ով առաջինը ստեղծվեց երկրի հողից, համաշխարհային մահ բերեց, մի՞թե հավիտենական կյանք չի բերելու «Նա, Ով նրան ստեղծեց հողից» (Ծննդ., Բ 7), քանի որ ինքը կյանքն իսկ է: Եթե Փինեսսը, նախանձախնդիր լինելով, սպանեց չարագործին և դրանով վերացրեց Աստծու զայրույթը (Թվեր, ԻԵ 11), իսկ Հիսուսը, ոչ թե մեկ ուրիշի սպանությունը, այլ իր անձը զոհաբերելով, մի՞թե չի վերացնում Աստծու զայրույթը:

3. Ուրեմն, չամաչենք Փրկչի խաչի համար, այլ, ընդհանրապես, պարծենանք դրանով: Խաչի խոսքը հրեաների համար գայթակղություն է, հեթանոսների համար՝ անմտություն, իսկ մեզ համար՝ փրկություն: Ովքեր գնում են կորստյան ուղիով, նրանց համար անմտություն է, իսկ ովքեր գնում են փրկության ճանապարհով, նրանց համար Աստծու զորություն է (Ա Կորնթ., Ա 18): Քանզի մեզ համար իրեն զոհաբերածը հասարակ մարդ չէր, այլ Աստծու Որդին՝ մարդեղացած Աստված: Եթե Մովսեսի ժամանակ ոչխարը վանում էր կործանիչ հրեշտակին (Ելք, ԺԲ 23), Աստծու Գառը, որն իր վրա է վերցնում աշխարհի մեղքը, մի՞թե առավել ևս չէր ազատագրելու մարդուն իր մեղքերից: Եվ եթե մի անբան ոչխարի արյունը փրկություն է շնորհել, մի՞թե Միածնի արյունը առավել ևս փրկություն

չի կարող շնորհել: Եթե որևէ մեկը չի հավատում Խաչյալի զորությունը, ուշադիր թող նայի դեկերին: Եթե չի հավատում խոսքերին, թող հավատա ակնառու դեպքերին: Աշխարհում շատերն են խաչվել, բայց նրանցից ոչ մեկից դեկերը չեն սարսափում: Բայց մեզ համար խաչված Քրիստոսի խաչի նշանը միայն տեսնելուց, դեկերը դողում են: Ուրովհետև այն մյուսները խաչի վրա մեռան իրենց մեղքերի պատճառով: Մինչդեռ Քրիստոսը՝ այլոց մեղքերի համար: «Քանզի Նա մեղք չգործեց, և Նրա բերանում նենգությունը տեղ չգտավ» (Ա Պետր., Բ 22): Միայն Պետրոսը չի այդ ասում – քանզի կարող էին կասկածել, թե շնորհ է անում իր ուսուցչին – այլ ասել է նաև Եսային, որը անձամբ ներկա չի եղել, բայց իր հոգով կանխատեսել է Նրա մարմնական ներկայությունը: Եվ ինչո՞ւ հիմա վկայակոչում եմ միայն մարգարեին: Վկա վերցրու Պիղատոսին, որը Նրան դատապարտեց՝ ասելով. «Այս մարդու մոտ ոչ մի վատ բան չգտա» (Հմմտ. Ղուկ., ԻԳ 14): Նրան մատնված հանձնելով և ձեռքերը լվանալով՝ ասաց. «Այդ արդարի արյունից ես անմասն եմ» (Մատթ., ԻԷ 24): Հիսուսի անմեղություն մեկ այլ վկա ևս կա. դրախտ մտած առաջին ավագակը, որը մեղադրում է մյուս ավագակին և ասում նրան. «Մենք արժանի կերպով ստանում ենք մեր գործերի հատուցումը, իսկ սա ոչ մի վատ բան չի կատարել» (Հմմտ., Ղուկ., ԻԳ 41): Այդ մենք լավ գիտենք, քանզի Նրա դատին ներկա էինք:

4. Ուրեմն, Հիսուսն իրոք չարչարանքներ կրեց հանուն մարդկանց: Քանզի խաչը թվացյալ չէ, այլ կերպ թվացյալ կլինեք նաև ազատագրումը: Թվացյալ չէ մահը, այլ կերպ թվացյալ կլինեք նաև փրկությունը: Եթե մահը թվացյալ լինեք, իրավացի կլինեին նրանք, ովքեր ասացին. «Հիշեցինք, թե այն մոլորեցնողը, երբ կենդանի էր, ասում էր, թե՛ երեք օրից պիտի հարույթվեմ առնեմ» (Մատթ., ԻԷ 63): Ուրեմն, չարչարվելն իրական է: Քանզի խաչվեց, և դրա հա-

մար չենք ամաչում: Խաչվեց, և այդ չենք ուրանում: Առավել ևս ես պարծենում եմ՝ ասելով, եթե անգամ ուզեմ ուրանալ, ինձ կհակաճառի այս Գողգոթան, որի մոտ ենք այժմ գտնվում բոլորս: Ինձ կհանդիմանի խաչափայտը, որը քիչ-քիչ բաժանվեց ամբողջ աշխարհում: Խոստովանում եմ Խաչը, քանզի գիտեմ Հարուժյունը: Եթե մնար խաչված, գուցե չվկայեի և այն թաքցնեի իմ ուսուցչի հետ: Իսկ այժմ, երբ Խաչին հաջորդեց Հարուժյունը, չեմ ամաչում խոստովանել այդ ամենը:

5. Ունենալով բոլորիս նման մարդկային բնություն՝ Նա խաչվեց՝ բայց ոչ թե մեր մեղքերի նման մեղքեր ունենալու համար: Նա մահվան առաջնորդվեց ոչ թե փողատիրություն համար: Քանզի Ինքը քարոզում էր անընչույթյուն: Նա չդատապարտվեց ցանկասիրության համար: Քանզի Նա պարզ ասել է. «Ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ» (Մատթ., Ե 28): Ոչ էլ, դարձյալ, ուրիշին զարկած կամ վիրավորած լինելու համար, քանզի հարվածողի առաջ չըջում էր նաև իր մյուս երեսը: Ոչ էլ Օրենքը արհամարհած լինելու համար, քանզի Ինքը լրացնում էր Օրենքը: Ոչ էլ մարգարեներին հայհոյած լինելու համար, քանզի այդ տարբեր ժամանակներում իր մասին մարգարեացել են մարգարեները: Նա ոչ ոքի չի զրկել վարձից, քանզի Ինքը անվարձ և ճրի բժշկում էր բոլորին: Նա չմեղանչեց ո՛չ խոսքով, ո՛չ գործով, ո՛չ էլ իր մտքերով: «Նա, որ մեղք չգործեց, և Նրա բերանում նենգությունը տեղ չգտավ: Նա, որ նախատվելով՝ փոխարենը չնախատեց, չարչարվելով՝ չսպառնաց» (Ա. Պետր., Բ 22-23): Նա եկավ չարչարվելու ոչ թե ակամա, այլ կամովին: Եթե այժմ որևէ մեկը Նրան ասեր՝ «Ողորմյա քեզ, Տեր», Նա քեզ կպատասխաներ՝ «Ետևս գնա, սատանա» (Մատթ., ԺԶ 23):

6. Ուզո՞ւմ ես համոզվել, որ Նա կամովին է գնացել չարչարանքի: Մարդիկ, որոնք չեն իմանում իրենց մեռնելը, մեռնում են ակամա, իսկ Ինքը նախապես ասում էր իր չարչարանքների մասին. «Մարդու որդին պիտի մատնվի խաչը երևելու համար» (Մատթ., ԻԶ 2): Գիտե՞ս, թե ինչու մարդասերը չխուսափեց մահից: Որպեսզի ամբողջ աշխարհը չկորչի մեղքերի մեջ. «Բարձրանում ենք Երուսաղեմ, և մարդու Որդին պիտի մատնվի և խաչվի» (Հմմտ. Մատթ., Ի 19): Եվ դարձյալ՝ «Շրջեց դեմքը և հաստատապես որոշեց գնալ Երուսաղեմ» (Ղուկ., Թ 51): Եվ ուզո՞ւմ ես իմանալ, թե խաչը Քրիստոսի փառքն էր: Լսիր Նրա խոսքը և ոչ թե ինձ: Հուգան մատնեց՝ դրսևորելով իր ապերախտությունը տանտիրոջ նկատմամբ: Այս մատնիչը, դուրս գալով ընթրիքից, թեև օրհնության բաժակը խմել էր, իրեն տրված փրկության բաժակի փոխարեն ուզում էր Տիրոջ արդար արյունը թափել: Նա, ով սեղանակից էր Նրան և ուտում էր Նրա հացը, քացի տվեց Նրան անսանձ և անզուսպ անասունի նման (Հմմտ. Սաղմ., Խ 10): Դավաճանի ձեռքը նոր էր վերցրել օրհնության բաժակը, նա իսկույն, հանուն արծաթի, մահ էր պատրաստում: Երբ նա հանդիմանվեց և լսեց՝ «Դու ասացիր» (Մատթ., ԻԶ 25), դարձյալ դուրս եկավ: Ապա Հիսուս ասաց. «Հասավ ժամը, որ փառավորվի մարդու Որդին» (Հովհ., ԺԲ 23): Տեսնո՞ւմ ես, որ խաչը Նա դիտում է որպես իրեն փառք: Մի բան ևս: Երբ Եսայուն սղոցում էին, նա չէր ամաչում: Իսկ մի՞թե Քրիստոս պիտի ամաչեր, երբ զոհվում էր աշխարհի փրկության համար. «Այժմ մարդու Որդին փառավորվեց» (Հովհ., ԺԳ 31): Ոչ թե նախկինում Նա փառք չի ունեցել: Նա փառավորված էր աշխարհաստեղծումից առաջ իր ունեցած փառքով: Միշտ փառավորված է եղել որպես Աստված. այժմ փառաբանվում էր՝ համբերության պսակը դրած: Նա այս կյանքը չլքեց ստիպողաբար և ոչ էլ զոհվեց ակամայից, այլ կամովին: Լսիր, թե ինչ է ասում. «Իշխանություն ունեմ իմ

կյանքը տալու և իշխանություն ունենալ վերստին այն առնելու» (Հովհ., Ժ 18): Ուզեմ՝ կներեմ իմ թշնամիներին: Եթե չկամենայի, իմ զոհաբերումը չէր կատարվի: Ուրեմն, Նա կամովին գնաց դեպի չարչարանք: Նա ուրախ էր իր այս արարքի համար: Ժպտում էր փառքի պսակի համար, ցնծում էր մարդկանց փրկության համար, առանց ամաչելու խաչի համար, քանզի փրկում էր ամբողջ աշխարհը: Չարչարանք կրողը հասարակ մարդ չէր, այլ Աստված, որ մարդացավ և պայքարեց հանուն համբերության սխրանքի:

7. Բայց հակաճառում են եբրայեցիները, որոնք պատրաստ են ընդդիմախոսելու և թույլ՝ հավատալու: Թվում է, թե այդ մասին է խոսում մարգարեն նոր ընթերցված հատվածում. «Տեր, ո՞վ կհավատա, թե այն, ինչ մենք քարոզում ենք, դու ես մեզ բացահայտել» (Եսայի, ԾԳ 1): Պարսիկները հավատում են, իսկ եբրայեցիները չեն հավատում: Նրան պիտի ճանաչեն նրանք, որոնց ոչինչ Նրա մասին չի հայտնվել և նրանք, «որոնք ոչինչ չէին լսել, պիտի հասկանան» (Հռոմ., ԺԵ 21): Մինչդեռ նրանք, ովքեր ուսումնասիրում են Գիրքը, ուրանում են Գրքի հայտնած ճշմարտությունները: Նրանք հակաճառում են մեզ և համառում: Կարո՞ղ է արդյոք, որ Տերը տանջվի: Մարդկային ձեռքերը գերազանցեցին մի՞թե աստվածային զորությունը: Կարգացե՞ք, ուրեմն, Երեմիայի Ողբը: Ողբալուով ձեզ՝ մարգարեն գրել է ողբալու արժանի եղածների մասին: Նա ձեր կորչելու մասին է գրում. տեսնում է ձեր անկումը: Նա ողբում է այդ ժամանակների Երուսաղեմը: Քանզի այսօր Երուսաղեմը ողբերի կարիք չունի: Հին Երուսաղեմը խաչեց Քրիստոսին, մինչդեռ այժմյան Երուսաղեմը երկրպագում է Նրան: Ողբալով ասում է. «Մեր անձին շունչ տված Քրիստոսը՝ Տերը, բռնվեց մեր կեղտոտ ցանցերի մեջ»: Արդյո՞ք ես խոսքեր եմ հնարում: Ինքը՝ մարգարեն վկայում է, որ Քրիստոսը՝ Տերը, ձերբակալվում է մարդկանց կողմից: Եվ

դրանից ի՞նչ կբխի, ասա ինձ, մարգարե՛: Եվ ասում է «Մեր Տեր Թագավորի մասին հուսով էինք, թե կնստեինք Նրա հովանու տակ և կապրեինք հեթանոսների մեջ» (Ողբ, Դ 20): Ասված է պարզ: Այսուհետև Քրիստոսի փրկարար Շնորհը պիտի չգործի Իսրայելի ժողովրդի մեջ, այլ՝ հեթանոսների մեջ:

8. Քանի որ նրանք շատ են հակաճառում, եկեք, ինչքան որ մեզ կների այս կարճ ժամանակը, աղոթքներով ու Տիրոջ Շնորհով, ներկայացնենք մի քանի վկայություն Տիրոջ չարչարանքների վերաբերյալ: Քանզի Քրիստոսին վերաբերող ամեն ինչ գրված է, և կասկածելի ոչինչ չկա: Ամեն ինչ Հոգու միջոցով պարզ ու հստակ գրված է ոչ թե քարե տախտակների վրա, այլ մարգարեական գրքերում:

Քանի որ դու լսեցիր Հուդայի մասին Ավետարանում գրվածը, մի՞թե պարտավոր չես ընդունելու այդ վկայությունը: Լսեցիր, որ գեղարդով խոցեցին Նրա մարմինը: Մի՞թե պարտավոր չես այդ ևս քննելու, թե արդյո՞ք այդ էլ գրված է: Լսեցիր, որ Նա պարտեզում խաչվեց: Պարտավոր չե՞ս տեսնելու, թե այդ ևս գրված է: Լսեցիր, որ վաճառվեց երեսուն արծաթով: Պարտավոր չե՞ս իմանալու, թե մարգարեներից ո՞վ է այդ ասել: Լսեցիր, որ Նրան քացախով ջրեցին: Իմացիր, թե այդ ևս որտե՞ղ է գրված: Լսեցիր, որ մարմինը դրվեց ժայռի մեջ, և վրան էլ գերեզմանաքար դրվեց: Պարտավոր չե՞ս այդ վկայությունը ևս ստանալ մարգարեից: Լսեցիր, որ խաչվեց ավազակների հետ: Պարտավոր չես մի՞թե այդ ևս գրված տեսնել: Լսեցիր, որ թաղվեց: Պարտավոր չես մի՞թե իմանալ, թե թաղված լինելու մասին որտե՞ղ է գրված: Լսեցիր, թե հարյավ: Մի՞թե պարտավոր չես տեսնել, թե քեզ չե՞ն ծաղրում արդյոք՝ նման բաներ ուսուցանելով: Անշուշտ, մեր «խոսքը և քարոզչությունը իմաստության ճարտար խոսքերով չեն» (Ա Կորնթ., Բ 4): Մենք չենք փորձում խոսքերով հակաճառել

ուրիշ խոսքերի, քանզի դրանք կորչում են: «Մենք քարոզում ենք խաչված Քրիստոսին» (Ա Կորնթ., Ա 23), ինչն արդեն մարգարեները նախապես հայտարարել են: Այժմ դու, լսելով ինձնից այդ վկայությունները, կնքիր դրանք քո սրտում:

Քանի որ վկայությունները շատ են, իսկ ժամանակը՝ քիչ, կարճ խոսքով կբացատրեմ ինչքան ժամանակը ների: Այժմ լսիր առավել կարևորները և, օգտվելով առիթից, ինքդ ևս փնտրիր նոր վկայություններ: «Զեռքդ պարզած չլինի միշտ պատրաստ ստանալու համար, այլև պատրաստ՝ աշխատելու» (Սիրաք, Դ 31): Աստված ամեն ինչ շնորհում է. «Եթե ձեզնից մեկը իմաստություն թերի լինի, թող խնդրի Աստծուն, և կտրվի նրան» (Հակ., Ա 5): Զեր աղոթքների միջոցով թող Աստված մեզ ասելու խոսք տա և ձեզ՝ լսողներիդ, հավատալու:

9. Փորձենք գտնել Քրիստոսի չարչարանքներին վերաբերող վկայությունները: Այստեղ հավաքվել ենք ոչ թե գրքի տեսական մեկնությունը տալու համար, այլ առավելապես համոզվելու այն ամենին, ինչ հավատում ենք: Քրիստոսի Հայտնության մասին վկայությունները դու արդեն ստացել ես: Ե՛վ այն մասին, որ ծովի վրա քայլեց՝ քանզի գրված է. «Քո ճանապարհները ծովում են» (Սաղմ., ՀԶ 20) - և՛ Տիրոջ կատարած տարբեր բժշկությունների մասին վկայությունները այլ առիթով ստացել ես: Ուրեմն, սկսում եմ չարչարանքների սկսվելուց: Մատնիչը Հուդան էր: Նա եկավ ու նստեց Քրիստոսի դիմաց՝ խոսելով հանգիստ, բայց հոգու մեջ թշնամանք նյութելով: Սաղմոսագույն այդ մասին ասում է. «Բարեկամներս և ընկերներս մոտեցան ու կանգնեցին իմ առջև» (Սաղմ., ԼԷ 12): Մեկ այլ տեղ դարձյալ՝ «Զեթից փափուկ էին նրանց ձեռքերը, բայց իրենք կարծես նետեր լինեին» (Սաղմ., ԾԴ 22): «Ողջուն վարդապետ» (Մատթ., ԻԶ 49) և վարդապետին մահ-

վան հանձնեց: Զհարգեց նրա հիշեցումը, որ ասել է. «Հուդա, համբուրվելով ես մատնում մարդու Որդուն» (Ղուկ., ԻԲ 48): Կարծես թե, ասում էր. «Հիշիր քո տված ողջունը»: Հուդա նշանակում է՝ խոստովանություն: Մատնեցիր, ստացար արծաթը, շուտ խոստովանիր. «Ով իմ Աստված, մի՛ արհամարհիր խնդրանքը և մի՛ լռիր: Քանզի մեղավորի բերանը՝ բերանը նենգավորի, բացվեց ինձ վրա: Խոսեցին իմ մասին նենգամիտ լեզվով և ատելության խոսքերով պաշարեցին ինձ» (Սաղմ., ՃԼ 1-3): Այն, որ ներկա էին նաև մի քանի քահանայապետ, և որ բանտը գտնվում էր քաղաքի դռների առաջ, արդեն լսել ես ուրիշ անգամ, եթե, անշուշտ, հիշում ես այն ժամանակը, երբ այս բոլորն ասացինք և կարդացինք սաղմոսը, ուր ասված է. «Նրանք ետ դարձան երեկոյան և քաղցած էին շների պես և չըջապատեցին քաղաքը» (Սաղմ., ԾԼ 7 և 15):

10. Լսիր նաև երեսուն արծաթի մասին: Եվ կասեմ նրանց. «Եթե ձեզ հաճելի է, տվեք ինձ իմ վարձը» (Զաք., ԺԱ 12) և այլն: Դուք ինձ ուրիշ վարձ եք պարտական՝ վարձ՝ կույրերի և կաղերի բուժման համար - բայց ուրիշ վարձ եք տալիս: Շնորհակալության փոխարեն՝ անպատվություն: Ինձ երկրպագելու փոխարեն՝ հայհոյում եք: Տեսնո՞ւմ ես, ինչպես կանխատեսել է Գիրքը. «Եվ կշռեցին իմ վարձը՝ երեսուն արծաթ» (Զաք., ԺԱ 12): Օ՛, մարգարեական ճշգրտություն:

Օ՛, Սուրբ Հոգուց բխած ողջամտություն: Զի ասում տասր, ոչ էլ քսան, այլ ուղիղ երեսուն, ինչքան որ էր:

Ասա նաև, ո՛վ մարգարե: Այդ վարձն ստացողը այն պահո՞ւմ է իրեն, թե՞ վերադարձնում է: Եվ վերադարձնելուց հետո ո՞ւր է գնում: Մարգարեն ասում է. «Ես վերցրի երեսուն արծաթը, Տիրոջ Ծանր գցեցի բովի մեջ» (Զաք., ԺԱ 13): Այժմ համեմատիր մարգարեությունը Ավետարանի հետ, որտեղ ասվում է. Հուդան, զղջալով, «արծաթ դրամ-

ները նետեց տաճարի մեջ ու հեռացավ ու զնաց ինքն իրեն կախեց» (Մատթ., Իէ 3):

11. Բայց այստեղ մարգարեության մեջ և Ավետարանի վկայությունների թվացող տարբերությունը բացատրություն է պահանջում: Մարգարեներին ժխտողները մեջբերում են Զաքարիայի խոսքը. «Ես վերցրի երեսուն արծաթը և Տիրոջ Տանը գցեցի բովի մեջ» (Զաք., ԺԱ 13): Մինչդեռ Ավետարանն ասում է. «Այն տվեցին բրուտի ագարակի համար» (Մատթ., Իէ 10): Արդ, ինչպե՞ս են ճշմարտվում այս երկուսը, լսիր: Վայ-բարեպաշտ հուդայականները՝ այդ ժամանակվա քահանայապետերը, տեսնելով, որ Հուդան զղջաց և ասաց. «Մեղանչեցի, որովհետև արդար արյուն մատնեցի» (Մատթ., Իէ 4), ասացին. «Մեր հոգը չէ. դո՛ւ գիտես» (Մատթ., Իէ 4): Ուրեմն ձեր խաչողներդ, հոգը չէ՞: Եվ նա, ով ոճրի վարձն ստացավ և ետ չպրտեց, մեղավոր է, իսկ դուք՝ սպանողներդ, անմե՞ղ եք: Հետո ասացին. «Օրինավոր չէ դրանք ընդունել տաճարի գանձարանի մեջ, որովհետև արյան գին են» (Մատթ., Իէ 6): Ձեր դատավճիռը դուրս է գալիս ձեր բերանից: Եթե վարձը պիղծ է, պիղծ է նաև արարքը: Եթե դու, Քրիստոսին խաչելով, արդարություն ես գործում, ապա ինչո՞ւ վարձը չես ընդունում:

Այստեղ չկա անհամաձայնություն, երբ Ավետարանն ասում է՝ «Բրուտի ագարակի համար», իսկ մարգարեն՝ «Բովի մեջ»: Բայց միայն ոսկերիչներն ու պղնձագործները չէ, որ բով ունեն, այլ նաև բրուտները իրենց կավի համար: Քանզի նուրբ և պարարտ ու պիտանի հողը խիճերից մաքրելուց հետո այն լվանում ու զտում են բովի մեջ, որպեսզի հետո անարգել պատրաստեն իրենց կամեցածը: Ուրեմն, ինչո՞ւ ես զարմանում, որ Ավետարանը պարզ ասում է՝ բրուտի ագարակի համար, իսկ մարգարեի խոսքը առեղծվածային է մի քիչ:

12. Հիսուսին կապոտեցին ու տարան քահանայապետի գավիթ: Մարգարեները այդ ևս գրել են: Եսային ասում է. Վա՛յ նրանց հոգիներին, որովհետև իրենք իրենց համար չար խորհուրդներ խորհեցին և ասացին. «Կապենք արդարին, քանի որ նա մեզ անհաճո է» (Եսայի, Գ 9-10): Իրոք, վա՛յ նրանց հոգիներին: Քանզի Եսային, եթե սղոցվեց, ապա դրանից հետո փրկվեց ժողովուրդը: Երեմիային նետեցին ցեխաջրի փոսի մեջ, բայց բուժվեց հրեաների վերքը, քանի որ նրանց հանցանքը ավելի փոքր էր, քան այն, ինչ հրեաները կատարեցին մեր Տիրոջ վրա: Քանզի այն, ինչ կատարեցին Եսայու հետ, կատարեցին մարդու հետ. մինչդեռ հրեաները մեղանչեցին ոչ թե մարդու, այլ մարդացած Աստծու առաջ: Ուստի՝ վա՛յ իրենց հոգիներին:

«Կապենք արդարին»: Գուցե հարց տան: Նա չէ՞ր կարող կապերից ազատել իրեն: Նա, Ով չորս օրվա մահացած Ղազարոսին ազատեց մահվան կապանքներից և Պետրոսին ազատեց բանտի երկաթե շղթաներից: Հրեշտակները պատրաստ կանգնեցին նրանց մոտ և ասացին իրար. «Քանզենք նրանց կապանքները և թոթափենք նրանց լուծը մեղանից» (Մաղմ., Բ 9): Այդ հանդուրժում էին, քանի որ իրենց Տերը ուզում էր համբերել: Նա դարձյալ հանձնվեց ավագների դատաստանին: Դրա վկայությունն արդեն ունես. «Տերն ինքը դատելու է ժողովրդի ծերերին և նրանց իշխաններին» (Եսայի, Գ 14):

13. Բայց քահանայապետը, հարցնելով Նրան և իմանալով ճշմարտությունը, գայրացավ, և չարերից էլ չար ծառան ապտակեց Հիսուսին: Եվ արևի պես Նրա պայծառ դեմքը հանդուրժում էր անօրենների ապտակը: Ուրիշներ էլ եկան ու թքեցին Նրա երեսին, Ով իր թուքով բուժել էր կույր ծնվածին: Այսպե՞ս եք վարձատրում Տիրոջը: «Այս ժողովուրդը հիմար և անմիտ է» (Բ Օր., ԼԲ 6): Իսկ մարգարեն զարմացած ասում է. «Ո՞վ հավատաց Տիրոջ մասին

մեր տված լուրին» (Եսայի, ԾԳ 1): Քանզի անհավատալի է, որ լինելով Աստված, Աստվածորդի և Տիրոջ աջ բազուկը՝ հանդուրժի այդ չարչարանքը: Բայց այդ արվում է, որպեսզի չսասանվի փրկության պայմաններ ունեցողների հավատը: Սուրբ Հոգին մարգարեների միջոցով կանխագրում է, կարծես խոսում է Ինքը՝ Քրիստոսը. «Թույլ տվեցի, որ խարազանեն իմ թիկունքը»: Եվ ասվում է, որ Պիղատոսը Նրան մտրակելուց հետո հանձնեց, որ խաչեն: «Թիկունքս հարվածների տվեցի, ծնոտներս՝ ապտակի, և երեսս շուռ չտվեցի նախատինքից ու թքից» (Եսայի, Ծ 6): Այս խոսքերով Նա ուզում էր միայն ասել, որ կանխավ գիտեր, թե ապտակվելու է և երեսն անգամ չչրջեց: Ինչպե՞ս կարող էի ներշնչել իմ աշակերտներին՝ մեռնել հանուն ճշմարտության, եթե ես մարդկային թուլություն դրսևորեի: Ես էի ասողը, թե՝ «Ով սիրում է իր անձը, կկորցնի այն» (Հովհ., ԺԲ 25): Եթե անձնական կյանքի հանդեպ սեր դրսևորեի, ինչպե՞ս պիտի ուսուցանեի գործնականում այն, ինչ քարոզում էի: Ուրեմն, առաջինն Ինքը, լինելով Աստված, հանդուրժում է այդ չարչարանքները մարդկանց կողմից, որպեսզի հետագայում մարդիկ իր անվան համար մարդկանց կողմից նման չարչարանք կրելուց չամաչեն: Տեսնո՞ւմ ես, որ մարգարեներն այս ամենի մասին ասել են պարզ ու հստակ: Եվ իմացեք, որ Գրքի շատ վկայություններ բաց ենք թողնում, ինչպես ասել եմ, ժամանակի կարճ լինելու պատճառով: Եթե մեկն ուզում է փնտրել ու գտնել Քրիստոսին վերաբերող վկայություններ, նա հաջողություն կունենա. քանզի ոչինչ առանց համապատասխան վկայության չի մնա:

14. Կայափայից Նրան կապած բերեցին Պիղատոսի մոտ: Արդյո՞ք այս մասին գրված է որևէ տեղ: «Կապած Նրան տարան հեռու, որպես հաշտության ընծա Հարեհիմ թագավորին»: Սակայն մեր ուշադիր ունկնդիրներից որևէ մեկը

մեզ կկամենա առարկել: Պիղատոսը թագավոր չէր: Թողնենք այս հատվածի շուրջ գոյություն ունեցող խնդիրները և հարց տանք: Ինչպե՞ս Նրան կապեցին և ընծա տարան թագավորին: Ուրեմն, կարգա Ավետարանը: Պիղատոսը, լսելով, որ Նա Գալիլիայից է, Նրան ետ ուղարկեց Հերովդեսին, որն այդ ժամանակ թագավոր էր և գտնվում էր Երուսաղեմում: Տե՛ս մարգարեի ճշգրտությունը: Քանզի Նա ասում է՝ որպես ընծա ուղարկվեց թագավորին: «Պիղատոսն ու Հերովդեսը այդ օրերին բարեկամներ եղան, որովհետև առաջ թշնամիներ էին իրար» (Ղուկ., ԻԳ 12): Գուցե անհրաժեշտ էր, որ Նա, Ով պիտի հաշտեցներ երկիրն ու երկիրքը, նախ հաշտեցներ Իրեն դատապարտողներին: Եվ այդպես էլ կատարվեց. քանզի այնտեղ էր գտնվում Նա, Ով երկրի սիրտ է շուռ տալիս (Հոբ, ԺԲ 24): Ահա դու ունես մարգարեական ճշգրտություն և նրանց վկայության ճշմարտությունը:

15. Հիացիր դատվող Տիրոջ վրա: Հանդուրժում էր՝ զինվորների կողմից տարուբերվելով: Պիղատոսը նստած դատում էր, իսկ Նա, Ով նստած էր Հոր աջ կողմում, կանգնած դատվում էր: Ժողովուրդը, ում Նա ազատել էր եգիպտական ստրկությունից և այլ տեղերից, շատ անգամ աղաղակում էր Նրա դեմ: «Վերցրու, վերցրու Նրան և խաչը հանիր» (Հովհ., ԺԹ 15): Ինչո՞ւ, հրեաներ: Որովհետև բուժեց ձեր կույրերի՞ն: Որովհետև ձեր կողերին քայլեցրե՞ց: Զեզ շնորհած բազում այլ բարեգործությունների՞ համար: Մարգարեն զայրացած ասում է այդ մասին. «Ու՞մ վրա եք բացում ձեր բերանները և կամ ո՞ւմ վրա եք հանում ձեր լեզուները» (Եսայի, ԾԷ 4): Ինքը՝ Տերը ևս մարգարեների բերանով ասում է. «Իմ ժառանգությունը ինձ համար դարձավ անապատի առյուծ. իր ձայնն ինձ վրա բարձրացրեց. դրա համար ատեցի նրան» (Երեմ., ԺԲ 8): Ես չլքեցի նրանց, այլ նրանք լքեցին ինձ. և շարունակելով ես կասեմ.



«Ես լքեցի իմ տունը. թողեցի իմ ժառանգությունը» (Երեմ., ԺԲ 7):

16. Դատվելիս լուում էր, որպեսզի Պիղատոսը զարմանա և առավել անհանգստանա ու ասի Նրան. «Ձե՞ս լսում, ի՞նչ են վկայում քո դեմ» (Մատթ., ԻԶ 62): Ոչ այն պատճառով, որ ճանաչեց, թե ո՞վ էր դատվողը, այլ վախեցել էր իր կնոջ երազից: Եվ Հիսուսը լուում էր: Սաղմոսերգուն ասում է. «Իսկ ես դարձա ինչպես խուլ, որ չի լսում, ինչպես համր, որի բերանում խոսք չկա» (Սաղմ., ԼԷ 14-15): Եթե հիշում ես, այս մասին լսել ես նաև նախկինում:

17. Բայց զինվորները թափվում են Նրա շուրջը և ծանակում: Նրանց խաղալիքն է դառնում Տերը, և ծաղրվում է Տիրակալը: «Տեսան ինձ ու շարժեցին գլուխներն իրենց» (Սաղմ., ՃԸ 25): Զինվորների այս վերաբերմունքի մեջ առկա են Տիրոջ թագավորական պատիվը հաստատող բոլոր տարրերը: Թեև ծաղրում են, բայց և ծնրադրում են Նրա առաջ: Տանում են խաչելու, բայց ծիրանի քղամիդ հագցրած, գլխին պսակ դրած. ի՞նչ փուլթ, թե փշե պսակ: Ամեն թագավոր հուշակվում էր իր զինվորների կողմից: Երևի այդ պատճառով է, որ Գրքում ասված է. «Ելեք, Սիոնի դուստրեր, և նայեցեք Սողոմոն արքային ու նրա պսակին, որով մայրը... պսակեց նրան» (Երգ Երգոց, Գ 11): Սողոմոնի պսակը նախատիպն էր, Տիրոջ պսակի նախապատկերումը, որով հատուցվում և վերացվում էին մեր մեղքերը:

18. Դատապարտվեց Ադամը. «Թող անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով: Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը» (Ծննդ., Գ 17-18): Դրա համար Հիսուս ընդունեց փուշը, որպեսզի մեզ փրկի այդ դատապարտումից: Դրա համար թաղվեց հողում, որպեսզի անիծյալ երկիրը անեծքի փոխարեն ընդունի օրհնությունը: Մեղսա-

գործություն ժամանակ թզենու տերևներով ծածկեցին իրենց մերկությունը: Այդ պատճառով էլ Հիսուս իր հրաշքներն ավարտեց՝ թզենուն իր խոսքով չորացնելով: Պատրաստվելով գնալ չարչարանքների՝ անիծեց թզենին, բայց ոչ ամեն մի թզենի, այլ միայն այս մեկը՝ ասելով. «Էլ քեզնից ոչ ոք պտուղ չուտի» (Մարկ., ԺԱ 14): Վերանում էր դատապարտվածությունը. և քանի որ նախամարդը թզենու տերևներով էր ծածկել իրեն, Հիսուս եկավ թզենու մոտ այն ժամանակ, երբ նրա վրա պտուղ չէր լինում: Ո՞վ չգիտի, որ ձմեռ ժամանակ թզենին չի պտղաբերում, այլ իր վրա պահում է մի քանի թոշնած տերև: Բոլորը այդ գիտեին: Իսկ միայն Հիսուսն էր անգիտանում: Նա, իմանալով հանդերձ, գալիս է, իբր, պտուղ գտնելու, բայց չի գտնում՝ անեծքը սահմանափակելով մինչև տերևները:

19. Քանի որ մենք շոշափեցինք դրախտում կատարված դեպքերը, խոստովանեմ, որ իրապես հիացած եմ դրախտից անկման դեպքերի խորհրդանշային նախատիպերի և մարդու փրկություն իրական հանգամանքների ճշգրիտ համապատասխանություն վրա: Անկումը՝ դրախտում, փրկությունը՝ պարտեզում: Ծառից է սկսվում մեղքը դրախտում և պարտվում է խաչափայտի վրա: Երեկոյան Տերը շրջում էր դրախտում, երբ թաքնվեց նախաստեղծ մարդը: Դարձյալ երեկո էր, երբ ավազակը Տիրոջ կողմից մտցվեց դրախտ:

Բայց կարող է մեկն ինձ ասի. «Քեզանից հնարում ես: Յուրջ տուր ինձ մարգարեի վկայությունը խաչափայտի մասին: Եթե մարգարեի վկայությունն չնչես, ես քեզ չեմ հավատա»: Ուրեմն, լսիր Երեմիային և ստացիր քո ապացույցը: «Ես՝ իբրև անմեղ մի գառ, որին մորթելու են տանում, չիմացա՞» (Երեմ., ԺԱ 19): Այսպես հարցականով կարդա, ինչպես ես կարդացի: Քանզի նա, ով ասում է՝ «Գիտեք, որ երկու օր հետո գատիկ է, և մարդու Որդին պիտի մատնվի խաչը ելնելու համար» (Մատթ., ԻԶ 2), մի՞թե

այդ չէր իմանում: «Ես՝ իբրև անմեղ մի գառ, որին մորթելու են տանում, չէի՞ իմանում» (Մատթ., ԺԱ 19): Ո՞ր գառը: Հովհաննես Մկրտիչը թող մեզ բացատրի՝ ասելով. «Ահա Գառն Աստծու, որ վերացնում է աշխարհի մեղքը» (Հովհ., Ա 29): Իմ դեմ չար խորհուրդ են արել և մտածել. Նա, որ գիտի այլոց մտածածը, չգիտի՞ արդյոք դեպքերի վերջը և նրանց մտածածները: «Եկեք փայտ դնենք նրա հացի մեջ» (Երեմ., ԺԱ 19): Եթե հետագայում Տերը քեզ արժանացնի ճանաչելու, որ Տիրոջ մարմինը, համաձայն Ավետարանի, խորհրդանշվում էր հացով: «Եկեք փայտ դնենք հացի մեջ և ոչնչացնենք նրան ու անհետացնենք ողջերի երկրից» (Երեմ., ԺԱ 19): Բայց կյանքը չի ոչնչանա: Ի՞նչ էք իզուր ջանում: «Նրա անունը այլևս չհիշվի» (Երեմ., ԺԱ 19): Իզուր էք որոշել: Եկեղեցում Նրա անունը առավել հին է մնում, քան արևը: Եվ այն, որ կյանքը կախվեց խաչի վրա, մեզ ասում է Մովսեսը՝ ողբալով. «Քո ասքերի առաջ քո կյանքը կախված կլինի, գիշեր ու ցերեկ կզարհուրես: Ապահով չես լինի քո կյանքի համար» (Բ Օր., ԻԸ 66): Բոլոր այս վկայություններն անհրաժեշտ կլինի ըմբռնել՝ հիմք ունենալով, որ այն, ինչ արդեն ասել ենք. «Տեր, ո՞վ հավատաց, որ այն, ինչ քարոզում ենք, Դու ես մեզ բացահայտել» (Եսայի, ԾԳ 1):

20. Այս պատկերը ստեղծեց Մովսեսը՝ խաչելով օձին, որպեսզի կենդանի օձից խայթվողը՝ նայելով այդ պղնձե օձին, հավատա ու բուժվի: Եթե պղնձե խաչված օձը փրկում է, ապա Աստծու մարմնացած Որդին չի՞ կարող փրկել: Բոլոր ժամանակներում կյանքը առնչվել է փայտի հետ: Նոյի ժամանակ կյանքը պահպանվեց փայտե տապանի միջոցով: Մովսեսի ժամանակ՝ ծովը, տեսնելով գավազանը, նահանջեց նրա հպումից: Ուրեմն, Մովսեսի գավազանը զորութուն ունի, իսկ Փրկչի խաչն անզո՞ր է: Խոսքս չերկարելու համար բաց եմ թողնում Տիրոջ խաչի նախանշումները:

Միայն հիշեցնեմ, որ Մովսեսի դեպքում փայտը քաղցրացրեց ջուրը, և Քրիստոսի կողից էլ ջուրը հոսեց փայտի վրա:

21. Մովսեսի ժամանակ կատարված հրաշքներն առնչվում են արյան հետ: Հիսուսի գործած հրաշքներից վերջինը ևս առնչվում է արյան և ջրի հետ: Իր առաջին հրաշքով Մովսեսը «գետի բոլոր ջրերը վերածեց արյան» (Ելք, է 20): Հիսուս էլ իր երկրային կյանքի վերջում իր կողից դուրս բերեց ջուր և արյուն: Այս, հավանաբար, կատարվեց դատողի ձայնի և դատապարտող ամբոխի աղաղակի պատճառով, գուցե և հավատացյալների և անհավատների համար: Քանզի Պիղատոսն ասաց՝ «Ես անմեղ եմ», և լվաց ձեռքերը: Իսկ աղաղակողները գոռում էին. «Դրա արյունը՝ մեր վրա և մեր որդիների վրա» (Մատթ., Ի է 25): Ուրեմն, այդ երկուսն էլ հոսեցին Նրա կողից. ջուրը՝ գուցե դատողի համար, իսկ արյունը՝ աղաղակող ամբոխի:

Կարելի է նաև այլ կերպ մտածել: Արյունը վերաբերում է հուղայականներին, իսկ ջուրը՝ քրիստոնյաներին: Նրանց, որպես չարամիտների, դատավճիռ արյան միջոցով, իսկ քեզ, որ այժմ հավատացյալ ես, փրկութուն ջրի միջոցով: Ոչինչ պատահական չի եղել: Բայց մեր մեկնիչ հայրերը տալիս են նաև այլ բացատրություն: Քանզի համաձայն Ավետարանի, երկու եղանակով է պարզեցվում մեզ մկրտության փրկարար Շնորհը: Առաջինն այն է, որ դուք՝ լուսավորվողներդ, ստանում եք ջրով մկրտվելիս: Երկրորդ եղանակն այն է, որ հալածանքների շրջանում վկաներն ստանում էին իրենց թափած արյան միջոցով: Ուրեմն, Հիսուսի փրկչական կողից հոսեց արյուն և ջուր: Մենք Քրիստոսին վկայում ենք որպես մեր Փրկիչը և՛ մկրտությունից առաջ մեր հավատի խոստովանությունից, և՛ վկայությունից առաջ մեր կատարած հավատի խոստովանությունից: Կա նաև մեկ այլ պատճառ, որի համար խոցվեց Հիսուսի կողը: Ադամի կողից ստեղծված կինն առաջին մեղսագործն էր:

Իսկ Հիսուս եկավ ներում շնորհելու այրերին և կանանց ու խոցվեց կողից, հատկապես կանանց համար, որպեսզի սրբի նրանց հանցանքը:

22. Կարելի է նաև այլ պատճառներ գտնել, բայց բավարարվենք այսքանով, քանի որ ժամանակը սահմանափակ է և չեմ ուզում լսողներին հոգնեցնել և ձանձրացնել: Թեև երբեք չի կարելի հոգնել՝ մեր Տիրոջ փառավորվելու վերաբերյալ լսելով: Հատկապես այստեղ, ամենասուրբ Գողգոթայում: Քանզի ուրիշները միայն լսում են, իսկ մենք տեսնում ենք ու շոշափում: Ուստի, ոչ ոք թող չհոգնի: Վերցրու զենքերդ և ել թշնամու դեմ՝ պաշտպանելու խաչը: Որպես հուշարձան հակաճառողների դեմ կանգնեցրու հավատը խաչի նկատմամբ: Երբ պետք է Քրիստոսի խաչի մասին վիճես անհավատների հետ, նախ ձեռքով դեպի նրանց կողմն ուղղված Քրիստոսի խաչի նշանը կազմիր, որով կպապանձվի հակաճառողը: Մի ամաչիր խաչը վկայելու: Հրեշտակները պարծենում են՝ ասելով. «Գիտեք, որ փնտրում եք Հիսուսին, որ խաչվեց»: Ո՛վ հրեշտակ, չէի՞ր կարող ասել՝ գիտեմ, ում փնտրում եք, իմ Տիրոջը: Բայց ասում է բառացի՝ Գիտեմ, որ փնտրում եք Խաչյալին: Ասաց, որովհետև խաչն անպատվությունն չէ, այլ փառապսակ:

23. Բայց մենք վերադառնանք մարգարեների մոտ եղած փաստերին: Տերը խաչվեց: Վկայություններն ստացել են: Տեսնում են այստեղ Գողգոթան: Համաձայնվում և փառաբանում են բարձրաձայն: Տես, որ Նրան հանկարծ չուրանաս հալածանքների ժամանակ: Խաչի համար միայն խաղաղության ժամանակ չուրախանաս, այլ հալածանքների ընթացքում ևս պահպանիր նույն հավատքը: Մի եղիր Քրիստոսի բարեկամը խաղաղ ժամանակ, իսկ պատերազմի ժամանակ՝ թշնամին:

Այժմ ստանում են մեղքերիդ թողություն և որպես հո-

գեկան պարզե թագավորի շնորհածները: Պատերազմի դեպքում արիաբար կռվիր հանուն քո թագավորի: Անմեղ Հիսուսը խաչվեց քեզ համար, իսկ դու չե՞ս ուզում խաչվել հանուն Նրա, Ով խաչվեց քեզ համար: Դու Նրան շնորհ չես անում, այլ հատուցում ես քո պարտքերը Նրան, Ով քեզ համար խաչվեց Գողգոթայում:

«Գողգոթա» թարգմանվում է գանգերի վայր, կառափնատեղի: Այդ ուղքե՞ր են մարգարեաբար այդ վայրը կոչել «Գողգոթա», որտեղ իրական գլուխը՝ Քրիստոսը, հանդուրժեց խաչը: Ինչպես առաքյալն է ասում. «Նա պատկերն է աներևույթ Աստծու» (Կողոս, Ա 15): Եվ քիչ հետո՝ «Նա է գլուխը մարմնի, որ Եկեղեցին է» (Կողոս., Ա 18): Եվ ուրիշ տեղ դարձյալ. «Ամեն մարդու գլուխը Քրիստոսն է» (Ա Կորնթ., ԺԱ 3): Եվ դարձյալ. «Նա է գլուխը ամեն իշխանությունների և պետությունների» (Կողոս., Բ 10): Գլուխը «գանգի վայրում» չարչարանք կրեց: Օ՛, այս մարգարեական անվանումը ուժ ունի: Միայն «գանգի վայր» անվանումը քեզ հիշեցնում և ասում է. «Խաչվածին չհամարես հասարակ մարդ: Նա է գլուխն ամեն իշխանությունների և պետությունների» (Կողոս., Բ 10): Խաչված գլուխը գլուխն է ամեն մի իշխանություն, իսկ գլուխը՝ Հայրն է: Քանզի մարդու գլուխը Քրիստոսն է, և Քրիստոսի գլուխը՝ Աստված:

24. Ուրեմն, Քրիստոս խաչվեց մեզ համար: Գիշերը ցուրտ էր, և խարույկ էին վառել: Խաչվեց օրվա երրորդ ժամին: Իսկ վեցերորդ ժամից մինչև իններորդ ժամը խավար եղավ: Իններորդ ժամից դարձյալ լույս եղավ: Արդյո՞ք այս ևս գրված է: Քննենք: Զաքարիան ասում է. «Այն օրը լույս չի լինելու, այլ լինելու է ցուրտ և պարզ օր» (Զաք., ԺԴ 6): Յրտի պատճառով Պետրոսը տաքանում էր: Եվ այդ օրը հայտնի էր Տիրոջը (Զաք. ԺԴ 7): Ի՞նչ է: Մյուս օրերը հայտնի չէի՞ն Տիրոջը: Օրերը շատ են: Բայց մեկը Նրա չարչարանքի օրն էր, և իրեն հայտնի էր այդ օրը: «Ո՛չ

ցերեկ էր, ո՛չ գիշեր» (Ձաք., ԺԴ 7): Սա ի՞նչ հանելուկ է, որ ասում է մարգարեն. այդ օրը ոչ ցերեկ է, ոչ գիշեր: Ինչպե՞ս անվանենք: Դա բացատրում է Ավետարանը՝ պատմելով այդ դեպքը: Ցերեկ չէր, քանի որ արևը արևելքից արևմուտք ընթանալիս չէր փայլում, այլ վեցերորդ ժամից մինչև իններորդ ժամը խավար էր օրվա կեսին: Եվ այդ խավարումը Աստված կոչեց գիշեր: Այդ պատճառով ո՛չ ցերեկ էր, ո՛չ էլ գիշեր: Իններորդ ժամին արևը փայլեց: Մարգարեն այս ևս մարգարեանում է՝ ասելով. «Ո՛չ ցերեկ է, ո՛չ էլ գիշեր», և ավելացնում է. «Եվ երեկոյան լույս կլինի» (Ձաք., ԺԴ 7): Տեսնո՞ւմ ես մարգարեների ճշգրտությունը:

25. Ուզո՞ւմ ես ճշգրիտ իմանալ, թե արևը ո՞ր ժամին անհետացավ: Գուցե հինգերորդ ժամն էր, գուցե՞ ութերորդ կամ տասներորդ: Ո՛վ մարգարե, անհավատ հուդայականներին ճիշտ ժամն ասա: Ե՞րբ արևը մայր մտավ: Ամոս մարգարեն ասում է. «Այդ օրը արեգակը մայր պիտի մտնի ցերեկը» (Ամոս, Ը 9): Եվ խավար եղավ վեցերորդ ժամից (Մատթ., ԻԷ 45): «Եվ երկրում լույսը պիտի խավարի ցերեկով» (Ամոս, Ը 9): Իսկ այդ ո՞ր ժամին է լինելու և ո՞ր օրը, ո՛վ մարգարե: Այդ օրը «ձեր տոնը սուգ պիտի դարձնեմ» (Ամոս, Ը 10): Քանզի այդ պիտի կատարվի Բաղարջակերաց օրը՝ Չատկի տոնի ժամանակ: Եվ հետո ասում է. «Այդ օրը պիտի դարձնեմ սիրելիի սգի օր, և բոլոր նրանց համար, որ Նրա հետ կլինեն, ցավերի օր» (Ամոս, Ը 10): Եվ իրոք, Բաղարջակերաց օրը տոն էր, իսկ կանայք ողբում էին ու լաց լինում (Ղուկ., ԻԳ 27), իսկ առաքյալները թաքնվել էին տագնապած: Ջարմանալի մարգարեություն:

26. Կարող եք ասել՝ խաչելություն մասին ուրիշ փաստեր ևս բեր: Քրիստոս խաչին տարվեց մեկ շապիկով ու պատմուճանով: Զինվորները շապիկը բաժանեցին իրար մեջ՝ այն չորս կտոր անելով, իսկ պատմուճանը չկտրատե-

ցին, քանի որ կտրատվելուց հետո ոչնչի չէր կարող ծառայել: Ուստի, պատմուճանի համար վիճակ նետեցին: Մի՞թե այս ևս կա գրված: Այդ գիտեն մեր եկեղեցու հայտնի սաղմոսերգուհները, որոնք պատկերում են հրեշտակների զորքը և մշտապես օրհնեցում են Աստծուն: Նրանք արժանացել են երգելու այստեղ՝ Գողգոթայում, և ասելու. «Հագուստներս բաժանեցին իրար մեջ և պատմուճանիս վրա վիճակ գցեցին» (Սաղմ., ԻԱ 19):

27. Եվ դարձյալ, երբ տարան Պիղատոսի մոտ դատվելու, Նրան կարմիր հագցրին: «Քանզի Նրա վրա հագցրին կարմիր քղամիդ» (Մատթ., ԻԷ 28): Արդյո՞ք այս ևս գրված է: Եսային ասում է. «Ո՛վ է սա, որ գալիս է Երուվմից: Նրա հագուստների կարմիրը Բոսորա քաղաքից է» (Եսայի, ԿԳ 1): Ո՛վ է սա, որ անպատիվ լինելու համար կարմիր է հագել: Քանզի հրեաների համար բոսորա բառը նման իմաստ ունի: «Քո հագուստներն ինչո՞ւ են կարմիր, ասես հնձանահարի հագուստներ լինեն» (Եսայի, ԿԳ 2): Ինքն էլ պատասխանում և ասում է. «Ամբողջ օրն իմ ձեռքը երկարեցի դեպի անհնազանդ ու թշնամի ժողովուրդը» (Եսայի, ԿԵ 2):

28. Նա խաչի վրա տարածեց իր ձեռքերը, որպեսզի ընդգրկի տիեզերքի չորս ծագերը, քանզի երկրի ամենակենտրոն կետն այս Գողգոթան է: Այդ ես չեմ ասում, մարգարեն է ասում. «Փրկություն կատարեցիր երկրի մեջտեղում»: Պարզեց Նա իր մարդկային ձեռքերը: Նա, Ով ձեռքերով հաստատեց երկինքը: Նրա ձեռքերը ծակվեցին գամերով, որպեսզի, երբ Նրա մարդկային բնությունը, որն իր վրա պահում էր մարդկանց մեղքերը, գամվի խաչին և անհետանա, Նրա հետ մահանա նաև մեղքը, իսկ մենք հարություն առնենք արդարություն: «Եթե մեկ մարդու միջոցով առաջացավ մահը» (Հռոմ., Ե 17), «ապա մեկ մարդու միջոցով էլ ծնվեց կյանքը» (Հռոմ., Ե 17), այն Փրկչի,

որն ինքնակամ հանձնվեց մահվան: Համոզվելու համար հիշիր այն, ինչ Նա ասել է. «Իշխանություն ունեմ կյանք տալու և իշխանություն ունեմ այն վերստին առնելու» (Հովհ., Ժ 18):

29. Նա այս ամենը համբերությամբ տարավ՝ բոլորին փրկելու համար: Բայց ժողովուրդը վատ հատուցեց Նրան: Հիսուսն ասաց. «Ծարավ եմ» (Հովհ., ԺԹ 28): Նա, Ով ժայռից ջուր բխեցրեց: Նա իր տնկած այգուց պտուղ ուզեց: Բայց ի՞նչ այգի: Բնությամբ այն սուրբ հայրերից էր, բայց իր հակվածությամբ նրանց սողոմական այգին Սողոմից էր, իսկ որթը՝ Գոմորից: Եվ մինչ Տերը ծարավ էր, քացախի մեջ թաթախած սպունգը, եղեգի ծայրին կապելով, տալիս են Նրան: «Կերակրի տեղ ինձ լեղի տվին և ծարավելիս քացախ խմեցրին» (Մաղմ., ԿԼ 22): Տեսնո՞ւմ ես, ինչ թափանցիկ են մարգարեների գուշակությունները: Եվ ի՞նչ լեղի տվեցին ինձ: Տվեցին զմուռսով խառնած գինի (Մարկ., ԺԵ 23):

Դառնաղի ու զգվելի է զմուռսը: Այսպե՞ս եք փոխհատուցում Տիրոջը: Ա՞յս ես, այգի, մատուցում Տիրոջը: Եսային հիրավի ողբում էր ձեզ՝ ասելով. «Իմ սիրեցյալի համար բարձրադիր բերքատու այգի տնկեցի» (Եսայի, Ե 1): Որպեսզի ամեն ինչ չպատմենք, ավելացնենք միայն. «Սպասեցի, որ խաղող բերի, որ գինիով ծարավս հագեցնեի, բայց նա փուռ բերեց» (Հմմտ. Եսայի, Ե 2-4): Տեսնո՞ւմ ես գլխիս փշե պսակը: Էլ ի՞նչ ասեմ: Կհրամայեմ ամպերին, կանձրևեն այդ այգում: Եվ վերացան ամպերը, այն է՝ մարգարեները, որոնք հայտնում էին Աստծու կամքը: Ինչպես ասում է Պողոս առաքյալը, այսուհետև մարգարեները գործում են եկեղեցում: «Թող երկու կամ երեք մարգարեներ խոսեն մեկ-մեկ, իսկ մյուսները՝ թող քննեն» (Ա Կորնթ., ԺԴ 29): Եվ հետո. «Աստված տվեց, որ ոմանք՝ եկեղեցում լինեն առաքյալներ, ոմանք մարգարեներ»: Մարգարե էր նաև Ա-

գաբոսը, որն իր ոտքերն ու ձեռքերը կապեց գոտիով (Գործք, ԻԱ, 10-11):

30. Իր հետ խաչված ավազակների մասին ասված է. «Անօրենների հետ դասվեց» (Ղուկ., ԻԲ 37; Եսայի, ԾԳ 12): Երկուսն էլ մինչ այդ անօրեններ էին: Մեկն արդեն՝ այլևս ոչ, իսկ մյուսը մինչև վերջ մնաց անօրեն, անզղջում, փրկության անհաղորդ: Թեև ձեռքերը գամված էին, բայց հարվածում էր լեզվի հայհոյանքով: Այնտեղով անցնող հրեաները գլուխներն էին օրորում՝ ծաղրելով Խաչյալին՝ դրանով իսկ հաստատելով գրվածը, թե՛ «Տեսան ու շարժեցին գլուխներն իրենց» (Մաղմ., ձԼ 25): Եվ ավազակը նրանց հետ հայհոյում էր Տիրոջը, մինչդեռ մյուսը հանդիմանում էր հայհոյողին: Եվ այդ եղավ նրա կյանքի վախճանը, բայց իր՝ ուղղվելու սկիզբը: Հոգին ավանդելով՝ ստանում էր փրկություն: Եվ Նրան հանդիմանելուց հետո ասում է. «Հիշիր ինձ, Տեր» (Ղուկ., ԻԳ 40): «Քանզի իմ խոսքը քեզ է ուղղված: Սրան բաց թող: Նրա հոգու աչքերը կուրացել են: Հիշիր ինձ: Չեմ ասում հիշիր իմ գործերը, քանզի սարսափում եմ դրանցից: Ամեն մարդ բարեկամանում է իր ուղեկցի հետ: Ես էլ քեզ ուղեկից եմ դեպի մահ: Հիշիր քո ուղեկցին: Չեմ ասում այժմ հիշիր, այլ երբ գաս քո թագավորություն» (Ղուկ., ԻԳ 42):

31. Այդ ի՞նչ ուժ քեզ լուսավորեց, ո՛վ ավազակ: Ո՞վ քեզ սովորեցրեց երկրպագել արհամարհվածին և քո խաչակցին: Ո՞վ հավերժական լույս, որ լուսավորում ես խավարյալներին: Ուստիև, արդար է, որ լսես՝ քաջ եղիր: Ոչ այն պատճառով, որ քո կյանքն արժանի է քաջ լինելու, այլ թագավորն է ներկա և քեզ շնորհ է անում: Քո խնդրանքը երկար ժամանակով կլինի, բայց Շնորհը արագ կգա: «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ., ԻԳ 43), որովհետև այսօր լսեցիր իմ ձայնը և քո սիրտը չկարծրացրիր: Ես շատ արագ որոշեցի Ադամի

դեմ և շատ արագ քեզ պարզեցում եմ իմ Շնորհը: Այդ ժամանակ Ադամին ասված էր. «Այն օրը, երբ դուք իմացության ծառից ուտեք, նույն օրը մահկանացու կդառնաք» (Ծննդ., Բ 17): Իսկ դու այսօր գտար հավատը, և այսօր ստանում ես նաև փրկությունը (Ղուկ., ԻԳ 43): Նա ծառի միջոցով ընկավ դրախտից: Իսկ դու ծառի միջոցով մտնում ես դրախտ: Մի՛ վախեցիր օձից, նա քեզ դուրս չի քշելու, քանզի երկնքից է ընկել: Ես քեզ չեմ ասում՝ այսօր մեկնում ես, այլ այսօր կլինես ինձ հետ: Քաջ եղիր, չես վտարվելու: Մի՛ վախեցիր հրե սրից: Այն սարսափում է Տիրոջից: Ո՛վ մեծ և անպատմելի Շնորհ: Անգամ հավատարիմ Աբրահամը դեռևս չի մտել, բայց ավագակը մտնում է: Անգամ Մովսեսն ու մարգարեները չմտան, բայց ավագակը մտնում է: Քո առաջ հիացավ նաև Պողոսը՝ ասելով. «Ուր որ մեղքը շատացավ, Շնորհն առավել ևս շատացավ» (Հռոմ., Ե 20): Ովքեր ամբողջ օրը համբերեցին և դիմացան տապին, դեռևս չմտան, և սա, որ եկավ մետասաներորդ ժամին, մտավ: Թող ոչ ոք չդժգոհի տանտիրոջից, քանզի ասում է. «Բարեկամ, քեզ չեմ զրկում»: Մի՞թե իրավունք չունեմ իմ ունեցվածքի հետ վարվել ինչպես կամենում եմ: Ավագակը կամենում է իր մնացած կյանքում արդար գործեր կատարել, բայց մահը կանխում է նրան: Ես չեմ ակնկալում բացառապես առաքելի գործեր: Ընդունում եմ նաև հավատը: «Ես եկել եմ հովվելու իմ ոչխարներին շուշանների մեջ: Հովվելու պարտեզներում» (հմմտ. Երգ Երգոց, Զ 2): Գտա կորսված ոչխարը, այն բարձրացնում եմ իմ ուսերին, որովհետև նա հավատում է և ասում. «Մոլորվեցի կորսված ոչխարի պես»: «Հիշիր ինձ, Տեր, երբ գաս քո թագավորությամբ» (Ղուկ., ԻԳ 42):

32. Այս պարտեզի մասին երգերով ես իմ հարսնացուին կանխահայտնել եմ՝ ասելով. «Ես իմ պարտեզը մտա, քույր իմ հարս» (Երգ Երգոց, Ե 1): Խաչված վայրում պարտեզ

կար (Հովհ., ԺԹ 41): Եվ ինչ ստացար այդ պարտեզից. «Իմ գմուռը քաղեցի» (Երգ Երգոց, Ե 1): Զմուռսով խառնած գինին ու քացախը խմելուց հետո ասաց. «Ամեն ինչ կատարված է» (Հովհ., ԺԹ 30): Քանզի խորհուրդը կատարված էր, բոլոր գրվածները կատարվել էին, մեղքերը ներվել էին: «Իսկ Քրիստոս, որ եկավ որպես ապագա բարիքների քահանայապետ, անցնելով մեծ, կատարյալ և անձեռակերտ խորանով, այսինքն՝ ոչ այս աշխարհի արարածների կողմից շինված, ոչ էլ նոխազների և զվարակների արյունով. միանգամընդմիջ իր իսկ արյամբ մտավ սրբարան՝ հավիտենական փրկություն ասպհովելով: Որովհետև, եթե ցուլերի և նոխազների արյունը և երինջների շաղ տված մոխիրը մաքրում են պղծվածներին՝ մարմնի մաքրություն համար, որչափ ևս առավել արյունը Քրիստոսի» (Հռոմ., Թ 11-14): Եվ դարձյալ. «Եղբայրներ, ուրեմն համարձակություն ունենք Հիսուսի արյամբ մտնելու սրբարանից ներս այն նոր և կենդանի ճանապարհով, որ նա բացեց մեզ համար վարագույրի միջով, որ է իր մարմինը» (Եբր., Ժ 19-20): Եվ քանի որ նրա մարմինը, այսինքն՝ վարագույրը, անարգվեց, տաճարի վարագույրը, ինչպես գրված է, պատռվեց: «Եվ ահա տաճարի վարագույրը վերևից մինչև ներքև երկուսի պատռվեց» (Մատթ., ԻԷ 51): Եվ ոչ մի մասը չմնաց առանց պատռվածքի: Քանզի Տերն ասել է. «Ահա ձեր տունը լքվում է ամայացած» (Մատթ. ԻԳ 28):

33. Եվ այս ամենը հանդուրժեց մեր Փրկիչը և «Խաչի վրա թափված իր արյամբ խաղաղություն բերեց և հաշտեցրեց ամեն ինչ և՛ երկրի վրա, և՛ երկնքում եղածների համար» (Կող., Ա 20): Քանզի մեղքի պատճառով թշնամի էինք դարձել Աստուծո հետ, և Աստված սահմանել էր, որ մեղավորները մահանան: Պետք է կատարվեր երկուսից մեկը. կամ արդարանար Աստված, և բոլորը մահանային, կամ մարգասիրություն դրսևորելով՝ վերացներ իր որոշումը:



Բայց տես Աստուծու իմաստութիւնը: Պահպանեց և՛ որոշման ճշմարտութիւնը, և՛ մարդասիրութեան ներգործութիւնը: Քրիստոս խաչի վրա իր մարմնով վերցրեց մեղքերը, որպէսզի իր մահով մենք ազատվենք մեղքերից և այսուհետ ապրենք արդարութեամբ: Մեզ համար զոհվածը աննշան մարդ չէր: Նա այն ոչխարի նման չէր, որ ընկալուած ենք մեր զգայարաններով: Նա հասարակ մարդ չէր: Հրեշտակ չէր նա, այլ Աստուծոյ, որ մարդացավ: Մեղավորների մեղքն այնքան մեծ չէր, ինչքան մեծ էր սրբութիւնը Նրա, Ով զոհվեց հանուն մեղավորների: Նա, Ով մեզ համար իր կյանքը զոհեց, այն տվեց, երբ կամեցավ, և այն նորից ստացավ, երբ կամեցավ:

Եվ կուզե՞ս իմանալ, թե՞ Նա իր կյանքն ահամայից չզոհեց, և հոգին ահամայից չհանձնեց: Նա իր Հորը դիմեց՝ ասելով՝ «Հայր, քո ձեռքն եմ ավանդում իմ հոգին» (Ղուկ., ԻԳ 46): Այն հանձնում եմ՝ վերստին ետ ստանալու համար: «Այս ասելով՝ ավանդեց հոգին» (Մատթ., ԻԷ 30; Ղուկ., ԻԳ 46): Բայց ոչ երկար ժամանակով, քանզի շուտով հարուստիւն առավ մեռելներից (Մարկ., ԺԶ 9):

34. Մի՞նեց արևը արդարութեան արևի պատճառով: Զարդվեցին քարերը մտավոր ժայռի պատճառով: Գերեզմաններ բացվեցին և մեռելներ հարուստիւն առան հանուն Նրա, Ով ազատ է մեռելների մեջ: Բանտարկյալներին դուրս բերեց մութ և անջուր փոսից (Զաք., Թ 11): Ուրեմն, մի՛ ամաչիր Խաչյալի համար, այլ քաջութեամբ դու ևս վկայիր ու ասա. «Նա խոցվեց մեր մեղքերի համար և մեր անօրենութիւնների համար դատապարտվեց, և Նրա վերքերով մենք բուժվեցինք» (Եսայի, ԾԳ 5): Ապերախտ չգտնվեք մեր բարերարի հանդեպ: Եվ ավելացրու՝ ասելով. «Իմ ժողովրդի անօրենութիւնների պատճառով Նա մահվան մատնվեց: Նրա գերեզմանի համար չարութեամբ, իսկ Նրա մահվան համար մեծամեծ հարվածներով պիտի

վրեժխնդիր լինեմ» (Եսայի, ԾԳ 8-9): Այդ պատճառով էլ Պողոսը հատակ ասում է. «Քրիստոս մեռավ մեր մեղքերի համար, ըստ Գրքերի, և թաղվեց և թե հարուստիւն առավ երրորդ օրը՝ ըստ Գրքերի» (Ա. Կորնթ., ԺԵ 3-4):

35. Ուզում ենք պարզ իմանալ, թե՞ որտե՞ղ է թաղվել: Գերեզմանն արդյո՞ք ձեռակերտ է: Արդյո՞ք թագավորների գերեզմանների նման այն շաղված է քարերով ու բարձրացել է հողից դուրս: Իսկ ի՞նչ են դրել դռանը: Ասացեք մեզ, մարգարենե՛ր: Ասացեք նաև թաղման ճիշտ վայրը, որպէսզի մենք փնտրենք այն: Եվ մեզ ասացին. «Նայեցեք այն հաստատուն վեմին, որից կերտել ենք» (Եսայի, ԾԱ 1): Ունես նաև Ավետարանը, որտեղ ասված է՝ «վիճափոր գերեզմանի մեջ» (Ղուկ., ԻԳ 53), որ «փորված էր ժայռի մեջ» (Մարկ., ԺԵ 46): Եվ ի՞նչ է լինում այնտեղ: Ինչպիսի՞ն էր գերեզմանի դուռը: Դարձյալ մարգարեն ասում է. «Իմ կյանքը զուրբի մեջ խեղդեցին, քար դրին ինձ վրա» (Ողբ, Գ 53): Անկյունաքար, ընտիր, թանկագին (Եսայի, ԻԼ 16; Ա Պետր., Բ 6): Թաղված եմ մեկ այլ վեմի խորքում, բայց կարճ ժամանակով: Վեմ, որի վրա հրեաները պիտի սայթաքեն, և որը փրկարար կլինի հավատացողների համար: Կենաց ծառը տնկվեց հողին, որպէսզի անիծված հողը օրհնութիւն ստանա, և որպէսզի մեռյալները ստանան ազատութիւն:

36. Ուրեմն, չամաչենք խոստովանելու Խաչյալին: Որպէս խոստովանութեան նշան մեր ճակատին և ամենուր մատներով համարձակորեն զրոշմենք խաչը: Ե՛վ ուտելիս հացի վրա, և՛ խմելիս՝ բաժակի վրա, և՛ ներս մտնելիս, և՛ դուրս գալիս, և՛ քնելուց առաջ, և՛ զարթնելիս, և՛ քայլելիս, և՛ հանգստանալիս: Դա մեծ ապահովութիւն է: Ոչ մեկ ծախս չի պահանջում աղքատներից, ոչ մի ջանք՝ հիվանդներից, քանի որ այդ Շնորհը Աստուծուց է: Այն հավատաց-

յախները նշանն է և դեքերի սարսափը: Քանզի խաչի վրա հաղթեց դեքերին, խայտառակեց հրապարակով: Քանզի երբ տեսնում են խաչը, նրանք մտաբերում են Խաչյալին: Նրանք վախենում են վիշապի գլուխները ջախջախողից: Մի՛ արհամարհիր որպես պարզև քեզ շնորհված խաչի նշանը, այլ այդքան մատչելի լինելու համար դու պիտի ավելի մեծարես Շնորհողին:

37. Եթե վեճի ժամանակ դու ապացուցման փաստարկներ չունենաս, հավատքը քո մեջ թող մնա անսասան: Բայց ավելի լավ է լինես բազմագիտակ, որպեսզի հրեաներին լռեցնես մարգարեների ասույթներով, իսկ հելլեններին՝ նրանց առասպելաբանություններով: Հելլենները պաշտում են անգամ կայծակնահարներին, որոնք, բնական է, լինում են ապաշահար: Իսկ կայծակը երկնքից ընկնելիս պատահական չի ընկնում: Եթե նրանք չեն ամաչում պաշտել աստվածատյաց կայծակնահարներին, դու կամաչե՞ս պաշտել Աստծուն սիրելի Նրա Որդուն, որ խաչվեց քեզ համար:

Ամաչում եմ անդրադառնալ հելլենների աստվածներ կոչվածներին և առայժմ այդ մասին չեմ խոսում: Իսկ իմացողները թող ասեն: Եվ հերետիկոսները թող պապանձվեն: Եթե որևէ մեկը քեզ ասի, թե խաչը երևակայական է, արհամարհիր նրան: Արհամարհիր նրանց, ովքեր կասեն, թե երևակայությամբ խաչվեց: Գիտենք, որ խաչից եղավ մեր փրկությունը: Ուրեմն, մեր փրկությունը երևակայությո՞ւնն է միթե: Եթե խաչը երևակայություն է, ուրեմն երևակայություն է նաև հարությունը: Եթե Քրիստոս հարություն չի առել, նշանակում է, որ մենք դեռևս մնում ենք մեր մեղքերի մեջ: Եթե խաչը երևակայություն է, ապա երևակայություն է նաև համբարձումը: Եվ եթե համբարձումը երևակայություն է, ապա և երկրորդ գալուստը և ամեն ինչ անիրական են:

38. Ուրեմն, խաչն ընդունիր որպես առաջին և անսասան հիմք և դրա վրա կառուցիր քո հավատքը: Մի՛ ուրացիր Խաչյալին, եթե ուրանաս Նրան, բազում հանդիմանողներ կունենաս: Առաջինը քեզ կժխտի մատնիչ Հուդան: Նա մատնելով իմանում էր, որ քահանայապետերի և ավագների կողմից մահվան է դատապարտված: Այդ վկայում է երեսուն արծաթը: Վկայում է Գեթսեմանին, որտեղ կատարվեց մատնությունը: Ել չասեմ Ձիթենյաց լեռան մասին, որտեղ գիշերն աղոթում էին ներկաները: Վկայում է գիշերվա լուսինը, վկայում են ցերեկը և արևը, որ կորավ, քանզի չէր կարող հանդուրժել թշնամիների ապօրինությունները Տիրոջ հագեպ: Քեզ կհանդիմանի կրակը, որտեղ տաքացել է Պետրոսը: Եթե ուրանաս խաչը, քեզ սպասում է հավիտենական կրակը: Խիստ եմ խոսում, որպեսզի ինքզիքիդ չփորձես խոստանալ: Հիշիր Գեթսեմանիում Նրա վրա եղած դանակների մասին, որպեսզի չփորձվես հավիտենական սրից: Քեզ կհանդիմանի Կայափայի տունը, որն իր ներկա ամայությունը վկայում է այն զորությունը, որ ուներ այնտեղ դատվողը: Քեզ կհակաճառի Հիսուսին ապտակած ծառան: Նաև նրանք, ովքեր Հիսուսին կապեցին ու բերեցին Նրա չարչարանաց վայրը: Քեզ կհակադրվեն նաև Հերովդեսն ու Պիղատոսը, որոնք կասեն. «Ինչո՞ւ ես ուրանում Նրան, Ում հրեաները զրպարտեցին մեր առաջ, Ում մասին գիտենք, որ ոչնչով մեղավոր չէր: Որովհետև ես ևս՝ Պիղատոսս, այն ժամանակ ձեռքերս լվացի»: Քեզ կհերքեն սուտ վկաները, զինվորները, որոնք նրանք հագցրին կարմիր զգեստ և փշե պսակ և խաչեցին Գողգոթայում, որոնք և վիճակ գցեցին Նրա հագուստի վրա: Քեզ կհանդիմանի Սիմոն Կյուրենացին, որը Քրիստոսի ետևից կրում էր խաչը:

39. Ասողերից քեզ կհերքի նաև արևը, որը խավարեց: Երկրայիններից՝ զմուռսով խառնած գինին, եղեգագգիններից՝ եղեգը, բույսերից՝ զոպան, ծովայիններից՝ սպունգը,

ծառերից՝ խաչափայտը: Զինվորները, որոնք խաչեցին Նրան և վիճակ գցեցին Նրա հագուստի վրա: Զինվորը, որ գեղարդով խոցեց Նրա կողը: Այնտեղ ներկա գտնված կանայք: Տաճարի վարագույրը, որ պատուվեց և դարձավ երկու կտոր: Պիղատոսի պրետորիոսը, որն այժմ ամայացել է այդ ժամանակ խաչվածի գորուծյամբ: Այս սուրբ Գողգոթայի բարձունքը, որ մինչև օրս էլ լույս է արձակում և ցույց է տալիս, թե ինչպես Քրիստոսի համար ճեղքվեցին քարերը: Մոտակա գերեզմանը, ուր դրվեց Հիսուսը: Գերեզմանաքարը, որ մինչև օրս գերեզմանի մոտ է: Այդ ժամանակ ներկա եղած հրեշտակները: Հարուժյունից հետո Նրան երկրպագած կանայք: Պետրոսն ու Հովհաննեսը, որոնք վազեցին դեպի գերեզման: Թովմասը, որն իր մատները դրեց Հիսուսի կողի սպիի և գամերի տեղերի վրա: Նա մեզ համար ուշադիր շոշափեց, որպեսզի դու, որ այնտեղ ներկա չես եղել, փնտրեիր ու գտնեիր այն, ինչ ինքը, որպես ներկա, ստուգեց:

40. Խաչի վկաներն են տասներկու առաքյալները և համայն աշխարհում խաչյալին հավատացող մարդիկ: Այստեղ քո ներկայութունը վկայում է խաչյալի գորուծյան մասին: Ի՞նչն է քեզ բերել այստեղ, այս հավատին: Այդ ո՞ր զինվորները ստիպեցին: Ի՞նչ կապանքներով քեզ կապեցին ու բերեցին: Ո՞ր դատարանի վճիռը քեզ բռնի ստիպեց այստեղ ներկայանալ: Հիսուսի հաղթանակի հուշարձանը՝ խաչը, որ բոլորին հավաքեց այստեղ: Այն նվաստացրեց պարսիկներին և ստիպեց նրանց ծառայություն ընդունել, զսպեց սկյութներին, կատունների, շների և բազմադեմ մոլորությունների փոխարեն եգիպտացիներին շնորհեց աստվածաճանաչումը: Այն վանում է դևերին և տապալում կախարհների և մոգերի խաբեությունները:

41. Խաչի այս հաղթանշանը Հիսուսի հետ դարձյալ երևալու է երկնքից: Պիտի նախորդի հաղթանշանը, որից հետո կգա թագավորը, որպեսզի հրեաները տեսնեն, թե ում կողը ծակեցին և խաչի միջոցով ճանաչեն Նրան, Ում անարգել էին: Հրեաներից զղջացածները պիտի ողբան ու կուրծք ծեծեն: Նրանք պիտի ողբան՝ ըստ ցեղերի և պիտի զղջան այն ժամանակ, երբ նրանց զղջալու ժամանակ չի մնալու: Իսկ մենք պիտի պարծենանք, որովհետև մեր կյանքը և հույսերը կապեցինք խաչին և պիտի երկրպագենք Տիրոջը, որ ուղարկվեց և խաչվեց մեզ համար: Պիտի երկրպագենք նաև Նրան ուղարկած Հորը՝ Սուրբ Հոգու հետ, Ում փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:



## ՈՒՍՈՒՑՈՒՄ ՏԱՄՆՉՈՐՄԵՐՈՐԴ

### Արված Երուսաղեմում՝ Հավատի Հանգանակի «Երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով բարձրացավ երկինք և նստեց Հոր աջ կողմում» հոդվածի մասին

Ընթերցում Կորնթացիներին ուղղված առաջին թղթից. «Եղբայրներ, հիշեցնեմ ձեզ իմ Ավետարանը, որը քարոզեցի ձեզ» (Ա. Կորնթ., ԺԵ 1) և այլն: «Թե հարություն առավ երրորդ օրը՝ ըստ Գրքերի» (Ա. Կորնթ., ԺԵ 4) և շարունակությունը:

1. Յնձա՛, Երուսաղե՛մ, և տոնեցեք բոլորդ, ովքեր սիրում եք Հիսուսին (Եսայի, ԿԶ 10): Քանզի նա հարյավ: Ուրախացեք բոլորդ, ովքեր նախապես սգացել եք՝ լսելով հրեաների համարձակորեն կատարած անօրենությունները: Քանզի հարյավ Նա, Ով այստեղ անարգվել էր: Եվ ինչպես որ տխուր է խաչելություն մասին լսելը, այնպես էլ հարության ավետումը թող ցնծություն պարգևի ներկաներին: Սուգը թող վերածվի ցնծության և ողբը՝ ուրախության: Եվ թող մեր բերանը լցվի ուրախությամբ և ցնծությամբ. քանի որ Նա հարությունից հետո ասաց մեզ. «Ողջո՛ւյն ձեզ» (Մատթ., Բ 8, 9): Քանզի անցած օրերին տեսաքրիստոնյաների ապրած վիշտը: Որովհետև բոլոր ասվածները վերջանում էին մահվամբ և թաղմամբ, և չլսվեց հարության բարի ավետիսը: Եվ մեր միտքը տագնապով սպասում էր լսելու ցանկալին: Արդ, հարյավ մեռյալը, ազատը մեռյալների մեջ և մեռյալների ազատարարը: Նա, Ով համբերությունամբ ընդունեց հազնել անարգալից փշե պսակը,

այժմ, հարություն առնելով, հագավ մահվան նկատմամբ հաղթանակի պսակը:

2. Ինչպես որ շարադրեցինք խաչին վերաբերող վկայությունները, այժմ էլ ներկայացնենք հարությունը վերաբերող ապացույցները: Քանզի ընթերցված հատվածում առաքյալն ասում է. «Թաղվեց և երրորդ օրը հարություն առավ՝ ըստ Գրքերի» (Ա Կորնթ., ԺԵ 4): Քանի որ առաքյալը մեզ հղում է Գրքերին, լավ կլիներ, որ մենք ճանաչեինք մեր փրկության հույսը և նախ իմանայինք, թե արդյո՞ք սրբազան Գրքերը նշում են հարության ժամանակը: Այն տեղի ունեցավ զարնա՞նը, թե՞ աչնանը, թե՞ ձմեռն անցնելուց հետո. և որտե՞ղ կատարվեց Նրա հարությունը, և հրաշալի մարգարեները ո՞ր վայրն են անվանում որպես հարության վայր. և արդյո՞ք Նրան փնտրող և չգտնող կանայք, Նրան դարձյալ գտնելով, ուրախացան, որպեսզի սուրբ Ավետարանում կարգացվածները չթվան առասպել, երևակայական պատումներ և հանգերգեր:

3. Այն, որ Փրկիչը թաղվեց, դուք հստակ լսեցիք նախորդ դասի ժամանակ՝ լսելով Եսայուն. «Խաղաղություն մեջ կլինի Նրա թաղումը: Քանզի Նա խաղաղություն հաստատեց երկնքի և երկրի միջև՝ մեղավորներին առաջնորդելով առ Աստված: Արդարը վերցվեց անիրավների ձեռքից (Եսայի, ԾԷ 1): «Խաղաղություն պիտի իջնի Նրա գերեզմանին, և չարերը պիտի հատուցեն Նրա թաղման համար» (Եսայի, ԾԳ 9): Նույնը մեզ ասում է նաև Հակոբի մարգարեությունը Գրքերում. «Ելար, բազմեցիր, ննջեցիր որպես կորյուն առյուծի: Ո՞վ նրան պիտի արթնացնի» (Ծննդ., ԽԹ 9): Մոտավորապես նույնը նաև Թվոց գրքի մեջ. «Նա փռված կհանգստանա, ինչպես առյուծը և կորյունը» (Թվեք, ԻԴ 9): Այդ ասում է նաև սաղմոսը, որ դուք բազմիցս լսել եք. «Եվ ինձ իջեցրին մահվան հողի մեջ» (Սաղմ.,

ԻԱ 16): Վայրի մասին մենք արդեն նշել ենք այն, ինչ ասված է. «Նայեցեք այն հաստատուն վեմին, որը կերտել եք» (Եսայի, ԾԱ 1): Այժմ շարունակության մեջ ներկայացնենք Նրա հարուժյան մասին եղած վկայությունները:

4. Այսպես, մետասաներորդ սաղմոսում ասված է. «Աղքատի տառապանքին և տնանկի հեծության համար այժմ ես կելնեմ, ասում է Տերը» (Սաղմ., ԺԱ 6): Ոմանք այս հատվածը համարում են կասկածելի, քանզի Տերը շատ անգամ վեր է կենում թշնամիներից վրեժ լուծելու համար:

Այժմ տես, թե ի՞նչ է ասում 15-րդ սաղմոսում. «Պահպանիր ինձ, Տե՛ր, քանզի Քեզ վրա դրի հույսն իմ» (Սաղմ., ԺԵ 2): Եվ ապա. «Ձեմ մասնակցելու նրանց արյունալի հավաքներին և նրանց անունը չեմ հիշատակի իմ շրթունքներով» (Սաղմ., ԺԵ 4), որովհետև ինձ ուրացան և իրենց թագավոր հայտարարեցին Կեսարին: Ու շարունակում է. «Գիշերն անգամ իմ երիկամներս ինձ խրատում էին» (Սաղմ. ԺԵ 7): Եվ շարունակում է. «Տիրոջը մշտապես տեսնում էի իմ առջև: Նա իրոք իմ աջ կողմում էր, որպեսզի չսասանվեմ» (Սաղմ. ԺԵ 8): Այնուհետև հստակ ասում է. «Դժոխքում չես թողնի դու ինձ և քո սրբին ապականություն տեսնել չես տա» (Սաղմ., ԺԵ 10): Նա չի ասում՝ քո սրբին մահ տեսնել չես տա, այլ ապականություն չես տա: Ինչ վերաբերում է մահվան, դրանում երկար չի մնալու. «Ինձ ցույց տվեցիր կյանքի քո ճանապարհները»: Ահա հատուկ հռչակվում է կյանքը մահից հետո:

Դիմենք նաև 29-րդ սաղմոսին. «Կբարձրացնեմ քեզ, Տեր, քանզի ընդունեցիր ինձ և չթողիր, որ թշնամիներս չարախնդան ինձ վրա» (Սաղմ., ԻԹ 2): Ի՞նչ է պատահել: Դու փրկվեցիր թշնամիներից, թե՛ ձերբազատվեցիր վերահաս պատիժներից: Նա հստակ ասում է. «Տեր, հոգիս դժոխքից հանեցիր» (Սաղմ. ԻԹ 4): Նախապես մարգարեանալով ասել է՝ Ձես թողնի իմ հոգին դժոխքում. իսկ այս-

տեղ ասում է այնպես, որ կարծես այդ եղել է. «Տեր, հանեցիր իմ հոգին դժոխքից և փոսն իջնողների միջից փրկեցիր»: Ե՞րբ է կատարվելու այդ. «Երեկոյան լացը կղաղարի, իսկ առավոտյան ուրախություն կլինի» (Սաղմ., ԻԹ 6): Հիրավի, աշակերտները երեկոյան սգում էին, իսկ առավոտյան վրա հասան հարուժյան ուրախությունը և ցնծությունը:

5. Ուզում ես իմանալ նաև վա՞յրը: Երգ Երգոցում դարձյալ ասված է. «Ես ընկուզենիների պարտեզն իջա» (Երգ Երգոց, Զ 11): Պարտեզ էր այն վայրը, ուր Նա խաչվեց: Թագավորական հատկացումներով այդ վայրը այժմ բարեկարգված է, բայց այն նախկինում պարտեզ էր: Այժմ ևս դրա հետքերը մնացել են:

«Փակված պարտեզ և կնքված աղբյուր» (Երգ Երգոց, Դ 12) հրեաների կողմից, որոնք ասում էին. «Հիշեցինք, որ այդ մոլորյալը դեռևս իր կենդանություն օրոք ասաց, թե երեք օր հետո պիտի հարուժյուն առնեմ: Ուրեմն, հրամայիր, որ ապահովեն գերեզմանը» (Մատթ., ԻԷ 63-64) և այլն: «Եվ նրանք զնացին գերեզմանի ապահովությունը հոգ տանելու և վեմը կնքեցին՝ զինվորներ նշանակելով» (Մատթ., ԻԷ 66): Իսկ ո՞րն է այժմ կնքված աղբյուրը, կամ ո՞վ է կենդանի ջրի աղբյուրը: Նա Փրկիչն է, որի մասին գրված է. «Բեզնից է կյանքի աղբյուրը» (Սաղմ., ԼԵ, 10):

6. Ի՞նչ է ասում Սոփոնիան, կարծես, Քրիստոսի անունից խոսելով աշակերտներին. «Պատրաստվիր, ուրեմն. առավոտյան վաղ արթնացիր: Ապականվեցին նրանց վերջին արդյունքները» (Սոփ., Գ 7): Պարզ է, որ նա նկատի ունի հրեաներին. ցուցադրելու ոչ մի արդյունք չունեն, որը վկայեր, թե ցանկանում են իրենց փրկությունը: Նրանք չեն կարող ցուցադրել անգամ ամենաչնչին բողբոջը, որը կարող է համարվել այգու բերքահավաքի մնացորդը. քանզի

իրենց ամբողջ այգին – ցեղը – վերջնականապես արմատախիլ է արվում և դուրս է գալիս փրկութեան վայրից:

Մարգարեն, շարունակելով, ասում է. «Իրա համար սպասիր ինձ, ասում է Տերը, այն օրը, երբ հարություն առնեմ՝ վկայելու» (Սոփ., Գ 8): Տեսնո՞ւմ ես, որ մարգարեն նախագիտակ էր, թե հարության վայրը պիտի կոչվի վկայութեան վայր, վկայարան: Ուրեմն, ինչո՞ւ, մյուս եկեղեցիների համաձայն, Գողգոթայի և Հարության այս վայրը չկոչվի «եկեղեցի», այլ վկայարան: Գուցե այն պատճառով, որ մարգարեն ասում է՝ «Երբ հարություն առնեմ՝ վկայելու»:

7. Եվ ո՞վ է այս հարություն առնողը և ի՞նչ նշան պետք է ունենա: Այդ մասին մարգարեն շարունակութեան մեջ ասում է. «Այն ժամանակ ժողովուրդներին կվերադարձնեմ իրենց լեզուն՝ ըստ ազգի, հարությունից հետո, Սուրբ Հոգու իջնելով աշակերտներին տրվեց լեզուների շնորհը, որ պեսզի բոլորը ծառայեն Տիրոջը մեկ լծի տակ» (Սոփ., Գ 9): Եվ ուրիշ ի՞նչ նշան կա, ըստ նույն մարգարեի, որ ցույց է տալիս, թե բոլոր ժողովուրդները պիտի ծառայեն Տիրոջը մեկ լծի տակ: «Եթովպացիների գետերից այն կողմ ժողովուրդները գոհ կմատուցեն ինձ» (Սոփ., Գ 10): Ճանաչեցի՞ր այն, ինչ գրված է Առաքյալների գրքում այն առիթով, երբ եթովպացի ներքինին եկել էր Եթովպիայի ամենահեռավոր ծայրերից (Հմմտ. Գործք, Ը 27): Ուրեմն, երբ հարության և՛ ժամը, և՛ վայրը, և՛ նշանները մեզ վկայում են Գրքերը, դու համոզվիր հարության մասին, և ոչինչ քեզ չսասանի վկայելուց, թե Քրիստոս մեռյալ էր և հարություն առավ:

8. Ունես մեկ այլ վկայություն ևս 87-րդ սաղմոսում, որտեղ մարգարեների բերանով Քրիստոս ասում է. «Իմ փրկութեան Տեր Աստված, գիշեր-ցերեկ քեզ կանչեցի» (Սաղմ., 25 2): Եվ ապա «Եղա անօգնական մարդու նման,

լքված մեռյալների մեջ» (Սաղմ., 25 5): Չի ասում՝ անօգնական մարդ, այլ՝ անօգնական մարդու նման: Որովհետև խաչվեց ոչ թե անգորութեան պատճառով, այլ կամովին: Եվ նրա մահը ակամա հիվանդութունից չեղավ: «Ես համարվեցի նրանցից, ովքեր մահվան փոսն են իջնում» (Սաղմ., 25 5): Եվ ո՞րն է դրա նշանը. «Իմ ծանոթներին ինձնից հեռացրի» (Սաղմ., 25 9): Որովհետև չարչարանքի ժամանակ աշակերտները հեռու փախան: «Մի՞թե մեռելների համար պիտի հրաշագործություններ անես» (Սաղմ., 25 11): Եվ քիչ հետո՝ «Ես, Տե՛ր, առ Քեզ աղաղակեցի, առավոտյան իմ աղոթքը Քեզ պիտի հասնի» (Սաղմ., 25 14): Տեսնո՞ւմ ես՝ ինչպես են հայտնում և՛ չարչարանաց, և՛ հարության ժամը:

9. Եվ որտեղի՞ց հարյավ Փրկիչը: Երգ երգոցում ասված է. «Վեր կաց, իմ սիրելի՛, և եկ» (Երգ, Բ 10): Եվ հետո՝ «Վեմի հովանու տակ» (Երգ, Բ 14): «Վեմի հովանի» ասելով նկատի ունի այն ամպհովանու նման այն փոսորակը, որն այդ ժամանակ կար փրկչական գերեզմանի դռան առաջ: Նույն այդ վեմի վրա, ինչպես այստեղի սովորությունն էր, անել գերեզմանների առաջ: Իսկ այժմ այդ չի երևում, քանի որ ամպհովանին հանված է՝ արդի գեղաճաշակութեան պատճառով: Որովհետև նախքան թագավորի բարի կամքը կգեղեցկացներ այս դամբարանը, վեմի առաջ այդ ամպհովանին կար: Բայց որտե՞ղ է ամպհովանիով այդ քարը: Արդյոք քաղաքի՞ մեջ, թե՞ քաղաքի արտաքին պարիսպներում: Երգում ասված է՝ «Վեմի հովանու տակ» (Երգ, Բ 14):

10. Փրկիչն արդյոք ո՞ր ժամանակ հարյավ: Արդյոք ամա՞ռ էր, թե՞ այլ ժամանակ: Նույն երգ երգոցում ասված է. «Ահա ձմեռն անցավ, անձրևներն անցան, գնացին, ծաղիկները երևացին մեր երկրում, էտելու ժամանակը հա-



սավ» (Երգ, Բ 11-12): Ուրեմն, դա ամուսնի ժամանակը չէ, երբ երկիրը պատած է ծաղիկներով. այգիներն էտելու ժամանակն է: Ուրեմն, ձմեռն անցել էր: Հետևաբար, ապրիլ ամիսն էր, և գարուն էր: Հրեաների մոտ երբ տոնվում է Զատիկը, որը Հին Կտակարանի շրջանում խորհրդանշում էր Նոր Կտակարանի Զատիկը, և որը իրական անցումն էր քայքայումից դեպի անմահություն:

Նման մի ժամանակում էլ արարվեց աշխարհը: Այդ ժամանակ էր, որ Աստված ասաց. «Թող երկիրը իր տեսակի ու իր նմանության սերմը պարունակող դալար բույս և իր տեսակի ու իր նմանության սերմը պարունակող իր տեսակի միրգ տվող պտղաբեր ծառ աճեցնի երկրի վրա» (Ծննդ., Ա 11): Եվ այժմ, ինչպես տեսնում ես, ամեն մի բույս կազմում է իր սերմը: Եվ ինչպես այդ ժամանակ Աստված արարեց արևն ու լուսինը և նրանց շարժումն այնպես սահմանեց, որ տարվա որոշակի ժամին լինի գիշերահավասար: Այսպես, մի քանի օր առաջ մեզ մոտ ևս գիշերահավասար էր: Այնժամ Աստված ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով և նմանությանբ» (Ծննդ., Ա 26): «Կերպարանքով» ստացավ, բայց «նմանությանբ» արատավորեց անհնազանդություն: Այն ժամանակ երբ այդ կորցրեց, այդ նույն ժամանակ էլ կատարվեց սրբազրույթը: Այսինքն տարվա այն շրջանում, որ մարդն իր անհնազանդության պատճառով վտարվեց դրախտից, նույն այդ շրջանում նա, ով հավատաց, իր հնազանդությունը մտավ դրախտ: Նույն այդ շրջանում կատարվեց փրկությունը, երբ կատարվել էր մարդու անկումը: Այսինքն, այն ժամանակ երբ ծաղիկեցին ծաղիկները, և հասավ էտելու ժամանակը (հմտ. Երգ, Բ 12):

11. Թաղման վայրը պարտեզ էր, իսկ այնտեղ տնկվածը՝ որթատունկ: Նա ասել է. «Ես եմ որթատունկը» (Հովհ., ԺԵ 1): Տնկվեց հողում, որպեսզի արմատահաս արվի Ադամի պատճառով եղած անեծքը: Երկիրը դատապարտվեց փուչ

ու տատասկի: Բայց հողից ծլեց ճշմարիտ որթատունկը, որպեսզի կատարվի ասվածը. «Ճշմարտությունը երկրից բուսավ, արդարությունը երկնքից երևաց» (Սաղմ., ԶԴ 12): Եվ ի՞նչ կասի Նա, Ով թաղվեց պարտեզում: «Զմուռս քաղցեցի իմ խնկերի հետ» (Երգ, Ե 1): Եվ դարձյալ՝ «Զմուռս և հալվե՛ բոլոր լավագույն խնկերով» (Երգ, Դ 14): Սրանք են թաղման խորհրդանիշները: Ավետարանում ևս ասված է. «Կանայք գերեզման եկան՝ բերելով իրենց պատրաստած խնկերը» (Ղուկ., ԻԴ 1): Եվ Նիկողեմոսը բերեց զմուռս՝ հալվելի հետ խառնած (Հովհ., ԺԹ 39): Շարունակության մեջ ասված է. «Հացս կերա իմ մեղրով» (Երգ, Ե 1): Դառնը կերավ չարչարանքից առաջ, իսկ քաղցրը՝ հարուստունից հետո: Եվ ապա՝ «Հարուստուն առնելուց հետո փակ դռներից ներս մտավ, բայց կասկածում էին Նրա մասին, որ ովհետև կարծում էին, թե ոգի են տեսնում» (Ղուկ., ԻԴ 37): Սակայն Նա ընդառաջ գնաց նրանց. «Շոշափեցեք ինձ և տեսեք» (Ղուկ., ԻԴ 39): «Դրեք ձեր մատները զամերի տեղերի վրա», ինչպես պահանջում էր Թովմասը: Եվ մինչ ցնծություն մեջ դեռ չէին հավատում և զարմացած էին, ասաց նրանց. «Այստեղ ուտելու բան ունե՞ք»: Եվ նրանք տվին Նրան խորոված ձկան մի կտոր և մեղրախորիսխ» (Ղուկ., ԻԴ 41-42): Տեսնո՞ւմ ես, թե ինչպես կատարվեց ասածը, թե՛ «Հացս կերա իմ մեղրի հետ» (Երգ, Ե 1):

12. Բայց նախքան փակ դռներից Նրա ներս մտնելը, այդ գերազանց և արի կանայք փնտրում էին Նրան և իրենց հոգին բուժողին: Այդ երանելի կանայք եկել էին գերեզման և փնտրում էին Հարուցյալին: Նրանց աչքերից արցունքը դեռ հոսում էր. մինչդեռ նրանք պետք է ցնծային և պարբին Հարուցյալի պատճառով: Ըստ Ավետարանի՝ եկել էր Մարիամը, Նրան փնտրում էր ու չէր գտնում (Մատթ., ԻԸ 1): Բայց շարունակության մեջ լսեց հրեշտակներից, որ Նա հարուստուն է առել, և հետո տեսավ Քրիստոսին: Արդյո՞ք

այս էլ որևէ տեղ գրված է: Երգ Երգոցում ասված է. «Գիշերն անկողնու մեջ փնտրեցի իմ հոգու սիրածին» (Երգ, Գ 1): Ո՞ր ժամին: Ասված է, որ Մարիամը եկավ երբ դեռ մուլթ էր (Հովհ., Ի 1): «Գիշերն անկողնու մեջ փնտրեցի, բայց չգտա»: Ավետարանում ևս Մարիամն ասում է. «Իմ Տիրոջը գերեզմանից վերցրել են, և չգիտեմ, Նրան ո՞ւր են դրել» (Հովհ., Ի 13): Բայց այնտեղ ներկա հրեշտակները օգնեցին նրանց՝ չիմացածն իմանալու, և ասացին. «Ինչո՞ւ կենդանիներին փնտրում եք մեռյալների մեջ: Նա ոչ միայն հարյավ, այլև մեռյալներին հարուցեց: Բայց Մարիամը այդ անգիտանում էր, և նրա կողմից հրեշտակն ասում է Երգ Երգոցում գրվածը. «Արդյո՞ք տեսել եք իմ հոգու սիրածին: Բայց քիչ էի հեռացել նրանից, երբ գտա նրան: Բռնեցի ու բաց չթողեցի»: (Երգ, Գ 3-4):

13. Հրեշտակների տեսիլքից հետո հայտնվեց Հիսուսն ինքը: Ավետարանում գրված է. «Եվ ահա Հիսուս նրանց հայտնվեց և ասաց՝ Ողջույն: Եվ կանայք վազեցին դեպի Նա և բռնեցին Նրա ոտքերը» (Մատթ., ԻԸ 5-9): Նրան բռնեցին, որպեսզի կատարվի Երգում ասվածը, թե՛ կբռնեմ նրան ու բաց չեմ թողնի»: Անգոր էր կնոջ մարմինը, բայց առույգ էր նրա մտածողությունը: «Առատ ջրերը չմարեցին սերը, ոչ էլ գետերը կարողացան խեղդել» (Երգ, Ը 7): Մեռյալ էր փնտրողը, բայց չմարեց հարուստյան հույսը: Եվ հրեշտակն ասում է նրանց. «Դուք մի վախեցեք» (Մատթ., ԻԸ 5): Զինվորներին չեմ ասում՝ մի վախեցեք, այլ՝ ձեզ: Նրանք թող վախենան, որպեսզի փորձով համոզվեն և վկայեն ու ասեն. «Արդարև Աստծու Որդի էր սա» (Մատթ., ԻԷ 54): Դուք պետք է, որ վախենաք: «Քանզի կատարյալ սերը հեռու է վանում վախը» (Ա Հովհ., 4, 18): Գնացեք՝ ասացեք աշակերտներին, թե՛ հարուստյուն առավ (Մատթ., ԻԸ 7) և այլն: Եվ կանայք մեկնեցին ահով և մեծ ուրախությամբ (Մատթ. ԻԸ 8): Արդյո՞ք այս ևս գրված է որևէ

տեղ: Քրիստոսի չարչարանքների մասին հաղորդող երկրորդ Սաղմունն ասում է. «Ծառայեցեք Տիրոջը երկյուղով և ցնծացեք Նրա առջև դողալով» (Սաղմ., Բ 11): Այսինքն՝ ձեր հոգին թող ցնծա հարուստյուն առած Տիրոջ համար, բայց եղած երկրաշարժի երկյուղով և կայծակի նման երևացած հրեշտակի պատճառով:

14. Անշուշտ քահանայապետերը և փարիսեցիները Պիղատոսի թուլյալովությամբ կնքեցին գերեզմանը, բայց կանայք տեսան հարուստյուն առած Քրիստոսին: Եսային, իմանալով մի կողմից քահանայապետերի անպտուղ հավատքը և մյուս կողմից՝ կանանց հաստատուն հավատքը, ասում է. «Ո՞վ կանայք, որ ահա գալիս եք հանդեսից: Առաջ եկեք: Դուք այն ժողովուրդը չեք, որ իմաստություն ունի» (Եսայի, ԻԷ 11): Քահանայապետերը խելքի չեն գալիս, իսկ կանայք իրենց աչքերով տեսնում են Տիրոջը: Երբ զինվորները եկան քաղաք և քահանայապետերին հայտնեցին կատարվածը, ասացին նրանց. «Դուք ասացեք, որ Նրա աշակերտները գիշերով եկել ու գողացել են Նրա մարմինը, երբ մենք քնած էինք» (Մատթ., ԻԸ 13): Ուրեմն, Եսային այս ևս մարգարեացել էր և զինվորների բերանն է դնում հետևյալ խոսքերը. «Դուք մի՛ մարգարեացեք և պատմեցեք մեկ այլ մոլորություն մասին» (Եսայի, Լ 10):

Հարուցյալը վեր կացավ, արծաթով կաշառեցին զինվորներին, բայց չեն կարող համոզել այսօրվա թագավորներին: Այդ ժամանակվա զինվորները արծաթով դավաճանեցին ճշմարտությանը: Իսկ այժմյան թագավորները, իրենց բարեպաշտության շնորհիվ, զարգարեցին մեր Փրկչի սուրբ Հարուստյան այն Եկեղեցին, որտեղ մենք գտնվում ենք, և այն պայծառացրին ոսկե, արծաթե և այլ թանկարժեք քարերով:

«Եվ եթե այդ լուրը կուսակալին հասնի, մենք նրան կգոհացնենք և ձեզ հոգսերից կազատենք» (Մատթ., ԻԸ 14): Հնարավոր է, որ նրանց համոզեք, բայց աշխարհին համո-

զել չեք կարող: Ինչո՞ւ, երբ Պետրոսը բանտից դուրս եկավ, բանտապահները դատապարտվեցին, իսկ այնժամ նման հանցանքի համար չդատապարտվեցին Քրիստոսին պահողները: Որովհետև այդ ժամանակ նրանց վրա ընկավ Հերովդեսի դատաստանը, քանի որ, իրենց անգիտություն պատճառով, նրանք արդարանալու միջոց չէին կարողանում գտնել: Իսկ սրանք, թեև գիտեին ճշմարտությունը, որը թաքցրին հանուն արծաթի, փրկվեցին քահանայապետերի միջոցով: Բայց այդ ժամանակ հրեաներից քչերը հավատացին նրանց, իսկ աշխարհը հնազանդվեց: Ծշմարտությունը թաքցնողները կորան, իսկ այն ընդունողները ապրեցին Փրկչի գործությամբ, Ով ոչ միայն Ինքը հարյավ ի մեռելոց, այլև իր հետ հարուցեց ուրիշներին: Սրանց մասին ասել է Օսեե մարգարեն. «Երկու օր հետո Նա կկենդանացնի մեզ, և երրորդ օրը կկանգնենք Նրա առաջ և կապրենք Շնորհի ներկայությամբ» (Օսեե, 2):

15. Քանի որ Սուրբ Գրքերը չեն համոզում անհնազանդ հրեաներին, որոնք, մոռանալով բոլոր գրվածները, հակաճառում են Հիսուսի հարություն հարցում, լավ կլիներ նրանց հակասել այսպես. ի՞նչ պատճառով դուք ընդունում եք, որ Եղիսեն ու Եղիան մեռելներին հարություն տվեցին, իսկ հակաճառում եք մեր Փրկչի հարության հարցում՝ պնդելով, թե այժմ չունենք այդ ամենը հավաստող կենդանի վկաներ: Այդ դեպքում դուք ևս բերեք այդ ժամանակ կատարված դեպքերի վկաներ: Եթե ձեր ասածները գրված են, նաև մեր ասածները նույնպես գրված են: Ուրեմն, ինչո՞ւ այդ մեկն ընդունում եք, այս մեկը՝ մերժում: Այդ ամենը գրել են եբրայեցիները: Բայց առաքյալները ևս՝ բոլորը եբրայեցիներ են: Ինչո՞ւ չեք հավատում հրեաներին: Պողոսը եբրայեցի՝ եբրայեցի ծնողներից (Փիլիպ., Գ 5): Տասներկու առաքյալները նույնպես եբրայեցիներից էին սերել: Եվ ապա, երուսաղեմացի տասնհինգ եպիսկո-

պոսները եբրայեցիներից ժառանգաբար գրավեցին եպիսկոպոսական աթոռը: Ուրեմն, ինչո՞ւ ընդունում եք ձերը, իսկ մերը՝ մերժում, այն դեպքում, երբ սրանք ևս եբրայեցիներից են՝ ձերոնցից:

16. Բայց անկարելի է, որ մեռելները հարություն առնեն, կասի մեկը: Բայց չէ՞ որ Եղիսեն երկու անգամ հարյավ՝ և՛ կենդանություն ժամանակ, և՛ մահացած: Ապա, հավատում ենք, որ երբ Եղիսեն մեռած էր, նրա վրա նետված մեռյալը, նրան դիպչելով, հարյավ, իսկ Քրիստոսը չէ՞ր կարող մեռելներից հարություն առնել: Եղիսեի դեպքում նրան դիպած մեռյալը հարյավ, իսկ հարություն տվողը մնաց մեռած: Իսկ այստեղ և՛ ինքը՝ մեր մեռյալը, և՛ շատ ուրիշներ, որոնք անգամ չդիպան Նրան, հարություն առան: «Եվ գերեզմանները բացվեցին, և ննջեցյալ սրբերի բազում մարմիններ հարություն առան ու Նրա հարությունից հետո, գերեզմաններից ելնելով, մտան սուրբ քաղաքը - անշուշտ այն քաղաքը, որտեղ մենք այժմ գտնվում ենք - և շատերին երևացին» (Մատթ., Ի՛ է 51-52): Եղիսեն հարուցեց մեռյալներին, բայց չդարձավ տիեզերքի տերը: Եղիան հարուցեց մեռյալին, բայց դեռը չեն փախչում նրա անունը լսելիս: Մենք չենք մեղադրում մարգարեներին, այլ առավել փառաբանում ենք նրանց Տիրոջը: Քանզի նրանց անվանարկելով՝ մենք չենք բարձրացնում մերոնց, քանզի նրանք ևս մերոնք են, այլ նրանց վերաբերող փաստերով հաստատում ենք մեր ասածները:

17. Նրանք ասում են նաև, որ այդ ժամանակ ապրած մարգարեի հարուցած մեռյալը նոր էր մահացել: Ուրեմն, ցույց տվեք մեզ, որ հարություն է առել երեք օրվա մեռյալը: Եվ կարո՞ղ է արդյոք հարություն առնել արդեն երեք օր թաղված մեռյալը: Այդ մասին վկայությունը տալիս է Ինքը՝ Տեր Հիսուսը, ավետարաններում՝ ասելով. «Ինչպես

Հովնանը երեք օր ու երեք գիշեր կեսի փորի մեջ էր, նույնպես և մարդու Որդին երկրի ընդերքում՝ երեք օր ու երեք գիշեր» (Մատթ., ԺԲ 40: Հմմտ. Հովնան, Բ 1): Երբ քննում էի Հովնանի մասին պատումը, նկատեցի, որ նրա կյանքում շատ բան կա, որ նման է Հիսուսի կյանքին: Հիսուսն ուղարկվեց ապաշխարություն քարոզելու, իսկ Հովնանը նույնպես գնաց, բայց չիմանալով լինելիքը: Հիսուս կամովին իջավ երկիր, որպեսզի մենք ապաշխարությամբ փրկվենք: Իսկ Հովնանը քնած էր նավի վրա և խռմփացնում էր, մինչդեռ ծովում փոթորիկ էր: Հիսուս ևս աստվածային կարգադրությամբ քնած էր, երբ ծովն ալեկոծվեց, որպեսզի իմացվի քնածի հզորությունը: Հովնանին ասացին. «Ի՞նչ ես խռմփացնում: Վեր կաց, աղաչիր քո Տեր Աստծուն. թերևս նա մեզ փրկի» (Հովնան, Ա 6): Իսկ այստեղ ասում են Տիրոջը. «Տե՛ր, փրկիր մեզ» (Մատթ., Ը 25): Այնտեղ՝ աղաչիր քո Աստծուն: Այստեղ փրկիր: Հովնանը նրանց ասաց. «Ինձ ծովը գցեք, և ծովը կխաղաղվի» (Հովնան, Ա 12): Եվ Հիսուս «սաստեց հողմերին և ծովին, ու մեծ խաղաղություն եղավ» (Մատթ., Ը 26): Հովնանը նետվեց կեսի փորի մեջ, մինչդեռ Փրկիչը կամովին իջավ այնտեղ, ուր մահվան մտովի կեսն է՝ դժոխքը: Եվ իջավ հոժարակամ, որպեսզի, համաձայն գրվածի, մահը իր կուլ տվածներին վերադարձնի կյանք: «Ես դժոխքից կազատեմ նրանց և մահից կփրկեմ նրանց» (Օսեե, ԺԳ 4):

18. Քանի որ խոսքն այստեղ հասավ, տեսնենք, թե ո՞րն է ավելի դժվար. հողում թաղված մարդու հարություն առնելը, թե՞ կեսի փորի մեջ իջնելը և այնտեղ տիրող բարձր ջերմաստիճանի տակ չնեխելը: Ո՞ւմ հայտնի չէ, թե կենդանու փորում այնքան բարձր ջերմություն է, որ կուլ տված ոսկորն անգամ փտում է: Ուրեմն, ինչպե՞ս Հովնանը, երեք օր ու գիշեր մնալով կեսի փորում, չփտեց: Կամ, քանի որ մարդ իր բնությամբ չի կարող ապրել առանց մաքուր օդ

չնչելու, նա երեք օր ապրեց առանց այդպիսի օդ չնչելու: Բայց հրեաները դրան պատասխանում են և ասում. Հովնանին, երբ նա իջնում էր կեսի փորը, ուղեկցեց Աստծու զորությունը: Այսինքն՝ իր սիրելի ծառային ուղարկելով իր զորությունը՝ Տերը նրան հնարավորություն է ստեղծել ապրելու: Իսկ նույն Ինքը՝ Տերը չէ՞ր կարող այդ զորությունը տալ իրեն: Եթե արժանահավատ է այդ մեկը, ապա արժանահավատ է նաև այս մեկը: Եթե [մեկը] անարժանահավատ է, մյուսը ևս անարժանահավատ է: Իմ կարծիքով, այդ երկուսն էլ արժանահավատ են: Քանզի հավատում եմ, որ Հովնանը պահպանվեց, որովհետև Աստված կարող է ամեն ինչ անել: Հավատում եմ նաև, որ Քրիստոս մեռելներից հարյալ: Հարության մասին կան բազմաթիվ վկայություններ Սուրբ Գրքում և Հարություն առածի ամբողջ գործերում: Նրա, Ով միակն է, որ իջավ դժոխք, բայց այնտեղից դուրս եկավ բազմապատիկ, ուրիշ շատերի ուղեկցությամբ: Նա հանդուրժեց մեռնել, որպեսզի հարություն տա շատ սրբերի մեռած մարմիններին (Հմմտ. Մատթ., ԻԷ 52):

19. Սարսափեց մահը, տեսնելով մի մեռյալի, որը նման չէր մյուսներին և իջել էր դժոխք առանց կապանքների: «Դժոխքի դռնապաննե՛ր, ինչո՞ւ նրան տեսնելով՝ վախից կծկվեցիք» (Հմմտ. Հոբ, ԼԸ 17): Այդ ինչ անսովոր վախ է ձեզ համակել: Փախավ մահը և իր փախուստով խայտառակվեց իր վախկոտության համար: Տիրոջ մոտ վազեցին սուրբ մարգարեները և օրենսդիր Մովսեսը, և Աբրահամը, և Իսահակը, և Հակոբը, Դավիթը և Սամուելը, և Եսային, և Հովհաննես Մկրտիչը, որը վկայել էր նրա մասին և ասել. «Դո՞ւ ես, որ գալու էիր, թե՞ ուրիշին սպասենք» (Մատթ., ԺԱ 3): Ազատվում էին բոլոր արդարները, որոնց կուլ էր տվել մահը: Քանզի բարին քարոզածների կողմից թագավոր հռչակվածը պետք է դառնար նրանց ազատարարը: Ապա արդարներից յուրաքանչյուրն ասում էր. «Ո՞ւր է,

մա՛հ, քո հաղթութիւնը. ո՞ւր է, գերեզմա՛ն, քո խայթոցը» (Ա. Կորնթ., ԺԵ 56): Քանզի քեզ հաղթելով՝ նա ազատագրեց մեզ»:

20. Մեր Փրկչի այս կերպարը ներկայացնում էր Հովնան մարգարեն կետի փորում աղոթելիս և ասում. «Իմ նեղութիւնի մեջ ես աղոթեցի իմ Տեր Աստծուն դժոխքի փորից» (Հովնան, Բ 3): Եվ այս ամենն ասում էր կետի փորից: Բայց կետի փորում եղած ժամանակ ինքն ասում էր, թե գտնվում է դժոխքում: Քանզի նա նախատիպն էր Քրիստոսի, որ պետք է իջներ դժոխք: Մի քանի բառ հետո, ներկայացնելով Քրիստոսին, մարգարեանում է և պարզ ասում. «Գլուխս մտավ լեռների փապարների մեջ» (Հովնան, Բ 7), թեև գտնվում էր կետի փորում: Գիտեմ, ասում է, որ այն, ինչ այժմ ապրում եմ, ապրում եմ իբրև նախատիպ Նրա, Ով պիտի թաղվի կոփած քարե դամբարանում: Ինքը թեև ծովում էր, ասում է. «Իջա երկիր» (Հովնան, Բ 7): Քանզի նա իր մեջ կրում էր երկրի սիրտն իջած Քրիստոսի նախատիպը:

Եվ քանի որ նախատեսավ հրեաների վերաբերմունքը, որոնք փորձեցին տարհամոզել զինվորներին՝ ստելու և ասելու, թե իբր գողացան Նրան, ասում է. «Նրանք, որ ունայն աստվածներ էին պաշտում, թողեցին իրենց երկյուղածութիւնը» (Հովնան, Բ 9): Քանզի եկավ Նա, Ով ողորմում էր նրանց և խաչվեց և հարյավ՝ իր թանկագին արյունը տալով հրեաների և հեթանոսների համար, իսկ նրանք ասացին. «Կասեք, թե Նրա մարմինը գողացան»: Դրանով նրանք ցույց տվեցին, որ պաշտում են սուտը և անպատվութիւնը: Նրա Հարութիան մասին Եսային ևս ասել է. «Նա, ով երկրից դուրս բերեց հոտերի մեծ Հովվին» (Եսայի, ԿԳ 11: Եբբ. ԺԳ 20): Ավելացրել է «մեծ», որպեսզի նախորդած հովիվներին հավասարաթեք չհամարվի:

21. Այժմ մենք, ունենալով մեզ հետ այս մարգարեութիւնները, ամրանանք մեր հավատի մեջ: Անհավատութիւն պատճառով ընկնողները թող ընկնեն, քանի որ այդպես են կամենում: Իսկ դու հարութիւն հարցում հենվել ես վեմին: Զգուշացիր, որ որևէ հերետիկոս չհամոզի քեզ՝ վատաբանելու Հարութիւնը: Քանզի ցայսօր ևս մանիքեականները ասում են, թե Փրկչի Հարութիւնը երևակայական է և սուտ, և չեն անսում Պողոսին, որ գրում է. «Նա, ով մարմնով սերում էր Դավթի սերնդից» (Հռոմ., Ա 3), Աստու Որդի էր սահմանված, ըստ Սուրբ Հոգու՝ մեռելներից իր հարութիւնը, մեր Տեր Հիսուս Քրիստոսը: Մեկ ուրիշ անգամ դարձյալ դիմում է նրանց և ասում. «Քո սրտում մի՛ ասա՝ ով է ելնելու երկինք» (Հռոմ., Ժ 6), կամ «ո՞վ է իջնելու անդունդ, այսինքն՝ Քրիստոսին վեր հանելու համար մեռելներից» (Հռոմ., Ժ 7):

Բայց մեզ ապահովելու համար նա դարձյալ գրել է. «Հիշիր մեռելներից հարութիւնն առած Քրիստոսին» (Բ Տիմոթ., Բ 8): Եվ դարձյալ՝ «Եվ եթե Քրիստոս հարութիւնն չի առել, իզուր է մեր քարոզութիւնը. իզուր է և ձեր հավատը: Եվ Աստու սուտ վկաները եղած կլինենք, քանի որ Աստու մասին վկայեցինք, թե հարութիւն տվեց Քրիստոսին» (Ա. Կորնթ., ԺԵ 14-15): Եվ հետո ասում է. «Բայց արդ, մեռելներից հարութիւնն է առել Քրիստոս՝ ննջեցյալների առաջին պտուղը» (Ա. Կորնթ., ԺԵ 20): Ու երևաց Կեփասին և ապա՝ տասներկու աշակերտներին: Եթե դու չես հավատում մեկ վկային, ունես տասներկու վկա: Բայց մեկ ուրիշ անգամ «երևաց միանգամից ավելի քան հինգ հարյուր եղբայրների» (Ա. Կորնթ., ԺԵ 6): Եթե տասներկուսին չեն հավատում, թող ընդունեն հինգ հարյուրին, «Հետո երևաց Հակոբոսին» (Ա. Կորնթ., ԺԵ 7)՝ իր եղբորը, ով այստեղի առաջին եպիսկոպոսն էր: Այսպիսի եպիսկոպոսին, ով անձամբ տեսել է հարութիւնն առած Քրիստոսին, դու՝ նրա աշակերտը, մի կասկածիր: Բայց գուցե կասես, թե Հակոբոս

եղբայրը Քրիստոսի Հարուժյան օգտին տվել է անհիմն վկայութիւն: Լսիր, ուրեմն. «Ամենից հետո երևաց և ինձ» (Ա Կորնթ., ԺԵ 9)՝ Պողոսին, իր թշնամուն: Արդ, թշնամու տված վկայութիւնը կարո՞ղ է կասկածելի համարվել: «Ես, որ Նրա հալածողն էի, այժմ ձեզ բերում եմ հարուժյան ավետիսը»:

22. Փրկչի հարուժյան վկաները շատ են: Գիշերը և լիալուսնի լույսը. քանզի այդ տասնվեցերորդ գիշերն էր: Գերեզմանափորը, որն իր հովանու տակ ընդունեց նրան. կոփված ժայռը, որը կհերքի հրեաներին, քանի որ այն տեսել է Տիրոջը: Այն քարը, որ այդ ժամանակ գլորել են գերեզմանի առաջ, որը և մնում է մինչև օրս և վկայում է հարուժյան մասին: Աստուծո հրեշտակները, որոնք ներկա էին, վկայեցին Միածնի հարուժյունը: Պետրոսը, Հովհաննեսը, Թովմասը և բոլոր մյուս առաքյալները, որոնցից ոմանք շտապեցին գերեզման ու տեսան թաղման պատանքը, որով նախապես փաթաթել էին մարմինը: Ուրիշներ շոշափեցին ձեռքերն ու ոտքերը և տեսան գամերի նշանները: Բայց բոլորը վայելեցին փրկարար ներշնչումը և արժանացան Սուրբ Հոգու գորուժյամբ մեղքերի թողութիւն տալու: Կանայք, որոնք գրկեցին նրա ոտքերը և որոնք ապրեցին երկրաշարժի ուժգնութիւնը և որոնք տեսան հրեշտակի պայծառափայլութիւնը: Նրան փաթաթված սավանը, որը հարուժյուն առնելուց հետո նետեց իր վրայից: Զինվորները և նրանց տրված արծաթը: Դեռևս երևացող այս վայրը և այս սուրբ տաճարը, որը կառուցեց երանելի թագավոր Քրիստոսասեր Կոստանտինոսը այնպես գեղեցիկ, ինչպես տեսնում ես:

23. Հիսուսի հարուժյունը վկայում է նաև Նրա անունով մեռելներից հարուժյուն առած Տաբիթան (Գործք, Թ՝ 40): Ինչպե՞ս չհավատալ Քրիստոսի հարուժյանը, եթե անգամ

նրա անունը մեռելներին հարուժյուն է տվել: Հիսուսի հարուժյունը վկայում է նաև ծովը, ինչի մասին արդեն լսել ես: Վկայում են ձկան որսը և կրակը, որի վրա եփեցին ձուկը: Վկայում է և Պետրոսը, որը նախ ուրացավ, բայց հետո երրորդ անգամ վկայեց և հրաման ստացավ արածել մտովի ենթադրվող ոչխարները (Հովհ., ԻԱ 16): Ցայսօր կա Զիթենյաց անտառը, որը մինչև հիմա հավատացյալներին ցույց է տալիս ոչ միայն Նրան, Ով ամպերի վրա բարձրացավ, այլև վերելքի երկնային դուռը: Հայտնի է, որ երկնքից իջավ Բեթղեհեմ և երկինք բարձրացավ Զիթենյաց լեռից: Բեթղեհեմից սկսեց պայքարը հանուն մարդկանց և այստեղ պսակվեց այդ պայքարի համար: Դու շատ վկաներ ունես: Դու ունես հարուժյան այս վայրը, ունես նաև մեզնից արևելք գտնվող համբարձման վայրը: Վկաներ ունես հրեշտակներին, որոնք այնտեղ վկայեցին և ամպը, որի վրա համբարձավ: Ունես նաև աշակերտներին, որոնք համբարձումից հետո վերադարձան այնտեղից:

24. Մեր հավատքի ուսուցման շարունակութիւնը ինձ թելադրում է՝ խոսելու նաև համբարձման հարցերի մասին: Աստուծո Շնորհը կարգավորեց այնպես, որ դու լիովին լսես երեկվա մեր կիրակնօրյա հավաքի ընթացքում կատարված ընթերցման ժամանակ մեր Տիրոջ համբարձմանը վերաբերող մեր ուսմունքը, ինչքան որ մեր տկար ուժերը մեզ ներեցին: Ասվածները բոլորի համար էին, հավատացյալների ամբողջութիւնի համար, բայց հատկապես ձեզ համար: Կարևորն այն է, թե դու ինչքա՞ն ուշադիր եղար ասվածների նկատմամբ: Դու, անշուշտ, գիտես, որ Հանգանակի շարունակութիւնը քեզ սովորեցնում է հավատալ Տիրոջը, որը երրորդ օրը հարուժյուն առավ մեռելներից և բարձրացավ երկինք և նստեց Հոր աջ կողմում: Կարծում եմ, որ շատ լավ կհիշես այս ասվածը: Այսուհանդերձ, համառոտ կհիշեցնեմ մեր ասածները: Հիշիր սաղմոսը, որտեղ պարզ աս-



ված է. «Աստված բարձրացավ օրհներգությամբ» (Սաղմ., ԽԶ 6): Հիշիր, որ հրեշտակների աստվածային զորքերը ևս իրար ասում էին. «Բացե՛ք դռները, իշխաննե՛ր» (Սաղմ., ԽԶ 7): Հիշիր նաև սաղմոսը, որտեղ ասված է. «Նա ելավ բարձունքներն ու գերեվարեց գերիներին» (Սաղմ., ԿԷ 19): Հիշիր նաև մարգարեին, որ ասել է. «Նա, Ով պատրաստում է իր համբառնալը երկինք» (Սաղմ., Թ 6), և այն ամենը, ինչ երեկ ասացինք հրեաների հակաճառության մասին:

25. Քանզի երբ նրանք Փրկչի երկինք համբառնալը ներկայացնում են որպես անկարելի, դու Հիշիր այն ամենը, որ ասվել է Ամբակումի փոխադրման համար: Եթե Ամբակումը փոխադրվեց հրեշտակի ձեռքով, բռնված իր գլխի մագերից, առավել ևս մարգարեների և հրեշտակների Տերը, ամպերի վրա նստած, Ձիթենյաց լեռից իր հզորությամբ երկինք բարձրանալիս առավել հզոր էր: Այս համեմատությունները կատարելիս հիշատակիր այդ հրաշքների նմանությունները, բայց մանավանդ շեշտիր այն տարրերը, որոնք ցույց են տալիս հրաշագործ Տիրոջ գերազանցությունը: Քանզի նրանց մեկ ուրիշն էր կանգուն պահում, մինչդեռ Տերը ինքն է ամեն ինչ կանգուն պահում: Հիշիր, որ Ենովքին փոխադրեց Աստված, մինչդեռ Հիսուս ինքն իր զորությամբ համբարձավ: Հիշիր այն ամենը, ինչ երեկ ասել ենք Եղիայի մասին, թե նա համբարձավ հրե կառքի վրա, մինչդեռ այն կառքը, որով համբարձավ Քրիստոս, կազմում էին երկնային զորությունների անհամար զնգերը, որոնք օրհներգում էին Նրան: Նկատիր նաև, որ Եղիան համբարձավ Հորդանանից դեպի արևելք, իսկ Քրիստոս համբարձավ Մայրիների ջրվեժից դեպի արևելք: Եղիան բարձրացավ դեպի երկինք (Դ Թագ., Բ, 11), մինչդեռ Հիսուս բարձրացավ երկինք: Եղիան ասաց, թե Սուրբ Հոգուց իր աշակերտին կտրվի իրեն տրվածի կրկնակին, մինչդեռ Քրիստոսն իր աշակերտներին տվեց Սուրբ Հոգին լիառատ

ընդունելու այնպիսի հնարավորություն, որ ոչ միայն իրենք լինեն Սուրբ Հոգով լցված, այլև իրենց ձեռքը դնելով ուրիշի վրա՝ Սուրբ Հոգին փոխանցեն բոլոր հավատացողներին:

26. Եվ երբ հուղայականների հետ վիճես և նրանց փաստարկներին հավասար փաստարկներով հաղթես, այնժամ անցիր այն վկայություններին, որոնք ցույց են տալիս Փրկչի փառքի գերազանցությունը. այսինքն, թե իրենք ծառաներ են, իսկ Նա Աստվածորդի է: Այս գերազանցությունը ներկայացնելու մի միջոցն էլ այն է, որ հիշեցնես, թե Քրիստոսի ծառան տարվեց մինչև երրորդ երկինք (Բ Կորնթ., ԺԲ 2): Եթե Եղիան հասավ մինչև առաջին երկինք, և Պողոսը՝ մինչև երրորդ, ապա Քրիստոս առավել մեծ պատվի պիտի արժանանար, քան նրանք: Մի՛ ամաչիր առաքյալների համար: Նրանք Մովսեսից ցածր չեն, ոչ էլ մարգարեներից հետո՝ երկրորդական: Այլ նրանք բարձր են բարձրերի մեջ և լավերից լավագույնները: Քանզի Եղիան համբարձավ երկինք, բայց Պետրոսի ձեռքին են երկնքի թագավորության բանալիները, քանի որ Տերը նրան ասաց. «Ինչ որ մի անգամ կապես երկրի վրա, կապված պիտի մնա երկնքում» (Մատթ., ԺԶ 19): Եղիան հասավ միայն մինչև երկինք, իսկ Պետրոսը հասավ երկինք ու դրախտ - քանզի Հիսուսի աշակերտները պիտի բազմապատիկ շնորհք ստանային - «և լսեց անպատում խոսքեր, որ մարդուս արտոնված չէ լսել» (Բ Կորնթ., ԺԲ 4): Բայց Պետրոսը դարձյալ իջավ այնտեղից ոչ այն պատճառով, որ արժանի չէր մնալու երրորդ երկնքում, այլ այնտեղ ապրած լինելով գերմարդկային կյանք՝ ցած իջավ բեռնավորված այնպիսի պատվով, որ քարոզի Քրիստոսին և նրա անվամբ մեռնի՝ արժանանալով վկայի պսակին: Մնացածը, որ գլխավորապես կազմել է երեկվա կիրակնօրյա մեր հավաքում ասվածների բովանդակությունը, ես բաց թողեցի: Քանզի խելամիտ

ունկնդիրների ուսման համար բավական է այդ ամենը հիշեցնելը:

27. Հիշիր նաև այն ամենը, ինչ հաճախ ասել եմ քեզ այն մասին, թե «Որդին նստեց Հոր աջ կողմում» (Մաղմ., ձԹ 1, Մատթ., ԻԲ 44)՝ շարունակելու համար «Հավատամքի» վերլուծությունը, որտեղ ասված է. «Որ բարձրացավ երկինք և նստեց Հոր աջ կողմում»: Կարիք չկա մանրամասն քննարկել, թե ինչպիսին է գահը, որտեղ Որդին նստած է Հոր աջ կողմում: Քանզի այդ անհասկանալի է: Այդ գահը չի ստացել՝ ըստ առաջադիմության, այլ այդ գահն ունեւր և ունի հավիտենապես: Այդ գահը, նախքան Փրկչի մարդեղությունը, տեսել էր Եսայի մարգարեն, որն ասել է. «Տեսա Տիրոջը, որ նստել էր բարձր ու վերացած աթոռին» (Եսայի, 2 1) և այլն: Հայր Աստծուն, ինչպես գիտենք, «երբեք ոչ ոք չի տեսել» (Հովհ. Ա 18): Ուրեմն, Նա, Ով երևացել է մարգարեին, եղել էր Որդին: Սաղմոսերգուն ևս ասում է. «Սկզբից է պատրաստված գահը Քո, և հավերժ ես Դու» (Մաղմ., ձԹ 2): Բայց թեև այդ նյութի շուրջ կան շատ վկայություններ, ժամի առաջացած լինելու պատճառով մենք բավարարվում ենք այսքանով:

28. Այն, ինչ կասեմ հիմա, վերաբերվում է այն հարցին, թե Որդին նստում է Հոր աջ կողմում: 109-րդ սաղմոսը պարզ ասում է. «Տերն իմ Տիրոջն ասաց. նստիր իմ աջ կողմում, մինչև որ քո թշնամիներին ոտքերիդ պատվանդան դարձնեմ» (Մաղմ., ձԹ 1): Փրկիչը, ավետարաններում հաստատելով այս խոսքերը, ասում էր, թե Դավիթն այս խոսքերը չի ասել ինքնաբերաբար, այլ՝ Սուրբ Հոգու ներշնչմամբ: Նա ասում է. «Իսկ Դավիթն ինչպե՞ս Նրան Սուրբ Հոգով կոչում է Տեր և ասում է. «Տերն իմ Տիրոջն ասաց՝ նստիր իմ աջ կողմում, մինչև որ քո թշնամիներին դնեմ քո ոտքերի տակ իբրև պատվանդան» և այլն (Մատթ.,

ԻԲ 43-44): Եվ դարձյալ, Գործք առաքելոցի մեջ Պենտեկոստեի օրը, երբ Պետրոսը, վեր կենալով Տասնմեկի հետ, գրուցում էր իսրայելացիների հետ, բառացի կրկնեց այս վկայությունը, որ կա 109-րդ սաղմոսի մեջ:

29. Նշենք մի քանի վկայություն ևս նույն այս հարցի շուրջ, թե՛ Որդին նստում է Հոր աջ կողմում: Քանզի Մատթոսի ավետարանում գրված է. «Բայց ասում եմ ձեզ, այսուհետև մարդու Որդուն կտեսնեք նստած ամենազոր Աստծու աջ կողմում» (Մատթ., ԻԶ 64): Նույնպիսի բան ասում է նաև Պետրոս առաքյալը՝ գրելով. «Գնացած լինելով երկինք՝ Նա Աստծու աջ կողմում է» (Ա Պետր., Գ 21): Պողոս առաքյալը ևս Հռոմեացիներին ուղղված իր նամակում գրում է. «Քրիստոս Հիսուս է, որ մեռավ, մանավանդ որ հարություն էլ առավ և Աստծու աջում է» (Հռոմ. , Ը 34): Եփեսացիներին ուղղված իր նամակում նա դարձյալ գրում է. «Նա իր ամենակարող գորությունը ցույց տվեց Քրիստոսով, երբ Նրան հարություն տվեց մեռելներից և նստեցրեց իր աջ կողմում» (Եփես., Ա 19-20): Կողոսացիներին ևս այսպես սովորեցրեց. «Եթե հարություն առաք Քրիստոսի հետ, ապա փնտրեցեք վերին բաները, այնտեղ, ուր Քրիստոս նստած է Աստծու աջ կողմը» (Կողոս., Գ 1): Իսկ եբրայեցիներին ուղղված թղթում ասված է. «Նա, մեր մեղքերի մաքրումը կատարելուց հետո, նստեց Աստծու մեծարության աջ կողմում՝ բարձունքներում» (Եբր., Ա 3): Եվ դարձյալ. «Հրեշտակներից որի՞ն երբեք ասաց՝ նստիր իմ աջ կողմում, մինչև քո թշնամիներին քո ոտքերին պատվանդան դարձնեմ» (Եբր., Ա 3): Եվ դարձյալ. «Իսկ Հիսուս միայն մեկ պատարագ մատուցեց մեր մեղքերի համար և մշտնջենապես նստեց Աստծու աջ կողմում, և այնուհետև սպասում է, մինչև իր թշնամիները դրվեն իր ոտքերի ներքո որպես պատվանդան» (Եբր., Ժ 12-13): Եվ դարձյալ. «Նայենք Հիսուսին՝ հավատի գորագլխին, այն կատարելա-

գործողին, որն իր առաջ ղրված ուրախության համար հանձն առավ խաչը, արհամարհեց ամոթը և նստեց Աստծու աթոռի աջ կողմում» (Եբր., ԺԲ 2):

30. Կան նաև այլ վկայություններ այն մասին, որ Միածինը բազմել է Աստծու գահի աջ կողմում: Բայց առայժմ այսքանը բավական է: Դարձյալ հիշեցնում եմ ձեզ այն, ինչ նախապես էլ ասել եմ. այն, որ Նա այդ գահին արժանացավ ոչ թե մարդեղությունից հետո: Աստծու Միածին Որդին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսն, այն ուներ միշտ, բոլոր ժամանակներից առաջ, և նստել էր Աստծու գահի աջ կողմում:

Թող բոլորի Աստվածը՝ Քրիստոսի Հայրը, և մեր Տեր Հիսուս Քրիստոսը, որ իջավ երկիր և դարձյալ բարձրացավ և Հոր հետ նստում է գահին, պահպանի ձեր հոգիները, որպեսզի անսասան և անաղարտ պահեք ձեր հույսը Հարյալին: Թող Նա ձեզ ևս հարություն տա մեղքերի մահացությունից: Թող ձեզ շնորհի երկնքի թագավորությունը, ձեզ արժանի դարձնի հափշտակվելու ամպերի մեջ, Տիրոջը դիմավորելու օդում, պատշաճ ժամանակին: Եվ մինչև կգա Նրա փառահեղ երկրորդ հայտնության ժամանակը, թող ձեր բոլորի անունները գրի ապրողների գրքում և գրելուց հետո այլևս չջնջի: Քանզի շատերի անունները ջնջվում են, երբ նրանք թողնում են ճշմարիտ հավատքը: Թող բոլորիդ լուսավորի հավատալու Նրան, Ով հարյավ, և սպասեք, թե Նա, Ով բարձրացավ, դարձյալ վերադառնա: Բայց կգա ոչ թե երկրից: Ջգուշացիր մոլորեցնողներից, որոնք կհայտնվեն ապագայում: Սպասեք Նրան, Ով նստած է վերևում և միաժամանակ ներկա է այստեղ, մեզ հետ: Նա, Ով տեսնում է յուրաքանչյուրի կարգը և հավատի կայունությունը: Չկարծես, որ եթե այժմ մարմնապես ներկա չէ, բացակայում է նաև հոգով: Նա մեր մեջ ներկա է և լսում է իր մասին մեր ասածները, կարդում մեր բոլոր մտքերը և ծանոթ է անգամ մեր բոլոր ծածուկ ցանկություններին. Նա

քննում է քո սրտի խորքերը: Նա այժմ էլ պատրաստ է մկրտության համար բոլոր եկողներիդ առաջնորդելու Հոր մոտ իր Սուրբ Հոգով և ասելու. «Ահավասիկ ես և իմ գավակները, որ Աստված ինձ պարգևեց» (Եսայի, Ը 18): Նրան է փառքը հավիտյան: Ամեն:



## ՈՒՍՈՒՑՈՒՄ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

### Արված Երուսաղեմում՝ Հավատի Հանգանակի՝ «Եվ գալու է փառքով՝ դատելու կենդանիներին և մեռյալներին, որի թագավորությանը չկա վախճան» հոդվածի մասին: Անդրադարձ հակաքրիստոսին

Ընթերցում Դանիելից. «Նայում էի, մինչև որ աթոռներ դրվեցին, և մի ծերունի նստում էր այնտեղ» (Դան., Է՝ 9): Եվ ասպա. «Գիշերային տեսիլքում տեսնում էի, որ ահա երկնքի ամպերի միջից գալիս էր Մեկը մարդու Որդու նման» (Դան., Է՝ 13):

1. Մենք ձեզ ուսուցանում և հայտարարում ենք Քրիստոսի ոչ թե մեկ, այլ նաև երկրորդ գալուստի մասին, որը կլինի շատ ավելի պայծառ և փառահեղ, քան առաջինը: Քանզի առաջին գալուստի ժամանակ Նա կհայտնվի իր թագավորության ամբողջ գործընթացում ու փառքով: Քանզի մեր Տեր Հիսուս Քրիստոսի էության հատկանիշները մեծ մասամբ կրկնակ են: Կրկնակ՝ ծնունդը. մեկը՝ Աստծուց՝ դարերից էլ առաջ, մյուսը՝ կույսից, որն իրականացավ ժամանակի մեջ: Երկու՝ երկիր իջնելը. մեկը՝ ծածկված, առավուտվա ցողի նման անաղմուկ, իսկ երկրորդը՝ փառավոր: Առաջին հայտնությունը գեպքում խանձարուրվեց մսուրում, իսկ երկրորդի ժամանակ զգեստավորված կլինի շրջուցիչ լույսով: Առաջինի ժամանակ Նա, արհամարհելով ամոթը, խաչը հանձն առավ, երկրորդի ժամանակ կգա փառաբանված, հրեշտակների գործընթացում շրջապատված: Ուրեմն, չմնանք միայն առաջին հայտնությունը, այլ սպա-

սենք նաև երկրորդին: Եթե առաջին հայտնություն ժամանակ ասացինք՝ «Օրհնյալ է Նա, Ով գալիս է Տիրոջ անունով» (Մատթ., ԻԱ՝ 9), երկրորդի ժամանակ էլ պետք է նույնն ասենք, որպեսզի Տիրոջը հրեշտակների հետ դիմավորելիս Նրան երկրպագենք և ասենք՝ «Օրհնյալ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով»: Գալիս է Փրկիչը՝ ոչ թե նորից դատվելու, այլ դատելու դատողներին: Նա, Ով իր առաջին հայտնություն ժամանակ դատվելիս լռեց, անօրեններին, որոնք խաչելու ժամանակ այդ համարձակ արարքները կատարեցին, մարգարեաբար մերկացնելով, ասաց. «Այս բոլորն արեցիր, ու ես լուռ մնացի» (Մաղմ., ԽԹ՝ 21): Առաջին հայտնությունը Նա եկավ՝ կարգավորելու մարդու փրկությունը և ուսուցանում էր համոզիչ խոսքերով: Իսկ երկրորդ հայտնություն ժամանակ մարդիկ, եթե անգամ չկամենան, պիտի ստիպված լինեն ընդունել Նրա թագավորությունը:

2. Այս հայտնությունների մասին Մաղաքիա մարգարեն ասում է. «Հանկարծակի իր տաճարը կգա Տերը, որին դուք փնտրում եք» (Մաղաք., Գ՝ 1): Ահա առաջին հայտնությունը: Եվ դարձյալ երկրորդ գալուստի մասին ասում է. «Ահա գալիս է ուխտի պատգամաբերը, որին դուք սպասում եք: Ո՞վ կդիմանա Նրա մուտքի օրվան, և կամ ո՞վ հանգիստ կմնա Նրա հայտնության ժամանակ, քանի որ Նա պիտի մտնի որպես հալոցի բոց և որպես լվացարարների օճառ: Նա կնստի՝ ձուլվելու և մաքրելու բոլորին» (Մաղաք., Գ՝ 1-3): Շարունակություն մեջ ինքը՝ Փրկիչն ուղիղ ասում է. «Ես ձեզ վրա պիտի գամ դատաստանով ու անմիջական վկա պիտի լինեմ կախարհների և շնացող կանանց դեմ: Նաև նրանց դեմ, ովքեր սուտ երգում են անում իմ անվամբ» (Մաղաք., Գ՝ 5) և այլն: Այդ պատճառով էլ Պողոսը, կամենալով վաղօրոք մեզ ապահովել, ասում է. «Եթե մեկը այս հիմքի վրա կառուցի ոսկով, արծաթով, թանկարժեք

քարերով, փայտով, խոտով, եղեգով, յուրաքանչյուրի գործը հայտնի կլինի, որովհետև դատաստանի օրը այդ պիտի երևա, քանի որ կրակով հայտնի պիտի լինի: Եվ յուրաքանչյուրի գործը, ինչպես որ է, կրակը պիտի փորձի» (Ա. Կորնթ., Գ 12-13):

Պողոսը Տիտոսին ուղղված թղթում այս երկու հայտնությունները նկատի ունի՝ գրելով. «Աստուծո Շնորհը հայտնվեց որպես փրկության միջոց բոլոր մարդկանց. Շնորհ, որը խրատում է մեզ, որ մերժենք ամբարշտությունը և աշխարհիկ ցանկությունները, այս աշխարհում ապրենք զգաստությունք, աստվածապաշտությունք: Եվ ակնդետ սպասենք երանելի լույսին և փառքի հայտնությունը մեծն Աստուծու և մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի» (Տիտ., Բ 11-13): Տեսնո՞ւմ ես: Նա մեզ խոսել է առաջին հայտնությունյան մասին, որի համար շնորհակալ է, և երկրորդի մասին, որին սպասում ենք: Այդ պատճառով էլ այն հավատը, որին մենք ձեզ ծանոթացնում ենք, այսպիսի ավանդույթ ունի: Հավատանք Նրան, Ով բարձրացավ երկինք ու նստեց Հոր աջ կողմում և գալու է փառքով՝ դատելու կենդանիներին և մեռյալներին, Ում թագավորությունը չկա վախճան:

3. Մեր Տեր Հիսուս Քրիստոսը կգա երկնքից: Կգա փառքով այս աշխարհի վերջին օրերին: Քանզի այս աշխարհի վերջը գալու է, և արարված այս աշխարհը պիտի վերանորոգվի: Երկրի վրա տարածվեց քայքայումը, գողությունը, շնանալը և ամեն տեսակ մեղքեր թափվեցին ամբողջ տիեզերքի վրա, և աշխարհը խեղդվեց արյունահեղությունների և արյունապղծությունների մեջ (հմմտ. Օսեե, Դ 2): Եվ որպեսզի այս բնակարանը չմնա անօրենությունք լցված, այս աշխարհը պետք է անցնի, որպեսզի հայտնվի առավել կատարյալը: Եվ ուզո՞ւմ ես դրա ապացույցը ստանալ Գրքից: Լսիր Նսայու խոսքը. «Երկինքը մագաղաթի պես պիտի գալարվի, բոլոր աստղերը ցած պիտի թափվեն ինչ-

պես որթատունկի տերև, կամ ինչպես թզենուց վայր ընկնող տերև» (Նսայի, ԼԴ 4): Ավետարանը ևս ասում է. «Արեգակը պիտի խավարի, և լուսինը իր լույսը չպիտի տա, և աստղերը երկնքից պիտի ընկնեն» (Մատթ., ԻԴ 29): Ուրեմն, չտխրենք՝ կարծելով, որ միայն մեր վերջն է գալու: Աստղերի համար ևս այն գալու է: Բայց դրանք ևս դարձյալ կլինեն: Տերը կպտտեցնի երկինքը ոչ թե այն կործանելու համար, այլ դրանք առավել կատարյալ բարձրացնելու համար:

Լսիր Դավիթ մարգարեին, որ ասում է. «Ի սկզբանե, Տեր, երկրի հիմքերն հաստատեցիր, և երկինքն էլ գործն է Քո ձեռքերի: Կանցնեն դրանք, բայց Դու կաս ու կմնաս հավիտյան» (Սաղմ., ՃԱ 25-26): Բայց կարող եք ասել. «Տե՛ս, հստակ ասում է, թե դրանք կանցնեն»: Սակայն տես, թե այդ ինչպես է հասկանում. «Ամեն ինչ ձորձի պես կմաշվի, դու վերարկուի պես կփոխես դրանք, ու դրանք կփոխվեն» (Սաղմ., ՃԱ 26): Ծիշտ այդպես էլ, ինչպես որ ասում ենք, թե մարդ պիտի մեռնի, համաձայն այն խոսքի, թե՝ «Տեսեք, ինչպես կորավ արդարը, և չկա մեկը, որ սրտով կարեկցի» (Նսայի, ԾԷ 1) և դա գուցե այն պատճառով, որ սպասում ենք հարություն, այնպես էլ սպասում ենք աշխարհի վերանորոգման: «Արեգակը կվերածվի խավարի, և լուսինը՝ արյան» (Հովել, Գ 15): Թող ուսուցվեն մանիքեականների աղանդից վերադարձածները և չաստվածացնեն իրենց լուսատուներին, ոչ էլ այս արևին, որ մի օր պիտի խավարի, ամբարշտությունք համարեն, թե Քրիստոսն է: Եվ դարձյալ լսիր Տիրոջ խոսքը: «Երկինք և երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերը չպիտի անցնեն» (Մատթ., ԻԴ 35): Տիրոջ խոսքը հավիտենական է և անեղծ, մինչդեռ արարվածները՝ փոփոխական:

4. Ուրեմն, կանցնի այս ամենը, ինչ այժմ տեսնում ենք, և կգան ակնկալված ավելի լավերը: Բայց թե ե՞րբ, այդ

չքննարկենք: Քանզի Տերն ասել է. «Ձեզ տրված է իմանալ այն ժամերը և ժամանակները, որ Հայրը հաստատեց իր իշխանության մեջ» (Գործք, Ա 7): Եվ մի՛ համարձակվիր սահմանելու, թե այդ ե՞րբ կկատարվի. բայց և հանգիստ մի քննեք: Քանզի ասված է. «Պատրաստ եղեք, որովհետև այն ժամին երբ չեք սպասում, մարդու Որդին կգա» (Մատթ., ԻԴ 44):

Բայց քանի որ մենք պետք է իմանայինք աշխարհի վախճանի նշանները և սպասում ենք Քրիստոսի երկրորդ հայտնություն, որպեսզի չմեռնենք խաբված և չընկնենք հակաքրիստոսի մոլորություն մեջ, առաքյալները աստվածային կարգադրությունները գալիս են ճշմարիտ ուսուցչի մոտ և հարցնում. «Ասա՛ մեզ. այդ ե՞րբ կլինի, և կամ քո գալստյան ու այս աշխարհի վախճանի նշանն ի՞նչ կլինի» (Մատթ., ԻԴ 3): «Մենք սպասում ենք դարձյալ քո գալստյան, բայց սատանան ևս կերպարավորվում է որպես լուսո հրեշտակ» (Բ Կորնթ., ԺԱ 14): Ուստի ապահովիր մեզ, որպեսզի քեզնից բացի մեկ ուրիշին մենք չերկրպագենք:

Եվ Նա, իր սուրբ և երանելի բերանը բացելով, ասում է. «Զգուշ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի» (Մատթ., ԻԴ 4): Այժմ դուք ևս, ունկնդիրներդ, ասես ձեր հոգու աչքերով Նրան տեսնում եք ձեր առաջ, լուռ եք, որ Նա նույնը ասում է նաև ձեզ. «Զգուշ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի»: Եվ Բանը խնդրում է զգուշ լինել ասվածներին: Քանզի այդ անցյալ գործերի պատմությունն է, այլ ապագայում կատարվելիք մարգարեություն: Այդ մենք չենք մարգարեացել, քանի որ արժանի չենք դրան. բայց մենք մեջբերում ենք ինչ որ գրվել է այդ մասին և նշում ենք բնութագրական նշանները: Եվ տես, թե ինչը արդեն կատարվել է և ինչը դեռ պիտի կատարվի, և ապահովիր ինքդ քեզ:

5. Զգուշ եղեք, որ ձեզ չմոլորեցնեն: «Որովհետև շատերը կգան իմ անունով ու կասեն, թե՛ ես եմ Քրիստոսը, և

շատերին կմոլորեցնեն» (Մատթ., ԻԴ 5): Այս ամենը մասամբ կատարվել են: Քանզի այդ մասին ասել են Սիմոն մոզբ և Մենանդրոսը և անաստված հերետիկոսներից ոմանք: Կասեն նաև ուրիշներ մեր ժամանակ և մեզնից հետո:

6. Երկրորդ նշանը. «Լսելու եք նաև պատերազմների ձայներ և պատերազմների լուրեր» (Մատթ., ԻԴ 6): Բայց մենք ևս այժմ ունենք, թե՞ չունենք հռոմեացիների պատերազմը պարսիկների դեմ Միջագետքի համար: Արդյոք ելե՞լ է «ազգ ազգի դեմ և թագավոր թագավորի դեմ» (Մատթ., ԻԴ 7): Այս բոլորը կատարվեցին: Եվ դարձյալ. «Պիտի լինեն արհավիրքներ և մեծամեծ նշաններ երկնքից» (Ղուկ., ԻԱ 11): Եվ պիտի գան ծանր ձմեռներ: «Արթուն կացեք, որովհետև չգիտեք, թե ո՞ր ժամին կգա ձեր Տերը» (Մատթ., ԻԴ 42):

7. Բայց մենք փնտրում ենք Տիրոջ հայտնություն մեր նշանը: Եկեղեցականներս՝ եկեղեցական նշան: Փրկիչն ասում է. «Եվ այն ժամանակ շատերը պիտի գայթակղվեն և միմյանց պիտի ատեն» (Մատթ., ԻԴ 10): Եթե այժմ լսես, թե կղերը՝ կղերի դեմ և ժողովուրդները ժողովուրդների դեմ են ելել մինչև արյունահեղություն, մի՛ ցնցվիր, քանզի այդպես է գրված: Ուշ չդարձնես կատարվածներին, այլ գրվածներին: Ոչ էլ դարձյալ ես՝ քեզ ուսուցանողս, եթե կորչեմ, դու ևս ինձ հետ չկորչես: Այլ ունկնդիրը պետք է ավելի լավ լինի իր ուսուցչից, և վերջին եկողը պետք է առաջինը դառնա (Մատթ., Ի 16): Քանի որ Տերը ընդունում է նաև մետասաներորդ ժամին հասնողներին (Հմմտ. Մատթ., Ի 6-7): Եթե առաքյալների մեջ կար մատնիչ, ապա զարմանո՞ւմ ես, որ եպիսկոպոսների մեջ կա եղբայրատյացություն:

Այս նշանը վերաբերում է ոչ միայն իշխանավորներին, այլև ժողովուրդներին: Քանզի ասում է. «Եվ անօրենություն



յան շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի» (Մատթ., ԻԴ 12): Կարո՞ղ է ներկաներից որևէ մեկը պարծենալ, թե անկեղծ սեր է տածում իր մերձավորների նկատմամբ: Շատ անգամ շրթունքները համբուրում են, դեմքը ժպտում է, աչքերը զվարթ են, բայց սիրտը նենգութուն է նյութում և, հանգիստ խոսելով, չարիք է պատրաստում:

8. Ունես նաև հետևյալ նշանը. «Եվ արքայության այս Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում՝ ի վկայություն բոլոր հեթանոսների, և ապա պիտի գա վախճանը» (Մատթ., ԻԴ 14): Ինչպես տեսնում ենք, գրեթե ամբողջ աշխարհը լցվել է Քրիստոսի վարդապետությունով:

9. Եվ ի՞նչ է կատարվում դրանից հետո: Շարունակելով ասում է. «Արդ, երբ տեսնենք սարսափելի սրբապղծությունը, որի մասին ասված է Դանիել մարգարեի միջոցով, որ հաստատված է սուրբ վայրում (ով ընթերցում է, թող հասկանա)» (Մատթ., ԻԴ 15): Եվ դարձյալ, եթե այդ ժամանակ որևէ մեկը ձեզ ասի, թե՛ ահա Քրիստոս այստեղ է կամ այնտեղ է, չհավատաք նրան» (Մատթ., ԻԴ 23): Ուրեմն, եղբայրատյացությունը տեղ է տալիս հակաքրիստոսին: Քանզի սատանան պատրաստում է ժողովուրդների հերձված, որպեսզի վերահաս հակաքրիստոսը դառնա հեշտ ընդունելի: Երանի ոչ ոք Քրիստոսի ծառաներից, որոնք այստեղ ներկա են կամ գտնվում են այլ վայրերում, չմոտենա և չհետևի նրան:

Այս մասին գրելով՝ Պողոս առաքյալը մեզ բացահայտ նշան է տվել. «Թող ոչ ոք ձեզ չխաբի և ոչ մի ձևով, որովհետև այն օրը չի գալու, եթե նախ ապստամբությունը չգա, և չհայտնվի անօրենություն մարդը՝ կորստյան որդին՝ հակառակորդը, որ գոռոզանում է այն ամենի վրա, որ կոչվում է Աստված կամ պաշտամունքի առարկա, մինչև այն աստիճան, որ նա նստի Աստծո տաճարում և ինքն իրեն

ցույց տա, թե Աստված է: Չեք հիշում, որ մինչ ձեզ հետ էի դեռ, ասում էի այդ բանը: Եվ այժմ դուք ինքներդ գիտեք, թե ինչն է նրան հետ պահում, որ այդ հակառակորդը ինքն իրեն հայտնի անի, մինչև ժամանակը գա. որովհետև անօրենություն այդ խորհրդավոր ուժը արդեն գործի վրա է. բայց այդ պիտի չհայտնվի մինչև այն ժամանակ, երբ մեջտեղից կվերացվի նա, որ այժմ նրան հետ է պահում: Եվ ապա պիտի հայտնվի Անօրենը, որին Տեր Հիսուս պիտի կործանի իր բերանի շնչով և պիտի ոչնչացնի իր հայտնությունով: Իր գալստյան ժամանակ: Նրա՝ Անօրենի գալուստը սատանայի ներգործությունով է, ամենայն զորությունով, նշաններով, խաբեբայական զորավոր գործերով և անիրավությունների բոլոր պատրանքներով կորստյան մատնվածների վրա» (Բ Թեսաղ., Բ 3-10):

Այս է ասում Պողոսը: Այժմ ընդվզում կա: Մարդիկ հեռացել են ուղիղ հավատքից: Ոմանք քարոզում են, թե Որդին նաև Հայր է: Ուրիշներ համարձակվում են ասել, թե Քրիստոս գոյություն է կալ չգոյությունից: Բանն այն է, որ նախկինում հերետիկոսները բացահայտ էին, մինչդեռ այժմ եկեղեցին լի է ծածուկ հերետիկոսներով: Այժմ մարդիկ հեռացել են ճշմարտությունից և գոհանում են՝ հաճելի խոսքեր լսելով: Խոսքեր անմիտ, որոնք հոգում ցանկություններ են առաջացնում: Մատուցվում է դատարկ և ճշմարտանման խոսք, և բոլորն ընդունում են: Քարոզվում է ապաշխարություն խոսք, և բոլորը փակում են ականջները: Մեծ մասամբ մարդիկ շեղվեցին ուղղափառությունից և գերադասում են չարիք գործել, քան իրենց հոգում արմատավորել բարություն: Այս է ապստամբությունը: Մնում է սպասել թշնամուն: Վերջերս անգամ սկսել է իր կարապետներին ուղարկել, որպեսզի թակարդ գցի հնարավորին չափ ավելի մեծ թվով մարդկանց: Ուրեմն, ուշադիր եղի՛ր, ո՛վ մարդ, և ապահովիր քո հոգին: Այս ամենի համար կենդանի Աստծու առաջ քեզ հավաստիացնում է Եկեղեցին և նա-

խազգուշացնում հակաքրիստոսի մասին՝ նրա հայտնվելուց առաջ: Մենք չգիտենք, թե այդ կկատարվի ա՞յժմ, քո կենդանություն օրո՞ք, թե՞ ավելի ուշ: Բայց լավ է այս բոլորն իմանալով՝ կանխավ զգուշանանք:

10. Ծջմարիտ Քրիստոսը, Աստծու Միածին Որդին, աշխարհի որևէ մասից չի գալու: Եթե ինչ-որ մի հրեշագործ հայտնվի անապատներից, պնդելով, թե նա է Քրիստոսը, դու մի՛ գնա: Եթե քեզ ասեն ահա այստեղ, ահա այնտեղ, չհավատաս: Նրան մի՛ սպասիր երկրից: Քանզի Տերը երկնքից է իջնելու, ոչ առանձին, ինչպես եղել է առաջին անգամ, այլ շատերի հետ, շրջապատված բյուրավոր հրեշտակներով, նա չի գալու ծածուկ և անաղմուկ, ինչպես ցողը գզած բրդի վրա (Հմմտ. Սաղմ., ՀԱ 6), այլ կայծակի պես (Ղուկ., ԺԷ 24) շլացուցիչ, պայծառ, բոլորի կողմից նկատելի: Որովհետև ինքն իսկ այդ ասել է. «Ինչպես փայլակը, որ ելնում է արևելքից և երևում է մինչև արևմուտք. մարդու Որդու գալուստը այնպես կլինի» (Մատթ., ԻԴ 27): Եվ դարձյալ. «Եվ պիտի տեսնեն մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ գորությունք և բազում փառքով: Եվ նա պիտի ուղարկի իր հրեշտակներին մեծ շեփորով» (Մատթ., ԻԴ 30-31), և այդ հատվածի շարունակությունը:

11. Բայց ինչպես այդ ժամանակ՝ հնում, երբ Աստված պիտի մարդեղանար, և սպասվում էր, որ նա պետք է ծնվի կույսից, նախապես նենգափոխվեց Աստծու մարդեղացման իրողությունը՝ խորամանկությամբ և խաբեությունքով ներշնչելով մարդկանց՝ ստեղծել երևակայական պատմություններ չաստվածների մասին, որոնք ծնվում են կանանցից: Ուստի, քանի որ պիտի նախորդեր այս ամբողջ խաբեությունը - գոնե այդպես էր մտածում - մարդիկ պիտի ժխտեին Աստծու իրական մարդեղությունը: Այսօր ևս, երբ երկրորդ անգամ պետք է Քրիստոս գա, սատանան նույն բանն է ա-

նում՝ մշտապես հակադրվելով Աստծու կամքին: Որպես զենք սատանան օգտագործում է մարդկանց անխարդախ սպասումը: Քրիստոսի գալստյանն առավել նախապատրաստված՝ նա խորամանկությամբ ներգործում է ինչ-որ մարդու միջոցով, որը պատկանում է հուդայականների թվին և հմուտ է մոգություն գործին, խաբեություն և սատանայական արարքներին: Օգնում է նրան սեփականելու Հռոմեական կայսրության իշխանությունը և իրեն սուտ կերպով անվանում է Քրիստոս: Եվ այսպես, դրդում է նրան Քրիստոսի անունով խաբելու հուդայականներին, որոնք սպասում են Մեսիային, և հեթանոսների վրա իշխում է իր կախարդական ստահոգ հմտությունքով:

12. Այս վերոհիշյալ հակաքրիստոսը գալու է այն ժամանակ, երբ լրանա Հռոմեացիների թագավորության ժամանակը, և մոտենան աշխարհի վախճանի նշանները: Իրար հետ միաժամանակ տարբեր վայրերում պիտի հուշակվեն տասը տարբեր թագավորներ, որոնք պիտի իշխեն միաժամանակ: Սրանից հետո տասնմեկերորդը կլինի այդ հակաքրիստոսը, որն իր մոգական չարանենգ հմտությամբ կհափշտակի Հռոմեական իշխանությունը, իրենից առաջ թագավորած երեքին պիտի ոչնչացնի և մնացածներին պիտի հպատակեցնի իրեն: Սկզբում նա կլինի բարյացակամ, և, որպես խելամիտ և խոհուն, կձևանա խելացի ու մարդասեր: Կեղծ հրաշքներով ու նշաններով, մոգական խաբեություններով նրան պիտի հաջողվի մոլորեցնել հուդայականներին, որոնք պիտի հավատան, թե սա սպասվող Քրիստոսն է: Այնուհետև, ամեն տեսակ անմարդկայնություններով և անօրենություններով նրանց վրա պիտի չարիք թափի և պիտի գերազանցի իրենից առաջ ապրած բոլոր անօրեններին և ամբարիշտներին, իր սպանիչ, դաժանագույն, անգուլթ և անխիղճ տրամադրվածությամբ բոլորի և հատկապես մեր՝ քրիստոսյանների նկատմամբ: Բայց նա միայն երեք տարի

և վեց ամիս պիտի համարձակվի այդ ամենը կատարել, և պիտի տապալվի մեր Միածին Աստվածորդու, Տեր և Փրկիչ իրական Հիսուս Քրիստոսի փառահեղ երկրորդ գալստյան հետևանքով, որով իր բերանի մեկ շնչով Նա հակաքրիստոսին կհանձնի գեհենի անմար կրակներին:

13. Այն, ինչ սովորեցնում ենք, մտացածին հերյուրանքներ չեն, այլ եկեղեցական գրքերից, հատկապես Դանիելի գրքից ընթերցված վերոհիշյալ հատվածից արված հետևություններ: Հրեշտակապետ Գաբրիելը ևս այդ մեկնաբանել է այսպես. «Չորրորդ գագանը նշանակում է, որ չորրորդ թագավորությունը պիտի լինի երկրում, այն ավելի մեծ պիտի լինի, քան բոլոր թագավորությունները» (Դան., է 23): Եկեղեցական մեկնիչները մեզ ավանդել են, թե այդ թագավորությունը պիտի լինի հռոմեացիներին: Առաջինը եղել է Ասորեստանի թագավորությունը, երկրորդը՝ մարերի և պարսից, այնուհետև երրորդը՝ մակեդոնացիներին և չորրորդը՝ հռոմեականը, որը կա այսօր: Այնուհետև Գաբրիելը շարունակում է՝ բացատրելով. «Գագանի տասը եղջյուրները նշանակում են, որ տասը թագավորներ պիտի բարձրանան, և նրանցից հետո պիտի բարձրանա մեկ ուրիշը, որ ավելի չար պիտի լինի, քան բոլոր նախորդները. պիտի հպատակեցնի երեք թագավորներին (Դան., է 24): Ոչ միայն այդ տասին, այլ բոլոր նախորդ թագավորներին: Այս տասը թագավորներից երեքին հաղթելով՝ ինքը դառնալու է ութերորդը: Նա, - ասում է, - Բարձրյալի դեմ խոսքեր պիտի բարբառի» (Դան., է 25): Այդ չարանենգն ու անօրենքը, որը թագավորությունը չի ժառանգել իր հայրերից, այլ այն հափշտակել է իր մոգական հմտությամբ:

14. Եվ ո՞վ է նա, և ինչպիսի՞ զորությունամբ պիտի այդ կատարի: Բացատրիր, ո՞վ Պողոս. «Անօրենի գալուստը պիտի լինի սատանայի ներգործությունամբ, որը պիտի օգտագործի

ամեն մի զորություն և խաբեական նշաններ» (Բ Թեսաղ., Բ 9): Այսինքն՝ սատանան այդ անօրենին պիտի օգտագործի՝ նրա միջոցով անձամբ ներգործելով: Քանզի սատանան, իմանալով, որ Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ իր համար ոչ մի գիշում չի լինելու, արդեն չի բավարարվում, ինչպես ցարդ սովոր էր, մարդկանց դեմ կովելու իր տարբեր սպասավորների միջոցով, այլ ինքն անձամբ բացահայտ պիտի դուրս գա մարտի հակաքրիստոսի դեմքով: Ինչպե՞ս: Բոլոր նշաններով և հրեշտակներով, որոնք կլինեն սուտ և կեղծ: Որովհետև ստի հայրը կեղծիքի գործերը հաջողեցնում է մարդկանց հիվանդագին երևակայության օգնությամբ, որոնց պիտի թվա, թե տեսնում են իբր մեռյալը հարություն է առնում, իբր կաղերը քայլում են, և կույրերը տեսնում են, մինչդեռ իրականում ոչ մի բուժում էլ չի կատարվել:

15. Առաքյալը դարձյալ ասում է. «Հակառակորդը, որ գոռոզանում է այն ամենի վրա, որ կոչվում է աստված կամ պաշտամունքի առարկա, մինչև այն աստիճան, որ նա նստի Աստծու տաճարում և ինքն իրեն ցույց տա, թե Աստված է» (Բ Թեսաղ., Բ 4): Հակաքրիստոսը իբր թե կատի կուռքերը, և այդ կանի, որպեսզի հաստատվի Աստծու տաճարում: Բայց ո՞ր տաճարում: Ասում է՝ հուդայականների քանդված տաճարում, բայց ոչ այնտեղ, ուր մենք ենք: Քավ լիցի: Ինչո՞ւ ենք այդ անում: Որպեսզի չկարծեն, թե մենք մեզ ենք շնորհք անում: Որովհետև, քանի որ իբրև Քրիստոս գալիս է հրեաների մոտ, ցանկանում է, որ պաշտվի նրանց կողմից: Եվ որպեսզի նրանց առավել հաջող կերպով խաբի, առանձին հոգածություն է դրսևորում հրեաների տաճարի նկատմամբ՝ ստեղծելով տպավորություն, թե ինքը սերում է Դավթի տոհմից և ինքը պիտի վերականգնի Սողոմոնի կառուցած տաճարը: Հակաքրիստոսը կգա այն ժամանակ, երբ մեր Փրկիչի որոշմամբ, այդ տաճարում

չի մնա քար քարի վրա: Քանզի երբ իր հնուլթյան պատճառով փուլ գա տաճարը, կամ նորը կառուցելու պատրվակով այն քանդեն և ընկնի տաճարի անգամ վերջին քարը - ես նկատի չունեմ արտաքին պարիսպը, այլ տաճարի ներքին մասը, որտեղ քերովբեներն են - այնժամ կգա հակաքրիստոսը իր նշաններով և սուտ հրաշքներով՝ իբր արհամարհելով բոլոր կուռքերը: Սկզբում նա կձևանա մարդասեր, բայց հետո կդրսևորի իր ամբողջ դաժանությունը, հատկապես Աստծու սրբերի հանդեպ: «Տեսնում էի, - ասում է, - որ այդ եղջյուրը պատերազմում էր սրբերի դեմ» (Դան., է 21): Եվ դարձյալ՝ «Պիտի լինի նեղության ժամանակ: Նեղություն, որպիսին չի եղել այն օրից, երբ ժողովուրդն առաջացավ երկրի վրա» (Դան., ԺԲ 1), մինչև հակաքրիստոսի ժամանակը: Ահավոր մի գազան, հսկա դև, մարդկանց կողմից անպարտելի, պատրաստ նրանց կուլ տալու: Թեև շատ բան ունենք նրա մասին ասելու, բայց համաչափության համար բավարարվում ենք այսքանով:

16. Այս պատճառով Տերը, իմանալով հակառակորդի ամենհի զորությունը, որոշ գիշում անելով հավատացյալներին, ասաց. «Այդ ժամանակ, ովքեր Հրեաստանում կլինեն, թող փախչեն լեռները» (Մատթ., ԻԴ 16): Բայց նա, ով գիտակցում է իր կայունությունը և ուժը, թե կարող է կուվել սատանայի դեմ, թող մնա - քանզի չեմ ուզում նրանց զրկել հաղթանակի բերկրանքից և ասի. «Մ՞վ կարող է մեզ բաժանել Քրիստոսի սիրուց» (Հռոմ., Լ 35) և այլն: Վախեցողներս ապահովենք մեզ: Բայց զորավոր եղողները թող կանգնեն հակաքրիստոսի դեմ: «Որովհետև այդ ժամանակ մեծ նեղություն պիտի լինի, որպիսին չի եղել աշխարհի արարչագործության սկզբից մինչև այժմ և չի էլ լինի» (Մատթ., ԻԴ 21): Բայց, Աստծուն փառք, որ այդ նեղության տևողությունը սահմանափակված է մի քանի օրով: Քանզի ասել է. «Ընտրյալների պատճառով այդ օրերը

պիտի կարճեցվեն» (Մատթ., ԻԴ 22): Իսկ հակաքրիստոսը կթագավորի միայն երեք և կես տարի: Մենք այս չենք ասում ապոկրիֆ վկայությունների հիման վրա, այլ՝ Դանիելի խոսքերով. «Դա պիտի հաջողվի նրան մինչև որոշ ժամանակ, ինչ-որ ժամանակներ և ժամանակների կեսը» (Դան., է 25): Ժամանակը մեկ տարին է, որի ընթացքում պիտի աճի նրա ներկայութունը: Մնացյալ երկու տարին՝ անօրեննությունների ժամանակն է, բոլորը միասին՝ երեք տարի, իսկ ժամանակի կեսը՝ վեց ամիս:

Եվ դարձյալ Դանիելն ասում է. «Երդվեց հավիտյան կենդանի Աստուծով, թե ժամանակին, ժամանակներում և ժամանակի կեսին» (Դան., ԺԲ 7): Ոմանք, երևի, նույն իմաստով ընկալել են նաև Դանիելի հետևյալ ասածը. «Հազար երկու հարյուր իննսուն օր» և «Երանի նրան, ով կհամբերի և կհասնի հազար երեք հարյուր երեսուն հինգերորդ օրվան» (Դան., ԺԲ 12) հատվածները: Հավանաբար այդ է պատճառը, որ հավատացյալները պետք է թաքնվեն ու փախչեն: Որովհետև գուցե չհասցնենք մեր Տիրոջ խոսքի համաձայն շրջել Իսրայելի բոլոր քաղաքները, և մարդու Որդին արդեն կգա (հմմտ. Մատթ., Ժ 23):

17. Արդյոք ո՞վ կլինի այն երանելին, որ այդ ժամանակ, պահպանելով իր հավատքը և բարեպաշտությունը, պիտի վկայի Քրիստոսին: Ես ձեզ ասում եմ, որ բոլոր վկաներից առավել երանելի կլինեն այդ ժամանակի վկաները: Քանզի նախորդ վկաները մարտնչել են միայն մարդկանց դեմ. մինչդեռ հակաքրիստոսի ժամանակ ինքներս երես առ երես պիտի կուվենք սատանայի հետ: Նախորդ ժամանակներում հալածող թագավորները միայն սպանում էին վկաներին և չէին ձևացնում, թե նրանց հարուլթյուն են տալիս, ոչ էլ երևակայական նշաններն ու հրաշքները ներկայացնում էին որպես իրական: Իսկ այստեղ կլինի խաբուսիկ մղում, որպեսզի և՛ վախենանք, և՛ խաբվենք, «որպեսզի հնարավոր

լինի մոլորեցնել նաև ընտրյալներին» (Մատթ., ԻԴ 24): Չլինի թե այդ ժամանակ ձեզանից որևէ մեկը մտածի. «Քրիստոսն ի՞նչ ավելի բան է արել: Ի՞նչ զորությամբ է հակաքրիստոսն այս ամենը կատարում: Եթե Աստված չկամենար, նա այդ ամենը չէր կարող անել:

Անշուշտ, քեզ ապահովում է առաքյալն՝ ասելով. «Դրա համար էլ Աստված նրանց պիտի ուղարկի զորավոր մի մոլորություն» (Բ. Թեսաղ., Բ 10) ոչ թե պաշտպանվելու, այլ դատապարտվելու համար: Ինչո՞ւ: «Քանզի նրանք կհավատան ստին, և կդատապարտվեն նրանք, ովքեր չհավատացին ճշմարտությանը և հաճոյացան անօրեննությամբ. այն է՝ հակաքրիստոսով: Եվ Աստված ներում է այդ ամենը, որ կատարվում էին հալածանքների ընթացքում և այն ժամանակ, ոչ այն պատճառով, որ անկարող է դրանք խոչընդոտել, այլ որովհետև սովոր է իր մարտիկներին պսակել նրանց համբերատարության համար և նրանց դնել մարգարեների և առաքյալների կողքին: Ուստի նրանք, թեև մարտիրոսացան կարճ ժամանակի համար, կժառանգեն երկնքի թագավորությունը, որն անվերջ է, ինչպես այդ հաստատում է Դանիելը. «Եվ այն ժամանակ պիտի փրկվի քո ժողովուրդը, ինչպես որ այս ամենի մասին գրված է գրքերում» (Դան., ԺԲ 1): «Եվ հողում ննջածներից շատերը պիտի հարուժյուն առնեն, ոմանք՝ հավիտենական կյանքի համար և ոմանք՝ հավիտենական նախատիքի ու ամոթի համար: Իմաստուն մարդիկ պիտի ճառագեն իբրև երկնակամարի լուսատուներ, իսկ արդարներից շատերը առավել ևս, իբրև հավիտենական աստղեր» (Դան., ԺԲ 2-3):

18. Ուրեմն, ո՛վ մարդ, քեզ ապահովիր: Դու ունես հակաքրիստոսի նշանները: «Ես սովորեցի առանց նենգության և առանց նախանձի էլ բաշխում եմ» (Իմաստ., է 13): Եթե հարազատ որդի ունես, խրատիր նրան: Եթե ուսուցմամբ ծնել ես մեկին, նրան ևս ապահովիր խրատներով, որ-

պեսզի խաբեբային որպես ճշմարիտ չընդունի: «Որովհետև անօրեննության այդ խորհրդավոր ուժը արդեն գործի վրա է» (Բ Թեսաղ., Բ 7): Ինձ վախեցնում են ազգերի պատերազմները: Ինձ վախեցնում են եկեղեցիների հերձվածները, ինձ վախեցնում է եղբայրների եղբայրատյացությունը: Խոսենք այդ մասին, բայց երանի այդ ամենը մեր ժամանակ չկատարվի: Մենք պետք է ապահովենք մեզ հակաքրիստոսից:

19. Մենք ընդունում և սպասում ենք, թե Տերը պիտի երկնքից գա ամպերի վրա: Այնժամ պիտի հնչեն հրեշտակների շեփորները: Նախ պիտի մեռելները Քրիստոսի զորությամբ հարուժյուն առնեն, և այդ ժամանակ ապրող հավատացյալները պիտի տարվեն ամպերի վրա և իրենց ջանքերի համար որպես մրցանակ պիտի ստանան գերմարդկային պատիվ, քանզի նրանց պայքարը եղել է նույնպես գերմարդկային: Ինչպես գրել է Պողոս առաքյալը. «Որովհետև Տերն Ինքը, ազդարարության նշանով, հրեշտակապետի ձայնով և Աստծու շեփորով պիտի իջնի երկնքից, և Քրիստոսով մեռածները առաջինը հարուժյուն պիտի առնեն, ապա և մենք, որ կենդանի մնացած կլինենք, նրանց հետ միասին պիտի հափշտակվենք, տարվենք ամպերի վրայից Տիրոջ առաջ օդում և այդպես մշտապես Տիրոջ հետ պիտի լինենք» (Ա Թեսաղ., Դ 15-16):

20. Տիրոջ այս երկրորդ գալուստը և աշխարհի վերջը հայտնի էր նաև ժողովողին, որն ասել է. «Ուրախացիր, երիտասարդ, քո երիտասարդությամբ»: Եվ շարունակում է. «Եվ քո սրտից հեռու վանիր տրտմությունը և չարությունը հանիր քո մարմնից» (ժող., ԺԱ 9-10): «Եվ հիշիր քո Արարչին քո երիտասարդության օրերին, քանի դեռ չեն եկել դառնության օրերը, և չեն հասել ծերության օրերը» (Հմմտ. ժող., ԺԲ 1), «քանի դեռ քեզ համար չեն խավարել

արեգակներն ու լույսը և լուսինն ու աստղերը» (Ժող., ԺԲ 2), չեն մթազնել աչքերիդ բիբերը, քանի դեռ չի կտրվել կյանքիդ արծաթ լարը, քանի դեռ չի քանդվել ոսկե մանյակը - նկատի ունի արևը (Հմմտ. Ժող., ԺԲ 1-8): «Մարդիկ պիտի արթնանան ճնճղուկի ձայնից» (Ժող., ԺԲ 4): «Եվ վախով պիտի բարձրից նայեն, և նրանց նայվածքը պիտի աղոտ լինի ծերության պատճառով» (Ժող., ԺԲ 3): Եվ այդ ժամանակ ի՞նչ են տեսնելու: «Պիտի տեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով» (Մատթ., ԻԴ 30): Եվ ազգովին պիտի հեկեկա Հուդայի ամբողջ երկիրը, և ամեն մի ցեղ՝ առանձին (Չաք., ԺԲ 12):

Եվ ի՞նչ է լինելու, երբ Տերը գա: «Պիտի ծաղկի նշենին, ու մորեխը պիտի բազմանա, ծաղկած կապառը պիտի ցրվի» (Ժող., ԺԲ 5): Ինչպես բացատրում են մեկնիչները, երբ նշենին ծաղկում է, նշանակում է, որ ձմեռն անցել է: Բայց մեր մարմինները ևս ձմեռն անցնելուց հետո սկսում են երկնային ծաղկում ապրել: Եվ բազմանում է մորեխը, այսինքն, թևավոր հոգին մարմին է առնում: Եվ կապառը պիտի ցրվի, այսինքն՝ չարագործներն ու անօրենները պիտի ցրվեն:

21. Տեսնո՞ւմ ես, ինչպես բոլորը կանխասում են Տիրոջ գալուստը: Տեսնո՞ւմ ես, ինչպես գիտեն ճնճղուկի ձայնը: Ո՞ր ձայնը: Քննենք: «Տերն ինքը ազդարարության նշանով, հրեշտակապետի ձայնով և Աստծու շեփորով պիտի իջնի երկնքից» (Ա Թեսաղ., Դ 15): Հրեշտակապետը ձայն է տալիս և ասում բոլորին. «Վեր կացեք և դիմավորեք Տիրոջը»: Եվ ահավոր է Տիրոջ իջնելը: Դավիթն ասում է. «Մեր Աստվածը պիտի գա հայտնապես, և մեր Աստվածը պիտի չլռի. Նրա առաջ հուր պիտի բորբոքվի և նրա շուրջը՝ սաստիկ մրրիկ» (Մաղմ., ԽԹ 2-3):

«Գալիս է դեպի Հայրը», ինչպես որ ասված է նոր ընթերցված հատվածում, «Մարդու Որդին» (Դան., Է 13),

երկնքի ամպերի մեջ, իսկ նրա առաջից հոսում էր կրակե մի գետ, որը փորձում էր մարդկանց: Նա, ով ոսկու պես փայլուն գործեր ունի, առավել փայլում է (Հմմտ., Դան., Է 10): Նա, ով եղեգի նման փուչ և անկայուն գործեր ունի, այրվում է կրակից: «Եվ Հայրը նստած էր այնտեղ, հագուստը ձյան պես սպիտակ էր, Նրա գլխի մազերը՝ սպիտակ գեղմի նման» (Դան., Է 9): Այս ամենը մեզ ասում է մարդու նմանությունը: Ինչո՞ւ: Քանզի Նա թագավոր է բոլոր նրանց, ովքեր չեն վարակվել մեղքերով, ինչպես որ Գրքում ասված է. «Ես ձեզ կսպիտակեցնեմ մեղքերից, և դուք կդառնաք ձյան պես և սպիտակ գեղմի պես» (Հմմտ., Եսայի, Ա 18): Եվ այդ նշանակում է մեղքերի թողություն և անմեղություն վիճակ: Ուրեմն, Տերը գալիս է երկնքից՝ ամպերի վրա: Նա, Ով երկինք բարձրացավ լուսավոր ամպով: Քանզի ինքն ասել է. «Պիտի տեսնեն մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ զորությամբ և բազում փառքով» (Մատթ., Դ 30):

22. Բայց ի՞նչը կլինի Նրա գալուստյան նշանը: Գուցե մի հակադիր զորություն կհամարձակվի Նրան նմանվել: «Եվ այդ ժամանակ երկնքի վրա մարդու Որդու նշանը պիտի երևա» (Մատթ., ԻԴ 30): Եվ Քրիստոսին հատուկ նշանը խաչն է: Խաչի լուսատիպ նշանը կգնա թագավորի առաջից և կհայտարարի, թե սա Նա է, Ով խաչվել էր հնում. որպեսզի հրեաները՝ նրանք, ովքեր խոցել էին և դավադրեցին սպանելու համար, որպեսզի Հուդայի ամբողջ երկիրը ողբա ազգովին, և ամեն մի ցեղ՝ առանձին՝ ասելով. Սա Նա է, Ում ապտակեցինք: Նա է, Ում երեսին թքեցինք: Նա է, Ում շղթայեցինք: Նա է, Ում խաչեցինք և խայտառակեցինք: Ո՞ւր փախչենք Քո զայրույթից փրկվելու համար: Բայց քանի որ հրեշտակների զորությունները նրանց պիտի շրջափակեն, ապա նրանք չեն կարողանա փախչել: Խաչի նշանը սարսափ կդառնա թշնամիների համար և ուրա-



խուլթյունն՝ բարեկամներին, որոնք հավատացին Նրան և քարոզեցին ազգերի մեջ ու վկայեցին Նրա անվան համար:

Ո՛վ պիտի այնքան երանելի լինի, որ դառնա Քրիստոսի սիրելին: Իր ծառաներին չի արհամարհի այդքան փառապանծ Թագավորը: Նա, Ում ուղեկցում են հրեշտակներ, Ով գահակից է Հորը: Եվ որպեսզի ընտրյալները չխառնվեն թշնամիների հետ, «Նա պիտի ուղարկի Իր հրեշտակներին մեծ շեփորով, ու պիտի հավաքեն Տիրոջ ընտրյալներին չորս կողմերից» (Մատթ., ԻԴ 31): Նա, Ով չարհամարհեց անգամ մեկին՝ Ղովտին, ինչպե՞ս կարհամարհի բազում արդարներին: Նա կասի նրանց, որոնք ամպի կառքերով հրեշտակների օգնությամբ հավաքված պիտի լինեն. «Եկեք, իմ Հոր օրհնյալներ» (Մատթ., ԻԵ 34):

23. Ներկաներից մեկը գուցե կասի. «Ես չքավոր եմ: Գուցեև այդ ժամանակ ես հիվանդ պառկած կլինեմ անկողնում: Գուցե մի կին էլ կասի. «Ես այդ ժամանակ գուցե գտնվեմ ջաղացում: Եվ ի՞նչ կլինի: Արդյո՞ք մենք կարհամարհվենք»: Քաջ եղիր, մա՛րդ: Դատավորն անկաշառ է: Նա չի դատի երևույթների և խոսքերի հիման վրա: Նա չի գերադասի ուսյալներին անուսներից և հասարակ մարդկանցից, ոչ էլ հարուստներին աղքատներից: Եթե անգամ արտում լինես, հրեշտակները կվերցնեն քեզ: Չկարծես, որ հողատերերին կվերցնի և քեզ՝ հողագործիդ, կլքի: Եթե անգամ ծառա ես և չքավոր, մի՛ տառնապիր: Նա, Ով ծառայի կերպարանք ստացավ (Փիլիպ., Բ 7), չի արհամարհի ծառաներին: Եթե անգամ հիվանդ պառկած ես անկողնում, այդ մասին ևս գրված է. «Եթե երկու հոգի լինեն մի մահճի մեջ, մեկը պիտի վերցվի, իսկ մյուսը պիտի թողնվի» (Ղուկ., ԺԷ 34): Եթե դու անհրաժեշտաբար զբաղված ես ջաղացում, այդ ես թե կին, քեզ չի արհամարհելու Նա, Ով իր քաջությամբ ազատում է գերիներին (Սաղմ., ԿԷ 7): Նա, Ով Հովսեփին ծառայությունից և բանտից տարավ թագա-

վորական իշխանություն, քեզ ևս կազատի նեղությունից և կտանի երկնքի թագավորություն: Միայն թե քաջ եղիր, միայն թե բարիք գործիր, հոժարությամբ պայքարիր: Ոչինչ չի կորչելու:

Արձանագրված է քո ամեն մի աղոթքը, ամեն մի սաղմոսերգությունը, ամեն մի ողորմածությունը, ծոմապահությունը, բարոյականության սահմաններում պահված ամուսնությունը, հանուն Աստծու ամեն տեսակի ժուժկալությունը: Բայց արձանագրության պսակների մեջ առաջնությունը պատկանում է կուսությունը և անմեղությունը, և դու կփայլես հրեշտակի նման: Բայց ինչպես որ հաճույքով լսեցիր բարիքների մասին, այժմ էլ, առանց հաշվելու, լսիր հակառակի մասին: Արձանագրված է քո ամեն մի ընչաքաղցությունը, երգմնազանցությունը, հայհոյանքը, ամեն մի հմայությունը, գուշակությունը, սպանությունը: Այս ամենը ևս արձանագրված է, եթե մկրտվելուց հետո շարունակում ես այդպես: Քանզի նախորդ մեղքերդ ջնջված են:

24. «Արդ՝ ասում է, երբ որ մարդու Որդին գա Իր փառքով, և բոլոր հրեշտակները՝ Նրա հետ» (Մատթ., ԻԵ 31), տե՛ս, ո՛վ մարդ, ինչքան բազմություն առաջ պիտի դատվես: Այնժամ ներկա պիտի լինի մարդկային ամբողջ ցեղը: Հաշվիր, ուրեմն, ինչքան բազմաթիվ է հոռմեացիների ցեղը: Հաշվիր, ինչքան բազմություն են բարբարոսների ցեղերը, որոնք այժմ ապրում են, և ինչքանն էլ մահացել են անցած 200 տարում: Հաշվիր, թե նրանցից ինչքանը թաղվել են: Հաշվիր, Ադամից առ այսօր ինչքա՞ն կլինեն: Մեծ է բազմությունը, բայց դեռ քիչ է: Քանզի հրեշտակներն ափելի շատ են: Նրանք 99 ոչխարներն են, իսկ մարդկությունը միայն մեկն է (Հմմտ. Մատթ. ԺԼ 12 և Ղուկ. ԺԵ 4): Վայրերի ընդարձակության համեմատ պետք է հաշվենք նաև նրա բնակիչների բազմությունը: Երկիրը, համայն տիեզերքը, որ բնակեցվել է մարդկանցով, քանի որ

գտնվում է իրեն շրջապատող երկնքի մեջտեղում, միայն կենտրոնն է շրջանակի, բայցև իր վրա պահում է այդքան բազմություններ: Մտածեք, ուրեմն, որ երկինքը, որը շրջանակի պես պահում է երկիրը, ինչքան ավելի մեծ կլինի նրանից: Եվ մտածեք, թե կան անհամար երկինքներ, որ չենք կարող անգամ երևակայել այնտեղ բնակվող բազմությունները: Քանզի գրված է. «Հազար հազարավորներ սպասարկում էին նրան և բյուր բյուրավորներ կային նրա առջև» (Դան., է 10): Անշուշտ, հրեշտակների բազմությունը միայն այդքան չէր: Այն շատ ավելին էր, քան կարող էր ներկայացնել մարգարեն: Ուրեմն, այնժամ դատաստանին ներկա կլինի Աստված՝ բոլորի Հայրը, կողքին գահակից Քրիստոսը՝ Սուրբ Հոգու ներկայությամբ: Հրեշտակի չեփորը պիտի հրավիրի մեզ բոլորիս՝ հազած մեր բոլոր արարքների բեռը: Մի՞թե նման պատկերը մեզ չի համակի տազնապի զգացումով: Ո՛վ մարդ, չհամարես, որ դատաստանը թեթև կլինի, եթե անգամ դու հավերժական պատժի չարժանանաս: Բավական է և այն, որ քո բոլոր ծածուկ գործերը լույս աշխարհ դուրս կգան մարդկանց բազմությունների և բոլոր հրեշտակների առաջ: Մի՞թե երբեմն չենք գերադասում մեռնել, քան թե ամոթով մնալ բարեկամների առաջ:

25. Ուստի, եղբայրներ, ջանանք, որ Աստված չմերժի մեզ ու չդատապարտի: Մեզ ու մեր գործերը ճանաչելու համար Նա քննելու և ստուգելու կարիք չունի: Մի՛ ասա, որ գիշեր ժամանակ պոռնկացա կամ կախարդություն արեցի, կամ նման բաներ, և այնտեղ ոչ ոք ներկա չէր: Դու պիտի դատվես քո խղճմտանքով, քո մտածմունքներով, որոնք քեզ կմեղադրեն կամ կարդարացնեն դատաստանի օրը, երբ Աստված կդատի մարդկանց ծածուկ գործերը: Դատավոր Աստծու դեմքը քեզ կստիպի ասել ճշմարտությունը: Նա քեզ կքննի անգամ այն դեպքում, երբ դու ճշմարտություն

չես ասում: Եվ դա հայտարարել է Դատավորը՝ ասելով՝ քանզի Քրիստոս է լինելու Դատավորը: «Սակայն Հայրը ոչ մեկին չի դատում, այլ ամեն դատաստան տվել է Իր Որդուն» (Հովհ., Ե 22): Դա չի նշանակում, որ Հայրն օտարվում է Իր իշխանությունից, այլ այն, որ Նա դատում է Իր Որդու միջոցով: Անշուշտ Որդին դատում է Հոր համաձայնությամբ: Եվ Որդու դատն ու որոշումը նույնն են, ինչ և Հոր դատն ու որոշումը: Քանզի Հայրն ու Որդին ունեն միևնույն կարծիքը: Բայց ի՞նչ է ասում Դատավորը այն մասին, թե արդյո՞ք քո արարքներն ու ապրումները կազմում են քո հագուստը, թե՞ ոչ: «Ու պիտի հավաքվեն Նրա առաջ բոլոր ազգերը» (Մատթ., ԻԵ 32): Քանզի Քրիստոսի առաջ պիտի ծնրադրեն և՛ երկրայինները, և՛ երկնայինները, և՛ ստորգետնյանները: Եվ նրանց միմյանցից պիտի զատի, «ինչպես որ հովիվը զատում է ոչխարները այծերից» (Մատթ., ԻԵ 32): Եվ ինչպե՞ս է զատում հովիվը: Արդյոք քննում է ինչ-որ գրքի հիման վրա, թե ո՞րն է ոչխար և ո՞րը այծ, թե՞ նրանց տարբերում է իրենց տեսքից: Մի՞թե ոչխարին հատուկ չէ փափուկ բուրդը, իսկ այծին՝ կոշտ մազը: Այդպես և դու, մաքրվելով քո մեղքերից, արդեն կունենաս մաքուր բուրդ, և քո տարազը կմնա չապականված, և դու միշտ կասես. «Ես հանել եմ իմ պատմուճանը, ինչպե՞ս հագնեմ այն» (Երգ, Ե 3): Քո զգեստից կճանաչվես իբրև ոչխար: Բայց եթե մնացիր թավամազ և թեթևամիտ՝ Նսավի նման, որը իր անդրանկությունը կորցրեց կերակրի համար և վաճառեց իր դիրքը, կգնաս Տիրոջ ձախ կողմը: Քավ լիցի, որ ներկաներից որևէ մեկը կորցնի Շնորհը և իր անարդար գործերով գտնվի մեղավորների ձախակողմյան գնդերի մեջ:

26. Իրոք, ահռելի է դատաստանը և սարսափելի, ինչպես այդ մասին պատմում են: Թեև որպես մեր կյանքի նպատակ նախատեսված է երկնքի թագավորությունը,

պատրաստ է նաև դժոխքի հավիտենական կրակը: Եվ կհարցնեք. ինչպե՞ս խուսափենք կրակից և մտնենք արքայուլթյուն: «Քաղցած էի», ասում է, «և ինձ ուտելիք տվիք» (Մատթ., ԻԵ 35): Այստեղ այլաբանություն պետք չէ, այլ՝ կատարել ասվածը: «Քաղցած էի, և ինձ ուտելիք տվիք. ծարավ էի, և ինձ ջուր տվիք. օտար էի, և ինձ ձեր մեջ առաք. մերկ էի, և ինձ հագցրիք. հիվանդ էի, և ինձ տեսնելու եկաք. բանտում էի, և ինձ այցի եկաք» (Մատթ., ԻԵ 35-36): Այս թե անես, թագավորության մեջ Նրա հետ կդառնաս թագավոր: Եթե չկատարես, կդատարարվես: Ուրեմն, այդ ամենն այժմից գործողություն դարձրու և կայուն մնաք չհավատքի մեջ: Ուշադիր եղիր, որ դրսում չմնաս հիմար կույսերի նման, որոնք ուշացել էին յուզ գնել: Մի մխիթարվիր, որ ճրագ ունես միայն, այլ այն միշտ վառված պահիր: Թող քո բարի գործերի լույսը փայլի մարդկանց առաջ, և քո պատճառով Քրիստոս չանարգվի: Լավ գործերով աչքի ընկիր և հարգիր անաղարտության զգեստը: Եվ ինչ գործ որ Աստված քեզ վստահի, այն կատարիր հաճույքով և արդյունավետ: Դրա՞մ է քեզ վստահել. այն օգտագործիր բարությունը: Քեզ վստահել են դաստիարակություն՞ գործ. այդ շնորհը գործածիր հանուն Աստծու փառքի և մարդկանց փրկության: Կարո՞ղ ես ուրիշներին ևս բերել լսելու հավատքի քարոզը. այդ կատարիր եռանդագին: Լավ տնտեսվարման բազում ձևեր կան: Զգուշացեք, չլինի թե սխալվեք ու մերժվեք, որպեսզի հավիտենական թագավոր Քրիստոսին դիմավորենք անկեղծորեն: Քանզի Նա դատելու է ողջերին ու մեռյալներին: Նա, Ով մեռավ հանուն ողջերի ու մեռյալների, ինչպես ասում է Պողոսը. «Քանզի այս բանի համար էլ Քրիստոս մեռավ ու կենդանացավ, որպեսզի մեռելներին և ողջերին հավասարապես տիրի» (Հռոմ., ԺԴ 9):

27. Եվ եթե երբևէ լսես որևէ մեկին, որ ասի, թե Քրիստոսի

տոսի թագավորությունը ունի վերջ, ատիր այդ հերետիկոսին: Դա վիշապի մեկ այլ գլուխն է, որ վերջերս հայտնվել է Գալատիայում: Ինչ-որ մեկը համարձակվեց ասել, որ աշխարհի վերջից հետո Քրիստոս չի թագավորելու: Համարձակվեց անգամ ասել, որ Բանը Հորից դուրս գալուց հետո վերադարձավ, և Նրա էությունը կորավ Հոր մեջ և այլևս այն գոյություն չունի: Նա այդ հայհոյական դատողություններով հանդես է գալիս ինքն իր դեմ: Նա չի լսել Տիրոջ խոսքը, թե «Որդին հավիտյան մնում է» (Հովհ., Ը 35): Չի լսել Գաբրիելին, որ ասել է. «Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, ու Նրա թագավորությունը վախճան չի ունենա» (Ղուկ., Ա 33): Նկատիր ասվածը և տես: Այժմ հերետիկոս մարդիկ քարոզում են Քրիստոսի դեմ: Բայց Գաբրիել հրեշտակապետը սովորեցրել է Փրկչի հավերժության մասին: Արդ, դու ո՞ւմ պիտի հավատաս: Գաբրիելին չե՞ս հավատա: Լսիր Դանիելի վկայությունը, որը նոր կարդացիր. «Գիշերային տեսիլքում տեսնում էի, որ, ահա, երկնքի ամպերի միջից գալիս էր մեկը մարդու Որդու նման և հասնում Ծերունուն: Նա բերվեց Նրա առջև: Նրան տրվեց իշխանություն, պատիվ և արքայություն: Բոլոր ազգերը, ժողովուրդներն ու լեզուները պիտի ծառայեն Նրան: Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնի, և Նրա թագավորությունը չի կործանվի» (Դան., է 13-14): Այս ամենը պահպանիր և հավատա, իսկ հերետիկոսական մոլորություններից հեռու մնա, քանզի դու պարզ ու հստակ լսեցիր Աստծու հավիտենական թագավորության մասին:

28. Դու նման վկայություն ունես նաև այն քարի մեկնության մեջ, որ լեռից պոկվել է առանց մարդկային ձեռքի օգնության: Եվ այդ քարը բացահայտում է Քրիստոսի մարդկային ծագումը: «Եվ նրա թագավորությունը ուրիշ ազգի չի մնալու» (Դան., Բ 44): Դավիթը նույնպես ասել է.

«Քո գահը հավիտյանս հավիտենից է, Աստված» (Սաղմ., 44, 7: Եբր. Ա 8): Մեկ ուրիշ տեղ դարձյալ. «Ի սկզբանե, Տեր, երկրի հիմքերը հաստատեցիր» (Սաղմ., ձԱ 26: Եբր. Ա 10) և այլն: «Երկինքը կանցնի, բայց դու կմնաս նույնը և անփոփոխ» (Սաղմ., ձԱ 27: Եբր., Ա 11) և այլն: «Բայց դու նույնը կմնաս, և քո տարիները չեն անցնի» (Սաղմ., ձԱ 28: Եբր., Ա 12): Այս ամենը Պողոսը մեկնաբանեց Քրիստոսով և վերագրեց Որդուն:

29. Ուզո՞ւմ ես իմանալ, թե ինչի՞ց այսպիսի մոլեգնուլթյան հասան հակառակը պնդողները: Նրանք սխալ կարգացին առաքյալի այն խոսքը, թե «Նա պետք է թագավորի մինչև որ բոլոր թշնամիներին դնի իր ոտքերի տակ» (Ա. Կորնթ., ԺԵ 25): Նրանք ասում են. Ուրեմն, եթե թշնամիները դրվեն Նրա ոտքերի տակ, ինքը ևս այնուհետ պիտի չթագավորի: Նրանք այդ սխալ են ասում: Քանզի Նա, Ով, թշնամու դեմ պայքարելով, թագավոր է հաղթելուց առաջ, մի՞թե թագավոր չի լինելու հաղթանակից հետո:

30. Նրանք հանդգնեցին ասել նաև, թե զրված է, որ. «Երբ ամեն ինչ Նրան հնազանդ լինի, այն ժամանակ և Ինքը՝ Որդին կհնազանդվի Նրան, Ով ամեն ինչ հնազանդեցրեց Նրան» (Ա. Կորնթ., ԺԵ 18), և այդ ցույց է տալիս, թե Որդին պիտի լուծվի Հոր մեջ և պիտի կորսվի: Դուք՝ ամենազգրախոս հերետիկոսներդ, գերազանցում եք բոլորին: Դուք, որ Քրիստոսի ստեղծածներն եք, պիտի գոյուլթյուն ունենաք, իսկ Քրիստոս, «որի շնորհիվ ամեն ինչ եղավ, և առանց Նրա ոչինչ չի եղել» (Հովհ., Ա 3), պիտի կորչի՞: Հայհոյանք է ձեր խոսքը: Ինչպե՞ս, ի՞նչ կերպ ամեն ինչ պիտի հնազանդվի Նրան: Պիտի պահպանե՞ն իրենց գոյուլթյունը, թե՞ պիտի ոչնչանան: Ուրեմն, բոլորը պիտի հնազանդվեն Որդուն և պիտի մնան, իսկ Որդին, հնազանդվելով Հորը, պիտի ոչնչանա՞: Կհնազանդվի նշանա-

կում է ոչ թե այն, որ Նա այնժամ պիտի ենթարկվի Հորը - քանզի Նա միշտ Նրան հաճելի եղածն է կատարել - այլ այդ ժամանակ ևս Նրան պիտի հնազանդվի: Դա ոչ թե պարտադիր ենթակայուլթյուն է, այլ՝ ինքնակամ: Քանզի Նա ստրուկ չէ, որպեսզի պարտադիր հնազանդվի, այլ Որդին է, որպեսզի սիրահոժար հնազանդվի և կատարի Հոր կամքը:

31. Այժմ տեսնեք, թե նրանք արդյո՞ք ճիշտ են բացատրում «մինչև որ» արտահայտուլթյունը: Ես կփորձեմ հերքել նրանց մոլորուլթյունը: Նրանք համարձակվեցին ասել, թե «մինչև որ բոլոր թշնամիներին դնի իր ոտքերի տակ» արտահայտուլթյունը ցույց է տալիս Նրա իշխանուլթյան վերջը: Նրանք հանդգնեցին Քրիստոսի հավիտենական թագավորուլթյունը սահմանափակել և իրենց քարոզածով ընդհատել Նրա անընդհատ իշխանուլթյունը: Կարդանք այդ բառը առաքյալի գործերում: «Սակայն մահը թագավորեց Ադամից մինչև Մովսես» (Հռոմ., Ե 14): Այսինքն, մինչ այդ մեռնում էին, իսկ Մովսեսից հետո ոչ ոք չմեռավ, կամ նրա օրենքից հետո մարդկանց համար մահ չկա՞ր: Տեսնո՞ւմ ես, որ «մինչև» բառը չի բնորոշում ժամանակը, և այդ նկատի ունի Պողոսը: Ինչպես գիտենք, Մովսեսը արդար և հիանալի մարդ էր: Այդուհանդերձ Ադամի համար եղած մահվան վճիռը հասավ նաև Մովսեսին և նրան հաջորդած սերունդներին, թեև նրանք չէին մեղանչել՝ ինչպես Ադամն էր մեղանչել, խախտելով ծառից չուտելու հրամանը:

32. Վերցնեք նաև մեկ ուրիշ նման ընթերցված: «Եվ մինչև այսօր, երբ Մովսես են կարդում, նույն քողը մնում է նրանց սրտերի վրա» (Բ Կորնթ., Գ 15): Արդյո՞ք «մինչև օրս» նշանակում է մինչև Պողոսի ժամանակը: Արդյո՞ք չի նշանակում ցարդ և մինչև աշխարհի վերջը: Եթե Պողոսն

ասում է կորնթացիներին՝ «Քանզի Քրիստոսի Ավետարանով մենք առաջինը հասանք ձեզ մոտ: Եվ սահմանված չափից դուրս չենք պարծենում ուրիշի աշխատանքով. այլ հույս ունենք, որ ձեր հավատի առումով, ըստ մեր գործի չափի, առավել կմեծանանք ձեզնով՝ ձեզնից այն կողմ էլ ավետարանելու համար» (Բ Կորնթ., Ժ 14-16): Հստակ տեսնում ես, որ «մինչև» չի նշանակում «վերջ», այլ նշանակում է, թե կա նաև շարունակություն: Ուրեմն, ինչպե՞ս պիտի հասկանալ «մինչև որ թշնամիներին դնի իր ոտքերի տակ» խոսքը: Այնպես, ինչպես մեկ ուրիշ տեղ ևս Պողոսը ասում է. «Եվ հորդորեցեք միմյանց ամեն օր, քանի այդ Այսօրը դեռ առջևում է», այսինքն՝ մշտապես: Ինչպես որ պետք է խոսել Քրիստոսի թագավորության օրվա սկզբի մասին, այդպես էլ մի՛ հանդուրժեք, եթե որևէ մեկը խոսի այդ թագավորության վախճանի մասին: Քանի որ Գիրքը մեզ վստահեցնում է, թե «Նրա թագավորությունը հավիտենական թագավորություն է» (Դան., Դ 3):

33. Սուրբ Գրքից թեև ուրիշ վկայություններ ևս ունեմ Քրիստոսի թագավորության հավիտենականության մասին, ես բավական եմ համարում իմ նշածները, քանզի այսօր շատ խոսեցինք: Բայց դու, որ ինձ լսում ես, միայն նրան երկրպագիր իբրև թագավորի՝ մերժելով որևէ հերետիկոսական մոլորություն: Եթե Աստծու Շնորհը մեզ պարզեի, հավատին վերաբերող մնացյալ բաները ևս աստիճանաբար ձեզ կբացատրեմ: Թող բոլորի Աստվածը՝ ձեզ բոլորիդ [լինի] կարող և լուսավորյալ, որպեսզի ձեր մտքում պահեք աշխարհի վախճանի նշանները և անպարտելի մնաք հակաքրիստոսին: Այժմ դու գիտես, այն նշանները, որոնք պիտի ցույց տան մոլորեցնողի գալուստը: Դու ունես նաև նշանները ճշմարիտ Քրիստոսի, որը պիտի բացահայտ իջնի երկնքից: Դու խուսափիր կեղծից, իսկ ճշմարտին սպասիր: Դու գիտես, թե ինչպես դատաստանի ժամա-

նակ պիտի գտնվես Հոր աջ կողմում: Պահիր այն ամենը, ինչ քեզ վստահել եմ Քրիստոսի մասին, աչքի ընկիր՝ աստվածահաճո գործեր կատարելով, որպեսզի ժառանգես երկնքի թագավորությունը և համարձակ կանգնես Դատավորի առաջ, Ում միջոցով և Ում հետ փառքը պատկանում է Աստծուն և Սուրբ Հոգուն հավիտյանս հավիտենից: Ամեն:



## ՈՒՍՈՒՑՈՒՄ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԳ

### Արված Երուսաղեմում՝ «Եվ մի Սուրբ Հոգու՛ն՝ Մխիթարիչին, որ խոսեց մարգարեների մեջ» հոդվածի մասին

Ընթերցվածը Կորնթացիներին ուղղված առաջին թղթից է. «Գալով հոգևոր շնորհներիս, եղբայրներ, չեմ ուզում, որ չգիտեանաք» (Ա Կորնթ., ԺԲ 1) և այլն: «Թեև կամ շնորհների զանազանություններ, բայց պարզևոր Հոգին նույնն է» (Ա Կորնթ. ԺԲ 4):

1. Իրոք, Սուրբ Հոգու ներշնչման և Շնորհի միջոցով կարող ենք զրուցել Սուրբ Հոգու մասին: Ոչ այն պատճառով, որ արժանի խոսքեր ասենք, - քանզի այդ անկարելի է, - այլ որպեսզի ապահով զրուցենք և առանց մոլորվելու շարադրենք այն ամենը, ինչ այդ մասին սովորեցնում են Գրքերը: Քանզի այդ մասին մեծ վախ կա, քանի որ այդ նշված է նաև Ավետարաններում, Քրիստոսի խոսքերով. «Ով ասի Սուրբ Հոգու դեմ, նրան չպիտի ներվի ո՛չ այս աշխարհում և ո՛չ էլ հանդերձյալում» (Մատթ., ԺԲ 32): Եվ հաճախ վախ է առաջանում, որ չլինի թե անգիտությունից և կամ կարծեցյալ բարեպաշտության պատճառով մարդ Սուրբ Հոգու համար որևէ անպատշաճ բան ասի և դատապարտվի: Ողջերի և մեռյալների դատավոր Հիսուս Քրիստոսն ասել է, որ այդ մարդու համար թողություն չկա: Ուստի, եթե մարդ սխալվի, ի՞նչ հույս կարող է ունենալ իր փրկության համար:

2. Ուստի, թող Հիսուս Քրիստոս ինձ շնորհի ձեռն առաջ խոսել՝ ոչինչ պակաս չթողնելով, իսկ ձեզ շնորհի խելա-

մտություններ լսել: Քանզի խելամտություն պետք է ոչ միայն ասողներին, այլև լսողներին, որպեսզի չլինի, թե մի բան լսեն և մտքում մեկ ուրիշ բան հասկանան: Ուստի ես Սուրբ Հոգու մասին կասեմ այն, ինչ ավանդվել է մեզ գրավոր: Իսկ եթե ինչ-որ բան գրված չէ, ապա այդ մասին մեր միտքը չչարչրկենք: Գրքերում խոսել է Ինքը՝ Սուրբ Հոգին: Նա Իր մասին ասել է այն, ինչ Ինքը կամեցել է, և կամ այն, ինչ մենք կարող էինք հասկանալ: Ուրեմն, մենք խոսենք Նրա ասածների մասին, իսկ այն, ինչի մասին Նա լուր է, մենք անգամ չենք համարձակվում խոսել:

3. Ուստի Սուրբ Հոգին մեկն է՝ Մխիթարիչը: Եվ ինչպես որ Աստված մեկն է՝ Հայրը, և երկրորդ Հայր չկա, կամ մեկն է Միածին Որդին և Աստուծո խոսքը, և Նա չունի եղբայր, այդպես է նաև Սուրբ Հոգին. միայն մեկն է, և չկա Նրան երկրորդ հավասարազոր հոգի: Ուրեմն, Սուրբ Հոգին մեծագույն ուժ է, ինչ որ աստվածային և անքննելի: Անշուշտ Նա ապրում է և բանական է, և սրբացնում է այն ամենը, որ Աստված ստեղծել է Քրիստոսի միջոցով: Նա է արդարների հոգիները լուսավորում: Նա է խոսում մարգարեների, առաքյալների և Նոր Կտակարանի միջոցով: Թող մեզ համար ատելի լինեն նրանք, ովքեր համարձակվում են բաժանել և տարբերել Սուրբ Հոգու ներգործությունը Հոր և Որդու ներգործությունից: Մեկն է Աստված Հայրը, Հին և Նոր Կտակարանների Տերը, և մեկ է Տեր Հիսուս Քրիստոսը, Նա, Ում մասին մարգարեացան Հին Կտակարանում: Եվ մեկն է Սուրբ Հոգին, որ մարգարեների միջոցով հոգեկեց Քրիստոսի մասին, և երբ Քրիստոս հայտնվեց, Նա իջավ և մեզ վկայեց Նրա մասին:

4. Ուրեմն, ոչ ոք թող չբաժանի Հին Կտակարանը Նորից: Ոչ ոք թող չասի, թե այլ է Հոգին այնտեղ, այլ է այստեղ: Դրան է դեմ առնում Սուրբ Հոգին, որ պաշտվում է



Հոր և Որդու հետ, և երբ կատարվում է սուրբ մկրտությունը, ներառնվում է Սուրբ Երրորդություն մեջ: Քանզի Աստծու Միածին Որդին հստակ ասաց առաքյալներին. «Գնացեք աշակերտ դարձրեք բոլոր ազգերին: Նրանց մկրտեցեք Հոր և Սուրբ Հոգու անունով» (Մատթ., ԻԸ 19):

Մեր հույսը Հոր, Որդու և Սուրբ Հոգու վրա է: Մենք ոչ թե երեք Աստվածների ենք հավատք խոստովանում - թող փակվեն մարկիոնականների բերանները - այլ Սուրբ Հոգու շնորհիվ մեկ Որդու միջոցով վկայում և քարոզում ենք միակ Աստծուն: Հավատքն անբաժանելի է, անբաժան է պաշտամունքը, և մենք չենք բաժանում Սուրբ Երրորդությունը, ինչպես ոմանք, ոչ էլ, Սաբելլիոսի նման փորձում չփոթել նրանց. այլ բարեպաշտությունը ընդունում ենք մեկ Հոր, որ մեզ մոտ ուղարկեց Փրկիչ Որդուն. ընդունում ենք մեկ Որդուն, որը խոստացել է մեզ մոտ ուղարկել Հոր կողմից Մխիթարիչ Սուրբ Հոգուն, ընդունում ենք Սուրբ Հոգուն, որ խոսեց մարգարեների միջոցով և Պենտեկոստի օրը կրակե լեզուների տեսքով իջավ առաքյալների վրա այստեղ՝ Երուսաղեմում, առաքյալների վերնատանը, այստեղ մոտիկ: Այդ բոլոր շնորհները մեզ մոտ են: Քրիստոսն այստեղ իջավ երկնքից: Սուրբ Հոգին ևս այստեղ իջավ երկնքից: Ինչպես որ խիստ վայել է Քրիստոսի և Գողգոթայի մասին խոսել այստեղ՝ Գողգոթայում, այնպես և վայել է Սուրբ Հոգու վերաբերյալ խոսենք առաքյալների այս վերնատան մասին: Քանզի այստեղ Խաչվածի փառքին մասնակից է նաև Նա, Ով իջավ այնտեղ. քանզի նրանց պաշտամունքը անբաժանելի է:

5. Ուրեմն, ուզում ենք մի քանի բան ասել Սուրբ Հոգու մասին, ոչ թե ճշտորեն նկարագրենք նրա էությունը - քանզի այդ անելը անկարելի է - այլ շարադրենք ոմանց տարբեր շեղումները, որպեսզի անգիտություն պատճառով մենք ևս չընկնենք նրանց մոլորությունների մեջ, այլ ընթանանք

միակ ճիշտ՝ արքունի ճանապարհով: Եվ եթե ապահովության համար այժմ որևէ բան հիշատակենք այդ հերձվածներից, թող այն չըջվի նրանց գլխին, ու թե՛ մենք՝ ասողներս, և թե դուք՝ լսողներդ, լինենք անմեղ և անմասնակից:

6. Հերետիկոսները, լինելով ամեն ինչում անբարեպաշտ, սրեցին իրենց լեզուն նաև Սուրբ Հոգու դեմ և համարձակվեցին այնպիսի բաներ ասել, որ դրի է առել մեկնիչ Իրինեսոսը իր «Ընդդեմ հերձվածների» գրքում: Նրանցից ոմանք ևս համարձակվեցին ասել, որ իրենք են Սուրբ Հոգին: Նրանց թվում առաջինն է Սիմոն մոզբ, որ հիշվում է «Գործք առաքելոցում» (Գործք, Ը 9): Քանզի նա, առաքյալների կողմից եկեղեցուց վտարվելով, սկսեց այդպես քարոզել: Իսկ գնոստիկները կոչվողները ուրիշ բաներ ևս բարբառեցին Հոգու դեմ. իսկ անօրեն վալենտինականները՝ դարձյալ ուրիշ բաներ: Իսկ անաստված Մանեն համարձակվեց ասել, թե ինքն է Քրիստոսի ուղարկած մխիթարիչը: Ուրիշներ նաև ասացին, որ այլ մարգարեների մոտ Հոգին այլ է Նոր Կտակարանում: Մեծ է նրանց մոլորությունը, ավելի ճիշտ՝ զազրախոսությունը: Ատիր այդպիսիների և հեռու մնա Սուրբ Հոգուն զազրախոսողներից, որոնք թողություն չեն ունենալու: Ի՞նչ ընդհանուր բան դու կարող ես ունենալ այդ անվերադարձ դատապարտյալների հետ, մանավանդ այժմ, երբ դու պետք է մկրտվես Սուրբ Հոգով: Եթե նա, ով միանում է գողին և հետևում է նրան, մեղավոր է և պիտի պատժվի, ապա մի՞թե նա, ով ժխտում է կամ զազրախոսում ու հայհոյում է Սուրբ Հոգուն, կարող է փրկություն հույս ունենալ:

7. Ատենք նաև մարկիոնականներին, որոնք Հին Կտակարանի խոսքերը անջատում են Նոր Կտակարանից: Առաջինը՝ ամենաանաստված Մարկիոնը: Առաջինը նա է, որ խոսեց երեք Աստվածների մասին: Նա, տեսնելով, որ Նոր

Կտակարանում կան մարգարեների վկայություններ Քրիստոսի մասին, հանեց Հին Կտակարանից այդ հատվածները, որպեսզի թագավոր Հիսուս Քրիստոսը մնա առանց մարգարեների այդ վկայությունների: Ատենք նաև վերոհիշյալ գնոստիկներին, որոնք միայն անունով են գնոստիկ, իսկ իրականում անգիտություն մը լցված, քանի որ համարձակվեցին այդպես զգրախոսել Սուրբ Հոգու մասին, ինչը ես հեմ համարձակվում հիշատակել:

8. Ատենք նաև փոյուզների հետևորդներին և չարյաց գլխավոր Մոնտանոսին և նրա երկու իբր մարգարեուհիներ Մաքսիմիլյային և Պրիսկիլլային: Քանզի այս խելագար ու մոլագար Մոնտանոսը այդ ամենը չէր ասի, եթե իրոք մոլագար չլիներ: Համարձակվեց ասել, թե ինքն է Սուրբ Հոգին. այդ թշվառագույնը՝ ամեն տեսակ կեղտերով և անօրենություններով լցվածը: Բավական է, որ օգտագործում եմ նրա չարագործությունը և թշվառությունը ցույց տվող բառեր, առանց դրանք նկարագրելու, խնայելով այստեղ ներկա գտնվող կանանց համեստությունը:

Եվ նա, Փոյուզգիայի Պեպուզա փոքր քաղաքը գրավելով, ստից այն կոչեց Երուսաղեմ և, ինչ-որ կանանց դժբախտ երեխաներին մորթելով և կտրատելով, որպես կերակուր տվեց, իբր իրենց կատարած խորհրդավոր ծեսերի պատճառաբանություն: (Այդ պատճառով էլ վերջին հալածանքների ժամանակ մեզ համարում էին կասկածելի և մեղադրում նման գոհաբերությունների համար. որովհետև Մոնտանյանները, անշուշտ սուտ կերպով, մեզ նման կոչվում են քրիստոնյաներ): Եվ համարձակվեց իրեն կոչել սուրբ հոգի նա, ով ընկղմված էր ամեն տեսակ անօրենություն և անմարդկայնություն մեջ և աններելի կերպով դատապարտված:

9. Ինչպես ասվեց, պայքարը շարունակեց անաստված

Մանեսը: Նա, որ խտացրեց բոլոր հերձվածների չարիքները: Նա, քանի որ կործանման կեղտաջրի վերջին փոսն էր ու դժոխքի կոյուղին, ի մի հավաքեց բոլոր հերետիկոսների հայհոյանքները և ստեղծեց ու քարոզեց նոր մոլորություն: Նա ասաց, որ ինքն է այն մխիթարիչը, ում Քրիստոս խոստացել էր ուղարկել:

Բայց Փրկիչը, այդ խոստանալով առաքյալներին, ասաց. «Իսկ դուք նստեցեք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ երկնքից գորություն մը զգեստավորվեք» (Ղուկ., ԻԴ 49): Ուրեմն ի՞նչ: Մի՞թե առաքյալները, որոնք վախճանվել են երկու հարյուր տարի առաջ, սպասում էին Մանեսին՝ այդ գորություն մը զգեստավորվելու համար: Եվ արդյո՞ք որևէ մեկը կհամարձակվի ասել, թե նրանք այդ ժամանակից լցված չէին Սուրբ Հոգով: Մի՞թե գրված չէ, որ «այն ժամանակ ձեռքները դրեցին նրա վրա և նրանք Սուրբ Հոգին ստացան» (Գործք, Ը 17): Մի՞թե այդ չէր կատարվել նախքան Մանեսը և շատ տարիներ առաջ, երբ Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգին իջել էր:

10. Մի՞թե չմեղադրվեց մոգ Սիմոնը այն պատճառով, որ գալով առաքյալների մոտ՝ ասաց. «Ինձ էլ տվեք այս իշխանությունը, որպեսզի ում վրա, որ ձեռքս դնեմ, Սուրբ Հոգին ստանա» (Գործք, Ը 19): Նա չասաց՝ ինձ էլ կարողություն տվեք հաղորդակցվելու Սուրբ Հոգուն, այլ ուզեց իշխանություն, որպեսզի այլոց վաճառի անվաճառելին, ինչը երբեք չէր ստանալու: Եվ արծաթ առաջարկեց ընչազուրկ առաքյալներին, մինչդեռ տեսնում էր բոլոր նրանց, որոնք իրենց վաճառածի փոխարժեքը բերում և դնում էին առաքյալների ոտքերի առաջ, նա չմտածեց, որ առաքյալները, որոնք արհամարհում էին կերակրի համար իրենց ոտքերի առաջ դրված հարստությունը, չէին կարող դրամի փոխարեն տալ կատարողական իշխանություն Սուրբ Հոգու նկատմամբ: Ուստի նրանք ի՞նչ ասացին Սիմոնին: «Քո

արծաթը թող քեզ հետ կորչի, քանի որ կարծեցիր, թե Աստծու պարգևները կարելի է փողով ստանալ» (Գործք, Ը 20): Դու երկրորդ Հուդան ես. դու փողերով ուզեցիր գնել Հոգու շնորհը:

Ուրեմն, եթե Սիմոնը, որ փողով ուզեց իշխանություն ստանալ, արժանի է դժոխքի, ապա Մանեսը, որ ասում էր, թե ինքն է Սուրբ Հոգին, ինչքա՞ն ամբարիշտ է: Ատենք ատելություն արժանիներին: Խորշենք նրանցից, ումից խորշում է Աստված: Մենք ևս մեր ամբողջ ուժով և համարձակ գոչենք Աստծուն բոլոր հերետիկոսների մասին: «Մի՞թե քեզ ատողներին չեմ ատել և քո թշնամիների պատճառով չե՞մ մաշվել» (Սաղմ., ձԼԸ 21): Կա նաև բարի թշնամանք, ինչպես գրված է. « Թշնամություն պիտի դնեմ քո և այդ կնոջ միջև, քո սերնդի և նրա սերնդի միջև» (Ծննդ., Գ 15): Քանզի օձի հանդեպ բարեկամությունը թշնամանք է Աստծու դեմ և մահ:

11. Եկեղեցուց վտարվածների մասին այս ամենը ձեզ պիտի ասվեր: Այժմ վերադառնանք սուրբ գործերին և ջուր խմենք մեր անոթներից, սուրբ հայրերից և մեր աղբյուրների ջրերից: Խմենք կենարար ջրից, որը խմողին տանում է դեպի հավիտենական կյանք: Այդ ասել է Փրկիչը Հոգու մասին, որը պետք է ստանային Նրան հավատացողները: Լսիր, թե ինչ է ասում. « Ով ինձ հավատում է, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն» (Հովհ., է 38): Ոչ թե նյութական ջրերի, որով պարզապես ջրում են հողը, որից աճում են տատասկ ու ծառեր, այլ հոգիները լուսավորող ջրերի: Մեկ ուրիշ անգամ ասում է. «Իսկ այն ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մեջ կլինի բխող ջրի աղբյուրը հավիտենական կյանքի համար» (Հովհ., Դ 14): Այդ նորոգող կենդանի ջուր է, որը բխում է միայն արժանավորների համար:

12. Եվ ինչո՞ւ հոգևոր Ծնորհը անվանեց ջուր: Քանզի ամեն ինչի բաղադրիչը ջուրն է: Որովհետև ջուրը կենարար է և կենսատու: Որովհետև անձրևաջուրը երկնքից է իջնում: Նա իջնում է միակերպ, բայց նրա ներգործությունը բազմակերպ է: Քանզի մեկ աղբյուր է ոռոգում գրախտը, և ամբողջ աշխարհում իջնում է միևնույն անձրևը: Նա կդառնա շուշանի մեջ սպիտակ, վարդի մեջ՝ կարմիր, ծիրանագույն՝ մանուշակի և հակինթի մեջ և տարբեր ու բազմազան յուրաքանչյուր տեսակի համար, արմավի համար այն տարբեր է, տարբեր է որթատունկի համար, տարբեր յուրաքանչյուր տեսակի համար, թեև միշտ միատեսակ է թափվում երկնքից՝ առանց կորցնելու իր էությունը:

Այսպես և Սուրբ Հոգին: Թեև մեկն է և միաբնույթ ու անբաժանելի, յուրաքանչյուրին բաժանում է Ծնորհը՝ ինչպես ինքը կամենում է: Եվ ինչպես որ չոր ճյուղը ոռոգվելով ծիրեր է արձակում, այդպես էլ մեղավոր հոգին ապաշխարելով արժանանում է Սուրբ Հոգու միջոցով արդարության ծիրեր արձակելու: Թեև միաբնույթ է, Հայր Աստծու կամքով և Քրիստոսի անունով բազում առաքինություններ է առաջացնում: Մեկին լեզվի միջոցով իմաստություն է մղում, մյուսի հոգին լուսավորում է մարգարեանալու համար, մյուսին կարողություն է շնորհում դուրս բերել դեերին, մյուսին՝ Սուրբ Գրքերը մեկնելու կարողություն, նպաստում է մեկի ողջամտությունը, մյուսին սովորեցնում է ողորմություն, մյուսին՝ ծոմապահություն ու ճգնություն: Մեկին վարժեցնում է արհամարհել մարմնականը, մյուսին պատրաստում է վկայության, իսկ ուրիշներին էլ պարգևում է այլ առաքինություններ: Այդ մասին գրված է. «Բայց յուրաքանչյուրին տրված է հոգու հայտնություն՝ յուրաքանչյուրի օգուտի համար: Մեկին հոգուց տրված է իմաստության խոսք, մյուսին՝ գիտության խոսք նույն հոգուց, մյուսին՝ հավատ՝ նույն հոգով, մյուսին՝ բժշկության շնորհ՝ նույն հոգով, մյուսին՝ զորավոր գործերի կարո-

ղուծյուններ, մյուսին՝ մարգարեություն, մյուսին՝ հոգիները զանազանելու շնորհ, մյուսին՝ տեսակ-տեսակ լեզուներով խոսելու շնորհ, մյուսին՝ լեզուների թարգմանություն շնորհ: Բայց այս ամենը միևնույն հոգին է առաջացնում և բաժանում յուրաքանչյուրին՝ ինչպես որ կամենում է» (Ա Կորնթ., ԺԲ 7-11):

13. Բայց քանի որ հոգու մասին (հոգի, ոգի, շունչ) պարզապես շատ և տարբեր առումներով գրված է Սուրբ Գրքերի մեջ, ուստի վտանգ կա, որ անգիտություն պատճառով մարդ սխալվի և շփոթվի, չիմանալով, թե ի՞նչ հոգու մասին է գրվածը: Հետևաբար, լավ կլինի, որ մենք ապահովենք մեզ և սովորենք, թե Գիրքը ի՞նչն է անվանում Սուրբ Հոգի: Ծիշտ ինչպես որ օծյալ կոչվել են Ահարոնը (Ղևտ., Դ 5) և Դավիթը (Սաղմ., ՃԳԱ 10), և՛ Սավուղը (Ա Թագ. ԻԴ 7) և՛ ուրիշներ, բայց միայն մեկն է ճշմարիտ Օծյալը (Քրիստոսը), այնպես էլ, քանի որ «հոգի» բառով կոչվում են շատ բաներ, լավ է տեսնենք և իմանանք, թե առանձնապես ի՞նչ է Հոգին Սուրբ կոչվածը ճշմարտապես: Մեր ոգին կոչվում է հոգի: Հրեշտակը ևս կոչվում է հոգի, և փչող քամին կոչվում է շունչ: Որևէ կատարյալ և ամբողջացված առաքիլություն նույնպես կոչվում է հոգի, ոգի: Անմաքուր գործը նույնպես կոչվում է հոգի, և հակադիր դեռ նույնպես կոչվում է հոգի: Ուրեմն, զգուշացիր, որ երբեք այս ամենը լսելով՝ նույնանուն «հոգի» բառի պատճառով դրանք չշփոթես իրար հետ:

Այսպես, Գիրքը մեր ոգին կոչում է հոգի, երբ սաղմոսում ասում է. «Երբ դուրս գա նրանց հոգին, նրանք կրկին հող կդառնան» (Սաղմ., ՃԽԵ 4): Եվ նույն հոգու մասին ասում է դարձյալ. «Մարդու մեջ հաստատում է նրա հոգին» (Ձաք., ԺԲ 1): Հրեշտակների մասին սաղմոսներում ասում է «Նա քամիները հրեշտակներ դարձրեց և կիզիչ հուրը՝ սպասավորներ» (Ձաք., ՃԳ 4): Իսկ քամու մասին ասում է.

«Սաստիկ հողմով նա պիտի փչրի նավերը Թարսիսի» (Սաղմ., ԽԷ 8): Եվ՝ «ինչպես որ ծառերը անտառում հողմից շարժվում են» (Եսայի, Է 2): Եվ՝ «Հուր և կարկուտ, ձյուն և սառնամանիք, հողմ և մրրիկ» (Սաղմ., ՃԽԸ 8): Բարի ուսմունքի մասին Ինքը Տերն ասել է. «Այն խոսքը, որ ես ձեզ ասացի, հոգի է և կյանք է» (Հովհ., Զ 65), «հոգեկան» ասելու փոխարեն: Բայց Սուրբ Հոգուն հնարավոր չէ լեզվով արտահայտել: Այն Ինքը կյանքն է, Նա է, որ մեզ ուժ է տալիս խոսելու պարզ և իմաստուն, քանի որ Ինքն է խոսողը:

14. Եվ ուզո՞ւմ ես իմանալ, թե նա խոսում և ասում է: Փրկիպոսը հրեշտակի հայտնությունը իջավ դեպի Գազա տանող ճանապարհը այն պահին, երբ գալիս էր ներքինին: «Եվ Սուրբ Հոգին Փրկիպոսին ասաց. Առաջացիր և այդ կառքի մոտ գնա» (Հովհ., Ը 29): Տեսնո՞ւմ ես, որ Սուրբ Հոգին խոսում է նրան, ով կարողանում է լսել: Եզեկիելը ևս նման մի բան է ասում. «Տիրոջ հոգին իջավ վրաս ու ասաց ինձ. Այսպես է ասում Տերը» (Եզեկ., ԺԱ 25): Եվ դարձյալ՝ «Սուրբ Հոգին ասաց Անտիոքում գտնվող առաքյալներին. Բառնաբասին ու Սողոսին առանձնացրեք ինձ համար, որ անեն այն գործը, որին ես դրանց կոչել եմ» (Գործք, ԺԳ 2): Տեսնո՞ւմ ես կենդանի հոգին, որն ընտրում է, հրավիրում և իշխանությունը ուղարկում:

Նաև Պողոսն ասում էր. «Միայն թե Սուրբ Հոգին ամեն քաղաքի մեջ ինձ վկայում է ու ասում. «Կապանքներ ու նեղուծյուններ են սպասում քեզ» ( Գործք, Ի 23): Եվ ահա Եկեղեցու այս սրբագործը, սատարը և ուսուցիչը, Միսիթարի Սուրբ Հոգին, Ում մասին Փրկիչն ասել է՝ «Նա ձեզ ամեն բան կուսուցանի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ ես ասացի ձեզ» (Հովհ. ԺԴ 26) և չի ասել միայն ձեզ կուսուցանի, այլև «կհիշեցնի այն ամենը, ինչ ասացի ձեզ»: Քանզի այլ չեն Քրիստոսի ասածները և այլ՝ Սուրբ Հոգու ա-

սածները, այլ դրանք միևնույնն են: Եվ Պողոսին կանխասուում էր այն, ինչ պետք է կատարվեր ապագայում, որպեսզի նա առավել ուրախ լիներ՝ ապագան կանխատեսելով: Այս ամենը ձեզ ասացի, որպեսզի հասկանաք այն, ինչ ասվել է. «Այն խոսքերը, որ ես ձեզ ասում եմ, հոգի է և կյանք» (Հովհ., 2 64): Որպեսզի այն չհամարես պարզապես շրթներինց ելած խոսք, այլ՝ բարի ուսմունք:

15. Այժմ, ինչպես ասել ենք, այստեղ հոգի կոչվում է նաև մեղքը, մեղսագործությունը, բայց տարբեր և բոլորովին հակադիր իմաստով, ինչպես երբ ասում է. «Պոռնկուլթյան հոգին մոլորեցրեց նրանց» (Օսսե, 7 12): Հոգի կոչվում է նաև պիղծ հոգին (հմմտ.Ղուկ., ԺԱ 24), դեռ, բայց «պիղծ» մակդերի հավելումով: Ամեն անգամ երբ մեջ է բերվում «հոգի» բառը, նրան կցում ենք մեկ այլ բնութագրական բառ՝ արտահայտելու համար այն հատուկ նշանակությունը, որով տվյալ դեպքում օգտագործվում է «հոգի» բառը: Եթե այն վերաբերում է մարդուն, ավելացնում ենք՝ «մարդու», եթե վերաբերում է մրրիկին, ասում ենք՝ «մրրիկի շունչ», եթե մեղքին, ապա՝ պոռնկուլթյան հոգի, եթե դեերին, ապա՝ պիղծ հոգի, որպեսզի հասկանանք, թե ամեն անգամ խոսքը ինչի մասին է, և չկարծենք, թե խոսքը վերաբերում է Սուրբ Հոգուն: Քափ լիցի: Քանզի «հոգի» հասկացությունը ընդհանրական է և այն ամենը, ինչ կարծր նյութ չէ, անվանում ենք «հոգի»: Ուրեմն, քանի որ դեերը կարծր մարմին չունեն, նրանց անվանում ենք հոգիներ:

Բայց կա մի մեծ տարբերություն: Երբ պիղծ դեռ գալիս է մարդու հոգու վրա - Աստված թող ազատի այստեղ լսողների և բացակաների հոգիները նրանցից - գալիս է արյունարբու գայլի նման՝ պատրաստ հոշոտելու որսը՝ ոչխարին: Սահմակեցնող է նրա ներկայությունը, մթազնում է մարդու միտքը: Նրա հարձակումը անարդար է և հափշտակումը՝ այլոց սեփականության հափշտակում: Նա, որպես

սեփական, օգտագործում է ուրիշի մարմինը և ուրիշի գործիքը: Կանգնածին տապալում է, քանզի երկնքից ընկածին նա հարազատ է (հմմտ.Ղուկ., Ժ 18): Աղավաղում է մարդու լեզուն, ծուռում նրա շուրթերը: Նրա բերանից խոսքի փոխարեն փրփուր է դուրս գալիս: Մթազնում է մարդը: Նրա աչքերը բաց են լինում, բայց հոգին նրանցով չի տեսնում: Թշվառը ահազդու ցնցվում է՝ արդեն մահվան դիմագրավելով: Դեերը, իրոք, մարդկանց թշնամի են, և նրանք մարդկանց վերաբերվում են չարուծյամբ և անողորմ:

16. Այդպիսին չէ Սուրբ Հոգին: Քափ լիցի: Նրա ներկայությունը բարություն է փրկարար: Նախ, որ Նրա ներկայությունը խաղաղ է: Այն զգում ես բուրմունքից: Նրա ներկայությունը շատ թեթև է: Նրա առաջից ճառագում են լույսի և իմացություն ճառագայթներ: Նա գալիս է անեղծ հովանավորի զգացմունքով: Քանզի Նա գալիս է՝ փրկելու և բժշկելու, ուսուցանելու, իմաստնացնելու, օգնելու, մխիթարելու, լուսավորելու նախ՝ նրան, ով իրեն ընդունում է և հետո՝ նրա միջոցով, նաև ուրիշներին: Ինչպես որ երբ մեկը, նախապես գտնվելով մութի մեջ, հետո, հանկարծ տեսնելով արևը, լուսավորվում են նրա մարմնական աչքերը, և պարզ տեսնում է այն ամենը, ինչ նախապես հստակ չէր տեսնում, այդպես և նա, ով արժանանում է Հոգին Սուրբը ընդունելու, լուսավորվում է հոգում, տեսնում է բաներ, որոնք վեր են մարդկային չափումներից, և որոնք նախկինում չէր տեսել:

Մարմինը երկրի վրա է, և հոգին հայելիանում է և կարող է երկինքը տեսնել: Կտեսնի՝ ինչպես Եզեկիելը նրան, ով նստած է քերովբեների վրա: Կտեսնի՝ ինչպես Դանիելը՝ բյուր բյուրավորների և հազար հազարավորների: Եվ փոքր մարդը կտեսնի աշխարհի սկիզբը և աշխարհի վերջը և աշխարհի միջակա ժամանակը, և թագավորների հաջոր-

դականությունը: Կիմանա այն, ինչ երբեք չէր սովորել: Քանզի ներկա է ճշմարիտ լուսատարը: Մարդն, ասես, փակված է պատերի մեջ, իր մարմնի մեջ, և իմացություն զորությունը հաղորդում է հեռուները, և տեսնում է նաև այլոց կատարները:

17. Պետրոսը ներկա չէր, երբ Անանիան և Սափիրան վաճառում էին կալվածները: Բայց նա իր հոգով այնտեղ էր: «Ինչո՞ւ, - ասաց, - սատանան լցրեց քո սիրտը, որ դու ստեիր Սուրբ Հոգուն» (Գործք, Ե 3): Պետրոսը մեղավոր չէր, վկայող չէր: Որտեղի՞ց իմացավ կատարվածը: «Չէ՞ որ, քանի կար, քոնն էր այն, և վաճառելիս քո տնօրինություն տակ էր: Ինչպե՞ս եղավ, որ քո սրտի մեջ այս բաները դրեցիր» (Գործք, Ե 4): Անգրագետ Պետրոսը Սուրբ Հոգու շնորհիվ իմացավ այն ամենը, ինչ չէին իմացել հելլենների իմաստունները:

Նման մի դեպք կատարվել է նաև Եղիսեեի հետ: Քանզի, մինչդեռ մարգարեն ձրի բժշկեց Նեեմանի բորոտությունը, վարձն ստացավ Գեեզին: Այսինքն, ուրիշի կատարած սխրանքի համար նա վարձ վերցրեց: Նա Նեեմանից արծաթը վերցրեց և թաքցնելով պահեց: Բայց խավարը մութ չէ սրբերի համար: Երբ վերադարձավ Գեեզի մոտ, Եղիսեեն նույնպես հարց տվեց նրան, ինչպես Պետրոսը՝ Անանիային. «Ասա, ինչքանո՞վ վաճառեցիր կալվածքը»: Եղիսեեն նույնպես հարց տվեց նրան՝ «Որտեղի՞ց ես գալիս, Գեեզի» (Դ Թագ., Ե 25): Ոչ այն պատճառով, որ չգիտեր, թե որտեղի՞ց էր գալիս, այլ ողբում էր այդ «որտեղի՞ցը»: Դու խավարից եկար և խավար պիտի գնաս: Դու բորոտի բժշկվելը ծախեցիր, ուստիև պետք է ժառանգես բորոտությունը: Ես հնազանդվեցի պատվիրանին Նրա, Ով ինձ ասաց. «Չրի առաք, ձրի էլ տվեք» (Մատթ., Ժ 8): Իսկ դու ծախեցիր Շնորհը: Այժմ ընդունիր դրա արդյունքը: Իսկ ի՞նչ ասաց նրան Եղիսեեն. «Մի՞թե իմ սիրտը քեզ հետ

չէր» (Դ Թագ., Ե 26): Մարմնում փակված՝ ես այստեղ էի: Բայց Աստուծո ինձ շնորհած հոգին տեսնում էր այն, ինչ կատարվում էր հեռվում, և այլ վայրում տեղի ունեցածը հստակ կերպով ներկայացնում էր ինձ: Տեսնո՞ւմ ես, թե Սուրբ Հոգին ինչպես է լուսավորում ոգուն: Այն ոչ միայն բարելավում է մարդու ընկալունակությունը, այլև նրան հաղորդում է տեղեկություններ, որոնք այլոց համար անմատչելի են:

18. Եսային ապրել էր շուրջ հազար տարի առաջ և Սիրոնը նա իր առաջ տեսնում էր վրանի նման: Քաղաքն այդ ժամանակ կայացել էր և բարեկարգվել շուկաներով և դարձել էր շքեղազարդ: Եվ Միքիան այնպես ասում էր. «Սիրոնը պիտի հերկվի արորով» (Միք., Գ 12). դրանով կանխագուշակում էր այն, ինչ կատարվեց մեր օրերում: Նկատիր նրա մարգարեության ճշգրտությունը: Քանզի ասված է. «Եվ Սիրոնի դուստրը պիտի մնա լքված, ինչպես խրճիթը՝ այգում և ինչպես մրգապահների հյուղակը՝ վարունգի պարտեզում, բերքահավաքից հետո» (Եսայի, Ա 8): Այժմ ևս այդ վայրը ամբողջապես վարունգի բանջարանոց է: Տեսնո՞ւմ ես, թե Սուրբ Հոգին ինչպես է սրբերին լցնում հոգով: Հետևաբար, նույնանուն լինելու պատճառով դու չմոլորվես և այլ բան չկարծես, այլ պահպանիր ճիշտ իմաստը:

19. Հանգիստ նստածդ ժամանակ դու երբեք չե՞ս մտածել անմեղություն և կուսություն մասին: Դաստիարակությունը պատկանում է հոգուն: Չի՞ պատահել արդյոք հաճախ, որ արդեն հարսանեկան սենյակում գտնվող աղջիկը, կուսություն մասին հոգով դաստիարակված լինելով, լքել ու հեռացել է: Արդյոք հաճախ չի՞ պատահել, որ պալատներում ապրած մարդը, Սուրբ Հոգուց դաստիարակվելով, հրաժարվի հարստությունից և փառքից: Չէ՞ որ երիտասարդը շատ անգամ մարմնական գեղեցկության առաջ



փակել է աչքերը և հրաժարվել կրքոտ նայելուց, որով և խոսասփել է ապականությունից: Ուզո՞ւմ ես իմանալ, թե այդ ինչպես պատահեց: Սուրբ Հոգին դաստիարակեց երիտասարդի ոգին: Այնքան առատություն և ազահույթյուն աշխարհում, բայց քրիստոնյաները մնում են անկայք: Ինչո՞ւ: Որովհետև այդ է թելադրում և կամենում Սուրբ Հոգին: Իրապես, ինչքան արժանապատիվ ու բարի է Սուրբ Հոգին: Օրհնությամբ մկրտվում ենք հանուն Հոր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյ:

Մարդը, քանի դեռ իր մարմնի մեջ է, բազում վայրի դեւերի դեմ է կռւում: Շատ անգամ դեւը, որին շատերը մինչև իսկ երկաթե կապանքներով չէին կարողանում զսպել, աղոթքի խոսքերով և մարդու մեջ գտնվող Սուրբ Հոգու զորությամբ պարտվել է: Դյուրթողի ամենամեղմ փչելն անգամ դեւի համար դառնում է անտեսանելի կրակ:

Ուրեմն, մենք մեծ զինակից ու պահապան ունենք Աստծուց, Եկեղեցու մեծ ուսուցիչ, մեծ պահապան: Չվախենանք դեւերից, ոչ իսկ սատանայից: Քանզի հանուն մեզ պայքարողը շատ ավելի մեծ է: Միայն թե մեր դռները բացենք Նրա համար: Քանզի Նա շրջում է ամենուր՝ փնտրելով արժանավորներին, որոնց ցանկանում է պարգևել իր շնորհները:

20. Սուրբ Հոգին կոչվում է նաև Մխիթարիչ, քանզի մեզ մխիթարում և սրտապնդում է և օգնում մեր մարդկային թուլությունների ժամանակ: «Քանզի մենք աղոթում ենք և չգիտենք, թե ինչպես արժան է աղոթել: Բայց Հոգին ինքը բարեխոս է լինում մեզ անմռունչ հառաչանքով» (Հռոմ., Ը 26): Հասկանալի է, որ միջնորդում է Աստծու առաջ: Մի մարդ բազմիցս հայհոյանք կրեց հանուն Քրիստոսի, անտեղի խայտառակվեց, ենթարկվեց տանջանքների, կրակ, սուր, գազաններ, ծովի խորխորատը սպառնում էին նրան: Բայց Հոգին Սուրբը հուշում էր նրան՝ «Սպասիր Տիրոջը, ո՛վ մարդ» (Սաղմ., ԻԶ 14): Կատարված գործերը

փոքր են, բայց պարգևները՝ մեծ: Քիչ ժամանակ տանջանք կրելով՝ դու հավերժորեն կլինես հրեշտակների հետ: «Այս ժամանակի չարչարանքները արժանի չեն բաղդատվելու գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեզ» (Հռոմ., Ը 18): Հոգին Սուրբը մարդուն նկարագրում է երկնքի թագավորությունը, ցույց է տալիս վայելքի դրախտը: Եվ վկայողները, իրենց մարմնական դեմքը ստիպողաբար դատավորներին հարած, գտնվելով դրախտում, Հոգին Սուրբի զորությամբ արհամարհում են և խայտառակում բոլոր ահասարսուռ տանջանքները:

21. Եվ կուզե՞ս իմանալ, որ մարտիրոսները մարտիրոսանում են Սուրբ Հոգու զորությամբ: Փրկիչն ասում է աշակերտներին. «Երբ ձեզ տանեն ժողովարանների, կառավարիչների և իշխանավորների առաջ, մի՛ մտահոգվեք, թե ինչպես կամ ինչ պատասխան պիտի տաք և կամ ինչ պիտի ասեք, որովհետև Սուրբ Հոգին նույն ժամին կսովորեցնի ձեզ, թե ինչ պետք է խոսել» (Ղուկ., ԺԲ 11-12): Քանզի անկարելի է, որ մեկը վկայի Քրիստոսին, եթե այդ չի կատարվում Սուրբ Հոգու օգնությամբ: «Ոչ ոք չի կարող ասել՝ Հիսուս Տեր է, եթե ոչ՝ Սուրբ Հոգով» (Ա Կորնթ., ԺԲ 3): Ո՞վ կարող է իր կյանքը տալ հանուն Քրիստոսի, եթե այդ չի կատարվում Սուրբ Հոգու Շնորհով:

22. Մեծ է Հոգին Սուրբը և ամենազոր և հրաշագործ, երբ յուրաքանչյուրին նրա ընկալումներին համապատասխան շնորհներ է բաշխում: Մտածիր, ինչքա՞ն մարդ այժմ նստած էք այստեղ: Քանի՞ հոգի ենք ներկա: Յուրաքանչյուրի վրա նա ներգործում է պատշաճ կերպով: Նա ներկա է այստեղ՝ մեջտեղում, և տեսնում է յուրաքանչյուրի նկարագիրը, տեսնում մեր մտածելակերպը, մեր խիղճը. այն, թե ի՞նչ ենք խոսում, ի՞նչ ենք մտածում և ինչի՞ն ենք հավատում: Իրոք, ասածս մեծ խոսք եղավ: Բայց այն դեռ փոքր

է: Այժմ տես, թե ինչ կասեմ: Սուրբ Հոգուց լուսավորված, շնորհ արա և հետևիր իմ մտքերին: Մեր այս ամբողջ գաղթօջախում քանի՞ քրիստոնյա կա: Եվ քանի՞ քրիստոնյա կա Պաղեստին նահանգում, և քո միտքը տարածիր ամբողջ Հռոմեական կայսրության վրա: Եվ այնտեղից տես ամբողջ աշխարհը: Պարսից ցեղերին ու հնդկացի ազգերին և մավրերին, լիբիացիներին ու եթովպացիներին և մյուսներին, որոնց չեմ անվանում: Քանզի շատերի անուններն անգամ չենք իմանում: Տես, թե քանի՞ եպիսկոպոսներ ունի յուրաքանչյուր ազգ, ինչքան ավագներ, սարկավագներ մենակյացներ, կույսեր և այլ ժողովրդականներ, և դու կտեսնես մեծ պաշտպանին և շնորհներ պարգևողներին: Համայն աշխարհում ինչպե՞ս Նա մեկին շնորհում է անմեղություն, մյուսին՝ կուսություն, մեկին՝ ողորմածության շնորհը, մյուսին՝ ընչազրկությունը, մյուսին՝ պիղծ դեերին դուրս քշելը: Եվ ինչպես որ լույսը իր մեկ ճառագայթի ցուլանքով լուսավորում է ամեն ինչ, այդպես էլ Սուրբ Հոգին լուսավորում է բոլոր մտովի աչքեր ունեցողներին: Ուստի, եթե որևէ մեկն իր կուրության պատճառով չի արժանանում Սուրբ Հոգու Շնորհին, թող չմեղադրի Սուրբ Հոգուն, այլ իր անհավատությանը:

23. Տեսա՞ր Սուրբ Հոգու գորությունը, որը տարածվում ու ներթափանցում է ամբողջ աշխարհում: Ուրեմն, մի՛ մնա երկրի վրա, այլ բարձրացիր վերև: Մտովի բարձրացիր առաջին երկինք և տես այնտեղ բյուր բյուրավոր, անթիվ հրեշտակներ: Մտովի, եթե կարող ես, բարձրացիր ավելի վեր: Տե՛ս նաև հրեշտակապետերին, տե՛ս նաև հոգիներին, գորություններին, իշխանություններին, գահերին, տե՛ս տիրություններին: Աստուծու կողմից այդ բոլորի վերակացուն և ուսուցիչը և սրբարարը Մխիթարիչն է. նրա կարիքն ունեն եղիան և եղիսեեն և Եսային՝ որպես մարդիկ, և Միքայելն ու Գաբրիելը՝ որպես հրեշտակներ:

Արարվածներից և ոչ մեկը Նրան հավասարազոր չէ: Անգամ եթե հրեշտակների բոլոր սերունդները և բոլոր գորությունները համատեղ գումարվեն, չեն կարող հավասարվել Սուրբ Հոգուն: Քանզի այդ ամենը ծածկում և շնորհում է Մխիթարիչի ամենասուրբ գորությունը: Նրանք Աստուծուց ուղարկված են ծառայելու համար. մինչդեռ Սուրբ Հոգին քննում է Աստուծու խորքերը, ինչպես ասում է առաքյալը. «Որովհետև Հոգին քննում է ամեն ինչ, նույնիսկ՝ Աստուծու խորունկ ծրագրերը: Քանզի մարդկանցից ո՞վ է, որ բան գիտե մարդու մասին, եթե ոչ մարդու հոգին, որ նրա մեջ է: Նույնպես և ոչ ոք չգիտե Աստուծու խորհուրդները, եթե ոչ Աստուծու հոգին» (Ա Կորնթ., Բ 10-11):

24. Քրիստոսի մասին Սուրբ Հոգին ազգարարեց մարգարեներին: Նա էր ներգործում առաքյալների մեջ: Նա էր, որ ցարդ մկրտությանը կնքում է հոգիները: Հայրը տալիս է Որդուն, իսկ Որդին էլ փոխանցում է Սուրբ Հոգուն: Այդ ինքը Հիսուսն է ասել, և ոչ թե ես. «Ամենայն ինչ տրվեց իմ Հորից» (Մատթ., ԺԱ 27): Եվ Սուրբ Հոգու մասին ասում է. «Երբ որ գա Նա՝ ճշմարտության Հոգին» (Հովհ., ԺԶ 13) և այլն: Նա ինձ պիտի փառավորի, որովհետև ինչ որ առնում է ինձանից, կհայտնի ձեզ» (Հովհ., ԺԶ 14): Հայրը Որդու միջոցով և Սուրբ Հոգու հետ բոլորին շնորհում է ամեն ինչ: Տարբեր չեն Հոր շնորհածները, տարբեր՝ Որդու և տարբեր՝ Սուրբ Հոգու շնորհածները: Քանզի կա մեկ փրկություն, կա մե՛կ գորություն, մեկ հավատ(Եփես., Դ 5): Կա մեկ Հայր Աստված, մեկ Տեր՝ Նրա Միածին Որդին, մեկ Սուրբ Հոգի՝ Մխիթարիչը: Այս ընդհանուր գիտելիքները բավական են ձեզ համար: Սուրբ Հոգու բնության և էության մասին շատ մի՛ քրքրիր: Եթե այդ մասին գրված լիներ, մենք կասեինք: Մենք չհամարձակվենք: Փրկության համար բավական է մեզ իմանալ, որ կա Հայր, Որդի և Սուրբ Հոգի:

25. Այս Սուրբ Հոգին Մովսեսի ժամանակ իջավ յոթանասուուն ավազների վրա: Բայց խոսքիս երկարութունը թող ձեզ չձանձրացնի: Այն Սուրբ Հոգին, որի մասին խոսում ենք, յուրաքանչյուրիս՝ և՛ մեզ, որ խոսում ենք, և՛ ձեզ, որ լսում եք, ուժ կհաղորդի: Այդ Հոգին, ինչպես ասացի, Մովսեսի ժամանակ իջավ յոթանասուուն ավազների վրա: Այս ամենն ասում եմ քեզ, որպեսզի պատկերացնես, թե Սուրբ Հոգին գիտե ամեն ինչ և գործում է՝ ինչպես կամենում է: Ընտրվեցին յոթանասուուն ավազները, և Տերն իջավ ամպերի մեջ, և վերցնելով Մովսեսի հոգուց, այն դրեց յոթանասուուն ավազների վրա (Հմմտ. Թվեր, ԺԱ 24-25): Հոգին չէր, որ բաշխվեց, այլ Շնորհ բաշխվեց անոթների մեջ, յուրաքանչյուրի գորության համեմատ: Յոթանասուուն ավազներից վաթսուունութը ներկա էին և ստացան մարգարեանալու շնորհը, բայց Ելզադ և Մոզադ ներկա չէին (Հմմտ. Թվեր, ԺԱ 26): Որպեսզի պարզ լինեք, թե բաշխողը Մովսեսը չէր, այլ՝ Հոգու ներգործութունը, Ելզադ և Մոզադ թեև երբեք այնտեղ ներկա չգտնվեցին, նրանք ևս ստացան մարգարեանալու շնորհը:

26. Զարմացավ Նավեի որդի Հեսուն՝ Մովսեսի ժառանգորդը, և ասաց նրան. «Լսե՞լ ես, որ Ելզադն ու Մոզադը մարգարեանում են» (Թվեր, ԺԱ 27): Նրանք հրավիրվեցին, բայց չեկան: «Տեր Մովսես, արգելիր նրանց մարգարեութուն անել» (Թվեր, ԺԱ 28): Մովսեսը պատասխանում է. «Չեմ կարող նրանց արգելել. քանզի շնորհը երկնքից է: Ես այնքան հեռու եմ արգելելուց, ինչքան մի մարդ, որ ինքը այդ ստացել է՝ ըստ շնորհքի: Բայց չեմ կարծում, որ դու նախանձում ես: Մի՛ նախանձիր իմ պատճառով, եթե նրանց ևս տրվել է մարգարեանալու շնորհքը» (Թվեր, ԺԱ 29), իսկ դու չես մարգարեանում: Համակերպիր իրականությանը: «Երանի թե Տերը ամբողջ ժողովրդին մարգարեներ դարձներ՝ իր ոգին տալով նրանց» (Թվեր, ԺԱ 29):

Արդյոք Աբրահամն ու Իսահակը և Հակոբն ու Հովսեփը ունեի՞ն այդ ոգին: Դրանից առաջ եղածները չունեի՞ն: «Երանի թե ամբողջ ժողովրդին» խոսքը ցույց է տալիս, թե այժմ այդ շնորհը տրված է ոմանց, այնժամ կլինի շնորհի առատութուն: Գուցե ակնարկում էր այն, ինչ կատարվելու էր Պենտեկոստի օրը մեզ մոտ: Բայց այն իջավ նաև Պենտեկոստից առաջ էլ շատերի վրա: Քանզի գրված է, որ Նավեի Հեսուն ևս լցվեց իմաստության հոգով այն բանից հետո, երբ Մովսեսն իր ձեռքը դրեց նրա վրա (Բ Օրինաց, ԼԴ 9): Տեսնո՞ւմ ես, և՛ Հին Կտակարանում, և՛ Նոր Կտակարանում, ամենուր ձեռք նույնն է: Մովսեսի ժամանակ ձեռնադրությամբ էր փոխանցվում Հոգին: Այդ շնորհը կհասնի նաև քեզ՝ մկրտվողիդ: Բայց թե ինչպե՞ս, այդ չեմ ասի. քանզի ժամանակն անցնում է:

27. Այդ Սուրբ Հոգին էր, որ իջավ բոլոր երկու հարյուրի և մարգարեների վրա: Ես նկատի ունեմ Ենովքին, Ենովսին, Նոյին և մյուսներին, Աբրահամին, Իսահակին, Հակոբին: Ինչ վերաբերում է Հովսեփին, թե իր վրա ուներ Աստծու Հոգին, զգաց անգամ փարավոնը (Ծննդ., ԽԱ 38): Գալով Մովսեսին և Սուրբ Հոգու միջոցով նրա կատարած հրաշքներին՝ դու այդ մասին բազմիցս լսել ես: Իր մեջ Սուրբ Հոգին ուներ նաև քաջարի Հոբը, նաև բոլոր սրբերը, թեև բոլորի անունները չենք նշում: Երբ կառուցվում էր վկայության խորանը, դարձյալ Սուրբ Հոգին ուղարկվեց և իմաստությամբ լցրեց այն իմաստուններին, որոնք գտնվում էին Բեսելիելի շուրջը:

28. Դատավորների գրքից գիտենք, որ նույն Սուրբ Հոգու գորությամբ էր, որ Գոթոնիելը դատում էր (Դատ., Գ 10), որ Գեդեոնը զորացավ ու քաջալերվեց (Դատ., ԺԱ 29-33): Կին լինելով հանդերձ, Դեբորան կռվեց (Դատ., Դ 4):

Եվ Սամփսոնը, քանի դեռ առաքինի էր և չէր տխրեցրել Սուրբ Հոգուն, գերմարդկային սխրանքներ կատարեց (Դատ., ԺԳ 25 և ԺԴ 6-19): Սամուելի և Դավթի մասին Թագավորությունների գրքերում պարզ ասված է, թե նրանք մարգարեանում էին Սուրբ Հոգով և գլխավորում էին մարգարեներին: Սամուելը կոչվում էր «տեսանող» (Ա Թագ., Թ 9-11), իսկ Դավիթը պարզ ասում է. «Տիրոջ Հոգին խոսեց իմ մեջ» (Բ Թագ., ԻԳ 2): Նաև Սաղմոսներում ասում է. «Սուրբ Հոգիդ մի հանիր ինձնից» (Սաղմ., Ծ 13), և դարձյալ՝ «Քո բարի հոգին ինձ պիտի առաջնորդի դեպի ուղիդ ճանապարհ» (Սաղմ., ԺԽԲ 10):

Եվ ինչպես որ Մնացորդաց գրքում տեսնում ենք, Սուրբ Հոգին ունեին Ասափ թագավորի օրոք Ազարիան (Բ Մնաց., ԺԵ 1) և Հովասափ թագավորի օրոք Օզիելը (Բ Մնաց., Ի 14) և մյուս Ազարիան, որ քարկոծվեց (Բ Մնաց., ԻԴ 20-21): Իսկ Եզրասն ասել է. «Դու բարի հոգին տվեցիր՝ նրանց իմաստնացնելու համար»: Ինչ վերաբերում է Եղիային, որ համբարձվեց, և Եղիսեբին, հայտնի է, որ նրանք հոգով էին լցված և հրաշագործում էին:

29. Եթե մենք թերթենք մյուս տասներկու մարգարեների գրքերը, բազում վկայություններ կգտնենք Ս. Հոգու մասին: Միքիասը Տիրոջ անունով ասում է. «Ես լցվեցի Տիրոջ Հոգու գորությունը» (Միք., Գ 8): Հովելը բարձրաձայն ասում է. «Սրանից հետո իմ հոգուց կհեղեմ ամեն մարմնի վրա» (Հովել, Բ 27, հունարենում՝ 3, 1): Անգե մարգարեն ասում է. «Քանզի ես ձեզ հետ եմ, ասում է Ամենակալ Տերը, և իմ հոգին մնում է ձեր միջև» (Անգե, Բ 4-5): Չաքարիան՝ նույնպես: «Բայց ընդունեցեք իմ խոսքերն ու իմ օրենքները, որ ես իմ հոգով պատվիրեցի իմ ծառաներին՝ մարգարեներին» (Չաք., Ա 6):

30. Բարձրատոն Եսային ևս ասում է. «Նրա վրա պիտի

իջնի Աստուծու Հոգին, իմաստության և հանճարի հոգին, գիտության և աստվածապաշտության հոգին, Աստուծու երկյուղի հոգին պիտի լցնի այն» (Եսայի, ԺԱ 2-3): Այս ամենով նա մեզ ասում է, թե Հոգին մեկ է և անբաժանելի, բայց Նրա ներգործությունները բազմազան են: Եվ դարձյալ ասում է. «Հակոբն իմ ծառան է» (Եսայի, ԽԲ 1) և այլն: «Իմ հոգին նրա վրա եմ դրել» (Եսայի, ԽԲ 1): Եվ ուրիշ անգամ «Իմ հոգին պիտի դնեմ քո որդիների վրա» (Եսայի, ԽԴ 3): Եվ ապա. «Այժմ Տերն ինձ ուղարկեց. Տերը և Նրա Հոգին» (Եսայի, ԽԸ 16): Եվ հետո. «Այս է իմ ուխտը նրանց հետ, - ասում է Տերը, - Իմ Հոգին, որ քեզ վրա է» (Եսայի, ԾԹ 21): Եվ դարձյալ. «Տիրոջ Հոգին ինձ վրա է: Դրանով նա օձեց ինձ» (Եսայի, ԿԱ 1):

Եվ դարձյալ, երբ խոսում է հրեաների դեմ, ասում է. «Բայց նրանք ըմբոստացան ու զայրացրին Նրա Սուրբ Հոգին» (Եսայի, ԿԳ 10): «Ո՛ր է նա, որ նրանց մեջ դրեց Սուրբ Հոգին» (Եսայի, ԿԳ 11):

Եթե չես հոգնել լսելուց, այդ ասվածը կա նաև Եզեկիելի մոտ: «Տիրոջ Հոգին իջավ ինձ վրա ու ասաց ինձ. Այսպես է ասում Ամենակալ Տերը» (Եզեկ., ԺԱ 5): «Իջավ ինձ վրա» խոսքը լավ ընդունիր, որ այն ընկավ գորովալից, ինչպես Հակոբը, Հովսեփին գտնելով, ընկավ նրա պարանոցին: Եվ ինչպես Ավետարանում բարեգուլի հայրը, տեսնելով օտարությունից վերադարձած իր որդուն, գլխաց նրան և վազելով «ընկավ նրա պարանոցով և համբուրեց նրան» (Ղուկ., ԺԵ 20): Եվ դարձյալ Եզեկիելի մոտ. «Հոգին ինձ բարձրացրեց, բերեց քաղղեացիների երկիրը, գերիների մեջ, Աստուծու ցույց տված տեսիլքով» (Եզեկ., ԺԱ 25): Մնացածը դու արդեն լսել ես նախորդ քարոզների ընթացքում, երբ խոսում էինք մկրտության մասին: «Եվ քեզ վրա սուրբ ջուր եմ ցանելու» (Եզեկ., ԼԳ 25) և այլն: «Եվ նոր սիրտ եմ տալու ձեզ և նոր հոգի եմ դնելու ձեր մեջ» (Եզեկ., ԼԳ 26): Եվ ապա՝ «Իմ հոգին եմ տալու ձեզ»: Եվ դարձյալ՝ «Տիրոջ

ձեռքը հանգչեց ինձ վրա, բարձրացրեց ինձ Տիրոջ հոգով» (Եզեկ., Լէ 1):

31. Այդ իմաստացրեց Դանիելի ոգին, որպեսզի, ինքը երիտասարդ, դառնա ավագների դատավորը: Բարեմիտ Սոսաննան զրպարտվեց որպես անառակ: Նրան պաշտպանող չեղավ: Ո՞վ պիտի ազատեր նրան իշխանավորների ձեռքից: Նրան առաջնորդում էին մահվան: Նա, ուրեմն, դահիճների ձեռքում էր: Բայց կար այնտեղ օգնողը՝ Միսիթարիչը, համայն իմացական բնությունը սրբացնող Հոգին: Եկ ինձ մոտ, ասում է Դանիելին: Հանդիմանիր ավագներին, որոնք հիվանդ են երիտասարդության մեղքերով: Քանզի գրված է. «Աստված ուղարկեց Սուրբ Հոգին մի երիտասարդի» (Դան., Դ 5): Եվ որպեսզի արագ անցնենք, Դանիելի որոշումով ազատվեց առաքինի աղջիկը: Այս ամենը մեջբերում ենք որպես վկայություն և ապացույց: Քանզի բացատրելու ժամանակ չունենք:

Նաբուգոդոնոսորը ևս գիտեր, որ Դանիելի մեջ էր Սուրբ Հոգին: Քանզի ասաց նրան. «Բաղտասար, մոգերի առաջնորդ. ես գիտեմ, որ Աստծու Սուրբ Հոգին իջել է քո մեջ» (Դան., Դ 6): Նա ասաց մեկ ճշմարտություն և մեկ սուտ: Այն, որ Սուրբ Հոգին նրա մեջ էր, դա ճշմարիտ էր: Բայց այն, որ նա մոգերի առաջնորդն էր, դա սուտ էր: Քանզի Սուրբ Հոգին նրան դարձրել էր իմաստուն: Բայցև այս զրույցից առաջ էլ Դանիելը նրան մեկնաբանել էր այն արձանի տեսիլը, որ նա ինքը տեսել էր, բայց չէր կարողացել հասկանալ (Հմմտ. Դան., Բ 31): Բացատրիր ինձ, - ասում է, - տեսիլը, որ թեև ինքս էլ տեսա, բայց իմաստը չեմ հասկանում: Տեսնո՞ւմ ես Սուրբ Հոգու զորությունը: Այն, ինչ տեսնողները տեսան, բայց չհասկացան, իսկ չտեսնողները հասկանում են և մեկնաբանում:

32. Եվ իրապես, Հին Կտակարանում կան բազում բա-

ներ, որ կարելի է հավաքել և առավել ընդարձակ խոսել Սուրբ Հոգու մասին: Բայց ժամանակը քիչ է: Պետք է մտածենք նաև մեր ունկնդիրներին չհոգնեցնելու մասին: Ուստի, առայժմ բավարարվենք Հին Կտակարանի վկայություններով, որ նշեցինք, իսկ Նոր Կտակարանում եղած վկայություններին, եթե Աստված կամենա, մենք կանդրադառնանք մեր հաջորդ ուսուցման ընթացքում:

Իսկ խաղաղության Աստվածը, մեր Տեր Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու սիրո միջոցով, ձեզ բոլորիդ արժանացնի երկնային պարգևներին: Նրանն է փառքը և զորությունը հավիտյանս հավիտենից: Ամեն:



## ՈՒՍՈՒՑՈՒՄ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԳ

### Արված Երուսաղեմում՝ Սուրբ Հոգու մասին Սուրբ Գրքում եղած մնացյալ վկայությունների վերաբերյալ

Ընթերցում Կորնթացիներին ուղղված Առաջին թղթից. «Մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք» հատվածից (Ա, Կորնթ., ԺԲ 8):

1. Նախորդ ուսուցման ընթացքում մենք ջանացինք ձեր հաճելի լսողությունը հանձնել Սուրբ Հոգուն վերաբերող վկայությունների մի մասը միայն, ինչքան որ կարողացանք: Այժմ ևս, Աստծու կամքով պիտի ջանանք հենվել Նոր Կտակարանում Սուրբ Հոգու մասին եղած մյուս վկայությունների վրա: Այդ ժամանակ խոսքը շատ չերկարելու համար մենք չծավալվեցինք, թեև իրոք, մարդ չի հագնում Սուրբ Հոգու մասին խոսելուց: Ուստի այժմ մենք կանդաղառնանք մյուս վկայությունների սոսկ մի մասին, և իրոք երախտագիտություն խոստովանում եմ, որ գրավոր վկայությունների առատությունը ծածկում է իմ թուլությունը: Ուրեմն, ես կշարունակեմ իմ խոսքը, առանց տրամաբանական հնարանքների, որոնք կգոհացնեն մարդկային միտքը կամ կներշնչվեն դրանից, քանի որ այդ մեզ չի օգնի: Մենք ձեզ կհիշեցնենք միայն այն, ինչ կա Սուրբ Գրքում, քանի որ այդ ավելի ապահով է, ինչպես ասել է երանելի Պողոս առաքյալը. «Ինչ որ հայտնում ենք, ոչ թե ճարտար խոսքերի մարդկային ուսուցումով է, այլ՝ Հոգու վարդապետությունով: Հոգևոր բաները հոգևոր խոսքերով ենք բացատրում» (Ա, Կորնթ., Բ 13): Մենք մոտավորապես կանենք այն, ինչ անում են ճանապարհորդները, որոնց միակ նպատակն է հնարավորին չափ երկար ճանապարհ անցնել, և

հաճույքով շտապում են: Բայց մարդկային թուլության պատճառով, նրանք հաճախ են կանգ առնում տարբեր քաղաքներում և նավահանգիստներում:

2. Այսպես, Սուրբ Հոգու մասին զրույցները կարող են բաժանվել, բայց ինքը՝ Սուրբ Հոգին, անբաժանելի է: Նա մեկ է և մշտագոյ: Սուրբ Հոգու ուսուցման մասին կատարվում է այն, ինչ կատարվում էր Հայր Աստծու մասին ուսուցման ժամանակ: Այսինքն, մեկ խոսվում էր «Մենիշխանություն» մասին, մեկ այն մասին, թե ինչո՞ւ է Հայր կոչվում, ինչո՞ւ է «Ամենակալ» կոչվում, թե ինչո՞ւ է բոլորի «Արարիչը» կոչվում: Եվ այդ ամեններն էլ չհանգեցրեց հավատի մասին ուսմունքի տարբաժանմանը: Քանզի Աստծու ուղիղ և ճշմարիտ պաշտամունքի նպատակը մեկն էր և է: Այժմ նույնն է կրկնվում նաև Աստծու Միածին Որդու մասին ուսուցման դեպքում: Այդ ժամանակ ևս մեր ուսուցումը բաժանեցինք շատ զրույցների՝ մերթ անդրադառնալով մեր Տեր Հիսուս Քրիստոսի աստվածայնությունը, մերթ մարդեղությունը: Բայց նյութի այդքան բաժանվածություն մեզ հանդերձ, մենք ձեզ քարոզեցինք անբաժանելի հավատ Քրիստոսի նկատմամբ: Թեև մենք բաժանում ենք մեր զրույցները Սուրբ Հոգու մասին, բայց Նրա նկատմամբ հավատը հայտարարում ենք անբաժանելի. «Որովհետև այս ամենը միայն Հոգին է առաջացնում և բաժանում յուրաքանչյուրին՝ ինչպես որ կամենում է» (Ա, Կորնթ., ԺԲ 11): Բայց ինքը մնում է անբաժանելի: Քանզի Միթիթարիչը տարբեր բան չէ Սուրբ Հոգուց: Այն միևնույնն է և, թեև ունի տարբեր անվանումներ, այն միակն է և անփոփոխ, որպես ինքնակա, որը բխում է Հորից, գործում է Եկեղեցում և ներշնչում է Եկեղեցու քարոզիչներին և վարդապետներին որպես սուրբ՝ խորհուրդներով, և խորհրդավոր ու անպատմելի եղանակներով, այսինքն, մարդկանց և հրեշտակներին, բոլոր բանավոր արարածներին, որոնց



Հայր Աստվածն է ստեղծել Հիսուս Քրիստոսի գործակցութեամբ:

3. Եվ որպեսզի անհիմացութեան և Սուրբ Հոգու տարբեր անվանումների պատճառով մարդ չկարծի, թե այն վերաբերում է տարբեր հոգիների, և չհավատա, թե այն միշտ մեկն է, մեր եկեղեցին, որ «ընդհանրական» է, քեզ ապահովեց Սուրբ Հոգու մասին Հավատի Հանգանակի հոգվածով՝ պատվիրելով հավատալ միակ Սուրբ Հոգուն՝ Մխիթարիչին, որ խոսել է մարգարեների միջոցով: Այսպիսով դու կիմանաս, թե Սուրբ Հոգին թեև ունի շատ անվանումներ, բայց Նա մեկն է: Շարունակութեան մեջ խոսք կլինի այդ անվանումներից մի քանիսի մասին:

4. Ուրեմն, նոր ընթերցված հատվածի համաձայն, թե՛ «Մեկին Սուրբ Հոգու միջոցով տրվում է իմաստութեան խոսքը» (Ա Կորնթ., ԺԲ 8), այն կոչվում է Հոգի: Այն կոչվում է նաև «Ճշմարտութեան Հոգի», ինչպես ասել է Փրկիչը. «Երբ որ նա գա՝ Ճշմարտութեան Հոգին» (Հովհ., ԺԶ 13): Կոչվում է նաև «Մխիթարիչ», ինչպես Փրկիչը դարձյալ ասել է. «Եթե ես չգնամ, Մխիթարիչը ձեզ մոտ չի գա» (Հովհ., ԺԶ 7): Այն, որ Հոգին թեև ունի տարբեր անուններ, բայց այն մեկն է, ապացուցվում է հետևյալից: Արդեն ասվեց, թե նույնն է Սուրբ Հոգին և Մխիթարիչը: «Մխիթարիչը, այսինքն՝ Սուրբ Հոգին» (Հովհ., ԺԴ 26): Ասված է նաև, որ Մխիթարիչը և «Ճշմարտութեան Հոգին» նույնն է. «Մի այլ Մխիթարիչ պիտի տամ ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի՝ Ճշմարտութեան Հոգին» (Հովհ., ԺԴ 16-17): Նույնը նաև մեկ այլ հատվածում. «Բայց երբ գա Մխիթարիչը, որին ես ձեզ կուղարկեմ Հորից՝ Ճշմարտութեան Հոգին» (Հովհ., ԺԵ 26):

Կոչվում է նաև «Աստծու Հոգի», ինչպես գրված է. «Տեսա Աստծու Հոգին, որ իջնում էր» (Հովհ., Ա 32): Եվ ապա

«Նրանք, որ առաջնորդվում են Աստծու Հոգով, նրանք են Աստծու որդիներ» (Հռոմ., Ը 14): Կոչվում է նաև «Հոր Հոգի», ինչպես այդ ասել է մեր Փրկիչը. «Քանի որ ոչ թե դուք եք, որ պիտի խոսեք, այլ ձեր Հոր Հոգին» (Մատթ., Ժ 20): Եվ Պողոսը դարձյալ. «Այդ պատճառով ծնկի եմ գալիս՝ աղոթելով Հոր առաջ» (Եփես., Գ 14) և այլն, որպեսզի Հոգու միջոցով ամրանաք ներքնապես» (Եփես., Գ 16): Նա կոչվում է նաև «Տիրոջ Հոգի», ինչպես ասել է Պետրոսը. «Ինչի՞ համար է, որ դուք միաբանեցիք՝ փորձելու համար Տիրոջ Հոգին» (Գործք., Ե 9): Կոչվում է նաև «Աստծու և Քրիստոսի Հոգի», ինչպես գրում է Պողոսը. «Բայց դուք մարմնի իշխանութեան տակ չեք, այլ՝ Հոգու, եթե Աստծու հոգին բնակված է ձեր մեջ: Եթե մեկը Քրիստոսի Հոգին չունի, նա Նրան չի պատկանում» (Հռոմ., Ը 9): Կոչվում է նաև «Աստծու Որդու Հոգի», ինչպես հետևյալ հատվածում. «Եվ որովհետև դուք որդիներ եք, Աստված ձեր սրտերի մեջ ուղարկեց իր Որդու Հոգին» (Գաղատ., Դ 6): Կոչվում է նաև «Քրիստոսի Հոգի», ինչպես այդ գրված է. «Քննում էին, թե ո՞ր և ինչպիսի՞ ժամանակի մասին էր ծանուցում իրենց մեջ եղող Քրիստոսի Հոգին» (Ա Պետր., Ա 11): Եվ այլուր՝ «Զեր աղոթքներով և Հիսուս Քրիստոսի Հոգու օգնությամբ» (Փիլիպ., Ա 19):

5. Դու կգտնես Սուրբ Հոգու նաև այլ անվանումներ: Նա կոչվում է նաև «սրբութեան Հոգի» (Հռոմ., Ա 4), ինչպես որ գրված է: Կոչվում է նաև «որդեգրութեան Հոգի», ինչպես Պողոսն է ասում. «Քանի որ չստացաք ծառայութեան Հոգին վերստին երկյուղի մեջ ընկնելու համար, այլ ստացաք որդեգրութեան Հոգին, որով աղաղակում եք՝ «Արբա Հայր» (Հռոմ., Ը 15): Կոչվում է նաև Հայտնութեան Հոգի. «Թող Աստված ձեզ տա իմաստութեան և հայտնութեան Հոգի՝ իրեն ճանաչելու համար» (Եփես., Ա 17): Կոչվում է նաև «խոստացված Հոգի», ինչպես Պողոսն է ասում.

«Դուք էլ լսեցիք ճշմարտութեան խոսքը՝ ձեր փրկութեան Ավետարանը, որին հավատարիվ կնքեցիք խոստացված Սուրբ Հոգով» (Եփես., Ա 13): Կոչվում է նաև «Շնորհի Հոգի», ինչպես այլուր ասված է. «Անարգեց Շնորհի Հոգին» (Եբր., Ժ 29): Բազում այլ անվանումներ Սուրբ Հոգու մասին դու դեռ կարող ես գտնել: Նախորդ ուսուցման ժամանակ լսեցիր, որ Սաղմոսներում այն կոչվում է բարի, իշխանական: Եսայու մոտ ևս՝ որպես իմաստութեան հոգի, առաքինութեան, կամքի, զորութեան, իմացութեան, բարեպաշտութեան և երկյուղածութեան Հոգի (Հմմտ. Եսայի, ԺԱ 2):

Նախկինում և այսօր իմ ասածներից հետևում է, որ Սուրբ Հոգին թեև ունի բազում անվանումներ, սակայն այն մեկն է, ինքնակա, ինքնագոյ և մշտապես ներկա Հոր և Որդու հետ միասին: Եվ ոչ այն պատճառով, որ Նա խոսում կամ շնչում է Հոր և Որդու բերանով և չի ցրվում օդում: Նա ինքնագոյ է, խոսում և ներգործում է և ամենայն իմաստութեամբ սրբացնում է կամքով նույնացված Հոր և Որդու հետ, առանց կորցնելու իր առանձին էությունը: Մեր հանդեպ Նրա փրկարար տնօրինումը շարունակական է, համաձայնեցված և մեկը: Այն բխում է Հորից, Որդուց և Սուրբ Հոգուց, ինչպես արդեն բացատրել ենք: Ուզում եմ, որ դուք պարզ իմանաք և մշտապես հիշեք, որ ուրիշ չէ Օրենքում և մարգարեների մոտ Հոգին, և ուրիշ՝ Ավետարանում և առաքյալների մոտ, այլ Սուրբ Գրքերում խոսվող Սուրբ Հոգին մեկն է և նույնը Հին և Նոր Կտակարաններում:

6. Այդ Սուրբ Հոգին է, որ եկավ Մարիամ Սուրբ Կույսին: Որովհետև, քանի որ Նա, Ով պետք է ծնվեր, Քրիստոսն էր, Միածինը, Բարձրյալի զորութեամբ Կույսին պատեց և հովանի դարձավ, և Սուրբ Հոգին գալով սրբացրեց նրան, որպեսզի կարողություն շնորհի նրան արժանի դառնալու և ընդունելու Նրան, Ում միջոցով արարվեց ամեն

ինչ (Հմմտ. Ղուկ., Ա 35 և Հովհ., Ա 3): Շատ խոսքեր պետք չեն, որպեսզի իմանաս, թե Նրա ծնունդը անարատ ու անբիծ էր: Այդ լավ գիտես: Գաբրիելն է նրան ասողը: Ես գործակից չեմ, այլ հաղորդում եմ այն, ինչ կատարվելու է: Թեև հրեշտակապետ եմ, բայց ես գիտեմ իմ կարգը: Ու թեև ես ողջունն ավետում եմ քեզ, բայց ես չեմ կարող քեզ ասել, թե ինչպե՞ս պիտի ծննդաբերես: «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորութեամբ հովանի կլինի քեզ. որովհետև Նա, Ով քեզանից է ծնվելու, սուրբ է և Աստծո Որդի կկոչվի» (Ղուկ., Ա 35):

7. Այդ Սուրբ Հոգին ներգործեց նաև Եղիսաբեթի վրա: Նա ոչ միայն կույսերի հովանին է, այլև ամուսնացածների, եթե ամուսնությունն օրինավոր է: «Եվ Եղիսաբեթը լցվեց Սուրբ Հոգով» և մարգարեացավ (Ղուկ., Ա 41): Եվ բարի ծառան ասում է իր Տիրոջ մասին. «Որտեղի՞ց ինձ այս, որ իմ Տիրոջ մայրը ինձ մոտ գա» (Ղուկ., Ա 43): Քանզի Եղիսաբեթը երանի էր տալիս իրեն: Նույն Սուրբ Հոգով լցվեց նաև Զաքարիան՝ Հովհաննեսի հայրը, և մարգարեացավ՝ ասելով, թե ինչքան բարեքների առիթ է Միածինը, և թե Հովհաննեսը ապաշխարութեան մկրտությամբ պիտի դառնա Նրա կարապետը: Նույն Սուրբ Հոգուց էլ պատգամ ստացավ արդար Սիմեոնը, թե՛ «Հրամայված էր իրեն մահ չտեսնել, մինչև որ տեսներ Տիրոջ Օծյալին» (Ղուկ., Բ 26): Նա, տաճարում իր գիրկն առնելով Նրան, հայտարարեց Նրա մասին (Հմմտ. Ղուկ., Բ 28):

8. Հովհաննեսը ևս, դեռևս մոր արգանդում եղած ժամանակ, լցվեց Սուրբ Հոգով, որով և սրբացվեց, որպեսզի մկրտի Տիրոջը: Նա Սուրբ Հոգի չէր տալիս, այլ ավետում էր Սուրբ Հոգին տվողին: Քանզի ասում էր. «Ես քեզ ջրով եմ մկրտում, բայց Ով գալիս է ինձնից հետո, Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով» (Մատթ., Գ 11): Ինչո՞ւ հրով: Ո-

րովհետև Սուրբ Հոգին իջավ հրե լեզուների տեսքով (Գործք, Բ 3), ինչի համար Տերն ասում է ուրախությամբ. «Երկրի վրա կրակ գցելու համար եկա: Էլ ի՞նչ եմ ուզում, որ այն արդեն բորբոքվել է» (Ղուկ., ԺԲ 49):

9. Այս Հոգին իջավ և այն ժամանակ, երբ Տերը մկրտվում էր, որպեսզի աննկատ չանցնի մկրտվողի վեհությունը, ինչպես ասում է Հովհաննեսը. «Նա, Ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, Նա ինձ ասաց. Ում վրա տեսնես, որ Հոգին իջնում և մնում է, Նա է, որ մկրտում է Սուրբ Հոգով» (Հովհ., Ա 33):

Բայց տես, թե ինչ է ասում Ավետարանը: Երկինքը բացվեց: Անշուշտ բացվեց իջածի վեհության պատճառով: Քանզի ասված է. «Եվ ահա երկինքը բացվեց Նրան, և Նա տեսավ Աստծու Հոգին, որն իջնում էր ինչպես աղավնի և գալիս էր իր վրա» (Մատթ., Գ 16). այսինքն, Սուրբ Հոգու իջնելը, որպես երրորդության և միասնական աստվածի խանության միասնական արարք, ինքնակամ էր, ազատ և ինքնազոր. այսինքն, Սուրբ Հոգին չիջավ կույսին հրեշտակապետի պես ծառայողաբար, այլ աստվածային վեհությունում և ազատ: Որովհետև Սուրբ Հոգու առաջնությունը, որը պետք է շնորհվեր յուրաքանչյուր մարդու, նախ պետք է տրվեր մարդկային բնությունը: Նրան, Ով մեզ այսպիսի շնորհ պարգևեց: Նա իջավ աղավնու տեսքով, որովհետև աղավնին մաքուր է, անչար, անդավաճան: Հետևաբար կարող էր խորհրդանշել աստվածային Շնորհի բնույթը: Աստվածային այդ Շնորհը մկրտության խորհրդի աղոթքներով ներգործում է և աշխարհ եկող յուրաքանչյուր մարդու պարգևում փրկություն: Ներում է մարդու մեղքերը, ինչպես մարգարեացել է, որով Քրիստոս պիտի արտահայտի իր սերը մարդու հանդեպ: Քանզի «Երգ երգոցի» մեջ իրոք կա մի կոչ Փեսային. նրա աչքերը նման են աղավնիների՝ հակված ջրավազանի վրա» (Երգ, Ը 12):

10. Ոմանք գտնում են, թե Նոյի աղավնին խորհրդանշում է Քրիստոսի մկրտության ժամանակ իջած աղավնուն, այն է՝ Սուրբ Հոգուն: Քանզի փայտի և ջրի միջոցով փրկվեցին մարդիկ և վերապրեց մարդկային ցեղը: Այդ ժամանակ երեկոյան աղավնին վերադարձավ՝ բերելով ձիթենու ճյուղ: Այդպես էլ Սուրբ Հոգին իջավ մարդկության իրական Փրկչի վրա, որի նախատիպը Հին Կտակարանի Նոյն էր: Իջավ նրա վրա, ով մարդկանց սեռի վերածննդի հեղինակն է, որի մարդկային բնության մեջ միավորվում և ներդաշնակվում են բոլոր մարդկանց բարի և փրկարար ձգտումները: Այս իրողությունը մարգարեաբար խորհրդանշվեց տապանում տարբեր անասունների ներփակումով: Ինչպես որ եկեղեցում տեսնում ենք կարծեցյալ գառներին ոչխարների հետ արածելիս: Այնտեղ կարող ենք տեսնել հորթերի, ցուլերի և առյուծների համատեղ արածելը (համտ. Եսայի, ԺԱ 6 և ԿԵ 25): Ինչպես որ մինչև հիմա էլ տեսնում ենք եկեղեցու հովիտների, որ քարոզում են աշխարհիկ իշխաններին և դաստիարակում: Ուրեմն, ինչպես ոմանք բացատրում են, մկրտության պահին կարծեցյալ աղավնին իջավ, որպեսզի ցույց տա, թե Նա է, որ պիտի փրկի իրեն հավատացողներին խաչափայտի միջոցով: Նա ինքն է, որ վերահաս երեկոյան իր մահվան միջոցով փրկություն պիտի շնորհի:

11. Այս ամենին գուցե տրվի նաև այլ բացատրություն: Այժմ պետք է նաև լսենք Փրկչի խոսքը Սուրբ Հոգու մասին: Քանզի ասում է. «Եթե մեկը ջրից ու հոգուց չձնվի, չի կարող Աստծու արքայությունը մտնել» (Հովհ., Դ 5): Եվ այն մասին, թե Շնորհը Աստծուց է, ասում է. «Առավել ևս ձեր երկնավոր Հայրը Սուրբ Հոգին կտա բոլոր նրանց, որոնք ուզում են նրանից» (Ղուկ., ԺԱ 13): Եվ այն մասին, թե պետք է Աստծուն պաշտենք Սուրբ Հոգով, ասում է. «Բայց կգա ժամանակը, և արդեն իսկ եկել է, երբ ճշմարիտ

երկրպագուները կերկրպագեն Հորը Հոգով և Ճշմարտութ-  
յամբ: Քանի որ Հայրն էլ այդպիսի երկրպագուներ է ու-  
զում» (Հովհ., Դ 23-24): Եվ ուրիշ անգամ. «Իսկ եթե Աստ-  
ծու Հոգով եմ հանում դեերին» (Մատթ., ԺԲ 28) և այլն: Եվ  
անմիջապես հետո. «Դրա համար ասում եմ ձեզ. ամեն  
մեզք և հայհոյանք կներվեն, բայց Հոգու դեմ հայհոյանքը  
չպիտի ներվի: Եվ ով որ Մարդու Որդու դեմ խոսք ասի,  
նրան պիտի ներվի, բայց ով ասի Սուրբ Հոգու դեմ, նրան  
չպիտի ներվի ո՛չ այս աշխարհում, ո՛չ էլ հանդերձյալում»  
(Մատթ., ԺԲ 31-32):

Եվ դարձյալ ասում է. «Եվ ես պիտի աղաչեմ Հորը, և  
Նա մի այլ Մխիթարիչ պիտի տա ձեզ, որպեսզի հավիտյան  
ձեզ հետ բնակվի: Ծշմարտության Հոգին, որին այս աշ-  
խարհը չի կարող ընդունել, որովհետև Նրան չի տեսնում  
և Նրան չի ճանաչում, բայց դուք ճանաչում եք Նրան, ո-  
րովհետև ձեզ մոտ պիտի բնակվի և ձեր մեջ պիտի լինի»  
(Հովհ., ԺԴ 16-17): Մեկ այլ տեղ ասում է. «Այս բաները ա-  
սացի ձեզ, մինչ ձեզ հետ եմ: Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հո-  
գին, որին Հայրը կուղարկի իմ անունով, Նա ձեզ ամեն բան  
կուսուցանի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ ես ասացի  
ձեզ» (Հովհ., ԺԴ 25-26): Եվ այլուր. «Բայց երբ գա Մխի-  
թարիչը, որին ես ձեզ կուղարկեմ Հորից, ճշմարտության  
Հոգին, որ ելնում է Հորից, նա կվկայի իմ մասին» (Հովհ.,  
ԺԵ 26): Փրկիչը դարձյալ ասում է. «Եթե ես չգամ, Մխի-  
թարիչը ձեզ մոտ չի գա, իսկ եթե գնամ, Նրան կուղարկեմ  
ձեզ մոտ: Եվ Նա գալով կհանդիմանի աշխարհին, որ նա  
սխալ է մեղքի և արդարության հարցում և դատաստանի  
հարցում» (Հովհ., ԺԶ 6-7): Եվ ապա շարունակում է. «Դեռ  
չատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց այժմ չեք կարող տա-  
նել: Երբ որ գա Նա՝ ճշմարտության Հոգին, ամենայն  
ճշմարտությամբ կառաջնորդի ձեզ. որովհետև ոչ թե Ինքն  
Իրենից կխոսի, այլ ինչ լսի, այն կխոսի, և գալիք բաների  
մասին կպատմի ձեզ: Ամեն ինչ, որ Հայրն ունի, իմն է. դրա

համար ձեզ ասացի, թե ինչ որ առնում է ինձանից, կհայտ-  
նի ձեզ» (Հովհ., ԺԶ 12-15):

Ես քեզ կարդացի այն, ինչ Տիրոջ՝ Աստծու Միածին Որ-  
դին ասել է Իր Սուրբ բերանով, որպեսզի դու այլևս կարիք  
չունենաս այս կարևոր հարցերի մասին մարդկային խոս-  
քեր լսելու:

12. Սուրբ Հոգու հետ Տերն այսպես հաղորդվել շնորհեց  
առաքյալներին, քանզի գրված է. «Երբ այս ասաց, նրանց  
վրա փչեց և ասաց. «Առեք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքե-  
րը ներեք, նրանց ներված կլինի. եթե մեկի մեղքերը չնե-  
րեք, ներված չի լինի» (Հովհ., Ի 22-23): Այս երկրորդ փչելն  
էր: Քանի որ առաջինը, որ տրվեց նախաստեղծվածներին,  
սևացվեց մեր կամավոր մեղքերի պատճառով: Եվ այդ ա-  
սաց, որպեսզի կատարված լինի գրվածը. «Ելավ Նա, Ով  
փչում է քո դեմքին և քեզ փրկում նեղությունից»  
(Նավում, Բ 1): Եվ որտեղի՞ց ելավ: Դժոխքից: Քանզի այդ-  
պես է պատմում Ավետարանը, թեև հարույթուն առնելուց  
հետո Նա փչեց առաքյալների դեմքին:

Անշուշտ տալիս է հիմա շնորհը, բայց Նա այդ ավելի ա-  
ռատ է տալիս, ուստիև ասում է. Ես պատրաստ եմ այժմ  
իսկ ձեզ տալու, բայց անոթը չի տեղավորի: Այժմ ստացեք  
ինչքան կարող եք. հետագայում ավելին ևս կշնորհեմ:  
«Իսկ դուք նստեցեք Երուսաղեմ քաղաքում. մինչև որ  
երկնքից զորութայմբ զգեստավորվեք» (Ղուկ., ԻԴ 49):  
Այժմ վերցրեք մասամբ: Իսկ այնժամ կզգեստավորվեք լիո-  
վին: Մի՛ վախեցեք, ասում է, սատանայի զենքերից և նե-  
տերից, քանզի դուք պիտի զգեստավորվեք Սուրբ Հոգով:  
Հիշեցեք նոր ասվածը, թե Հոգին չի մասնատվում, այլ նրա  
միջոցով Շնորհն է մասնատվում:

13. Հիսուս բարձրացավ երկինք և իր խոստումը կատա-  
րեց, քանզի ասել էր նրանց. «Ես պիտի աղաչեմ Հորը, և

Նա մի այլ Մխիթարիչ պիտի տա ձեզ» (Հովհ., ԺԴ 16): Նստել և սպասում էին Սուրբ Հոգու հայտնվելուն, «երբ Պենտեկոստեի օրը լրացավ» (Գործք, Բ 1) այստեղ՝ այս Երուսաղեմ քաղաքում – քանզի այդ շնորհը մերն է, և մենք չենք խոսում ուրիշներին և ուրիշ վայրերում տրված շնորհի մասին: Ուրեմն, երբ նրանք նստած էին Պենտեկոստեի օրը, երկնքից իջնում է Մխիթարիչը՝ Եկեղեցու պահապանը և սրբազործողը, հոգիների դաստիարակը, նավաբեկյալների նավավարը, մոլորյալներին լույս տվողը, վազողների մրցանակադիրը և հաղթողներին պսակողը:

14. Իջնում էր Սուրբ Հոգին, որպեսզի զգեստավորի և մկրտի առաքյալներին: Քանզի Տերն ասում է. «Դուք այս օրերից ոչ շատ հետո պիտի մկրտվեք Սուրբ Հոգով» (Գործք, Ա 5): Սուրբ Հոգու ներգործությունը չի լինում մասնակի, այլ Նրա գործությունը կատարյալ է և ինքնաբավ: Ինչպես որ մկրտվողը ջրում սուզվելուց հետո բոլոր կողմերից ծածկվում է ջրով, այնպես էլ Սուրբ Հոգով նա մկրտվում է անմիջապես: Ջուրը միայն դրսից է թացում, իսկ Սուրբ Հոգին նաև ներսից է մկրտում ամբողջապես: Եվ ինչո՞ւ էս գարմանում: Օրինակ վերցրու նյութից: Գուցե փոքր է և չնչին, բայց օգտակար է պարզամիտներին: Եթե կրակը, անցնելով երկար երկաթի միջով, այն ամբողջովին շիկացնում է, և սառը երկաթը տաքանում է, և սևը դառնում է փայլուն, եթե կրակը, այդ նյութական իրը՝ կրակը, երկաթի մարմնի մեջ մտնելով, այդպես անարգել կատարում է իր գործը, ինչո՞ւ էս գարմանում, որ Սուրբ Հոգին թափանցում է մինչև հոգու խորքերը:

15. Որպեսզի աննկատ չանցնի այսքան մեծ Շնորհի մեծությունը, ասես թե երկնային շեփորի նման հնչեց. «Եվ հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման» (Գործք, Բ 2), որը նշում էր մարդկանց

շնորհված կարողությունը - որով կարող էին խլել Աստուծո թագավորությունը բռնությունով - այնպես, որ աչքերը տեսնեին կրակե լեզուները, և ականջները լսեին ձայնը, «որը և լցրեց այն տունը, որտեղ նստած էին» (Գործք, Բ 2): Տունը դարձավ երևակայական ջրի անոթ: Աշակերտները նստած էին ներսում, և տունը համակ լցված էր: Ուստի բոլորը մկրտվեցին, ինչպես խոստացել էր Տերը, և հոգով ու մարմնով հագան աստվածային փրկարար զգեստը:

«Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ, նման բոցերեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա, և բոլորը լցվեցին Սուրբ Հոգով» (Գործք, Բ 3-4): Նրանք ստացան կրակ, բայց ոչ հրկիզող, այլ փրկարար կրակ, որը ոչնչացնում է մեղքերի փշերը, բայցև պայծառացնում է ոգին: Մկրտությունով այդ կրակը նաև ձեզ պիտի գա, որը պիտի վերացնի և հրկիզի ձեր փշոտ մեղքերը: Իսկ ձեր ոգու թանկագին ստացվածքը պիտի պայծառացնի և ձեզ շնորհք պարգևի: Քանզի, անշուշտ, այնժամ այդ շնորհը պարգևեց նաև առաքյալներին: Կրակե լեզուների տեսքով նստել էր նրանց վրա, որպեսզի առավել փառահեղ հոգևոր պսակներով պսակվեն նրանց գլուխները: Կրակե սուրը նախկինում արգելում էր մարդուն անցնելու դրախտի դարբասներից ներս: Այժմ կրակե փրկարար լեզուն հնարավորություն տվեց վերականգնելու այդ շնորհը:

16. «Եվ սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք, Բ 4): Գալիլիացի Պետրոսը և Անդրեասը խոսում էին պարսկերեն և մարերեն, Հովհաննեսը և մյուս առաքյալները խոսում էին մյուս ազգերի լեզուներով: Քանզի հիմա չէ, որ հավաքվել էին ամեն կողմերից օտարների բազմություններ. բայց այդ պահից սկսեցին հավաքվել: Այդ ո՞ր ուսուցիչն է այդքան մեծ, որ ուսուցանի այսքան շատ կուտակված աշակերտների, ինչքան երբևէ չէին հավաքվել և ինչքան նախկինում

չէին կարողացել սովորել: Այնքան տարիներ են պետք քերականութեան հիման վրա տարբեր եղանակներով միայն հունարենը լավ սովորելու համար: Եվ բոլորը չէ, որ այդ լավ են խոսում: Հռետորը գուցե լավ է խոսում, քերականը՝ երբեմն լավ, քանի որ քերականութիւնը իմացողը հաճախ փրկի սովորութիւններից անտեղյակ է: Մինչդեռ Սուրբ Հոգին միաժամանակ սովորեցնում է շատ լեզուներ, որ նրանք իրենց ամբողջ կյանքի ընթացքում չէին կարող սովորել: Սա ճշմարտապես մեծ իմաստութիւն է, աստվածային զորութիւն: Ի՞նչ համեմատութիւն կարող է լինել երկար տարիների նրանց անգիտութեան և լեզվի այսպիսի բուռն, զարմանալի և հանկարծակի ներգործութեան հետ:

17. Լսողների բազմութիւնը խառնվեց: Սա երկրորդ խառնվելն էր, Բաբելոնում եղած առաջին վատից հետո: Բաբելոնում լեզուների առաջին խառնվելուց հետո տեղի ունեցավ մարդկային կամքի երկատում, քանի որ մտայնութիւնը հակադիր էր: Մինչդեռ այստեղ կատարվեց մտքերի վերահաստատում և միավորում, քանի որ հետապնդվող նպատակը բարեպաշտ էր: Լեզուների միջոցով եղել էր անկումը. դրանց միջոցով էլ եղավ վերադարձը: Ուստի զարմանում էին և ասում. «Այդ ինչպե՞ս է, որ մենք լսում ենք նրանց լեզուները»: Զարմանալի ոչինչ չկա, եթե դուք անգիտանում եք: Նիկողիմոսը ևս անգիտանում էր Հոգու ներկայութիւնը և նրան ասվեց. «Քամին ուր ուղում է՝ փչում է, և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես որտեղից է գալիս, կամ ուր է գնում» (Հովհ., Գ 8): Եթե անգամ նրա ձայնը լսեմ, չգիտեմ այն որտեղից է գալիս, ապա ինչպե՞ս կկարողանամ պատմել, թե որպիսի՞ն է նրա էութիւնը:

18. Իսկ ուրիշները ծաղրելով ասում էին. «Նոր գինուց հարբած են» (Գործք, Բ 13): Նրանք ճիշտ էին, բայց ծաղ-

րելով: Գինին իրոք նոր էր՝ Նոր Կտակարանի Շնորհը: Բայց այդ նոր գինին մտովին պատկերված Այգուց էր, որ բազմիցս պտղաբերել էր մարգարեների մեջ և այժմ դարձյալ ծլարձակեց Նոր Կտակարանում: Քանզի, ինչպես որ բնական որթատունկը, թեև միշտ միևնույնն է մնում, ժամանակ առ ժամանակ ծլարձակում է և նոր պտուղներ տալիս, այնպես էլ Սուրբ Հոգին, թեև մշտապես մնում է նույնը և բազմիցս ներգործել է մարգարեների վրա, այժմ դրսևորեց նոր և հրաշալի մի բան: Քանզի այն ժամանակ Շնորհը նաև մեր հայրերի՝ մարգարեների, իսկ այստեղ՝ գերազանց աստիճանի եկավ աշակերտների վրա: Քանզի այնտեղ մարգարեները գործակցում էին Սուրբ Հոգուն, իսկ այստեղ առաքյալները ամբողջապես մկրտվեցին Սուրբ Հոգով:

19. Իսկ Պետրոսը, որ Սուրբ Հոգին ուներ իր մեջ և լավ գիտեր իր ունեցածը, ասաց. «Ով իսրայելացիներ, դուք, որ անգիր արտասանում եք Հովելի խոսքերը, չեք հասկացել նրա խոսքերի իմաստը: Այս մարդիկ հարբած չեն, ինչպես դուք կարծում եք» (Գործք, Բ 15), այլ ինչպես գրված է. «Պիտի հարբեն քո տան սեղանի առատութիւնից և պիտի խմեցնես քո գրգանքի գետերից» (Սաղմ., ԼԵ 9): Նրանց հարբելը հանգիստ է, մեղքերն՝ սպանող: Այն կենդանացնում է սիրտը, և հակադիր է մարմնական հարբեցումին: Քանզի մարմնականը մոռացութեան է մատնում անգամ քո իմացածը: Իսկ հոգևոր հարբեցումը քեզ շնորհում է անգամ չիմացածիդ իմացութիւնը: Նրանք հարբել են՝ խմելով մտովի այգու գինին, որ ասում է. «Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը» (Հովհ., ԺԵ 5): Եթե ինձ չեք հավատում, իմ ասածը կարող եք հասկանալ տարվա ժամանակից. «Քանի որ առավոտյան ժամը ինն է» (Գործք Բ 15): Եվ Նա, Ով խաչվեց երրորդ ժամին, ինչպես ասում է Մարկոս Ավետարանիչը (Հմմտ. Մարկ., ԺԵ 25). այժմ ուղարկեց



Շնորհը: Քանզի տարբեր չէր այդ Փրկչի Շնորհը և տարբեր՝ այս Մխիթարիչի Շնորհը: Այլ Նա, Ով այնժամ խաչվեց և խոստացավ ուղարկել Սուրբ Հոգու Շնորհը, այժմ կատարեց իր խոստումը, ի դեմս առաքյալների:

Եթե ուզում եք այս մասին վկայությունն էլ իմանալ, ապա լսեք, որ ասում է. «Այս այն է, որ ասվեց Հովել մարգարեի բերանով: Եվ պիտի լինի սրանից հետո, վերջին օրերին, - ասում է Աստված,- որ իմ Հոգուց պիտի թափեմ ամեն մարդու վրա» (Գործք, Բ 16-17: Հովել, Գ 1): Այս «պիտի թափեմ» խոսքը նշանակում է՝ առատորեն. քանզի Աստված Հոգին չի բաշխում չափաբաժնով: Հայրը սիրում է Որդուն և ամեն ինչ տվել է Նրա ձեռքը» (Հովհ., Գ 34-35): Նաև իշխանություն տվեց Նրան՝ պարզեցրելու Սուրբ Հոգու Շնորհը՝ ում որ կամենա: «Իմ Հոգուց պիտի թափեմ ամեն մարդու վրա, և ձեր որդիներն ու դուստրերը պիտի մարգարեանան, ձեր երիտասարդները՝ տեսիլներ և ձերերը երագներ պիտի տեսնեն, և իմ ծառաների և իմ աղախիմներին վրա այն օրերին իմ Հոգուց պիտի թափեմ, և նրանք պիտի մարգարեանան» (Գործք, Բ 18: Հովել, Գ 2): Սուրբ Հոգին երեսպաշտ չէ: Ոչ ոքից պատիվներ չի պահանջում, այլ՝ Հոգու բարեպաշտություն: Ո՛չ ընչեղները մեծամտանան, ո՛չ աղքատները նվաստացած զգան: Միայն թե ամեն մեկը իր անձը նախապատրաստի երկնային Շնորհն ընդունելու համար:

20. Ես այսօր գուցե շատ բան ասացի ձեզ, և ունկնդրելը ձեզ համար դարձավ հոգնեցուցիչ: Բայց մեր բաց թողածը դեռ ավելին է: Եվ իրոք, Սուրբ Հոգուն վերաբերող բաները ձեզ սովորեցնելու համար անհրաժեշտ կլինեն մի երրորդ, գուցե և ավելի, ուսուցում: Բայց ձեզանից ներումն կխնդրեմ, որ այսօր իմ խոսքը երկարեց, քանի որ Սուրբ Զատիկի տոնը վերահաս է, բայց և այն պատճառով, որ ինձ հնարավորություն չտրվեց Նոր Կտակարանից ձեզ ներկա-

յացնել անհրաժեշտ բոլոր վկայությունները: Քանզի դեռևս շատ բան մնում է Գործք առաքելոցից, որոնց համաձայն Սուրբ Հոգին ներգործեց Պետրոսի և մյուս առաքյալների վրա: Շատ բան է մեզ պակասում նաև Ընդհանրական թղթերից և Պողոսի տասնչորս թղթերից: Այդ ամենից այժմ, ինչպես ծաղկած մարգագետնից, ծաղկաքաղ կանենք՝ դրանք հիշատակած լինելու նպատակով:

21. Այսպես, Սուրբ Հոգու գորությունը և Հոր և Որդու կամքով Պետրոսը մյուս տասնմեկի հետ կանգնեց և, ինչպես գրված է, ձայնը բարձրացրեց և ասաց. «Ուժ տուր Քո ձայնին, Ո՛վ ավետաբերդ Երուսաղեմի» (Եսայի, Խ 9): Եվ խոսքի ենթադրյալ ցանցով որսաց շուրջ երեք հազար հոգու: Այնքան հրաշալի և հզոր ներգործում էր Սուրբ Հոգու Շնորհը բոլոր աշակերտների վրա, որ անգամ շատերն այն հրեաներից, որոնք խաչել էին Քրիստոսին, հավատացին և մկրտվեցին հանուն Քրիստոսի և հավատարիմ ու նվիրված առաքյալների վարդապետությունը և Եկեղեցու պաշտամունքային ձեռնարկումներին (հմտ. Գործք, Բ 42):

Սուրբ Հոգու այդ նույն գորությունը Պետրոսը և Հովհաննեսը երբ միասին բարձրացան տաճար իններորդ ժամի աղոթքի համար, այնտեղ Գեղեցիկ կոչված դուան առաջ տեսան մորից կաղ ծնված մի հաշմանդամի, որը արդեն քառասուն տարի էր այդ վիճակում, և Հիսուսի անունով նրան բժշկեցին, որով և իրականություն դարձան Եսայու խոսքերը, թե «այդ ժամանակ կաղը եղջերուի պես պիտի վազի» (Եսայի, ԼԵ 6): Եվ իրենց քարոզների հոգևոր ցանցով որսացին միաժամանակ հինգ հազար հավատացածների, մինչդեռ ժողովրդի առաջնորդները, որոնք մոլորվել էին, քահանայապետերին հանդիմանեցին: Եվ այդ արեցին ոչ թե իրենց սեփական իմաստությունը, քանզի անգրագետ և հասարակ մարդիկ էին, այլ Հոգու ներգործությունը: Քանզի գրված է. «Այն ժամանակ Պետրոսը, Սուրբ Հոգով

լցված, ասաց նրանց» (Գործք, Դ 8): Եվ այնքան ճոխ ու հրաշալի էր Սուրբ Հոգու Շնորհը, որ տասներկու առաքյալների միջոցով Նա ներգործեց հավատացյալների վրա [այնպես], որ նրանց բազմությունը մեկ սիրտ և մեկ հոգի էր: Նրանց ունեցվածքը ընդհանուրի տրամադրություն տակ դրվեց, և ընչեղներն իրենց ունեցվածքը ծախում էին և փողը տալիս առաքյալներին: Ամեն ինչ երկյուղածությամբ տալիս էին ընդհանուրի համար, որով նրանց մեջ աղքատ չմնաց: Այնժամ Անանիան և Սափիրան, որ փորձեցին սուտ խոսել Սուրբ Հոգուն (հմտ. Գործք, Ե 3), կրեցին արժանի պատիժ:

22. «Եվ առաքյալների ձեռքով բազում նշաններ ու զարմանալի գործեր էին կատարվում ժողովրդի մեջ» (Գործք, Ե 12): Եվ այնքան հրաշալի ու մեծաքանիզ հոգեկան շնորհ էր թափվել աշակերտների շուրջ, որ նրանց տեսքը դարձել էր երկյուղալի, թեև նրանք հանգիստ էին: Ուրիշներից ոչ ոք չէր համարձակվում մոտենալ նրանց, իսկ ժողովուրդը նրանց հարգում էր (Գործք, Ե 13): Եվ հետզհետե մեծանում էր Տիրոջը հավատացող այրերի և կանանց թիվը: Հիվանդներին հանում էին հրապարակները և մահիճներով պատգարակներով դնում, որպեսզի Պետրոսի անցնելու ժամանակ գոնե նրա ստվերը ընկնի դրանցից որևէ մեկի վրա: Եվ շրջակա քաղաքներից բազմությունը հավաքվում էր սուրբ Երուսաղեմում: Բերում էին հիվանդներ և պիղծ ոգիներից տանջվածներ, որոնք բոլորն էլ բժշկվում էին:

23. Սուրբ Հոգու այս զորությամբ տասներկու առաքյալները դարձյալ քահանայապետերի կողմից բանտարկվեցին՝ Քրիստոսին քարոզած լինելու համար: Բայց գիշերը զարմանալի կերպով նրանք ազատվեցին հրեշտակի ձեռքով: Տաճարից նրանք բերվեցին ատյան, քահանայապետե-

րի առաջ, որոնք խստորեն հանդիմանեցին աշակերտներին այն խոսքերի համար, որ ասել էին Քրիստոսի մասին: Աշակերտները ասվածներին ավելացրին նաև, թե Աստված տվեց Սուրբ Հոգին բոլոր իրեն հավատացողներին: Ապա աշակերտներին ծեծելուց հետո բաց թողեցին, որ մեկնեն: Առաքյալները ուրախ հեռացան, բայց և չդադարեցին ուսուցանել ու քարոզել Հիսուս Քրիստոսի Ավետարանը:

24. Սուրբ Հոգու Շնորհը ներգործեց ոչ միայն տասներկու առաքյալների վրա, այլև այդ ժամանակ դեռևս ամուլ եղած այս Եկեղեցու անդրանիկ զավակների վրա. ես նկատի ունեմ սարկավազներին: Քանզի, ինչպես գրված է, սրանք ևս ընտրվեցին, քանի որ լցված էին Սուրբ Հոգով և իմաստությամբ: Սրանց թվում էր նաև Ստեփանոս՝ վկաների ընտրյալ սկիզբը: Սուրբ Հոգով և հավատով լցված մի այր: Նա ժողովրդի մեջ բազում հրաշքներ կատարեց, նշաններ էր գործում և մեծ պայքար էր մղում սինագոգում վիճողների դեմ: «Նրանք չէին կարողանում դիմակայել այն իմաստությանը և հոգուն, որով խոսում էր նա» (Գործք, Զ 10): Երբ նա զրպարտվեց և ատյան տարվեց, փայլում էր հրեշտակի նման. «Եվ բոլոր նրանք, որ նստած էին ատյանում, նրան նայելով՝ տեսան, որ նրա երեսը հրեշտակի երեսի նման էր» (Գործք, Զ 15): Եվ իր խելամիտ ու իմաստուն ջատագովությամբ քննադատեց հաստավիզներին և սրտով ու լսելիքով անթլփատ հրեաներին, որոնք միշտ հակադրվում էին Սուրբ Հոգուն. «Եվ տեսնում էր նա երկինքը՝ բացված և Մարդու Որդուն՝ նստած Աստծու աջ կողմում» (հմտ. Գործք, Է 55): Նա այդ տեսավ ոչ թե իր զորությամբ, այլ ինչպես գրված է. քանզի լցված էր Սուրբ Հոգով. «Աչքերը հառեց երկինք և տեսավ Աստծու փառքը և Հիսուսին՝ կանգնած Նրա աջ կողմում» (Գործք, Է 55):

25. Սուրբ Հոգու այս զորությամբ Փրկիպպոսը ևս Քրիստոսի անունով Սամարիա քաղաքում «գուրս վտարեց պիղծ հոգիները, որոնք բարձր աղաղակով դուրս էին գալիս, և բուժեց անդամալուծներին ու կաղերին» (Գործք, Ը 7), և Քրիստոսի հավատին բերեց հավատացյալների մեծ բազմություն: Ավելի ուշ այնտեղ եկան Պետրոսը և Հովհաննեսը «և աղոթելով ձեռքները դրեցին նրանց վրա, և նրանք դարձան Սուրբ Հոգուն հաղորդակից» (Գործք, Ը 17): Այստեղ միայն Սիմոն մոգը խորթ դուրս եկավ: Դարձյալ մի անգամ, երբ Փրկիպպոսը ճանապարհին էր, Տիրոջ հրեշտակի միջոցով կանչվեց բարեպաշտ եթովպացի ներքինու մոտ և պարզորոշ լսեց Սուրբ Հոգուց. «Առաջացիր ու գնա այդ կառքի մոտ» (Գործք, Ը 29): Նրան ուսուցանելուց և մկրտելուց հետո ուղարկեց Եթովպիա, Քրիստոսին քարոզելու համար, ինչպես որ գրված էր. «Եթովպիան իր ձեռքերը պիտի պարզի Տիրոջը»: Եվ հափշտակվելով հրեշտակի կողմից՝ նա սկսեց քաղաքներում Ավետարանը քարոզել (Հմմտ. Գործք, Ը 39-40):

26. Մեր Տեր Հիսուս Քրիստոսից կանչվելուց հետո Պողոսը ևս այս Սուրբ Հոգով լցվեց: Իմ խոսքի վկան թող լինի բարեպաշտ Անանիան Դամասկոսից, որն ասաց նրան. «Տերն ինձ ուղարկեց՝ Հիսուսը, որը քեզ երևաց այն ճանապարհի վրա, որով գալիս էիր, որպեսզի տեսնես ու լցվես Սուրբ Հոգով» (Գործք, Թ 17): Եվ Սուրբ Հոգին իսկույն ներգործեց և Պողոսի աչքերի կուրուցությունը վերածեց տեսողության, իսկ նրա հոգում դրեց իր կնիքը և նրան դարձրեց ընտրյալ անոթ, որպեսզի թագավորների և իսրայելացիների առաջ տանի իրեն հայտնված Տիրոջ անունը (Հմմտ. Գործք, Թ 15): Եվ այսպես, նախկին հալածողին վերածեց բարի քարոզչի և ծառայի, որպեսզի Երուսաղեմից մինչև Իլլիրիա տարածի Ավետարանի քարոզը (Հմմտ. Հռոմ., ԺԵ 19): Նա քարոզեց անգամ արքայանիստ Հռոմում: Քարո-

զելու նրա եռանդը հասավ մինչև Իսպանիա, կրեց բյուր տանջանքներ և մեծ հրաշքներ գործեց: Մինչև այստեղ նրա մասին մեր ասածը բավական համարենք:

27. Նույն Սուրբ Հոգու զորությամբ էլ Պետրոսը՝ առաքյալներին գլխավորողը և երկնքի թագավորության բանալիների պահապանը, Լյուզդայում, որն այժմ կոչվում է Դիոսպոլիս, Քրիստոսի անունով բժշկեց անդամալուծ էնեասին: Եվ Հոբբեում՝ բարեպաշտ Տաբիթային, որ մեռած էր, հարուխյուն տվեց (Գործք, Թ 32-34 և Թ 40): Երբ նա կաշեգործ Սիմոնի տանը բարձրացել էր տանիք՝ աղոթելու, ընկնում է հափշտակության մեջ և տեսնում է երկինքը բացված և չորս ծայրերից կախված մի անոթ՝ մեծ սփռոցի նման, ամենազան կենդանիներով լցված (Գործք, Ժ 11-12): Երբ Կոռնելիոսը Հոբբեից մարդ էր ուղարկել՝ գտնելու Պետրոսին և նրան իր մոտ բերելու, պարզ կերպով լսեց Սուրբ Հոգու ձայնը, որ ասում էր. «Ահավասիկ ինչ-որ մարդիկ քեզ փնտրում են: Դու վեր կաց, իջիր և առանց երկմտելու գնա նրանց հետ, որովհետև նրանց ես եմ ուղարկել (Գործք, Ժ 20):

Եվ որպեսզի պարզ երևա, թե հեթանոսները ևս կարող են դառնալ Սուրբ Հոգուն հաղորդակից, երբ Պետրոսը գնաց Կեսարիա և Քրիստոսին քարոզեց, Սուրբ Գիրքը Կոռնելիոսի և բոլոր ներկաների մասին ասում է. «Եվ մինչ Պետրոսը այս բաներն էր ասում, Սուրբ Հոգին իջավ բոլոր նրանց վրա, ովքեր այս խոսքը լսում էին: Ծագումով հրեա հավատացյալները, որոնք Պետրոսի հետ էին եկել, զարմացան, որ հեթանոսների վրա ևս Սուրբ Հոգու շնորհները հոսում են» (Գործք, Ժ 44-45):

28. Ասորիքի ամենահայտնի քաղաք Անտիոք, որտեղ սկսել էր քարոզվել Քրիստոսի Ավետարանը, այստեղից այնտեղ ուղարկվեց Բառնաբասը՝ օգնելու հավատքի տա-

րածմանը: Նա բարի, Սուրբ Հոգով և հավատքով լցված մարդ էր: Համոզվելով, որ շատ մարդիկ հետաքրքրվում են՝ ճանաչելու հավատքը և Քրիստոսի կյանքը, Տարսնից Անտիոք բերեց իր գործակից Պողոսին: Եվ երբ նրանք քարոզեցին ու Եկեղեցում հավաքվեց մեծ բազմություն, առաջին անգամ Անտիոքում պատահեց, որ աշակերտներին անվանեցին քրիստոնյաներ (հմմտ. Գործք, ԺԱ 26): Կարծում եմ, որ Սուրբ Հոգին էր, որ նրանց տվեց այդ նոր անվանումը, որ Տերը նախապես հայտարարել էր հավատացյալների համար: Քանի որ այդ ժամանակ Անտիոքում հետզհետե ավելի ու ավելի շատ էր պարզւում հոգեկան շնորհը, այնտեղ կային մարգարեներ և ուսուցիչներ, որոնց թվում էր նաև Ագաբոսը: «Մինչ նրանք Տիրոջ պաշտամունքի մեջ էին և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց նրանց. Բառնաբասին և Սողոսին առանձնացրեք ինձ համար, որ անեն այն գործը, որին ես դրանց կոչել եմ» (Գործք, ԺԳ 2): Եվ նրանց վրա ձեռք դրեցին, և նրանք ուղարկվեցին Սուրբ Հոգու կողմից: Ուրեմն, պարզ է, որ այդ խոսող և ուղարկող Հոգին իր կամքով ու ներգործությամբ նույնական է Հոր և Որդու հետ, առանց կորցնելու իր առանձին գոյությունը:

29. Այս Սուրբ Հոգին էր, որ Հոր և Որդու հետ միատեղ և ներդաշնակ, մարդու հետ կնքեց Աստծու նոր Ուխտը Քրիստոսի կաթողիկե ընդհանրական եկեղեցու մեջ: Այդ Նա է, որ մեզ ազատեց նաև Օրենքի դժվարակիր բեռից: Ես նկատի ունեմ մաքուր և պիղծ ուսուցիչների, Շաբաթ օրվա, ամսագլխի, թլփատություն, սրբագործման ցողումների, մաքրագործման գոհաբերությունների ծեսերը, որոնք Աստծուց սահմանված ժամանակ ունեին իրենց իմաստը և միայն ստվերն էին ապագա բարիքների (հմմտ. Կողոս., Բ 16-17 և Եբբ., Ժ 1), երբ արդեն այժմ մեզ հայտնվել է փրկարար Ճշմարտության վարձը, դրանք, հիրավի, կորցրել

են իրենց ծիսական նշանակությունը և արդարացումը:

Եվ քանի որ Անտիոքում վեճ սկսվեց նրանց կողմից, ովքեր պնդում էին, թե պետք է թլփատվել և պահել Սովսեսի օրենքները, Պողոսն ու Բառնաբասն ուղարկվեցին Երուսաղեմ: Երուսաղեմում գտնվող առաքյալները գրավոր թղթով համայն աշխարհն ազատեցին հրեական օրենքի սահմանած բարոյական և ծիսական պարտավորություններից: Այսպիսի հարցի շուրջ նրանք իրենց հեղինակություններ չհամարեցին, այլ այսպիսի մի թղթով խոստովանեցին. «Որովհետև հաճելի թվաց Սուրբ Հոգուն և մեզ՝ ավելի ոչ մի բեռ չդնել ձեզ վրա, բացի այս կարևորներից, այն է՝ հեռու մնալ կուռքերին զոհված կերակուրներից և արյունից, խեղդամահ արված կենդանիներից ու պոռնկությունից» (Գործք, ԺԵ 28-29): Այս գրությունը նրանք ուզում էին հայտարարել, որ թեև այն գրել էին մարդիկ, այն է առաքյալները, սակայն այն բխում է Սուրբ Հոգուց և վերաբերում էր համայն տիեզերքին: Եվ այդ էլ ընդունեցին որպես տիեզերական կարգադրություն նրանք, ովքեր Բառնաբասի և Պողոսի հետ էին և դրանք ամրապնդեցին ամբողջ աշխարհում:

30. Քանի որ խոսքն այս կետին հասավ, ես ներողություն եմ հայտնում ձեր սիրուց, առավել ևս Պողոսի մեջ բնակված Սուրբ Հոգուց, որ իմ անկարողության և իմ ունկնդիրների հոգնածություն պատճառով չկարողացա ամեն ինչ բացատրել: Բայց ե՞րբ կկարողանամ ըստ արժանվույն խոսել և պատմել այն հիասքանչ գործերի մասին, որ Քրիստոսի անունով և Սուրբ Հոգու ներգործությամբ կատարեց Պողոսը Կիպրոսում մոգ Ելիմի օրոք, Լիստրայում՝ կաղի բժշկելով, Կիլիկիայում, Փռյուզիայում, Գաղատիայում, Մյուսիայում, Մակեդոնիայում կամ Փիլիպպեում, - ես նկատի ունեմ քարոզը հանուն Քրիստոսի, վիշապի վտարումը և բանտապահի ընտանյոք փրկությունը գիշերը

տեղի ունեցած երկրաշարժից հետո, - կամ Թեսաղոնիկեում, և նրա քարոզը Արիոս Պագոսում աթենացիների առաջ, կամ նրա քարոզները Կորնթոսում և ամբողջ Աքայա-յում: Ինչպե՞ս պիտի կարողանամ պատմել Պողոսի միջոցով Սուրբ Հոգու կատարած ներգործությունները Եփեսոսում: Այնտեղ եղածներն, անշուշտ, սկզբում չգիտեին, թե ի՞նչ է Սուրբ Հոգին: Այդ իմացան Պողոսի քարոզելուց հետո: Եվ երբ Պողոսը նրանց վրա ձեռքը դրեց, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա. լեզուներ էին խոսում և մարգարեանում» (Գործք, ԺԹ 6): Այնքան մեծ էր Պողոսի վրա եղած հոգևոր Շնորհը, որ ոչ միայն բուժվում էր անգամ նրան դիպչողը, այլև «մինչև իսկ նրա քրտինքը չորացրած թաշկինակներ կամ վարչամակներ էին տանում հիվանդների մոտ, և ախտերը հեռանում էին նրանցից, և չար ոգիները դուրս էին գալիս» (Գործք, ԺԹ 11-12): Բացի այս, ովքեր մինչ այդ դիվային միջոցներ և մոգություններ էին կիրառում, այժմ հավաքում էին իրենց գրքերը և այրում:

31. Զանց եմ առնում այն դեպքը, որ տեղի ունեցավ Տրոյա երկրում Եվտիքոսի հետ, որ քնած ժամանակ երրորդ հարկից ընկել էր և մահացել, բայց Պողոսը նրան վերակենդանացրել էր: Զանց եմ առնում նաև այն մարգարեությունները, որ արեց Պողոսը Եփեսոսի ավագներին, որոնց կանչել էր Միլետ և պարզորեն ասել, որ «Սուրբ Հոգին ամեն քաղաքում ինձ վկայում է ու ասում՝ կապանքներ և նեղություններ են սպասում քեզ» (Գործք, Ի 23): Ասելով «ամեն քաղաքում»՝ նա ցույց էր տալիս, որ այն բոլոր հրաշագործությունները, որ կատարվում էին իր հետ, հետևանք էին Սուրբ Հոգու ներգործությանը, այսինքն՝ կատարվում էին Աստուծո Հոգով և Քրիստոսի անունով, ով խոսում էր իր մեջ:

Եվ դարձյալ Սուրբ Հոգու գործությամբ էր, որ նույն Պողոսը շտապեց այս սուրբ Երուսաղեմ քաղաքը, ու, թեև Ա-

գաբոսը Սուրբ Հոգու միջոցով գուշակեց նրան այն, ինչ իրեն պատահելու էր, նա քարոզում ու պատմում էր Քրիստոսի մասին լի վստահությամբ: Կեսարիայում ևս, երբ ատյան առաջնորդվեց, մերթ Ֆելիքսի և մերթ կառավարիչ Փեստոսի և Ագրիպաս թագավորի առաջ, այնքան մեծ էր Սուրբ Հոգուց նրա ստացած շնորհը, որ հաղթում էր մարդկային իմաստությանը, որպեսզի ինքը՝ հրեաների թագավոր Ագրիպասը ասի. «Քիչ է մնում, որ ինձ էլ համոզես, որ քրիստոնյա դառնամ» (Գործք, ԻԶ 28):

Այս Սուրբ Հոգին էր, որ Պողոսին գործություն տվեց Մելիտե կղզում, որպեսզի նա անվնաս մնա իժի խայթոցից (Գործք, ԻԸ 3) և զանազան բժշկություններ կատարի: Այս Սուրբ Հոգին էր նրան առաջնորդել մինչև քաղաքների թագուհի Հռոմ, որպես Քրիստոսի քարոզիչ. նրան՝ նախկին հալածիչին, որն այժմ արդեն այստեղ բնակվող հրեաներից շատերին բերեց Քրիստոսի հավատին, իսկ հակառակվողներին ասում էր. «Սուրբ Հոգին Եսայի մարգարեի բերանով լավ խոսեց մեր հայրերին» (Գործք, ԻԸ 25):

32. Այն, որ Պողոսը և նրա նման մյուս առաքյալները և նրանցից հետո Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն հավատացողները լցված էին Սուրբ Հոգով, պարզ ասում է նա իր թղթերում. «Ե՛վ իմ խոսքը, և՛ քարոզությունը իմաստության ճարտար խոսքերով չէին, այլ Սուրբ Հոգու համոզիչ գործությամբ» (Ա Կորնթ., Բ 4): Եվ նորից. «Աստված է, որ մեզ կնքեց և Հոգու առհավատչյան դրեց մեր սրտերի մեջ» (Բ Կորնթ., Ա 22): Եվ դարձյալ «Ով հարություն տվեց Հիսուսին մեռելներից, կկենդանացնի նաև ձեր մահկանացու մարմինները ձեր մեջ բնակվող իր Հոգով» (Հռոմ., Ը 11): Եվ Տիմոթեոսին գրում է. «Պահիր բարի ավանդը մեր մեջ բնակվող Սուրբ Հոգու միջոցով» (Բ Տիմ., Ա 14):

33. Այն, որ Սուրբ Հոգին ինքնատիպ է և ապրում է, և խոսում է, և նախագուշակում է, անցյալում արդեն բազմիցս ասել ենք: Իսկ Պողոսը Տիմոթեոսին պարզորոշ գրում է. «Եվ Սուրբ Հոգին հայտնապես ասում է, թե վերջին ժամանակներում ոմանք պիտի հեռանան հավատից» (Ա Տիմ., Դ 1). մի բան, որ արդեն տեսնում ենք ոչ միայն մեզնից առաջ եղած հերձվածներում, որոնց մոլորությունները բազմազան են և բազմաբնույթ:

Դարձյալ նույն Պողոսն ասում է. «Քրիստոսի խորհուրդը, որ այլ սերունդների մարդկանց որդիներին ցույց չտրվեց, ինչպես այժմ այն հայտնվեց իր սուրբ առաքյալներին և մարգարեներին Սուրբ Հոգու միջոցով» (Եփես., Գ 5): Եվ դարձյալ՝ «Դրա համար էլ Սուրբ Հոգին ասում է» (Եբր., Գ 7): Եվ մի ուրիշ տեղ՝ «Այդ մեզ վկայում է նաև Սուրբ Հոգին» (Եբր., Ժ 15): Եվ դարձյալ, արդարություն մարտիկներին կոչ անելով, ասում է. «Եվ առեք փրկության սաղավարտն ու Հոգու սուսերը, որ է Աստծու խոսքը: Ամենայն աղոթքներով և աղաղակներով աղոթեցեք» (Եփես., Զ 17-18): Եվ դարձյալ՝ «Մի հարեք զինով, որի մեջ զեխություն կա, այլ մանավանդ լցվեցեք հոգով, որպեսզի խոսեք մարդկանց հետ սաղմոսներով, օրհներգություններով և հոգևոր երգերով» (Եփես., Ե 18-19): Եվ մի ուրիշ անգամ՝ «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Շնորհը, Աստծու Սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը թող լինեն բոլորիդ հետ» (Բ Կորնթ., ԺԳ 13):

34. Այն ամենից, ինչ ասել ենք մինչև հիմա և այն ամենից, ինչ բաց ենք թողել, - իսկ դրանք ավելի շատ են, - համապատասխան դատողությամբ օժտված մարդն արդեն կարող է եզրակացնել, որ Սուրբ Հոգին, որպես ինքնակա, ինքնագոր և գերագույն էություն, մշտապես ներգործում է մարդկանց վրա և սրբացնում նրանց: Ժամանակը չէր բավարարի, եթե ես ուզենայի անդրադառնալ այն ամենին,

ինչ կա Պողոսի տասնչորս թղթերում, որոնցում նա զանազան ձևերով և մեծ երկյուղածությամբ սովորեցրել է: Իրոք, Սուրբ Հոգու ամենագորություն գործը կլինեք, որ նա մեզ ներքե մոտալուստ Զատկի տոների պատճառով մեր բացթողումները: Իսկ ձեզ՝ ունկնդիրներին, Սուրբ Հոգին թող շնորհի հնարավոր իմացությունը այն բացթողումների, որ դուք կարող եք հոժարությամբ ձեռք բերել՝ շարունակ ընթերցելով Սուրբ Գիրքը: Անշուշտ, ուսուցման ընթացքում ցարդ ձեր պատճառով հզորացել է ձեր հավատքը Մեկ Ամենակալ Հոր, Նրա Միածին Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի և Մխիթարիչ Սուրբ Հոգու հանդեպ: Քանզի հոգի բառը և այդ անվանումը Սուրբ Գրքում գործածվում է այս երեքի համար առանց խտրության: Այն վերաբերում է, ինչպես գրված է Հովհաննու Ավետարանում՝ «Աստված Հոգի է» (Հովհ., Դ 24): Այն վերաբերում է նաև Որդուն, ինչպես ասել է Երեմիա մարգարեն. «Օձյալը (Քրիստոսը) մեր անձի շունչն է» (Ողբ, Դ 20): Նույնը նաև Սուրբ Հոգու մասին, ինչպես ասվել է. «Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին» (Հովհ., ԺԴ 26): Բայց ըստ կարգի՝ ընթացքում խոստովանում ենք մեր հավատքը Հանգանակի նկատմամբ, արտահայտվում ենք այնպես, որ պահպանվի վարդապետության ամբողջականությունը և մերժվի Սաբելիոսի մոլորությունը: Ուստի, այժմ ձեր օգտի համար վերադառնանք առավել կարևոր և հրատապ հարցին:

35. Զգուշացիր, չլինի թե դու պատահաբար զնաս նրանց մոտ, ովքեր քեզ կմկրտեն կեղծ տրամադրվածությամբ, ինչպես մոգ Սիմոնը, իսկ քո սիրտը չի փնտրում ճշմարտությունը: Իմ գործն է քեզ զգուշացնել, իսկ քո գործը՝ պաշտպանվել նրանցից: Եթե հաստատ մնացիր քո հավատքի մեջ, երանելի ես: Եթե ընկել ես անհավատության մեջ, այսօր իսկ դեն նետիր անհավատությունը և իմացիր ճշմարտությունը: Քանզի մկրտության պահին երբ մո-



տենաս եպիսկոպոսներին կամ ավագներին, կամ սարկավագներին – քանզի Շնորհը ամենուր է, և՛ գյուղերում, և՛ քաղաքներում, և՛ հասարակ մարդկանց համար, և՛ մտավորականների, և՛ ծառաների, և՛ ազատների համար, որովհետև Շնորհը չի գալիս մարդկանցից, այլ մարդկանց միջոցով շնորհվում է Աստուծոց – դու մոտեցիր քեզ մկրտողին, առանց ուշադրություն դարձնելու նրա տեսանելի դեմքին, այլ հիշիր Սուրբ Հոգուն, որի մասին այժմ խոսում ենք: Քանզի Նա պատրաստ է կնքելու քո հոգին: Եվ Նա դնում է քեզ վրա երկնային և սուրբ կնիքը, որից դողում են դևերը: Ինչպես գրված է՝ «Դուք էլ լսեցիք ճշմարտություն խոսքը, ձեր փրկության Ավետարանը, որին հավատարիվ կնքվեցիք խոստացված Սուրբ Հոգով» (Եփես., Ա 13):

36. Բայց Սուրբ Հոգին փորձում և քննում է ամեն մի ոգու և «մարգարիտները խոզերի առաջ չի գցում»: Եթե կեղծում ես, մարդիկ այժմ քեզ կմկրտեն, բայց Սուրբ Հոգին քեզ չի մկրտի: Իսկ եթե մոտենում ես հավատքով, այնժամ, անշուշտ, երևութապես մարդիկ կսպասարկեն, բայց Սուրբ Հոգին քեզ կշնորհի անտեսանելին:

Մկրտության պահին ենթարկվում ես մեծ քննության, մեծ զորահավաքի: Եթե այդ պահը կորցնես, անուղղելի սխալ կգործես: Իսկ եթե Շնորհին արժանանաս, ապա կլուսավորվի հոգիդ, կստանաս ուժ, որը չունենիր: Դու կստանաս սարսափելի զենք դևերի հանդեպ: Եթե զենքը չնետես, դու քո հոգում կունենաս դրոշմը և ոչ մեկ դև քեզ չի մոտենա, քանզի նա կվախենա: Որովհետև դևերը վտարվում են Աստուծու Հոգու միջոցով (Հմմտ. Մատթ., ԺԲ 28):

37. Եթե դու հավատաս, ապա ոչ միայն կստանաս մեղքերի թողություն, այլև կկատարես գերմարդկային գործեր: Երանի արժանի դառնաս նաև մարգարեական շնորհի: Դու կստանաս այնքան շնորհք, ինչքան կարող ես, և ոչ թե ինչ-

քան ես ունեմ: Գուցե իմ խոսքի զորությունը աղքատ է, իսկ դու կարող ես իմ ասածից ավելին ընդունել: Քանզի իրոք հավատը շատ լայն է: Մշտապես քեզ համար պահպան կլինի Մխիթարիչը: «Քեզ համար Նա կհոգա որպես իր մարտիկի: Կհսկի քո մուտքն ու ելքը կյանքում» (Սաղմ., ԺԲ 8): Նաև կպահպանի քեզ քո թշնամիներից ու քեզ կպարզեի ամեն տեսակ շնորհ, եթե Նրան որևէ մեղքով չտխրեցնես: Քանզի գրված է. «Եվ մի տրտմեցնեք Աստուծու Սուրբ Հոգին, որով կնքվեցիք փրկության օրվա համար» (Եփես., Դ 30): Իսկ ի՞նչ է նշանակում պահպանել Շնորհը: Այն, որ պատրաստ լինեք, երբ Նա եկավ, ընդունեք Նրան և մի՛ հեռացնեք:

38. Եվ ինքը՝ բոլորի Աստվածը, որ Սուրբ Հոգու միջոցով խոսեց մարգարեների մեջ, Նա, Ով Պենտեկոստեի օրը այն ուղարկեց առաքյալների վրա այստեղ՝ այս քաղաքում, այժմ ևս թող ձեզ վրա ուղարկի: Այդ նպատակով էլ թող պահպանի մեզ, քանի որ մեզ պարգևել է այնքան մեծ Շնորհը, որ մշտապես Նրան վերադարձնենք «Սուրբ Հոգու պտուղները՝ սեր, խնդություն, խաղաղություն, համբերություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն» (Գաղատ., Ե 22-23), միացած Մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Ում միջոցով և Ում հետ և Սուրբ Հոգու հետ փառք Հորն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:



## ՈՒՍՈՒՑՈՒՄ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԳ

### Արված Երուսաղեմում՝ Հանգանակի՝ «Հավատում ենք նաև Միակ, Ընդհանրական Սուրբ Եկեղեցուն, մարմնի հարությանը և հավիտենական կյանքին:»

Ընթերցում Եզեկիելից. «Տիրոջ ձեռքը հանգչեց ինձ վրա, բարձրացրեց ինձ Տիրոջ Հոգով, դրեց ինձ մի դաշտի մեջ, որ լի էր մարդկանց ոսկորներով» (Եզեկ., ԼԷ 1) և շարունակությունը:

1. Ամեն մի բարեգործության արմատը Հարուստիան Հուլյան է: Քանզի վարձատրման ակնկալությունը զորացնում է հոգին՝ բարին գործելու համար: Քանզի յուրաքանչյուր աշխատող պատրաստ է հանձն առնել ամեն մի աշխատանք և հոգնություն, եթե նախատեսում է, թե դրա համար կվարձատրվի: Մինչդեռ անվարձ աշխատողները, դեռևս մարմնապես չհոգնած, ընկճվում են հոգեպես, պարզեցնել ակնկալող զինվորը պատրաստ է մարտի նետվելու: Թագավորից զինվորագրված որևէ զինվոր, եթե համոզված չէ Հաղթանակին և չի կարող կանխատեսել պատերազմի ավարտը, պատրաստ չի լինի իր կյանքը զոհելու, եթե այդ թագավորը չի վարձատրում նրան պարզեցնելով: Այդպես նաև հոգու դեպքում: Եթե այն հավատում է Հարստության, բնական է, որ ուշադիր կլինի իր անձի նկատմամբ: Բայց եթե հույս չունի Հարստության, նա հանձնվում է փչացման և ավերման: Ով հավատում է, թե մարմինը հառնելու է, խնայում է իր մարմինը, ջանում է այն մաքուր պահել և այն չի ապականում պոռնիկություններով: Իսկ նա, ով չի հավատում Հարուստիան, անձնատուր է լինում

պոռնիկությունների, ասես թե այդ մարմինը պատկանում է մեկ ուրիշի: Ուստի, Ընդհանրական Սուրբ Եկեղեցու կարևոր ու մեծագույն պատվերը և ուսմունքն է՝ հավատալ մեռելների հարուստիան: Այն շատ մեծ է և ամենաանհրաժեշտը: Թեև շատեր հակաճառում են դրան, բայց ճշմարտությունը հաստատում է: Դրան հակաճառում են դիցապաշտ հելլենները: Չեն հավատում սամարացիները: Այն ծանակում են հերետիկոսները: Բազմապիսի են հակաճառությունները, բայց ճշմարտությունը մեկն է:

2. Հելլենները և սամարացիները մեզ առարկում են այսպես: Մարդուն նետեցին փոսը և այն փտեց, ու որդերը կերան այն: Հետո որդերը նույնպես սատկում են: Մարմինն այսպես փտում է ու կորչում: Ուրեմն այն ինչպե՞ս հարուստիան կառնի: Նավաբեկյալներին ձկները կերան, սրանք ևս կերվեցին առավել խոշոր ձկներից: Գաղանների հետ կռվածներին կերան արջերն ու առյուծները՝ խժռելով անգամ ամենամանր ոսկորները: Անթաղ մեռելներին կերան ցիներն ու ագռավները և թռան տարբեր ուղղություններով աշխարհի տարբեր մասեր: Ուրեմն, որտեղի՞ց պիտի գտնեն մարմնի բոլոր մասերը և նորից վերակազմեն մարմինը: Ենթադրենք, որ մեռյալին կերած հավերից մեկը՝ սատկեց Հնդկաստանում, մեկը՝ Պարսկաստանում, մյուսը՝ գոթերի երկրում: Մյուսները կարող է այրված լինեն կրակի մեջ, և քամին ու անձրևը ցրած կլինեն անգամ նրանց մոխիրը: Ինչպե՞ս կարելի է այդ մարմինների մասերը հավաքել ու վերակազմել:

3. Քեզ համար, որ փոքրագույն և թույլ մարդ ես, Հնդկաստանը հեռու է գոթերի երկրից և Իսպանիան՝ Պարսկաստանից: Բայց ամբողջ աշխարհն իր ափի մեջ պահող Աստծու համար բոլորը մոտիկ են: Ուրեմն, դու Աստծուն մի վերագրիր քեզ հատուկ եղող դժվարություններ:

րը: Ավելի լավ է, որ դու քո ուշադրությունը դարձնես Նրա հզորություն վրա: Եվ ապա, արևը, որ Աստծու փոքր արարումներից մեկն է, իր ճառագայթներով ջերմացնում է համայն աշխարհը: Նաև օդը, որը նույնպես Աստված է ստեղծել, շրջապատում է աշխարհում եղած ամեն ինչ: Ուրեմն, Աստված, որ ստեղծել է արևն ու օդը, մի՞թե աշխարհից հեռու է գտնվում:

Պատկերացնենք, որ տարբեր սերմեր խառնվել են իրար: Քանի որ ինձ թվում է, թե դու հավատքի մեջ թույլ ես, ես էլ ստիպված փոքր բաներից օրինակներ կբերեմ: Այդ սերմերը, ասենք, գտնվում են քո մի ափի մեջ: Մի՞թե քեզ համար դժվար կլինի քո ափում գտնվող սերմերը իրենց տեսակի համեմատ իրարից առանձնացնես ու դասակարգես: Ապա, եթե դու կարող ես քո ափի մեջ եղած սերմերը բաժանել իրարից, մի՞թե Աստված չի կարող իր ափի մեջ եղած ամեն ինչ տեսնել ու դասակարգել: Հասկացիր իմ ասածի իմաստը, եթե քո կասկածը քո հավատի թուլությունն է և անբարեպաշտության արդյունք է:

4. Շնորհ արա, ուշադիր եղիր արդարություն հարցում և սկսիր քեզանից: Ասենք, թե դու ունես տարբեր ծառաներ: Ենթադրենք, թե նրանցից ոմանք լավն են, ոմանք վատը: Բնական է, որ կհարգես լավերին և կպատժես վատերին: Եթե լինես դատավորի դիրքում, կգովես բարիներին և կպատժես անօրեններին: Ուրեմն, դու, որ մահականացում արդե ես, արդարություն ես կիրառում, ապա Աստված, որ համայն աշխարհի միակ հավերժական թագավորն է, մի՞թե արդար չի հատուցելու ամեն մեկին իր արարքների համար: Եթե այս մերժես, կընկնես անօրենություն մեջ: Լավ հիշիր իմ խոսքերը: Շատ մարդասպաններ անպատիժ մահացել են անկողնում, առանց իրենց ոճիրների համար պատիժ կրելու: Իսկ որտե՞ղ է Աստծու արդարությունը: Հաճախ, հիստուն սպանություն կատարած ոճրագործը մեկ անգամ է

գլխատվում: Որտե՞ղ նա պիտի պատժվի իր մյուս քառասուն և ինը սպանությունների համար: Եթե ասես, թե հանդերձյալ կյանքում չկա դատաստան և հատուցում, Աստծուն կմեղադրես անիրավության մեջ: Բայց մի զարմացիր դատաստանի հետաձգման վրա: Ամեն մրցող մրցումից հետո կա՛մ պսակվում է, կա՛մ խայտառակվում: Երբեք մրցավարը մրցողներին չի պսակում, քանի դեռ չի ավարտվել մրցումը: Նա սպասում է, որ բոլոր մրցողները հատեն վերջնագիծը, որից հետո միայն հաղթողներին պսակում է և հանձնում մրցանակները: Այդպես էլ Աստված: Քանի դեռ շարունակվում է մրցավազքը այս կյանքում, Նա առայժմ մասամբ օգնում է արդարներին: Հետագայում Նա վարձը կհատուցի ամբողջությամբ:

5. Արդ, ինչպես դու ասում ես, չկա մեռելների հարուստություն, ինչո՞ւ ես դատապարտում գերեզմանների կողոպտիչներին: Եթե մարմինը մահանալով մեկընդմիջտ կորչում է, և հարուստները անհույս է, ապա գերեզմաններ կողոպտողը ինչո՞ւ է պատժվում: Տեսնո՞ւմ ես, թե և բերանով դու ժխտում ես հարուստները, բայց սիրտդ այն ընդունում է անվարան:

6. Եվ ապա: Եթե ծառը հատվելուց հետո դարձյալ ճյուղավորվում է, մի՞թե այս աշխարհում հատվելուց հետո մարդը չի կարող ծաղկել: Հնձվածը ևս մնում է կալում. մի՞թե մարդը այս աշխարհից հնձվելուց հետո չի մնում կալում: Որթատունկի և այլ ծառերի ճյուղերը հատվելուց հետո եթե հողում թաղվեն, մի՞թե չեն վերածաղկում ու պտղաբերում: Այդպես և մարդը, ում համար այդ ամենն արարվել է, մի՞թե հողում թաղվելուց հետո հարուստները չի առնի: Աշխատանքի տեսակետից ի՞նչն է ավելի դժվար: Արձանը սկզբնապես կառուցե՞լ, թե՞ որևէ ջարդվածը վերցնել և այն նույն ձևով վերածուլել: Իսկ Աստված, որ

այս ամենը ստեղծել է ոչնչից, մի՞թե չի կարող վերստեղծել այն, ինչ մի ժամանակ եղել է, բայց մահվան միջոցով քայքայման է ենթարկվել:

Բայց քանի որ դու կուսպաշտ ես, չես հավատում հարուժյան մասին գրվածներին: Նայիր իրերին և դրանց բնույթը ուսումնասիրելով՝ հասկացիր իմ խոսքերի իմաստը, ցարդ քո նկատածների հիման վրա: Օրինակ, ցանվում է ցորեն կամ թե ցանքի համար որևէ հարմար բան: Ցանքից հետո այն փտում է, ասես մահանում է, և չի կարելի այն որպես սնունդ օգտագործել: Բայց այդ փտած սերմը ծլում է բոլորովին կանաչ: Եվ մինչ ցանելիս այն փոքրիկ է, բուսնելուց հետո դառնում է թարմ ծիլ: Իսկ ցորենը ստեղծվել է մեզ համար: Քանզի Աստված ստեղծել է ցորենը և նման բույսերը ոչ թե լոկ այն բանի համար, որ դրանք գոյություն ունենան իրենք իրենց համար: Ուրեմն, եթե մեզ համար ստեղծվածը փտելուց հետո նորից կյանք է ստանում, մի՞թե մենք, ում համար այն ստեղծված է, մահանալուց հետո պիտի հարուժյուն չառնենք:

7. Ինչպես տեսնում ես, ճմռան եղանակ է: Ծառերն այժմ ասես մեռած են: Որտե՞ղ են թզենու տերևները, որտե՞ղ են խաղողի ողկույզները: Ձմռանը դրանք մեռյալ են, իսկ գարնանը՝ ընձյուղած, և երբ գալիս է հարմար ժամանակը, մեռյալ վիճակից ասես վերակենդանանում են: Ուստի Աստված, իմանալով քո անհավատությունը, ամեն տարի այս տեսանելի իրերի միջոցով պատկերում է հարուժյունը, որպեսզի տեսնելով այն, ինչ կատարվում է անշունչ իրերի հետ, հավատաս, որ շնչավոր և բանավոր արարածների հետ կատարվում է նույնը: Ապա, ճանճերն ու մեղունները շատ անգամ ընկնում են ջուրը և խեղդվում, բայց փոքր անց վերակենդանանում են: Կա նաև կրծողների մի տեսակ, որ ճմեռը քուն է մտնում, իսկ ամռանը վերագարթնում է: Տեսնո՞ւմ ես, որ քեզ օրինակներ եմ բերում քո հասկացո-

ղության չափերով, որ դու կարողանաս հեշտ հասկանալ: Մահացած անբաններին իսկ կյանք տվողը մի՞թե չի կարող գերբնականորեն կյանք պարգևել նրանց, ում համար է այդ ամենը ստեղծել:

8. Բայց հելլենները պահանջում են բացահայտ հարուժյան օրինակներ, և ասում, որ բերված օրինակներում հարուժյուն առածները դեռ լրիվ փտած չեն եղել, և պահանջում են տեսնել մի կենդանի էակի, որը ամբողջապես փտել է և հարուժյուն առել: Աստված, իմանալով մարդկանց անհավատությունը, ստեղծեց փյունիկ կոչված թռչունը: Այն, ինչպես գրում է Կղեմեսը, և պատմում են շատերը, միասեռ է: Այն հինգ հարյուր տարին մեկ անգամ գալիս է եգիպտացիների երկիր, հավաստելու հարուժյունը ոչ թե անպատ վայրում, այլ երեւցող վայրում՝ քաղաքում, որպեսզի մարդիկ չանգիտանան խորհուրդը, այլ նրանց համար շոշափելի դառնա անհավատալի թվացողը:

Այդ թռչունը իր համար խոնկից, զմուռսից և այլ համեմունքներից բույն է պատրաստում և, իր տարիները լրանալուց հետո, մտնում այդ բույնի մեջ և բացահայտ մեռնում է ու փտում: Այնուհետև սատկած թռչնի փտած մարմնից մի որդ է ծնվում և այն աճելով դառնում է թռչուն: Այդ թող քեզ անհավատալի չթվա, քանզի, ինչպես տեսնում ես, փոքրիկ մեղունները որդերից են ծնվում և մեծանում: Թռչունների ձվերից ևս, որոնց մեջ միայն հեղուկ նյութ կա, դուրս են գալիս թռչունների փետուրներ, ոսկորներ և ներվեր: Ապա վերոհիշյալ փյունիկը փետրավորվելուց և նախորդի նման կատարյալ թռչուն դառնալուց հետո օդ է թռչում կատարելապես նախորդի նման՝ պարզորոշ ցույց տալով մարդկանց հարուժյան իրական լինելը:

Հիացման արժանի է փյունիկ թռչունը, բայց անլեզու, առանց խոսքի է և երբեք չի փառաբանել Աստծուն: Թռչում է երկնքում, բայց չի ճանաչում Աստծու Միածին

Որդուն: Ուրեմն, այս օրինակն իմանալով՝ մի՞թե կարող ես պնդել, որ Աստված, Ով հարուժյուն է պարգևել մի անլեզու կենդանու, որը հնարավորություն չունի ճանաչելու իր արարչին, չի կարող հարուժյուն տալ մեզ, որ փառաբանում ենք Աստծուն և կիրառում Նրա պատվիրանները:

9. Բայց քանի որ փյունիկը մեղանից հեռու է, և այդ երևույթը մեզ համար՝ հազվադեպ, ոմանց այդ դեռևս թվում է անհավատալի: Ուստի, խնդրեմ, ամենօրյա դեպքերից մեկ ուրիշ փաստ վերցնենք: Հարյուր կամ երկու հարյուր տարի առաջ որտե՞ղ էինք մենք բոլորս, և՛ խոսողներս, և՛ դուք՝ լսողներդ: Չգիտե՞նք արդյոք, թե ինչպես ենք աշխարհ եկել: Չգիտե՞ս, որ ծնվել ենք տկար ու անդեմ և հասարակ բաներից: Եվ այդ տկարից ու հասարակից կյանք է ստանում մարդը: Եվ այդ տկարը զգեստավորվում է մարմնով, և նրա ջիղերը զորանում են: Եվ աչքերը փայլում են, քիթը հոտոտում է, ականջը լսում է, լեզուն խոսում, սիրտը բաբախում է, ձեռքերը գործում են, ոտքերը՝ քայլում, և մարմնի բոլոր մասերը աճում են: Եվ այդ տկարը դառնում է նավաշինարար ու որմնադիր, և ճարտարապետ ու բազմաձևուտ մասնագետ, և իշխան ու օրենսդիր, և թագավոր: Այսպիսի հասարակ բաներից մեզ ստեղծած Աստվածը մի՞թե չի կարող մեզ մեռյալ վիճակից հարուժյուն տալ: Նա, Ով սկզբնապես այդքան պարզ և հասարակ բանից ստեղծում է մարդկային մարմին, մի՞թե չի կարող հարուժյուն տալ մեռյալ մարմնին:

10. Ահա, խնդրեմ, հարուժյան մասին ևս մի բացահայտ ապացույց, որ ամեն ամիս տեսնում ենք՝ երկնքի լուսատուներին դիտելով: Լուսնի մարմինն ամբողջովին կորչում է և դարձյալ աստիճանաբար հայտնվում է և գրավում իր նախկին դիրքը և տեսքը: Եվ որպեսզի երևույթն ավելի լավ ըմբռնենք. ժամանակ առ ժամանակ լուսինը կորչում է,

և ապա տեսնում ենք այն՝ պարզապես արյան տեսք ընդունած՝ ստանում է իր նախորդ տեսքը: Աստված է այն ստեղծել: Դու ևս, որ արյունից բաղկացած մարդ ես, անհավատ մի եղիր մեռելների հարուժյան մասին և, տեսնելով լուսնի հետ կատարվածը, հավատա, որ այդպես կլինի նաև քեզ հետ: Հելլենների հետ վիճելիս այս փաստարկներն օգտագործիր: Եվ Գիրքը ժխտողների հետ մի վիճիր մեր Գրքով, այլ հակադրվիր ոչ թե գրքերից վերցրած գեներով, այլ դատողությամբ և ապացույցներով: Որովհետև նրանք, անչուշտ, չգիտեն, թե ո՞վ է Մովսեսը, ո՞վ է Նսային, ի՞նչ են Ավետարանները, ո՞վ է Պողոսը:

11. Այժմ անցնենք սամարացիներին, որոնք թեև ընդունում են Օրենքը, բայց բոլորովին չեն ընդունում մարգարեներին: Բնական է, որ ներկա ընթերցվածը Եգեկիելից նրանց ոչինչ չի ասում: Քանզի, ինչպես ասվեց, նրանք չեն ընդունում մարգարեներին: Ուրեմն, ինչպե՞ս համոզենք սամարացիներին: Վերադառնանք Օրենքին: Աստված ասում է Մովսեսին. «Ես եմ Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը» (Ելք, Գ 6): Բոլոր դեպքերում՝ ողջերի և գոյություն ունեցողների Աստվածը: Որովհետև, եթե Աբրահամը և Իսահակը և Հակոբը իրենց մահով դարձան գոյություն չունեցողներ, ապա Աստված արդեն գոյություն չունեցողների Աստվածն է: Ե՞րբ է եղել, որ թագավորն ասի, թե ինքը գոյություն չունեցող զինվորների թագավորն է: Ե՞րբ է եղել, որ մարդ ցուցադրի իր չունեցած հարստությունը: Արդ, արդեն Աբրահամն ու Իսահակը և Հակոբը պետք է գոյություն ունենան, որ Աստված լինի ողջերի Աստվածը: Քանզի Նա չի ասել «Նրանց Աստվածն էի, այլ՝ նրանց Աստվածն եմ: Եվ թե որ կա ապագա դատարան, այդ բխում է Աբրահամի խոսքից Տիրոջը. «Ամբողջ աշխարհը դատողը այդպիսի դատ չի անի» (Ծննդ., ԺԸ 25):

12. Անմիտ սամարացիները դարձյալ այստեղ ևս հակաճառում են և ասում, թե կարելի է ընդունել, որ Աբրահամի, Իսահակի և Հակոբի հոգիները գուցե և մնում են, բայց նրանց մարմինները հարուժյուն առնել չեն կարող:

Ապա՝ եթե արդար Մովսեսի գավազանը կարող է վիշապ դառնալ, մի՞թե արդարների մարմինները չեն կարող հարուժյուն առնել և ապրել: Եթե անբնականը կատարվում է, ապա չի՞ կարող բնականը կատարվել: Եվ Աբրահամի գավազանը, որ կտրած չոր ճյուղ էր, առանց մի կաթիլ ջրի ծլարձակեց և մի գիշերվա ընթացքում կտուրի տակ ծաղկեց ու պտղաբերեց բնության մեջ աճող ու մշտապես ուռուցվող ծառերի նման: Ահա Ահարոնի գավազանը, որ թվում էր մահացած, եթե հարուժյուն առավ, մի՞թե Ահարոնը ինքը չէր կարող մեռելներից հարուժյուն առնել: Աստված, որ հրաշագործեց՝ չոր ճյուղին հարուժյուն տալով, որպեսզի պահպանի Ահարոնի քահանայապետությունը, մի՞թե հարուժյուն չի տալու իրեն՝ Ահարոնին: Եվ եթե կինը, հակառակ բնության աղ է դառնում, և մարմինը աղի է վերածվում, ապա չի՞ կարող մարմինը վերածվել մարմնի (Հմմտ. Ծննդ., ԺԹ 26): Եթե Ղովտի կինը աղի սյուն դարձավ, մի՞թե չի կարող Աբրահամի կինը հարուժյուն առնել: Այդ ի՞նչ գորուժյամբ էր, որ Մովսեսի ձեռքը մեկ ժամվա ընթացքում դարձավ ձյան պես ճերմակ և վերագտավ իր նախկին տեսքը (Ծննդ., Դ 6-7): Անպայման Աստծու կարգադրությունը: Մի՞թե Աստծու կարգադրությունն այդ ժամանակ այդպիսի գորուժյուն ունեւր, իսկ այժմ չունի՞:

13. Ո՛վ սամարացիներ, հիմարագույններդ հիմարների մեջ: Առաջինը ո՞վ և ինչպե՞ս ոչնչից ստեղծեց մարդուն: Եկեք թերթենք Գիրքը, որ դուք ևս ընդունում եք. «Եվ Աստված մարդուն ստեղծեց հողից» (Ծննդ., Բ 7): Հողը դառնում է մարմին, իսկ մարմինը չի՞ կարող վերստին

մարմին դառնալ: Հարցնում եմ ձեզ: Որտեղի՞ց առաջացան երկինքը, երկիրը, ծովը: Որտեղի՞ց արևը, լուսինը և աստղերը: Ինչպե՞ս ջրից ծնվեցին թռչուններն ու ձկները: Ինչպե՞ս երկրից ծնվեցին բոլոր կենդանիները: Չգոյությունից գոյություն ունեցան բյուրավոր կենդանիներ: Եվ մենք՝ մարդիկս, որ ստեղծվել ենք Աստծու պատկերով, մի՞թե հարուժյուն չենք առնելու: Նման միտքը ամբողջապես անհավատություն է, և խիստ դատապարտելի են նման անհավատություն դրսևորողները: Աբրահամն ասում է Տիրոջը. «Դու ես ամբողջ երկիրը դատողը (Ծննդ. ԺԸ 25)», իսկ դրան չեն հավատում օրենքն ուսումնասիրողները, և մինչդեռ գրված է, թե մարդը ստեղծվեց երկրի հողից (Ծննդ., Գ 29), այդ կարգացողները չեն հավատում մեռելներին հարուժյուն տալու Աստծու կարողությանը:

14. Այս ապացույցները՝ մեռելների հարուժյանը չհավատացողների համար: Իսկ մեզ՝ հավատացողներին համար անհրաժեշտ է իմանալ մարգարեների խոսքը հարուժյան մասին: Բայց քանի որ մարգարեներին կարգացողներից ոմանք նույնպես չեն հավատում և որպես արդարացում նշում են այն ասվածքը. «Թե ամբարիշտները չեն հասնելու դատաստանին» (Սաղմ., Ա 5), այն, որ «եթե մարդը իջավ դժոխք, այլևս ետ չի բարձրանա» (Հոբ, Է 9), այն, որ «մեռելները չէ, որ պիտի օրհնեն քեզ» (Սաղմ., ձժԳ 17: Հունարենում՝ ձժԳ 25) - քանի որ ճիշտ գրվածները սխալ են հասկանում - լավ է հակիրճ պատասխանել նրանց, ինչքան մեզ ներում են մեր կարողությունները և այսօրվա ուսուցման հանգամանքները:

Երբ ասում է, թե ամբարիշտները չեն հասնելու դատաստանին, հասկանում է այն, որ ոչ թե նրանք չեն դատվելու, այլ այն, որ նրանք պիտի պատժվեն: Քանզի Աստված կարիք չունի նրանց երկար քննելու իրենց արարքների համար: Երբ ամբարիշտները հարուժյուն առնեն, նրանք



նույն ժամին պիտի դատապարտվեն: Նրանց հարուժյանը կհետևի պատիժը: Երբ ասում է՝ թե մեռելները չէ, որ պիտի օրհնեն քեզ, նշանակում է, որ միայն այս կյանքում հնարավորություն կա ապաշխարելու և մեղքերի թողություն ստանալու, որի ընթացքում նման բարիքի արժանացածները պիտի օրհնեն Աստծուն: Քանզի մեռնելուց հետո պիտի չկարողանան Աստծուն օրհներգել նրանք, ովքեր մահացել են մեղքերի մեջ: Նրանք պիտի սգան ու ողբան, որովհետև օրհներգը ինքնաբերաբար բխում է ողորմածաբար ապրածների հոգիներից, իսկ կականը դուրս է գալիս պատժվողների հոգիներից: Ուրեմն, այնժամ արդարները պիտի օրհներգեն, իսկ իրենց մեղքերի համար չապաշխարողները անզղջում կմեռնեն, և այլևս առիթ չեն ունենա զղջալու և խոստովանելու:

15. Ինչ վերաբերվում է այն խոսքին, որ «եթե մարդ իջավ դժոխք, այլևս չի բարձրանա» (Հոբ, է 9), տե՛ս շարունակությունը: Այնտեղ գրված է. «Այլևս չի բարձրանա, չի դառնա իր տունը»: Քանի որ գալու է աշխարհի վերջը, և բոլոր տները պիտի քանդվեն, ապա մարդ ինչպե՞ս կվերադառնա իր տունը, եթե աշխարհը պիտի քանդվի, ու երկիրը նորից պիտի ստեղծվի: Այդպես ասողները թող լսեն Հոբին, որ ասում է. «Ծառի համար իսկ գտնվում է հույս: Թեև կտրում են, նորից է ծաղկում: Ճյուղերը նրա դեռ չեն պակասում: Անգամ արմատը թե որ ծերանա խորքի մեջ հողի, քարերի մեջ էլ խեղդվի բունը, ջրի հոտից իսկ կծաղկի իսկույն, նորատունկի պես պտուղներ կտա: Բայց մահկանացուն՝ վախճանված մարդը, գնում է և էլ գոյություն չունի» (Հոբ, ԺԴ 7-10): Ուրեմն, «էլ գոյություն չունի» խոսքը պետք է կարգալ ոչ թե որպես աղաչանք, այլ հարցական շեշտով, որպես հանդիմանություն: Հոբն ասում է. եթե ծառն ընկնում է և դարձյալ կանգնում, ապա մարդը, ում համար ստեղծվել է ծառը, չի՞ բարձրանալու:

Եվ որպեսզի չկարծես, թե կամայական եմ բացատրում, կարգա նաև շարունակությունը, հարցական շեշտով «մահկանացուն՝ վախճանված մարդը, գնում է և էլ գոյություն չունի» խոսքից հետո ասում է. «Մարդը թե մեռնի, կապրի նա դարձյալ» (Հոբ, ԺԴ 14), և անմիջապես շարունակում է. «Ես պիտի սպասեմ, մինչև որ կրկին գոյություն առնեմ»: Եվ դարձյալ՝ «Հավերժական է Նա, Ով երկրի վրա պիտի փրկի ինձ՝ հարուժյուն տալով մարմնիս, որ այս բոլորը համբերեց» (Հոբ, ԺԹ 25-26):

Եսայի մարգարեն ևս ասում է. «Պիտի հառնեն ու կանգնեն մեռելները, որոնք գերեզմաններում են» (Եսայի, ԻԶ 19): Եզեկիել մարգարեն հստակ ասում է. «Ահա ես բաց եմ անելու ձեր գերեզմանները և հանելու եմ ձեզ ձեր գերեզմաններից» (Եզեկ. Լ է 12): Դանիելը նույնպես ասում է. «Երկրում՝ հողի մեջ, ննջածներից շատերը հարուժյուն պիտի առնեն, ոմանք՝ հավիտենական կյանքի համար, և ոմանք՝ հավիտենական նախատիների ու ամոթի համար» (Դան., ԺԲ 2):

16. Սուրբ Գրքում շատ վկայություններ կան հարուժյուն առած մեռելների մասին: Բավական է հիշեցնել Ղազարոսի դեպքը, որ, չորս օր է, արդեն մեռած էր, բայց հարուժյուն առավ: Ժամանակի սղություն պատճառով ձեզ հիշեցնեմ միայն այրի կնոջ որդու հարուժյունը Նայինում: Որպես հիշեցում նշեմ նաև սինագոգապետի աղջկա մասին, ինչպես նաև Ավետարանում ասվածը, թե ջարդվեցին քարերը, և բացված շիրիմներից քնած սրբերի մարմիններ հարուժյուն առան: Բայց բոլորից առավել չմոռանանք, որ Քրիստոս հարյավ ի մեռելոց:

Ես շրջանցեցի Եղիային ու այրի կնոջ որդուն, ում նա հարուժյուն տվեց: Նաև Եղիսեին, որ երկու անգամ հարուժյուն տվեց. մեկ՝ իր կենդանություն օրոք, մեկ էլ՝ իր մեռնելուց հետո: Կենդանության օրոք մեռյալին հարուժ-

յուն տվեց իր հոգու գորուծյամբ: Որպեսզի չկարծեն, թե արդարների միայն հոգիները պատիվ են վայելում, և որպեսզի հավատան, թե արդարների մարմինները ևս գորուծյուն ունեն, Եղիսեի գերեզմանի վրա նետված մեռյալը, դիպչելով մարգարեի մեռած մարմնին, հարուժյուն առավ (Հմմտ. Դ Թագ., ԺԳ 21): Մարգարեի մեռած մարմինը կենդանի հոգու գործ կատարեց: Հողում թաղված մեռյալ մարմինը մեռյալին կյանք պարգևեց: Նա կյանք տվեց մեռյալին, իսկ ինքը մնաց մահացած: Ինչո՞ւ: Որպեսզի հարուժյունից հետո չկարծես, թե Եղիսեի միայն հոգին է այդ հրաշքը կատարել, այլ ցույց տրվի, թե հոգու բացակայության դեպքում անգամ սրբերի մարմնում կա մի գորուծյուն, որպես արդյունք այն բանի, որ այդ արդար հոգին երկար տարիներ գոյատևել է այդ մարմնի մեջ, որին էլ նա ծառայում էր: Հոգեկան մանկամտությամբ չմնանք անհավատության մեջ, թե այդ հրաշքը չի կատարվել: Եթե սավաններն ու ծածկոցները, որոնք միայն արտաքինապես են դիպել մարմիններին, դիպչելուց հետո բշկում են, ապա ինչո՞ւ մարգարեի մարմինը չէր կարող մեռյալին հարուժյուն տալ:

17. Մենք այս նյութի շուրջ կարող էինք շատ բան ասել՝ մանրամասն բացատրելով կատարված դարմանալիքները: Բայց ձեր հոգնած լինելու, ինչպես նաև ուրբաթ օրվա խիստ ծոմապահության և անքնության պատճառով ես կարճ խոսեցի այդ ամենի մասին, ասես, այս և այնտեղ սերմեր ցանեցի, որպեսզի դուք, որպես բարեբեր հող, ընդունեք սերմը, ծլարձակեք և բարի պտուղ տաք: Հիշեք նաև, որ առաքյալները նույնպես մեռյալների հարուժյուն տվին: Հորբեում Պետրոսը հարուժյուն տվեց Տաբիթային, Պողոսը Տրոյական երկրում՝ Եվսիբոսին, և բոլոր մյուս առաքյալները հարուժյուն տվին մեռելներին, թեև նրանց յուրաքանչյուրի հրաշագործությունները գրի չեն առնվել: Այս

ամենի մասին հիշենք նաև այն, ինչ գրել է Պողոսը Կորնթացիներին ուղղված իր առաջին թղթում՝ պատասխանելով նրանց, ովքեր հարցնում էին. «Ինչպե՞ս են հարուժյուն առնում մեռելները, կամ ի՞նչ մարմնով պիտի գան: (Ա Կորնթ., ԺԵ 35): Եվ այն, որ «Եթե մեռելները հարուժյուն չեն առնում, ապա Քրիստոսն էլ հարուժյուն չի առել» (Ա Կորնթ., ԺԵ 16): Հիշենք, որ նա անմիտներ անվանեց նրանց, ովքեր չեն հավատում Սուրբ Գրքի վարդապետությանը, որ վերաբերում է մեռելների հարուժյանը: Հիշենք նաև այն, ինչ նա գրել է թեսաղոնիկեցիներին ուղղված իր թղթում. «Եղբայրներ՛ր, չենք ուզում, որ անգետ լինեք ննջեցյալների մասին, որպեսզի չտխրեք, ինչպես ուրիշները, որոնք հույս չունեն» (Ա Թեսաղ., Դ 12) և այլն: Եվ մանավանդ որ, «Քրիստոսով մեռածները առաջինը հարուժյուն պիտի առնեն» (Ա Թեսաղ., Դ 15):

18. Պետք է առանձնապես հիշել այն, որ համառորեն չեշտում է՝ ցույց տալով իր մարմինը և ասելով. «Որովհետև պետք է, որ այս ապականացու մարմինը անապականություն կրի, և այս մահկանացու գոյությունը հազնի անմահություն» (Ա Կորնթ., ԺԵ 53): Մեր այս մարմինն, անշուշտ, պիտի հառնի, բայց ոչ իր այժմյան թուլությամբ: Նույն այս մարմինը պիտի հառնի և անապականություն հազնելուց հետո պիտի վերափոխվի, ինչպես որ կատարվում է երկաթի հետ, որը, մտնելով կրակի մեջ, ինքը ևս դառնում է կրակ: Որպեսզի ավելի ճիշտ խոսենք, մարմինը հարուժյուն կառնի և կդառնա անապական այն ձևով, ինչ Ինքը՝ հարուժյուն տվող Տերը:

Ուրեմն, այս մարմինը հարուժյուն պիտի առնի: Բայց այն չի մնալու իր այժմյան վիճակով: Այն կլինի հավիտենական: Ապրելու համար նա այլևս այս սնունդների կարիքը չունի, ոչ էլ աստիճանների՝ բարձրանալու համար: Նա կդառնա հոգևոր, հրաշալի մի բան, որի նմանն այժմ

չունենք: Ինչպես ասված է, այնժամ արդարները կփայլեն ինչպես արևն ու լուսինը, ինչպես պայծառ երկինքը: Աստված, կանխատեսելով մարդկանց անհավատությունը, ստեղծեց այն մանրիկ որդերը, որոնք ամուսնը փայլում են իրենց մարմնից արձակած ճառագայթներով, որպեսզի մեր մարմնական աչքերով տեսածներից եզրակացնենք մեր ակնկալիքը, թե՛ մեր մարմինները կդառնան լուսավոր: Քանզի երկրային փորձը շնորհողը կարող է մեզ շնորհել նաև նրա ամբողջանալը: Նա, Ով ստեղծեց լուսատու որդերին, առավել ևս լուսատու կդարձնի արդար մարդուն:

19. Ուրեմն, բոլորս հարուստուն կառնենք և կունենանք հավիտենական մարմիններ: Բայց բոլորիս մարմինները նույնը չեն լինի: Եթե մեկը արդար է, ապա կստանա երկնային մարմին, որպեսզի կարողանա հրեշտակների հետ հաղորդակցվել արժանավորապես: Իսկ եթե մեկը մեղավոր է, իր մեղքերի համար կստանա հավերժորեն պատժվող մարմին, որը կայրվի հավիտենական կրակի մեջ, բայց երբեք չի սպառվի: Եվ Աստված արդար կերպով այս երկու մասերին հատուցում է սահմանում: Քանզի ոչինչ չի կատարվում առանց մարմնի մասնակցություն: Հայհոյում ենք բերանով, աղոթում ենք բերանով, պոռնկանում ենք մարմնով, սրբանում ենք մարմնով, հափշտակում ենք ձեռքերով, ողորմություն ենք տալիս ձեռքերով և նման ամեն ինչ: Ուստի, քանի որ մեր բոլոր արարքներին մասնակցում է մեր մարմինը, ապա այն ևս պետք է հանդերձյալ կյանքում ստանա հատուցման իր բաժինը:

20. Ուրեմն, եղբայրներ՛ր, խնայենք մեր մարմինները և չչարաշահենք դրանք որպես օտարոտի: Հրետիկոսների նման չասենք, թե այս մարմնի շապիկը օտար է, այլ խնայենք այն որպես սեփականի: Քանզի հաշիվ պիտի տանք Տիրոջը այն ամենի համար, ինչ կատարել ենք մարմնով:

Երբեք մի ասա, թե «ոչ ոք ինձ չի տեսնում»: Մի՛ ասա, թե քո արարքներին վկա չկա: Գուցե, իրոք, շատ անգամ մարդիկ քեզ չեն տեսնում, բայց Արարիչը՝ անտեսանելի և հավիտենական վկան, երկնքում մնում է և տեսնում կատարվածը: Մնում են նաև քո մեղքերի հետքերը քո մարմնում: Քանզի, ինչպես որ մարմնի վրա եղած խորունկ վերքը անգամ բուժվելուց հետո սպին մնում է, այդպես էլ մեղքը վիրավորում է հոգին ու մարմինը և ամբողջ մարմնում սպիներ ու նշաններ է թողնում, որոնք վերանում են միայն մկրտություն ստանալուց հետո: Հոգու և մարմնի անցյալ բոլոր վերքերը Աստված բուժում է մկրտությամբ: Ուստի, բոլորս ուշադիր լինենք և զերծ պահենք մեզ ապագա դեպքերից, որպեսզի մաքուր պահենք այս մարմնի շապիկը, որպեսզի ինչ-որ պոռնկություն կամ հաճույքի, կամ որևէ այլ մեղսալի արարքի պատճառով չկորցնենք երկնային փրկությունը, այլ ժառանգենք Աստծու Հավիտենական թագավորությունը, որին Աստված մեզ արժանի դարձնի իր Շնորհով:

21. Մեռելների հարուստունը ապացուցելու համար ուզում էի այսքանն ասել ձեզ: Իսկ Հավատի Հանգանակի բարձրաձայն ընթերցումը, որ կկատարեմ այժմ, դուք հատուկ ուշադրություն պետք է անգիր սովորեք:

22. Շարունակություն մեջ Հավատի Հանգանակը, որ արտասանեցինք, բովանդակում է հետևյալ հատվածը. հավատում ենք մեկ մկրտության, ապաշխարության, մեղքերի թողության և միակ Ընդհանրական Սուրբ Եկեղեցուն, մեռելների հարուստուն և հավիտենական կյանքին: Մկրտության և ապաշխարության մասին մենք խոսել ենք մեր առաջին դասերի ընթացքում և մեռելների հարուստուն մասին ասածները վերաբերում էին այս նյութին: Այժմ կխոսենք այս հոդվածի «Միակ, Սուրբ Ընդհանրական Եկեղեցու»

մնացած մասի առնչությամբ: Այս հատվածի մասին կարող էինք շատ բան ասել, բայց այժմ կարճ կխոսենք:

23. Եկեղեցին կոչվում է ընդհանրական, քանի որ տարածվում է ամբողջ աշխարհում, ծայրերիծայր: Նաև այն պատճառով, որ քարոզում է քրիստոնեական ամբողջ ճշմարտությունը, առանց բաց թողնելու հավատքի ճշմարտությունից անգամ փոքրագույնը, ինչ անհրաժեշտ է ամեն մի քրիստոնյայի՝ իմանալ երկնային և երկրատեսանելի ու աներևույթ բաների համար: Կոչվում է ընդհանրական նաև, քանզի բարեպաշտություն է մղում մարդկային ամբողջ ցեղը, իշխանավորներին ու հպատակներին, գրագետներին և անգրագետներին, նաև այն պատճառով, որ բուժում և վերացնում է հոգու և մարմնի գործած ամեն տեսակ մեղքերը: Եվ վերջապես այն պատճառով, որ ունի այն բոլոր առաքինությունները, որոնք արտահայտվում են գործերով, խոսքերով և ամեն տեսակ հոգեկան շնորհներով:

24. Կոչվում է «եկեղեցի», որովհետև, ինչպես բառն է արտահայտում, մարդկանց կոչում է ի մի հավաքվելու, ինչպես որ Տերն է ասում Ղևտական Գրքում. «Ամբողջ ժողովրդին հավաքիր վկայության խորանի դռան մոտ» (Ղևտ., Ը 3): Նշենք, որ «հավաքիր» բառը Գրքում առաջին անգամ այստեղ է ասվում, երբ Տերը Ահարոնին կարգում է քահանայապետական պաշտոնին: «Օրինաց» գրքում ևս Աստված ասում է Մովսեսին. «Քո մարդկանց հավաքիր ինձ մոտ, որ նրանք լսեն իմ այս պատգամները, որ կսովորեցնեմ նրանց, որպեսզի երկնչեն ինձանից և դրանք սովորեցնեն իրենց որդիներին» (Բ Օր., Գ 10): «Եկեղեցի» բառը հիշատակվում է դարձյալ, երբ խոսվում է Օրենքի տախտակների մասին: «Դրանց վրա գրված էին բոլոր այն պատգամները, որ Տերն ինձ տվեց Սինա լեռան վրա ձեր հավաքված օրը» (Բ Օր., Թ 10): Կարծես ուզում

էր պարզ ասել՝ այն օրը, երբ Աստված ձեզ կանչեց հավաքեց: Սաղմոսերգուն ևս ասում է. «Գոհություն պիտի մատուցեմ Քեզ, Տե՛ր, մեծ հավաքներում և ժողովրդի բազմություն մեջ պիտի օրհնեմք Քեզ» (Սաղմ., ԼԴ 8):

25. Նախապես սաղմոսերգուն երգել է. «Իսրայելի որդիներ, ժողովում օրհնեցեք Աստծուն՝ ձեր Տիրոջը» (Սաղմ., Կէ 27): Երբ հրեաները զրկվեցին Աստծո շնորհից Փրկչի դեմ իրենց չարամիտ արարքների պատճառով, Փրկիչը այլ ազգերից հիմնեց նոր, մեր՝ քրիստոնյաների եկեղեցին, որի մասին Տերն ասաց Պետրոսին. «Այդ վեմի վրա պիտի կառուցեմ իմ եկեղեցին, ու դժոխքի դռները այն չպիտի հաղթահարեն» (Մատթ., ԺԶ 18):

Մարգարեանալով այս երկու եկեղեցիների մասին՝ Դավիթը հստակ ասել է: Առաջինի՝ հուդայականի մասին սաղմոսում ասել է. «Ատեցի չարագործների ամբխը» (Սաղմ., ԻԵ 5): Իսկ երկրորդի՝ կառուցվողի մասին նույն սաղմոսում ասել է. «Տեր, սիրեցի Քո տան վայելչությունը» (Սաղմ., ԻԵ 8): Եվ անմիջապես հետո՝ «Հավաքներում պիտի օրհնեմ Քեզ» (Սաղմ., ԻԵ 12): Քանի որ եկեղեցիներից մեկը՝ հրեականը, զրկվեց Աստծու Շնորհից, Քրիստոսի եկեղեցիները բազմացան: Սրանց մասին է գրված Սաղմոսում. «Օրհնեցեք Տիրոջը նոր օրհնություններով. սրբերի ժողովում է օրհնությունը նրա» (Սաղմ., ձխԹ 1): Սաղմոսի այս խոսքերին է առնչվում Մաղաքիա մարգարեի խոսքը հրեաներին. «Ես հոժարակամ չեմ ձեր նկատմամբ, - ասում է Ամենակալ Տերը» (Մաղաք., Ա 10): Եվ անմիջապես շարունակում է. «Քանզի արևածագից մինչև արևամուտ իմ անունը փառաբանված է ազգերի մեջ» (Մաղաք., Ա 11): Այս ընդհանրական եկեղեցու մասին գրել է Պողոսը Տիմոթեոսին. «Որպեսզի իմանաս, թե ինչպես պետք է վարվես Աստծու տան մեջ, որ կենդանի Աստծու եկեղեցին է՝ սյուն և հաստատություն ճշմարտության» (Ա Տիմ., Գ 15):

26. Եկեղեցի բառը տարբեր կիրառումներ ունի: Օրինակ՝ Գործք առաքելոցում եկեղեցի ասելով հեղինակը նկատի ունի Եփեսոսի թատրոնում հավաքված ամբոխին. «Եվ այս ասելով՝ եկեղեցին արձակեց» (Գործք, ԺԹ 40): Իրականում, բառացի ասած, կարելի էր չարամիտների եկեղեցի անվանել հերետիկոսների հավաքները: Ես նկատի ունեմ մարկիոնականներին, մանիքեականներին և այլոց: Ուստիև, որպեսզի դու հաստատ իմանաս, թե մարդկանց որևէ հավաք եկեղեցի է, Հավատի Հանգանակը քեզ ավանդեց այս հոդվածը՝ «Միակ, Սուրբ Ընդհանրական Եկեղեցուն», որպեսզի դու խոսսափես հերետիկոսների պիղծ հավաքներից և մշտապես մնաս ընդհանրական եկեղեցու հետ, որի ծոցում էլ դու վերածնվեցիր:

Եվ եթե երբևէ օտար քաղաքում գտնվես, պարզապես մի՛ հարցրու, թե որտե՞ղ է տաճարը (քանզի ամբարիշտ հերետիկոսները ևս համարձակվում են իրենց քարայրները անվանել տաճարներ), ոչ էլ պարզապես հարցրու, թե որտե՞ղ է եկեղեցին, այլ՝ որտե՞ղ է կաթողիկե եկեղեցին: Քանզի այս է բոլորիս սրբազան Մոր հատուկ անունը. Նրա, Ով մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Աստծու Միածին Որդու հարսնացուն է: Քանզի գրված է. «Ինչպես որ Քրիստոս սիրեց եկեղեցին և իր անձը մատնեց նրա համար» (Եփես., Ե 25), և ամբողջ շարունակությունը: Եկեղեցին վերին Երուսաղեմի կերպն է և նմանակը. «Նա ազատ է և բոլորիս մայրն է» (Գաղատ., Դ 26): Նախկինում նա ամուլ էր, իսկ այժմ բազմազավակ է (Հմմտ. Գաղատ., Դ 27):

27. Առաջին՝ հրեաների եկեղեցին շնորհագրկվեց: Իսկ երկրորդ՝ ընդհանրական եկեղեցուն, ինչպես Պողոսն է ասել, «Աստված կարգեց նախ՝ առաքյալներին, ապա՝ մարգարեներին, երրորդ՝ ուսուցիչներին, ապա՝ զորավոր գործեր կատարելու շնորհներ ունեցողների, ապա՝ բժշկելու շնորհներ, օգնելու, կառավարելու շնորհներ, տեսակ-տե-

սակ լեզուներ խոսելու շնորհներ, թարգմանություն շնորհներ ունեցողների» (Ա Կորնթ., ԺԲ 28): Աստված իր եկեղեցուն շնորհեց ամեն առաքիլություն. իմաստություն, իմացություն, խելամտություն, արդարություն, ողորմածություն և մարդասիրություն, հալածանքների մեջ համբերություն և անպարտելի դիմացկունություն: Ուրեմն, այս եկեղեցին, «արդարության պաշտպանական և հարձակողական զենքերով ճաշակելով փառք և անարգանք» (Հմմտ. Բ Կորնթ., Զ 7-8), հալածանքների և նեղությունների ժամանակ համբերության պսակով պսակեց սուրբ վկաներին, իսկ այժմ, խաղաղ ժամանակներում Աստծո շնորհով արժանի թագավորների, իշխանավորների և ամեն կարգի մարդկանց հարգանքն է վայելում: Թագավորներն իշխում են միայն իրենց իշխանության սահմաններում ապրող մարդկանց վրա: Միայն Ընդհանրական եկեղեցին է, որ ամբողջ աշխարհում ունի անսահմանափակ զորություն և իշխանություն: Քանզի ինչպես գրված է՝ «Աստված քո սահմանները խաղաղության մեջ պահեց» (Սաղմ., ԺԽԷ 3): Եթե կամենայի այս Եկեղեցու մասին ամեն ինչ ասել, ապա ավելի շատ ժամանակ էր պետք պատմելու համար:

28. Այս Սուրբ Ընդհանրական եկեղեցուն ճշմարիտը սովորելով և ճշմարիտ կյանք վայելելով՝ մենք կժառանգենք երկնքի թագավորությունը և կունենանք հավիտենական կյանք, որի համար անում ենք ամեն ինչ՝ վայելելու այն, ինչ մեզ շնորհվել է Տիրոջ կողմից: Քանզի մեր նպատակը փոքր բաներ չի հետապնդում, այլ ջանադիր ենք հավիտենական կյանքը վայելելու: Այդ պատճառով էլ, Հավատի Հանգանակի մեջ, մեռելների հարությունը վերաբերող կետից հետո, որի մասին մենք արդեն խոսել ենք, մենք սովորում ենք հավատալ նաև հավիտենական կյանքին, որի համար մենք՝ քրիստոնյաներս, պայքարում ենք:

29. Իրական և ճշմարիտ կյանքը Հայրն է, Ով Որդու և Սուրբ Հոգու միջոցով, ասես հավիտենական և անսպառ աղբյուրից մշտապես բխեցնում է երկնային հավերժական պարզեւները: Նրա մարդասիրության պատճառով է, որ մեզ, մարդկանց ևս տրված է այդ երկնային պարզեւները վայելելու ճշմարիտ խոստումը: Անկարելի է դրան չհավատալ: Պետք է դրան հավատանք ոչ մեր թուլության պատճառով, այլ Նրա զորությանը ապավինելով: «Որովհետև Աստծո համար ամեն ինչ կարելի է» (Մատթ., ԺԹ 26): Եվ որ այդ հնարավոր է, և մենք ակնկալում ենք հավիտենական կյանք, ասում է Դանիելը. «Արդարներից շատերը պիտի ճառագեն իբրև հավիտենական աստղեր և դեռ ավելին» (Դան., ԺԲ 3): Պողոսը ևս ասում է. «Եվ այսպես մենք մշտապես Տիրոջ հետ պետք է լինենք» (Ա թեսաղ., Դ 16): Այս «մշտապես Տիրոջ հետ պիտի լինենք» խոսքը ենթադրում է հավիտենական կյանք: Մեր Փրկիչը ևս Ավետարանում այդ հստակ ասել է. «Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանք, իսկ արդարները՝ հավիտենական կյանք» (Մատթ., ԻԵ 46):

30. Հավիտենական կյանքի մասին կան բազում ապացույցներ: Այդ հավիտենական կյանքին տիրանալ ցանկացողներին Սուրբ Գրքերը բազում միջոցներ են մատնացույց անում: Խոսքս չերկարելու համար ես կնշեմ այդ վկայություններից մի քանիսը միայն: Մնացյալներին, ցանկության դեպքում, ինքներդ կարող եք ծանոթանալ: Սուրբ Գրքում ասվում է, որ հավիտենական կյանքը մենք կարող ենք ձեռք բերել հավատքի միջոցով: Քանզի գրված է. «Ով հավատում է Որդուն, ընդունում է հավիտենական կյանքը» (Հովհ., Գ 36): Եվ դարձյալ նույն Ավետարանիչը գրում է. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ով իմ խոսքը լսում է ու հավատում Նրան, Ով ինձ առաքեց, ընդունում է հավիտենական կյանքը» (Հովհ., Ե 24): Սուրբ

Գիրքը դարձյալ ասում է, թե մենք հավիտենական կյանք կընդունենք Ավետարանի քարոզով. քանզի ասված է. «Ով հնձում է, վարձ է ստանում և հավիտենական կյանքի համար պտուղ է կուտակում» (Հովհ., Դ 36): Սուրբ Գիրքը նշում է վկայության և Քրիստոսին խոստովանելու ճանապարհը՝ ասելով. «Ով այս աշխարհում իր անձը ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար» (Հովհ., ԺԲ 25): Եվ դարձյալ այն մասին, թե փողից ու բարեկամներից առավել պետք է գերադասենք Քրիստոսին. «Եվ ամեն ոք, որ թողել է տուն, եղբայրներ կամ քույրեր, կամ հայր, կամ մայր» (Մատթ., ԺԹ 29) և այլն, «կժառանգի հավիտենական կյանքը»: Հավիտենական կյանք ընդունելու մեկ ուրիշ միջոց ևս Գիրքը համարում է պատվիրանները պահելը: «Մի՛ շնանար, մի՛ գողանար» (Մատթ., ԺԹ 18) և այլն, ինչպես Քրիստոս պատասխանեց հարցով իրեն դիմողին. «Բարի վարդապետ, ի՞նչ բարիք կատարեմ, որ հավիտենական կյանքն ունենամ» (Մատթ., ԺԹ 16): Գիրքը նշում է՝ մեղսալից արարքներից հրաժարվել և մնացած կյանքում ծառայել Քրիստոսին: Քանզի Պողոսն ասում է. «Բայց այժմ, ազատված մեղքերից և ծառա դարձած Աստծուն՝ ձեր պտուղն եք տալիս սրբությամբ, և նրա վախճանը կյանք է հավիտենական» (Հռոմ., Զ 22):

31. Հավիտենական կյանքին արժանանալու շատ եղանակներ կան, որոնց մասին ես չհիշատակեցի, քանի որ դրանք, իրոք, շատ-շատ են: Տերը, լինելով մարդասեր, ոչ թե մեկ, ոչ ևս երկու դուռ է բացել, այլ շատ ու շատ դռներ, որպեսզի բոլորը կարողանան անարգել մտնել ու վայելել հավիտենական կյանքը: Հավիտենական կյանքին վերաբերող այս ամենը մենք շարադրեցինք համառոտ, բայց հստակ և ամբողջական, նյութի կարևորության համեմատ, որովհետև հավիտենական կյանքի մասին վարդապետությունը Հավատի Հանգանակի վերջին հոդվածն է և ամբողջ



Հանգանակի վերջնական նշանակետը: Թող մենք բոլորս, և՛ մենք՝ ձեզ ուսուցանողներս, և՛ դուք՝ մեզ լսողներդ, Աստծու շնորհիվ արժանանանք այն վայելելու:

32. Իսկ այժմ, սիրելի եղբայրներ՛ր, Աստծու օրհնություններ ձեզ ուսուցանելու պատվին արժանացածս, խնդրում եմ ձեզ, որ ձեր հոգին նախապատրաստեք ընդունելու երկնային պարգևները: Սուրբ և Առաքելական հավատքի համար, որ ձեզ ավանդեցինք, որպեսզի այն դառնա ձեր սեփականությունը, և դուք կարողանաք այն խոստովանել Տիրոջ Շնորհով, մենք ուսուցանեցինք, ինչքան կարող էինք, անցած քառասնօրյա պահքի օրերի ընթացքում: Բայց ոչ այն պատճառով, որ մենք պարտավոր էինք այդքանը միայն ասել: Մենք բաց թողեցինք դեռ շատ բան, որոնք ավելի լավ ուսուցիչներ կհասկանային և ավելի հաջող կպատասխանեին: Իսկ այժմ, երբ մոտենում է Ձատկի սուրբ օրը, և ձեր սերն ընդունելու է աստվածային լույսը, Քրիստոսին միացած, Սուրբ Մկրտությունը վերածնվելու միջոցով, Աստծու կամքով դարձյալ սովորելու եք այն, ինչ պետք է իմանաք որպես քրիստոնյաներ: Պետք է սովորեք, թե երբ ծիսակատարը հրավիրի ձեզ, ի՞նչ կարգով և երկյուղածությամբ պետք է մոտենաք և մտնեք Մկրտարան, և ո՞րն է ծիսական արարողության նպատակը և աստվածաբանական իմաստը, և ինչո՞ւ է կատարվում Մկրտության սուրբ խորհրդի ամեն մի շարժումը: Նաև պետք է իմանաք, թե Մկրտությունից հետո ինչպիսի՞ երկյուղածությամբ մոտենաք Աստծու զոհասեղանին, այնտեղ գտնվող երկնային և հոգևոր խորհուրդները վայելելու համար: Այսպիսով, ուսուցմամբ նախօրոք լուսավորված ձեր հոգին, յուրաքանչյուրիդ կարողության համեմատ, ճանաչի Աստծու ձեզ շնորհած պարգևների մեծությունը:

33. Ձատկի սուրբ և փրկչական օրից հետո, անմիջապես

երկուշաբթի օրից սկսած ամեն օր, ամբողջ շաբաթվա ընթացքում, Սուրբ պատարագից հետո Հարուժյան այս սուրբ վայրը գալով, Աստծու կամքով կլսեք նաև ուրիշ ուսուցումներ, որոնցում դարձյալ կսովորեք ու կտեղեկանաք, թե ի՞նչ նպատակով է կատարվել խորհրդավոր ծիսակատարության այս կամ այն շարժումը և դուք կստանաք նոր վկայություններ և ապացույցներ Հին և Նոր Կտակարանից: Նախ կխոսենք, թե ի՞նչ է կատարվում Մկրտությունից անմիջապես առաջ: Հետո կիմանաք, թե ինչպե՞ս Տերը, ջրի մկրտությամբ և Սուրբ Հոգու Շնորհը վկայակոչելով, ձեզ շնորհեց մեղքերի լրիվ թողություն (Հմմտ. Եփես., Ե 26): Ապա թե ինչպես Մկրտության և Օծման խորհուրդների սրբասացությունները ստացաք Քրիստոսի անունը և ինչպե՞ս ձեզ տրվեց Սուրբ Հոգուն հաղորդվելու դրոշմը: Պիտի սովորեք նաև Սուրբ Հաղորդության խորհուրդը, որ Աստծու կողմից հանուն մարդու մատուցվել է Նոր Կտակարանում Քրիստոսի ձեռքով, որ առաջինը նա մատուցեց այստեղ՝ այս քաղաքում, ինչպես այդ մեզ ավանդել են Գրքերը: Պիտի սովորեք նաև, թե ո՞րն է նրանց զորությունը և ինչպե՞ս ու ե՞րբ պետք է մարդ մոտենա նրանց: Եվ, վերջապես, կսովորեք, թե այս կյանքում ձեր ստացած շնորհին համարժեք գործով ու խոսքով կենցաղավարեք, որպեսզի վայելեք նաև հավիտենական կյանքը: Այս ամենի մասին, կամոքն Աստծու, հետագայում կասվի ձեզ:

34. «Արդ, եղբայրներ, միշտ ուրախ եղեք ի Տեր: Դարձյալ կասեմ, ուրախ եղեք» (Փիլիպ., Գ 1 և Դ 4): Որովհետև մոտ է ձեր փրկությունը (Ղուկ. ԻԱ 28), և հրեշտակների երկնային զորքը սպասում է փրկությանը: Արդեն լավում է անապատից բաճր կանչող ձայնը. «Պատրաստեցեք Տիրոջ ճանապարհը» (Եսայի, Խ 3 և Մատթ., Գ 3): Մարգարեն աղաղակում է. «Ո՛վ դուք, որ ծարաված եք, գնացեք ջրի»

(Եսայի, ԾԵ 1): Եվ հետո դարձյալ՝ «Լսեցեք ինձ և բարիքներ ճաշակեցեք, ու բարության մեջ ձեր հոգիները վայելք պիտի զգան» (Եսայի, ԾԵ 2): Քիչ հետո կլսեք. «Լուսավորվիր, Երուսաղեմ, քանզի հասել է քո լույսը» (Եսայի, Կ 1) հատվածի ընթերցումը: Այս նոր Երուսաղեմի մասին մարգարեն ասել է. «Այն ժամանակ դու կկոչվես քաղաք արդարության, քաղաքների մայր Սիոն հավատարիմ» (Եսայի, Ա 26): Քանզի Օրենքը ելավ Սիոնից և Տիրոջ խոսքը՝ Երուսաղեմից և այստեղից տարածվեց համայն տիեզերքում:

Այդ քաղաքին էլ դիմեց մարգարեն՝ ձեզ համար ասելով. «Բարձրացրու քո աչքերը, նայիր շուրջդ և տես քո որդիներին, որոնք հավաքվել են» (Եսայի, ԽԹ 18): Եվ նա պատասխանելով ասում է. «Ովքե՞ր են սրանք, որ թուել են ինչպես ամպ և ինչպես ձագերի հետ խառնված աղավնիներ» (Եսայի, Կ 8): Չեզ ամպ անվանեց հոգևոր առումով, իսկ աղավնիներ՝ ձեր անեղծության համար: Եվ նա դարձյալ ասում է. «Ո՞վ է լսել, ո՞վ է տեսել այսպիսի բան, որ երկիրը մեկ օրում ծննդաբերի, և միանգամից մի ամբողջ ազգ ծնվի. քանզի Սիոնը երկունքի ցավով բռնվեց և ծնեց իր մանուկներին» (Եսայի, ԿԶ 8): Եվ բոլորը պիտի լցվեն անասելի ցնծությունը. քանզի Տերն ասաց. «Ահա ես Երուսաղեմն ստեղծում եմ ցնծության համար և իմ ժողովրդին՝ ուրախության համար» (Եսայի, ԿԵ 18):

35. Տա Աստված, որ այժմ ձեզ համար ևս ասվի. «Ուրախացի՛ր, երկինք, և ցնծա՛, երկիր» (Եսայի, ԽԹ 13): Շարունակության մեջ ասում է. «Քանզի Աստված ողորմեց իր ժողովրդին և մխիթարեց իր ժողովրդի տառապյալներին» (Եսայի, ԽԹ 13): Այս ամենը ձեզ կշնորհվի մարգասիրությամբն Աստծու, որ խոստանում է. «Ես ամպի նման կջնջեմ քո անօրենությունները և մշուշի նման՝ քո մեղքերը» (Եսայի, ԽԴ 22): Եվ դուք, հավատացյալների անվանը արժանանալուց հետո, որոնց մասին գրված է, թե՛ «Իմ ծառանե-

րին նոր անուն պիտի տրվի, որը պիտի օրհնաբանվի երկրի վրա» (Եսայի, ԿԵ 15), ցնծությունը պիտի ասեք. «Օրհնյալ է Աստված, և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ օրհնեց մեզ ի Քրիստոս ամենայն հոգևոր օրհնությունը» (Եփես., Ա 3): «Նրանով է, որ ունենք փրկություն, Նրա արյան միջոցով՝ մեղքերի թողություն, ըստ իր Շնորհի մեծություն չափով և առատացավ մեր մեջ» (Եփես., Ա 7): Եվ դարձյալ՝ «Բայց Աստված, որ առատ է ողորմությամբ և գթություն, իր մեծ սիրով, որով սիրեց մեզ, և մինչ մեռած էինք մեր մեղքերի մեջ, մեզ կենդանացրեց Քրիստոսով» (Եփես., Բ 4-5): Եվ դարձյալ, օրհներգ Աստծուն՝ ասելով. «Երբ մեր Փրկիչ Աստծու քաղցրությունը և մարգասիրությունը հայտնվեց, ոչ այն արդարության համար, որ երբեմն գործեցինք, այլ իր ողորմածության համաձայն, որ փրկեց մեզ ծննդյան ավազանի միջոցով և նորոգությամբն Սուրբ Հոգու, որ Աստված առատությամբ թափեց մեզ վրա մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, որպեսզի Նրա շնորհիվ արդարացված՝ ժառանգներ լինենք հավիտենական կյանքի հույսով» (Տիտ., Գ 4-7): Ուրեմն, Աստված՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, փառքի Հայրը ձեզ թող տա իմաստություն և հայտնության հոգի իրեն ճանաչելու համար և թող ձեզ պահպանի, զորություն, կարողություն և լույս շնորհի ամեն բարի խոսքի, գործի և մտածմունքի համար: Նրան պատիվ և փառք մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով և Սուրբ Հոգու հետ միասին, այժմ և միշտ և անվախճան, հավիտյանս հավիտենից: Ամեն:



## Սուրբ Խորհուրդների մասին

### ՌԻՍՈՒՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ուղղված նորադարձներին

Եվ ընթերցում Պետրոսի Ընդհանրական Առաջին թղթից՝ այն կետից, ուր ասում է՝ «Արթուն եղեք, հսկեցեք», մինչև թղթի վերջը:

1. Դեռևս վաղուց ցանկանում էի, ո՛վ Եկեղեցու հարազատ և հույժ ցանկալի զավակներ, զրուցել ձեզ հետ այդ հոգևոր ու երկնային խորհուրդների մասին: Սակայն, լավ գիտակցելով, որ տեսնելը շատ ավելի արժանահավատ է, քան լսելը, ես սպասեցի մինչև այս ներկա ժամանակը՝ ձեզ առաջնորդելու համար այս դրախտի առավել լուսավոր և բուրավետ մարգագետինը, քանի որ ձեզ փորձելով՝ իմ խոսքերին առավել հնազանդ գտա: Կար մի այլ պատճառ ևս, որի համար սպասեցի մինչև այսօր. այն, որ այժմ դարձել եք առավել արժանի՝ հասկանալու Աստծո վեհ խորհուրդները, արժանանալով մկրտության աստվածային և կենարար խորհրդին: Ուստի, քանի որ հետ այսու մենք պետք է ձեզ համար պատրաստենք առավել կատարյալ դասերի մի սեղան, թող փորձենք այդ բացատրել ձեզ մեծ պարզությամբ, որպեսզի ըմբռնեք նպատակը և այն զորությունը, ինչին արժանացաք մկրտության այդ երեկոյին:

2. Նախ մտաք մկրտարանի գավթում եղած նախատունը և կանգնած, դեպի արևմուտք նայելով, լսեցիք, որ ձեզ պատվիրեցին, թե որտե՞ղ պարզեք ձեր ձեռքերը՝ ձերբազատվելու համար սատանայից, ասես թե նա ներկա էր: Բայց պետք է գիտենաք, որ կարգադրության այդ ձևը գոյություն ունի մի հին պատմության մեջ: Քանզի երբ փարավոնը՝ դառնագույն և դաժանագույն այդ բռնապետը,

նեղացնում և խստագույնս ճնշում էր հրեաների ազատ և ազնիվ ժողովրդին, Աստված ուղարկեց Մովսեսին, որպեսզի այդ ժողովրդին ազատագրի եգիպտացիների մոտ ծանր և դառն ստրկական ծառայությունից:

Եվ դռների բարավորները ներկվեցին գառնուկի արյամբ, որպեսզի կոտորող հրեշտակը անցնի գնա և չմտնի այն տներից ներս, որոնք ներկված ու նշված էին արյունով, իսկ հրեա ժողովուրդը ազատվեց հրաշալի ձևով: Եվ քանի որ Հուդայի ժողովուրդը փախչելով ազատվեց, թշնամին վազում էր նրանց ետևից ու թեև տեսավ, որ ծովը նրանց համար տարօրինակ կերպով պատռվեց, չհրաժարվեց թափով հետևելուց և, իրենց հետքերով նրանց հետքը ծածկելով, իսկույն ջրասույզ եղան Կարմիր ծովում:

3. Այժմ, խնդրում եմ, մտովի Հնից եկ դեպի Նորը և պատկերից՝ դեպի ճշմարտությունը: Այնտեղ Մովսեսն ուղարկվեց Աստծու կողմից Եգիպտոս, այստեղ Հոր կողմից Քրիստոս ուղարկվեց աշխարհ: Այնտեղ՝ փարավոնի կողմից կեղեքվող մի ժողովրդի Եգիպտոսից հանելու համար, այստեղ՝ որպեսզի Քրիստոս փրկի մարդկանց, որոնք ստրկացած ու ծանրաբեռնված էին մեղքերով: Այնտեղ գառնուկի արյունը կործանող հրեշտակին հեռացնելու միջոց էր, այստեղ անմեղ Գառնուկի արյունը, նկատի ունեմ Հիսուս Քրիստոսի արյունը, եղավ դեբերին հալածողը: Այնտեղ բռնատեր փարավոնը մինչև ծով հալածեց այդ հին ժողովրդին, այստեղ այդ դաժան, անամոթ և չարանենդ դեռ ձեզ հալածում է մինչև այդ փրկարար ջրերը: Այդ փարավոնը խեղդվեց Կարմիր ծովում, այս սատանան անհետանում է սուրբ մկրտության փրկարար ջրում:

4. Բայց անհրաժեշտ եմ համարում բացատրել ձեզ, թե ինչու եք կանգնում դեպի արևմուտք, ձեռքներդ պարզած, և ասում. «Հրաժարվում եմ քեզանից, սատանա», կարծես

Թե այն ներկա է: Որովհետև աշխարհի արևմտյան հատվածը, որտեղ նայում ենք, խավարի վայրն է, իսկ սատանան, ով իրապես խավարն է, խավարի մեջ իշխանություն ունի: Այդ պատճառով դեպի արևմուտք շրջվելով՝ անջատվում և հրաժարվում եք այդ խավար ու մթին տիրակալից: Եվ ի՞նչ էր ասում ձեզանից յուրաքանչյուրը, երբ կանգնած նայում էիք դեպի արևմուտք. «Հրաժարվում եմ քեզանից, սատանա», հրաժարվում չար ու դաժան բռնակալից. այլևս չեմ վախենում քո իշխանությունից: Քանզի Քրիստոս, մարդ դառնալով, կործանեց քո իշխանությունը, մեռնելով որպես մարդ, իր մահով վերջ տվեց մահին, որպեսզի ես չլինեմ մշտապես ստրկացած ու գերություն մեջ: Ժխտում եմ քեզ՝ դավադիր և խորամանկ օձիդ: Հրաժարվում եմ քեզանից, քանզի նենգամիտ լինելով՝ բարեկամ ձևացար և ամեն անօրենություն գործեցիր՝ իմ նախահայրերին մղելով ըմբոստություն: Հրաժարվում եմ քեզանից, սատանա, քանզի դու ես պատճառ և գործակից ամեն չարություն:

5. Այնուհետև երկրորդ խոսքում դու սովորում ես ասել. «Եվ քո բոլոր գործերից»: Սատանայի գործերն են բոլոր մեղքերը, որոնցից պարտավոր ենք խուսափել, ինչպես խուսափում ենք բռնապետից: Ուստի պարտավոր ես խուսափել նաև նրա զենքերից: Եվ, անշուշտ, մեղքի ամեն մի տեսակ գումարվում է սատանայի գործերի վրա: Իմացիր, մանավանդ, որ այն, ինչ այդ երկյուղալի պահին ասում ես, գրվում է Աստծու գրքում: Ուրեմն, եթե դու կատարես որևէ արարք հակառակ այն ամենին, ինչ խոստացել ես պահպանել, ապա դու կդատվես որպես քո խոստումն ուրացող: Ուստի, դու, ասում եմ, հրաժարվում ես սատանայի գործերից, նրա բոլոր անմիտ արարքներից և մտածմունքներից:

6. Այնուհետև կասես՝ «և նրա ամբողջ շքախմբից»: Եվ սատանայի շքախումբն են թատերական մոլեզին խաղերը,

ձիարշավները, որսով զբաղվելը և բոլոր նման ունայնությունները, որոնցից ձերբազատում հայցող սուրբ և աստվածավախ մարդն ասում է. «Շրջիր աչքերս, որպեսզի ունայնություն չտեսնեմ»: Մի տարվիր թատերական մոլեզին խաղերով, որտեղ կտեսնես միայն միմոսների անառակությունները, որոնք ուղեկցվում են հայհոյություններով, գոհակություններով և անկարգություններով: Մի փափազիր տեսնել հիմար և անմիտ այրերի սատանայական պարերը, որոնց ձևը և իմաստը կանացիակերպ են: Խուսափիր նաև նրանցից, որոնք իրենց ժամանակը վատնում են որսավայրերում, որպեսզի ծառայեն իրենց որովայնին այդպիսի ուտելիքներով, բայց իրենք են դառնում ուտելիք անզուսպ և վայրի գազաններին: Ավելի ճիշտն ասած, իրենց ասածուն, այսինքն՝ իրենց որկորին ծառայելու համար, իրենք են կործանում իրենց կյանքը՝ իրենց անձը նետելով անդունդը: Խուսափիր նաև ձիարշավներից, այդ մոլագար հանդիսություններից, որոնք մեծ աղետ են պատճառում նաև հոգիներին, քանի որ այդ ամենը սատանայի ուղեկիցներ են:

7. Սրանց հետ միասին սատանայի շքախմբում ընդգրկվում են նաև այն բաները, որոնք հաճախ կախված են լինում կուռքերի տոնախմբություններին: Դրանք կամ միս են, կամ հացեր, կամ նման բաներ: Քանզի դրանք պղծվում են զզվելի և անմաքուր դեղերին ուղղված կոչերով: Որովհետև, ինչպես որ գոհություն հացը և գինին նախքան երկրպագելի Երրորդություն արված սրբազան դիմումը պարզապես հաց է և գինի, իսկ այդ դիմումով հացը դառնում է Քրիստոսի մարմին, և գինին՝ Քրիստոսի արյուն, այդպես էլ, ընդհակառակը, սատանայական երթերի այդ ուտելիքները, որոնք թեև իրենց բնությունը պարզ ուտելիք են, դեղերին արված դիմումներով դառնում են վարակված և անմաքուր:

8. Այնուհետև կասես. «Եվ քո ամբողջ պաշտամունքը»: Իսկ սատանայի պաշտամունք են անկյանք կուռքերին ուղղված աղոթքները, նրանց պատվին ճրագներ վառելը, կամ աղբյուրների և գետերի մոտ խոունկ ծխելը, ինչպես ումանք, խաբվելով երազներից և դեերի ուրվականներից, այդ արեցին, կարծելով, որ բուժում կգտնեն իրենց մարմնական հիվանդություններից: Բայց դու նման բաներ չանես:

Բացի այս ամենից, սատանայի պաշտամունք են նաև հավահամայությունը, գուշակությունը, հմայիլներին հավատալը, մոգությունը և սատանայական այլ նման բաները: Ուստի, այս բոլոր բաներից խուսափիր: Քանզի երբ արդեն հեռացել ես սատանայից և միացել Քրիստոսին, հետո նորից ընկնես այդ ամենի մեջ, դու կրկնակի պատժի կենթարկվես: Դու կգրկվես թե՛ Քրիստոսից և թե՛ քո հոգու բռնակալ սատանայից, գուցե այն բանի համար, որ նրան խիստ դառնացրել ես՝ նրանից հրաժարվելով: Նա քեզ կենթարկի առավել ծանր և դառն փորձություն: Քանզի այդ ժամին գուցե նա քեզ հաճելի էր վերաբերվում որպես յուրայինի և այնքան չէր բռնանում քեզ վրա դառն և կործանարար ստրկությունը: Այժմ դու գրկվում ես թե՛ Քրիստոսից և թե՛ կփորձվես սատանայից: Դու չե՞ս լսել հին պատմությունը, որտեղ խոսվում է Ղովտի և նրա դուստրերի հետ պատահածի մասին: Մի՞թե ճիշտ չէ, որ նա և իր դուստրերը, լեռ բարձրանալով, փրկվեցին այդ աղետից, իսկ նրա կինը դարձավ աղե արձան և այնտեղ մնում է առհավետ՝ հիշեցնելու համար հետագա սերունդներին ետ շրջվելու իր չար մտադրությունը: Ուրեմն, զգուշացիր քեզ համար և ետ մի շրջվիր ներկա կյանքի աղի գործերին ու արարքներին, քանի որ ձեռքդ դրել ես մաճի վրա, այլ բարձրացիր լեռ՝ դեպի Հիսուս Քրիստոս, որը այն վեմն է, որ հանվել է առանց մարդկային ձեռքերի և լցրել ամբողջ տիեզերքը:

9. Եվ արդ, երբ դու հեռացար սատանայից և ոտնակոխ արեցիր նրա հետ ունեցած ամբողջ համաձայնությունը և դրա հետ միասին լուծեցիր դժոխքի հանդեպ ունեցած քո նախկին պայմանադրությունները նրա հետ, այնժամ Աստված բացեց դրախտը քեզ համար, որ տնկել էր արևելքում, և որտեղից արտաքսվեց մեր նախահայր Ադամը իր ըմբոստություն և օրինազանցության պատճառով: Եվ այդ է խորհրդանշում քո շրջվելը արևմուտքից դեպի արևելք, որն էլ լույսի վայրն է: Այնժամ քեզ պատվիրում էինք ասել. «Հավատում եմ Հոր և Որդուն և Սուրբ Հոգուն, և ապաշխարություն մեկ Մկրտություն»: Այս ամենի մասին մենք ընդարձակ կերպով զրուցել ենք նախորդ ուսուցումներում, որպես Աստուծոց մեզ տրված շնորհի:

10. Այս խոսքերով քեզ ապահովելուց հետո՝ եղիր զգուշ: Քանզի մեր ոսոխը՝ սատանան, ինչպես քիչ առաջ ընթերցվեց, շրջում է առյուծի պես և փնտրում է, թե ում հոշոտի: Սակայն, Մկրտությունը նախորդած ժամանակներում մահը կուլ է տվել շատերին: Բայց վերածնման սուրբ Մկրտությունից հետո՝ երբեք. քանզի Աստված հաճեց ամեն դեմքից վերացնել արցունքը: Ուրեմն, այսուհետև դու չես սգալու, որ մերկացել ես հին մարդուց, այլ պիտի ցնծություն տոնես՝ հազած փրկության պատմուճանը՝ Հիսուս Քրիստոսին:

11. Այս ամենը կատարվում էր արտաքին տանը: Սուրբ խորհուրդների մասին հաջորդ ուսուցման ժամանակ Աստուծու կամքով, եթե մտնենք Սրբություն Սրբոց, մենք այնտեղ կհասկանանք, թե ինչ են նշանակում այնտեղ եղած խորհրդանիշերը: Իսկ Աստուծուն և Որդուն և Սուրբ Հոգուն փառք, գորություն, վեհություն հավիտյանս հավիտենից: Ամեն:

## Սուրբ Խորհուրդների մասին

### ՈՒՍՈՒՅՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ Սկրտության մասին

Եվ ընթերցում Հոմեագիներին ուղղված թղթից. «Կամ չգիտե՞ք, թե մենք՝ բոլորս, որ մկրտվեցինք Հիսուս Քրիստոսով, Նրա մահով է, որ մկրտվեցինք», մինչև այն հատվածը, ուր ասվում է՝ «Քանզի Օրենքի տակ չեք, այլ՝ Օնորհի»:

1. Պիտանի են ձեզ համար ամենօրյա ուսուցումները և նոր դասերը, որոնց ընթացքում մեզ հայտնի են դառնում նոր բաներ: Եվ առավել օգտակար են ձեզ համար, որ հնու-թյունից վերանորոգվեցիք նորու-թյամբ: Ուստի մտածում եմ, որ անհրաժեշտ է ձեզ բացատրել երեկվա ուսուցման շարունակու-թյունը, որպեսզի իմանաք, թե ինչ էր նշանակում այն ամենը, ինչ դուք կատարեցիք մկրտարանի ներքին տանը:

2. Ուրեմն, ներս մտնելուց հետո, իսկույն ձեր վրայից հանեցիք ձեր պատմուճանը: Այդ նշանակում է, թե դուք ձեր վրայից հանել եք հին մարդուն իր բոլոր գործերով: Զգեստները հանելուց հետո դուք մնացիք մերկ՝ դրանով ընդօրինակելով խաչի վրա մերկացած Քրիստոսին: Մերկանալով Նա մերկացրեց իշխանություններին և իր պարզությամբ հաղթանակեց խաչի վրա: Քանի որ ձեր մարմնի անդամների վրա բույն էին դրել հակառակ ուժերը, ապա այսուհետև թույլատրելի չէ հազնել այդ հին պատմուճանը: Ես չեմ խոսում այդ տեսանելի պատմուճանի մասին, մարդու մասին, որը փչանում է խաբեպատիր ցանկու-թ-

յուններով: Եվ չլինի թե այդ պատմուճանը վերստին հագնի այն անձը, որը մեկ անգամ այն հանել է իր վրայից: Բայց նա միշտ թող ասի այն, ինչ ասել է Քրիստոսի հարսը « Երգ Երգոցի» մեջ. «Ես հանել եմ իմ պատմուճանը. ինչպե՞ս նորից հագնեմ այն»: Օ՛, գարմանալի բան: Մերկ էիք բոլորի աչքի առաջ և չէիք ամաչում, քանզի ճշմարտապես նմանվում էիք նախաստեղծ Ադամին, ով դրախտում մերկ էր, բայց չէր ամաչում:

3. Ապա, մերկանալուց հետո, սրբագործված յուզով կքավեք գլխի գազաթի մագերից մինչև ստորին վերջավորությունները և հաղորդակից կդառնաք Հիսուս Քրիստոսի ընտանի և բարետես ձիթենուն: Երբ արդեն կտրվեցիք վայրի ձիթենուց և պատվաստվեցիք բարի ձիթենուն, դուք դարձաք հաղորդակից և մասնակից՝ իսկական ձիթենու պարարտության: Ուրեմն, աղոթքով սրբագործված այդ յուզը Քրիստոսին հաղորդվելու որակի և ամենայն հակադիր ուժի ներգործության հետքը հեռու վանողի խորհրդանիշն էր: Քանզի, ինչպես որ սրբերի շունչ ներփչելը և Աստծու անունը հիշատակելը ուժեղ բոցի նման այրում և վանում է դեերին, այդպես էլ այդ սրբագործված յուզը Աստծու անվան հիշատակումով և աղոթքով այնպիսի գործություն է ձեռք բերում, որ ոչ միայն այրում և մաքրում է մեղքերի հետքերը, այլև հալածում է չարի բոլոր անտեսանելի ուժերը:

4. Այս ամենից հետո առաջնորդվեցեք սրբազան մկրտության սուրբ ավազանին, ինչպես որ Քրիստոս խաչից բերվեց մեր առջև եղած այս գերեզմանը: Եվ երբ յուրաքանչյուրիդ հարց կտրվի, թե՞ արդյո՞ք հավատում է հանուն Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո, խոստովանեք փրկարար խոստովանությունը, երեք անգամ սուզվեք ջրի մեջ և նույնքան անգամ ելեք այդ ջրից: Դրանով դուք



կխորհրդանշեք Քրիստոսի եռօրյա թաղումը: Քանզի, ինչպես որ մեր Փրկիչը երեք օր ու երեք գիշեր թաղված մնաց երկրի սրտում, այդպես էլ դուք, ջրից ձեր առաջին դուրս գալով, պատկերում եք Քրիստոսի թաղման առաջին օրը, իսկ առաջին անգամ սուզվելիս՝ առաջին գիշերը: Որովհետև, ինչպես որ գիշեր ժամանակ մարդ բոլորովին չի տեսնում, իսկ ցերեկ ժամանակ գտնվում է լույսի մեջ, այդպես էլ դուք, սուզվելիս, ինչպես գիշեր ժամանակ, ոչինչ չեք տեսնում, իսկ ջրից դուրս գալով՝ դարձյալ դուք կլինեք՝ ինչպես ցերեկվա մեջ: Եվ դուք միևնույն ժամանակ մեռնում և ծնվում եք, իսկ փրկարար այդ ջուրը ձեզ համար լինում է և՛ գերեզման, և՛ մայր: Եվ այն Սողոմոնյան այլոց առթիվ ասել է, դա կհարմարվեր ձեզ: Քանզի այնտեղ ասել է. «Ծնվելու ժամանակը և մեռնելու ժամանակը»։ Իսկ ձեր դեպքում՝ հակառակը՝ մեռնելու ժամանակը և ծնվելու ժամանակը: Եվ այս երկուսի ստեղծողն ու նպաստողը եղել է միևնույն ժամանակը: Ուստի մահվան ուղեկիցը եղել է ձեր ծնունդը:

5. Օտար ու տարօրինակ բա՛ն: Իրականում չմեռանք, իրականում չթաղվեցինք, ոչ էլ իրականում խաչվելով՝ հարույթյուն առանք: Բայց նմանակումը պատկերումն է, իսկ ճշմարիտը փրկույթյունն է: Ըստ էության՝ Քրիստոս իրականում խաչվեց, իրականում թաղվեց և իրականում հարյավ: Եվ այս ամենը մեզ շնորհեց, որպեսզի իր տառապանքների նմանակումով հաղորդակից դառնանք այդ տառապանքներին, ճշմարիտ փրկույթյուն շահենք: Օ՛, գերազանց մարդասիրույթյուն: Քրիստոս գամեր ընդունեց իր մաքրամաքուր ձեռքերին և ցավեր ճաշակեց: Իսկ ինձ առանց ցավերի ու տառապանքի, միայն հաղորդակից դարձնելով, փրկույթյուն է շնորհում:

6. Ուրեմն, ոչ ոք թող չմտածի, թե մկրտույթյունը մեղ-

քերի թողույթյուն է միայն, այլև՝ որդեգրվելու շնորհ: Մինչդեռ Հովհաննեսի մկրտույթյունը միջնորդ էր միայն մեղքերի թողույթյան: Բայց մենք պետք է լավ իմանանք, թե ինչպես որ Քրիստոսի այս մկրտույթյունը մեղքերի քավույթյուն է և միջնորդ Սուրբ Հոգու պարգևի, այդպես էլ այն Քրիստոսի չարչարանքների նմանակումն է և պատկերը: Պողոսն էլ իր թղթում, որ այժմ ընթերցվեց, բարձրաձայն ասում է. «Կամ չգիտե՞ք, թե մենք բոլորս, որ մկրտվեցինք Հիսուս Քրիստոսով, Նրա մահով է, որ մկրտվեցինք: Մկրտույթյամբ թաղվեցինք Նրա հետ»: Այս ամենն ասում էր նրանց, ովքեր կարծում էին, թե Մկրտույթյունը միայն միջնորդ է մեր մեղքերի քավույթյան և Աստծուն որդեգրվելու համար, և թե Քրիստոսի չարչարանքների պատկերումը, որ կատարում ենք Մկրտույթյան խորհրդով, ընդհանուր առնչույթյուն չունի Քրիստոսի իրական չարչարանքների հետ:

7. Ուստի, որպեսզի իմանանք, թե այն ամենը, ինչ Քրիստոս կրեց մեր փրկույթյան համար, դրանք կրեց ճշմարտապես և ոչ թե թվացյալ, որ Նրա չարչարանքներին մենք հաղորդակից ենք դառնում, Պողոսը շատ պարզ կերպով ասել է. «Որովհետև Նրա մահվան նմանույթյամբ տնկակից եղանք Նրան. այդպիսին պիտի լինենք նաև Նրա հարույթյան նմանույթյամբ»: Լավ է ասված նաև՝ «տնկակից»։ Քանզի այստեղ է տնկվել որթատունկը, այսինքն՝ Քրիստոս, և մենք Մկրտույթյան հաղորդակցույթյամբ դարձանք մասնակից, «տնկակից» Նրա մահվան: Լավ ուշադիր եղիր առաքյալի խոսքերին: Քանզի նա չի ասել, որ տնկակից եղանք մահվան, այլ՝ մահվան նմանակին: Քանզի Քրիստոս ճշմարտապես մեռավ, որովհետև Հոգին անջատվեց մարմնից: Թաղումը ևս ճշմարիտ էր, որովհետև Նրա սուրբ մարմինը փաթաթվեց մաքուր սավանի մեջ, և մահվան բոլոր պարագաները դրանում կատարվեցին: Չեր պա-

րագայում մահը և չարչարանքները նմանակված են, բայց փրկուլթյունը նմանակում չէ, այլ ճշմարիտ:

8. Այս ամենը լավ սովորելուց հետո, խնդրում եմ, պահեք ձեր հիշողութայան մեջ, որպեսզի ես ևս, անարժանս, ձեր մասին ասեմ. «Սիրում եմ ձեզ, որ հիշում եք ինձ ամեն ինչում և պահում եք ավանդած բաները, ինչպես որ ավանդեցի ձեզ»: Եվ Աստված, որ մեղքի մահվանից ձեզ բարձրացրեց և կենդանացրեց, կարող է ձեզ շնորհել, որ քայլեք նոր կյանքով: Քանզի Նրան վայել է փառք և իշխանություն այժմ և հավիտյան: Ամեն:



## Սուրբ Խորհուրդների մասին

### ՈՒՍՈՒՅՈՒՄ ԵՐՐՈՐԴ Յուրով օժման մասին

Եվ ընթերցում Հովհաննես առաքյալի Ընդհանրական Առաջին թղթի այն կետից, ուր ասվում է. «Իսկ դուք օժում ունեք Աստծուց և ամեն բան գիտեք», մինչև այն հատվածը, ուր ասվում է. «Եվ երբ Նա հայտնվի, Նրա գալստյան ժամանակ Նրանից չամաչենք»:

1. Քրիստոսով մկրտվելուց և Քրիստոսին հազնելուց հետո, դուք դարձել եք Աստծու Որդուն կերպարանակից: Քանզի Աստված, ձեզ որդեգրման նախասահմանելով, դարձրեց ձեզ Քրիստոսի փառավոր մարմնի կերպարանակից: Ուրեմն, մասնակից դառնալով Քրիստոսին՝ դուք, բնականաբար, կկոչվեք օծյալ, և հետևաբար, ձեզ համար է Աստված ասել. «Մի դիպչեք իմ օծյալներին»: Դուք դարձել եք օծյալ՝ ընդունելով Սուրբ Հոգու դրոշմը, և ամեն ինչ ձեզ վրա եղավ պատկերվելով: Ուստիև դուք Քրիստոսի պատկերներն եք:

Եվ ինքը, Հորդանան գետում լողանալով և իր աստվածայնութայան բուրմունքը հաղորդելով այդ ջրերին, երբ դուրս եկավ այդ ջրից, Նա ընդունեց Սուրբ Հոգու այցելությունը, քանզի նմանը սիրում է հանգչել նմանի վրա: Այդպես նաև ձեզ հետ: Ավազանի սրբազան ջրերից օծված դուրս գալուց հետո դուք ստանում եք Քրիստոսի օժման խորհրդավոր պատկերումը: Սա էլ այն Սուրբ Հոգին է, որի մասին Աստծու անունից խոսել է նաև երանելի Եսային. «Տիրոջ Հոգին ինձ վրա է. դրա համար էլ Նա օժեց ինձ, ուղարկեց ինձ՝ ավետարանելու աղքատներին»:

2. Որովհետև Քրիստոս մարմնով մարդու կողմից չօժվեց յուզով կամ մյուռոնով, այլ Հայրը Նրան, համայն աշխարհի համար Փրկիչ նախասահմանած լինելով, օծեց Սուրբ Հոգով, ինչպես ասել է Պետրոս առաքյալը. «Հիսուսին Նազարեթից, ում Աստված օծեց Սուրբ Հոգով»: Դավիթ մարգարեն ևս բարձրաձայն ասել է. «Քո գահը հավիտյանս հավիտենից է, Աստված: Քո արքայական գավազանն արդարության գավազան է: Սիրեցիր արդարությունը և ատեցիր անօրենությունը. դրա համար Աստված՝ քո Աստվածն օծեց Քեզ ուրախության յուզով՝ ավելի, քան Քո ընկերներին»:

Եվ ինչպես որ Քրիստոս իրապես խաչվեց և թաղվեց և հարյավ, իսկ դուք, ըստ նմանություն, մկրտություն ընթացքում արժանացաք Նրա հետ խաչվելու, միասին թաղվելու և միասին հարություն առնելու, այդ էլ կատարվում է օծման ընթացքում: Նա օծվեց մտովի պատկերված ցնծություն յուզով, այսինքն՝ Սուրբ Հոգով, որն էլ կոչվում է ցնծության յուզ, քանզի այն հոգեկան երջանկության և ցնծության պատճառ է: Բայց դուք օծվեցիք մեռնով և դարձաք Քրիստոսին հաղորդակից և ընկեր:

3. Բայց զգուշ եղիր: Չկարծես, որ այդ մեռնը շնորհից զուրկ է և անսուրբ: Որովհետև, ինչպես որ գոհություն հասցր Սուրբ Հոգու ոգեկոչումից հետո այլևս պարզ հաց չէ, այլ Մարմինը Քրիստոսի, այդպես էլ այդ սուրբ մեռնը ոգեկոչումից հետո այլևս շնորհից զուրկ չէ և, այսպես ասած, հասարակ մի բան չէ: Այլ այն արդեն պարզ են է Քրիստոսի և Սուրբ Հոգու, և այդ յուզը, Աստծու ներկայությունը, դառնում է ներգործուն: Ուստի և այն խորհրդանշորեն քսվում է ճակատին և քո մյուս զգայարաններին: Եվ այս երևացող մեռնը քսվում է մարմնին, իսկ սուրբ և կենարար Հոգով սրբանում է հոգին:

4. Նախ այն քսում եք ճակատին, որպեսզի ձերբազատ-

վեք այն ամոթից, որ իր հետ ամենուր տարավ առաջին օրինախախտ մարդը, և որպեսզի բաց երեսով արտացոլեք Տիրոջ փառքը: Հետո կքսեք ականջներին, որպեսզի դուք ունենաք այնպիսի ականջներ, որոնց մասին Եսային ասել է. «Եվ սրեց իմ լսելիքը, որ ես լսեմ»: Եվ Տերն Ավետարանում ասել է. «Ով լսելու ականջ ունի, թող լսի»: Այնուհետև այն կքսեք հոտոտելիքին, որպեսզի աստվածային մեռուների բուրմունքն զգալով՝ ասեք. «Քրիստոսի բուրմունքն ենք Աստծու առաջ և փրկվածների մեջ»: Ամենից հետո կքսեք կրծքին, որպեսզի «Ճշմարտությանը գոտեպնդված և արդարության զրահը հագած՝ կարողանաք հանգցնել սատանայի բոլոր հնարքները»: Քանզի ինչպես որ Փրկիչը մկրտությունից և Սուրբ Հոգու այցելությունից հետո դուրս եկավ և հաղթեց հակառակորդին, այդպես էլ դուք սուրբ մկրտությունից և օծման խորհուրդից հետո, Սուրբ Հոգու զրահով գոտեպնդված, կդիմադրեք թշնամու ուժերին և կհաղթեք նրան՝ ասելով. «Ամեն ինչ կարող եմ ինձ գորացնող Քրիստոսով»:

5. Այս սուրբ օծման արժանանալով՝ դուք կոչվում եք քրիստոնյաներ՝ ձեր վերածննդով արդարացնելով նաև այդ անվանումը: Քանզի նախքան այդ մկրտության և Սուրբ Հոգու շնորհին արժանանալը, դուք իրականում դեռևս արժանի չեք այդ անվանը, այլ ճանապարհ ելած՝ առաջ եք ընթանում՝ քրիստոնյա դառնալու:

6. Սակայն անհրաժեշտ է, որ դուք իմանաք, թե այդ օծման խորհուրդը հին գրքում առկա է: Քանզի, երբ Մովսեսն իր եղբայր Ահարոնին հաղորդեց, որ Աստծու հրամանն է նրան քահանայապետ կարգել, Ահարոնին ջրում լվալուց հետո, Մովսեսը նրան օծեց, և նա կոչվեց օծյալ ձևական օծումից հետո: Այսպես նաև քահանայապետը, Սողոմոնին թագավոր հռչակելիս, Գեհոն գետում լվաց և

հետո օծեց նրան: Եվ այս ամենը նրանց հետ կատարվել է ձևական, որպես օրինակ, մինչդեռ ձեզ մոտ՝ ոչ թե ձևական, այլ՝ իրական, որովհետև ձեր փրկության սկիզբը նրանից է, Ով ճշմարտապես օծվել է Սուրբ Հոգուց: Քանզի նա ճշմարտապես սկիզբն է, իսկ դուք՝ թթխմորը: Եվ եթե սկիզբը սուրբ է, ապա անհրաժեշտաբար սրբությունը կփոխանցվի թթխմորին:

7. Այս մեռոնը դուք պահեք անապական և անեղծ, քանզի ամեն ինչում այն ձեզ համար կլինի ուղեցույց և դաստիարակիչ, եթե, անշուշտ, մնա ձեր մեջ, ինչպես այդ մասին նոր լսեցիք երանելի Հովհաննեսի թղթի ընթերցումից, որում շատ խոսում և փրկիստփայում է նաև այդ օծման մասին: Քանզի այդ սուրբ մեռոնը մարմնի հոգևոր պահպանն է և հոգու փրկարարը:

Այս մասին շատ տարիներ առաջ երանելի Եսային մարգարեանալով ասել է. «Եվ Տերը բոլոր ազգերի համար այնպես պիտի անի, որ այս լեռան վրա (լեռ անվանում է Եկեղեցուն մեկ ուրիշ տեղ ևս, երբ ասում է. «Վերջին օրերին պիտի հայտնվի Տիրոջ լեռը») գինի խմեն, ուրախություն վայելեն, մեռոնով օծվեն»: Եվ որպեսզի քեզ առավել վստահ դարձնի, լսիր, թե ինչ է ասում նա այդ մեռոնի մասին իբրև խորհուրդ: Նա ասում է. «Պատմիր այս բոլոր հեթանոսներին, քանզի բոլոր ազգերի համար Տերն այս խորհուրդն ունի»:

Ուրեմն, սուրբ մեռոնով օծվելուց հետո, այն ձեր մեջ պահեք անեղծ և մաքուր, բարի գործերով առաջ ընթացեք և դարձեք հաճելի ձեր փրկության առաջնորդ Հիսուս Քրիստոսին, Ում փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:



## Սուրբ խորհուրդների մասին ՌԻՍՈՒՑՈՒՄ ՉՈՐՐՈՐԴ Քրիստոսի մարմնի և արյան մասին

Եվ ընթերցում Կորնթացիներին ուղղված Պողոսի առաջին թղթի այն կետից, ուր ասված է. «Որովհետև ես ընդունեցի Տիրոջից, ինչ որ ավանդեցի ձեզ» և հետո:

1. Եվ երանելի Պողոսի այս ուսուցումը բավական է ձեզ տեղեկացնելու սուրբ խորհուրդների մասին, որոնց արժանացել եք՝ դառնալով Քրիստոսին համամարմին և արյունակից: Քանզի այս ընթերցվածում նա բարձրաձայն ասում է. «Այն, որ Տեր Հիսուս այն գիշերը, երբ մատնվեց, հաց վերցրեց, գոհովթյուն մատուցեց, կտրեց և տվեց իր աշակերտներին՝ ասելով. «Առեք, կերեք, այս է իմ մարմինը»: Եվ վերցնելով բաժակը և գոհանալով՝ ասաց. «Վերցրեք, խմեք, այս է իմ արյունը»: Ուրեմն, երբ նա որոշեց և ասաց հացի մասին՝ «Այս է իմ մարմինը», ո՞վ այսուհետև կհամարձակվի երկմտել: Եվ երբ նա վստահեցրեց և ասաց. «Այս է իմ արյունը», ո՞վ կարող է տարակուսել՝ ասելով, թե այդ նրա արյունը չէ»:

2. Մի անգամ Գալիլիայի Կանա քաղաքում իր ձեռքի մեկ շարժումով նա ջուրը վերածեց գինու, մի՞թե հավատալի չէ, որ գինին արյան է վերածվել: Հրավիրված լինելով մարմնավոր հարսանիքի՝ նա այդ անհավատալի հրաշագործությունը կատարեց, բայց չենք հավատում, առավել ևս չենք ընդունում, որ նա հարսնատան զավակներին պարգևեց իր մարմնի և իր արյան վայելքը:

3. Ուստի ամենայն վստահությամբ մենք հաղորդվում ենք Քրիստոսի մարմնին և արյանը: Քանզի հացի օրինակով քեզ տրվում է մարմինը, իսկ գինու օրինակով քեզ տրվում է արյունը, որպեսզի հաղորդվելով Քրիստոսի մարմնին և արյանը՝ դու դառնաս Քրիստոսին մարմնակից և արյունակից: Քանզի այս կերպ մենք դառնում ենք Քրիստոսակիր, երբ Նրա մարմինը և արյունը տարածվում է մեր բոլոր անդամների վրա: Այսպիսով, ինչպես երանելի Պետրոսն է ասում, հաղորդակից ենք լինում աստվածային բնությանը:

4. Մի անգամ Քրիստոս հրեաների հետ զրուցելիս ասել է. «Եթե չուտեք իմ մարմինը և չըմպեք իմ արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա»: Իսկ նրանք, չհասկանալով այդ խոսքի հոգևոր իմաստը, գայթակղվելով ետ են հեռացել՝ կարծելով, թե Փրկիչն իրենց մղում է մարդակերության:

5. Հին Կտակարանում ևս խոսվում է առաջավորաց հացերի մասին: Բայց դրանք, Հին Կտակարանին վերաբերվելով, վերացան: Մինչդեռ Նոր Կտակարանում այն հոգին և մարմինը սրբացնող երկնային հաց է և փրկության բաժակ: Քանզի, ինչպես որ հացը հարմար է մարմնին, այնպես էլ Բանը պատշաճ է հոգուն:

6. Ուրեմն, հացը և գինին մի համարի՞ր պարզապես հաց և գինի, քանի որ Տիրոջ որոշմամբ այն Քրիստոսի մարմնին է և Նրա արյունը: Քանզի եթե քո զգայարանը ևս այդպես է ենթադրում, քո հավատքը թող քեզ հաստատի, որ այդ Քրիստոսի մարմնին է և արյունը: Եղածը մի դատիր համից, այլ հավատքից իմացիր առանց երկմտանքի, թե դու արժանացել ես՝ Քրիստոսի մարմնին և արյանը հաղորդակից դառնալու:

7. Երանելի Դավիթը ևս քեզ բացատրում է այդ զորությունը՝ ասելով. «Դու իմ առջև սեղան պատրաստեցիր իմ հալածիչների դիմաց»: Նրա ասածը հետևյալն է. Ո՛վ Տեր, Քո ներկայությունից առաջ դեկերը մարդկանց համար սեղան էին պատրաստում՝ պիղծ և անմաքուր և սատանայական զորությամբ լցված: Բայց Քո ներկայությունից հետո, ով Տեր, իմ առաջ սեղան պատրաստեցիր: Երբ մարդն ասում է Աստծուն՝ «սեղան պատրաստեցիր իմ առջև», ուրիշ ի՞նչ է նշանակում, եթե ոչ խորհրդավոր և մտավոր սեղանը, որ Աստված պատրաստեց հակառակ կողմը, այսինքն՝ դեկերին հակադրված: Եվ շատ տեղին: Քանզի այն մեկը հաղորդակից էր դեկերին, իսկ այս մեկը հաղորդակից է Աստծուն: «Իմ գլուխը յուզող օձեցիր»: Քո գլխի ճակատը յուզող օձեց՝ քո ունեցած աստվածային դրոշմի համար, որպեսզի դրոշմով դառնաս Աստծու սրբագործություն: «Եվ քո բաժակը ինձ արբեցրեց ուժեղ գինու պես»: Այստեղ տեսնում ես, որ Հիսուսը բաժակ կոչվածը վերցրեց ձեռքը և գոհանալով՝ ասաց. «Այդ է իմ արյունը, որ թափվում է շատերի համար, իրենց մեղքերի թողության համար»:

8. Դրա համար Սողոմոնը ևս, այդ շնորհն ակնարկելով, ժողովողում ասում է. «Եկ, ուրախությամբ կեր քո հացը»՝ հոգևոր հացը: Փրկարար և երանություն պարգևող կանչը կոչում է. «Եկ և զվարթ սրտով խմիր քո գինին»՝ հոգևոր գինին, «և յուզ թափիր քո գլխին»: Տեսնո՞ւմ ես, որ նա ակնարկում է նաև օձման խորհուրդը. «Թող հագուստներդ միշտ սպիտակ լինեն, քանզի Տերը հավանել է քո գործերը»: Քանզի շնորհին մոտ գալուց առաջ քո գործերը «ուսանյություն ունայնությանց» էին:

Իսկ այժմ, երբ հանել ես հին զգեստներդ և հագել հոգևոր առումով սպիտակ հագուստներ, պետք է մշտապես մնաս սպիտակագգեստ: Այս խոսքով չենք ասում, որ պետք է մշտապես սպիտակ զգեստներ հագնես, այլ զգեստներ, ու-

րոնք իրոք սպիտակ են և պայծառ, այն է՝ հոգեկան զգեստներ, որպեսզի երանելի Եսայու պես ասես. «Ես պիտի հրճվեմ Տիրոջով, որովհետև Նա ինձ փրկության զգեստ և ուրախության պատմուճան հագցրեց»:

9. Ուրեմն, այդ ամենը սովորելուց և տեղեկանալուց հետո, թե երևացող հացը հաց չէ, թեև ճաշակելուց այդպիսին է, այլ Քրիստոսի մարմինն է, իսկ երևացող գինին գինի չէ, թեև ճաշակելուց այդպես է թվում, այլ Քրիստոսի արյունն է: Դրա մասին հնում ասել է սաղմոսերգու Դավիթը. «Հացն ամրացնում է մարդու սիրտը, յուզը՝ զվարթացնում նրա դեմքը»: Ամրացրու քո սիրտը՝ հաղորդվելով այդ հացին որպես հոգեկանի և զվարթացրու քո հոգու դեմքն անսքող և մաքուր խղճով: Եվ արտացոլելով Տիրոջ փառքը՝ դու փառքից փառք կբարձրանաս մեր Տեր Քրիստոս Հիսուսով, Ում փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:



## Սուրբ Խորհուրդների մասին

### ՈՒՍՈՒՅՈՒՄ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Եվ ընթերցում Պետրոսի Ընդհանրական թղթից. «Ուրեմն, դեմ անտելով ամեն չարություն, ամեն անգություն, կեղծավորություն, անխանձ և ամեն չարախոսություն» և շարունակությունը:

1. Աստծու մարդասիրության շնորհիվ նախորդ հավաքույթներին դուք բավարար չափով լսեցիք մկրտության և օծման և Քրիստոսի մարմնին ու արյան հաղորդվելու մասին: Արդ, անհրաժեշտ է անցնել ուսուցման հաջորդ մասերին, և այսօր ձեր փրկության հոգևոր շենքի պսակը դնենք:

2. Ուրեմն, նայեք սարկավազին, որը քահանային և Աստծու զոհասեղանի շուրջ կանգնած ավագներին տալիս է լվացվելու պարագաներ: Այդ տալիս է ոչ թե մարմնական անմաքրության համար: Քավ լիցի: Քանզի անմաքուր մարմնով սկզբից ևեթ չէինք մտնի Եկեղեցի: Այլ, քանի որ ձեռքերը լվանալը խորհրդանշում է, որ պետք է լինենք մեղքերից և անօրենսություններից մաքրված: Քանի որ ձեռքերը գործ են խորհրդանշում, դրանք լվանալով՝ մենք ակնարկում ենք մեր գործերի և արարքների մաքրությունը և անբասիրությունը: Չե՞ս լսել երանելի Դավիթին, ով քեզ բացատրում է այդ խորհուրդը՝ ասելով. «Սրբությունը կլվամ ձեռքերն իմ և սեղանիդ շուրջը կնստեմ, Տեր»: Այսպիսով, ձեռքերը լվանալը խորհրդանշում է մեղքերից մաքրվելը:

3. Այնուհետև սարկավազը բարձրաձայն ասում է. «Մոտեցեք իրար և ողջագուրվեք»: Չկարծես, թե այդ համբուր-



վելը նման է սովորականին, որ արվում է շուկայում հասարակ ընկերների միջև: Քավ լիցի: Այդ համբույրը միացնում է հոգիները և միավորում բոլորին և հոգիներում առաջացնում է անհիշաչարություն: Ուրեմն, համբուրվելը նշան է հոգիների միավորման և ամեն տեսակ հիշաչարության դուրս մղման: Այդ պատճառով էլ Քրիստոսն ասում էր. «Եթե սեղանի վրա քո ընծան մատուցելու լինես և այնտեղ հիշես, թե քո եղբայրը քո դեմ մի ոխ ունի, քո ընծան թող սեղանի առաջ և գնա նախ հաշտվիր քո եղբոր հետ և ապա եկ քո ընծան մատուցիր»: Ուրեմն, համբուրվելը հաշտություն է, ուստիև սուրբ է: Երանելի Պողոսը մի անգամ բարձրաձայն ասել է. «Ողջունեցեք միմյանց սուրբ համբույրով»: Պետրոսը նույնպես ասել է. «Ողջունեցեք միմյանց սուրբ համբույրով»:

4. Այնուհետև քահանան բարձրաձայն ասում է. «Սրտներդ բարձր»: Քանզի, իրոք, այդ երկյուղալի պահին պետք է վեր՝ դեպի Աստված բարձրացնել մեր սրտերը, և ոչ թե հարել ցած՝ հողին և երկրային գործերին: Նշանակում է, ուրեմն, որ քահանան այնժամ հրամայում է թողնել կենցաղային և տնային հոգսերը, և մեր սրտերը լինեն երկնքում՝ մարդասեր Աստծուն ուղղված:

Հետո պատասխանում էք. «Ուղղենք առ Տեր Աստված»: Դրանով դուք խոստովանում եք, որ հնազանդվում եք քահանային: Ուրեմն, ներկաներից որևէ մեկը չլինի, որ բերանով ասի՝ «Ուղղենք առ Տեր Աստված», բայց միտքը լինի կենցաղային հոգսերի վրա: Քանզի միշտ պետք է հիշել Աստծուն: Իսկ եթե մարդկային թուլության պատճառով այդ անկարելի է, ապա այդ պահին այն պետք է կատարենք ինչքան որ հնարավոր է:

5. Հետո քահանան ասում է. «Գոհանանք Տիրոջից»: Անշուշտ, մենք պարտավոր ենք գոհանալ Նրանից, քանի

որ մեզ՝ անարժաններին, կոչեց այդպիսի շնորհքի: Քանի որ թշնամի եղածներիս հաշտեցրեց, քանի որ մեզ արժանացրեց որդեգիր դառնալու: Հետո կասեք. «Արժանի և արդար»: Քանզի գոհանալով մենք կատարում ենք արժանի և արդար գործ: Իսկ ինքը ոչ թե արդար, այլ ավելի քան արդար գործելով՝ բարեգործ եղավ մեր նկատմամբ և արժանացրեց այսքան մեծ բարիքների:

6. Ապա հիշատակում ենք երկինքը, երկիրը, ծովը, արևը և լուսինը, աստղերն ու ամբողջ արարվածը, բանականն ու անբանը, տեսանելին և անտեսանելին, հրեշտակներին, հրեշտակապետերին, զորություններին, տերություններին, իշխանություններին, գահերին, բազմադեմ քերովբեներին, որոնք կարողանում են ասել Դավթի խոսքերը. «Մեծարեցեք Տիրոջն ինձ հետ»: Հիշատակում ենք նաև սերովբեներին, որոնց Եսային, Սուրբ Հոգով լուսավորված, տեսել է Աստծու գահի շուրջ, որոնք երկու թևով ծածկում էին իրենց դեմքը, մյուս երկու թևով՝ ոտքերը և մնացած երկու թևերով թռչում էին՝ ասելով. «Սուրբ, սուրբ, սուրբ է Սաբաովթ Տերը»: Մենք սերովբեներից մեզ ավանդված այդ օրհներգն ենք ասում, որպեսզի հաղորդակից լինենք գերաշխարհիկ ու երկնային զորքերի օրհներգությանը:

7. Այնուհետև, այդ հոգևոր օրհներգություններով մեր անձը սրբացնելուց հետո, խնդրում ենք մարդասեր Աստծուն, որպեսզի Նա Սուրբ Հոգուն ուղարկի այնտեղ դրված ընծաների վրա, որպեսզի հացը վերածի Քրիստոսի մարմնի, իսկ գինին՝ Քրիստոսի արյան: Քանզի այն ամենը, ինչին դիպչում է Սուրբ Հոգին, սրբանում է և փոխակերպվում:

8. Այնուհետև, ավարտելով հոգևոր այդ գոհաբերումը, անարյուն պաշտամունքը, ողորմածություն հայցող այդ

զոհաբերումը՝ աղերսում ենք Աստծուն հանուն Եկեղեցիների ընդհանուր խաղաղության, հանուն աշխարհի բարեկեցության, հանուն թագավորների, զինվորների և զինակիցների, հանուն անկարների, հանուն տանջահարների և, կարճ ասած, բոլոր նրանց համար, ովքեր օգնության կարիք ունեն, մենք խնդրում ենք և մատուցում այս զոհաբերությունը:

9. Այնուհետև, հիշատակում ենք նաև ննջեցյալներին, նախ՝ հայրապետներին, մարգարեներին, առաքյալներին, վկաներին, որպեսզի Աստված նրանց աղոթքներով և միջնորդություններով ընդունի մեր աղերսանքը: Այնուհետև, հիշատակում ենք նաև ննջեցյալ սուրբ հայրերին և եպիսկոպոսներին: Կարճ ասած, հիշատակում ենք բոլոր ննջեցյալներին՝ հավատացած, որ մեծ օգուտ կլինի այդ մեր հոգիներին, որոնց համար մենք աղերսում ենք այս երկյուղալի և սուրբ զոհաբերության միջոցով:

10. Կամենում եմ ձեզ մեկ օրինակով համոզել, քանզի գիտեմ շատերին, որոնք ասում են. «Ի՞նչ է շահում այն հոգին, որն այս աշխարհից հեռանում է մեղքերով թե առանց մեղքերի, եթե հիշատակվում է զոհաբերության ընթացքում»: Եթե, ասենք, թագավորն իրեն անարգողներին աքսորած լինի, որից հետո աքսորվածների ազգականներն ու բարեկամները, պսակ հյուսելով, այն մատուցեին թագավորին՝ հանուն աքսորյալների, արդյո՞ք թագավորը նրանց պատիժը չէր թեթևացնի: Նույն կերպ և մենք, հանուն ննջեցյալների, մեր աղերսանքն ուղղելով Աստծուն, եթե անգամ նրանք մեղավոր են, մենք պսակ չենք հյուսում, այլ հանուն յուրայինների, մատուցում ենք զոհված Քրիստոսին՝ խնդրելով Աստծուն լինել ողորմած նրանց և մեզ համար:

11. Ապա, այս ամենից հետո ասում ես այն աղոթքը, որ Փրկիչն Իր աշակերտներին ավանդեց, և մենք, խղճի մտոք Աստծուն Հայր անվանելով, ասում ենք. «Հայր մեր, որ յերկինս»: Օ՛, մեծագույն մարդասիրություն Աստծու, ով մուռացավ մեր կատարած մեծ չարիքները, մեզ պարզեց այսքան չարիքների մոռացում և հաղորդվելու շնորհք, որպեսզի անգամ Հայր կոչվի մեզ: Հայր մեր, որ յերկինս: Բայց երկինք կարող ենք համարել նաև նրանց, որոնք կրում են երկնավորի պատկերը և որոնց մեջ բնակվում և ընթանում է Աստված:

12. «Սուրբ եղիցի անուն Քո»: Բնականաբար, Աստու անունը սուրբ է. մենք այդ ասում ենք թե չենք ասում: Բայց, քանի որ մեղանչողների միջոցով այն պղծվում է և հայհոյվում, ինչպես որ ասված է՝ «Ձեր պատճառով Իմ անունը մշտապես հայհոյվում է հեթանոսների մեջ», ապա աղոթում ենք, որ Աստու անունը սրբանա մեր մեջ: Ոչ այն պատճառով, որ սուրբ չէ և այդժամ է, որ սրբանում է, այլ որովհետև Նա մեր մեջ սրբանում է, երբ մենք սրբագործվում ենք և կատարում սրբագործության արժանի գործեր:

13. «Եկեսցէ արքայութիւն Քո»: Մաքուր հոգուն հատուկ է բացահայտ և համարձակ «Եկեսցէ արքայութիւն Քո» ասելը: Քանզի նա, ով լսել է Պողոսի «Այսուհետև մեղքը թող չթագավորի ձեր մահկանացու մարմիններին» խոսքը, և իր անձը դարձրել է գործով, մտքով և խոսքով մաքուր, կարող է ասել՝ «Եկեսցէ արքայութիւն Քո»:

14. «Եղիցին կամք Քո որպէս յերկինս և յերկրի»: Աստու սուրբ և երանելի հրեշտակները ևս կատարում են Աստու կամքը, ինչպես սաղմոսերգու Դավիթն ասել է. «Օրհնեցեք Տիրոջը, Նրա բոլոր հրեշտակներ, որ հզոր եք ուժով, կատարում եք խոսքը Նրա»: Թվում է, թե այդպես աղոթելով՝ դու ասում ես. «Ով Տեր, ինչպես որ հրեշտակ-

ների մոտ լինում է Քո կամքը, այդպես էլ թող լինի իմ մեջ երկրի վրա»:

15. «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»: Այն հասարակ հացը հանապազորդ չէ, իսկ այս սուրբ հացը հանապազորդ է. կնշանակի, այն կհաստատվի հոգու հոլթյան վրա: Այդ հացը չի գնա փորի մեջ և չի նետվի դուրս, այլ կտարածվի քո ամբողջ հոլթյան մեջ՝ հոգու քո հոգուն և մարմնին: Իսկ այսօրն ասում է ամեն օրվա փոխարեն, ինչպես ասում էր նաև Պողոսը. «Ամեն մեկ օր, քանի որ այսօր է ասվում»:

16. «Եվ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»: Շատ մեղքեր ունենք, քանզի մեղանշում ենք թե՛ խոսքով, թե՛ մտքերով և կատարում ենք դատապարտելի բազում գործեր: «Եվ եթե ասենք, որ մենք ոչ մի մեղք չունենք, մենք մեզ խաբած կլինենք», ինչպես ասում է Հովհաննեսը: Եվ դաշն ենք կնքում Աստծու հետ՝ Նրան խնդրելով, որ ների մեր մեղքերը, ինչպես որ մենք էլ կներենք մեր մերձավորների՝ մեզ ունեցած պարտքերը: Արդ, մտածենք, թե ինչքան մեծ է մեր ստացածը մեր թողած մանրերի համեմատությամբ, և չսպասենք, չհապաղենք մեկս մյուսին ներելու: Մեր դեմ մեր մերձավորների գործած մեղքերը փոքր են և աննշան և հեշտ լուծելի, իսկ Աստծու դեմ մեր մեղքերն այնքան մեծ են, որ ներվելու համար միայն Աստծու մարդասիրությանն են կարոտ: Ուրեմն, զգուշացիր, չլինի թե քո դեմ մերձավորիդ ունեցած մանր և աննշան մեղանշումների պատճառով զրկվես քո ծանր մեղքերի համար Աստծու թողությունից:

17. «Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն», Տեր: Արդյո՞ք Տերն այդպես է սովորեցնում մեզ աղոթել, որպեսզի բոլորովին չընկնենք փորձության մեջ: Եվ ինչպե՞ս մի տեղ աս-

ված է՝ անփորձ այրը ոչ լիարժեք է: Եվ դարձյալ՝ «Եղբայրներ՛ր, ամենայն ուրախությամբ արժանի համարեցեք, երբ տեսակ-տեսակ փորձությունների մեջ ընկնեք»: Գուցե փորձության մեջ չմտնելն այդ է նշանակում, որ չընկղմվենք ու չխեղդվենք փորձության մեջ: Քանզի փորձությունը նման է դժվարանցանելի հեղեղի: Փորձությունների մեջ չընկղմվածները, լինելով լավ լողորդներ, այն հեշտ են անցնում և չեն քշվում հոսանքից: Իսկ այդպիսիք չեղորդները լիովին ընկղմվում են, ինչպես օրինակ, Հուդան, որն, ընկնելով փողասիրության փորձության մեջ, չկարողացավ լողալ, այլ սուզվեց և խեղդվեց թե՛ մարմնով, թե՛ հոգով: Պետրոսը մտավ ուրացության փորձության մեջ, բայց այնտեղ մտնելով՝ նա չընկղմվեց, այլ արիաբար լողաց և փրկվեց փորձությունից:

Լսիր դարձյալ. մեկ այլ տեղ ասվում է, թե սրբերի մի ամբողջ երգչախումբ երգում է օրհներգություններ Աստծուն, որ ազատվեցին փորձությունից. «Քննեցիր մեզ, Աստված, ու փորձեցիր, ինչպես արծաթն է փորձվում: Մեզ որոգայթի մեջ գցեցիր, նեղություն դրիր մեր թիկունքին և մարդկանց անցկացրիր մեր գլխի վրայով: Մենք անցանք հրի ու ջրի միջով, բայց Դու մեզ անդորր տվիր»: Տեսնո՞ւմ ես նրանց, որ ինչ համարձակ ցնծում են, որ անցել են փորձության հեղեղը և չեն խեղդվել: «Բայց Դու մեզ անդորր տվիր»: Անդորր դուրս գալը նույնն է նշանակում, ինչ փորձությունից ազատվելը:

18. «Այլ փրկեա մեզ ի չարէ»: Եթե «Մի տանիր զմեզ ի փորձութիւն» նշանակեր բոլորովին փորձության չենթարկվել, ապա չէր ասի՝ «այլ փրկեա մեզ ի չարէ»: Բայց չար է մեր հակառակորդ դեռ, ումից աղոթում ենք ազատվել:

Ապա աղոթքի ավարտին ասում ես՝ «Ամէն»: Այդ «Ամէն» բառով, որը նշանակում է՝ թող լինի, դու դրոշմում և

հաստատում ես այն ամենը, ինչ բովանդակում է աստվածավանդ աղոթքը:

19. Այս ամենից հետո քահանան ասում է. «Սրբությունները՝ սրբերին»: «Սրբություններ» են Սուրբ սեղանին դրվածները, որոնք ընդունել են Սուրբ Հոգու այցելությունը: «Սրբեր» եք նաև դուք, որովհետև արժանացել եք Սուրբ Հոգու շնորհին: «Սրբությունները՝ սրբերին» խոսքը պատշաճ է և վայել: Այնուհետև դուք ասում եք. «Մեկ սուրբ, մեկ Տեր, Հիսուս Քրիստոս»: Անշուշտ, սուրբը՝ բնությամբ սուրբը, մեկն է: Քանզի մենք, թեև սուրբ, բայց ոչ թե բնությամբ, այլ՝ մասնակցություն, վարժություն և աղոթքով (առ Աստված):

20. Այս ամենից հետո կլսեք երգչին, որն աստվածային մեղեդիով ձեզ հրավիրում է հաղորդվելու սուրբ խորհրդին և ասում է. «Ճաշակեցեք և տեսեք, թե որքան քաղցր է Տերը»: Բայց դուք այդ խորհրդի մասին մի դատեք մարմնական կոկորդով, այլ անասան հավատքով: Քանզի դուք ճաշակում եք ոչ թե հաց ու գինի, այլ Քրիստոսի մարմնի և արյան պատկերատիպը:

21. Ուրեմն, հաղորդվելու մոտենալիս, զգուշացիր, չմոտենաս պարզած փերով, ոչ էլ բաց մատներով, այլ ձախ ձեռքդ աջիդ համար դարձրու գահի նման, իբր պատրաստ ես ընդունելու թագավորին և, փիղ գոսի ձև տալով, ընդունիր Քրիստոսի մարմինը՝ «Ամեն» պատասխանելով: Ապա, մեծ զգուշությամբ աչքերդ սրբագործիր՝ դիպցնելով սուրբ մարմնին և հաղորդություն ստացիր: Բայց զգուշացիր, որ այդ սուրբ մարմնից ոչ մի փշուր ցած չընկնի: Ուրովհետև ինչ որ ընկավ, դու համարիր, որ դրանով կորցրիր քո մարմնի մի մասը: Քանզի, ասա ինձ, խնդրեմ, եթե որևէ մեկը քեզ ոսկու հատիկներ տա, դու դրանք ամենայն

զգուշությամբ չէի՞ր պահի, որպեսզի դրանցից ոչինչ չկորցնես ու դրանով վնաս չկրես: Ուրեմն, ինչքան առավել ուշադիր պիտի լինես, որ փոքրագույն փշուր անգամ չընկնի այդ հաղորդությունից, որը շատ ավելի թանկ է, քան ոսկին և թանկագին քարերը:

22. Ապա, Քրիստոսի մարմնին հաղորդվելուց հետո, մոտեցիր նաև արյան բաժակին, բայց ոչ թե ձեռքերդ պարզած, այլ գլխահակ, երկրպագելու դիրքով, հարգալից՝ ասելով՝ «Ամեն», և, հաղորդվելով Քրիստոսի արյան, սրբագործվիր: Եվ որքան ժամանակ որ քո շրթունքին կա հաղորդման խոնավությունը, մատներդ դրան դիպցնելով՝ սրբագործիր քո աչքերը և ճակատը և մյուս զգայարաններդ: Վերջում ստացիր քահանայի մաղթանքը և գոհացիր Աստծուց, որ քեզ արժանացրեց հաղորդակից դառնալու այսպիսի մեծ խորհուրդների:

23. Այս ավանդությունները պահպանեք անաղարտ և ձեր անձը պահեք առանց գայթակղվելու: Ձեզ մի՛ զրկեք հաղորդությունից: Անմաքրություն և մեղքերով վարակվելու պատճառով մի՛ զրկեք ձեզ այս սուրբ և հոգևոր խորհուրդներից:

«Եվ խաղաղության Աստվածն ինքը թող սրբացնի ձեզ ամբողջապես, և ձեր ամբողջ հոգին, շունչը և մարմինը թող անարատ պահվեն մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալուստը, Ում փառք հավիտյանս հավիտենից, ամեն»:



ՀԱՎԵԼՎԱԾ

Այո՛րեղ Երոստոսը լեմացո՛ւ Ըայրապետո՛ւնի օրո՛վ, 351-ի մայիսի 7-ին Երոստոսը լեմացո՛ւնեցել-Քրիստոսի Խաչի երեւո՛ւմը երկն՛վում:

Այդ առե՛նի լեմացո՛ւնի Երոստոսը կայսրին (337-361) Գրեւ է իր Ըայրանի լեռնը՝ «Թո՛ղ լե Արեղի եպիսկոպոսի Երոստոսը առ Աոսրան պետայ լեռան օրն լեռնայ առ լեռն Խաչին յերկնից»:

Ըայերեն լեռան լեռն է V դ., առաջին անգամ արագրել է «Աոսրան ընթացո՛ւնի» երկն Ըեպ: Ըայ եկեղեցո՛ւմ Այո՛րեղ Երոստոսը այդ լեռնը կարգադրում է Աոսրի Խաչի երեւո՛ւմը:

## ԹՈՒՂԹ ԱՌ ԿՈՍՏԱՆԴ ԿԱՅՍԵՐ

**Ա**ստվածասեր և բարեպաշտ Կոստանդ օգոստափառ թագավորին՝ Երուսաղեմի Կյուրեղ եպիսկոպոսից ողջուն խնդալից:

Վայելուչ է, որ ես քեզ ուղղեմ, և դու ընդունես այս առաջին նամակը, որ Երուսաղեմից եմ գրում քո աստվածասեր թագավորությանը:

Այն լցված չէ շողովակալ խոսքերով, այլ աստվածատեսական մի իրողության ազդարարությամբ:

Այն գեղեցիկ շարադրություն և ճարտասանական հմաստներ չի պարունակում, այլ՝ սուրբ ավետարանիչներից կանխաձայնված և վկայված բաների ճշմարտությունը:

Շատերն իրենց ունեցած պես-պես թանկագին և շողովուն քարերով կազմված ոսկեհուռ պսակներով են փառավորում քո պատվական գլուխը, իսկ մենք ոչ թե երկրից հանված բաներով ենք ուզում պսակել քեզ, որովհետև երկրավոր ընծայաբերումները երկիրն են միայն ունենում իրենց նպատակ, այլ քո աստվածասեր թագավորության օրով այստեղ՝ Երուսաղեմի մեջ, տեղի ունեցած աստվածային գործությամբ գործերն են փութում իմացնել քո բարեպաշտությանը, ոչ թե որպեսզի անգիտությունից աստվածգիտության գաս - ինչը, որ դու արդեն քո բարեպաշտությամբ ուրիշներին ես սովորեցնում այս մասին - այլ որպեսզի քո իմացած բաների մեջ ավելի հաստատվես և քո թագավորության նախկին վիճակը ճիշդելով՝ երկնային պսակներով Աստծուց պատվվես, և սովորես ամենաթա-



գավոր Աստծուն՝ Իրեն վայելուչ շնորհակալություն մատուցել, և թշնամիների դ վրա մեծամեծ հաղթություններով քաջալերված՝ Աստծուն իրապես սիրելի ընծայես քո թագավորությունը:

Դրա համար է, որ Տերը քո օրով էլ ահա հրաշքներ է գործում, որովհետև ինչպես որ քո աստվածասեր և երջանկահիշատակ հորդ՝ Կոստանդիանոսի ժամանակ, Աստծո շնորհիվ Երուսաղեմի մեջ գտնվեց փրկարար խաչափայտը, ու սուրբ տեղերը իրենց մեջ ծածկված այն սրբությունը պարգևեցին նրան, որ սրտագին բարեպաշտությամբ փնտրեց այն, նույնպես, քո օրով էլ, ո՛վ ամենաբարեպաշտ Տեր Թագավոր, Աստծո երկյուղով լցված այն հին բարեպաշտությունը նորոգված լինելով, այս անգամ սակայն ոչ թե երկրի, այլ երկնքի վրա տեսնվեց հրաշքը, ու մեր Տեր Հիսուս Քրիստոս Փրկչի և Աստծո Միածին Որդու լուսանշույլ խաչը, որ մահվան դեմ հաղթության խորհրդանշանն է, ճառագայթափայլ երևաց Երուսաղեմի վրա:

Որովհետև Պենտեկոստեի, այսինքն՝ Հինանց օրերին, օրվա ժամը երեքին, ամենահաղթ խաչը, լույսով ձևացած երկնքի վրա սուրբ Գողգոթայից մինչև Ջիթենյաց սուրբ լեռը երկարած, տեսնվում էր ցոլացիկ:

Ոչ թե միայն մեկ-երկու հոգիների երևաց այն, այլ ամբողջ սուրբ քաղաքի ժողովրդին. ոչ թե վաղանցուկ կերպով և առաջոք տեսիլի պես, այլ երկար ժամանակ տեսնվելով երկնքի վրա, ու իր բոցաճաճանչ փայլմամբ արևի ճառագայթներին հաղթելով, որովհետև ինքը պիտի հաղթահարվեր նրանցից, եթե արեգակից ավելի զորավոր ցույց չտար իր ճառագայթները:

Այնպես որ, բոլորը՝ առհասարակ սուրբ քաղաքիս ամբողջ բազմությունը, տղաներն ու ծերերը, այրերն ու կանայք և ամեն հասակի պատկանողներ, նույնիսկ աղջիկ-

ներ, բնիկներ և օտարներ, քրիստոնյաներ և ուրիշ տեղերից եկած ազգեր, բոլորն էլ՝ աստվածատեսության սուրբ երկյուղով և ուրախությամբ համակված, սուրբ եկեղեցի վազելով, կարծես մեկ բերանով՝ Աստծո սխրագործ Միածին Որդուն էին օրհնաբանում:

Ու այսպես փորձառաբար և իրապես ապացուցվեց, թե քրիստոնյաների ամենաբարեպաշտ հավատքը ոչ թե իմաստասիրական փաստերով, այլ նաև Սուրբ Հոգու գործությամբ ու հայտնությամբ է հաստատվում, ոչ միայն մարդկանցից է պատվվում, այլ նաև երկնքից՝ Աստծուց է վկայվում:

Արդ, որովհետև մենք՝ երուսաղեմաբնակներս, ոչ թե ուրիշներից լսեցինք, այլ մեր աչքերով տեսանք. Թագավորաց Թագավոր Աստծուն և Իր Միածին Որդուն մատուցեցինք պատշաճ կերպով մեր շնորհակալության երկրպագությունը և դեռ պիտի մատուցենք:

Ձեր աստվածասեր թագավորության համար սուրբ տեղերի մեջ ևս հանդիսավոր աղոթքներ կատարեցինք և դեռ պիտի կատարենք:

Եվ որովհետև արժանի էր, որ այս երկնային աստվածատեսության համար լոռություն չպահեինք և ավետեինք այն ձեր աստվածասեր բարեպաշտությանը, այս պատճառով փութացի ահա գրել այս գիրս:

Որպեսզի քո սկզբից արդեն ունեցած հավատքիդ հաստատուն և բարի հիմքի վրա - որ Աստծուց քեզ տրված գիտությունն է- Հիսուս Քրիստոսով ավելի հաստատուն կերպով շինված հույսն էլ ընդունելով՝ քաջալերվես և բոլոր առաքիմական սովորություններով տոգորված՝ խաչի հաղթության նշանը քեզ զորավիզ ունենաս՝ իբրև Աստված, և պարծանաց պարծանք համարես այն քեզ՝ քեզ հետ ունենալով երկնքում երևացած նշանը, որի ձևը մարդ-

կանց ցույց տված ժամանակ կարծես երկինքն ինքն իսկ պանծացավ:

Բայց պետք է իմանալ, ո՛վ աստվածասեր թագավոր, թե այս հրաշքը մարգարեներից նախագուշակված և Ավետարանների մեջ ավանդված Հիսուսի սուրբ բառերով արդեն նկարագրված մի իրողություն է, որ այս անգամ կատարվեց և, անշուշտ, ասպագայում էլ պիտի կատարվի հաճախ:

Որովհետև Փրկիչը, Մատթեոսյան Ավետարանի մեջ հանդերձյալ իրերի գիտությունը իր երջանիկ աշակերտներին պարզևած ժամանակ նրանց և իրենց հետ եղողներին խոսելով, հայտնապես նախաձայնելով, ասում էր.

«Եվ այնժամ երկնքում կերևա մարդու որդու նշանը»:

Եթե բացես Ավետարանի աստվածային գիրքը, այնտեղ պիտի գտնես այս մասին սկզբից ասված վկայությունները:

Բայց սրտագին փափագում եմ, որ ամեն ինչից առաջ հոգեռանդն մտադրությամբ նայես մեր Փրկչից հառաջաձայնվածների մասին այնտեղ գրվածների վրա: Հակառակ ազդեցություններից չտարվելու համար երկյուղած զգուշությամբ պետք է կարդալ դրանք:

Այս իմ անդրանիկ անմակը, ո՛վ աստվածասեր թագավոր, Երուսաղեմից քեզ ուղարկելով, իբրև հարազատ և ամենաբարեպաշտ մի մտերմի եմ խոսում քեզ, և իբրև մեզ հետ երկրպագողի Աստծո Միածին Որդուն և մեր Փրկչին, որ, ըստ Ավետարանական ավանդության, Երուսաղեմի մեջ կատարեց իր փրկության մատակարարությունը:

Որ այստեղ ոտնակոխ արեց մահը և իր պատվական արյունով ջնջեց և սրբեց մարդկանց մեղքը և իբր Աստված կյանք, անապականություն և հոգևոր ու երկնային շնորհք պարգևեց բոլոր իրեն հավատացողներին:

Ամենաթագավոր Տերը, որ տվիչն է բոլոր բարությունների, թող պահպանի քեզ գործությամբ և շնորհքով և էլ ավելի մեծամեծ բարեպաշտության գեղեցիկ գործերով և զարդարի թագավորական հարազատ թագը զավակների բազմացումով և ի պարծանս քրիստոնյաների և համայն աշխարհի երկար և բազում տարիների խաղաղությամբ պահի քեզ ամբողջ ընտանիքովդ:

Եվ բոլոր մասերով զարդարելով քեզ վարքով, եկեղեցիների հանդեպ քաղցրությամբ և կայսերական իշխանության վայելուչ մարդասիրությամբ և առատապարգև բարեպաշտությամբ, երկարամյա անորորությամբ՝ բոլորին շնորհի ձեզ ամբողջ տնով հանդերձ, ո՛վ աստվածասեր և օգոստափառ թագավոր. ողջ եղիր Աստծով\*:

\* Թարգմ. գրաբարից՝ Ասողիկ եպիսկոպոսի:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի* .....5

*Նախասուսուցում* .....9

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ**  
*Լուսավորվողների* .....21

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում ապաշխարության և  
 մեղքերի թողության ու հակառակորդի մասին* .....27

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ԵՐՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում Մկրտության մասին* .....41

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ՉՈՐՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում տասը դոգմաների մասին* ...53

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ՆԻՆԳԵՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում հավարի մասին* .....76

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ՎԵՅԵՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում և վերաբերվում է Ասրծու  
 մենիշխանությանը, հավատարմ մեկ Ասրծուն,  
 ինչպես նաև հերերիկոսություններին* .....87

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ՅՈԹԵՐՈՐԴ**  
*Նայր Ասրծու մասին՝ արված Երուսաղեմում* .....113

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ՈՒԹԵՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում Ամենակալի վերաբերյալ* ..124

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ԻՆՆԵՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում և վերաբերում է «Արարիչն է*

*երկնքի և երկրի, տեսանելիների  
 և անտեսանելիների» ուսմունքին* .....129

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ՏԱՄՆԵՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում՝ «Եվ մեկ Տեր Նիսուսին»  
 հարվածի մասին* .....140

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում: Վերաբերում է Նանգանակի  
 հեղեղի հողվածին. «Միսին Ասրվածորդուն, որ  
 ծնվել է Նորից, Ասրված ճշմարիտ է բոլոր դարերից  
 էլ առաջ, Ում միջոցով կարարվել է ամեն ինչ»* .....156

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում: Վերաբերում է Նանգանակի  
 «Մարմնացավ և մարդացավ» հողվածին* .....173

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում՝ Նանգանակի  
 «խաչվեց, թաղվեց» հարվածի շուրջ* .....199

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ՏԱՄՆՉՈՐՍԵՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում՝ Նավարի Նանգանակի  
 «Երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով  
 բարձրացավ երկինք և նստեց Նոր աջ կողմում»  
 հողվածի մասին* .....230

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ՏԱՄՆՆԻՆԳԵՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում՝ Նավարի Նանգանակի՝ «Եվ  
 գալու է փառքով՝ դարելու կենդանիներին և  
 մեռյալներին, որի թագավորությանը չկա վախճան»  
 հողվածի մասին: Անդրադարձ հակաքրիստոսին* ..254

**ՈՒՍՈՒՅՈՒՄ ՏԱՄՆՎԵՅԵՐՈՐԴ**  
*Արված Երուսաղեմում՝ «Եվ մի Սուրբ Նոգուն՝  
 Միսթարիչին, որ խոսեց մարգարեների մեջ»  
 հողվածի մասին* .....282

ՈՒՍՈՒՅՈՒՄ ՏԱՄՆՅՈԹԵՐՈՐԴ  
Արված Երուսաղեմում՝ Սուրբ Նոգոս մասին  
Սուրբ Գրքում եղած մնացյալ վկայությունների  
վերաբերյալ .....306

ՈՒՍՈՒՅՈՒՄ ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ  
Արված Երուսաղեմում՝ Նանգանակի՝  
«Նավարում ենք նաև Միակ, Ընդհանրական  
Սուրբ Եկեղեցուն, մարմնի հարությանը և  
հավիտենական կյանքին:» .....334

Սուրբ խորհուրդների մասին  
ՈՒՍՈՒՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ  
ուղղված նորադարձներին .....360

Սուրբ խորհուրդների մասին  
ՈՒՍՈՒՅՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ  
Մկրտության մասին .....366

Սուրբ խորհուրդների մասին  
ՈՒՍՈՒՅՈՒՄ ԵՐՐՈՐԴ  
Յուդով օծման մասին .....371

Սուրբ խորհուրդների մասին  
ՈՒՍՈՒՅՈՒՄ ՉՈՐՐՈՐԴ  
Քրիստոսի մարմնի և աղյան մասին .....375

Սուրբ խորհուրդների մասին  
ՈՒՍՈՒՅՈՒՄ ՆԻՆԳԵՐՈՐԴ ..... 379

ՆԱՎԵԼՎԱԾ  
Թուղթ առ Կոստանդ կայսեր .....391

Խմբագիր՝ Ասողիկ Եպիսկոպոս  
Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա  
Շապիկը՝ Ա. Օհանջանյանի  
Սրբագրիչ՝ Ս. Բուլաթյան